

ԶՈՆ ԲԻՎԵՐ

«Սատանայի խայծը» հանրաճանաչ գրքի հեղինակ

ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

ԻՆՉՈՒՄ ԲԱՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՍԾՈՒ ԲԱՎԱԿԱՆ ՉԷ



ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ» DVD ՅԱՎԱՔԱԾՈՒՆ

Թանկագի՛ն ընկեր,

Երբ մենք շփվում ենք Աստծո հետ, Նա փոխում է մեր կյանքի ամեն բնագավառը: Մեր կյանքը լցվում է առատությամբ, երբ հնազանդվում ենք Հիսուս Քրիստոսի իշխանությանը և ամեն օր ապրում ենք Նրա շնորհքով:

«Բարի՞, թե՞ Աստված»-ը՝ հասարակ գիրք չէ: Այն ուղերձ է, որը կարող է ոգեշնչել մարդկանց՝ միանալու աշխարհով մեկ սփռված սրբության շարժմանը: Դուք կարող եք միանալ տվյալ շարժմանը՝ պատմելով այս սրբության ուղերձի մասին առաջնորդներին, եկեղեցական համայնքներին, ձեր ընտանիքին, ընկերներին և ձեզ շրջապատող մարդկանց: Պողոս առաքյալը մեկն էր, ով սովորեցնում էր մի խումբ աշակերտների մի փոքրիկ դպրոցում, և դա բավական էր, որ Ավետարանը ընդամենը երկու տարում հասներ նրանց, ովքեր ապրում էին Ասիայում: Նրանք դարձան Աստծո ներկայությունը կրողները (տե՛ս Գործք 19.1-10): Այդ դեպքում, ի՞նչ կարող է անել Աստված մե՛ր միջոցով, եթե մենք միաբանվենք Նրա հանդեպ ունեցած եռանդով:

Տերն իմ սրտում դրել է, որ փոխանցեմ այս ուղերձը ձեզ և ձեր ժառայակից հոգևոր ավագներին ամբողջ աշխարհում: Ես ուզում եմ սպառազինել ձեզ, որ փոխանցեք այս հայտնությունը նրանց, ում ճանաչում եք: Խնդրում եմ, ընդունեք սա՝ իմ սիրո և աջակցության հետ: Ի սրտե կցանկանայի իմանալ, թե ինչպիսի ազդեցություն թողեց այս ուղերձը ձեր կյանքում և այն մարդկանց կյանքերում, որոնց մասին դուք հոգ եք տանում:

Ի սրտե՝


Ջոն Բիվեր



JohnBevere@gmail.com



MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org



ԲԱՐԻ,
ԹԵ՛
ԱՍՏՎԱԾ

Քրիստոնյա առաջնորդները՝ «Բարի՞, թե՞ Աստված» գրքի մասին:

«Բարի՞, թե՞ Աստված» գիրքը նորովի կբացահայտի Աստվածաշունչը ձեզ համար. այն մարտահրավեր կնետի ձեր պատկերացմանը՝ կյանքը լավ ապրելու մասին, և լիովին կվերափոխի այն:

— ՄԱԿ ԲԵԹԵՐՏՈՆ, «Նյու Յորք Թայմս» ամսագրի հանրաճանաչ գրքերի ցուցակում գտնվող «Շրջաններ կազմողը» գրքի հեղինակ

«Բարի՞, թե՞ Աստված» գիրքը կսովորեցնի ձեզ զանազանել և կորդի ճշմարտապես փնտրել Տիրոջը, որպեսզի իմանաք Նրա կատարյալ կամքը ձեր կյանքի համար:

— Ջոն Մաթեր, քրիստոնյա ուսուցիչ և հանրաճանաչ գրքերի հեղինակ

Ձոն Բիվերը պատվարժան ուսուցիչ, առաջնորդ և հեղինակ է, ինչպես նաև՝ լավ ընկեր և գործակից Աստծո արքայության կառուցման մեջ: Նա ցանկանում է, որ մարդիկ ոչ միայն լավ, այլև աստվածային կյանք ունենան: Նրա ձգտումը կբարձրացնի ձեր հավատքը և կոչ կանի, որ համարձակ մուտք գործեք այն ամենի մեջ, ինչ Յիսուսը պատրաստել է ձեզ համար: Ձոնի ուսմունքները և անձնական հայտնությունները նորովի կբացահայտեն ձեզ համար Աստծո կամքը և Նրա ծրագրերը ձեր ապագայի համար:

— ԲՐԱՅԱՆ ՅՅՈՒՆԹՈՆ, «Յիստնգ» եկեղեցու ավագ հովիվ

Երբ կարդում եմ մարդկանց մասին, ովքեր աննախադեպ գործեր են արել Աստծուն սիրելու պատճառով, ես ցանկանում եմ լինել նրանցից մեկը: «Բարի՞, թե՞ Աստված» գիրքը նկարագրում է, թե ինչ է կատարվում նրանց կյանքում, ովքեր ճշմարտապես հարել են Աստծո ունեցած լավագույնին, ոչ թե բավարարվել ավելի հեշտ ձեռք բերվող կեղծիքներով: Եթե դուք նույնպես ցանկանում եք արմատապես ճանաչել Աստծուն և ծառայել Նրան, ես հորդորում եմ, որ ընթերցեք այս գիրքը»:

— Ջոն Կ. Մաքսվել, հանրաճանաչ հեղինակ և քարոզիչ

Աստված ունի լավագույնը ձեզ համար, և Ձոն Բիվերի «Բարի՞, թե՞ Աստված» գիրքը կորդի ձեզ երբեք չհամակերպվել այն ամենին, ինչը պակաս է դրանից: Ձոնը փայլուն կերպով հիշեցնում է, որ մենք գտնում ենք Աստծուն, երբ փնտրում ենք Նրան:

— ՋԵՆԹԵՋԵՆ ՖՐԱՆԿԼԻՆ, «Ֆրի Չեյփել» եկեղեցու ավագ հովիվ և «Նյու Յորք Թայմս» ամսագրի հանրաճանաչ գրքերի ցուցակում գտնվող «Ծոմ» գրքի հեղինակ

«Բարի՞, թե՞ Աստված» գիրքը հիմնովին կցնցի ձեզ: Եթե դուք չեք ձգտում փոփոխությունների, այս գիրքը ձեզ համար չէ: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք, որ ձեր պատկերացումները մեկընդմիջտ փոխվեն, անհագ կերպով կլանեք այս ուղերձը: Այն կվերափոխի ձեր կյանքը:

— ԲՐԻՍԿԻՆ ԲԵՅՆ, «Ա21 Քրեմլեյն» ծառայության հիմնադիր և «Անկասելի» հանրաժաննաչ գրքի հեղինակ

Խթանող: Պարզ: Անհրաժեշտ: «Բարի՞, թե՞ Աստված»-ը շատ կարևոր հիշեցում է այն մասին, որ մեր վերջնական նպատակը՝ պարզապես բարի լինելը չէ: Այս գիրքը ցույց է տալիս, որ մարդիկ կարող են անցում կատարել բարոյական հնազանդությամբ բնութագրվող միապաղաղ կյանքից դեպի այն ակնառու կյանքը, որը կարելի է ստանալ միայն Յիսուսից:

— Լուի Գիլլիո, «Փեշն Սիթի Չրչ»-ի հովիվ Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքում և «Փեշն Քոնֆրենսիս» համաժողովների հիմնադիր

Ինչպես որ լուցկին վառվելով ցրում է թանձր խավարը, Ջոն Բիվերը լուսավորում է ճանապարհը դեպի Աստծո հայտնված ներկայությունը և միևնույն ժամանակ բոցավառում է անհագ ցանկությունն ընթերցողի սրտում, որը կհագենա միայն Նրա հետ մտերիմ շփման մեջ:

— ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԻ ԴԻ ՋԵՅԵՍ, «ԹիԴիՋեյ Էնթերփրայսիս» ընկերության գլխավոր տնօրեն և հանրաժաննաչ հեղինակ՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի

Աստծո բարությունը շրջապատում է մեզ, բայց արդյո՞ք մենք ճշմարտապես հասկանում ենք այն: «Բարի՞, թե՞ Աստված» գրքում Ջոն Բիվերը ցույց է տալիս, թե ինչ է նշանակում լինել բարի, և ինչ առնչություն ունի բարին Աստծո հետ: Կարդացե՛ք այս կարևոր գիրքը. այն կշահագրգռի, կդրդի և կխթանի ձեզ փնտրել Աստծո լավագույնը ձեզ համար և կիսվել դրանով մարդկանց հետ:

— ԲՐԵՅԳ ԳՐՈՇԵԼ, «Լայվ Չրչ ԹիՎի»-ի գլխավոր հովիվ, նաև «Այսօրվանից հետո» և «Յինգ պարտավորություն՝ ձեր ամուսնությունը ձախողումից ապահովագրելու համար» գրքերի հեղինակ

Ջոն Բիվերը ևս մեկ անգամ անզուգական ու կյանքեր փոխող կանչ է հղել Զրիստոսի մարմնին: Իր նոր գրքում, որը կոչվում է «Բարի՞, թե՞ Աստված», Ջոնը ցույց է տալիս ընթերցողին, թե ինչպես ստանալ առավելագույնը Աստծո հետ փոխհարաբերությունից և ավելի բարձր չափանիշ հաստատել կյանքի բոլոր բնագավառների համար:

— ՄԵԹՅՈՒ ԲՈՒՆԵՏ, «Անջելուս Թեմփլ» եկեղեցու ավագ հովիվ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում, և «Դրիմ Սենթթ» եկեղեցու համահիմնադիր

«Բարի՞, թե՞ Աստված» գրքում Ջոն Բիվերը կոչ է անում վերանայել մեր պատկերացումն Աստծո բարության մասին և ճանաչել այն բնագավառները, որոնցում մենք բավարարվել ենք մեր, ոչ թե Նրա չափանիշներով: Ներկայացնելով խորաթափանց աստվածաշնչյան գաղափարներ և պատմելով իր կյանքի խոցելի պահերի մասին՝ Ջոնը ոգեշնչում է ընթերցողներին մերժել այս աշխարհի կեղծ բարությունը և կրկին սրտանց նվիրվել մեր երկնային Չոր կատարյալ սրբությանը: «Բարի՞, թե՞ Աստված» գիրքը պետք է ընթերցվի Չիսուսի ամեն մի հետևորդի կողմից, ով հրաժարվում է բավարարվել ցանկացած բանով, ինչը պակաս է Աստծո պատրաստած լավագույնից:

— ԲՐԻՍ ՅՈՋԻՍ, «Չրչ ով Չայլենդս»-ի գլխավոր հովիվ, նաև «Թարմ օդ» և «Չորս գավաթ» գրքերի հեղինակ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԲԱՐՈՒՆ,
ԹԵ՛
ԱՍՏՎԱԾ

ԻՆՉՈՒՒՄ ԲԱՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՍՏՈՌ ԲԱՎԱԿԱՆ ՉԷ

Նվիրում եմ այս գիրքը մեր որդուն՝
Արդեն Քրիստոֆեր Բիվերին

Դու ջանասեր, ուժեղ, զգայուն և իմաստուն ես:
Ես ցնցված եմ այն բանով, թե որքան զգայուն ես
դու նրանց հանդեպ, ովքեր ցավ են զգում:
Որդիս, ես այնքան եմ հպարտանում քեզանով և
սիրում եմ քեզ հավիտյան:

Good or God? by John Bevere, Armenian

© 2016 Messenger International

www.MessengerInternational.org

Originally published in English as Good or God?

Additional resources in Armenian by John Bevere are available
for free download at: www.CloudLibrary.org

To contact the author: JohnBevere@ymail.com

«Բարի՞, թե՞ Աստված», Ջոն Բիվեր, հայերենով

© 2016 Messenger International

www.MessengerInternational.org

Սկզբնապես հրատարակվել է անգլերենով.

«Good or God?» վերնագրով:

Ջոն Բիվերի այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք
անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org

Չեղիականի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի խոսքեր	13
Այս գրքի մասին	15
Ներածություն	19
Գլուխ 1. Ի՞նչ է բարին.....	19
Գլուխ 2. Ինչպե՞ս դա պատահեց.....	29
Գլուխ 3. Բարու համընդհանուր չափանիշը	43
Գլուխ 4. Հիմքը.....	59
Գլուխ 5. Մի՞թե ցանկությունը բավական է.....	75
Գլուխ 6. Մեր ներքին տեղորոշման համակարգը.....	91
Գլուխ 7. Նախանձավոր՝ մեզ համար.....	109
Գլուխ 8. Ընկերություն	123
Գլուխ 9. Անտեսված ճշմարտությունը	141
Գլուխ 10. Վառելիքը	159
Գլուխ 11. Բարի՞, թե՞ օգտակար	181
Գլուխ 12. Սուրբ կյանքի ուսուցում	195
Գլուխ 13. Մեր դրդապատճառը	211
Գլուխ 14. Մեր չափանիշները	229
Գլուխ 15. Զանազանություն	247
Գլուխ 16. Ընդհանուր պատկերը.....	265
Մերտողության նյութեր և քննարկման հարցեր	271
Նշումներ	291

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Իմ կնոջը, երեխաներին և թոռներին. ամեն մեկդ պարզև եք Աստծուց: Դուք հարստացնում եք իմ կյանքը: Ես սիրում եմ ձեզ հավիտյանս հավիտենից:

«Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության թիմին, խորհրդի անդամներին և գործընկերներին. շնորհակալություն, որ Լիզայի և իմ կողքին եք: Հազիվ թե մենք խնդրեինք Աստծուց ավելի հավատարիմ և ճիշտ ընկերների, որոնց հետ կցանկանայինք ընթացք անցնել՝ քարոզելով Հիսուս Քրիստոսի փառավոր Ավետարանը բոլոր ազգերին:

Բրյուսին, Ջեյլինին, Վինսենտին, Էլիսոնին, Էդիսոնին և Լորենին. շնորհակալություն, որ ջանասիրաբար հղկեցիք այս ուղերձը՝ օգտագործելով ձեր խմբագրական հմտությունները: Ձեր աստվածատուր պարզևներն ակնածանք են ներշնչում ինձ:

Ալանին. շնորհակալություն այս ուղերձի կազմի տպավորիչ ձևավորման համար: Այն շատ գեղեցիկ ոճ ունի:

Էդիսոնին, Քոլինին, Էսթերին, Թոմին, Մեթին, Արդենին, Ալանին, Ջեյլինին և Դեյվիդին. շնորհակալություն, որ կարդացիք այս ուղերձն իր ձևավորման փուլերում և իմաստուն ու ողջամիտ ներդրում ունեցաք դժվարին հատվածներում:

Թոմին, Էսթերին, Էդիսոնին, Օսթինին և Ջոնին. շնորհակալություն ձեր իմաստուն ավանդի համար այս գրքի հրատարակչական և մարկետինգային աշխատանքների մեջ:

Ռոբին և Վանեսային. շնորհակալություն այս ուղերձն ազգերին հասցնելու ձեր անխնջ աշխատանքի համար:

Մեր Հորը, մեր Տեր Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն. շնորհակալ եմք Ձեզ, որ լիովին փրկեցիք մեզ մեր մեղքերից, որդեգրեցիք՝ դարձնելով Ձո զավակները, և տվեցիք այս ուղերձը Ձո սիրելի ժողովրդի համար: Ձեզ լինի ամբողջ փառքը:

ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Դուք կարող եք ընթերցել այս գիրքն սկզբից մինչև վերջ, ինչպես և մնացած բոլոր գրքերը: Այնուամենայնիվ, գրքի վերջում ես ընդգրկել եմ հավելյալ նյութեր նրանց համար, ովքեր կցանկանան օգտագործել «Բարի՞, թե՞ Աստված» գիրքը՝ որպես ինտերակտիվ ուսուցողական նյութ: Դուք կարող եք ուսումնասիրել այս գիրքն անձամբ կամ խմբային միջավայրում: Այն նախատեսված է վեցշաբաթյա ուսուցման համար, բայց դուք ազատորեն կարող եք հարմարեցնել այն ձեր պահանջներին:

Ամեն շաբաթվա նյութերը պարունակում են հետևյալը.

- Չարցեր խմբային քննարկման կամ անձնական մտորման համար:
- Շաբաթական սերտողության նյութեր, որոնք կարող եք օգտագործել Աստծո հետ անձնական շփման ժամանակ:
- *Մտորե՛ք*. աստվածաշնչյան խոսք, որի շուրջ պետք է մտորեք ամբողջ շաբաթվա ընթացքում:
- *Կիրառե՛ք*. պարզ միջոց՝ առօրյայում ձեր սովորածը կիրառելու համար:

Ամեն շաբաթվան վերաբերող գրքի գլուխները նշված են այդ շաբաթվա քննարկման հարցերից առաջ:

Եթե դուք ընթերցում եք այս գիրքը «Բարի՞, թե՞ Աստված» դասընթացի շրջանակներում, մենք առաջարկում ենք ձեզ դիտել կամ ունկնդրել ամեն շաբաթվա ուսումնական տեսանյութը և պատասխանել գրքի վերջում զետեղված քննարկման հարցերին ձեր փոքր խմբում: Դրանից հետո խնդրեք ձեր խմբի բոլոր անդամներին ընթերցել գրքի համապատասխան գլուխները և սերտողության նյութերը՝ մինչև ձեր հաջորդ հավաքույթը: Ամեն շաբաթվա համար նախատեսված է մեկական ուսումնական տեսանյութ:

Այս ամենը ձե՛զ համար է:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջերս հեռախոսագրույց ունեցա մեծ հարգանք վայելող մի Զքրիստոնյա առաջնորդի հետ: Մենք արդեն հրաժեշտ էինք տալիս իրար, երբ նա անսպասելիորեն ասաց. «Ձո՛ն, սպասի՛ր մի րոպե: Ես պետք է մի բան ասեմ քեզ: Վերջին քսան տարիների ընթացքում դու շատ գրքեր ես գրել, բայց կա մի գիրք, որը դու պետք է գրես: Այն ձիշտ ժամանակին եկած մարգարեական ուղերձ է եկեղեցուն. սա Երկնքի հանձնարարությունն է քեզ»:

Երբ նա ավարտեց իր խոսքը, ես արդեն ծնկներիս վրա էի՝ երկյուղած Աստծո ներկայությունից: Այդ հեռախոսազանգից հետո մի քանի շաբաթ ներսումս այս գիրքը գրելու անհաղթահարելի ցանկություն առաջացավ:

Այս ուղերձը հիմնված է մեկ պարզ հարցի վրա. «Արդյո՞ք բարին բավական է»:

Մեր օրերում «բարի» և «Աստված» բառերը կարծես հոմանիշներ են դարձել: Մենք հավատում ենք, որ այն, ինչն ընդհանուր առմամբ բարի է համարվում, պետք է համապատասխանի Աստծո կամքին: Առատաձեռնությունը, խոնարհությունը, արդարությունը բարի են: Եսասիրությունը, ամբարտավանությունը, դաժանությունը չար են: Թվում է՝ այս տարբերակումը շատ հասարակ է: Բայց մի՞թե ամեն ինչ այդքան պարզ է: Եթե *բարին* այդ աստիճան ակնհայտ է, ինչո՞ւ է Եբրայեցիների 5.14-ը սովորեցնում, որ մեզ զանազանություն է հարկավոր՝ այն ճանաչելու համար:

Պողոս առաքյալը գրում է. «Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ի՞նչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Յոռմենացիների 12.2): Մենք չենք կարող զանազանել, թե ինչն է ճշմարտապես բարի մեզ համար՝ առանց նախապես մեր միտքը նորոգելու: Առանց վերափոխման, որը գալիս է մեր մտքերը նորոգելու միջոցով՝ մենք բաց ենք թողնում այն զարմանալի, Աստծով լեցուն կյանքը, որը կարող ենք ունենալ Քրիստոսի մեջ:

Մինչև այս աշխարհն արարելը, Աստված ծրագիր ուներ ձեր կյանքի համար, որում կան իրականացված նպատակներ, անսահման ուրախություն և լիակատար բավականություն: Նրա կամքը և ծրագիրը ձեր կյանքի համար կատարելապես ու լիովին բարի են. այնուամենայնիվ, գոյություն ունի կեղծված բարի, որը կարող է թույլ չտալ, որ ընդունեք Աստծո լավագույնը:

Ցավոք, մեզնից շատերը բավարարվել են այդ կեղծիքով: Մենք անգիտակցաբար (իսկ երբեմն՝ գիտակցաբար) մերժել ենք *Աստծուն*՝ ձգտելով ակնհայտորեն *բարի* նպատակների:

Առաջին եկեղեցու առաջնորդները շարունակ զգուշացնում էին մեզ այս խաբեության մասին (խաբված լինելը նշանակում է՝ հավատալ, որ մեր կյանքը համապատասխանում է ճշմարտությանը, այնինչ՝ իրականում այդպես չէ): Ինքը՝ Յիսուսն, զգուշացնում էր, որ մեր օրերում խաբեությունն այնքա՛ն հմտորեն է քողարկված լինելու, որ նույնիսկ ընտրյալները կարող են զոհ գնալ դրան: Մի՞թե մենք կարող ենք թեթևորեն վերաբերվել այս զգուշացումներին: Մի՞թե կարող ենք անտեսել դրանք՝ համարելով, որ մենք վեր ենք խաբեությունից և կարող ենք բնազդորեն զանազանել բարին չարից:

Ես բարի լուր ունեմ ձեզ համար. Աստված չի փորձում թաքցնել լավագույնը, որը պատրաստել է մեզ համար: Նա քող չի գցում մեր աչքերին: Նա խոստանում է, որ փնտրողները գտնելու են: Եթե նվիրվենք ճշմարտությունը փնտրելուն, մենք չենք խաբվի կեղծիքով: Յարցը հետևյալն է. արդյո՞ք մենք կուղղենք մեր հայացքը ճշմարտության Աղբյուրին, թե՞ կբավարարվենք Աստծո և Նրա կամքի մասին մակերեսային գիտելիքներով: Յուսով եմ, որ կարդալով այս գիրքը՝ դուք մեկընդմիջտ որոշում կկայացնեք, որ այլևս չեք բավարարվելու այն ամենով, ինչը չի համապատասխանում Աստծո լավագույնին ձեզ համար:

Եկեք աղոթենք մինչև սկսելը.

Յայր, Յիսուսի անունով, բացի՛ր իմ աչքերը, ականջները և սիրտը, որ տեսնեմ, լսեմ և հասկանամ Քո կամքն իմ կյանքի համար: Սո՛ւրբ Յոզի, սովորեցրո՛ւ ինձ Յիսուս Զրիստոսի ճանապարհների խորությունները այս ուղերձն ընթերցելու ընթացքում: Ես սպասում եմ Քեզնից՝ Իմ Ուսուցչից: Խոսի՛ր ինձ հետ այս գրքի ամեն նախադասությունը կարդալիս: Թող որ իմ կյանքը հավիտյան փոխվի: Ամեն՛ն:

ԻՆՉ Է ԲԱՐԻՆ

«Ոչ ոք բարի չէ, բայց միայն
մեկը՝ Աստված»:
— Մարկոս 10.18

Ամեն ինչ տիեզերքում բարի է այն չափով,
որով այն համապատասխանում է Աստծո
բնությանը, և չար՝ այն չափով,
որով դա տեղի չի ունենում:
— Է. Ու. Թոզեր

Բարին և չարը. բոլորս գիտենք այս երկուսի տարբերությունը, ճիշտ է: Չէ՞ որ ամեն մարդ ծնվում է ներհատուկ գիտելիքով բարու և չարի մասին:

Ես հաճախ եմ լսել, որ մարդն ի ծնե բարի է, բայց արդյո՞ք դա ճշմարիտ է: Մեր սրտերը ջերմացնող ֆիլմերը, վավերագրական կինոնկարները և այլ հեռուստատեսային հաղորդումներ ընդգծում են մարդու բարի լինելը: Ես ծանոթ չեմ հանրաճանաչ դարձած որևէ պատմության, վեպի կամ ֆիլմի, որում չարը հաղթում է բարուն:

Բոլորս էլ մեծացել ենք՝ դիտելով ֆիլմեր, որոնցում լավ մարդիկ մեծ դժվարություններ են հաղթահարում: Այդ մարդիկ խիստ անարդար պայմաններում էին. նրանց պարտություն էր սպառնում, հաճախ՝ ընդհուպ մինչև պատմության ավարտը: Բայց հանկարծ մեր հերոսները ձեռքում էին ունենում. նրանք հաղթանակ էին տանում կամ հաստատում արդարությունը: Մենք ակնկալում էինք նման ավարտները և ծափահարում էինք դրանց: Մենք ցանկանում էինք, որ բարին միշտ հաղթեր. չէ՞ որ Աստված բարու կողմն է:

Վերջին տարիներին հեռուստատեսային պրոդյուսերները և հեռուստաընկերություններն սկսեցին նոր միտում թելադրել. նրանք ներկայացրին հանրությանը ռեալիթի-շոուներ, որոնցում մարդկանց կյանքը փոխվում է:

Ամեն ինչ սկսվեց կարիքավոր ընտանիքների տները վերանորոգելուց: Մենք պոկ չէինք գալիս հեռուստացույցից՝ հիանալով բարերարների ոգևորվածությամբ և առատաձեռնությամբ աղքատների և կարիքավորների հանդեպ: Մենք ակնկալում էինք տեսնել նախագծի մասնակիցների զարմանքը և արտասվում էինք այն պահերին, երբ այդ «խեղձերն» առաջին անգամ տեսնում էին իրենց վերանորոգված տունը:

Հաջորդ նման նախագծերի մասնակիցներն օգնում էին գիրությամբ տառապող «անհաջողակներին» մեծ քանակությամբ քաշ կորցնել: Դրան հետևեցին հաղորդումները, որոնցում մարդկանց օգնում էին ձիշտ հագուստ, սանրվածք կամ շպար ընտրել, և այսպես շարունակ:

Շուտով հայտնիները միացան այս միտմանը: Հանրաձանաչ արտիստները հնարավորություն տվեցին նրանց, ովքեր այլապես հնարավորություն չէին ունենա ներկայացնել իրենց երգը և պարը: Մենք ցնծում էինք՝ տեսնելով, թե ինչպես է մի անհայտ մասնակից մեկ գիշերվա ընթացքում աստղ դառնալու հնարավորություն ստանում: Ինչպիսի՞ բարություն. ինչպիսի՞ առատաձեռնություն. ինչպիսի՞ համակրանք:

Ցանկացած հաղորդում, որում մարդիկ բարեգործությամբ էին զբաղվում, պաշտպանում էին անմեղներին կամ զոհաբերում իրենց ժամանակն անհայտ մարդկանց համար, հանրաձանաչ էր դառնում:

Այս թվում էին նաև հաղորդումները ոստիկանների կամ վարձու խուզարկուների մասին, ովքեր չար հանցագործների էին բռնում: Դրանք նույնպես ավելացան ամենաշատ դիտվող հաղորդումների ցուցակում:

Որպես ամփոփում՝ մեր ժամանցը հաճախ կենտրոնացած է մարդկության բարի կողմի վրա:

«101 փաստ վաճառքի և շուկայավարության մասին» ձեռնարկը սովորեցնում է, որ ցանկացած ապրանք պետք է թողնի լավ տպավորություն, ունենա լավ տեսք և հաճելի ձայն, կամ՝ լավ համ ու հոտ, որպեսզի մեծ տարածում գտնի շուկայում: Այն պետք է ազդի սպառողի զգացմունքների կամ զգայարանների վրա՝ նրան ավելի հանգիստ և ուրախ դարձնելով: Մենք գիտենք, որ լավ առարկաները վաճառվում են: Իսկապես որ, ո՞վ կցանկանա վատ բան գնել: Նման մարդիկ առնվազն պետք է տարօրինակ լինեն:

Մենք այսպիսի մեկնաբանություններ ենք լսում. «Նա լավ մարդ է», կամ. «Նա լավ կին է», և սովորաբար հավատում ենք մեր լսածին: Խոցելի մարդիկ անմիջապես թուլացնում են զգոնությունը և ընդունում ցանկացած խոսք կամ գործողություն այդ «բարի» համարվող մարդկանցից՝ ապահով և արժանահավատ համարելով: Բայց արդյո՞ք այդ գնահատականները մշտապես ձիշտ են:

Յնարավոր է արդյոք, որ մենք խաբեության մեջ հայտնվենք՝ «սխալ» անվանելով այն, ինչ ճիշտ է, և «ճիշտ» անվանելով այն, ինչ սխալ է: Եվ ո՞վ կարող է հստակորեն ցույց տալ տարբերությունն այս երկուսի միջև: Եվ անկասկած՝ մենք ինքներս ոչ մի դեպքում չենք խաբվի, եթե բարին՝ չար կամ չարը՝ բարի անվանենք, ճիշտ է:

Մտածեք այս մասին. դարեր առաջ, մի հարուստ երիտասարդ իշխան մոտեցավ Յիսուս Քրիստոսին: Նա անկեղծ և բարոյապես մաքուր մարդ էր: Նա երբեք շնություն չէր գործել, չէր սպանել, չէր ստել, չէր գողացել և ոչ ոքի չէր խաբել իր գործարքների մեջ: Նա միշտ հարգանքով էր վերաբերվել իր ծնողներին: Նա օրինակելի քաղաքացի էր և, ամենայն հավանականությամբ, շատերի հիացմունքի առարկան էր: Նա պատվեց Յիսուսին՝ ողջունելով Նրան որպես «Բարի Վարդապետ»:

Մի առաջնորդ խոսում էր մեկ այլ առաջնորդի հետ. մի բարի մարդ դիմում էր մեկ այլ բարի մարդու. այս կերպով հարուստ երիտասարդն ընդհանրություններ էր փնտրում ակնառու Ուսուցչի հետ, Ում անձամբ չէր ճանաչում: Միգուցե նա մտածում էր իր սրտում. *«Եթե ես շողորթթեմ այս Մարգարեին՝ խոսելով Նրա բարության մասին, դա կհամոզի Նրան բարի պատասխան տալ իմ հարցմանը»*: Այնուամենայնիվ, նախքան նրա հարցին անդրադառնալը՝ Յիսուսը վիճարկեց նրա ասածը. «Ինչո՞ւ ես Ինձ բարի ասում: Ոչ ոք բարի չէ, բայց միայն մեկը՝ Աստված» (Մարկոս 10.18):

Ինչո՞ւ Յիսուսն ուղեց այն մարդուն, ով Իրեն բարի անվանեց: Մի՞թե Յիսուսը բարի չէ: Իհարկե, Նա բարի է: Այդ դեպքում, ինչո՞ւ նա այդպես ասաց: Յնարավոր է արդյոք, որ այն «բարի»-ն, որի մասին խոսում էր երիտասարդ իշխանը, հիմնված էր սխալ չափանիշի վրա: Այլ կերպ ասած՝ հնարավոր է, որ այս մարդու չափանիշը բարու մասին՝ տարբերվում էր Աստծո չափանիշից:

Եթե դուք կամ ես հայտնվեինք այդ մարդու փոխարեն, ինչպիսի՞ պատասխան կստանայինք՝ Յիսուսին «բարի Վարդապետ» անվանելով: Ես կարող եմ ասել, թե ինչ կասեր Յիսուսը ինձ: Որպես մարդ, ով տարիներ շարունակ Աստծո զավակ է, ով կարողացել է Աստվածաշունչն ավելի քան մեկ անգամ, երկար ժամեր է տրամադրել Սուրբ գրքի ուսունասիրությանը, ամեն օր աղոթել է և նույնիսկ եղել է լրիվ ժամանակվա ծառայության մեջ ու մի քանի հանրաճանաչ քրիստոնեական գրքեր է գրել՝ ես կստանայի միևնույն պատասխանը, որ ստացավ այդ հարուստ երիտասարդ իշխանը: Ճիշտ նույն կերպով Յիսուսը կասեր. «Ձո՛ն, ինչո՞ւ ես բարի անվանում Ինձ»: Որտեղի՞ց ես գիտեմ սա: Բանն այն է, որ Աստծո Յոգին տվել է ինձ միևնույն դասը, ինչ Յիսուսը՝ այդ իշխանին:

Ցնցող լուր

Թույլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ: 1990-ական թվականների վերջում ուղևորվեցի Շվեդիա՝ մի համաժողովում քարոզելու համար: Թռիչքը տևեց ամբողջ գիշեր, և ինքնաթիռը վայրէջք կատարեց Ստոկհոլմում վաղ առավոտյան: Երբ իջա ինքնաթիռից, վերցրի ուղեբեռս և անցա մաքսային ստուգումը, ինձ դիմավորեց իմ շվեդ հյուրընկալը՝ ջերմ ողջույնով: Մինչև օդանավակայանի տերմինալից դուրս գալը, նա պատմեց մի իրադարձություն, որը դառնալու էր այդ տարվա և, միգուցե, ամբողջ տասնամյակի գլխավոր նորությունը:

- Ջոն, մի շատ ցավալի դեպք է պատահել անցյալ գիշեր՝ մինչ դու թռչում էիր այստեղ, - ասաց նա, - միգուցե դու նույնիսկ տեղյակ չես այդ մասին: Ես կպատմեմ քեզ:

- Ի՞նչ է պատահել, - հարցրի ես՝ և՛ մտահոգված, և՛ հետաքրքրված:

Իմ հյուրընկալը պատմեց, որ ընդամենը մի քանի ժամ առաջ մի մահացու ավտովթար էր տեղի ունեցել, որի զոհերից մեկը, հավանաբար, ամենաճանաչված և սիրված անձնավորությունն էր ամբողջ աշխարհում: Այն ամենը, ինչ այդ կինն անում էր, հայտնվում էր զանգվածային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Կինս՝ Լիզան, և ես հիացմունքով էինք վերաբերվում նրա մարդասիրական գործունեությանը և մեծ հաճույքով կարդում էինք հոդվածներ նրա մասին ամսագրերում և թերթերում: Ավելի անկեղծ ասած՝ ես սիրում էի ոչ միայն կարդալ հոդվածներ նրա մասին, այլև նայել նրա կյանքը ներկայացնող լուսանկարներ: Կարելի է ասել, որ ես նրա ՄԵԾ երկրպագուն էի: Ամեն անգամ, երբ հեռուստացույցով խոսում էին նրա մասին, թողնում էի բոլոր գործերս և ուշադրությամբ լսում էի:

Ես աննկարագրելի ցնցում ապրեցի՝ լսելով այդ կնոջ մահվան լուրը: Նա փոքրիկ երեխաների երիտասարդ մայր էր: Դրա հետ մեկտեղ՝ եռանդուն պետական գործիչ էր: Նա և՛ խելացի էր, և՛ գեղեցիկ: Նա օգտագործում էր իր համաշխարհային ազդեցությունը՝ իրականացնելու համար լայնամասշտաբ մարդասիրական ծրագրեր պատերազմական երկրներում տուժած բնակչության և որբացած երեխաների համար: Դա արդեն բավական էր իմ սիրտը շահելու համար, բայց նրա դրական հատկանիշներն ավելին էին: Նա սիրում էր իր երկրպագուներին և երբեք չէր անտեսում նրանց. նա միշտ ողջունում էր նրանց՝ կամ անկեղծ ժպիտով, կամ այլ ջերմ, անձնական ձևով:

Նրա մահվան լուրը ցնցեց ինձ. անհավատալի էր, որ դա տեղի էր ունեցել: Ինչպե՞ս նա կարող էր մահանալ: Ինչպե՞ս դա կարող էր տեղի ունենալ:

Իմ հյուրընկալը հյուրանոց հասցրեց ինձ: Առաջին բանը, որն արեցի իմ համարը մտնելուն պես, հեռուստացույցը միացնելն էր: Բոլոր ալիքներով խոսում էին այդ պատահարի մասին: Ես չէի հասկանում լուրերի մեծ մասը, որովհետև դրանք շվեդերեն էին, և սկսեցի թերթել ալիքները, մինչև որ գտա «Սի-Էն-Էն» և «Բի-Բի-Սի Սքայ Նյուս» ալիքները: Նստեցի մահճակալի եզրին՝ առանց ձամպրուկներս բացելու. անհավատալի էր, որ դա տեղի էր ունեցել:

Հեռուստաալիքների եթերում հազարավոր սզացող մարդիկ էին՝ հավաքված այդ կնոջ առանձնատան մոտ: Տեսախցիկները նկարահանում էին տարբեր տարիքի մարդկանց, ովքեր արտասովոր ծաղիկներ էին դնում նրա առանձնատան դարպասի մոտ: Մարդիկ գրկախառնված լաց էին լինում կամ խմբված աղոթում էին: ամբողջ աշխարհը ցնցվել էր:

Հաջորդ չորս օրերի ընթացքում այս ողբերգությունն աշխարհի բոլոր թերթերի առաջին էջերում էր: Բոլոր լրատվամիջոցները խոսում էին այդ ավտովթարի, դժբախտ պատահարի հետաքննության, այդ կնոջ ընտանիքի արձագանքի և նրա հուղարկավորության մասին: Պետությունների նախագահները, համաշխարհային առաջնորդները, ինչպես նաև հարյուրավոր հանրահայտ դերասաններ և երգիչներ մասնակցեցին նրա հոգեհանգստի արարողությանը, որը դարձավ ամենադիտված իրադարձություններից մեկը հեռուստատեսության պատմության մեջ:

Այդ առաջին օրը Ստոկհոլմում ես ավելի ու ավելի էի տխրում իմ հյուրանոցային համարում և նույնիսկ չէի կարողանում պատրաստվել երեկոյան հավաքույթին: Միտքս զբաղված էր իմ մեջ ծագած հարցերով: Ես փորձում էի հաղթահարել այն բարկությունը, որն առաջանում էր, երբ մտածում էի նրա մահվանը հանգեցնող անիմաստ դիպվածների մասին: Այդուհանդերձ, այդ տրտմության հետ մեկտեղ, զգում էի, որ մեկ այլ միտք էր փորձում գրավել իմ ուշադրությունը:

Ես աշխատում էի ազատվել դրանից, բայց՝ ապարդյուն: Ի վերջո, մի քանի ժամ զգացմունքներիս և հոգուս մեջ աններդաշնակություն զգալուց հետո, ծնկի եկա մահճակալիս մոտ և աղոթեցի. «Յայր, ես տրտմում եմ այդ կնոջ մահվան պատճառով, սակայն սրտումս այնպիսի զգացողություն կա, ասես ինչ-որ բան սխալ է: Ի՞նչ է տեղի ունենում»:

Գրեթե անմիջապես ես լսեցի սրտիս խորքում. «Կարդա՛ Յայտնություն գրքի տասնութերորդ գլուխը: Չէի հիշում, թե ինչ էր գրված Յայտնություն 18-րդ գլխում, որովհետև ցավոք, այդ ժամանակ խորապես չէի ուսումնասիրել այդ գիրքը: Ես բացեցի Աստվածաշունչս և սկսեցի կարդալ: Սիրտս արագորեն բաբախում էր, երբ հասա յոթերորդ խոսքին.

«Եվ որչափ որ իրեն փառավորեց և զեխացավ, այնչափ տանջանք և սուգ տվեք դրան, որովհետև նա իր սրտում ասում է. «Թագուհի եմ նստած և այրի չեմ և բնավ սուգ չեմ տեսնի»։ Նրա համար մեկ օրում պիտի գան դրա վրա իր հարվածները՝ մահ և սուգ և սով, և կրակով կայրվի, որովհետև զորավոր է Տեր Աստվածը՝ դրա դատաստանն անողը: Եվ լաց ու կոծ կանեն դրա վրա երկրի թագավորները, որ դրա հետ պոռնկացան և զեխություն արին...» (Չայտնություն 18.7-9):

Ես զգացմունքային պոռթկում ունեցա այս խոսքերը կարդալուց հետո: Այս հատվածում նկարագրված կնոջ և այն կնոջ միջև, ում մահվան լուրը պատմվում էր բոլոր հեռուստաթերթներում, ակնհայտ զուգահեռներ կային: Ասես գլխիս մի դույլ սառցաջուր լցնեին. ես ցնցված, այլալված ու շփոթված էի: Ինչպե՞ս այս հատվածը կարելի էր վերագրել այդ կնոջը, ով հանրահայտ բարեգործ էր:

Կարևոր է նշել, որ այս խոսքերում Չովհաննես առաքյալը նկատի չունի որևէ մարդու: Այս հատվածը խոսում է մի հոգու մասին, որը տարածված է այս անկում ապրած աշխարհում: Այնուամենայնիվ, այն շատ նմանություններ ուներ ստեղծված իրավիճակի հետ, և Աստծո Չոզին օգտագործեց այն, որպեսզի փոփոխություն բերեր մտածելակերպիս մեջ: Երբևէ պատահե՞լ է, որ Աստված խոսի ձեզ հետ որևէ սուրբգրային հատվածի միջոցով՝ վերագրելով այն ձեր կյանքի իրավիճակներին: Ինձ հետ հենց այդպիսի բան պատահեց:

Աստծո Չոզին վիճարկեց այն, թե ինչպես էի ես որոշում *բարին*՝ նույն կերպով, ինչպես Չիտուսը վարվեց հարուստ երիտասարդ առաջնորդի հետ: Չասկանալով, թե ինչ էր Աստված հայտնում ինձ՝ ես բարձրաձայն ընդդիմացա իմ հյուրանոցային համարում.

- Տե՛ր, մի՞թե այս խոսքը որևէ կապ ունի այդ կնոջ հետ: Չէ՞ որ նա բազմաթիվ մարդասիրական ծրագրեր էր իրականացրել պատերազմական երկրներում տուժածների և որբացած երեխաների համար, և...

«Նա բացահայտ կերպով ցուցադրում էր իր անարգանքն իր ընտանիքի իշխանության հանդեպ և իր շնությունը՝ ամբողջ աշխարհի հանդեպ, - ասաց Տերը: - Նա հնազանդ չէր Ինձ»:

Դեռ չհավատալով լսածիս՝ ես կրկին հակառակվեցի.

- Բայց չէ՞ որ նա այդքան բարիք էր գործել մարդկության համար:

Ես լսեցի Աստծո Չոզուն. «Որդի՛ն, Եվային չհրապուրեց բարու և չարի գիտության ծառի չար կողմը, այլ՝ *բարի*»:

Ես սառեցի տեղումս, երբ պարզորեն լսեցի այդ խոսքերն իմ սրտում: Մի քանի վայրկյան անց բացեցի Ծննդոց գրքի 3-րդ գլուխը՝

հաստատելու համար այն, ինչ լսեցի: Եվ իհարկե, ես կարդացի.

«Եվ կինը տեսավ, որ ծառը լավ էր ուտելու համար, և թե *հաճելի* էր աչքերին, և *փափազելի* է ծառը նայելու համար, առավ նրա պտղից և կերավ» (Ծննդոց 3.6):

Երբ տեսա «լավ», «հաճելի» և «փափազելի» բառերը, զարմանքից քարացա: Ես լսեցի Աստծո Չոգու ձայնը. «Գոյություն ունի բարի, որն Ինձնից չէ: Այն հնազանդ չէ Ինձ»:

Ես նստեցի՝ մտածելով այն ամենի մասին, ինչ լսեցի և կարդացի: Աստծո Խոսքը բացահայտեց իմ սխալմունքն ու շտկեց ինձ: Ակնհայտ էր, որ իմ բարու չափանիշը տարբերվում էր բարու աստվածային չափանիշից:

Աստված շարունակեց խոսել սրտիս հետ: Նա ցույց տվեց, որ «բարի» մարդկանց և հատկապես՝ քրիստոնյաների մեծամասնությունը հրապուրված չէ սեռական օրգաններով, դիվային երգերով, որոնք բացահայտորեն ապստամբ բառեր ունեն, ռոք-աստղերով, ովքեր տարածում են սատանայապաշտությունն իրենց համերգների ընթացքում, մասսայական սպանություններով, գողությամբ և թալանով, կամ ցանկացած այլ ակնհայտորեն վատ բաներով: Նրանցից շատերը խաբված են՝ հրապուրվելով այնպիսի բաներով, որոնք ճիշտ, բարի և իմաստուն են թվում, սակայն հակառակ են Նրա իմաստությանը: Գրված է.

«Կա ծանապարհ, որ ուղիղ է մարդու առջև, բայց նրա վերջը մահվան ծանապարհներ են (կամ՝ մահվան ծանապարհ է)» (Առակաց 14.12):

Եկե՛ք սկզբում անդրադառնանք այս խոսքի երկրորդ մասին. «բայց նրա վերջը մահվան ծանապարհ է»: Շատ քրիստոնյաներ ուշադրություն չեն դարձնում սրան, քանի որ մտածում են. «Ես փրկված եմ, երկինք եմ գնում և մահ չեմ տեսնի»: Նրանց կարծիքով՝ այս խոսքը վերաբերում է միայն անհավատներին: Այնուամենայնիվ, եկեք նորովի տեսնենք, թե ինչ նկատի ունի Աստված այս խոսքում:

Նայե՛ք «մահվան ծանապարհ» արտահայտությանը: Սուրբ գիրքը մեկ անգամ չէ, որ խոսում է կյանքի ծանապարհի և մահվան ծանապարհի մասին: Աստված հայտարարում է Իրեններին (ոչ թե նրանց, ովքեր չեն պատկանում Իրեն). «Այսպես է ասում Տերը. «Ահա ես դնում եմ ձեր առջև կենաց ծանապարհը և մահվան ծանապարհը»» (Երեմիա 21.8):

«Ծանապարհ» բառն այս խոսքում նշանակում է՝ այն իմաստությո-

յունը, որով մենք ապրում ենք: Այս բառը հաճախ է հանդիպում Սուրբ գրքում: Հիսուսը ձևակերպում է սա հետևյալ կերպով. «Նեղ դռնով մտեք, որովհետև լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը, որ կորուստն (դեպի մահն) է տանում, և շատերն են դրանով գնացողները: Քանի՛ նեղ է դուռը և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք...» (Մատթեոս 7.13,14): Բայց մի՞թե այս հատվածում Հիսուսը խոսում է միայն հավիտենության մասին:

Աստված դրեց կյանքի ծառը Եդեմի պարտեզի կենտրոնում: Այն խորհրդանշում էր Աստծո կյանքի ճանապարհը՝ Նրա իմաստությունը: Պարտեզի կենտրոնում գտնվող սյուս ակնառու ծառը կոչվում էր բարու և չարի գիտության ծառ: Այս ծառը խորհրդանշում էր մահվան ճանապարհը կամ մարդկային իմաստությունը՝ առանց Աստծո: Այս ծառի պտղից ճաշակելը չազդեց միայն Ադամի և Եվայի հանդերձյալ կյանքի վրա. նրանք ակնթարթորեն կրեցին դրա ազդեցությունը: Մինչև այդ անմիտ քայլը, նրանք անկաշկանդ, արդյունավետ, առողջ ու հաջողակ էին բոլոր գործերի մեջ, որ իրենց սրտում որոշել էին անել: Այնուամենայնիվ, հենց որ նրանք ճաշակեցին արգելված ծառից, կյանքը ծանր դարձավ: Հայտնվեցին հիվանդությունը, պակասությունը, լարված ծանր աշխատանքը և այնպիսի դժվարություններ, որոնց նրանք ծանոթ չէին: Նրանք ոտք էին դրել մահվան ճանապարհին:

Այդուհանդերձ, Աստված՝ Փրկիչ է: Նա արդեն ծրագրել էր, որ վերականգնելու էր այն, ինչ մարդը կորցրեց: Նա *ուխտ կնքեց*՝ կյանքի ճանապարհը վերականգնելու համար: Նրա իմաստությունը ևս մեկ անգամ տալու էր մարդկանց ձմարիտ երջանկություն, հաճելի կյանք, խաղաղություն, առատություն և այլ մեծ առավելություններ.

«Երանի՛ այն մարդուն, ով իմաստություն է գտել... քո բոլոր ցանկալի բաները նրան չարժեն: Նրա աջ ձեռքին օրերի երկարություն կա, նրա ձախ ձեռքին՝ հարստություն և փառք: Նրա ճանապարհները հաճելի ճանապարհներ են, և նրա բոլոր շավիղները խաղաղություն են: Նա կենաց ծառ է նրանց համար, որ բռնել են նրան, և նա իրեն պինդ բռնողին երջանիկ կանի» (Առակաց 3.13-18):

Աստվածաշունչը ցույց է տալիս, որ կիրառելով Աստծո իմաստությունը՝ մենք կունենանք պտղաբեր ընթացք, արդյունավետություն, հաջողություն, երկար կյանք, ներսի խաղաղություն և պատիվ: Ծառն այնպիսի բան է, ինչից մարդիկ ճաշակում են: Համաձայն այս խոսքի՝ եթե մենք գնանք կյանքի (իմաստության) ճանապարհով, կդառնանք կյանքի

ծառ՝ սնուցման աղբյուր նրանց համար, ովքեր ճաշակում են մեր արդյունքները: Հակառակը նույնպես ճշմարիտ է: Եթե մենք ապրենք մարդկային իմաստությամբ, մենք կործանարար ծառ կդառնանք, և նրանք, ովքեր կճաշակեն մեր արդյունքները, կընթանան դեպի ծանր աշխատանքը, ճնշվածությունը, անարդյունավետությունը, հիվանդությունը, եսասիրությունը և հոգևոր մահվան այլ կողմնակի հետևանքները:

Վերադառնալով Առակաց 14.12-ին՝ մենք կարդում ենք. «Կա ծանապարհ, որ ուղիղ է մարդու առջև (կամ՝ ուղիղ է թվում մարդուն), բայց նրա վերջը մահվան ճանապարհներ են»: Հասկանալի է, որ այս խոսքի առաջին մասը կարող է վերաբերվել ցանկացած մարդու՝ թե՛ քրիստոնյայի, թե՛ անհավատի: Կա ծանապարհ, որն ուղիղ է թվում. այն թվում է բարի, իմաստուն, օգտակար, մարտավարական, ընդունելի, շահավետ և այլն: Այնուամենայնիվ, մենք ստացել ենք պարզ զգուշացում. այն, ինչը բարի է թվում, կարող է լինել կործանարար, վնասակար և անարդյունավետ, այսինքն՝ կարող է լինել մահվան ճանապարհը:

Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է այս զգաստացնող հորդորը հավատացյալներին.

«...որի համար շատ բան ունենք ասելու... որովհետև դուք դանդաղ եղաք լսելիքով: Որովհետև ժամանակին նայելով՝ պիտի վարդապետ լինեիք. կրկին կարոտ եք սովորելու, թե ինչ են Աստծո խոսքերի առաջին նշանագիրները, և կարոտողներ եղաք կաթի, ոչ թե հաստատ կերակուրի... Բայց կատարյալների համար է հաստատ կերակուրը, որոնց *զգայարանները վարժողությամբ կրթված են բարին և չարը զանազանելու*» (Եբրայեցիների 5.11,12,14):

Ակնհայտ է, որ զանազանությունը գլխավոր գործոնն է, որով պետք է որոշել, թե իրականում որն է բարին, և որը՝ չարը: Այլ կերպ ասած՝ այն, ինչն իրականում բարի է, միշտ չէ, որ պարզ է մեր բնական մտքի, դատողության կամ զգայարանների համար:

Դուք կարող եք հարցնել. «Մի՞թե Եբրայեցիների թղթի հեղինակը չասաց, որ մեր զգայարանները կարող են վարժվել՝ զանազանելու համար»: Այո, նա այդպես էլ ասաց, բայց ո՞ր զգայարանների մասին էր նա խոսում: Կարող եք տեսնել, որ այս հատվածի սկզբում հեղինակն ասում է, որ նա գրում է սա քրիստոնյաներին, ում լսելիքը ծանրացել է: Ո՞ր լսելիքի մասին է խոսքը: Մի՞թե բոլոր եբրայեցի հավատացյալները լսողական սարքերի կարիք ունեին: Հագիվ թե: Նա խոսում էր սրտերով լսելու կարողության մասին: Հիսուսը մշտապես սովորեցնում էր.

«Նա, ով լսելու ականջ ունի, թող լսի» (Մատթեոս 11.15): Մենք կարող ենք ասել, որ այս ուսմունքին ներկա բոլոր մարդիկ ականջներ ունեին, բայց ոչ բոլորը զանազանող սիրտ ունեին, որպեսզի լսեին Աստծո խոսքը, որը լավագույնն էր նրանց համար:

Մի փոքր ուշ մենք ավելի խորապես կքննարկենք հոգևոր զանազանությունը: Այնուամենայնիվ, այս պահին կարող ենք կարևոր հետևություն անել. առաջին հայացքից անկարելի է ճշտորեն զանազանել բարին և չարը: Մինչև այդ հանդիպումն Աստծո հետ Ստոկհոլմի հյուրանոցային համարում, ես հավատում էի, որ բարին ու չարը հասկանալի են մեզ համար, որ դրանք պարզ և ակնհայտ են: Բայց և այնպես, հիշեք ևս մեկ օրինակ: Հիսուսի գլխավոր թիմակիցներից մեկը՝ Պետրոսը, խոսեց Հիսուսի պաշտպանության և երկարատև կյանքի մասին: Այն, որ նա լավ խորհուրդ էր տալիս իր Ղեկավարին, անվիճելի էր թվում: Չնայած դրան՝ Հիսուսը խստորեն հանդիմանեց Պետրոսին՝ ասելով, որ նրա շահերը՝ Աստծո շահերը չէին (տես Մատթ. 16.21-23): Բացի այս հատվածից՝ Աստվածաշնչում կան շատ այլ օրինակներ, որոնց միջոցով կարող եմ ցույց տալ, որ բարին և չարը պարզ ու ակնհայտ չեն:

Սողոմոնն աղոթեց. «Տո՛ւր ինձ իմաստուն սիրտ, որ ես կարողանամ... իմանալ տարբերությունը ճշտի և սխալի միջև» (Գ Թագավորաց 3.9, NLT): Մարդը պետք է ունենա լուսավորված և վարժված սիրտ՝ տարբերելու համար այն, ինչն Աստված *բարի* կամ *չար* է անվանում: Եվան կատարյալ էր ամեն առումով. այն պարտեզը, որտեղ նա ապրում էր, լի էր Աստծո հոգոր և ազդեցիկ ներկայությամբ: Այնուամենայնիվ, այն, ինչ նա զանազանեց որպես լավ, հաճելի և փափագելի, իրականում չար ու կործանարար էր նրա համար: Նա խաբվեց և կրեց դրա հետևանքները:

Այս գրքի նպատակն է՝ Աստծո խոսքի միջոցով և Սուրբ Հոգու օգնությամբ լուսավորել, այսինքն՝ ցույց տալ տարբերությունը բարերարի և կործանարարի միջև, այսինքն՝ այն բաների, որոնք բարի են, և այն բաների, որոնք, ի վերջո, կործանելու են ձեզ: Եթե Եվան, ով կատարյալ էր և ապրում էր անթերի միջավայրում, կարող էր խաբվել, որքա՞ն ավելի հեշտորեն մենք, ունենալով ոչ կատարյալ միտք և ապրելով ապականված աշխարհում՝ խոտորված հասարակության մեջ, կարող ենք մոլորվել ճշմարտությունից՝ բարի անվանելով այն, ինչը կործանարար է մեզ համար:

ԻՆՉՊԵՍ ԴԵ ՊԱՏԱՀԵՑ

«Այնպես որ, մի՛ խաբվեք, իմ թանկագին եղբայրներ և քույրեր: Այն ամենը, ինչ բարի և կատարյալ է՝ պարզ և, որն իջնում է մեզ մոտ Աստուծուց՝ մեր Յորից...»:
— Յակոբոս 1.16,17, NLT

(Քրիստոնյան) չի մտածում, որ Աստված սիրում է մեզ, քանի որ մենք բարի ենք, այլ՝ որ Աստված բարի կդարձնի մեզ, քանի որ Նա սիրում է մեզ...
— Կ. Ս. Լյուիս

Այդ օրը Շվեդիայում ես, նստած իմ հյուրանոցային համարում, ցնցված էի. զգացմունքներս փոթորկվում էին: Աստված պատասխանեց իմ տրտմությանը, որի պատճառն այդ հանրահայտ կնոջ մահն էր. ես երկյուղած էի, բայց, միաժամանակ, մտահոգված էի: Ես շփոթված էի և բազմաթիվ հարցեր ունեի: Տարիներ շարունակ ծառայության մեջ էի. գրքեր էի գրել և սովորեցրել էի հավատացյալներին բոլոր աշխարհամասերում՝ բացի Անտարկտիկայից: Այնուամենայնիվ, քիչ առաջ բացահայտվեց իմ անիրազեկությունն այն մասին, թե իրականում ի՞նչ է բարին:

Գլխավոր հարցերը, որոնք խոնվում էին մտքումս, հետևյալն էին. «Ուրիշ ի՞նչ եմ ես բարի համարել, ինչը բարի չէ Աստծո համար», և հավասարապես կարևոր մի հարց. «Ինչպիսի՞ն են եղել դրա հետևանքներն ինձ համար»:

Մինչև այս հարցերին անդրադառնալը, արժե վերադառնալ այնտեղ, որտեղից այս ամենը սկիզբ առավ՝ Եղեմի պարտեզը: Սա տրամաբանական է, քանի որ Սուրբ Յոզիան օգտագործեց այս օրինակը, որպեսզի գրավեր իմ ուշադրությունն այդ հյուրանոցային համարում: Կա

մի հարց պարտեզում տեղի ունեցածի վերաբերյալ, որը տարիներ շարունակ հանգիստ չի տվել ինձ և շատ այլ մարդկանց. ինչպե՞ս օձը կարողացավ տրամադրել Եվային Աստծո դեմ:

Եկեք մանրամասնորեն դիտարկենք այս հարցը: Եվան ապրում էր կատարյալ միջավայրում: Ոչ մի հայր, ամուսին, տնօրեն կամ ուսուցիչ երբևէ վիրավորանք չէր հասցրել նրան: Նա ապրում էր բացարձակ խաղաղության և անդորրի մեջ: Նա առատություն ուներ ամեն ինչում. նրա կյանքում չկար ոչ մի հիվանդություն կամ պակասություն: Ամենակարևորն այն էր, որ նրա կյանքը ներդաշնակ էր իր Արարչի հետ: Աստծո ներկայությունը տարածվում էր երկրի մթնոլորտում: Նա հաճախ էր քայլում պարտեզում Ադամի և Եվայի հետ: Ուրեմն, ինչպե՞ս օձը կարողացավ կնոջն ու տղամարդուն տրամադրել Աստծո դեմ:

Եթե գտնենք այս առեղծվածի պատասխանը, մենք կհասկանանք, թե ինչպե՞ս թշնամին կարող է անել նույնը այսօր: Եթե իմանանք նրա մարտավարությունը, մենք այդքան հեշտորեն խաբեության զոհ չենք դառնա և անհնազանդ չենք լինի մեր Արարչին:

Յոյակապ պարտեզ

Սկզբում Աստված ստեղծեց կատարյալ աշխարհ: Այն գեղեցիկ և անթերի էր՝ լցված առատությամբ և բերկրանքով: Աստված չստեղծեց միայն մի քանի տեսակի կենդանիներ, ծառեր և բնատեսարաններ: Նա ստեղծեց կենդանի արարածների ավելի քան մեկ միլիոն տեսակ, բույսերի ավելի քան երկու հարյուր հիսուն հազար տեսակ, ծառերի ավելի քան հարյուր հազար տեսակ և քարերի, հողի ու բնական պաշարների անթիվ տեսակներ: Երկիրը գլոխգործոց էր: Արդեն հազարավոր տարիներ են անցել, իսկ գիտնականները դեռ ուսումնասիրում են այն և սքանչանում դրա բարդությամբ: Նրանք դեռ չունեն լիարժեք պատկերացում մեր աշխարհի մասին և, հավանաբար, երբեք էլ չեն ունենա:

Աստված ստեղծեց այս ամենը միայն իր սիրո առարկայի՝ մարդու համար: Եվ չնայած որ ամեն ինչ երկրի վրա արդեն իսկ աներևակայելի էր, Արարիչը չսահմանափակվեց դրանով և էլ ավելի առաջ գնաց: Նա երկրի վրա անձամբ տնկեց, ոչ թե ստեղծեց հրաշալի պարտեզ:

Ես սիրում եմ բնապատկերներ և պարտեզներ: Անկեղծ ասած՝ ես դրանց վրա աշխատել չեմ սիրում. հարցրեք այդ մասին կնոջս՝ Լիզային: Նա կխոժոռի դեմքը, երբ պատմի, թե ինչպիսի արհամարհանքով եմ ես վերաբերվում այգեգործությանը: Ես պարզապես սիրում եմ

նստել կամ զբոսնել խնամված պարտեզներում, պտղատու այգիներում, խաղողի այգիներում և ծառաստաններում: Ես զմայլվում եմ գույներով, բույրերով, հողով և տարատեսակ ծառերով ու բույսերով:

Վերջերս քարոզում էի Գերմանիայի Կոնստանց քաղաքում, որը կրում է իր մոտակայքում գտնվող լճի անունը: Կոնստանց լիճն ամենամեծն է Գերմանիայում. այն լցվում է Ալպյան լեռների ձնհալի ջրերով: Լիզան և ես այցելել էինք մեր մտերիմ ընկերներին՝ հովիվ Ֆրեյմուտին (սա լավ գերմանական անուն է), և նրա կնոջը՝ Յոաննային:

Այդ ընթացքում մենք մի քանի ազատ օր ունեինք, և մեր հյուրընկալները սիրով առաջարկեցին մեզ մի շաբթ զվարճալի զբաղմունքներ՝ մեր ժամանակը հագեցած դարձնելու համար: Մենք իմացանք, որ Կոնստանցում անթիվ զբաղմունքներ կան. այնուամենայնիվ, նրանց առաջարկների թվում չկար այն, ինչը ես ամենից շատ էի ցանկանում:

Կոնստանց լճի վրա կա մի վայր, որը կոչվում է Ծաղիկների կղզի: Այդ կղզու իսկական անվանումը Մայնաու է, բայց Ծաղիկների կղզի անվանումն ավելի լավ է նկարագրում այն, որովհետև ամբողջ կղզին մի մեծ պարտեզ է: Ես ուզում էի զբոսնել այնտեղ, բայց մենք պետք է առավոտից երեկո այնտեղ լինեինք՝ այն ամբողջովին տեսնելու համար:

Սկզբում Լիզան, Յոաննան և Ֆրեյմուտը մտածում էին, որ ես կատակում էի, երբ խնդրեցի նրանց այդ կղզի գնալ: Ի վերջո, ո՞վ կպատկերացներ, որ սպորտ և մրցակցային խաղեր սիրող մարդը նման ձանձրալի զբաղմունք կնախընտրեր: Երբ ես մի քանի անգամ ասացի այդ մասին, մեր ընկերները պատասխանեցին.

- Կարծում էինք՝ դու լուրջ չէիր ասում դա: Դու իսկապե՞ս ուզում ես գնալ այնտեղ:

- Այո՛, - ասացի ես:

Այսպիսով, մենք ծրագրեցինք մեր էքսկուրսիան, թեև ոչ ոք՝ բացի ինձնից, խանդավառված չէր դրանով:

Այդ օրը շատ տպավորիչ էր: Մենք մեքենայով գնացինք կղզի՝ անցնելով գետի վրայի կամրջով, մուտքի տոմսեր գնեցինք կղզու դարպասի մոտ և սկսեցինք մեր էքսկուրսիան: Այն գրեթե անմիջապես գերեց ինձ: Ես հիացած էի այդ հսկա պարտեզի գեղեցկությամբ և բազմազանությամբ: Եվ ամենահրաշալիին այն էր, որ ես մենակ չէի. իմ երեք ուղեկիցների կատակները և քնծիծաղները դադարեցին, հենց որ բոլորս սկսեցինք նայել այդ գլուխգործոցին:

Ամեն ինչ այդ հսկայական պարտեզում բերկրանք էր պատճառում մարդու աչքին: Գեղեցիկ, կանոնավոր ծաղկամարգերն ընդգծում էին իրենց միջև գտնվող զբոսանքի արահետները այնպես, որ ամեն

մի բույս երևում էր: Այնտեղ կային ծաղիկներից պատրաստված քարտեզներ, տարբեր ծառերից, բույսերից և ծաղիկներից պատրաստված կենդանիների, երեխաների և նույնիսկ տների արձաններ: Այդ սքանչելի տեսարանը լրացնում էին բազմաթիվ հոյակապ ջրային ավազանները՝ ցրված կղզի-պարտեզով մեկ:

Բոլորիս էլ դուր եկավ այդ գեղեցիկ և ստեղծարար վայրը, որն ամբողջովին տեսնելու համար կես օրից ավելի ժամանակ էր պահանջվում (մենք ընդամենը տեսանք դրա կեսը): Այդ օրը ես հաճախ էի մտածում. «Եթե հասարակ մարդիկ կարողացան նման չքնաղ պարտեզ տնկել, որն իսկական գեղեցկության տոն է աչքերի համար և լցված է բազմապիսի բուրմունքներով՝ մարդու հոտառությանը զմայլանք պատճառելու համար, ինչպիսի՞ն պետք է լիներ Աստծո պարտեզը»: Եղեմը պատրաստված չէր հմուտ այգեգործների կամ բուսապատման մասնագետների կողմից, այլ՝ անձամբ Տեր Արարչի:

Աստված տնկեց հարուստ գույներով և առատ բուրմունքներով լի Եդեմական պարտեզը, դրեց այնտեղ Ադամին և բերեց նրա մոտ բոլոր կենդանիներին: Տերն ուզում էր տեսնել, թե ինչպե՞ս Ադամը կանվաներ այս երկրի վրա գոյություն ունեցող ավելի քան 1.25 միլիոն տեսակի կենդանի արարածներին: Որքա՞ն խելացի պետք է լիներ այդ մարդը: Բայց Ադամը ոչ միայն կարող էր անուններ տալ բոլոր կենդանի արարածներին, այլև հիշել ամեն մեկի անունը՝ առանց «iPad» ունենալու և «Google»-ից օգտվելու: Ադամը գերազանց միտք ուներ:

Այնուամենայնիվ, Աստված չէր բերել կենդանիներին Ադամի մոտ՝ պարզապես նրանց անվանելու համար. Նա նույնպես ուզում էր տեսնել, թե ո՞ր կենդանուն Ադամը կընտրեր՝ որպես իր ընկեր:

Մարդն անվանեց բոլոր թռչուններին ու կենդանիներին, բայց դրանցից ոչ մեկը հարմար չէր նրան՝ որպես ընկեր և օգնական: Այդ ժամանակ Տեր Աստված խորը քուն բերեց մարդու վրա, և մինչ նա քնած էր, հանեց նրա կողոսկրերից մեկը և փակեց միսը: Նա կին կազմեց այդ կողոսկրից և բերեց նրան մարդու մոտ: Տեսնելով նրան՝ Ադամն ասաց.

«Վերջապես, ահա մեկը, ով իմ տեսակից է՝ ոսկոր՝ վերցրած իմ ոսկրից, և միս՝ վերցրած իմ մսից: «Կին» է նրա անունը, որովհետև նա վերցվեց մարդուց» (Ծննդոց 2.23, TEV):

Կինը՝ տղամարդու կատարյալ ընկերն է: Նրանք լրացնում և ամբողջացնում են իրար: Միասին նրանք առաջադրանք ստացան՝ հսկել և պահպանել մոլորակը, և հատկապես՝ պարտեզը:

Մինչև այն ժամանակը, երբ Եվան դուրս բերվեց Ադամից, Աստված պարզ պատվեր էր տվել նրան. «Դու կարող ես ուտել պարտեզի ամեն ծառից՝ բացի այն ծառից, որը տալիս է գիտություն այն մասին, թե ինչ է լավը և ինչ է վատը: Դու չպետք է ուտես այդ ծառի պտղից. եթե ուտես, կմահանաս նույն օրը» (Ծննդոց 2.16,17, TEV):

Մենք չգիտենք, թե ե՞րբ տեղի ունեցավ հաջորդ գլխում նկարագրված պատմությունը: Դա կարող էր լինել մի քանի շաբաթ, տարի կամ տասնամյակ անց, միգուցե՝ շատ ավելի ուշ: Բայց եկավ այն օրը, երբ ամենախորամանկ կենդանին՝ օձը, թիրախ դարձրեց Եվային և վիճարկեց Աստծո պատվերը:

(Ինչպե՞ս օձը կարող էր խոսել: Անձամբ ես հավատում եմ, որ մինչև մարդու անկումը կենդանիները կարող էին հաղորդակցվել մարդու հետ: Սա է պատճառը, թե ինչու Եվան չզգուշացավ կամ չանհանգստացավ, երբ օձը մոտեցավ նրան: Գիտությունն այն մասին, որ կենդանիները կարող են խոսել, պետք է որ փոխանցված լիներ սերունդներով, քանի որ երբ Բաղասամի էջը խոսեց Թվոց 22.21-35-ում, Բաղասամը նույնպես չզարմացավ: Նա պարզապես շարունակեց խոսակցությունն իր բեռնակիր անասունի հետ՝ առանց մի փոքր զարմա-նալու կամ հանկարծակիի գալու):

Ինչպե՞ս նա արեց դա

Թույլ տվեք կրկնել, թե ինչու ենք մենք ուսումնասիրում Եղեմում տեղի ունեցած այս իրադարձությունը: Մեր նպատակն է՝ հասկանալ, թե ինչպես սատանայի կողմից վերահսկվող օձը կարողացավ դրդել Եվային, ով ապրում էր կատարյալ պայմաններում, դուրս գալ Աստծո դեմ: Տեսնենք, թե ինչպե՞ս նա մոտեցավ Եվային.

«Եվ կնոջն ասաց. «Իրա՞վ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք»» (Ծննդոց 3.1):

Այս հարցով օձն արեց իր առաջին մարտավարական քայլը: Նրա նպատակն էր՝ հեռացնել Եվային աստվածային իմաստությունից: Նրա խորամանկ հարցը գայթակղեցրեց կնոջը՝ մի ակնթարթում հեռացնելով նրա տեսադաշտից անհամար պտղատու ծառերը, որոնցից նա կարող էր օգտվել, և ուղղելով նրա ուշադրությունը միակ արգելված ծառին:

Աստված ասել էր Ադամին և Եվային. «Դուք կարող եք ուտել պարտեզի ամեն ծառից՝ բացի...»: Նրա առատաձեռնությունը շեշտադրում

էր հետևյալը. «Դուք կարող եք ուտել ամեն ծառից»: Ամբողջ աշխարհում գոյություն ունեն հազարավոր հայտնի պտղատու ծառեր, և կարծում եմ՝ պարտեզում կար դրանցից ամեն մեկը: Որքա՞ն խորամանկ էր օձը: Եվան կարող էր ուտել հազարավոր ծառերից, բայց սատանայի աղավաղված հարցից հետո նա անկարող էր կտրել իր հայացքը միակ ծառից, որն արգելված էր:

Նույնը տեղի է ունենում այսօր: Աստված այնքա՞ն շատ պարզևներ է տվել յուրաքանչյուրիս՝ բոլոր երկնային օրհնությունները (տե՛ս Եփես. 1.3-ը): Անհրաժեշտ է մի ամբողջ գիրք գրել՝ պարզապես դրանք թվարկելու համար: Աստծո Խոսքը նույնպես ասում է մեզ, որ ամեն բան մերն է Քրիստոս Յիսուսում (տե՛ս Ա Կորնթ. 3.21-23): Իսկ ո՞րն է մեր թշնամու մարտավարությունը: Նույնը՝ ինչ պարտեզում: Նա ձգտում է քողարկել Աստծո առատածեռնությունը, որպեսզի մենք ընդամենը տեսնենք այն, ինչ «պահված» է: Իսկ ինչո՞ւ Աստված պետք է թեկուզ ինչ-որ բան ետ պահի մեզնից: Մենք կխոսենք այս մասին մի քանի էջ անց, բայց պարզ ասած՝ Նա անում է դա մեր իսկ օգտի համար: Նա մեզնից ավելի լավ գիտի, թե ի՞նչն է ավելի օգտակար մեզ համար:

Եվան արագորեն պատասխանեց խոսող օձին՝ հենվելով այն ճշմարտության վրա, որը նա գիտեր.

«Պարտեզի ծառերի պտղից ուտում ենք, բայց այն ծառի պտղից, որ պարտեզի մեջտեղն է, Աստված ասաց. «Մի՛ կերեք նրանից և նրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»» (Ծննդոց 3.2,3):

Հետաքրքրական է նշել, թե որքա՞ն անստույգ էր Եվայի պատասխանը: Աստված ոչինչ չէր ասել այդ ծառի պտղին չդիպչելու մասին: Միգուցե այս դիտարկումն անկարևոր թվա, բայց այն բացատրում է, թե ինչո՞ւ օձն ընտրեց հենց կնոջը, ոչ թե Ադամին:

Երբ այս պատվերը տրվեց, Եվան դեռ չկար: Այնպես որ, նա չէր լսել այն անմիջապես Աստծո բերանից, ինչպես Ադամը: Անձամբ ես հավատում եմ, որ մեկ անգամ՝ այդ դեպքից առաջ, երբ նա և Ադամը զբոսնում էին այդ լայնատարած պարտեզով, նրանք մոտեցան բարու և չարի գիտության ծառին: Ադամը մատնացույց արեց այն և պատմեց Եվային, թե ի՞նչ էր Աստված պատվիրել իրեն այդ ծառի մասին: Ես անվանում եմ այս տեսակի հաղորդակցությունը *փոխանցված* գիտելիք: Ադամի դեպքում այդ պատվերը *հայտնված* գիտելիք էր: Ո՞րն է տարբերությունը: Հայտնված գիտելիքն այն է, երբ Աստված ինչ-որ բան է ցույց տալիս անձամբ մարդուն:

Հայտնված և փոխանցված գիտելիք

Մի անգամ Հիսուսը հարցրեց Իր աշակերտներին. «Մարդիկ Ինձ համար ո՞վ են ասում, որ մարդու Որդին լինի» (Մատթեոս 16.13): Աշակերտները մեկ առ մեկ թվարկեցին այն ամենը, ինչ նրանք լսել էին ուրիշներից. հարություն առած Հովհաննես Մկրտիչը, Եղիան, Երեմիան կամ մեկ այլ մարգարե, բոլոր այն տարբերակները, որոնք նրանք լսել էին իրենց օրերի «Թվիթեր»-ից, «Ֆեյսբուք»-ից, «Ինստագրամ»-ից և բլոգներից:

Հենց որ Հիսուսը շրջանցեց այն ամենը, ինչ նրանք գիտեին փոխանցված գիտելիքի միջոցով, Նա հարցրեց. «Իսկ դուք ո՞վ եք ասում Ինձ համար, թե լինեմ» (խոսք 15):

Աշակերտները լռեցին. նրանք պատասխան չունեին: Եթե Հիսուսը չտար առաջին հարցը, նրանք, հավանաբար, կպահպանեին այլ մարդկանց կարծիքների ազդեցությունը, և նրանց պատասխանները կլինեին՝ համաձայն փոխանցված գիտելիքի: Հիսուսը մտադրված տվեց այս երկու հարցերը, որպեսզի հեռացներ նրանցից երկրորդական գիտելիքը և իմանար, թե ինչ էր Աստված հայտնել նրանց: Պետրոսը միակն էր, ով պատասխան ուներ: Նա թըցրեց բերանից. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (խոսք 16):

Կարող եմ պատկերացնել, որ Հիսուսը ժպտաց, դրեց ձեռքը Պետրոսի ուսին՝ նրա խոսքերը հաստատելու համար, և հայտարարեց. «Մարմինը և արյունը չհայտնեցին քեզ, բայց Իմ հայրը, որ Երկնքում է» (խոսք 17): Պետրոսը պարզապես չէր կրկնում ինչ-որ տեղեկություն, որը նա առջանց կարդացել էր կամ, պատահաբար, տեսել ինչ-որ ամսագրում: Նա պատմում էր այն ճշմարտությունը, որն Աստված հայտնել էր հենց իրեն:

Դրանից հետո Հիսուսը հայտարարեց, որ եկեղեցին կառուցվելու է հենց այս *հայտնության գիտելիքի* վրա, և որ դժոխքի ուժերը չեն կարողանա կանգնեցնել նրանց, ովքեր ունեն այս գիտելիքը: Սրանից հետևում է, որ դժոխքի ուժերը կարող են ավելի հեշտորեն խաբել նրանց, ովքեր ունեն միայն *փոխանցված գիտելիք*:

Կան շատ միջոցներ՝ հայտնված գիտելիք ստանալու համար: Դա կարող է տեղի ունենալ, երբ մենք կարդում ենք Աստվածաշունչը կամ որևէ ոգեշնչված գիրք, երբ լռում ենք աղոթքի մեջ, երբ լսում ենք մեր հովվի քարոզները, երբ տեսիլքներ ենք ստանում, ինչպես Պետրոսը՝ տան տանիքին (տե՛ս Գործք 10.9-16), կամ՝ երբ պարզապես Սուրբ Հոգին հայտնում է Աստծո խոսքը մեր սրտերում: Դժվար է ընդհանրաց-

նել այն, թե ինչպես է սա տեղի ունենում: Երբեմն դուք կարող եք մեղմ, բարակ ձայն լսել ձեր սրտերում: Այլ դեպքերում դուք պարզապես *գիտեք*, որովհետև հայտնությունը դրվել է ձեր հոգում: Երբեմն ձեր սիրտն սկսում է արագորեն բաբախել, և դուք զգում եք Աստծո ներկայությունը, երբ կարդում եք Աստծո խոսքը: Ինչ կերպով էլ դա գա, գլխավորն այն է, որ դուք գիտեք, որ լսել եք Աստծուց, և որ ոչ ոք չի կարող խլել ձեզնից այդ հայտնված գիտելիքը:

Ի հակադրություն սրան՝ փոխանցված գիտելիքը գալիս է, երբ դուք ընդամենը լսում կամ կարդում եք, թե ի՞նչ են այլ մարդիկ լսել Աստծուց: Այս գիտելիքը կարող է ճիշտ լինել, բայց եթե Հոգին դա չի հայտնում ձեր սրտին, այն կարող է հեշտորեն աղավաղվել:

Օրինակ՝ ես լսել եմ, թե ինչպես են որոշ մարդիկ համարձակ ցուցադրում իրենց աստվածաշնչյան գիտելիքները. «Գիտես, Ջոն, փողը՝ բոլոր չարիքների արմատն է»: Այս ապակողմնորոշված մարդիկ կարդացել են կամ լսել են ինչ-որ ծառայողի, ով մեջբերել է Ա Տիմոթեոս 6.10-ը. «Որովհետև *սերը* փողի հանդեպ՝ ամեն տեսակ չարիքի արմատն է» (NLT):

Փողը՝ ընդամենը գործիք է, և վերջ: Դուք կարող եք ճիշտ կամ սխալ օգտագործել այն: Ատրձանակը՝ գործիք է: Գողի ձեռքում այն կօգտագործվի սխալ կերպով՝ գողության համար: Այնուամենայնիվ, ոստիկանի ձեռքում ատրձանակը թույլ չի տա, որ հանցագործը բռնաբարի կամ սպանի ինչ-որ կնոջ: Երկու դեպքում էլ ատրձանակ է օգտագործվում, որում ոչ մի բարի կամ չար բան չկա: Նույնը փողն է. փողը՝ գործիք է, և այն ամեն տեսակ չարիքի արմատը չէ: *Փողի հանդեպ սերն* է ամեն տեսակ չարիքի արմատը:

Նման սխալական մեկնաբանություններ անող մարդիկ ունեն փոխանցված, ոչ թե հայտնված գիտելիք: Իմ փորձառությունից կարող եմ ասել, որ երբեմն այս փոխանցվող գիտելիքը շատ ավելի վտանգավոր է, քան գիտելիքի իսպառ բացակայությունը:

Այն, թե ինչպես Եվան նկարագրեց Աստծո պատվերն արգելված ծառի պտղի մասին (ասելով, որ դրան չի կարելի դիպչել), ցույց է տալիս, որ նա ընդամենը փոխանցված գիտելիք ուներ: Աստծո ներկայությունը պարտեզում էր: Աստված քայլում էր Ադամի և Եվայի հետ, ամենայն հավանականությամբ՝ ամեն օր (տե՛ս Ծննդոց 3.8): Հրաշալի է, որ Ադամը պատմել էր իր կնոջը, թե ինչ էր Աստված պատվիրել, բայց երևի թե նա անձամբ չէր փնտրել իր Արարչին՝ Նրա ասած խոսքը հասկանալու համար:

Աստծուն փնտրող մարդկանց առանձնահատկություններից մեկը պետք է լինի Աստծուն ավելի խորը ճանաչելու և հասկանալու ձգտումը:

Տեսք, թե ի՛նչ արեցին Բերեայում ապրող մարդիկ, երբ Պողոսը բե-
րեց նրանց այն ուղերձը, որն ստացել էր Երկնքից.

«Եվ Բերեայի մարդիկ ավելի բաց միտք ունեին, քան Թեսաղո-
նիկեցիները, և նրանք պատրաստակամորեն լսեցին Պողոսի
ուղերձը: Նրանք օրըստօրե քննում էին Սուրբ գիրքը՝ տեսնելու
համար, թե արդյո՞ք Պողոսը և Շիղան ճշմարտությունն էին սո-
վորեցնում» (Գործք 17.11, NLT):

Բերեացիները հասկանում էին, թե ի՛նչ էր պետք անել: Նրանք
ուշադրությամբ լսեցին Պողոսին, իսկ հետո սկսեցին անձամբ քննել
Սուրբ գիրքը: Ինձ դուր է գալիս «բաց միտք ունենալ» արտահայտույթ-
յունը: Նրանց միտքը բաց էր՝ Սուրբ Հոգու ձայնը լսելու համար: Հա-
ղորդակցությունը նրանց հոգու և մտքի միջև՝ ազատ էր, պատրաստ՝
ընդունելու հայտնված գիտելիքը:

Ի տարբերություն այսօրվա բազմաթիվ հավատացյալների՝ բերեացի-
ների պատկերացումները բաղկացած չէին համացանցից ներբռնված
նյութերից, բլոգներում տեղադրված հոդվածներից, կամ քննարկումնե-
րից՝ «Ֆեյսբուք»-ում և «Թվիթեր»-ում: Նույն կերպով, երբ Հիսուսը խո-
սում էր աշակերտների հետ Իր ինքնության մասին, Նա հետաքրքրված
չէր այն կարծիքներով, որոնք տարածված էին Իր օրերի սոցիալական
ցանցերում: Նա հարցնում էր. «Տղաներ, ի՞նչ է Աստված հայտնել *ձեզ*»:

Միգուցե մեկ անգամ, երբ Պետրոսը Հիսուսի և աշակերտների հետ
էր, լսեց ինչ-որ մեկի խոսքերը. «Հիսուսը պետք է որ Քրիստոսը լինի»:
Այդ պահին, Սուրբ Հոգու ներկայության մղումով, այդ խոսքերը պայթե-
ցին նրա մտքում և սրտում. «*Իհարկե: Նա Աստծո Որդին է: Նա Քրիս-
տոսն է: Ճիշտ է: Մինչև հիմա ես չէի հասկանում, բայց հիմա գիտեմ,
որ Նա՛ է Քրիստոսը*»: Հաճախ Աստված հենց այսպես է հայտնում Իր
ճշմարտությունը մեր սրտերին:

Հնարավոր է՝ Պետրոսի հետ դա այլ կերպ տեղի ունեցավ: Այդ
հայտնությունը կարող էր գալ նրա սրտում գիշերով՝ երբ նա արդեն
քուն էր մտնում, կամ ցերեկով՝ երբ նա քայլում էր մի քաղաքից մյուսը:
Միգուցե դա կատարվեց այն պահին, երբ նա հետևում էր Հիսուսի խո-
սակցությանը իր թիմակիցներից մեկի հետ: Կամ, հավանական է, որ
մի պահ, առանց Պետրոսի հասկանալու, Աստված Քրիստոսի գալուս-
տը կանխասող մի խոսք հիշեցրեց նրան Հին կտակարանից, օրինակ՝
Եսայի 9.6,7-ը:

Նույնպես և Պետրոսի պայծառացումը կարող էր այն պահին լի-
նել, երբ Հիսուսը բժշկում էր ինչ-որ մեկին: Հանկարծ այս աշակերտը

հիշեց իր մանկությունը, երբ նրան ուսուցանող ռաբբունիներից մեկը կարդում էր Մեսիայի գալստյան մի մարգարեություն Յիս կտակարանից. «Նա մեր հիվանդությունները վեր առավ և մեր ցավերը կրեց» (Մատթեոս 8.17, որը հաստատում է Եսայի 53.4-ը):

Հայտնությունը Հիսուսի ճշմարիտ ինքնության մասին՝ կարող էր գալ Պետրոսի մոտ շատ տարբեր ձևերով. այնուամենայնիվ, կարևորն այն է, որ *Ինքը՝ Աստված հայտնեց* նրան այդ մասին:

Կարծում եմ՝ ես կարող եմ ասել, որ Եվայի հետ նման բան տեղի չէր ունեցել: Նա չունեի հայտնված *գիտելիք*. Նա բավարարվել էր *փոխանցված* գիտելիքով: Միգուցե Ադամը հաղորդագրություն էր ուղարկել նրան «Թվիթեր»-ով. «Սիրելիս, ես տեսա, որ դու նայում էիր բարու և չարի գիտության ծառին: Չդիպչես դրան: Աստված ասաց, որ մենք կմահանանք, եթե ուտենք դրա պտուղը»:

Երկրորդ փուլ

Այժմ՝ երբ օձը կենտրոնացրել էր Եվայի ուշադրությունը միակ արգելված ծառի վրա, նա կարող էր անցնել իր համոզիչ հնարի երկրորդ քայլին: Այս նոր քայլն ուղղակիորեն հակառակ էր այն խոսքին, որն Աստված ասել էր: Չնայած դրան՝ այն ճարպկորեն ձևակերպված և տրամաբանական էր թվում, ինչպես նաև օգուտ էր խոստանում: Ահա թե ինչպես սատանան հակառակվեց Աստծո խոսքին.

«Եվ օձը կնոջն ասաց. «Բնավ չեք մեռնի: Այլ՝ Աստված գիտի, թե այն օրը, որ նրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և Աստծո պես կլինեք՝ բարին և չարը գիտացող»» (Ծննդոց 3.4,5):

Ուշադրություն դարձրեք օձի բառերին. «...այլ՝ Աստված գիտի...»: Սա նշանակում է, որ Ադամից և Եվայից ինչ-որ բան էր պահված: Եվ ոչ թե մի հասարակ բան, այլ՝ այնպիսին, ինչն ավելի լավը կդարձներ Ադամի ու Եվայի կյանքը, այսինքն՝ կբարելավվեր նրանց կյանքի որակը: Քանի որ այդ ծառի մեջ *բարի* կար, օձը մանրակրկիտ հաշվարկեց իր տրամաբանական քայլերը, որպեսզի դրանք ողջամիտ թվային, և ամեն ինչ ստացվեց:

«Եվ կինը տեսավ, որ ծառը լավ էր ուտելու համար, և թե հաճելի էր աչքերին, և փափագելի է ծառը նայելու համար, առավ նրա պտղից և կերավ» (Ծննդոց 3.6):

Եվան տեսավ, որ ծառը լավն էր, հաճելի էր, և որ այն իմաստություն կտար իրեն: Այս երեքն էլ ցանկալի և օգտավետ հատկանիշներ էին:

Շարունակ նայելով ծառին՝ Եվայի մտքերն ընթացան նոր ուղղությամբ. «Մի թույլ. պարզվում է՝ կա ինչ-որ բարի և օգտակար բան այդ ծառի մեջ, և Աստված արգելել է դա: Ամուսնուս և իմ կյանքը կարող է ավելի լավը լինել: Մենք կարող ենք ավելի իմաստուն ու երջանիկ լինել, բայց դա պահված է մեզնից: Ես մտածում էի, որ մեր Արարիչը սիրող և շնորհալի էր, բայց ստացվում է՝ Նա խաբում է մեզ: Նա ինչ-որ բարի բան է թաքցնում մեզնից»:

Այդ միտքը թափանցում էր նրա գիտակցության մեջ, և ամեն վայրկյան այդ ծառի պտուղն ուտելու ցանկությունն ավելի էր ուժգնանում: Նա արդարացնում էր այդ ցանկությունը, քանի դեռ հավատում էր, որ այդ ծառի մեջ ինչ-որ բարի բան կար իր համար:

Օձի վերջնական նպատակն էր՝ աղավաղել Եվայի պատկերացումն Աստծո բնավորության մասին: Հաջողության հասնելու դեպքում նա կդրդեր Եվային դուրս գալ Աստծո դեմ: Ինչո՞ւ: Որովհետև Աստծո իշխանությունը հաստատված է և պահվում է Նրա բնավորությամբ:

Դավիթ թագավորը գրեց. «Արդարություն և իրավունք են Քո աթոռի (կամ՝ գահի) հաստատությունը» (Սաղմոս 89.14): Քանի որ Դավիթն ինքը թագավոր էր, նրան հայտնի էին հարատևող առաջնորդի հատկանիշները: Եթե թագավորը ճշմարիտ, արդար և իմաստուն է, նրա թագավորությունը չի վերջանա: Իսկ եթե իշխանը ստախոս և անարդար է, նրա թագավորությունը տևական չի լինի:

Աստծո բնավորությունը կատարյալ է, բայց օձի նպատակն էր՝ հակառակը համոզել Եվային: Նա ձգտում էր խեղաթյուրել ակնհայտ փաստերը: Արգելված ծառը լավ ու հաճելի տեսք ուներ: Թվում էր՝ այն կարող էր իմաստություն տալ, բայց հաճախ արտաքինը խաբուսիկ է լինում: Ահա թե ինչու է գրված. «Մենք ուղղում ենք մեր ուշադրությունը ոչ թե այն բաներին, որոնք տեսանելի են, այլ այն բաներին, որոնք անտեսանելի են» (Բ Կորնթացիների 4.18, TEV): Անտեսանելին՝ Աստծո խոսքն է: Նրա խոսքն արդար և ճշմարիտ է:

Մի՛ խաբվեք

Թշնամին կարողացավ դրդել Եվային՝ դուրս գալ իր Արարչի դեմ՝ խաթարելով Աստծո բնավորությունը նրա պատկերացման մեջ: Ես հաճախ էի ստիպված լինում մարտնչել նման մտքերի դեմ իմ անձնական պայքարների ամենաթեժ պահերին, երբ աղոթքներս չէին պատասխանվում այնքան արագ, որքան հույս ունեի: Նման իրավիճակներում ես հիշեցնում էի ինձ Աստծո հավատարմության մասին: Ես

կրթում էի ինքս ինձ հետևյալ իրողությամբ. «Աստված չէ խնդիրը: Նա ոչինչ չի պահում ինձնից: Նա բարի և ողորմած Յայր է»:

Օձը դրդեց Եվային՝ հավատալ, որ Աստված այնպիսի բան էր պահում նրանից, ինչը բարի էր նրա համար: Եթե այս հնարը հաջողությամբ պսակվեց կատարյալ միջավայրում՝ մի կնոջ հետ, ում երբեք ցավ չէին պատճառել, չէին վիրավորել կամ շահագործել, որքա՞ն ավելի է հեշտացել թշնամու գործն այսօր՝ անկում ապրած աշխարհում, որը լցված է վիրավորանքով, ապականությամբ, այլասերմամբ և խաբեությամբ: Ահա թե ինչու է Յակոբոս առաքյալը խստորեն զգուշացնում մեզ.

«Մի՛ խաբվեք, իմ սիրելի՛ եղբայրներ» (Յակոբոս 1.16):

Ես սիրում եմ ասել, որ խաբեությունը միայն մեկ խնդիր ունի. այն խաբում է մարդուն: Խաբված հավատացյալը հավատում է, որ ինքը ճիշտ է, լիովին գիտակցում է ամեն բան և ճշմարտության կողմնակից է: Բայց իրականում, նա սխալ է, չի հասկանում, թե ի՞նչ է անում, և ճշմարտության կողմնակից չէ: Որքա՞ն սարսափելի է:

Եվան խաբվեց և, հետևաբար, անօրինություն գործեց: Յակոբոսը չի ուզում, որ մենք ընկնենք նույն ծուղակի մեջ: Այնպես որ, կարդանք այս հատվածն ամբողջությամբ.

«Մի՛ խաբվեք, իմ սիրելի՛ եղբայրներ: Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լուսի Յորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (Յակոբոս 1.16,17):

Յակոբոսը չի ասում, որ Աստծուց գալիս է բարի պարգևների մեծ մասը: Շատերը հենց այսպես են մտածում: Ո՛չ. նա միանշանակ ասում է մեզ, որ Աստծուց գալիս է *ամեն* բարի և կատարյալ պարգև: Մենք կարող ենք գրել այս արտահայտության համարժեքը. «Չկա ոչ մի բարի բան ձեզ համար՝ առանց Աստծո կամքի»: Թեթևորեն մի՛ վերաբերվեք հաջորդ պնդմանը, քանի որ դրանում մեծ խորություն կա.

Եթե ինչ-որ բան հակառակ է Աստծո իմաստությանը, կարևոր չէ, թե որքան լավ տեսք ունի դա, որքանով է դա երջանիկ դարձնում ձեզ, որքան զվարճալի է դա, որքան հարուստ և հաջողակ դուք կդառնաք դրա պատճառով, որքան հոգևոր է դա թվում, որքան ողջամիտ տպավորություն է թողնում, որքան հանրահայտ և ընդունված է դա և այլն: Եթե ինչ-որ բան հակառակ է Աստծո իմաստությանը (կամ՝ խոսքին), այն, ի վերջո, կործանում և տրտմություն է բերելու ձեր կյանքում:

Եվան ամբողջ սրտով հավատում էր, որ իմաստուն որոշում էր կայացնում, որ իր ընտրությունը լավն էր, և որ այն կբարելավեր իր և իր

ամուսնու կյանքը: Եվ եթե այսօր՝ հազարավոր տարիներ անց, դուք կարծում եք, որ ձեր իմաստությունն այն մասին, թե ո՞րն է բարին ձեզ համար, ավելին է Աստծո իմաստությունից, նշանակում է՝ դուք նույն-քան խաբված եք, որքան Եվան, և դուք մեծ տրտմություն կունենաք ձեր որոշումների պատճառով:

Միգուցե մտածեք, որ ես չարակամորեն տրամադրված կամ նախա-պաշարմունքներ ունեցող մարդ եմ, բայց իմ մտադրությունը բոլոր-վին այլ է: Ես պարզապես զգուշացնում եմ ձեզ: Այս գրքում կան շատ ցուցումներ, որոնք կօգնեն իմանալ, թե իրականում ինչն է բարի ձեր կյանքի, ծառայության, գործի, փոխհարաբերությունների և այլ բնագա-վառների համար: Այնուամենայնիվ, որպեսզի լիարժեք կերպով ներ-կայացնեմ Հիսուս Քրիստոսի ուղեծը, ես պետք է և՛ զգուշացնեմ, և՛ սո-վորեցնեմ: Պողոսը հաստատում է այս ճշմարտությունը՝ գրելով.

«Որին մենք քարոզում ենք՝ ամեն մարդու խրատելով և ամեն մարդու սովորեցնելով ամեն իմաստությունով, որ ամեն մար-դու կատարյալ կանգնեցնենք Քրիստոս Հիսուսում»
(Կողոսացիների 1.28):

Թե՛ դուք, թե՛ ես չենք կարող հասունության հասնել, եթե մեր կյան-քում չլինեն և՛ զգուշացումներ, և՛ ուսմունքներ: Ես կբացատրեմ այս սկզբունքը հետևյալ օրինակով. ամեն անգամ, երբ դուք որևէ էլեկտրո-նային սարք եք գնում, դրա օգտագործման ձեռնարկի առաջին կամ երկրորդ էջում գրված է լինում. «Զգուշացում. կարդալ՝ օգտագործելուց առաջ»: Դրանից հետո արտադրողը թվարկում է մի քանի զգուշա-ցումներ այն մասին, թե ինչ պետք է անել կամ, ավելի հաճախ, թե ինչ պետք չէ անել այդ սարքի հետ: Այս զգուշացումների նպատակն է, որ դուք անզգուշաբար վնաս չհասցնեք ձեզ կամ այն սարքին, որը ձեռք եք բերել: Այդ սարքը տարիներ շարունակ հրաշալի կերպով կծառայի ձեզ, եթե չխախտեք այդ զգուշացումները: Բայց եթե արտադրող ընկե-րությունը գրի չառներ այդ զգուշացումները, դուք կարող էիք ակամա վնաս հասցնել ձեր սարքին կամ, ընդհանրապես, գրկվել դրանից: Այդ դեպքում դուք բարկացած՝ էլեկտրոնային նամակ կգրեիք արտադրող ընկերությանը և լավ կնախատեիք՝ ձեզ, ինչպես հարկն է, չզգուշացնե-լու համար:

Պողոսն ասում է մեզ, որ մենք պետք է ուշադրություն դարձնենք Նոր կտակարանի զգուշացումներին: Եթե այդպես վարվենք, մենք կունենանք երկար տարիների հաջողակ կյանք և ներդաշնակ հա-րաբերություններ՝ մեր Արարչի հետ: Իսկ եթե մենք անտեսենք կամ

խախտենք այդ զգուշացումները, մենք կտառապենք այնպես, ինչպես Ադամն ու Եվան: Այդ ժամանակ մենք կարող ենք գրել հողվածներ բլոգներում կամ ուղարկել փոստային և էլեկտրոնային նամակներ՝ պատմելով այն մասին, թե որքան անարդար է կյանքը՝ այն նեղությունների և տառապանքների պատճառով, որոնց բախվել ենք: Այդուհանդերձ, Աստված պարզ ասում է.

«Շարունակ ուսումնասիրի՛ր այս Ուսուցումների գիրքը: Մտորի՛ր դրա շուրջ ցերեկ ու գիշեր, որ համոզված լինես, որ հնազանդվում ես այն ամենին, ինչ գրված է դրանում: Միայն այդ դեպքում դու կբարգավաճես և հաջողության կհասնես այն ամենի մեջ, ինչ անում ես» (Յեսու 1.8, NLT):

Աստված երաշխավորում է հաջողակ և բարգավաճ կյանքը, եթե մենք զգուշորեն հնազանդվենք այն ամենին, ինչ գրված է Իր ցուցումների գրքում: Այնուամենայնիվ, այս գրքում գրված չեն միայն խրախուսող և մխիթարող ուսուցումներ: Աստծո Խոսքում կան նաև զգուշացումներ:

Դժբախտաբար, մեր օրերում ծառայողները և ուսուցիչները հաճախ շրջանցում են այս կարևոր զգուշացումները: Սուրբ գրքի այս հատվածները կարող են բացասական թվալ, իսկ մենք չենք ցանկանում հուսալքող ուղերձներ քարոզել ամբիոնից, քանի որ սա չի հրապուրի մարդկանց և կնվազեցնի հաճախելիությունը եկեղեցական հավաքույթներին կամ համաժողովներին: Նման մոտեցման արդյունքում հավատացյալների կյանքերում ծագել են շատ խնդիրներ, որոնցից կարելի էր խուսափել, եթե մարդկանց ժամանակին սովորեցնեին կամ զգուշացնեին:

Ես հորդորում եմ ձեզ՝ մեկընդմիջտ ընդունել հետևյալ ճշմարտությունը. ձեզ համար չկա ոչ մի բարի բան, բացարձակապես ոչինչ՝ առանց Աստծո իմաստության կամ Խոսքի: Եթե դուք հավատում եք այս սկզբունքին, շարունակենք որոնել տարբերությունները բարու և Աստծո միջև:

ԲԱՐՈՒ ՀԱՄԸՆԴՉԱՆՈՒՐ ՉԱՓԱՆԻՇԸ

«Աստծո ամեն մի բառը ճշմարիտ է»:
— Առակաց 30.5, NLT

Մենք լավագույնս հակառակվում ենք սխալմունքին,
երբ տարածում ենք հիմնարար գիտելիքներ
ճշմարտության խոսքի մասին...
— Մեթյու Յենրի

Այս գրքում ես կխոսեմ «բարի» հասկացության երեք կողմերի մասին: Առաջինը վերաբերում է Աստծո հետ ունեցած մեր հիմքային փոխհարաբերություններին, երկրորդը՝ մեր բնավորությանը և վարքին, և երրորդը՝ մեր ծրագրերին: Այս երեքը սերտորեն կապակցված են, քանի որ առաջինը՝ մեր հիմքն է, երկրորդը՝ ինչն ի մի է բերում մեր կյանքը, և երրորդը խորհրդանշում է մեր կյանքի կառուցումը: Եթե առաջին երկուսն ուժեղ լինեն, մեր կյանքի գործն արդյունավետ ու մնայուն կլինի: Բայց եթե այս երեքից թեկուզ մեկը թերի լինի, մեր կյանքի գործը լիարժեք կերպով չի իրականանա, և դրա արդյունքները վաղանցիկ կլինեն:

Ես հիշում եմ մեր առաջին տան կառուցումը, ասես դա երեկ լիներ: Լիզան և ես կլանվեցինք շինարարության ամբողջ ընթացքով՝ սկզբից մինչև վերջ: Յենց ամենասկզբից մենք ամեն օր գնում էինք մեր տան կառուցման վայրը՝ գործի ընթացքին հետևելու համար:

Յիմքի կառուցումն այնքան էլ հետաքրքիր չէր, և մենք ամենաքիչ ժամանակն անցկացրինք՝ այն ուսումնասիրելու համար: Այնուամենայնիվ, մենք ընկերներ ունենք, որոնք մոտավորապես միևնույն ժամանակ կառուցեցին շատ ավելի գեղեցիկ տուն, որը նույնպես նրանց առաջին տունն էր: Տեղափոխվելուց մի քանի տարի անց նրանց տան պատերի վրա խորը ձաքեր հայտնվեցին՝ հատակից մինչև տանի-

քը: Մեկ անգամ ընթրիքի էինք հրավիրված նրանց տանը: Նկատելով այդ աչքի զարնվող խնդիրը՝ մենք հարցրինք, թե ինչն էր պատճառը: Նրանք ակնհայտ տհաճությամբ պատմեցին մեզ, որ իրենց տան հիմքը սխալ է կառուցվել: Նրանց տան շինարարը կատարել էր գործը մեծ խնայողություններով, և փոխհատուցում ստանալու բոլոր փորձերն ապարդյուն էին եղել: Պարզվել էր, որ այդ խնդիրը շտկելը չափազանց թանկ և ժամանակատար էր: Նրանց փորձառությունը ցույց տվեց ինձ, թե որքա՞ն կարևոր է լավ հիմք ունենալը: Թեև հիմքը դնելը մեր տան շինարարության ամենաոգեշնչող և ամենահետաքրքիր մասը չէր, բայց այն ամենակարևորն էր՝ տևական և դիմացկուն տուն կառուցելու համար:

Մեր տան հիմքը դնելուց հետո հաջորդ քայլը շենքի հիմնակառուցյուն էր: Շինարարության այս փուլում մենք ավելի մեծ հետաքրքրությամբ էինք այցելում մեր տան կառուցման վայրը: Մենք ավելի երկար էինք մնում այնտեղ, քանի որ արդեն կարող էինք զբոսնել մեր տան մեջ: Մենք սրտի թրթիռով էինք հետևում, թե ինչպես էին ձևավորվում տան սենյակները, և ավելի հստակ պատկերացում էինք ստանում այն մասին, թե ինչպիսին էր լինելու մեր տունը:

Վերջին փուլին հետևելը իսկական հաճույք էր. այդ ընթացքում մենք ավելի շատ ժամանակ էինք տրամադրում մեր տունն ուսումնասիրելու համար, քան մյուս երկու փուլերում: Տան հիմնակառուցյի, պատերի ու միջնորմերի կառուցման ավարտից հետո մենք հետևում էինք, թե ինչպես էր կատարվում տան ներքին հարդարումը, տեղադրվում քիվերը, պահարանները, հատակը, տախտակածածկերը և, ի վերջո, լույսերը: Դա մեր առաջին տունն էր, և մենք հնարավորություն ունեինք ձևավորելու՝ ինչպես ցանկանայինք: Ամեն օրը մեզ համար իսկական տուն էր: Վերջապես ամեն բան ի մի էր բերվում:

Ես ցանկանում եմ նշել հետևյալը. եթե մեր տան շինարարության առաջին երկու փուլերը՝ հիմքը և հիմնակառուցյունը, որակյալ արված չլինեին, մնացած ամեն ինչը վնասվելու էր կամ անմիջապես, կամ՝ ինչպես մեր ընկերների տան դեպքում՝ ժամանակի ընթացքում:

Նույն կերպով, այս գրքի ուղերձի վերջին մասը՝ մեր կյանքի ծրագրերը, ամենից հաճելին է քննարկման համար: Այն վերաբերում է մեր ընտրություններին աշխատանքի, ծառայության կամ կյանքի այլ հարցերի վերաբերյալ:

Բոլոր այս փուլերում կան ընտրություններ, որոնք բարի են թվում, սակայն հաճախ դրանք այն լավագույնը չեն, որն Աստված պատրաստել է մեզ համար: Եթե որոշում կայացնենք քայլել այդ ճանապարհ-

ներով, մենք այդպես էլ չենք ապրի մեր առավելագույն ներուժով: Հետևյալ արտահայտությունն անփոփոխ ճշմարտություն է. «Նա ոչ մի բարիք չի խնայում անարատությունով գնացողներից» (Սաղմոս 84.11): Նա ցանկանում է բարին ձեզ համար, և Նրա բարին միշտ հիանալի է:

Այս մասին կխոսենք մի փոքր անց: Իսկ հիմա, մեր շինարարի պես, որը մանրակրկիտ ձևով կենտրոնացավ տան կառուցման առաջին փուլերի վրա, այս գրքում մենք նախ՝ պետք է դնենք հիմքը և կանգնեցնենք հիմնակառույցը:

«Բարի» բառի սահմանումը

Ուսումնասիրենք «բարի» բառը: Եբրայերենում «բարի» բառը «տով»-ն է: *Այս բառի սահմանումներից մի քանիսը «Աստվածաշնչյան բառերի լիարժեք ուսումնասիրության բառարան»-ում հետևյալն են. «լինել երջանիկ, ընդունելի, լավ և ձիշտ վարվել»:* «Աստվածաշնչյան բառերի նոր միջազգային հանրագիտարան»-ը ավելի խորն է ուսումնասիրում այս բառը.

«Այս պարզ բառը նշանակում է «լավ» կամ «բարի»՝ ամենալայն իմաստով: Այն ընդգրկում է այն ամենը, ինչը գեղեցիկ, գրավիչ, օգտակար, շահավետ, ցանկալի և բարոյապես ձիշտ է:

Այն հասկացությունը, որը կապակցում է «բարի» բառի այս բոլոր գործածությունները՝ գնահատումն է: Բարին որոշելու համար անհրաժեշտ է համեմատել առարկաները, հատկանիշները և գործողություններն այլ առարկաների, հատկանիշների և գործողությունների հետ...

Արարչագործության պատմությունը ներկայացնում է «տով» բառն աստվածաշնչյան իմաստով, երբ Աստված նայում է Իր ամեն օրվա աշխատանքին և հայտնում է, որ այն բարի է: Աստված նույնպես գնահատում է: Իրականում, մարդիկ գնահատելու ունակություն ունեն այն պատճառով, որ Աստված տվել է մարդկությանն Իր պատկերը և նմանությունը: Այն բանից հետո, երբ մեղքն աղավաղեց իրականության ընկալումը մարդու մեջ, միայն Աստված կարող է կատարելապես գնահատել ամեն ինչ: Հին կտակարանի հեղինակները համոզված էին, որ Աստված ոչ միայն բարին տվողը և բարու չափանիշն է, այլև՝ որ միայն Աստված գիտի, թե ի՞նչն է իրականում օգտակար մեզ համար և ի՞նչն է բարոյապես ձիշտ: Բարու վերաբերյալ Իր չափանիշը Աստված հայտնել է Իր խոսքում, և սա միակ հիմքն է, որով մենք, որ հուսացած ենք Նրան, կարող ենք վստահորեն պնդել, որ որոշակի երևույթ, հատկանիշ կամ գործելակերպ օգտակար է»¹:

Բանալի բառը՝ *գնահատումն* է: Ադամը և Եվան որոշեցին գնահատել, թե ի՞նչն է *բարի* և *ընդունելի*՝ առանց Աստծո խորհրդի: Նրանք օգտագործեցին այլ արժեքների համակարգ, որը սահմանված էր իրենց իսկ կողմից: Ահա թե որտեղից է սկիզբ առել մարդու թշնամոլությունն իր Արարչի հանդեպ: Այն տարբեր տեսակներ ու ձևեր է ընդունել, բայց հիմնական շարժառիթը մշտապես մնացել է նույնը. «Ես գիտեմ, թե ինչն է *ճիշտ* իմ կյանքի համար, և չեմ ցանկանում այլ բան լսել որևէ մեկից»: Այնուամենայնիվ, Աստված հայտարարում է. «Կա ճանապարհ, որն ուղիղ է մարդու առջև, բայց նրա վախճանը մահվան ճանապարհներ են» (Առակաց 16.25):

Առաջին գլխում մեջբերեցի նույն հատվածը, որը գրված էր Առակաց 14.12-ում: Այս խոսքը հենց այնպես չի կրկնվում: Ամեն անգամ, երբ Սուրբ գրքում ինչ-որ բան է կրկնվում, նպատակը՝ այդ խոսքը շեշտադրելն է: Մենք պետք է միշտ հիշենք, որ կան բաներ, որոնք ավելի ծանրակշիռ են Աստծո համար (տե՛ս Մատթ. 23.23): Երբ Աստվածաշնչում որևէ խոսք է կրկնվում, մենք պետք է շատ ավելի ուշադիր լինենք դրան: Տվյալ դեպքում սա խիստ զգուշացում է:

Աստված գիտի, թե որքան հեշտորեն կարող է աղավաղվել բարու և չարի սահմանը: Եթե դա տեղի ունեցավ Եդեմի պարտեզում, որքա՛ն ավելի հեշտորեն դա կարող է տեղի ունենալ այսօր: Աստված զգուշացնում է, որ լինելու են ճանապարհներ՝ վարվելակերպեր, մտածելակերպեր, համոզմունքներ, սովորույթներ և նույնիսկ՝ ավանդույթներ, որոնք ընդունելի են թվում մեզ, սակայն եթե որոշենք կառուցել մեր կյանքը դրանց վրա, հետագայում կպարզվի, որ դրանք թերի էին: Դրանք կգողանան մեր ժամանակը և մեծ կորուստներ կպատճառեն մեզ: Միգուցե նման ընտրության բացասական հետևանքները երևան ամիսներ կամ տարիներ անց, իսկ երբեմն ծածուկ մնան մինչև Դատաստանի օրը: Պողոսը գրում է. «Չիշի՛ր՝ որոշ մարդկանց մեղքերն ակնհայտ են, և հայտնի է, որ դրանք դատաստանի են տանելու նրանց: Բայց կան այլ մարդիկ, որոնց մեղքերը հայտնի կդառնան շատ ավելի ուշ» (Ա Տիմոթեոս 5.24, NLT): Չգիտեմ՝ ինչպես եք դուք մտածում, բայց այս խոսքի երկրորդ մասը սարսուռ է առաջացնում իմ մեջ: Այն չի դրդում ինձ վախենալ Աստծուց. ավելի շուտ՝ ես սարսափում եմ, որ կարող եմ հեռու լինել Նրանից:

Այսպիսով, ես իրականում հավատո՞ւմ եմ, որ Աստծո իմաստությունը կատարյալ է և վստահո՞ւմ եմ Նրան այն հարցում, թե որն է լավագույնը իմ կյանքի համար: Ամեն մեկը պետք է ունենա այս հարցի միանշանակ պատասխանն իր սրտում: Եվ այս հիմքային համոզմունքը չի կարող վերաբերել որոշ հարցերի և չվերաբերել մյուսներին: Կա՛մ Աստծո իմաս-

տությունը կատարյալ է բոլոր դեպքերում, կամ այն թերի է, և ավելի լավ է՝ մենք ինքներս որոշումներ կայացնենք՝ Նրանից անջատ:

Ի վերջո, ո՞րն է բարու չափանիշը, որին պետք է վստահենք: Ի՞նչն է առաջնորդում մեզ դեպի կյանքի ճանապարհը: Պողոս առաքյալն ասում է մեզ.

«Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց և օգտակար է՝ սովորեցնելու մեզ, թե ինչն է ճշմարիտը, և դրդելու մեզ՝ գիտակցել, թե ինչն է սխալ մեր կյանքերում: Այն շտկում է մեզ, երբ մենք սխալ ենք, և սովորեցնում է ճիշտ վարվել»
(Բ Տիմոթեոս 3.16, NLT):

Դիտարկենք մի քանի կարևոր բան Պողոսի խոսքից.

«Ամբողջ Սուրբ գիրքը», ոչ թե մի մասը: Ոչ թե սոսկ այն հատվածները, որոնց հետ մենք համաձայն ենք: Ոչ թե սոսկ այն խոսքերը, որոնք համապատասխանում են մեր մտածելակերպին և համոզմունքներին, այլ՝ ամբողջ Սուրբ գիրքը: Անկեղծ եղեք ինքներդ ձեզ հետ. արդյո՞ք դուք ճիշտ եք համարում Աստծո իմաստությունը որոշ բնագավառներում, բայց այլ դեպքերում հնացած կամ անվավեր եք համարում այն:

Եվան գիտեր, որ Աստված՝ Արարիչն է: Նա վայելում էր Աստծո առատ օրհնությունները և հրաշալի ներկայությունը: Նրան շնորհվել էր գեղեցիկ միջավայր, խաղաղություն, ներդաշնակություն, բարեկեցություն, ինչպես նաև մեծ առատությամբ համեղ կերակուրներ՝ անթիվ ծառերից: Այնուամենայնիվ, հենց որ նա սկսեց մտածել, որ Աստծո իմաստության բնագավառներից մեկը ճիշտ չէր, նա ընկավ՝ հայտնվելով մահվան ճանապարհին: Եթե Եվան կարող էր տեղի տալ այդ ազդեցությանը անթերի միջավայրում, ի՞նչը կարող է պաշտպանել մեզ այս ապականված աշխարհում. միմիայն Աստծո խոսքը:

«Սուրբ գիրքն օգտակար է՝ սովորեցնելու մեզ, թե ինչն է ճշմարիտ և արդար». կան բաներ, որոնք արտաքուստ բարի են թվում, բայց իրականում ճիշտ հակառակն են: Կան հասկացություններ, ենթադրություններ, կարծիքներ, հատկանիշներ, տարբեր դատողություններ և մտածելակերպեր, որոնք ճիշտ և արդարացի են թվում, թեև այդպիսին չեն: Հաշվի առնելով այս ծածուկ վտանգները՝ Աստված կյանքի ձեռնարկ է տվել մեզ, որպեսզի մենք *անգիտակցաբար* չշեղվենք ճշմարտությունից և չհայտնվենք մահվան ճանապարհներին: Այս ձեռնարկը՝ Աստվածաշունչն է:

Թե՛ դուք, թե՛ ես պետք է հարցնենք ինքներս մեզ (և անկեղծորեն պատասխանենք). «Արդյո՞ք ես կանոնավոր կերպով կարդում եմ իմ

Աստվածաշունչը: Արդյո՞ք ես ուսումնասիրում եմ այն: Արդյո՞ք ես ժամանակ եմ անցկացնում՝ փնտրելով Աստծո իմաստությունն իմ կյանքի համար: Թե՞ համարում եմ, որ գերազանց գիտեմ Աստծո խոսքը՝ ինչպես Եվան: Մի՞թե ես, ապրելով այս ապականված մոլորակում և պայքարելով փորձչի դեմ, ավելի լավ վիճակում եմ, քան Եվան. մի՞թե ես ավելի լավ եմ հասկանում ճշմարտությունը և ավելի հաստատ եմ կանգնած ճշմարտության ճանապարհի վրա:

«Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց». այս արտահայտությունը չունի բացառություններ կամ թաքնված վերապահումներ. այն պետք է կան լիարժեք կերպով ընդունվի, կան բոլորովին մերժվի: Եթե ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված չէ, նշանակում է՝ մեր ձեռնարկը թերի է:

Աստվածաշնչի հավաստիությունը

Վերանայենք որոշ փաստեր Աստվածաշնչի մասին: Այն բաղկացած է վաթսուներեք գրքից, որոնք գրված են տարբեր լեզուներով, մոտավորապես 1.500 տարվա ընթացքում, ավելի քան քառասուն հեղինակների կողմից և երեք տարբեր աշխարհամասերում (Աֆրիկայում, Ասիայում և Եվրոպայում): Աստվածաշնչի գրքերը գրող մարդիկ ունեին տարբեր ծագումներ, զբաղմունքներ և պատկերացումներ կյանքի մասին: Նրանց թվում էին ձկնորսներ, գառնարածներ, զինվորականներ, թագավորներ, մեկ թագավորի մատռվակ, մեկ բժիշկ, մեկ հարկահավաք, մեկ վրանակար և այլք: Մի քանիսը գրում էին բանտերում, իսկ մյուսները թղթին էին հանձնում իրենց բառերը պալատներում:

Թեև այդ մարդկանց գրքերը բազմաթիվ թեմաներ են ընդգրկում, բոլոր այս գրքերի մեջ կա նմանություն, որը հիրավի ակնառու է, բայց ոչ մի դեպքում՝ պատահական: Նրանց գլխավոր թեման է՝ մարդկային մեղքի դժվարին կացությունը, դրա արդյունքում առաջացած բաժանությունն իրենց Արարչից, Նրա հետ փոխհարաբերությունները վերականգնելու մարդկային անկարողությունը և Աստծո պատասխանը՝ ի դեմս Մեսիայի՝ Տեր Յիսուս Քրիստոսի: Այս հաջորդականությունը կարելի է գտնել ամբողջ Աստվածաշնչում՝ Ծննդոցից մինչև Յայտնություն:

Այն, որ Աստվածաշնչի գրողները չէին հավաքվել միասին (և ոչ էլ կարող էին), որպեսզի ծրագրեին իրենց աշխատությունները, երկյուղածություն է ներշնչում: Ոչ մի անձնավորություն կամ կոմիտե չէր վերահսկում կամ ղեկավարում այդ գրքերը գրելու ընթացքը: Աստված Ի՞նքն էր անում դա: Զանի որ Սուրբ գրքերը գրվել են այդքան երկար ժամանակահատվածում, հեղինակների մեծ մասը չէր ճանաչում մեկը

մյուսին և ո՛չ էլ ապրում նույն ժամանակաշրջանում: Գրքերն ավելանում էին այն ներկա ժողովածուին, որը մեր ձեռքում է, 1.500 տարվա ընթացքում: (Մի պահ կանգ առեք և մտածեք, թե ինչ էր կատարվում մեր օրերից 1.500 տարի առաջ: Այդ ժամանակ չկար նույնիսկ Բրիտանական կայսրությունը: Պարզապես ապշեցուցի՞չ է):

Այժմ՝ սերունդներ անց, պարզապես աներևակայելի է, որ Աստվածաշունչը, որը մենք կարդում ենք, մեկ գիրք է՝ գրված տարբեր մարդկանց կողմից, ովքեր նույնիսկ գաղափար չունեին դրա ընդհանուր կառույցի մասին: Նրանց դերերը կարելի է համեմատել տարբեր սերունդներին պատկանող տարբեր մարդկանց հետ, ովքեր վեպի գլուխներ են գրում, և նրանցից ոչ մեկը չգիտի պատմության ընդհանուր նկարագիրը կամ սյուժեն: Այս գրքի զարմանալի փոխկապակցվածությունը՝ դրա աստվածային ծագման ապացույցն է: Նման երաժշտական սիմֆոնիայի՝ Աստվածաշնչի ամեն մասն իր ներդրումն ունի ընդհանուր բարեհնչյունության մեջ և ղեկավարվում է մեկ Աստծո կողմից:

Միայն այս փաստարկն արդեն անժխտելի ապացույց է Սուրբ գրքի աստվածային ոգեշնչման մասին: Բայց մեկ քայլ առաջ գնանք՝ խոսելով տարբեր հեղինակների ճշգրտության մասին:

Մարգարեությունները Մեսիայի գալստյան մասին՝ գրվել են տարբեր հինկտակարանյան գրքերում հարյուրավոր տարիների ընթացքում: Դրանց մի մասը գրվել է Հիսուսի ծննդից ավելի քան հազար տարի առաջ: Աստվածաբանների մեծ մասը համակարծիք է, որ Հին կտակարանում գոյություն ունի ավելի քան երեք հարյուր մարգարեություն Մեսիայի մասին: Գալով այս աշխարհ՝ Հիսուս Քրիստոսը դիմեց Իր Յորը. «Ահա՛, ես եկա՝ կատարելու Քո կամքը, ո՛վ Աստված, ինչպես որ Իմ մասին գրված է Սուրբ գրքերում» (Եբրայեցիների 10.7, NLT): Իսկ մարդկանց Հիսուսը հայտարարեց հետևյալը. «Սուրբ գրքերը խոսում են Ի՛մ մասին» (Հովհաննես 5.39, TEV):

Այն, որ Հիսուսը կատարել է այս մարգարեական խոսքերը, անժխտելի ապացույց է Սուրբ գրքի աստվածային ոգեշնչման մասին: Մարդիկ սովորաբար ժխտում են սա՛՝ ասելով, որ հնարավոր է գտնել այլ պատմական դեմքերի, ովքեր կարող են համապատասխան լինել Մեսիայի մասին մարգարեություններին: Սա ճշմարիտ է, որոշ անհատներ կարող էին կատարել մեկ, երկու կամ նույնիսկ՝ մի քանի մարգարեություն: Այնուամենայնիվ, գործնականորեն անհնար է գտնել այնպիսի մարդու, ում կյանքում կատարվել են բոլոր այդ մարգարեությունները:

Թույլ տվեք բացատրել սա: Հաջորդ մի քանի էջերն ավելի տեխնիկական և գիտական երանգ ունեն, բայց հավաստիացնում են ձեզ, որ

այս տեղեկությունը կարևոր է, և դուք կարող եք մեծ հետաքրքրությամբ մտորել այս մասին:

Աստվածաշնչի ճշգրտությունը

Մեր թվարկության քսաներորդ հարյուրամյակի կեսերին Պիտեր Սթոուներ անունով մի գիտնական և պրոֆեսոր հրատարակեց «Գիտությունը խոսում է» վերնագրով մի գիրք: Այդ աշխատության մեջ նա դիտարկում էր մարգարեությունները Քրիստոսի մասին՝ հավանականության տեսության լույսի ներքո: Գիտությունների դոկտոր Յ. Յարլոյդ Յարցլերը գրեց Սթոուների հայտնագործությունների մասին «Գիտությունը խոսում է» գրքի նախաբանում.

««Գիտությունը խոսում է» գրքի տեքստը մանրակրկիտ ձևով զննվել է Ամերիկայի Գիտական միության անդամների կողմից: Նույն կազմակերպության Գործադիր խորհուրդը համարել է, որ աշխատության մեջ ներկայացված գիտական նյութը՝ իր ամբողջությամբ, վստահելի և ճշգրիտ է: Ընդգրկված մաթեմատիկական վերլուծությունը հիմնված է հավանականության սկզբունքների վրա, որոնք լիովին հիմնավորված են: Պրոֆեսոր Սթոուները կիրառել է այս սկզբունքները պատշաճ և արժանահավատ կերպով»²:

Սթոուները միայնակ չի կատարել այս հետազոտությունը, այլ արել է իր եզրակացությունները մի շարք հաշվարկների հիման վրա, որոնք կատարել են բնագիտական ֆակուլտետների տասներկու տարբեր խմբերում սովորող ավելի քան վեց հարյուր ուսանողներ: Նա մանրակրկիտ ձևով ուսումնասիրել ու համեմատել է նրանց հաշվարկները, իսկ հետո մաս առ մաս խմբագրել է դրանք՝ ստացված տվյալներն ավելի ճշգրիտ դարձնելու համար: Նրանց սկզբնական գնահատումը Յիսուս Քրիստոսի մասին՝ արվել է հետևյալ ութ մարգարեությունների հիման վրա.

1. Քրիստոսը պետք է ծնվեր Բեթլեհեմում (մարգարեությունը՝ Միքիա 5.2. իրականացումը՝ Մատթեոս 2.1-7, Յովհաննես 7.42, Ղուկաս 2.4-7):
2. Քրիստոսին պետք է մի Ավետաբեր նախորդեր (մարգարեությունը՝ Եսայի 40.3, Մաղաքիա 3.1. իրականացումը՝ Մատթեոս 3.1-3, 11.10, Յովհաննես 1.23, Ղուկաս 1.13-17):
3. Քրիստոսը պետք է մուտք գործեր Երուսաղեմ՝ նստած ավանակի վրա (մարգարեությունը՝ Ջաքարիա 9.9. իրականացումը՝ Ղուկաս 19.28-37, Մատթեոս 21.1-11):

4. Քրիստոսը պետք է մատնվեր ընկերոջ կողմից (մարգարեությունը՝ Սաղմոս 41.9, 55.12-14. իրականացումը՝ Մատթեոս 10.4, 26.47-50, Յովհաննես 13.21-27):
5. Քրիստոսին պետք է վաճառեին 30 արծաթով (մարգարեությունը՝ Չաքարիա 11.12. իրականացումը՝ Մատթեոս 26.15, 27.3):
6. Այն փողը, որով Քրիստոսին վաճառել էին, պետք է «դեն գցվեր բրուտի մոտ» Աստծո տանը (մարգարեությունը՝ Չաքարիա 11.13. իրականացումը՝ Մատթեոս 27.5-7):
7. Քրիստոսը պետք է լուռ լիներ Իրեն մեղադրողների առջև (մարգարեությունը՝ Եսայի 53.7. իրականացումը՝ Մատթեոս 27.12, Մարկոս 14.60,61, 15.3-5):
8. Քրիստոսը պետք է մահապատժի ենթարկվեր խաչելությամբ՝ գողի պես (մարգարեությունը՝ Սաղմոս 22.16, Չաքարիա 12.10, Եսայի 53.5. իրականացումը՝ Ղուկաս 23.33, Յովհաննես 20.25, Մատթեոս 27.38, Մարկոս 15.24-27):

Մինչև շարունակելը, թույլ տվեք մի պարզ օրինակ բերել՝ հավանականության տեսությունը բացատրելու համար: Պատկերացրեք, որ վերցնում ենք ինը դեղին և մեկ սպիտակ թենիսի գնդակներ, դնում ենք մեծ դույլի մեջ և մի լավ թափ ենք տալիս, իսկ հետո կապում ենք ինչ-որ մեկի աչքերը և խնդրում նրան մեկ գնդակ վերցնել այդ դույլից: Սպիտակ գնդակը վերցնելու հավանականությունը կլինի մեկից տասը: Սա հավանականության պարզ օրինակ է:

Կատարելով իր հետազոտությունը՝ Պիտեր Սթոուները գրել է հետևյալը վերևում թվարկված ութ մարգարեությունների մասին.

«...Մենք պարզեցինք հետևյալը. հավանականությունը, որ մինչև օրս ապրած մարդկանցից որևէ մեկը կարող է կատարել բոլոր այս ութ մարգարեությունները՝ 1-ից 100.000.000.000.000 է»³:

Այս տվյալներն ապշեցուցիչ են, բայց եթե դուք մաթեմատիկոս կամ գիտնական չեք, դուք դժվարությամբ կհասկանաք սա: Գրքում Սթոուները մի խելացի օրինակ է բերում, որը կներկայացնեն ավելի պարզ կերպով: Եթե մենք կարողանայինք 100.000.000.000.000.000 հատ արծաթե մեկ դոլարանոց մետաղադրամ ունենալ, մենք կկանգնեինք լուրջ խնդրի առջև, քանի որ չէինք իմանա, թե ինչպես պահպանել դրանք: Ամբողջ աշխարհում չկա այդքան մեծ պահեստ կամ շինություն: Այդ մետաղադրամների ծավալն այնքա՞ն մեծ կլիներ, որ դրանք կծածկեին Տեխաս նահանգն ամբողջությամբ (696.241 քվմ) 60 սանտիմետր հաստությամբ: Սա աննկարագրելի խոշոր քանակություն է:

Ենթադրենք՝ մենք կարողացանք այդքան մետաղադրամ գտնել: Եկեք որևէ նշան դնենք այդ դրամներից մեկի վրա, իսկ հետո խառնենք բոլորը և փռենք Տեխաս նահանգով մեկ: Իսկ հիմա կապենք ինչոր մեկի աչքերը, ուղղաթիռ նստեցնենք նրան և թռցնենք նահանգի վրայով, մինչև որ նա պատվիրի իջեցնել ուղղաթիռը: Յենց որ ուղղաթիռը վայրէջք կատարի, նա կարող է դուրս գալ և, առանց աչքերի կապը հանելու, վերցնել մեկ մետաղադրամ: Հավանականությունը, որ նա կընտրի նշված մետաղադրամը ամբողջ Տեխաս նահանգի հատակին փռած մետաղադրամներից, նույնն է՝ եթե որևէ մեկը, սկսած մարգարեների ժամանակվանից մինչև մեր օրերը, կատարեր այս ութ մեսիական մարգարեությունները:

Սթոուները գրում է.

«Սա նշանակում է, որ միայն այս ութ մարգարեությունների իրականացումն ապացուցում է, որ Աստված ոգեշնչել էր այս մարգարեություններն այնպիսի ճշգրտությամբ, որ այն հեռու էր բացարձակ ճշգրտությունից միայն մեկ հավանականությամբ [100.000.000.000.000.000-ից]»⁴:

Աներևակայելի է մտածել այս հավանականությունների շուրջ: Բայց և այնպես, Սթոուները կանգ չի առնում սկզբնական ութ մարգարեությունների վրա: Նա շարունակում է՝ ընդգրկելով ևս ութ հինկտակարանյան մարգարեություն Յիսուսի կյանքի վերաբերյալ (ընդհանուր առմամբ՝ տասնվեց): Նա պնդում է.

Հավանականությունը, որ մեկ մարդը կարող է կատարել բոլոր տասնվեց մարգարեությունները՝ 1-ից 1045 է»⁵:

Ի՞նչ թիվ է սա: Այն գրելու համար, պետք է 45 զրո ավելացնել 1 թվից հետո.

1.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000

Սթոուները նկարագրում է, թե ինչ է նշանակում նման հավանականությունը, և ես կրկին կպարզեցնեմ նրա օրինակը: Եթե մենք այսքան արծաթե մետաղադրամներ ունենայինք, Երկիր մոլորակը շատ փոքր կլիներ՝ դրանք պահպանելու համար: Մենք ստիպված կլինեինք հավաքել դրանք՝ մեծ գունդ դարձնելով: Այս գնդի տրամագիծը վաթսուն անգամ ավելի երկար կլիներ, քան տարածությունը Երկիր մոլորակից մինչև արևը, այսինքն՝ 8.85 միլիարդ կիլոմետր:

Թույլ տվեք օգնել ձեզ՝ հասկանալ, թե որքա՞ն մեծ կլիներ այդ շրջանը: Ես հաճախ եմ թռչում այլ երկրներ՝ Աստծո խոսքն ուսուցա-

նելու համար: Ջարմանայի է, որ այսօր մենք կարող ենք ինքնաթիռով պտույտ կատարել ամբողջ երկրի շուրջ ընդամենը քսանչորս ժամում: Առաքյալներին դուր կգային մեր օրերը: Այնուամենայնիվ, եթե մենք ցանկանայինք ինքնաթիռով թռչել մեր արծաթե մետաղադրամների գնդի շուրջ, մեզ դա չէր հաջողվի, որովհետև ոչ մի մարդ մեր դարաշրջանում այդքան երկար չի ապրել: Մեզնից կպահանջվեր թռչել առանց կանգառների ավելի քան չորս հարյուր տարի՝ այդ արծաթե մետաղադրամների գնդի շուրջ մեկ պտույտ կատարելու համար: Եթե մենք սկսեինք մեր թռիչքն այն օրը, երբ Ուխտագնացներն իջան Մասաչուսեթս նահանգի Պլիմուտ քաղաքի ափերին մ.թ. 1620 թվականին, մինչև օրս մենք դեռ ավարտած չէինք լինի մեր պտույտը արծաթե մետաղադրամների գնդի շուրջ:

Մենք պետք է հիշենք, որ այս օրինակը նման չէ նախորդին, որում արծաթե մետաղադրամները ծածկում էին Տեխաս նահանգը վաթսուն սանտիմետր հաստությամբ: Այս դեպքում արծաթե մետաղադրամներից բաղկացած է ամբողջ գունդը:

Պատկերացրեք, որ նշան եք դնում այդ դրամներից մեկի վրա, մի լավ խառնում եք այդ հսկայածավալ գունդը, իսկ հետո կապում եք ինչ-որ մեկի աչքերը և խնդրում եք նրան վերցնել մեկ մետաղադրամ: Մի՞թե դուք կակնկալեք, որ նրա ձեռքում կլինի նշված մետաղադրամը: Այժմ դուք գաղափար կազմեցիք, թե ինչ հավանականությամբ մեկ մարդու կյանքում կարող էր իրականանալ Հիսուսի ծնվելուց հարյուրավոր տարիներ առաջ Նրա մասին գրված մարգարեություններից ընդամենը տասնվեցը:

Բայց սա դեռ ամենը չէ: Կրկին, Սթոուները կանգ չառավ տասնվեց մարգարեության վրա, այլ շարունակեց՝ կատարելով հաշվարկներ քառասունույթ մարգարեության համար: Սա իսկապես գերազանցում է մարդու միտքը, բայց փորձեք հասկանալ այն, ինչ նա գրում է այս մասին.

«Մեր քննարկման առարկան, մարդկային ընկալման բոլոր սահմաններից դուրս հանելու համար, դիտարկենք քառասունույթ մարգարեություններ (դրանց մեկ մարդու կյանքում իրականանալու հավանականությունը), ինչպես այն ութ մարգարեությունները, որոնք դիտարկեցինք ամենասկզբում, և օգտագործելով շատ ավելի սահմանափակ թիվ, քան կարող է լինել իրականում... Կիրառելով նույն հավանականության սկզբունքը, որն օգտագործվել է մինչև հիմա՝ մենք պարզում ենք, որ հավանականությունը, որ ինչ-որ մեկի կյանքում կարող էին իրականանալ բոլոր քառասունույթ մարգարեությունները, 1-ից 10157 է»⁶:

Այսինքն՝ 1 թիվը՝ 157 գրոներով: Ես զուր տարածք կվատնեի, եթե փորձեի գրել այս թիվը: Սթոունները կրկին օգնեց մեզ պատկերացնել այս նոր թիվը՝ բերելով ևս մեկ օրինակ: Այս թիվը նկարագրելու համար արժաթե մետաղադրամը՝ չափազանց մեծ առարկա է: Մենք պետք է շատ ավելի փոքր առարկա ընտրենք:

Էլեկտրոնը՝ ամենափոքր առարկան է, որի մասին մենք գիտենք: Էլեկտրոններն այնքա՞ն փոքր են, որ եթե մեկ գծով շարեինք դրանք երկուս ու կես սանտիմետր երկարությամբ, կպահանջվեր տասնինը միլիոն տարի, որպեսզի հաշվեինք դրանց թիվը՝ մեկ րոպեում 250 հատ հաշվելու դեպքում: Դրանք անասելիորեն փոքր են: Մի՛ մոռացեք, որ խոսքն ընդամենը մեկ երկուս ու կես սանտիմետրանոց գծի մասին է: Ես չեմ ուզում ծանրացնել ձեր միտքն այն ժամանակահատվածով, որն անհրաժեշտ կլինե՞ր՝ այս թվի քառակուսու մեջ գտնվող էլեկտրոնները հաշվելու համար, և ոչ էլ՝ մեկ խորանարդի: Դրա համար անըմբռնելիորեն երկար ժամանակ կպահանջվեր:

Մտապահելով սա՞ եկեք հարց տանք, թե որքա՞ն մեծ կլինի 10157 էլեկտրոններից բաղկացած գունդը: Պարզ ասած՝ այդ գնդի շառավիղն ավելի մեծ կլինի, քան մարդկության կողմից տեսած ամենահեռավոր կետը տիեզերքում, որը տասներեք միլիարդ լուսատարի հեռավորության վրա է: Ի դեպ, լուսատարին հավասար է լույսի անցած տարածությանը մեկ տարում՝ վայրկյանում 300.000 կիլոմետր արագությամբ (վայրկյանում, ոչ թե՛ ժամում): Եթե մենք էլեկտրոնների գունդ ունենալինք, որի շառավիղը տասներեք միլիարդ լուսատարի լինե՞ր, դրանում դեռ չէին տեղավորվի 10157 էլեկտրոններ: Իրականում, այնտեղ շատ ավելի քիչ էլեկտրոններ կլինեին:

Եթե ինչ-որ մեկի աչքերը կապեին և բաց թողնեին այդ էլեկտրոնների շրջանի մեջ, հավանականությունը, որ նա կընտրեր մեկ նշված էլեկտրոնը, նույնը կլինե՞ր, ասես՝ եթե մի մարդ, ամբողջ աշխարհի պատմության ընթացքում կատարե՞ր Քրիստոսի մասին բոլոր հինկտակարանյան մարգարեություններից ընդամենը քառասունութը՝ գրված տարբեր հեղինակների կողմից:

Դուք կցանկանալի՞ք, որ ես շարունակեի մեր քննարկումը, մինչև հասնեի ընդհանուր առմամբ ավելի քան երեք հարյուր մարգարեություններին: Հավանաբար, մտածում եք. «Խնդրո՞ւմ եմ, պե՛տք չէ»: Հուսով եմ՝ դուք հենց այսպես էլ մտածեցիք, որովհետև տեսականորեն սա անհնար է նկարագրել այնպես, որ մեր սահմանափակ միտքը կարողանա ընկալել:

Թույլ տվեք ամփոփել: Հին կտակարանում կան ավելի քան երեք հարյուր մարգարեություններ՝ գրված տարբեր մարդկանց կողմից,

որոնք ապրում էին տարբեր երկրներում և խոսում էին տարբեր լեզուներով: Դրանք գրվել են հարյուրավոր տարիների ընթացքում և կատարվել են մեկ մարդու կյանքում: Ինչպե՞ս ինչ-որ մեկը կարող է ժխտել, որ Սուրբ գրքի ձմարիտ հեղինակը՝ Ինքը Աստված է: Արդյո՞ք այս խոսքը Նրա շուրթերից ավելի խորը իմաստ չստացավ ձեզ համար.

«Աստծո ամեն մի բառը ձմարիտ է» (Առակաց 30.5, NLT):

Նա Ինքը հռչակում է. «Ես հսկում եմ և գործում եմ՝ հետևելով Իմ խոսքին, որ կատարեմ այն» (Երեմիա 1.12, AMP): Հենց այս պատճառով է, որ «բնավ մի բան չի պակասել այն ամեն բարի բաներից, որ (Տերը)... խոսել է» (Գ Թագավորաց 8.56):

Աստծո խոսքն ավելի արժանահավատ է, քան արևը, որը ծագում է ամեն առավոտ: Հիսուսը հաստատում է սա՝ ասելով. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Մատթեոս 24.35): Մեր Արարիչը թողել է Իր անժխտելի մատնահետքերը, որպեսզի մենք իմանանք, որ Նա Աստված է, և որ Նրա կամքը հայտնված է Սուրբ գրքում:

Ուշադրությամբ ականջ դրեք

Ես կկրկնեմ այն, ինչ Պողոս առաքյալն ասաց Բ Տիմոթեոս 3.16-ում. «Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց... և սովորեցնում է մեզ անել այն, ինչը ձիշտ է (կամ՝ բարի է)»: Այս գաղափարը բարդ չէ. ընդհակառակը՝ այն շատ պարզ է: Սուրբ գիրքը՝ Աստծո խոսքն է, և մենք կարող ենք վստահել դրան՝ որպես բարին ձմարտապես գնահատելու և որոշելու համընդհանուր չափանիշի: Եթե դուք կարծում եք, որ ձեր, ձեր ընկերոջ, որևէ մասնագետի կամ հասարակության իմաստությունը ավելի օգտակար է, քան Աստծո իմաստությունը, խնդրում եմ, վերանայե՛ք ձեր կարծիքը, քանի որ Սուրբ գիրքը հայտարարում է.

«Աստված նայում է Երկնքից ամբողջ մարդկային ցեղին. Նա փնտրում է, որ տեսնի, թե արդյո՞ք ինչ-որ մեկը ձմարտապես իմաստուն է, արդյո՞ք ինչ-որ մեկը փնտրում է Աստծուն: Բայց ոչ. բոլորը երեսները դարձրել են. բոլորն ապականվել են: Ոչ ոք *բարի* չի գործում, չկա նույնիսկ մեկը» (Սաղմոս 53.2,3, NLT):

Այս գլխում տեսանք, որ Աստված անժխտելի վկայություն է տվել Սուրբ գրքի վավերականության մասին: Այս խոսքերում սաղմոսերգուն շեշտադրում է, որ ցանկացած իմաստություն, որը հակառակ է Աստծո խոսքին, նույնիսկ եթե այն լավ է թվում, իրականում ապականված է, ինչպես նաև կործանարար է մեզ համար:

Կարդանք Պողոսի խոսքերը Տիմոթեոսին՝ ավելի լայն համատեքստով.

«Դու պետք է հավատարիմ մնաս այն բաներին, որոնք քեզ սովորեցրել են: Դու գիտես, որ դրանք *ճշմարիտ* են... Քեզ սովորեցրել են Սուրբ գրքերը մանկությունից... Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց և օգտակար է՝ սովորեցնելու մեզ, թե ինչն է ճշմարիտը, և դրդելու մեզ գիտակցել, թե ինչն է սխալ մեր կյանքերում: Այն շտկում է մեզ, երբ մենք սխալ ենք, և սովորեցնում է մեզ ձիշտ վարվել: Աստված օգտագործում է այն՝ Իր ժողովրդին պատրաստելու և սպառազինելու համար...» (Բ Տիմոթեոս 3.14-17, NLT):

Մենք պետք է հավատարիմ մնանք այն բաներին, ինչ մեզ սովորեցրել են: Պողոսը չի խոսում մարդկանց կարծիքների, հոգեբանության, հասարակագիտության կամ այս աշխարհի համակարգին պատկանող իմաստության մասին. նա նկատի ունի Աստվածաշունչը: Առաքյալը հորդորում է իր հոգևոր որդուն հավատարիմ մնալ Աստծո խոսքին: Նա շեշտադրում է, թե որքան կարևոր է, որ նա մշտապես արթուն պահի այն իր սրտում: Ինչպիսի՞ աշխարհում մենք կապրեինք, եթե Ադամն ու Եվան այսպես վարվեին:

Պատկերացրեք մի վարկածային իրավիճակ. դուք պետք է անցնեք մեծ ակննապատված դաշտով: Բացի թաքնված պայթուցիկ սարքերից՝ այդ տարածքում կան շարժուն ավազներ, մահացու ծուղակներ, թունավոր բույսեր և բնական խորը փոսեր:

Մինչև ճանապարհ ընկնելը, ձեզ քարտեզ են տալիս, որտեղ պատկերված են բոլոր ականները և բնական փոսերը, և բացատրում են, թե ինչպես խուսափել ծուղակներից, շարժվող ավազներից և թունավոր բույսերից: Ինչպե՞ս կվերաբերվեիք այդ քարտեզին: Արդյո՞ք կխոթեիք այն ձեր ուսապարկի մեջ՝ ձեր սննդի և ջրի շի կողքին, և կկարդայիք այն միայն՝ երբ ճանապարհին լուրջ խնդիրների հանդիպեիք: Արդյո՞ք կհամարեիք, որ այն պարզապես ժամանակ առ ժամանակ ընթերցելու համար է: Արդյո՞ք աչքի կանցկացնեիք այն միայն ճանապարհի սկզբում՝ վստահ լինելով, որ կարող եք հիշել այն ամենը, ինչ այդտեղ գրված է: Կարելի՞ է ասել, որ դուք հենց այսպես կվարվեիք: Այդ դեպքում դուք դուրս կգայիք այդ դաշտից խիստ վիրավորված, կամ էլ ձեզ դուրս կբերեին այդտեղից փակ պարկի մեջ:

Թույլ տվեք ասել այն, ինչ արդեն իսկ ակնհայտ է: Իմաստուն մարդն ուշադրությամբ կկարդար քարտեզը, կուսումնասիրեր այն, կխորհեր դրանում ներկայացված տեղեկության շուրջ, իսկ հետո այնպիսի տե-

դում կղներ, որ հեշտորեն կարողանար վերցնել: Նա հաճախ կանդորադառնար այդ քարտեզին իր ճանապարհի ընթացքում և զգուշաբար կընտրեր իր շավիղները՝ համաձայն իր իմացածի: Եթե ստիպված լինեիք նման ճանապարհ անցնել, մի՞թե նույնը չէիք անի:

Իրականում, մենք այդպիսի ճանապարհ ենք անցնում ամեն օր, և մեր քարտեզը՝ Աստվածաշունչն է: Ես կթվարկեմ մի քանի բանալի խոսքեր: Խնդրում եմ, պարզապես աչքի մի՛ անցկացրեք դրանք, այլ ջանասիրաբար կարդացեք ամեն մի խոսքը: Դրանք և՛ խրախուսում են մեզ, և՛ զգուշացնում են, թե ինչպես վարվենք մեր «սուրբգրային քարտեզի» հետ՝ այս աշխարհի մահացու դաշտով անցնելիս: Կարդալու ընթացքում ուշադրություն դարձրեք «զգույշ» կամ «զգուշությամբ» բառերին:

«Դուք պետք է *զգուշանաք*, որ հնազանդվեք ձեր Տեր Աստծո բոլոր պատվիրաններին՝ ամենայն մանրամասնությամբ հետևելով Նրա հրահանգներին» (Երկրորդ Օրինաց 5.32, NLT):

Ոչ թե մի քանի պատվիրանի, այլ՝ բոլոր պատվիրաններին: Մենք պետք է ամենայն մանրամասնությամբ լսենք և հետևենք Նրա հրահանգներին: Նա խորապես սիրում է մեզ և չի ցանկանում, որ մենք լուրջ վնասներ կրենք կամ մահանանք ճանապարհին: Կրկին՝

«Ուշադիր լսիր... և *զգուշացիր*, որ հնազանդվես: Այդ դեպքում ամեն բան լավ կլինի քեզ համար...» (Երկրորդ Օրինաց 6.3, NLT):

Երբ մենք և՛ լսում ենք, և՛ զգուշությամբ հնազանդվում, ամեն բան մեզ համար լավ է լինում: Աստված Ինքն է երաշխավորում սա՝ Իր խոստմամբ: Մենք տեսնում ենք նույն հրահանգը Երկրորդ Օրինաց 8.1, 12.28,32 և 28.13 խոսքերում: Կարդալով այս խոսքերը՝ դուք կտեսնեք, որ եթե ականջ դնենք Աստծո պատվիրաններին, մենք կվայելենք լիարժեք կյանք, մեր աշխատանքն ավելի արդյունավետ կդառնա, հասարակության մեջ մենք միշտ բարձրում կլինենք և երբեք ցածրում չենք լինի կամ ետևում չենք մնա: Դուք հասկանո՞ւմ եք, թե որքան կարևոր է զգուշությամբ կարդալ Աստվածաշունչը, նաև լսել ու հնազանդվել Նրա խոսքերին:

Միգուցե դուք չհամաձայնեք՝ ասելով. «Բայց Ջոն, այս հրահանգները տրվել էին օրենքի ներքո. սրանք հինկտակարանյան պահանջներ են: Մենք շնորհքի նոր ուխտի ներքո ենք: Մի՞թե Հիսուսը չազատեց մեզ այս հոգնեցուցիչ բեռից»: Հիսուսն իսկապես ազատեց մեզ օրենքից, բայց ոչ՝ Աստծո խոսքին ականջ դնելու շարունակական հորդորներից, որոնք գրված են Աստվածաշնչում: Այս պատվերը մինչև օրս խիստ կարևոր է մեզ համար: Կարդացե՛ք այս հրահանգները, որոնք գրված են Նոր կտակարանում.

«Մովսեսն ասաց. «Ձեր Տեր Աստված կբարձրացնի ձեզ համար մի Մարգարեի [Չիսուսին] ինձ նման՝ ձեր իսկ ժողովրդից: *Զգուշությամբ* լսեք այն ամենը, ինչ Նա պատվիրում է ձեզ»» (Գործք 3.22, NLT):

Մենք ևս մեկ անգամ հանձնարարություն ենք ստանում՝ *զգուշությամբ* լսելու Չիսուսի բոլոր խոսքերը (ոչ թե դրանց մեծ մասը), որոնք ուղղված են մեզ: Լսե՛ք Չակոբոս առաքյալին.

«Բայց եթե դուք *զգուշությամբ* նայեք այն կատարյալ օրենքին, որն ազատ է արձակում ձեզ, և եթե դուք կատարեք այն, ինչ այդ օրենքն ասում է, և չմոռանաք այն, ինչ լսեցիք, Աստված կօրհնի ձեզ՝ դա անելու համար» (Չակոբոս 1.25, NLT):

Դրանից բացի՝ Աստծո խոսքը սովորեցնում է մեզ.

«Մեր ներսում ապրող Սուրբ Յոզու գորության միջոցով, *զգուշությամբ* հսկի՛ր այն թանկ ծշմարտությունը, որը վստահված է քեզ» (Բ Տիմոթեոս 1.14, NLT):

«Այնպես որ, մենք պետք է մեծ *զգուշությամբ* ականջ դնենք այն ծշմարտությանը, որը լսեցինք, որպեսզի չշեղվենք դրանից» (Եբրայեցիների 2.1, NLT):

Առօրյայում ճանապարհից շեղվելը, որպես կանոն, գիտակցաբար տեղի չի ունենում: Երբ դեռահաս էի և ծուկ էի բռնում գետում, երբեմն այնքա՛ն էի ցանկանում շուտ սկսել, որ մոռանում էի խարսխել նավակը՝ ծուկ բռնելուց առաջ: Ես տարվում էի ձկնորսությամբ, և կես ժամ անց, երբ վեր էի նայում, չէի ճանաչում ափը: Ես անգիտակցաբար շեղվել էի կամ հեռացել իմ գտնվելու վայրից:

Մենք շեղվում ենք ծշմարտությունից, երբ հատուկ ուշադրություն չենք դարձնում դրան: Դա տեղի է ունենում, երբ մենք բավականին ժամանակ է՝ չենք կարդացել ու լսել Աստծո խոսքը, չենք մտորել դրա շուրջ և չենք հնազանդվել դրան: Այն, ինչի վրա մենք չենք կենտրոնանում, ի վերջո մարում է մեզ համար: Այդ դեպքում հեշտորեն շեղվում ենք, և Աստծո կամքը փոխարինվում է մեզ շրջապատող մարդկանց ազդեցությամբ և հասարակության ձայներով: Մենք սկսում ենք ընդունել այն, ինչը բարի է թվում՝ ըստ մեր աղավաղված գնահատման:

Նախորդ գլխում մենք հաստատեցինք մի կարևոր ծշմարտություն. չկա ոչ մի բարի բան մեզ համար՝ առանց Աստծո կամքի: Դուք համաձայն եք, որ Աստծո կամքը հայտնված է Աստվածաշնչում: Եթե ձեր պատասխանը դրական է, ժամանակն է՝ կառուցել մեր հիմքը:

ՀԻՄՔԸ

«Աստվածապաշտ մարդիկ մնայուն հիմք ունեն»:
— Առակաց 10.25, NLT

Եթե դուք Ավետարանում հավատում եք
այն բաներին, որոնք ձեզ դուր են գալիս,
և մերժում այն բաները, որոնք դուր չեն գալիս,
դուք հավատում եք ոչ թե Ավետարանին,
այլ՝ ինքներդ ձեզ:
— Սբ. Օգոստինոս Երանելի

Թույլ տվեք հիշեցնել այս գրքի ուղերձի երեք կողմերի մասին:
Առաջինը՝ մեր հիմքն է, երկրորդը՝ ինչն ի մի է բերում մեր
կյանքը, և երրորդը խորհրդանշում է մեր կյանքի կառուցումը: Մենք
խոսելու ենք այս երեքի մասին մինչև գրքի ավարտը:

Հիմքն անչափ կարևոր է Աստծո հետ ճիշտ փոխհարաբերություն-
ներ ունենալու համար: Եթե դուք երկար ժամանակվա հավատացյալ
եք, ես հորդորում եմ ձեզ՝ անպայման ընթերցել այս խոսքերին հետևող
համառոտ դիտարկումը: Այն ոչ միայն կամրացնի ձեր հիմքերը, այլև՝
այն մարդկանց, ում դուք առաջնորդում եք և ում կյանքում ազդեցություն
ունեք, և կօգնի փոխհարաբերություններ կառուցել մեր Արարչի հետ:
Գրված է.

«Սուրբ գիրքն ասում է. «Ոչ ոք արդար չէ. չկա նույնիսկ մեկը:
Ոչ ոք ճշմարտապես իմաստուն չէ... բոլորը երեսները դարձրել
են. բոլորն անպետք են դարձել: *Ոչ ոք բարի չի գործում, չկա
նույնիսկ մեկը*» (Յոզմեացիների 3.10-12, NLT):

Ոչ ոք բարի չի գործում, չկա նույնիսկ մեկը: Բացի Հիսուս Քրիստոս-
սից՝ չկա որևէ մարդ, ով երբևէ ապրել է կամ կապրի այս երկրում, ով
հետևողականորեն բարի է գործել կամ գործում է՝ համաձայն Աստ-
ծո չափանիշների: Պատճառն այն է, որ ամեն մարդ ծնվել է որպես

ստրուկ: Այո, թե՛ դուք, թե՛ ես ծնվել ենք որպես ստրուկներ: Դուք կարող եք հարցնել. «Ինչի՞ ստրուկ»: Մեղքի: Պողոսը գրում է այն մարդկանց, ովքեր ազատ են արձակվել դրանից. «Մի ժամանակ դուք մեղքի ստրուկներ էիք» (Հռոմեացիների 6.17, NLT):

Ադամն ու Եվան մահացան այն պահին, երբ չինազանդվեցին Աստծուն: Աստված զգուշացրել էր այդ դառը ճակատագրի մասին արգելված պտուղն ուտելուց շատ ավելի վաղ: Այնուամենայնիվ, անցան շատ տարիներ, մինչև որ երկուսն էլ մահացան բնական մահով:

Այսպիսով, հարց է ծագում. ինչպե՞ս Ադամն ու Եվան մահացան այն օրը, երբ կերան այդ պտուղը: Մահը տեղի ունեցավ նրանց էության կենտրոնում՝ նրանց հոգու մեջ: Նրանք բաժանվեցին Աստծուց՝ Կյանքը տվողից, և ձեռք բերեցին ներհատուկ հատկանիշներ, որոնք հակառակ էին Նրա հատկանիշներին: Որպես հետևանք՝ նրանց զավակները ծնվեցին նույն ներքին հատկանիշներով, և դրանք փոխանցվեցին սերնդեսերունդ՝ մինչև մեր օրերը: Ծննդոց 5.3-ը հաստատում է այս փաստը. «Երբ Ադամը 130 տարեկան էր, նա որդի ունեցավ, որը ձիշտ նրա նման էր՝ նրա հոգու և պատկերի համեմատ» (MSG):

Մարդկությունն արդեն անկարող էր ճշմարտապես ճանաչել կամ կատարել բարին. նրանց ներքին բարոյական կողմնացույցը թերի էր դարձել: Հետևաբար, միայն Աստծո ազդեցությունն այս երկրում կուղղորդեր մարդկանց դեպի ճշմարիտ բարությունը և արդարությունը, քանի որ մարդն արդեն առաջնորդվում էր մեղքով: Առանց աստվածային առաջնորդության՝ բարին ու չարն աղավաղված էին նրա համար: Այժմ մարդկության նոր տերը և նրանց կյանքերում ներգործողը նա էր, ով Եդեմի պարտեզում մտել էր օձի մեջ՝ սատանան՝ անհնազանդության թագավորը:

Աստված տվել էր երկիրը մարդկանց: Նա տվել էր նրանց իշխանությունը ամբողջ երկրի վրա, բայց նրանք հանձնեցին այն սատանային: Հազարավոր տարիներ անց սատանան մի բարձր սար տարավ Հիսուսին, ցույց տվեց ամբողջ աշխարհը և համարձակ հայտարարեց. «Այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը Քեզ կտամ, որ [այն] ինձ է տրված, և ում որ կամենում եմ, տալիս եմ նրան» (Ղուկաս 4.6): Սատանան կարող էր այդպես խոսել, որովհետև այդ իշխանությունը տրվեց նրան Եդեմի պարտեզում:

Աստված չէր կարող գալ այս երկիր աստվածային կերպարանքով, որպեսզի փրկեր մեզ, քանի որ երկիրը տրվել էր մարդկանց: Մարդկությունն ինքն էր զիջել իր իշխանությունը. հետևաբար, միայն մարդը կարող էր ետ վերցնել այն: Աստված ծրագիր ուներ Ադամի օրինազանցությունից շատ առաջ, քանի որ Նա կանխատեսեց Ադամի ընտրությունը մինչև ժամանակվա սկիզբը: Նա որոշեց երկիր գալ որ-

պես Մարդ և ետ գնել մարդկության ազատությունը՝ փրկելով նրանց ստրկությունից: Աստված ուղարկեց Իր Որդուն՝ Յիսուս Քրիստոսին: Նա ծնվեց կնոջից, ինչի շնորհիվ Նա հարյուրտոկոսանոց մարդ էր, բայց բեղմնավորվեց Աստծո Սուրբ Յոզուց, ինչի շնորհիվ Նա հարյուրտոկոսանոց Աստված էր: Այս պատճառով, Յիսուսն ազատ էր այն ստրկության անեծքից, որի ներքո մենք ծնվել ենք:

Յիսուսի կյանքն այս երկրի վրա կատարյալ էր: Նա ոչ մի անգամ անհնազանդ չգտնվեց Աստծուն: Որպես միակ անմեղ Մարդ, Ով երբևէ ապրել էր այս երկրի վրա՝ Նա տվեց Իր կյանքը մարդկության ազատության համար: Խաչի վրա Յիսուսն Իր վրա վերցրեց անցյալում, ներկայում կամ ապագայում երբևէ ապրած յուրաքանչյուր մարդու դատաստանը: Նա Իր թափած արքայական արյունով գին վճարեց՝ մեզ ստրկությունից ազատելու համար:

Նա մահացավ և թաղվեց: Քանի որ Նրա կյանքն Աստծո առջև կատարյալ էր, երեք օր անց Աստծո Յոզին հարություն տվեց Նրան մեռելներից: Այժմ Նա նստած է Ամենակարող Աստծո աջ կողմում, Ով այսպիսի հրաման է արձակել.

«Որովհետև եթե բերանովդ Յիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանի որ սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար» (Ղոմեացիների 10.9,10):

Այն պահին, երբ ընդունում ենք Յիսուս Քրիստոսին՝ որպես մեր Տեր, աներևակայելի հրաշք է տեղի ունենում: Մեր մեղքի և մահվան բնությունն ակնթարթորեն հեռանում է, և ծնվում է նոր մարդ՝ ստեղծված Յիսուսի պատկերով: Այս նոր ծնունդը վերաբերում է մեր հոգուն (մեր իրական էությանը), ոչ թե մեր մարմնին: Մեր մարմինը դեռ ապականված է և մեկ օր մահանալու է: Այս նոր կյանքը տրվում է միմիայն Աստծո շնորհքի պարգևի հիման վրա. այն որևէ կապ չունի մեր բարի վարքի հետ, և չի շնորհվում մեզ՝ որպես արժանի հատուցում մեր գործերի համար: Այս ճշմարտությունն անփոփոխ է:

Կարևոր է նշել, որ վերևում Ղոմեացիների թղթից մեջբերված հատվածը պնդում է, որ դուք պետք է դավանեք Յիսուսին որպես *Տեր*, ոչ թե որպես *Փրկիչ*: Ահա և մի հիմնարար սխալմունք, որը գերիշխում է Արևմուտքի երկրների Եկեղեցում: «Տեր» բառը հունարենում «կյուրիոս»-ն է, որը նշանակում է՝ «տեր», «սեփականատեր», «գերագույն իշխանություն ունեցող»:

Հիսուսին միայն որպես Փրկիչ դավանելը չի բերում ազատություն և նոր կյանք: Ես գիտակցում եմ, որ սա խիստ արտահայտություն է, որը հակառակ է այն ընդունված ձևին, որով մենք դիմում ենք կորսված մարդկանց, բայց այն համապատասխանում է Աստվածաշնչին:

Աստվածաշնչում «*փրկիչ*» բառը գրված է 36 անգամ, այնինչ «*տեր*» բառը հանդիպում է 7.800 անգամ: Ձեր կարծիքով Աստված ինչի՞ վրա է շեշտադրում: «*Տեր*» տիտղոսը ցույց է տալիս այն *դիրքը*, որը Նա ունի մեր կյանքում, իսկ «*Փրկիչ*» տիտղոսը նկարագրում է այն *աշխատանքը*, որը Նա կատարել է մեզ համար: Մենք չենք կարող մասնակից լինել Նրա *աշխատանքին*, քանի դեռ չենք հնազանդվել այն *դիրքին*, որը Նա ունի՝ որպես Տեր և Թագավոր:

Մենք ծնվել ենք որպես ստրուկներ: Պարզ ասած՝ մենք մեղքի սեփականությունն էինք: Այնուամենայնիվ, մենք ստեղծվել ենք ազատ կամքով, և, հետևաբար, պետք է ինքներս հաստատ որոշում կայացնենք և հռչակենք, որ փոխում ենք մեր տիրոջը: Փրկությունը տրվել է ամեն մարդու, բայց ամեն մեկս պետք է անհատապես որոշում կայացնի ընդունել այն՝ Աստծո պայմաններով:

Բանտ՝ կղզու վրա

Ես կպատմեմ մի հորինված պատմություն՝ այս ծճմարտությունը բացատրելու համար.

Պատկերացրեք, որ ձեր ամբողջ ընտանիքը բանտում է՝ մի կղզու վրա, որի տերը շատ չար մարդ է: Շատ ժամանակ առաջ մի բարի թագավոր՝ հեռու երկրից, նվիրել էր այդ կղզին ձեր պապին: Սակայն ձեր պապը լուրջ սխալ էր թույլ տվել. նա չէր հսկել այն: Այդ չար տերը՝ ապստամբ մարդկանցից բաղկացած իր ավազակախմբով, թաքուն եկել և գրավել էր այդ կղզին՝ ստրկացնելով ձեր պապին և նրա բոլոր ժառանգներին: Երբ կղզին իրենցը դարձավ, նրանք բանտեր կառուցեցին և բանտարկեցին ձեր ամբողջ ընտանիքին:

Կյանքն այդ կղզում աստիճանաբար համապատասխանեց այդ չար տիրոջ և նրա ավազակախմբի բնությանը՝ հասնելով բացարձակ ապականության և անառակության: Այդ պատճառով բարի թագավորը կործանման դատապարտեց այդ կղզին: Բայց և այնպես, քանի որ նա սիրում էր ձեր ընտանիքը, կղզին ոչնչացնելուց առաջ նա եկավ և կռվեց չար տիրոջ բանակի դեմ ու պարտության մատնեց այն:

Դրանից հետո բարի թագավորը բացեց բոլոր բանտերի դռները և հայտարարեց. «Այժմ բոլոր բանտարկյալներն ազատ են: Ձեզնից յու-

րաքանցուրդ կարող է դուրս գալ բանտից, եթե ուրանա չար տիրոջ իշխանությունը և հավատարմության երդում տա ինձ»:

Շնորհիվ նրա բարության՝ ձեր ընտանիքը ստացավ երկար սպասված ազատությունը: Այնուամենայնիվ, բարի թագավորը չի ստիպի ձեզ՝ հետևել իրեն: Ամեն բանտարկյալ ինքը պետք է քայլ անի (եթե բարի թագավորը ոչ թե ընտրության հնարավորություն տար, այլ պահանջեր դա ամեն մեկից, այդ կղզում պարզապես ևս մեկ բռնատիրություն կհաստատվեր): Եթե որոշում կայացնեք ընդունել ազատությունը, ձեզնից կպահանջվի, որ դուրս գաք ձեր բանտախցից, հետևեք ձեր նոր թագավորին՝ նստելով նրա նավը, դառնաք նրա ենթականերից մեկը և ապրեք նրա հրաշալի թագավորության օրենքներով: Ձեզ ընծեմվել է այս հնարավորությունը, բայց դուք պետք է ընդունեք բարի թագավորի պայմանները:

Բարի թագավորը համարվում է ձեր ընտանիքի *փրկիչը*: Այնուամենայնիվ, նրա փրկարար աշխատանքից օգուտ քաղելու համար, ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը պետք է համաձայնի ի սրտե հնազանդվել նրան, այսինքն՝ հնազանդվել նրա թագավորության օրենքներին: *Ձեր բանտարկված ընտանիքի անդամներից ոչ ոք չի կարող ընդունել միայն թագավորի փրկությունը և հեռանալ կղզուց՝ առանց նրա իշխանությանը հնազանդվելու:*

Եթե որոշեք չհետևել բարի գահակալին, դուք պարզապես կմնաք ձեր տեղում: Սակայն թագավորի ռազմանավերն արդեն տեղակայված են կղզու ավամերձ ջրերում՝ պատրաստ ռմբակոծելու և ոչնչացնելու դատապարտված կղզին, հենց որ նա հեռանա այդտեղից: Ձեր ընտանիքի անդամները, ովքեր չեն ցանկանում ընդունել բարի թագավորի *իշխանությունը*, կկրեն միևնույն հետևանքները, ինչ որ կրեցին չար տերը և նրա ավազակախումբը, թեև թագավորը պայքարել էր՝ բոլորիդ ազատ արձակելու համար, և բացել էր ձեր բանտախցերի դռները:

Լսե՛ք ինձ, սիրելի՛ ընթերցող: Աստված չի ստեղծել դժոխքը որևէ մեկի համար: Նա ստեղծել է այն սատանայի և նրա հրեշտակային բանակների համար: Դատաստանի օրը Յիսուսը կսափ նրանց, ովքեր չէին ընդունել Նրա թագավորական իշխանությունը.

«Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար» (Մատթեոս 25.41):

Դժոխքը՝ շատ իրական վայր է: Յիսուսը խոսում էր դրա մասին ավելի շատ, քան Երկնքի: Նա չէր դիտարկում դժոխքի նկարագրությունը:

նը (այն, որ դժոխքում կա չարչարանք, և որ դժոխքը վերջ չունի) որպես գրթասրտության պակաս: Դժոխքը՝ հավիտենական տուն է մեռածների համար, ովքեր մերժում են Նրա սիրո իշխանությունը:

Համաձայն Հիսուսի խոսքերի՝ այս պատժի և անտանելի չարչարանքների վայրը պատրաստված չի եղել մարդկանց համար, սակայն, ցավոք, մեր նախահայր Ադամն իր անհնազանդության պատճառով մեզ նույնպես ենթակա դարձրեց գալիք դատաստանին: Այժմ սատանային սպասվող ճակատագիրն սպասվում է նաև մեզ, եթե մենք չփոխենք մեր տիրոջը: Թեև Հիսուսը փրկել է ամբողջ մարդկությանը Աստծո բարկությունից, շատերը դատաստանի են ենթարկվելու սատանայի հետ, որովհետև նրանք դեռ կրում են սատանայի բնությունը: Ըստ էության, նրանք որոշեցին մնալ կղզում:

Միգուցե հարցնեք. «Ինչո՞ւ Աստված չի կարող ողորմություն ցուցաբերել և թույլ տալ մարդկանց մուտք գործել Իր թագավորությունը իրենց ներկա վիճակում»: Պատճառը հետևյալն է. այն մարդիկ, ովքեր չեն ցանկանում Հիսուսինը լինել, իրենց ներսում դեռ կրում են ապականված և չար հոգևոր բնությունը: Հենց որ նրանք հեռանան այս երկրից, այդ բնությունը հավիտյան պատկանելու է նրանց: Եթե նրանց թույլ տան մուտք գործել Աստծո հավիտենական թագավորության մեջ, նրանք կապականեն այն և վնաս կհասցնեն շատ անմեղ մարդկանց:

Հենց սա էր պատճառը, որ Աստված հեռացրեց Ադամին ու Եվային կյանքի ծառից, որը գտնվում էր Եդեմական պարտեզում:

«Եվ Տեր Աստված ասաց. «Ահա մարդ արարածները Մեզ նման են դարձել՝ ճանաչելով և՛ բարին, և՛ չարը: Ի՞նչ կլինի, եթե նրանք պարզեն իրենց ձեռքը, վերցնեն կյանքի ծառի պտղից և ուտեն այն: Այդ ժամանակ նրանք հավիտյան կապրեն»: Այնպես որ, Տեր Աստված վտարեց նրանց Եդեմի պարտեզից» (Ծննդոց 3.22,23, NLT):

Աստծո սերը պաշտպանեց մեզ հավիտյան մահացած բնություն ունենալուց:

Իշխանություն

Արևմուտքի եկեղեցին շեշտադրել է այն աշխատանքը, որը Հիսուսը կատարել է մեզ համար՝ որպես Փրկիչ, շատ ավելի, քան Նրա դիրքը՝ որպես Տեր: Այդ պատճառով մեր հնազանդության պակասը Նրա իշխանական դիրքին՝ զգալի ձեղքվածք է ստեղծում մեր հիմքի մեջ: Ահա թե ինչ է գրում Պողոսը.

«Ինչպես որ դուք ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ որպես ձեր Տիրոջ, այնպես էլ պետք է շարունակեք հետևել Նրան: Թույլ տվեք, որ ձեր արմատներն աճեն Նրանում, և թող որ ձեր կյանքերը կառուցվեն Նրա վրա» (Կողոսացիների 2.6,7, NLT):

Պողոսը չի ասում. «Ինչպես որ դուք ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ որպես ձեր Փրկիչ»: Մեր կյանքերը պետք է հնազանդվեն Նրա իշխանական դիրքին և կառուցվեն այդ դիրքի վրա, ոչ թե այն աշխատանքի, որը Նա կատարել է՝ որպես Փրկիչ: Կարելի է այսպես ձևակերպել. մենք հնազանդվում ենք Նրան՝ որպես մեր միակ գերագույն Թագավորի, և միայն այդ դեպքում ենք օգտվում Նրա փրկությունից: Սա գործնականորեն կատարելու համար՝ մենք ամուր կերպով հարում ենք Նրա Խոսքին, իմաստությանը, խորհրդին, ցուցումներին, շտկումներին և խրատներին, անկախ այն բանից՝ մենք իմաստ գտնո՞ւմ ենք դրանցում, թե՞ ոչ: Մենք այլևս չենք սնվում մեր ծառից, այսինքն՝ չենք փորձում ինքներս որոշել, թե ի՞նչն է ճիշտ, և ի՞նչն է սխալ: Մենք ապրում ենք Նրանում. Նրա կյանքը դառնում է մերը:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Ես երեսուն տարի է՝ ամուսնացած եմ Լիզայի հետ: Դրա առավելություններից մեկը՝ հիանալի խոհարարի հետ ապրելն է: Լիզան համեղ կերակուրներ պատրաստելու վարպետ է: Իմ ընկերներից մի քանիսը խնդրում էին Լիզային՝ իրենց կանանց սովորեցնել պատրաստել թանձրուկներ, համեմունքներ՝ աղցանների համար, և տարբեր ախորժեղի ուտեստներ:

Երբեմն ես անվանում էի Լիզային իմ «փոքրիկ վարպետ խոհարարը»: Ես այդպես անվանած կլինեմ նրան տասից ավելի անգամներ մեր ամուսնության ամբողջ ընթացքում, բայց ավելի հաճախ վերջին երեսուն տարիների ընթացքում ես անվանել եմ նրան իմ կինը: Ինչո՞ւ: Որովհետև այս բառը ցույց է տալիս այն *դիրքը*, որը նա զբաղեցնում է իմ կյանքում: Մյուս անվանումը ցույց է տալիս այն *առավելություններից* մեկը, որը ես ստացել եմ այն պատճառով, որ նա իմ կինն է:

Այն, որ Լիզան կերակուրներ է պատրաստում ինձ համար, դեռ չի նշանակում, որ ես պատկանում եմ նրան: Երբ ամուրի էի, մեկ անգամ նա չափազանց համեղ կերակուր պատրաստեց իմ ծննդյան օրվա առթիվ: Այնուամենայնիվ, դա չէ, որ մնայուն հարաբերություններ կառուցեց մեր միջև: Մեր ամուսնական հարաբերությունները հաստատեց այն ուխտը, որը ես կնքեցի նրա հետ: Ես ուխտեցի թողնել բոլոր աղջիկներին և տալ իմ սիրտը միմիայն նրան՝ լինելով նրա ամուսինը:

Մեր փոխհարաբերությունները Յիսուսի հետ նման են այս օրինակին: Մենք պետք է հնազանդվենք Նրա թագավորական իշխանության

նը, որպեսզի ստանանք Նրա փրկությունը: Մենք անմնացորդ նվիրում ենք մեր կյանքերը, որովհետև հավատում ենք Նրա կատարյալ իշխանությանը, բնավորությանը և սիրուն, և Նա գիտի, թե որն է լավագույնը մեզ համար: Թեև Նա ի սրտե ցանկանում է մտերմորեն հաղորդակցվել մեզ հետ և կատարելապես սիրում է մեզ, Նա թագավորների Թագավորը և տերերի Տերն է, և մուտք չի գործի մեր կյանքերը՝ լինելով երկրորդը ցանկացած բանից կամ ցանկացած մարդուց հետո:

Ես անթիվ անգամներ ականատես եմ եղել Հյուսիսային Ամերիկայի և այլ արևմտյան երկրների եկեղեցիներում, որ ծառայողները փրկություն են առաջարկում Աստծուն փնտրող մարդկանց՝ առանց հիշատակելու Հիսուսի իշխանությունը: Ծառայողներն ասում են. «Դուք պետք է պարզապես դավանեք Հիսուսին որպես Փրկիչ և Աստծո զավակ կդառնաք», կամ՝ «Ինչո՞ւ չդարձնեք Հիսուսին ձեր Փրկիչն այսօր», կամ, օրինակ՝ «Եկե՛ք բոլորս աղոթենք այս աղոթքը. «Հիսու՛ս, եկ իմ սրտի մեջ և փրկի՛ր ինձ այսօր: Շնորհակալություն ինձ Աստծո զավակ դարձնելու համար: Ամեն՛ն»»: Նրանց բոլոր կոչերը Աստծո ընտանիքին միանալու համար արվում են՝ առանց, նույնիսկ, մեկ բառ ասելու այն մասին, որ մարդիկ պետք է թողնեն այս աշխարհի համակարգը և սեփական ձանապարհները՝ Հիսուսին հետևելու համար:

Այս ուղերձը դրական ու բարի է թվում և կապակցվում է համատեքստից անջատ մի քանի նորկտակարանյան հատվածների հետ: Այնուամենայնիվ, արդյո՞ք այդ ուղերձը համապատասխանում է Նոր կտակարանի ընդհանուր ուսմունքին: Արդյո՞ք այն Աստծո իմաստությունն է: Թե՞ մենք կրճատել ու խմբագրել ենք փրկության ճշմարիտ ուղերձը՝ ստանալու համար այնպիսի ուղերձ, որը հաճելի է լսել, և որը համապատասխանում է Աստծուն փնտրող մարդկանց ցանկություններին: Հնարավոր է, որ այսպես վարվելով՝ մենք սնվում ենք մեր իսկ գնահատման ծառից:

Ուրացի՛ր քո անձը

Տեսնենք Տիրոջ փրկության ուղերձը: Հիսուսն ասաց մարդկանց բազմությանը.

«Ով որ ուզում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչը վեր առնի և Իմ ետևից գա: Որովհետև ով որ *կամենա* իր անձն ապրեցնել, կկորցնի նրան: Եվ ով որ իր անձն Ինձ համար և Ավետարանի համար կորցնի, նա կապրեցնի նրան» (Մարկոս 8.34,35):

Մենք պետք է ուրանանք մեր անձը, եթե պատրաստվում ենք հետևել Նրան: Ի՞նչ է սա նշանակում: Պարզ ասած՝ դուք չեք կարող ծառայել երկու տերերի, քանի որ եթե երկուսն էլ իրար հակասող հրահանգներ տան կամ պահանջներ ներկայացնեն ձեզ, դուք կարող եք հավատարիմ լինել միայն մեկին: Լինում են իրավիճակներ, երբ մեր մարմինը, որը դեռ փրկագնված չէ, այլ բան է ցանկանում, իսկ Աստծո խոսքն այլ կերպ է առաջնորդում մեզ: Եթե մենք դեռ չենք որոշել հետևել Հիսուսին՝ որպես մեր կյանքի բացարձակ Տիրոջ, մենք կարող ենք հեշտորեն ընտրել մեր ճանապարհը, բայց շարունակենք համարել Նրան մեր Փրկիչը և դավանել այդ մասին: Հնարավոր է արդյոք, որ մենք մոլորված ենք և հենց այսպես ենք հավատում:

Միգուցե Հիսուսը հենց այս պատճառով ասաց. «Ուրեմն ինչո՞ւ եք Ինձ շարունակ «Տեր, Տեր» կանչում, թեև դուք չեք կատարում այն, ինչ ես ասում եմ» (Ղուկաս 6.46, NLT): Այլ կերպ ասած՝ «Տեր» բառը դատարկ ու անիմաստ տիտղոս է դառնում: Եթե մենք իսկապես նկատի չունենք մեր ասածը, երբ «Տեր» ենք անվանում Հիսուսին, նա ավելի կգերադասեր, որ մենք «մեծ Ուուուիչ» անվանեինք Նրան: Այդ դեպքում մենք գոնե օգուտ կքաղեինք Նրա ուսմունքներից և չէինք խաբվի՝ մտածելով, որ պատկանում ենք Նրան, այնինչ հնարավոր է, որ այդպես չէ:

Ըստ Մարկոս 8.34,35-ի և շատ այլ խոսքերի Նոր կտակարանում՝ մեր անձն ուրանալը պարզապես տարբերակ չէ, եթե մենք ցանկանում ենք հետևել Նրան և դուրս գալ այս դատապարտված աշխարհից: Այն պարտադիր պայման է՝ գալիք բարկությունից փրկվելու համար: Ես պարզել եմ, որ Արևմուտքում ապրող մարդիկ մեծ դժվարությամբ են ընկալում այս գաղափարը: Կարծում եմ՝ պատճառն այն է, որ մարդիկ փորձում են հասկանալ *թագավորության սկզբունքները*՝ ունենալով *ժողովրդավարական մտածելակերպ*: Ժողովրդավարությունը հաջողություն ունեցավ Ամերիկայում և Արևմուտքի այլ երկրներում, բայց մենք չենք կարող կապ հաստատել Աստծո հետ նման մտածելակերպով: Նա Թագավոր է՝ իսկական Թագավոր, ոչ թե դրածո գահակալ, ինչպես, օրինակ, Անգլիայում է:

Ժողովրդավարությունը սահմանվում է որպես «կառավարում ժողովրդի կողմից. կառավարման ձև, որում գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին և գործադրվում է անմիջապես նրա կամ նրա կողմից ընտրված գործակալների կողմից»: Մենք՝ Ամերիկայի և մյուս արևմտյան երկրների ժողովուրդներս, դաստիարակվել ենք նման մտածելակերպով: Սա ծրագրված է մեր հիմքային պատկերացումների և դատողությունների մեջ: Հետևաբար, եթե ինչ-որ բան մեզ դուր չի

գալիս, մենք հավատում ենք, որ կարող ենք վիճարկել կամ փոխել այն, որովհետև ունենք «անձեռնմխելի» իրավունքներ և խոսքի ազատություն՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Թույլ տվեք կրկին շեշտադրել այս գաղափարը: Այս կառավարման ձևը հաջողություն ունեցավ Միացյալ Նահանգներում, քանի որ այն նախատեսված է մահկանացու մարդկանց համար, ովքեր ապրում են բազմակարծիք հասարակության մեջ: Բայց այս գաղափարներն անհնար է տեղափոխել Աստծո թագավորության մեջ: Միզուցե հաջորդ միտքը ցնցի մեզ՝ Արևմուտքի բնակիչներին, բայց Աստված՝ միապետ է: Իհարկե, հրաշալի է, որ Նա բարյացակամ ու առատաձեռն է, սակայն վերջին խոսքն այս կյանքի բոլոր հարցերում պատկանում է Նրան: Եթե մենք տեղափոխենք մեր ժողովրդավարական մտածելակերպը Աստծո հետ մեր ընթացքի մեջ, մենք սոսկ երևակայական փոխհարաբերություններ կունենանք:

Ճշմարիտ գահակալի իշխանության ներքո կյանքը բոլորովին այլ է: «Տեր» և «թագավոր» բառերը հոմանիշներ են՝ «գերագույն իշխանություն ունեցող» իմաստով: Եթե մենք իրականում ցանկանում ենք հետևել Աստծուն, մենք չենք կարող արձագանքել Նրա առաջնորդությանը ժողովրդավարական մտածելակերպով: Այդ դեպքում մենք ոչնչով չենք տարբերվի Ադամից ու Եվայից, ովքեր ընտրեցին բարու և չարի գիտության ծառը: Մենք՝ մարդիկս, դեռ դեկին նստած կլինենք և ինքներս կորոշենք, թե ինչն է լավագույնը մեր կյանքի համար:

Վերցրո՛ւ քո խաչը

Հաջորդը՝ Հիսուսը հռչակեց, որ մենք պետք է վերցնենք մեր խաչը: Ի՞նչ է սա նշանակում: Հազիվ թե սա նշանակի «*ուրանալ մեր անձը*», քանի որ ինչո՞ւ Հիսուսը պետք է անտեղի կրկներ Իր ասածը: Մենք գտնում ենք այս արտահայտության բանալին Գաղատացիներին ուղղված Պողոսի նամակում, որտեղ նա պնդում է.

«Ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում: Եվ ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի, որ ինձ սիրեց և Իր անձը ինձ համար մատնեց» (Գաղատացիների 2.19բ,20):

Պողոսը չէր խոսում մարմնով խաչված լինելու մասին. եթե այդպես լիներ, նա մահացած կլիներ և չէր կարողանա գրել այս նամակը: Նա խոսում էր Տիրոջը հետևելու որոշման մասին, որը կայացրել էր տարիներ առաջ: Պողոսը վերցրել էր իր խաչը: Այն, թե ինչ է դա նշանա-

կում, գրված է նրա խոսքերում. «Այլևս ես չեմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում ինձանում»: Սա պետք է լինի Աստծո ամեն ճշմարիտ զավակի հռչակումը: Մենք արդեն անկախ չենք. մենք այլևս չենք սնվում մեր գնահատման ծառից, այսինքն՝ ինքներս չենք որոշում բարին ու չարը: Ոչ. այժմ մենք ապրում ենք Նրանում, և մեր կյանքն ստանում ենք Նրանից: Մենք կախված ենք խաչի մատակարարումից. խաչի միջոցով մենք ստացել ենք ազատություն ստրկությունից, որ կարողանանք ապրել Աստծուց զորացված հնազանդ կյանքով:

Խաչը լիովին նոր տեսակի կյանք է առաջարկում մեզ: Մեկ այլ նա՝ մականում Պողոսը հայտարարում է. «...ինչպես Քրիստոսը Յոր փառքով մեռելների միջից հարության առավ, այնպես մենք էլ կյանքի նորոգության մեջ ման գանք» (Հռոմեացիների 6.4): Այս կյանքի նորոգության շնորհիվ մենք կարող ենք հրաժարվել այն բաներից, ինչից նախկինում չէինք կարողանում: Մեղքի բռնակալությունը մեր կյանքում քանդված է, բայց մենք պետք է որոշենք գործադրել այն, ինչ ստացել ենք: Մենք պետք է որոշում կայացնենք ամբողջովին հանձնվել Նրա կամքին:

Պողոսը շարունակում է բացատրել, թե ինչպես գործնականում կիրառել սա. «Նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչը հանեցին՝ կրքերով և ցանկություններով միասին» (Գաղատացիների 5.24): Եվ կրկին՝ «Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Յիսուս Քրիստոսի խաչով, որ Նրանով աշխարհին ինձ համար խաչված է, և ես էլ՝ աշխարհին» (Գաղատացիների 6.14): Խաչը զորացնում է մեզ, որ ապրենք ազատ՝ մեղավոր մարմնից և այս աշխարհի համակարգի ուժգին ազդեցությունից:

Երիտասարդ տարիքում՝ մինչև Յիսուսին հանդիպելը, ես ունեի որոշակի վարքագծեր, որոնցից չէի կարողանում ազատվել: Ես զղջում էի իմ հաճախ կրկնվող քայլերի համար, որոնց հիմքը անարգանքը, հպարտությունն ու կիրքն էին, բայց որքան ավելի էի փորձում ազատվել դրանցից, այնքան ավելի էի հիասթափվում: Ես անհուսորեն կապված էի մեղքով և ենթակա էի դրա իշխանությանը: Այնուամենայնիվ, երբ խաչվեցի Քրիստոսի հետ, ես կարողացա ապրել մեղքից ազատ:

«Մենք գիտենք, որ մեր հին մեղավոր անձերը խաչված են Քրիստոսի հետ, որպեսզի մեղքը կորցնի իր իշխանությունը մեր կյանքերում: Մենք այլևս մեղքի ստրուկներ չենք, որովհետև երբ մահացանք Քրիստոսի հետ, մենք ազատվեցինք մեղքի իշխանությունից» (Հռոմեացիների 6.6,7, NLT):

Յուսով եմ՝ դուք պարզապես աչքի չէք անցկացնում այս աստվածաշնչյան հատվածները: Ընդունե՛ք այս բառերը խորը ձեր սրտում,

որովհետև դրանք շատ իրական են և կարող են ազատություն տալ ձեզ: Ճշմարտությունն իսկապես ոգեշնչող է: Խաչին հարելը ոչ միայն ազատում է մեզ մեղքից, այլև կարողություն է տալիս հնազանդ լինել Նրան: Գրված է. «Խաչի ուղերձը հիմարություն է նրանց համար, ովքեր կործանման են գնում: Բայց մենք, որ փրկության ընթացքի մեջ ենք, գիտենք, որ այն Աստծո իրական զորությունն է» (Ա Կորնթացիների 1.18, NLT): Այժմ մենք կարող ենք անել այն, ինչը նախկինում չէինք կարողանում մեր ուժերով. մենք կարող ենք քայլել Աստծո ճանապարհներով: Այժմ մենք կարող ենք նմանակել Աստծուն: Այժմ մենք կարող ենք հետևել Հիսուսին:

Ամփոփելով՝ կասեմ, որ անհնար է հետևել Հիսուսին՝ առանց ուրանալու մեր անձը (թողնելու մեր ճանապարհները և հարելու Նրա գերազանց իշխանությանը) և վերցնելու մեր խաչը (մարմնավորելու խաչի զորությունը, որի շնորհիվ մենք կարող ենք հեռանալ մեղքից և այս աշխարհի համակարգից): Մենք ապրում ենք՝ հավատալով, որ Նրա կարողությունը գործում է մեզանում և մեր միջոցով: Ահա թե որքա՞ն փառավոր փրկություն է Աստված շնորհել մեզ:

Հանդիսավոր զգուշացում

Հիսուսն զգուշացրեց, որ Իր գնալուց հետո կհայտնվի մեկ այլ ավետարան: Այն լայնորեն կքարոզվի և կընդունվի մարդկանց կողմից, և կառաջարկի փրկություն՝ առանց Իր իշխանությանը հնազանդվելու: Աշակերտներն ավելի հստակեցրին այս զգուշացումը՝ գրելով, որ դա տեղի կունենա, երբ մոտենա Հիսուսի գալուստը, այսինքն՝ մեր օրերում: Այս լայնատարած ուսմունքային հերձվածությունը կիմաստազրկի «Տեր» բառը, և այն դիրքը, որը Հիսուսն ունի մարդկանց կյանքերում, կվերածի հասարակ տիտղոսի: Մարդիկ «Տեր» կանվանեն նրան, բայց չեն ուրանա իրենց, չեն վերցնի իրենց խաչը և չեն հետևի Նրան: Ուշադրությամբ կարդացեք Հիսուսի խոսքերը.

«Ոչ թե ամեն ինձ «Տեր, Տեր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթեոս 7.21):

Հիսուսը խոսում էր այն մարդկանց մասին, ովքեր «Տեր» են անվանում *Իրեն*, ոչ թե Մուհամմեդին, Ջոզեֆ Սմիթին, Բուդդային, Կրիշնային, Կոնֆուցիոսին կամ մեր ժամանակաշրջանի ցանկացած այլ սուտ մարգարեի: Ո՛չ. այս մարդիկ հռչակում էին, որ իրենց Տերը՝ Հիսուս Զրիստոսն է, և անում էին դա մեծ ջերմեռանդությամբ:

Ինչո՞ւ Յիսուսը երկու անգամ օգտագործեց «Տեր» բառն այս խոսքում: Մենք հասկանում ենք, որ երբ Սուրբ գրքում որևէ բառ կամ արտահայտություն կրկնվում է, դա պատահական չէ. հեղինակը շեշտադրում է անում դրա վրա: Այնուամենայնիվ, այսպիսի դեպքերում կրկնությունը ոչ միայն ընդգծում է ասվածի իմաստը, այլև՝ զգացմունքային շեշտադրում է անում: Օրինակ՝ Յին կտակարանում, երբ Դավիթն իմացավ, որ Յովթաի բանակն սպանել էր իր որդուն, նրա պատասխանը խիստ զգացմունքային էր. «Եվ թագավորը ծածկեց իր երեսը, և մեծ ձայնով աղաղակեց թագավորը. «Որդի՛ս՝ Աբիսողո՛մ, Աբիսողո՛մ՝ որդի՛ս, որդի՛ս» (Բ Թագավորաց 19.4): Չեմ կարծում, որ Դավիթը կրկնեց «որդիս» բառը: Փոխարենը՝ հեղինակը կրկնակի գրեց այն, որպեսզի ընթերցողը հասկանար, թե որքան զգացմունքային էր Դավթի սգո աղաղակը:

Մենք կարող ենք տեսնել նույնը Յայտնություն գրքում. «Եվ տեսա և լսեցի՝ մի հրեշտակ, որ երկնքի միջով թռչում էր և մեծ ձայնով ասում. «Վայ, վայ՝ նրանց, որ բնակված են երկրի վրա» (Յայտնություն 8.13): Այլ թարգմանություններում գրված է, որ հրեշտակը «բարձրաձայն գոչում էր»: Եվ մեկ անգամ հեղինակը կրկնում է «վայ» բառը՝ զգացմունքային շեշտադրման համար:

Նույն կերպով, Տերը փոխանցում է այս մարդկանց ուժգին զգացմունքներն Իր հանդեպ: Նրանք ոչ միայն համաձայն են այն ուսմունքին, որ Յիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին է, այլև զգացմունքային և ջերմեռանդ են իրենց հավատքի մեջ: Խոսքն այնպիսի մարդկանց մասին է, ում դուր է գալիս քրիստոնյա լինելը, ովքեր համակվում են զգացմունքներով, երբ խոսում են իրենց հավատքի մասին և արտասվում են երկրպագության ժամանակ:

Նրանք ոչ միայն խորապես համաձայն են Քրիստոսի ուսմունքին, այլև ծառայում են Նրան.

«Ես կարող եմ տեսնել դա. Վերջին դատաստանին հազարավորները վեհ կեցվածքով մոտենում են Ինձ և ասում. «Տեր, մենք քարոզում էինք Ուղերձը. մենք հանում էինք դևերին. բոլորը խոսում էին այն նախագծերի մասին, որոնք մենք ստացել էինք Աստծուց» (Մատթեոս 7.22, MSG):

Ես օգտագործում եմ «Մեսիջ» Աստվածաշունչը՝ այս խոսքը մեջբերելու համար, որովհետև այն լավագույնս ցույց է տալիս, որ այս մարդիկ դիտորդներ չէին եկեղեցում: Նրանք անմիջականորեն ներգրավված էին իրենց եկեղեցիների աշխատանքի մեջ կամ աջակցում էին: Նրանք նույնպես հայտնի էին Ավետարանի հանդեպ իրենց հավատքով. «Մենք քարոզում էինք Ուղերձը»: Նրանք օգնում էին մարդկանց՝ փոխելով նրանց կյանքերը:

Այս վերապատմված թարգմանությունն օգտագործում է *«հազարավորներ»* բառը: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր թարգմանություններն օգտագործում են *«շատերը»* բառը: Հունարենում այս բառը *«պոլլոս»*-ն է, որի սահմանումն է՝ «մեծ թիվ, քանակ և չափ ունեցող»⁷: Ցանկացած դեպքում, Հիսուսը չէր խոսում մարդկանց փոքր խմբի մասին, այլ՝ շատ մեծ խմբի, և նույնիսկ հնարավոր է՝ մեծամասնության մասին:

Այնպես որ, եկեք ամփոփենք. Հիսուսը խոսում է այնպիսի մարդկանց մասին, ովքեր հավատում են Ավետարանի ուսմունքներին, Տեր են անվանում Իրեն, զգացմունքորեն ներգրավվածություն ունեն, տարածում են Նրա ուղերձը և քրիստոնեական ծառայության մեջ են: Մենք հեշտորեն քրիստոնյաներ կանվանեինք նրանց: Ուրեմն, ինչո՞վ են նրանք տարբերվում ճշմարիտ հավատացյալներից: Հիսուսն ասում է մեզ.

«Եվ ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ «Երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրենություն գործողներ» (Մատթեոս 7.23):

Այս խոսքի բանալի արտահայտությունը՝ *«անօրենություն գործելն»* է, որը հունարեն *«անոմիա»* բառն է: Այն սահմանվում է *«Թայերի Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարանում»* որպես վիճակ, երբ մարդն առանց օրենքի է՝ կամ օրենքի մասին անգիտության, կամ այն խախտելու պատճառով: *«Աստվածաշնչյան բառերի հանրագիտարանը»* օգնում է մեզ ավելի խորը հասկանալ *«անոմիա»* բառը՝ ասելով, որ այն կարող է նշանակել «գործողություններ, որոնք... միանշանակ կերպով խախտում են թե՛ աստվածային, թե՛ ներքին բարոյական սկզբունքները»: Պարզ ասած՝ անօրեն մարդը չի հնազանդվում Աստծո խոսքի իշխանությանը:

Նման մարդիկ *ժամանակ առ ժամանակ* չեն սայթաքում. փոխարենը՝ նրանք մշտապես անտեսում և անարգում են Աստծո խոսքը, կամ չեն հնազանդվում դրան: Եթե նրանք ճշմարտապես շնորհքով փրկված լինեին, ոչ միայն ասելությամբ կվերաբերվեին մեղանչելու մասին մտքերին, այլև որոշում կկայացնեին թողնել իրենց կրկնվող մեղքերը: Նրանք կխաչեին իրենց մարմինը՝ կրքերով և ցանկություններով, և կձգտեին աստվածահաճո բնավորություն ունենալ և պտուղ բերել:

Հետաքրքրական է նշել, որ մեկ օր Հիսուսը կասի նրանց. «Ես երբեք ձեզ չեմ ճանաչել»: *«Ճանաչել»* բառը հունարեն *«գինոսկո»* բառն է, որը նշանակում է՝ մտերմորեն ճանաչել: Այս մարդիկ երբեք ճշմարիտ փոխհարաբերություններ չեն ունեցել Հիսուսի հետ: Թեև նրանք Տեր են անվանում Հիսուսին, նրանց շուրթերին դա պարզապես տիտղոս է, քանի որ նրանք չէին կատարում այն, ինչ Նա ասում էր: Հիսուսի

հետ փոխհարաբերություններ ունենալու ապացույցն այն է, որ մարդը պահում է Նրա խոսքը.

«Երբ մենք հնազանդվում ենք Աստծուն, մենք վստահ ենք, որ ճանաչում ենք Նրան: Բայց եթե մենք պնդում ենք, թե ճանաչում ենք Նրան և չենք հնազանդվում, մենք ստում ենք, և ճշմարտությունը մեր սրտերում չէ» (Յովհաննես 2.3,4, CEV):

Յակոբոսը նույնպես խոսում է այս մասին, երբ ասում է. «Տույց տվեք ինձ, թե ինչպես ինչ-որ մեկը կարող է հավատք ունենալ՝ առանց գործերի: Ես ցույց կտամ ձեզ իմ հավատքը՝ իմ գործերով» (Յակոբոս 2.18, TEV): Եվ այս հատվածները կատարյալ համաձայնության մեջ են այն խոսքի հետ, որով Յիսուսն սկսեց այս թեման. «Դուք մարդկանց գործերից կարող եք որոշել, թե ինչպիսին են նրանք» (Մատթեոս 7.20, NLT): Այն գործերը, որոնք նկատի ունենալով Յիսուսը, չեն վերաբերում քրիստոնեական ծառայությանը, Ավետարանի ուղերձը քարոզելուն կամ եկեղեցի հաճախելուն, որովհետև այն մարդիկ, ովքեր չընդունվեցին Երկնքում, կատարում էին այս ամենը:

Թիմ Զելլերը գրում է Յիսուսի այս խոսքերի մասին.

Այս խոսքը չափազանց խիստ է: Այս մարդիկ այնպիսի հավատք ունեն, որը խթանում է միտքը, զգացմունքային բավականություն է պատճառում և դրդում է նրանց ազդեցություն գործել իրենց շրջապատող հասարակության վրա: Բոլորս ենք ցանկանում սա: Մենք ցանկանում ենք, որ մեր միտքը խթանվի, մենք ցանկանում ենք զգացմունքորեն ներգրավված լինել, և մենք ցանկանում ենք սոցիալապես օգտակար մարդիկ լինել: Յնարավոր է ցանկանալ մտքի խթանում, զգացմունքային բավականություն, սոցիալական արդյունավետություն, բայց չցանկանալ Աստծուն... քանի որ, եթե Աստված իրականում ձեր կյանքում է, դուք պետք է թողնեք ձեր կամքը: Յենց սա է ցույց տալիս՝ արդյոք մարդն իրականում փորձում է օգտագործել Աստծուն, թե՞ փորձում է ծառայել Նրան»⁸:

Աստծուն օգտագործելը նշանակում է՝ փնտրել Նրան այն բաների համար, որոնք մենք կարող ենք ստանալ Նրանից, նույնիսկ եթե խոսքն ընդամենը Երկինք գնալու մասին է: Աստծուն ծառայելը նշանակում է՝ բացառապես առաջնորդվել Նրա հանդեպ սիրով, իսկ եթե մենք սիրում ենք Նրան, ուրեմն կպահենք Նրա խոսքերը:

Այսօր շատերն Աստծո զավակ կհամարեն այն մարդուն, ով Տեր է անվանում Յիսուսին, հավատում է Նրա ուսմունքներին, զգացմունքորեն ներգրավվածություն ունի և գործուն կերպով ծառայում է եկեղե-

ցում: Այնուամենայնիվ, Յիսուսի խոսքերից մենք պարզ տեսանք, որ այս հատկանիշները որոշիչ գործոններ չեն՝ ճշմարիտ հավատացյալներին ծանաչելու համար:

Թույլ տվեք այսպես ասել. անկասկած՝ դուք կգտնեք այս հատկանիշները ցանկացած ճշմարիտ հավատացյալի կյանքում: Իրականում, մարդը չի կարող ճշմարիտ հավատացյալ լինել, եթե չունենա դրանք: Այնուամենայնիվ, այս հատկանիշներն ունենալը չի նշանակում, որ տվյալ մարդն իրականում Աստծո զավակ է: Որոշիչ գործոնն այս հարցում հետևյալն է. արդյո՞ք տվյալ մարդն ուրացել է իրեն, վերցրել է իր խաչը և հետևում է Նրան: Կարճ ասած՝ *արդյո՞ք այդ մարդը հնազանդ է Աստծո խոսքերին*:

Սա Յիսուսի հանրահայտ Լեռան քարոզի ավարտական թեման էր: Իր՝ հանկարծակիի բերող խոսքը եզրափակելու համար, Նա ավելացրեց.

«Արդ, նա, ով Իմ այս խոսքերը լսում է և կատարում, կնամանեցնեմ նրան մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, բայց այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա հաստատված էր: Եվ նա, ով Իմ այս խոսքերը լսում է և դրանք չի կատարում, նա կնամանվի մի անխելք մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին, և այն տանը զարկեցին, և այն կործանվեց, և նրա կործանումը մեծ էր» (Մատթեոս 7.24-27):

Այս առակը վերաբերում է Նրա զգուշացմանը շատերին, որոնց թույլ չէր տրվելու Երկինք մտնել, քանի որ Նա կապակցում է այս և նախորդ հատվածները «արդ» (կամ՝ «որովհետև») բառով:

Եթե ուսումնասիրեք այն երկու տեսակի մարդկանց, որոնց մասին պատմում է այս առակը, տարբերությունը նրանց միջև շատ աննկատ է: Երկուսն էլ լսում են Նրա խոսքերը, բայց առաջին խումբը «կատարում է դրանք», իսկ երկրորդը «չի կատարում»: Երկու տներն էլ միևնույն նյութից են՝ միևնույն ուսմունքներից: Երկուսն էլ նման տեսք ունեն երկրպագության ժամանակ և ծառայության մեջ: Էական տարբերությունը՝ հիմքն է: Մի տունը հիմնված էր Յիսուս Քրիստոսի իշխանության վրա: Մյուսն ամրացված էր մնացել մարդկային գնահատմանը՝ բարու և չարի մասին, նույն փիլիսոփայական «ծառին», որին դարձան Ադամն ու Եվան:

Այն միտքը, որ միևնույն հիմարությունը շարունակ կրկնվում է՝ Եդեմի պարտեզից մինչև մեր օրերը, պետք է սթափեցնի մեզ: Այն փոխում է իր ձևերը, բայց արմատը նույնն է: Կրկին, սա կարելի է ամփոփել հետևյալ հարցով. *«Արդյո՞ք մենք կարծում ենք, որ ավելի լավ գիտենք՝ ինչպես ապրել, թե՞ հավատում ենք, որ Աստված գիտի, թե ո՞րն է լավագույնը»:*

ՄԻՐԹԵ ՑԶՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԸՎԸԿԸՆ Է

«Այնպես որ, հիմա էլ ավարտեք
դա անելը, որ ձեր [խանդավառված]
պատրաստակամությունը՝ այս բանը
ցանկանալու մեջ, հավասար լինի ձեր
կողմից այն իրականացնելուն...»:
— Բ Կորնթացիների 8.11, AMP

Յոգևոր կյանքը հասկանալու
ոսկե կանոնը ոչ թե միտքն է,
այլ՝ հնազանդությունը:
— Օսվալդ Չեմբերս

Պատկերացրեք մի այսպիսի պատմություն. մի երիտասարդ
հանդիպում է մի երիտասարդ աղջկա: Այդ աղջիկը գրավիչ,
առողջ և կազմակերպված է. նա լավ խոհարար է, սիրում է երեխանե-
րին և ամենակարևորը՝ հրաշալի անձնավորություն է: Երիտասարդը
սիրահարվում է և որոշում է, որ այդ աղջիկը հենց նա է, ում հետ նա
կցանկանա անցկացնել իր կյանքի մնացած մասը: Նա հատուկ պահ
է կազմակերպում, իջնում է ծնկի, մի փոքրիկ տուփ է բացում՝ ցույց
տալով պսպղուն ադամանդե քարով մատանին, և առաջարկություն է
անում:

Հուրախություն նրա՝ այդ աղջիկը լայն ժպտում է, բացականչում
է ուրախությունից, արտասվում է և մի փոքր ուշքի գալով՝ ոգեշնչված
պատասխանում է.

- Այո՛: Այո՛: Այո՛: Նույնիսկ հավատալ չեմ կարող: Ես ցնցված եմ և
խիստ հուզված: Սա իմ կյանքի ամենաերջանիկ օրն է: Ես այնքա՛ն եմ
սիրում քեզ: Այո՛, ես կամուսնանամ քեզ հետ:

Նրանք գրկախառնվում են՝ բացարձակ երանության մեջ: Դեռևս բարձր ոգևորությամբ, աղջիկը նայում է ուղիղ երիտասարդի աչքերին և եռանդագին խոստանում է.

- Մենք հրաշալի կյանք կունենանք: Ես կլինեմ լավագույն կինը, այնպես կհետևեմ մեր տանը, որ այն միշտ գեղեցիկ և անթերի լինի, համեղ կերակուրներ կպատրաստեմ քեզ և մեր երեխաների համար, առողջ կմնամ, նորածն կհագնվեմ և կլինեմ քոնը՝ երբ ցանկանաս:

Երիտասարդը մտածում է. «Յրաշալի՛ է: Երևի՛ ես աշխարհի ամենաբախտավոր տղան եմ»:

Հանկարծ այդ աղջիկը ևս մեկ ուշագրավ բան է ասում.

- Իհարկե, կան այլ տղաներ, որոնց դեռ սիրում եմ, ես ժամանակ առ ժամանակ կհանդիպեմ նրանց:

Ցնցված՝ երիտասարդը կմկմում է.

- Այդպես չի՛ լինի:

- Ինչո՞ւ ոչ, թանկագի՛նս:

Երիտասարդն ապշած է: Նրա կազմակերպած հատուկ պահն անդառնալիորեն ձախողվեց: Զգացմունքային վերելքն ի չիք դարձավ: Նա շփոթված մտածում է. «Միգուցե նա կատակո՞ւմ է: Բայց մի՞թե արժեք կատակել նման բաների մասին, հատկապես՝ իմ առաջարկությունից հետո»:

Անհարմար լռությունից հետո, որը, թվում է, չէր ավարտվելու, աղջիկը փորձում է վերականգնել նախկին տրամադրությունը և խանդավառված փոխզիջման տարբերակ է առաջարկում.

- Լավ, ի՞նչ կասես, եթե տարվա մեջ ընդամենը մեկ օր անցկացնեմ իմ մյուս ընկերների հետ: Ես կլինեմ միայն քոնը տարվա մեջ 364 օր: Տո՛ւր ինձ միայն մեկ օր՝ նրանց հետ լինելու համար:

Երիտասարդը չի հավատում ականջներին: Հիմա ականհայտ է, որ այս աղջիկը չի հանձնվելու. նա լուրջ է խոսում: Երիտասարդը պատասխանում է.

- Ո՛չ, այդպես չի՛ կարող լինել:

Աղջիկը տարակուսանքի մեջ է, բայց քանի որ շատ է սիրում այդ երիտասարդին, ավելի լավ տարբերակ է առաջարկում.

- Լավ, ի՞նչ կասես տարվա մեջ չորս ժամվա մասին: Տո՛ւր ինձ ընդամենը չորս ժամ ամեն օրացուցային տարվա մեջ՝ իմ մյուս ընկերների հետ անցկացնելու համար:

- Ո՛չ, - այս անգամ երիտասարդն ավելի հաստատ է:

Նա կրկին ընդդիմանում է.

- Իսկ տարեկան քսան րոպե՞: Ընդամենը մեկ անգամ՝ մեկ այլ տղայի հետ:

- Ո՛հ:

Դեռևս հաշտության հույս ունենալով՝ աղջիկը թախանձում է.

- Թանկագի՛նս, ես իսկապես սիրում եմ քեզ. ես խելագարվում եմ քեզ համար: Ես սիրում եմ քեզ ավելի, քան ցանկացած այլ տղամարդու: Բայց ես այսպիսի կարիք ունեմ: Պարզապես պետք է այլ տղաների հետ լինեմ: Ես չեմ կարող միայն մեկ տղամարդունը լինել: Ես անկեղծ *ցանկանում եմ* հավատարիմ լինել քեզ և գիտեմ, որ ճիշտն այն է, որ թողնեմ իմ մյուս կապերը, բայց արի՛ իրատեսական լինենք: Այս աշխարհում այնքա՛ն լավ տղաներ կան, և ես սիրում եմ ուշադրություն ստանալ նրանցից: Ինչո՞ւ պետք է հրաժարվեմ դրանից: Ինչո՞ւ չեմ կարող երկուսն էլ ունենալ:

Երիտասարդն այնքա՛ն հիասթափված է, որ այս անգամ նա պարզապես ոչինչ չի պատասխանում: Նա միայն կախում է գլուխը: Եվս մի քանի անհարմար պահերից հետո աղջիկը մեղմորեն ասում է.

- Ես պետք է անկեղծ լինեմ: Չեմ կարծում, որ շատ բան եմ խնդրում քեզնից: Ես ուղղակի ուզում եմ լիովին վայելել կյանքը:

Սա արդեն բավական էր երիտասարդի համար:

- Սա անհեթեթությունն է: Մենք չենք ամուսնանա: Ես այլևս չեմ հանդիպելու քեզ:

Այսպես, նրանց ծանապարհները բաժանվում են:

Վերլուծենք այս պատմությունը: Երիտասարդը շլացուցիչ ընկերուհի ունի, ով նաև հրաշալի անձնավորություն է: Այս աղջիկը գերազանց է ընտանեկան կյանքի համար, սիրում է այդ տղային, կամենում է ծառայել և ուզում է նվիրել իր լավագույնը նրան: Նա շատ է ցանկանում ամուսնանալ այդ տղայի հետ: Այս ամենը շատ լավ է: Պարզապես այս երիտասարդը, տարվա մեջ քսան րոպե պետք է նրան տա մեկ այլ տղայի: Ինչո՞ւ այդ տղան չի համաձայնում նրա պայմաններին:

Պատասխանն ակնհայտ է. այդ աղջիկը չի տալիս նրան իր սիրտն ու կյանքն ամբողջությամբ: Նա գիտի, որ պետք է այդպես վարվի, և ինչ-որ չափով ցանկանում է դա, բայց իրականում, նա շատ է հրապուրված այլ տղաներով: Այլ բան է *ցանկանալը*, և բոլորովին այլ բան՝ *կատարելը*:

Ոչ մի ողջամիտ տղամարդ էրբեք չի ամուսնանա նման աղջկա հետ: Այդ դեպքում, ինչո՞ւ եք կարծում, որ Հիսուսը վերադառնալու է այդպիսի վարք ունեցող հարսնացուի ետևից: Եվս մեկ անգամ կարդանք Նրա խոսքերը.

«Ով որ ուզում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչը վեր առնի և Իմ ետևից գա: Որովհետև ով որ *կամենա*

(կամ՝ *ցանկանա*) իր անձն ապրեցնել, կկորցնի նրան: Եվ ով որ իր անձն Ինձ համար և Ավետարանի համար կորցնի, նա կապրեցնի նրան» (Մարկոս 8.34,35):

Ուշադրություն դարձրեք՝ եթե մենք պարզապես *ցանկանանք* փրկել մեր կյանքը, մենք կկորցնենք ամեն ինչ: Հիսուսը չասաց. «Ով որ *ցանկանա* կորցնել իր կյանքն Ինձ համար, կփրկի այն»: Այն, որ դուք ընդամենը *ցանկանում եք* կորցնել ձեր կյանքը, բավական չէ: Նման մոտեցումը ոչնչով չի տարբերվում մեր պատմության աղջկա մտածելակերպից:

Որպեսզի ուխտի մեջ մտնեք տիեզերքի ամենասքանչելի Անձնավորության հետ, դուք պետք է լիարժեք կերպով տրվեք Նրան, ինչն, անկասկած, նշանակում է՝ լիարժեք կերպով հետևել Նրա առաջնորդությանը: Հետաքրքիր է, որ Աստվածաշունչը մեր փոխհարաբերություններն Աստծո հետ նմանեցնում է ամուսնու հետ կնոջ փոխհարաբերություններին: Պողոսը գրում է.

«Ինչպես որ Սուրբ գիրքն ասում է. «Տղամարդը թողնում է իր հորը և մորը՝ ամուսնանալու համար, և դառնում է՝ ինչպես մեկ մարդ՝ իր կնոջ հետ»: Սա մեծ խորհուրդ է, բայց ես հասկանում եմ, որ այն նկատի ունի Քրիստոսին և Նրա եկեղեցուն» (Եփեսացիների 5.31,32, CEV):

Թեև Պողոսն օգտագործեց այս հատվածը, որ խրատեր ամուսնական զույգերին իրենց փոխհարաբերությունների մեջ, նա նույնպես պարզ ասաց, որ իրականում այն նկարագրում է մեր փոխհարաբերությունները Հիսուսի հետ: Ոչ մի տղամարդ չի ամուսնանա այնպիսի կնոջ հետ, ով ընդամենը *ցանկանում է* լիովին տրվել նրան, բայց չի անում դա: Կարծում եք՝ մենք կարո՞ղ ենք այս կերպով վարվել Հիսուսի հետ: Միզուցե Հակոբոսը հենց այս պատճառով է գրում.

«Շնացողներ: Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ Աստծո թշնամին է դարձնում ձեզ: Կրկնում եմ՝ եթե ուզում եք այս աշխարհի ընկերը լինել, դուք դառնում եք Աստծո թշնամին» (Հակոբոս 4.4, NLT):

Ինչպես տեսնում ենք, նա մեծ շեշտադրում է անում այս կետի վրա, քանի որ կրկնում է այն: Սա աննշան հարց չէ, այլ՝ Աստծո հետ փոխհարաբերությունների հիմնարար կողմերից մեկը:

Շնացողը նա է, ով ուխտի մեջ է ինչ-որ մեկի հետ, սակայն խախտելով այդ ուխտը, փնտրում է հարաբերություններ մեկ ուրիշի հետ: Այս անձնավորությունը նվիրված չէ իր ուխտի պարտավորեցնող պայմաններին:

Այն ուխտը, որը մենք անում ենք՝ Հիսուսին հետևելու համար, ունի հետևյալ պայմանները: Մենք պետք է ուրանանք մեր անձը և հեռանանք մեզ շրջապատող աշխարհի համակարգից: Մենք պետք է լիարժեք կերպով նվիրվենք և հնազանդվենք Նրան: Մենք չենք կարող առաջարկել Նրան ոչինչ՝ սրանից պակաս: Սա նշանակում է, որ մենք ընդունում ենք Նրա կամքը և ցանկություններն ավելի, քան մերը: Տալով Նրան մեր կյանքը՝ փոխարենը ստանում ենք Նրա կյանքը: Այս ուխտը նման է առողջ ամուսնության՝ տղամարդու և կնոջ միջև:

Ես դեռ ցանկանում եմ պահպանել իմ կյանքը

Կան այնքան շատ մարդիկ, ովքեր ուրախությամբ կընդունեին փրկության առավելությունները, եթե միայն, դա ունենալու հետ մեկտեղ, կարողանային պահպանել իրենց կյանքը: Հետաքրքիր է, որ մարդկանց մեծամասնությունը գիտակցում է, որ պետք է շատ բաներ թողնել՝ Աստծուն հետևելու համար, բայց պատրաստ չէ վճարել այդ գինը: Այս մարդիկ անկեղծ են Աստծո և իրենք իրենց հետ:

Մի ժամանակ ես մի հարևան ունեի (ես նրան Կեվին կանվանեմ), ով այսպիսի մարդկանցից էր: Նա Ընթշամարտի համաշխարհային ֆեդերացիայի ըմբիշներից էր՝ նրանց գերաստղերից մեկը: Նա իր ընտանիքով ապրում էր մեր փողոցում՝ մեր տնից երեք տուն հեռու: Երբ նրանք տեղափոխվեցին մեր թաղամաս, այդ մարդու կինն զգուշացրեց նրան, որ հեռու մնա մեզնից. «Նրանք խելագարված հավատացյալներ են», - ասել էր նա:

Մի քանի ամիս անց այդ կնոջ մոտ տազնապի ու անհանգստության ուժգին նոպաներ սկսվեցին, և մեկ անգամ նա պարզապես ընկավ Լիզայի գիրկը՝ լաց լինելով: Այս միջադեպը հնարավորություն ստեղծեց, որ Լիզան կիսվեր Ավետարանով, և նա փառավոր կերպով փրկվեց: Կարճ ժամանակ անց, այդ զույգի երկու որդիները նույնպես իրենց կյանքերը հանձնեցին Հիսուսին:

Մեր ընտանիքներն ավելի էին մտերմանում, և Կեվինն ու ես լավ ընկերներ դարձանք: Մենք շատ ժամանակ էինք անցկացնում միասին: Հաճախ էինք շփվում և բասկետբոլ, փողոցային հոկեյ և գոլֆ խաղում մեր տղաների հետ:

Մի երեկո Աստված ցույց տվեց ինձ մի քանի իրադարձություն, որոնք շուտով տեղի էին ունենալու Կեվինի կյանքում: Արդեն ուշ էր՝ գրեթե ժամը 22:00-ը, բայց ես զգացի, որ պետք է խոսեմ նրա հետ:

Երբ նա բացեց դուռը, ես պատմեցի այն երեք բաների մասին, որոնք տեղի էին ունենալու նրա կյանքում հաջորդ ինը ամիսների ընթացքում:

Կարճ ժամանակ անց իմ կանխասած երեք իրադարձություններն էլ տեղի ունեցան: Ես մտածում էի. «Չիմա Կեվինն անպայման կնվիրի իր կյանքը Յիսուս Քրիստոսին»: Բայց ոչինչ տեղի չունեցավ:

Մի քանի ամիս անց Աստված ցույց տվեց ինձ ևս մեկ իրադարձություն, որը տեղի էր ունենալու Կեվինի կյանքում: Ես կրկին խոսեցի նրա հետ այդ մասին: Այս անգամ ես մի քայլ առաջ գնացի.

- Կեվին՛ն, դու կարող ես անձամբ հաստատել, որ Աստված երեք բան կանխասեց քո կյանքում, որոնք արդեն տեղի են ունեցել: Չե՞ս տեսնում, որ Նա քայլեր է անում դեպի քեզ: Ինչո՞ւ չես տալիս քո կյանքը Յիսուսին:

Կեվինի հասակը 1.92 սանտիմետր էր, իսկ քաշը՝ 108 կիլոգրամ, որից ճարպային մասն ընդամենը 4 տոկոս էր կազմում: Նա վախեցնող արտաքին ուներ: Նա իջեցրեց գլուխը, որպեսզի նայի ինձ, և ասաց.

- Որովհետև ես գիտեմ, որ դրա համար պետք է գին վճարել: Ես գիտեմ, որ պետք է նվիրեմ կյանքս Յիսուսին և հնազանդվեմ Նրան, իսկ ես չեմ ուզում թողնել իմ կյանքի ոճը:

Նա շարունակեց.

- Ջո՛ն, մեր ֆեդերացիայում մի շատ հայտնի ըմբիշ կա: Նա ասում է, որ վերստին ծնված քրիստոնյա է: Նա խոսել է Աստծո մասին նույն հեռուստահաղորդման մեջ, որտեղ հրավիրել էին քեզ: Չնայած դրան՝ ես գիտեմ, որ նա թմրադեղեր է օգտագործում և սանձարձակ սեռական կյանք է վարում: Ասա՛ ինձ, ինչո՞վ է նա տարբերվում ինձնից: Ես ուղղակի չեմ ուզում նրա պես կեղծավոր լինել: Ավելի լավ է՝ վայելեմ իմ կյանքը՝ լինելով բոլորի ուշադրության կենտրոնում և անեմ այն, ինչ այս կյանքը թույլ է տալիս ինձ, քան պարզապես դիմակ կրեմ:

Կեվինի խոսքերը ջախջախիչ ազդեցություն գործեցին ինձ վրա, բայց ես գիտեի, որ այն, ինչի մասին նա խոսում էր, միակ նման դեպքը չէր: Կան անթիվ մարդիկ, ովքեր եկեղեցի են հաճախում, Փրկիչ են անվանում Յիսուսին և հայտարարում են, որ իրենք Աստծո զավակներ են, բայց չեն նվիրել իրենց կյանքերը Տիրոջը: Արդյո՞ք նրանք իրապես փրկված են:

Հնարավո՞ր է արդյոք մեր քրիստոնեական շրջանակներում ծնունդ տալ այնպիսի դարձի եկածների, ովքեր Աստծո զավակներ չեն: Հիսուսն ասաց Իր օրերի առաջնորդներին. «Դուք ցամաք ու ծով եք կտրում, որ մեկին դարձի բերեք, իսկ հետո այդ մարդուն դարձնում եք երկու անգամ ավելի գեհեների զավակ, քան ինքներդ եք» (Մատթեոս 23.15, NLT): Ես չեմ ասում, որ Արևմուտքի եկեղեցու առաջնորդները՝

դժոխքի առաջնորդներ են: Այնուամենայնիվ, իմ հարցը հետևյալն է. ինչպիսի՞ դարձի եկածների ենք մենք ծնունդ տալիս:

Երբ կոչ չենք անում Աստծուն փնտրողներին՝ ուրանալ իրենց կյանքերը, մենք ստանում ենք դարձի եկածների, ովքեր բարելավել են իրենց կյանքը և, դրա հետ մեկտեղ, հանդերձյալ կյանքի խոստում են ստացել: Ծանոթ «մեղավորի աղոթքը» ասելուց հետո նորադարձի խիղճը խաղաղվում է: Տեսականորեն, այդ մարդն այլևս հեռու չէ Աստծուց: Նման մարդիկ սկսում են պատկանել հավատակիցների համայնքին՝ ձեռք բերելով այնտեղ կապեր և պարտավորություններ:

Եվ այժմ, ակնհայտորեն *բարու* կողմից լինելով՝ նրանք մտահոգվում են սոցիալական անարդարության զոհերի, աղքատների և կարիքավորների կյանքերով, իսկ երբեմն միանում են այդ մարդկանց օգնության ձեռք մեկնողներին: Ավելացրեք սրան ոգևորիչ ուսմունքներ և երկնային խոստումը ու կստանաք հրապուրիչ կարգավիճակ, որը շատերը կցանկանան ունենալ:

Արդյո՞ք այս դարձի եկածները փրկված են, թե՞ խաբված են, ինչի պատճառով նրանք ավելի մեծ դժվարությամբ կլսեն իրական ճշմարտությունը: Հնարավոր՞ է, որ հենց այս ուղերձն է ստեղծում այն մոլորված հավատացյալներին, որոնց մասին գրված է Մատթեոսի Ավետարանի 7-րդ գլխում, ովքեր լսելու են Հիսուսի խոսքերը. «Հեռացե՛ք Ինձնից. Ես երբեք չեմ ձանաչել ձեզ»:

Արդյո՞ք մեր ուղերձը նույնն է, ինչ Նրանը:

Մի՞թե Հիսուսն այսպես էր հասնում կորած մարդկանց: Վերադառնանք հարուստ երիտասարդ իշխանի պատմությանը:

Մի քանի տարի առաջ քարոզում էի մի համաժողովում, որտեղ ներկա էին երկու հարյուր հովիվներ, որոնց եկեղեցիներն Ամերիկայի ամենամեծ եկեղեցիների թվում էին: Ես հարցրի այդ խմբին.

- Պատկերացնենք, թե ինչպես է հարուստ երիտասարդ իշխանը մոտենում Հիսուսին: Կարո՞ղ եք մտովի տեսնել, որ նա դուրս է գալիս իր «Ռոյա Ռոյս» կառքից, «Արմանի» թանկարժեք թիկնոցով, «Ռոլեքս» արևային ժամացույցը ձեռքին: Մի քանի օգնականներ հետևում են նրան, մինչ նա քայլելով մոտենում է Հիսուսին: Նա հարցնում է սառը, զուսպ և մի փոքր ամբարտավան ձայնով. «Բարի՛ Ուսուցիչ, ի՞նչ անեմ՝ փրկվելու համար»: Կարծում եք՝ այսօր դա հենց այդպե՞ս կլիներ, - հարցրի ես հովիվներին:

Ցավոք, մեծամասնությունը բարձրացրեց ձեռքերը:

- Սուրբ գիրքն այդպես չի ասում, - ասացի ես, և կարդացի, թե ինչ է իրականում գրված.

«Եվ այնտեղից ճանապարհը գնալիս, մեկը վազելով եկավ, ծունր դրեց, Նրան հարցնում էր և ասում. «Բարի՛ Վարդապետ, Ի՞նչ գործեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ»» (Մարկոս 10.17):

Այս մարդը *վազեց* Հիսուսի ետևից մարդկանց բազմության ներկայությամբ, *ծնկի եկավ Նրա առջև* և աղաչեց, որ բացատրի, թե ինչ պետք է անի փրկվելու համար: Նա բոլորովին ամբարտավան չէր:

Ես մտածեցի, որ ավելի լավ էր՝ ցույց տալիս նրանց, թե ինչ տեղի ունեցավ: Ես խնդրեցի լսարանում նստած առաջնորդներից մեկին՝ կանգնել այդ դահլիճի մեծ հարթակի մի կողմում, իսկ ես կանգնեցի հակառակ կողմում: Ամբողջ արագությամբ վազեցի նրա մոտ, և երբ մեր միջև մոտավորապես մեկ մետր հեռավորություն էր մնացել, ընկա ծնկներինս վրա, բռնեցի նրա վերնաշապիկից և բարձրաձայն ու ջերմեռանդորեն աղաչեցի. «Ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ: Ի՞նչ պետք է անեմ, որ ժառանգեմ հավիտենական կյանքը»:

Մինչև օրս թե՛ իմ անձնական կյանքում, թե՛ իմ ծառայության մեջ ոչ մի մարդ՝ հարուստ թե աղքատ, չի վազել իմ ետևից, ծնկի չի եկել և չի աղաղակել. «Ի՞նչ պետք է անեմ՝ վերստին ծնվելու համար»: Անկասկած՝ այս երիտասարդ իշխանը և՛ ջերմեռանդ էր, և՛ անկեղծ:

Հիսուսը հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես Ինձ բարի ասում: Ոչ ոք բարի չէ, բայց միայն մեկը՝ Աստված» (Մարկոս 10.18):

Ինչպես արդեն նշեցի, այդ մարդը պատվեց Հիսուսին «Բարի Վարդապետ» տիտղոսով, քանի որ հույս ուներ բարեհաճ պատասխան ստանալ Նրանից: Այնուամենայնիվ, Հիսուսը թույլ չտվեց, որ այդ շողորթությունը կուրացներ Իր զանազանությունը: Նա «չպարզեցրեց» փրկությունը՝ հասցնելով այն հարուստ երիտասարդի բարու և չարի գնահատման մակարդակին:

Մյուս կողմից՝ այս մարդն իրականում անկեղծ էր: Նա չանվանեց Հիսուսին Տեր կամ Թագավոր: Նա գիտեր, որ Հիսուսին Տեր անվանելու դեպքում պետք է վարվեր ճիշտ այնպես, ինչպես Նա խնդրում էր: Քանի՞սն այսօր այսպիսի բնավորություն ունեն: Նրանք Տեր են անվանում Հիսուսին և դավանում են իրենց հավատքն Աստվածաշնչի հանդեպ: Այնուամենայնիվ, նրանք ընտրություններ են կատարում կյանքում՝ բարու և չարի մասին ունեցած իրենց պատկերացման համաձայն, փոխարենը, որ զգուշորեն հետևեն այն ամենին, ինչ Տերը Սուրբ գրքում խնդրում է իրենց կատարել: Նրանք ժպտում են և «ամեն» են ասում աստվածաշնչյան ուսմունքներին, բայց եթե դա հարմար չէ նրանց նպատակներին, նրանք պարզապես փակվում են այդ մտքի

համար, ասես այն չի վերաբերում իրենց: Նրանք լսում են, բայց կյանքում չեն կիրառում այն, ինչ Հոգին ասում է: Հաճախ նրանք զգում են, որ այդ ուղերձը վերաբերում է այն մարդկանց, ում նրանք համարում են իրենցից «շատ ավելի վատը»:

Լսե՛ք, թե ինչպես Հիսուսը դիմեց այն մարդուն, ով ջերմեռանդորեն ցանկանում էր ստանալ հավիտենական կյանքը.

««Պատվիրանները գիտես՝ մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր, մի՛ զրկիր, քո հորը և մորը պատվիր»:
Նա էլ պատասխանեց և ասաց նրան. «Վարդապետ, այդ ամենն իմ երեխայությունից պահել եմ»» (Մարկոս 10.19,20):

Հիսուսը մեջբերեց Տասը պատվիրանների վերջին վեց պատվիրանները, որոնք վերաբերում են մարդկային փոխհարաբերություններին: Հարուստ երիտասարդը պատրաստակամորեն պատասխանեց, որ նա պահել էր դրանք իր ամբողջ կյանքում: Ես հավատում եմ, որ նա չէր ստում: Համաձայն այս չափանիշների՝ մենք կարող ենք տեսնել, որ նա բարի, ազնիվ և արդար մարդ էր: Նա հենվում էր այս բարի բնավորության գծերի վրա՝ հույս ունենալով, որ դրանք բավական կլինեն՝ Աստծո բարեհաճությունն ստանալու համար:

Այնուամենայնիվ, Հիսուսը միտումնավոր բաց թողեց առաջին չորս պատվիրանները: Այս պատվիրանները վերաբերում են մարդու և Աստծո փոխհարաբերություններին, և առաջինն այն մասին է, որ մարդը չպետք է որևէ աստվածներ կամ կուռքեր ունենա Ամենակարող Աստծո առջև: Այլ կերպ ասած՝ մեր կյանքում ոչինչ չպետք է գերազանցի մեր սերն ու գորովանքը Նրա հանդեպ և մեր նվիրումն ու հնազանդությունը Նրան: Այս երիտասարդը չէր կատարել այդ պատվիրանները, և այդ պահին նա չէր էլ ցանկանում կատարել դրանք: Հիսուսը պատրաստվում էր այնպիսի բան բացահայտել նրա կյանքում, ինչն, ի վերջո, թույլ չէր տալու նրան բարեհաջող ավարտել իր ընթացքը:

«Հիսուսն էլ նրան մոտիկ տվեց, նրան սիրեց և ասաց. «Մեկ բան պակաս է քեզ. գնա՛, ինչ որ ունես՝ ծախիր և աղքատներին տուր, և գանձ կունենաս Երկնքում: Եվ խաչն առած՝ ե՛կ, Ինձ հետևիր»» (Մարկոս 10.21):

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը սիրում էր նրան: Բայց ինչպե՞ս Նա ցույց տվեց իր սերը հարուստ երիտասարդի հանդեպ. Նա զգուշացրեց այդ Աստծուն փնտրող անձնավորությանը: Հիսուսը գիտեր՝ մի օր նրա ունեցած փողը հեռացնելու էր նրան իր իշխանությանը հնա-

զանդվելուց: Հիսուսն ավելի մտահոգված էր այդ երիտասարդի ապահով ընթացքի մասին, քան ընդամենը լավ սկիզբ ունենալու:

Այս մարդու խոչընդոտը՝ նրա փողն էր: Մյուսների համար խոչընդոտներ են դառնում զուգընկերները կամ զուգընկերուհիները, սպորտային նախասիրությունները, գնումներ կատարելով տարված լինելը, գործը, փիլիսոփայությունը, կրթությունը, կախվածությունն ուտելիքից կամ սեռական կողմնորոշումը: Իրականում, սայթաքման քար կարող է լինել ցանկացած բան, ինչին մենք տալիս ենք մեր սերը և ուժերը ավելի, քան Հիսուսին:

Մի՞թե Հիսուսը սիրեց այդ երիտասարդին՝ լայնացնելով Իր ուղերձի սահմանները, որպեսզի Նրա սիրո առարկան տեղավորվեր դրանում: Մի՞թե Նա թեթևացրեց ճշմարտությունը՝ նրան չվիրավորելու համար: Ինչո՞ւ Նա պարզապես չառաջարկեց նրան աղոթել մեղավորի աղոթքը՝ հույս ունենալով, որ ավելի ուշ նա կթողներ իր սերը փողի հանդեպ: Ի վերջո, նա շատ լավ թեկնածու էր փրկվելու համար, և մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում փրկության հանդեպ: Հիսուսն ընդամենը պետք է քաշեր ուռկանը և կստանար հարուստ, ջանասիրաբար ծառայող և ակնառու քրիստոնյայի:

Բայց Հիսուսը ճշմարտապես էր սիրում այդ անձնավորությանը: Նա ասաց այդ երիտասարդին ճշմարտությունը՝ իրական, խիստ ճշմարտությունը: Նա ռիսկի դիմեց՝ գիտակցելով, որ կարող էր կորցնել այդ ազդեցիկ մարդուն, ով խանդավառված Իր մոտ էր եկել: Հիսուսը նայեց ուղիղ նրա աչքերին և ասաց, որ նա ինչ-որ բանի պակաս ունի: Այդ երիտասարդը չուներ եռանդի պակաս, բայց նրա սիրտը և միտքը պատրաստ չէին հնազանդվելու թագավորների Թագավորին՝ անկախ այն գնից, որը պետք էր վճարել դրա համար:

Ես համոզված եմ՝ այդ մարդը Հիսուսին միմիայն Փրկիչ էր համարում, ինչը ենթադրում է, որ Նրան հնազանդվելը պարտադիր չէր: Եթե նա *բարի* համարեր Հիսուսի խորհուրդը, նա կհետևեր դրան: Սակայն եթե որոշեր, որ Հիսուսի խորհուրդը *բարի չէր*, նա կարող էր պարզապես չկատարել այն:

Պատկերացնո՞ւմ եք, եթե Աստծուն եռանդագին փնտրող անձնավորությանը ասեք, որ նա ինչ-որ բանի պակաս ունի, և որ դա թույլ չի տա նրան ստանալ հավիտենական կյանքը: Այնուամենայնիվ, եթե դուք իրականում սիրում եք ինչ-որ մեկին, դուք պետք է խոսեք ճշմարտությունը՝ նույնիսկ գիտակցելով, որ կարող եք մերժում ստանալ:

Շատ քրիստոնյաներ և ծառայողներ շողոքորթում են իրենց ունկնդիրներին, քանի որ վախենում են մերժվելուց: Նրանց միակ նպատա-

կը՝ ընդունված լինելն է: Ես անկեղծ կլինեմ ձեզ հետ. ինքս էլ այդպիսին էի: Նրանք, ովքեր շփվում էին ինձ հետ, սիրում էին ինձ, որովհետև ես միշտ ասում էի այն, ինչ նրանք ուզում էին լսել: Ես անում էի ամեն ինչ, որպեսզի խուսափեի մարդկանց հետ բախվելուց և նրանցից մերժվելուց: Բայց եկավ ժամանակը, երբ Աստված բացահայտեց իմ անապահովությունը և եսասիրական դրդապատճառները: Նա հայտնեց, թե որն էր իմ սիրո առարկան: Իմ սիրո առարկան՝ ես ինքս էի, ոչ թե այն մարդիկ, ում հետ խոսում էի:

Շատ ավելի լավ է՝ ասել ճշմարտությունը, քան փոխզիջման գնալ և, փաստորեն, դրդել մարդուն հավատալ ստին: Շատ ավելի լավ է, որ այսօր մարդը լսի ճշմարտությունը, քան հավատա, որ կարող է տարբեր կուռքեր ունենալ իր կյանքում, և հանկարծ մեկ օր, երբ արդեն շատ ուշ կլինի, Տիրոջից լսի. «Յեռացի՛ր. Ես երբեք չեմ ձանաչել քեզ. դու խաբված ես եղել»:

Իսկ այժմ, տեսե՛ք Աստծուն եռանդագին փնտրող այս երիտասարդի պատասխանը՝ Յիսուսի խոսքերին.

«Նա [հարուստ երիտասարդ իշխանը] էլ այն խոսքի համար դժվարացած՝ գնաց տրտմած, որովհետև շատ ունեցվածքի տեր էր: Եվ Յիսուսը շուրջը նայելով՝ Իր աշակերտներին ասաց. «Ինչքա՛ն դժվար է, որ հարստություն ունեցողներն Աստծո արքայությունը մտնեն»» (Մարկոս 10.22,23):

Այս երիտասարդը, ով այնքան ջերմեռանդ էր, տրտմած հեռացավ:

«Յիսու՛ս, ինչպե՞ս կարող էիր այդպես վարվել: Երբ այդ մարդը եկավ, խանդավառված էր, բայց Քեզ լսելուց հետո՝ տրտմած հեռացավ: Մի՞թե Դու չպետք է դրական ուղերձ տաս Աստծուն փնտրողներին: Քո խոսքերը պետք է մարդկանց ոգեշնչեն և դրական զգացողություններ պարգևեն, ոչ թե տրտմեցնեն: Յովիվ Յիսու՛ս, մարդկանց թփվը Քո եկեղեցում կնվազի, եթե միշտ այսպես վարվես պատրաստակամորեն հաճախողների հետ, հատկապես՝ հարուստ և ազդեցիկ մարդկանց: Գնա՛ նրա հետևից և մեղմացրո՛ւ Քո ուղերձը, և որոշ ժամանակ անց նա անպայման կընդունի ամբողջ ճշմարտությունը»:

Ահա թե ինչ կլսեր Յիսուսն այսօր Արևմտյան եկեղեցու Իր ավագների թիմից կամ եկեղեցական խորհրդի անդամներից: Նրան խստորեն կընդդիմանային և նույնիսկ կխնդրեին հեռանալ Իր պաշտոնից:

Ինչպե՞ս Նա համարձակվեց վիրավորել նման մեծ նվիրատուի, ով կարող էր գրչի մեկ շարժումով մի բանկային չեկ ստորագրել՝ հոգալով եկեղեցու ամբողջ տարվա ավետարանչական ծախսերը: Միզուցե

հենց նա մարեր եկեղեցու շենքի պարտքը, որը մի քանի միլիոն դոլար է կազմում: Հովիվ Հիսուսը պարզապես չի հասկանում, թե ինչպես պետք է մեծ, արդյունավետ ծառայություն կառուցել: Միգուցե Նա նույնիսկ մոռացել է, թե ինչպես դրականորեն ազդել մարդկանց վրա: Նա պետք է սկսի ավելի մեղմ խոսել և խրախուսական ուսմունքներ տալ՝ քարոզել այնպիսի ուղերձներ, որոնք կառուցում և բարձրացնում են մարդկանց ինքնագնահատականը:

Սա կարող էր տեղի ունենալ Արևմտյան եկեղեցում, այնպես չէ՞: Մենք ընկել ենք մեծ ծուղակի մեջ. մենք անում ենք գրեթե ամեն ինչ՝ նորադարձներին շահելու և հետևորդներ ձեռք բերելու համար: Մենք հարմարվում ենք հասարակության բոլոր ժամանակակից միտումներին՝ եկեղեցի հաճախողների թիվն ավելացնելու համար. մենք հետևորդներ ենք կուտակում «Թվիթեր»-ում, ավելացնում ենք մեր էջերը հավանողների թիվը «Ֆեյսբուք»-ում կամ խնդրում ենք մարդկանց՝ կարդալ մեր բլոգները: Այս կերպով մենք պարզապես ասում ենք Աստծուն, որ մեր իմաստությունն ավելի արդյունավետ է, քան Նրանը: Կրկին, սա նշանակում է՝ գերադասել *բարին՝ Աստծուց*:

Անկասկած՝ մենք պետք է մարդկանց Զրիստոսին հետևելու կոչեր անենք, բայց մեր կոչերը պետք է հիմնված լինեն ճշմարտության վրա: Մենք պետք է հասկանանք, որ Աստված ոչ մի դեպքում չի կանչել մեզ՝ լայնացնելու Նոր կտակարանի ուղերձի սահմանները, այսինքն՝ հեշտացնելու փրկության ճանապարհը նրանց համար, ովքեր դեռ չեն ցանկանում կախվածություն ունենալ Նրա ճանապարհներից: Անկարելի է փրկություն գտնել բարու և չարի գիտության ծառից, այսինքն՝ երբ մենք ինքներս ենք որոշում, թե ի՞նչն է բարին և ի՞նչն է չարը: Փրկությունը կարելի է գտնել միայն կյանքի ծառից՝ համաձայն Նրա խոսքի: Ամեն մարդ պետք է թողնի իր սիրեկաններին և կուռքերին, ինչպես որ ամեն երիտասարդ աղջիկ, ով համաձայնում է իրեն արված ամուսնական առաջարկությանը, պետք է հրաժեշտ տա փոխհարաբերություններին ցանկացած այլ տղամարդու հետ: Յուրաքանչյուրը պետք է ընդունի Հիսուսին՝ որպես Տիրոջ, ոչ թե ընդամենը՝ որպես Փրկչի: Ահա թե ինչ է կյանքի ծառը:

Իսկ հիմա տեսնենք, թե ինչ արեց Հիսուսն այն բանից հետո, երբ հարուստ երիտասարդը հեռացավ.

«Եվ Հիսուսը շուրջը նայելով՝ ասաց Իր աշակերտներին. «Ինչքան՝ դժվար է, որ հարստություն ունեցողներն Աստծո արքայությունը մտնեն»: Եվ աշակերտները զարմանում էին Նրա խոսքերի վրա, բայց Հիսուսը դարձյալ պատասխանեց նրանց.

«Որոյակներ, որքան դժվար է, որ հարստությանը հուսացողները Աստծո արքայությունը մտնեն» (Մարկոս 10.23,24):

Մեկ անգամ ես մտորում էի այս մասին, և Սուրբ Յոզիան գրավեց իմ ուշադրությունը մի շատ կարևոր բանի վրա: Ես պատկերացրի, թե ինչպես էր այդ հարուստ մարդը, ով մեծ հարգանք էր վայելում իր բնակավայրում, դանդաղորեն հեռանում Յիսուսից՝ գլուխը կախած և ընկճված հայացքով: Ես հասկացա, որ Տերը չվազեց նրա ետևից, չգրկեց նրա ուտերը և չասաց.

- Մի րոպե՛, իմ ընկեր: Թույլ տուր հիշեցնել քեզ Սողոմոնի իմաստությունը: Առակաց 19.17-ում նա գրեց. «Եթե դու օգնում ես աղքատին, դու պարտք ես տալիս Տիրոջը, և Նա կհատուցի քեզ» (NLT): Ես ասացի քեզ, որ վաճառես ամբողջ ունեցվածքդ և տաս աղքատներին, բայց հիշի՛ր, որ համաձայն Առակաց գրքի՝ Տերը կհատուցի քեզ այն ամենը, ինչ դու տալիս ես աղքատներին: Նա ոչ միայն կհատուցի, այլև կվերադարձնի քեզ քո տվածի հարյուրապատիկը:

Այս հարուստ երիտասարդը պետք է որ լավ գործարար լիներ: Եթե Յիսուսը նման մոտեցում ցուցաբերեր՝ նրան շահելու համար, միզուցե նա կրկին զվարթանար և հարցներ.

- Իսկապե՞ս:

Այդ ժամանակ Յիսուսը կարող էր ասել.

- Այո՛: Չե՞ս տեսնում, որ Ես փորձում եմ օգնել քեզ, որպեսզի մեծ օրինություն ստանաս, որ ֆինանսական հունձք ունենաս: Այսպես դու կլինես ամենահարուստ մարդը քո երկրում, ոչ թե պարզապես քո բնակավայրում:

Այդ պահին այդ երիտասարդը մեծ պատրաստակամությամբ կհամաձայներ հետևել Յիսուսին:

Ճիշտ է, որ համաձայն Աստծո Խոսքի, երբ տալիս ենք, մենք նաև ստանալու ենք. ինչպես որ ցանած սերմը վերադառնում է հողագործին շատ ավելիով: Այս ճշմարտությունը հաստատվեց անմիջապես այն բանից հետո, երբ հարուստ երիտասարդը հեռացավ, քանի որ Պետրոսը, կիսով չափ բողոքելով և կիսով չափ հարցնելով, բերանից թռցրեց.

«Մենք թողել ենք ամեն ինչ՝ Քեզ հետևելու համար - ասաց նա: - Այո՛, - պատասխանեց Յիսուսը, - և Ես հավաստիացնում եմ ձեզ, որ ամեն մեկը, ով թողել է տուն կամ եղբայրներ կամ քույրեր կամ մայր կամ հայր կամ երեխաներ կամ ունեցվածք՝ հանուն Ինձ և հանուն Բարի լուրի, կստանա հիմա հարյուր անգամ ավելի տներ, եղբայրներ, քույրեր, մայրեր,

երեխաներ և ունեցվածք՝ հալածանքի հետ մեկտեղ: Եվ գալիք աշխարհում այդ մարդը հավիտենական կյանք կունենա» (Մարկոս 10.28-30, NLT):

Այդ պահին Յիսուսը նայեց նրանց, ովքեր արդեն թողել էին ամեն ինչ՝ Իրեն հետևելու համար, և ասաց. «Դուք կստանաք հարյուր անգամ ավելին այն ամենից, ինչ թողել եք՝ տներ ու հողեր՝ հալածանքների հետ միասին: Դուք կստանաք դա հիմա՝ այս կյանքում, իսկ գալիք աշխարհում հավիտենական կյանք կունենաք»:

Ինչո՞ւ Յիսուսը այս խոսքերը, կամ էլ՝ Առակաց գրքից Սողոմոնի խոսքերը չասաց այն հարուստ երիտասարդին, ով եռանդագին ցանկանում էր հավիտենական կյանք ստանալ: Ինչո՞ւ է այնպիսի տպավորություն ստեղծվում, որ Նա թաքցնում էր այս բաները: Պատասխանը պարզ է. Յիսուսը երբեք չէր օգտագործում Աստծո թագավորության օրհնությունները, առավելությունները և վարձատրությունները, որպեսզի հրապուրեր մարդկանց՝ Իրեն հետևելու համար: Երբ Նա կանչեց Պետրոսին, Չակոբոսին, Յովհաննեսին և մյուսներին, Նա պարզապես ասաց. «Չետևե՛ք Ինձ»: Նա չասաց. «Չետևե՛ք ինձ, և Ես կտամ ձեզ օրհնություններ, խաղաղություն, բարգավաճում, բարեկեցիկ կյանք և շատ ավելին»: Նա չասաց. «Չետևե՛ք Ինձ այն բաների համար, որոնք Ես կարող եմ անել ձեզ համար», այլ՝ «Չետևե՛ք Ինձ այն բանի համար, թե Ո՛վ եմ Ես: Ես Յիսուս Բրիստոսն եմ՝ ձեր Արարիչը, Տերը և տիեզերքի Թագավորը»:

Եթե Պետրոսի, Չակոբոսի, Յովհաննեսի և Անդրեասի դրդապատճառը փողը լիներ, նրանք երբեք չէին թողնի իրենց գործը: Այն օրը, երբ նրանք թողեցին իրենց գործը, նրանց կարիերայի ամենաշահութաբեր օրերից մեկն էր: Յիսուսի շնորհիվ նրանք երկու նավ լիքը ձուկ էին բռնել: Նրանք ոչինչ չգիտեին «հարյուրապատիկ հատուցման» խոստման մասին և առաջին անգամ լսեցին այն, երբ հարուստ երիտասարդը հեռացավ Յիսուսից: Նրանք միայն գիտեին, որ Յիսուսի մոտ կյանքի խոսքեր կային, և այդ պատճառով նրանք թողեցին ամեն ինչ: Փո՛ղը չէր նրանց որոշիչ գործոնը:

Աստված երբեք չի պահանջում, որ մարդը կատարյալ լինի՝ Յիսուսին հետևելու համար: Նա միայն խնդրում է հոժարություն ու պատրաստակամություն Իրեն հնազանդվելու հարցում: Այս երիտասարդ իշխանը, հավանաբար, շատ ավելի բարեկիրթ էր, քան Պետրոսը: Այնուամենայնիվ, Պետրոսը պատրաստ էր կատարելու Յիսուսի ամեն մի խոսքը: Յիսուսը մինչև օրս նկատի ունի նույնը, երբ կոչ է անում մեզ թողնել ամեն բան և հետևել Իրեն:

Իմ ծրագիրը՝ ընդդեմ Նրա ծրագրի

Երբ 1979 թվականին Հիսուսին ընդունեցի որպես Տեր, Աստված անմիջապես սկսեց խոսել ինձ հետ ծառայության մեջ մտնելու մասին: Ես սովորում էի «Փուրջու» համալսարանի մեքենաշինական ֆակուլտետում և առաջադեմ ուսանող էի համարվում: Ես սկսել էի խաղալ համալսարանի թենիսի թիմի հիմնական կազմում: Բացի այդ՝ ծրագրում էի ընդունվել Հարվարդի համալսարան՝ Գործարար կառավարման մագիստրոսի աստիճան ստանալու համար: Ես ծրագրում էի ամուսնանալ մի հրաշալի աղջկա հետ և աշխատել կորպորատիվ վաճառքի կամ գործարար կառավարման ոլորտում: Ես չէի ցանկանում որևէ առնչություն ունենալ ծառայության հետ: Բոլոր ծառայողները, որոնց ես հանդիպել էի, այնպիսի մարդիկ էին, ովքեր, իմ կարծիքով, կյանքում այլևս ոչնչի չէին կարող հասնել: Նրանց տներից միշտ վատ հոտ էր գալիս, իսկ նրանց երեխաները տարօրինակ էին: Ես մեծացել եմ մի քաղաքում, որտեղ 3.000 մարդ էր ապրում, և այսպիսի սահմանափակ պատկերացում ունեի ծառայության մասին: Երբեք չէի հանդիպել կամ շփվել լավ ծառայողի հետ, սակայն տարիների ընթացքում պարզեցի, որ նման ծառայողները շատ են:

Մեկ անգամ, եկեղեցական ծառայություններից մեկի ժամանակ, Աստծո Հոգին եկավ ինձ վրա և ասաց. «Ձո՛ն, Ես կանչել եմ քեզ՝ Իմ ծառայության մեջ լինելու համար: Ո՞րն է քո պատասխանը»:

Ես մտածեցի. *«Ընտանիքս կհրաժարվի ինձնից, որովհետև բոլորը կաթոլիկներ են: Ես կվերջացնեմ կյանքս ինձ ծանոթ բոլոր ծառայողների պես, ովքեր ապրում են աղքատության և կեղտի մեջ»*: Այնուամենայնիվ, ամենակարևորն ինձ համար Աստծուն հնազանդվելն էր: Այնպես որ, ես խոնարհեցրի գլուխս և աղոթեցի. «Այո՛, Տեր: Ես կհնազանդվեմ Քեզ և կքարոզեմ՝ անկախ այն գնից, որը պետք է վճարեմ: Ես կգնամ՝ ուր որ Դու կպատվիրես գնալ, և կասեմ այն, ինչ Դու կպատվիրես ասել»:

Այդ որոշման արդյունքում իմ կյանքում կատարվեց այն, ինչը ես նույնիսկ չէի կարող պատկերացնել, բայց Աստված նախապես ցույց չտվեց դա ինձ: Նա պարզապես ցանկանում էր իմանալ, թե արդյո՞ք ես կթողնեի ամեն ինչ՝ Իրեն հետևելու համար:

Եթե ուսումնասիրեք Պետրոսի, Պողոսի և այլ աշակերտների ծառայությունը Գործք առաքելոց գրքում և նրանց նամակներում, դուք կհամոզվեք, որ նրանց ուղերձները ճշգրտորեն համապատասխանում են այն ուղերձին, որը Հիսուսը քարոզեց այդ հարուստ երիտասարդին:

Այսօր մենք շեղվել ենք այս ուղուց, և սա Ամերիկայի հոգևոր անկման հիմնական պատճառն է: Ահա թե ինչու են շատերը կարծում, թե պատկանում են Չիսուաին, այնինչ իրականում այդպես չէ: Առողջ հիմք ունենալու համար մենք պետք է վերադառնանք Չիսուաի իշխանությանը: Բոլորս էլ դեռ ուտում ենք սխալ ծառից: Այն, ինչը *բարի* է համարվում, զրկում է մեզ լավագույնից, որը պատրաստված է մեզ համար:

Աստված ցանկանում է մեծ օրհնություններ տալ մեզ, բայց մենք բաց ենք թողնում դրանցից շատերը, քանի որ ճշգրիտ սուրբգրային ուղերձը փոխարինել ենք այնպիսի ուղերձով, որը պահանջարկ ունի: Եկեք անկեղծ լինենք. եթե այդ հարուստ երիտասարդը զար մեր օրերի որոշ առաջադեմ եկեղեցիներ, նա «կփրկվեր» և կարճ ժամանակ անց կհամարվեր եկեղեցու լավագույն անդամներից մեկը: Հնարավոր է՝ նրան նույնիսկ խնդրեին միանալ եկեղեցու խորհրդին:

Ժամանակակից եկեղեցին շատ հաճախ առաջարկել է փրկության լավ ուղերձ՝ առանց խոսելու Չիսուաի իշխանության մասին:

Մարդկանց խաբեության մեջ չտանելու համար, Եկեղեցու զորության համար, ճշմարտապես Աստծո օրհնություններով ապրելու համար և հանուն նրանց, ովքեր մեկ օր լսելու են «Յեռացի՛ր Ինձնից» խոսքերը, եկե՛ք թողնենք մեր անլիարժեք «բարի» ավետարանական ուղերձը և վերադառնանք կյանքի ծառին՝ Աստվածաշնչի փրկության ուղերձին:

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

«Իմ աչքերը սևեռված են
այն նպատակի վրա, որ Աստված
կանչում է մեզ...»:
— Փիլիպեցիների 3.14, MSG

Աստծուն սիրահարվելը՝ մեծագույն
սիրավեպն է. Նրան փնտրելը՝ մեծագույն
արկածն է. Նրան գտնելը՝ մեծագույն
մարդկային ձեռքբերումն է:
— Սբ. Օգոստինոս Երանելի

Մեր հիմքը՝ Հիսուս Քրիստոսի իշխանությունն է: Մեր կյանքի բո-
լոր բնագավառները պետք է կառուցվեն այս հենարանի վրա:
Եթե այդպես վարվենք, դրանք տևական կլինեն: Հակառակ դեպքում,
դրանք ի վերջո կքայքայվեն կամ կմահանան:

Տունը կառուցելու հաջորդ փուլը հիմնակառուցն է: Այս փուլի ամեն
մի մասը կառուցվում է հիմքի վրա: Շինարարության այս մասը ի մի է
բերում և պահպանում է ամեն ինչ տան մեջ: Հատակները, պատերը,
առաստաղները, սենյակները, լույսերը, հարդարանքը, պատուհաննե-
րը, լոգարանները և բոլոր վերջնական նյութերն ու առարկաները հզոր
հիմնակառուցի կարիք ունեն՝ երկարատև ծառայելու համար: Ունենա-
լով հաստատ հիմք և ամուր հիմնակառուց՝ մենք կարող ենք կառուցել
երկարակյաց և հաջողված տուն, այսինքն՝ *կյանք*:

Ձեր ներքին տեղորոշման համակարգը

Հավատքի ծաղկուն կյանքի երկրորդ կողմը նկարագրելու համար
մենք կթողնենք շինարարության օրինակը և կդիմենք մեկ այլ օրինակի:

Ակսենք հետևյալ հարցով. ո՞րն է ձեր գլխավոր նպատակը: Այլ կերպ ասած՝ ո՞ր ցանկությունն է ձեր մեջ գերակշռում մնացած բոլոր ցանկությունները: Կարո՞ղ եք անկեղծ լինել: Եթե անկեղծ լինեք, դուք չեք հայտնվի այնտեղ, որտեղ չէիք ցանկանա լինել:

Պատկերացրեք, որ ձեր հեռախոսի տեղորոշման համակարգը կարգավորված է օդանավակայան գնալու համար, իսկ դուք ուզում եք հանրախանութ գնալ, դուք խիստ կվրդովվեք, եթե այն ազդարարի՝ «Դուք տեղ եք հասել». և այն պահին, երբ մոտենաք օդանավակայանի տերմինալին, կտեսնեք ավիաընկերությունների պաստառներ՝ հանրախանութի պաստառների փոխարեն:

Չհավատալով ձեր տեսածին՝ դուք կբողոքեք. «Ի՞նչ տեղի ունեցավ: Ինչպե՞ս ես հայտնվեցի այստեղ»: Ամեն ինչ շատ պարզ է: Ձեր տեղորոշման համակարգը տարավ ձեզ այն վայրը, որի համար կարգավորված էր:

Պողոս առաքյալը հայտարարում է, թե ինչպես է *«կարգավորված իր տեղորոշման համակարգը»*. «Յետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Յիսուսում» (Փիլիպեցիների 3.14): Նա գիտեր, թե ինչին էր ձգտում, և նրա տեղորոշման համակարգը կարգավորված էր: Թեև նա բախվում էր ընդդիմության, խոչընդոտների և ուժգին հակառակության, նա ձեղքում էր այդ ամենը և չէր անցնում զարտուղի ճանապարհներով՝ ընտրելով այլընտրանքային նպատակակետ:

Ինչի՞ համար է կարգավորված ձեր ներքին տեղորոշման համակարգը: Շատ ընկերներ ունենալո՞ւ: Յանրահայտ լինելո՞ւ: Որոշակի կենսամակարդակ ունենալո՞ւ: Ձեր աշխատանքային ոլորտում լավագույնը լինելո՞ւ: Միզուցե՛՜ առողջության և հաջողությա՞ն:

Դուք կարող եք պատասխանել. «Ես ուզում եմ ունենալ այս ամենը»: Մեզնից շատերը ցանկանում են այս բաները, բայց ո՞ր ցանկությունն է, որը գերակշռում է մնացած բոլորը: Կարևոր է անել այս տարանջատումը, քանի որ այն որոշելու է, թե ո՞ւր եք դուք գնում: Տարբեր նպատակակետերի տանող ճանապարհները կարող են նույնը լինել որոշ հատվածներում, բայց ձեր ընթացքի մեջ դուք անխուսափելիորեն հասնելու եք մի կետի, որտեղ ճանապարհները բաժանվելու են, և դուք ստիպված եք լինելու ընտրել դրանցից մեկը:

Այսպիսով, ո՞րն է ձեր գլխավոր նպատակակետը: Եթե ձեր վերջնական նպատակն է՝ լինել բարոյապես մաքուր, պահպանել էթիկայի կանոնները, ունենալ լավ բնավորություն, առողջություն և նյութական ապահովություն, դուք կավարտեք ձեր ընթացքն այնպես, ինչպես այդ հարուստ երիտասարդ իշխանը. դուք կունենաք բոլոր այս հատկանիշները, բայց դեռ զուրկ կլինեք ամենակարևորից:

Եթե ձեր վերջնական նպատակը շատ ընկերներ ունենալն է, դուք կդառնաք Մովսեսի եղբայր Ահարոնի պես: Դուք կհայտնաբերեք, որ սարի ստորոտում եք՝ զբաղված բազմաբնույթ հասարակական գործունեությամբ, որ գտնվում եք մարդկանց ուշադրության կենտրոնում և օգնություն եք ցուցաբերում ձեր համայնքին, բայց ամբողջ ընթացքում կհեռանաք Աստծո սրտից: Այն ոսկե հորթը, որը կծուկեք, կարող է հաճելի լինել ձեր ընկերներին և ծանոթներին, բայց ի վերջո դուք ցավով կպարզեք, որ այն հեռացրել է թե՛ ձեզ, թե՛ նրանց լավագույնից, որը կարող էիք ունենալ ձեր կյանքում:

Եթե դուք ձգտում եք լինել հայտնի քարոզիչ, երգիչ, առաջնորդ կամ պարզապես հետևորդների որոշակի թիվ ունենալ «Թվիթեր»-ում կամ «Ֆեյսբուք»-ում, դուք կարող եք բարձր կարգավիճակ ձեռք բերել նույնիսկ ամբողջ քրիստոնեական աշխարհում, բայց ավարտել ձեր ընթացքը Ոգիա անունով մի մարդու պես, ով մահացավ մեկուսացման մեջ, թեև ամենահայտնի անձնավորությունն էր իր երկրում (տե՛ս Բ Մնաց. 26):

Ձեր ներքին տեղորոշման համակարգը կարող է ավելի ազնիվ և բարերար լինել: Միգուցե ձեր նպատակը՝ աղքատներին և կարիքավորներին առատ օժանդակություն ցուցաբերելն է: Մեր օրերում այս նպատակը գրավիչ է շատերի համար, և այդպես էլ պետք է լինի: Մարդկանց աչքերը լուսավորվում են, երբ մենք պատմում ենք, թե ինչ է անում «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը՝ օգնելով աղքատներին, կարիքավորներին և սոցիալական անարդարության զոհերին: Այնուամենայնիվ, Պողոսը գրում է Կորնթոսի եկեղեցուն, որ նա կարող էր տալ աղքատներին իր ամբողջ ունեցվածքը, բայց, միևնույն է, ոչինչ չչափեր (տե՛ս Ա Կորնթ. 13.3):

Դուք կարող եք ձգտել, որպեսզի լինեք ամենաառատաձեռն նվիրատուն ձեր եկեղեցում, ինչը հարգանքի արժանի նպատակ է: Այնուամենայնիվ, հիշենք Անանիա անունով մի մարդու և նրա կնոջ՝ Սափիրայի պատմությունը: Նրանք Երուսաղեմի եկեղեցու անդամներն էին և բարի համբավ ունեին: Մեկ անգամ նրանք մեծ արժեք ունեցող հողակտոր վաճառեցին և եկամտի մեծ մասը նվիրաբերեցին եկեղեցուն: Նրանք ցանկանում էին ցույց տալ, որ նվիրված էին Աստծո տունը կառուցելուն: Նրանք սպասում էին գովեստների, բայց փոխարենը ենթարկվեցին դատաստանի (տե՛ս Գործք 5): Նրանց ավարտը ողբերգական էր:

Կար ժամանակ, երբ ես ազնիվ ու աստվածապաշտ էի համարում ինձ: Ամեն օր՝ տասնութ ամիս շարունակ, արթնանում էի առավոտյան ժամը 05:00-ին և աղոթում մինչև ժամը 07:00-ը: Այս ժամանակ-

վա զգալի մասը ես խնդրում էի Աստծուն. «Տե՛ր, օգտագործիր ինձ, որ բազմությունների առաջնորդեն դեպի փրկությունը, զորավոր կերպով քարոզեն Աստծո խոսքը, բերեն ազգերին դեպի Քո թագավորությունը, բժշկեն հիվանդներին և ազատ արձակեն մարդկանց»: Ամեն առավոտ ես համառորեն և ջերմեռանդորեն խնդրում էի այս ամենի համար:

Ամիսներ անց Աստված խոսեց սրտիս հետ. «Որդի՛ս, քո աղոթքները ճիշտ չեն»:

Ես ցնցվեցի: Մի՞թե իմ Ստեղծողի համար գոյություն ունեին ավելի բարի, ազնիվ և հաճելի նպատակներ, քան այն, ինչ ես խնդրում էի: Ես մտածեցի, որ միգուցե սխալ հասկացա այն, ինչ լսեցի իմ սրտում: Ինչպե՞ս այդ հրաշալի նպատակները կարող էին սխալ լինել:

Այսպես մտածելուց անմիջապես հետո ես կրկին լսեցի Աստծո Յուզու ձայնը. «Յուզան թողեց այն ամենը, ինչ ուներ՝ Ինձ հետևելու համար: Նա տասներկու ընտրյալների թվում էր: Նա քարոզում էր Աստծո թագավորությունը, բժշկում էր հիվանդներին, ողորմություն էր տալիս աղքատներին և ազատ էր արձակում մարդկանց, բայց Յուզան դժոխքում է»:

Ես հանկարծակիի եկա զարմանքից և սկսեցի դողալ: Յասկացա, որ այն ամենը, ինչի համար ես աղաղակում էի, Յուզան ուներ, բայց նա հավիտյան կորած էր: Միգուցե, եթե նա ավելի լավ քններ իր ներքին տեղորոշման համակարգը, նրա վերջն այդքան ողբերգական չլիներ:

Ես հասկացա, որ կարող էի անգիտակցաբար հայտնվել միևնույն վիճակում, որում Յուզան էր, և անկեղծորեն հարցրի. «Ի՞նչը պետք է լինի իմ գլխավոր նպատակը»:

Եվս մեկ հարուստ երիտասարդ իշխան

Այս անգամ Աստված ցույց տվեց ինձ ևս մեկ հարուստ երիտասարդ իշխանի՝ ոչ թե նրան, ով վազելով եկավ Յիսուսի մոտ, այլ նրան, ում արքայազնի պես մեծացրել էին Եգիպտոսում, որն այդ ժամանակ ամենաազդեցիկ պետությունն էր ամբողջ երկրում: Նրա անունը Մովսես էր:

Մտածե՛ք Մովսեսի մասին: Նա մեծացել էր՝ չունենալով փողի, սննդի, հագուստի, նյութական ունեցվածքի կամ կրթության կարիք: Շատերն էին ցանկանում լինել նրա դիրքում, որովհետև նա միշտ ուներ ամեն ինչի լավագույնը: Ամբողջ աշխարհում գոյություն չունեին այնպիսի բան, ինչը նա չէր կարող ունենալ կամ ձեռք բերել: Մովսեսը հազնում էր նորածն հագուստ, կարող էր գնումներ կատարել ցանկացած ժամանակ և անսահմանափակ բյուջեով և, հավանաբար, ուներ բոլոր «խաղալիք-

ները», որոնք հասանելի էին այդ ժամանակ: Նա այնպիսի կառք ուներ, որը համարժեք էր այսօրվա «Մասերատի», «Լամբորջինի» կամ «Ֆերարի» մակնիշի ավտոմեքենաներին, ինչպես նաև՝ «Հարլի Դեվիդսոնի» բոլոր մակնիշներին: Եվ եթե նա չուզեր անձամբ վարել այն, նրա Լիմուզինի վարորդը մշտապես սպասում էր նրա կանչին:

Մովսեսը երբեք ստիպված չէր եղել մաքրել իր զուգարանը, հնձել իր սիգամարզը, լվանալ իր լոզարանը, մեքենան, ափսեները, սպիտակեղենը, ո՛չ էլ՝ ցանկացած այլ տնային պարտականություն կատարել, որովհետև նա ուներ ծառաներ և սպասավորներ՝ այդ գործերի համար:

Նա ուներ արքունական խոհարարներ, որոնք կպատրաստեին նրա քիմքին հաճելի ցանկացած բան: Նա ամեն ժամանակ կարող էր վայելել լավագույն կերակրատեսակները:

Նրա աշխատանքը՝ զվարճություն էր: Ցանկության դեպքում նա կարող էր առաջնորդել բանակներ, նախագծել շենքեր կամ մեծ երեկոյթներ կազմակերպել: Եթե նա ցանկանար խաղալ, կարող էր զբաղեցնել իր օրը տարբեր մրցություններով, իսկ երեկոն՝ զվարճանքներով: Նա կարող էր ծրագրել իր օրերն՝ ինչպես ցանկանար:

Նա նույնպես ամենացանկալի ամուրի երիտասարդն էր ամբողջ երկրում: Նա կարող էր ժամադրվել և ամուսնանալ իր աչքով ընկած ցանկացած աղջկա հետ, և նույնիսկ հանդիպել այլ երկրներում ապրող կանանց: Իրականում, եթե Մովսեսը ցանկանար, նա կարող էր կանանցից ու հարձերից բաղկացած հարեմ ունենալ:

Եթե Մովսեսն ուզեր առատաձեռն լինել, նա կարող էր մեծ նվերներ տալ: Նա կարող էր հրամայել գաղտնի ծառայության գործակալներին կամ զինվորներին պաշտպանել իր ընկերներին: Նա կարող էր օգնել աղքատներին կամ անտեսել նրանց: Նա կարող էր ազդեցություն թողնել իր երկրի արվեստի և մշակույթի վրա՝ հրամայելով լավագույն կատարողներին և դերասաններին զվարճացնել իրեն: Ոչինչ արգելված չէր նրան՝ բացի թագավորի գահից: Մարդկանց մեծամասնության համար նրա կյանքը փափագելի երանություն կթվար, սակայն նա չուներ ներքին բավականություն: Գրված է.

«Հավատքով՝ Մովսեսը, երբ հասակ առավ, հրաժարվեց Եգիպտոսի թագավորական տան արտոնություններից: Նա ընտրեց ծանր կյանքն Աստծո ժողովրդի հետ՝ թողնելով հետտասեր, փափուկ կյանքը...» (Եբրայեցիների 11.24,25, MSG):

Մովսեսը որոշում կայացրեց թողնել այն ամենը, ինչ կարող էր առաջարկել նրան աշխարհի ամենահարուստ երկիրը: Ո՞րն էր նման

կենսառճը թողնելու պատճառը: Մի՞թե նա չէր կարող բավականություն ունենալ՝ ծառայելով Աստծուն և շարունակելով ապրել Փարավոնի պալատում: Ո՛չ: Մովսեսի ներքին տեղորոշման համակարգը թելադրում էր, որ նա չէր կարող լրացնել իր սրտի ցանկությունն այնտեղ, որտեղ նա այդ պահին բնակվում էր, որովհետև Եբրայեցիների նամակի հեղինակը գրում է նրա մասին.

«Նա մտածեց, որ ավելի լավ էր՝ չարչարվել հանուն Զրիստոսի, քան ունենալ Եգիպտոսի գանձերը, որովհետև նա նայում էր դեպի ապագան՝ ակնկալելով իր *մեծ վարձատրությունը*» (Եբրայեցիների 11.26, NLT):

Ո՞րն էր այդ մեծ վարձատրությունը: Երբ ես տալիս եմ այս հարցը տարբեր լսարաններում, շատերը պատասխանում են, որ խոսքն այստեղ խոստման երկրի մասին է: Բայց եթե այդպես է, մենք պետք է հարցնենք. մի՞թե կաթ ու մեղր բխող երկիրը կարող էր առաջարկել այնպիսի բան, ինչը չկար Եգիպտոսի պտղաբեր երկրում: Այդ ժամանակաշրջանում Եգիպտոսն ուներ հարուստ բնական պաշարներ և զարգացած գյուղատնտեսություն: Մի՞թե խոստման երկիրը դրանից ավելի լավն էր: Մի՞թե Մովսեսը կարող էր ավելի գեղեցիկ տուն կառուցել այդ նոր երկրում, քան այն պալատը, որտեղ նա արդեն ապրում էր: Կարծում եմ՝ հասկանալի է, որ այս հարցերի պատասխանը միանշանակ «ոչ» է:

Այդ դեպքում ի՞նչ վարձատրություն էր Մովսեսն ակնկալում: Նա չուներ հստակ պատկերացում իր ցանկացածի մասին այն օրը, երբ հեռացավ թագավորական ապարանքից, բայց նա գիտեր, որ կար ավելին՝ շատ ավելին: Նա ճանապարհին էր, և միայն հետագայում կհայտնաբերեր այն, ինչ փնտրում էր:

Կարող եք պատկերացնել սա հետևյալ կերպով. դուք սիրում եք լուրհավնյա տարածքներ ու տաք կլիմա և տանել չեք կարողանում ձյունը և ցուրտը: Ձմեռվա կեսն է, և դուք բնակվում եք Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուսիսային նահանգներից մեկում՝ Վերմոնտում: Դրսում 20 աստիճան ցուրտ է, և ձեր մեջ ցանկություն է առաջանում լինել այն միջավայրում, որը սիրում եք: Դուք նստում եք ձեր մեքենան, հասնում եք միջնահանգային մայրուղի, որը տանում է դեպի երկրի հարավը, և սկսում եք ընթանալ ջերմության ուղղությամբ: Դուք հստակ չգիտեք, թե ուր եք գնում, բայց հասկանում եք, որ դա շատ ավելի լավ է, քան ձեր բնակավայրում ձյան մեջ սառչելը: Ճանապարհին՝ բենզալցակայաններից մեկում, դուք նկատում եք մի գովազդային թերթիկ, որի վրա պատ-

կերված է Ֆլորիդա նահանգի Պալմ Բիչ լողափը: Դուք ժպտում եք՝ ասելով ինքներդ ձեզ. «Ահա՛ այն»: Եվ անմիջապես կարգավորում եք ձեր տեղորոշման համակարգը այդ լողափի հասցեով: Այժմ դուք գնում եք դեպի հստակ վայր՝ այն լողափը, որի մասին երագում էիք:

Սա նման է այն իրավիճակին, որը տեղի ունեցավ Մովսեսի հետ: Նա հեռացավ իր պալատից՝ իմանալով, որ կար ավելին, բայց նա գտավ իր վարձատրությունը միայն քառասուն տարի անց, անապատի խորքերում՝ վառվող մորենու մոտ, որտեղ հանդիպեց Աստծուն և վերապրեց Նրա ներկայությունը: Հենց որ սա տեղի ունեցավ, Մովսեսի ներքին տեղորոշման համակարգը հստակորեն կարգավորվեց: Նրա վարձատրությունը՝ Աստծո ներկայությունն էր, և մենք կտեսնենք սրա ապացույցն ավելի ուշ՝ այն բանից հետո, երբ նա հանեց Իսրայելին Եգիպտոսի երկրից:

Աստծո առաջարկը մերժելը

Մովսեսի համար դա շատ դժվար ժամանակ էր՝ լի սթրեսային իրավիճակներով: Նա և Իսրայելի ժողովուրդը ճանապարհորդում էին անջրդի անապատով, որը լի էր բազմաթիվ դժվարություններով: Հաճախ այդ դժվարությունները կարող էին մեղմվել աստվածային միջամտությամբ, որը, թվում էր, շատ անգամ ուշանում էր: Դրան գումարած՝ Մովսեսի վարկանիշը ժողովրդի մոտ երբևէ եղած ամենացածրն էր: Նման անկայուն ժամանակներում Աստված խոսեց նրա հետ.

«Հեռացիր այս վայրից՝ դու և ամբողջ ժողովուրդը, որին դուրս բերեցիր Եգիպտոսից, և գնա՛ այն երկիրը, որը Ես խոստացա տալ Աբրահամին, Իսահակին և Հակոբին և նրանց սերունդներին: Ես մի հրեշտակ կուղարկեմ՝ ձեզ առաջնորդելու համար, և կքշեմ քանանացիներին, ամորհացիներին, քետացիներին, փերեզացիներին, խևացիներին և հեբուսացիներին: Դուք հարուստ և պտղաբեր երկիր եք գնում: Բայց *Ես անձամբ չեմ գա ձեզ հետ...*» (Ելից 33.1-3, TEV):

Պատկերացրեք այն հանգամանքները, որոնց Մովսեսը և ամբողջ ժողովուրդն ամեն օր բախվում էին: Նրանք չունեին բարեկեցիկ կյանքի պայմաններ՝ զեղեցիկ մարգագետիններ, գետեր, անտառներ, մրգատու ծառեր, սառնորակ աղբյուրներ, բերրի հողատարածքներ կամ արոտավայրեր՝ իրենց անասունների համար: Արդեն երկար ժամանակ էր՝ նրանք չէին եղել շուկաներում և խանութներում և նոր զգեստներ չէին գնել իրենց համար: Նրանց սննդակարգն անփոփոխ

էր. տարօրինակ հաց, որը հայտնվում էր գետնին շաբաթը վեց օր: Երբեմն նրանք լորեր էին ուտում՝ որպես մսային կերակուր: Նրանց վիճակը նկարագրելու համար փորձե՛ք մի քանի ամիս շարունակ ուտել մեկ տեսակի հաց և ուրիշ ոչինչ: Այդ ժամանակ դուք կհասկանաք այս մարդկանց:

Կյանքը շատ ծանր էր: Եգիպտոսի ստրկությունը սարսափելի էր, բայց անապատում դեգերելը ոչնչով լավ չէր թվում: Այնուամենայնիվ, մարդիկ հուսով էին, որ կհասնեին իրենց երկիրը՝ խոստման երկիրը, որը կոչվում էր Քանան: Տարիներ շարունակ Աստված ասել էր նրանց, որ այն հարուստ, պտղաբեր երկիր է՝ առատության երկիր: Ամբողջ կյանքում նրանք լարում էին իրենց բոլոր ուժերը և ներդնում բոլոր տաղանդները, որ քաղաքներ կառուցեին եգիպտացիների համար, և իրենց աշխատանքի դիմաց ընդամենը ստանում էին անպետք մնացորդներ եգիպտացիների ունեցվածքից: Շուտով նրանք հնարավորություն կունենային կառուցելու գեղեցիկ տներ, բնակավայրեր և քաղաքներ, այս անգամ՝ իրենց համար: Նրանք կստեղծեին նոր մշակույթ, որը հատուկ էր այն ժառանգությանը, որն իրենք ունեին, և կկարողանային արժանի ժառանգություն թողնել իրենց երեխաներին և թոռներին:

Ի վերջո, Աստված կարգադրեց ժողովրդի առաջնորդին՝ Մովսեսին, խոստման երկիր տանել նրանց: Նա ասաց, որ կա ընտրություն. մի զորավոր հրեշտակ կարող է առաջնորդել և պաշտպանել նրանց: Այդ պատերազմող հրեշտակը քշելու էր ամեն տեսակի թշնամու: Այնուամենայնիվ, այս պայմանը մեկ «բայց» ուներ. Աստված անձամբ չէր գնալու նրանց հետ:

Պատկերացրեք, թե ինչ կվերապրեիք, երբ նման խոսքեր լսեիք: Ինքը Աստված առաջարկում է այն, ինչին ձեր նախնիներն սպասել են դարեր շարունակ: Այս առաջարկը կարող էր վերջ տալ չորս հարյուր երեսուն տարի տևող թափառական կյանքին, դժվարություններին և գոյատևմանը: Անկասկած՝ Մովսեսը պետք է ընդուներ այն, շտապ իջներ սարից և ազդարարեր այդ անհավատալի լուրը ժողովրդի ծերերին: Վերջապես ամբողջ ժողովուրդը կգովաբաներ նրան, և նրա վարկանիշը երբևէ եղած ամենաբարձրը կդառնար: Նրանք մի լավ խնջույք կանեին և ձանապարհ կընկնեին դեպի երկար սպասված խոստումը:

Ամեն ինչ հենց այսպես էլ կլիներ, եթե «ընդունելի» բարին Մովսեսի համար լիներ որոշված նպատակին հասնելը: Այնուամենայնիվ, ահա թե ինչպես Մովսեսը պատասխանեց Աստծո առաջարկին.

«Եթե Քո երեսը մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի՛ հանիր»
(Ելից 33.15):

Թույլ տվեք հիշեցնել, թե որտեղ էր նրա ասած «այս տեղ»-ը: Նրանք գտնվում էին պակասության, նեղությունների, ճնշումների և դժվարությունների վայրում՝ *անապատում*: Մովսեսի պատասխանը կշփոթեցներ սովորական մարդուն, նույնիսկ անհասկանալի կթվար նրան: Ըստ էության, նա ասաց. «Եթե ես պետք է ընտրություն անեմ Քո ներկայության և օրհնության միջև, ես կընտրեմ Քո ներկայությունը: Կգերադասեմ Քո ներկայությունը՝ նույնիսկ պակասության և նեղության վայրում, իսկ Քո օրհնությունը՝ բարենպաստ միջավայրում»:

Մի՞թե Մովսեսը խելագարվել էր: Միգուցե անապատի արևը վնասել էր նրա միտքը: Ո՛չ: Նրա ներքին տեղորոշման համակարգը կարգավորված էր լավագույնի վրա: Այն ուղղորդում էր նրան՝ կատարելու լավագույն ընտրությունը, թեև այդ պահին Աստված առաջարկում էր նրան *լավ* տարբերակ, որը նա պետք է ընդուներ ողջամտության և անբարենպաստ հանգամանքների թելադրանքով:

Մովսեսի նպատակը, նրա վարձատրությունը՝ Աստծուն մտերմորեն ծանաչելն էր: Դուք չեք կարողանա ճշմարտապես ծանաչել ինչ-որ մեկին, եթե ժամանակ չանցկացնեք նրա ներկայության մեջ: Դուք կարող եք գիտելիքներ ունենալ ինչ-որ մեկի մասին՝ առանց նրա անմիջական ներկայության: Այնուամենայնիվ, եթե ժամանակ չեք անցկացնում ինչ-որ մեկի ներկայության մեջ, դուք չեք կարողանա մտերմորեն ծանաչել նրան: Հենց սա էր Մովսեսի մեծագույն վարձատրությունը: Նրա համար ավելի արժեքավոր ոչինչ չկար, և ոչ ոք չէր կարող տարհամոզել նրան, նույնիսկ՝ այն բարին, որն Աստված Ինքն առաջարկեց: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսի՞ հաճույք դա պարգևեց Աստծուն:

Միգուցե հարցնեք. «Ինչո՞ւ Աստծուն պետք է հաճելի լիներ մերժումը Իր առաջարկին»: Ես կպատասխանեմ այս հարցին իմ կյանքի մի օրինակով:

Լիզան և ես ծանապարհորդության մեջ էինք, որի ընթացքում մի քանի ազատ օր ունեինք: Մեր հյուրանոցի մոտակայքում շատ լավ գուլֆի դաշտ կար: Ես սիրում եմ գուլֆ խաղալ, ինչպես նաև պարզապես լինել գեղեցիկ գուլֆի դաշտերում: Իմ ընկերներից մի քանիսը հրավիրեցին ինձ խաղի, բայց ես ընդամենը մի քանի օր ունեի Լիզայի հետ:

Իմ զարմանալի կինն անկեղծորեն ասաց.

- Ջոն, գնա՛ գուլֆ խաղալու նրանց հետ:

- Ո՛չ, սիրելիս, - պատասխանեցի ես: - Ավելի լավ է՝ ժամանակ անցկացնեմ քեզ հետ:

Այդ մի քանի օրը պարզապես հրաշալի էր: Լիզայի ուրախությունը (որ ես ընտրեցի նրան, ոչ թե գոլֆը) հող պատրաստեց այդ օրերի համար: Նա գիտեր, թե որքան եմ սիրում այդ խաղը և իմ ընկերների հետ ժամանակ անցկացնելը: Լիզան անկեղծ առաջարկ արեց ինձ, և նա չէր մտափոխվի, եթե ես ընդունեի այն: Այնուամենայնիվ, իր սրտի խորքում նա հույս ուներ, որ ես կընտրեի իրեն, ոչ թե խաղը:

Միևնույն սկզբունքը Մովսեսի իրավիճակում էր: Աստված առաջարկ արեց նրան, որն ուզում էր կատարել: Նա կուղարկեր հրեշտակի, ով ապահով կերպով խոստման երկիր կհասցներ Մովսեսին և ամբողջ ժողովրդին: Այնուամենայնիվ, այդ ընթացքը կլիներ առանց Աստծո ներկայության: Ես համոզված եմ, որ Աստված արեց այս անկեղծ առաջարկը՝ Իր սրտում ցանկանալով, որ Մովսեսը նախընտրեր Իրեն ավելի, քան անապատից շտապ ազատվելը և ավելի հեշտ կյանքը՝ հարուստ ու գեղեցիկ երկրում:

Մովսեսն ազդարարեց երկու բան, երբ մերժեց Աստծո առաջարկը: Նախ և առաջ այն, որ Աստծո ներկայությունն ավելի թանկ էր նրա համար, քան Աստծո օրհնությունները վայելելը՝ առանց Նրա ներկայության: Երկրորդը՝ այն, որ Մովսեսն աներկբա հավատում էր Աստծո ազնվությանը: Թեև խոստման երկիր մուտք գործելը հետաձգվում էր, Մովսեսը գիտեր, որ Աստված ի վերջո տանելու էր Իսրայելին այնտեղ: Նա գիտեր, որ Աստված կատարելու էր Իր խոսքը: Եթե Մովսեսի ներքին տեղորոշման համակարգը ճշգրտորեն կարգավորված չլիներ, ապա հաշվի առնելով նրանց հանգամանքները՝ նա, անկասկած, այլ ընտրություն կկատարեր:

Տեղորոշման համակարգի կարգավորումը

Ինչն է սկզբանե պատճառ դարձավ, որ Մովսեսն այս կերպով կարգավորեր իր ներքին տեղորոշման համակարգը այն դեպքում, երբ մնացած բոլոր իսրայելցիները զգալիորեն տարբերվում էին նրանից իրենց դրդապատճառներով: Մենք կիմանանք պատասխանը, եթե կարձ անդրադառնանք նրա նախկին որոշումներին և քայլերին:

Ես հաճախ եմ հարցնում մարդկանց իմ համաժողովների ընթացքում. «Ո՞ր էր Մովսեսն առաջնորդում իսրայելցիներին՝ Եգիպտոսից դուրս բերելուց հետո»:

Ամեն անգամ մեծամասնությունը պատասխանում է. «Դեպի խոստման երկիր»:

Կարծում եք՝ այս պատասխանը ճիշտ է: Ամեն անգամ, երբ Մովսեսը գնում էր Փարավոնի մոտ, նա կրկին ու կրկին փոխանցում էր

Եգիպտոսի թագավորին այն, ինչ Աստված ասել էր իրեն. «Թույլ տուր Իմ ժողովրդին գնալ, որ նրանք երկրպագեն Ինձ *անապատում*» (Ելից 7.16, NLT, նույնպես՝ Ելից 5.1, 8.1, 20, 9.1, 13, 10.3): Մովսեսը յոթ անգամ ասաց Փարավոնին, թե ուր էր գնալու Իսրայելը՝ ամեն անգամ նշելով երկրպագությունը և անապատը: Նա չհիշատակեց Խոստման երկիրը նույնիսկ մեկ անգամ:

Մովսեսի նպատակն էր՝ առաջնորդել ժողովրդին դեպի Սինա անապատը՝ Աստծուն հանդիպելու և երկրպագելու համար: Ինչո՞ւ նա պետք է ուզեր առաջնորդել նրանց Եգիպտոսից անմիջապես *խոստման երկիր*՝ առանց սկզբում *խոստացողի* մոտ տանելու: Այդպես անելով՝ Մովսեսը կկարևորեր Աստծո խոստումներն ավելի, քան Աստծո ներկայությունը, ինչը կխրախուսեր իսրայելցիների ներքին տեղորոշման համակարգի սխալ կարգավորմանը:

Ցավոք, մեր օրերի քարոզիչները և ուսուցիչներն ընտրել են խոստումների տարբերակը: Ես հիշում եմ, որ 1980-ական և 1990-ական թվականներին ավելի շատ էին քարոզում այն մասին, թե ինչ կարող է անել մեզ համար Հիսուսը, քան այն մասին, թե ո՞վ է Նա: Նման տեսակի ուսուցումն առաջ բերեց այնպիսի աշակերտների, ովքեր կարգավորել էին իրենց ներքին տեղորոշման համակարգերն Աստծո օրհնությունների վրա ավելի, քան Նրա ներկայության: Սա նույնն է, երբ կինն ամուսնանում է տղամարդու հետ նրա ունեցվածքի համար: Հնարավոր է՝ այդ կինը սիրում է նրան, բայց նրա սիրո դրդապատճառները սխալ են:

Ես զարմանալի հակադրություն եմ գտնում Իսրայելի և Մովսեսի միջև: Եթե մտածեք Եգիպտոսում Իսրայելի կյանքի մասին, նրանք, առնվազն, դաժանաբար շահագործման էին ենթարկվում: Նրանք ապրում էին կեղտոտ, խարխիված բնակարաններում, սնվում էին հին մթերքներով և մաշված հագուստ էին կրում: Նրանց ամբողջ կյանքը վատնվում էր ուրիշի ժառանգությունը կառուցելու վրա: Փարավոնի գործավարները ծածկել էին իսրայելցիների մեջքերը սպիերով, իսկ նրա զինվորներն սպանում էին նրանց որդիներին:

Իսրայելը հրաշքով փրկվեց եգիպտական գերությունից, բայց իրենց անապատային արշավի սկզբից կարճ ժամանակ անց ժողովուրդը շարունակ տրտնջում էր և ցանկանում էր Եգիպտոս վերադառնալ: Իսրայելցիներն ասում էին. «Լավ չէ՞ մեզ համար, որ Եգիպտոս դառնանք» (Թվոց 14.3), կամ «Լավ է մեզ համար եգիպտացիներին ծառայություն անել» (Ելից 14.12):

Իսկ այժմ մտածեք Եգիպտոսում Մովսեսի հարմարավետ և ճոխ կյանքի մասին, որը ես արդեն նկարագրել եմ: Նա նույնպես հեռացավ

Եգիպտոսից և բախվեց նույն խիստ անապատային պայմաններին, սակայն նա նույնիսկ մեկ անգամ չտրտնջաց և չխուսեց Եգիպտոս վերադառնալու մասին: Ի՞նչն էր պատճառը: Պատասխանը պարզ է. Մովսեսը մեկ անգամ հանդիպել էր Աստծո ներկայությանը այրվող մորենու մոտ: Նա արտոնություն էր ունեցել լսելու Աստծո խոսքն անմիջապես Արարչից: Իսրայելը նույնպես նման հնարավորություն ունեցավ, բայց նրանք հրաժարվեցին դրանից: Թույլ տվեք պատմել այս մասին:

«Ձեզ... Ինձ մոտ բերեցի»

Եգիպտոսից դուրս գալուց անմիջապես հետո Մովսեսն առաջնորդեց Իսրայելին դեպի Սինա սարը՝ միևնույն վայրը, որտեղ նա հանդիպել էր Աստծուն մորենու մոտ: Երբ նրանք տեղ հասան, Աստված կարգադրեց Մովսեսին՝ ասել մարդկանց.

«Դուք տեսաք՝ ինչ որ արի եգիպտացիներին, և ձեզ արծվի թևերի վրա տարա և Ինձ մոտ բերեցի» (Ելից 19.4):

Կարդացե՛ք Նրա խոսքերը. «...ձեզ... Ինձ մոտ բերեցի», և մտորե՛ք դրանց շուրջ: Այս խոսքերի իրական իմաստն ապշեցուցիչ է: Աստված՝ տիեզերքի Արարիչը, պարզ դարձրեց, որ Իսրայելին Եգիպտոսի ստրկությունից դուրս բերելու գլխավոր նպատակը՝ բոլորին Իր մոտ բերելն էր:

Մենք պետք է հիշենք, որ Աստված հաղորդակցվող է և հոր սիրտ ունի. Նա միշտ այսպիսին է եղել և միշտ էլ լինելու է: Նա փափագում է ծանաչել Իր զավակներին, ինչպես որ ամեն հայր կամ մայր ձգտում է փոխհարաբերություններ կառուցել իր նորածին երեխայի հետ:

Աստված հայտնեց Իրեն Մովսեսին մորենու մոտ. Նա տվեց Մովսեսին Իր ներկայությունը ճաշակելու արտոնությունը: Միայն այդ վերապրումն այնպիսի՝ ախորժակ ստեղծեց Մովսեսի մեջ, որ նա այլևս չմտածեց Եգիպտոս վերադառնալու մասին՝ չնայած այն լավ կյանքին, որը վարում էր այնտեղ: Այդ հանդիպումը նշանակալի ազդեցություն գործեց նրա վրա և անխախտ կերպով կարգավորեց նրա ներքին տեղորոշման համակարգը:

Մովսեսը ցանկանում էր, որ Իսրայելը վերապրեր նույնը, բայց ապշեցուցիչն այն է, որ Աստված նույնպես ցանկանում էր դա: Քանի որ Նա արդեն ժամանակ էր անցկացրել Մովսեսի հետ մորենու մոտ, Մովսեսը կարող էր Աստծուն ներկայացնել ժողովրդին, ինչպես նաև՝ ժողովրդին ներկայացնել Աստծուն: Աստված պատվիրեց Մովսեսին պատրաստել իր ներածական խոսքը՝ ասելով հետևյալը.

«Դուք հատուկ եք. քահանաների թագավորություն, սուրբ ազգ: Ես հենց սա եմ ցանկանում, որ ասես Իսրայելի ժողովրդին» (Ելից 19.5,6, MSG):

Ամբողջ ժողովուրդը հատուկ էր Նրա համար, և Նա ցանկանում էր, որ նրանցից ամեն մեկը քահանա լիներ, որ նրանք լինեին այնպիսի մարդիկ, ովքեր կարող էին անմիջապես մոտենալ Իրեն՝ իրենց կամ այլ մարդկանց համար: Ըստ էության, Նա ծածուկ, ներքին շփում էր առաջարկում նրանց: Ինչպիսի՞ արտոնություն: Դրանից հետո Աստված ասաց.

«Գնա՛ ժողովրդի մոտ: Հաջորդ երկու օրվա ընթացքում պատրաստիր մարդկանց՝ Սուրբ Աստծուն հանդիպելու համար: Պատվիրիր նրանց տրորելով մաքրել իրենց հանդերձները, որպեսզի երրորդ օրը լիովին պատրաստ լինեն, որովհետև երրորդ օրը Աստված կիջնի Սինա սարի վրա և Իր ներկայությունը հայտնի կդարձնի ամբողջ ժողովրդին» (Ելից 19.10,11, MSG):

Աստված իջավ սարի վրա երրորդ օրը, ինչպես որ խոստացել էր, բայց մարդկանց արձագանքը պարզապես տրտմեցնող էր: Նրանք ետ քաշվեցին Նրանից՝ մոտենալու փոխարեն: Նրանք աղաղակեցին Մովսեսին. «Դո՛ւ խոսիր մեզ հետ, և մենք կլսենք: Բայց թույլ մի՛ տուր, որ անմիջապես Աստված խոսի մեզ հետ, այլապես մենք կմեռնենք» (Ելից 20.19, NLT):

Իսրայելի ժողովուրդը չէր կարողանում դիմանալ Աստծո ներկայությանը, որովհետև Եգիպտոսը դեռ նրանց սրտերում էր: Նրանք դեռ սիրում էին իրենց շահերը ավելի, քան Աստծունը: Նրան մտերմորեն ձանաչելը նրանց առաջնահերթությունների ցուցակում չէր: Նրա հայտնված ներկայությունը պարզապես բացահայտեց նրանց ներքին տեղորոշման համակարգի կարգավորումները՝ այն, ինչը նրանք չէին ցանկանում փոխել:

Կրկին նայեք Աստծո կարգադրություններին, որոնց թվում ժողովրդին պատվիրվում էր մաքրել սեփական հանդերձները: Ո՞րն է դրա իմաստը: Մի՞թե Աստված մանրախնդիր է մարմնական հիգիենայի հանդեպ: Այս հարցի պատասխանն իմանալու համար մենք պետք է հիշենք, որ հաճախ Հին կտակարանում արտաքին գործողությունները նախատեսված էին հոգևոր իրողությունների նշանակությունը հայտնելու համար: Եգիպտոսի պղծությունը դեռևս մարդկանց հագուստների վրա էր: Այն պետք է հեռացվեր, մինչև որ մարդիկ կկարողանային մուտք գործել Աստծո սուրբ ներկայության մեջ:

Եգիպտոսն այս աշխարհի անկում ապրած համակարգի խորհրդապատկերն է: Այս աշխարհի մարդիկ ապրում են իրենց մարմնին հաճեցնելու, աչքերին գոհացնելու, ինչպես նաև՝ կարգավիճակի, համբավի և դիրքի կամ, այլ կերպ ասած, «այս կյանքի հպարտության» համար (տե՛ս Ա Յովի. 2.16): Նրանց նպատակը՝ Աստծուն ծանաչելը չէ. կյանքում նրանք նայում են ամեն ինչին՝ մտածելով. «Ի՞նչ կարող եմ շահել դրանից»:

Աստված չի փնտրում «փող որսողների»

Ճանապարհորդելիս հաճախ եմ տեսնում տարեց հարուստ տղամարդկանց՝ այնպիսի կանանց հետ, ովքեր տպավորիչ արտաքին ունեն և տասնհինգ-քսան տարով երիտասարդ են նրանցից: Յաճախ նման տղամարդն արդեն լավ ծերացած է, և նրան սխալմամբ կարող են համարել այդ կնոջ հայրը: Ինչո՞ւ են այդ կանայք ապրում կամ ամուսնանում այդպիսի տղամարդկանց հետ:

Եզակի դեպքերում երկուսն իսկապես սիրահարված են իրար: Այնուամենայնիվ, հիմնականում պատճառն այլ է. նման կանանց անվանում են «փող որսողներ»: Սա խոսակցական կամ արհամարհական արտահայտություն է, որը նկարագրում է այնպիսի երիտասարդ կնոջ, ով հետաքրքրված չէ իր կողքին գտնվող տղամարդու անձով. նրան գրավում է այն կենսաժող, որը նա կարող է առաջարկել իրեն: Այս կինը ցանկանում է օգտվել իր կողքին գտնվող տղամարդու հարստությունից և ազդեցությունից: Այնուամենայնիվ, նման վերաբերմունքը միակողմանի չէ, քանի որ նրա հետ ապրող տղամարդու առաջնային հետաքրքրությունը նույնպես այդ կինը չէ, այլ՝ թե ինչ նա կարող է անել իր եսակենտրոն անձի համար: Նա ուզում է պատկերացնել, որ դեռ երիտասարդ է և, իհարկե, լավ սեռական հարաբերություններ վայելել:

Պարզ ասած՝ ամեն մեկը եսասիրաբար ձգտում է ստանալ այն, ինչ դիմացինը կարող է տալ, ոչ թե սրտանց հոգում է դիմացինի համար: Ինչ-որ չափով, յուրաքանչյուրը գիտի, թե ինչ է անում մյուսը, բայց հանդուժում է դա, որպեսզի շարունակի գոհացնել իր սեփական կիրքը և հպարտությունը: Նրանց դրդապատճառը՝ տևական հարաբերություններ կառուցելը չէ, այլ՝ եսակենտրոն բավականություն ստանալը:

Վերջերս կինս և ես կահույքի սրահ էինք գնացել: Բացի մեզնից և վաճառքի գործակալից՝ սրահում կար միայն մեկ զույգ՝ տարեց տղամարդ և երիտասարդ կին: Սկզբում ես մտածեցի, որ նրանք հայր և դուստր էին, բայց լսելով նրանց խոսակցությունը վաճառքի գործակա-

լի հետ՝ հասկացա, որ սխալվում էի: Նրանք ամուսնական զույգ էին և գնումներ էին կատարում իրենց նոր տան համար:

Մենք և այդ զույգը մնացինք խանութում գրեթե քսան րոպե, և ես բավականին ժամանակ ունեի՝ նրանց հետևելու համար: Իմ ուշադրությունը գրավեց նրանց ցրված և մակերեսային շփումը: Ակնհայտ էր, որ նրանց միջև քիչ ընդհանրություններ կային, և նրանք տարբեր հետաքրքրություններ ունեցող մարդիկ էին: Սիրո և ուրախության բացակայությունը նրանց միջև պարզորեն աչքի էր ընկնում: Այդ կինը հագիվ էր նայում նրա աչքերին և ճնշված դեմք ուներ: Նա շատ կիպ զգեստ էր կրում և չափից դուրս շպարված էր: Այդ տարեց տղամարդը նորաձև երիտասարդի պահվածք ուներ. նա վարվում էր հարուստ խաղամուղի պես: Նա հասկացրեց վաճառքի գործակալին իր խոսելաձևով, որ փողը խնդիր չէր իր համար:

Տեսնելով այս զույգին՝ ես հասկացա, թե որքան յուրահատուկ են իմ հարաբերությունները Լիզայի հետ: Ես շատ եմ հոգ տանում նրա համար և չեմ անում դա նրա արտաքին հրապուրանքի պատճառով, թեև նա գեղեցիկ է: Լիզան նույնպես սրտանց հոգ է տանում ինձ համար: Մենք լավագույն ընկերներ ենք և սիրում ենք միասին ժամանակ անցկացնել: Ես խղճահարություն զգացի այդ զույգի հանդեպ, քանի որ նրանց հարաբերությունների մեջ սեր չկար: Ես չեմ խոսում այս մասին՝ նրանց դատելու համար. հուսով եմ՝ նրանք կաճեն սիրո մեջ՝ մեկը մյուսի հանդեպ, և հաճույքով կշփվեն իրար հետ: Այնուամենայնիվ, որպես կանոն՝ այդպես չի լինում, որովհետև նրանց հարաբերությունները սխալ հիմք ունեն:

Իսրայելի ժողովուրդը հակված էր նման տեսակի փոխհարաբերությունների. սա այն կեղտն էր, որը նրանք իրենց հետ դուրս էին բերել Եգիպտոսից: Այնուամենայնիվ, Աստված չի ցանկանում մակերեսային հարաբերություններ սկսել. Նա ձգտում է իրական հարաբերությունների: Նա չի փնտրում «փող որսողների»: Այս աշխարհի դրդապատճառները, որոնք դեռ ամուր կառչած էին իսրայելցիների սրտերից, անկարող են անկեղծ հարաբերություններ ստեղծել, քանի որ դրանք եսակենտրոն են: Իսրայելը կարող էր ձանաչել Աստծուն միայն՝ եթե մաքրվեր այդ կեղտից:

Այնուամենայնիվ, Իսրայելը չկարողացավ ազատվել իր ցանկություններից՝ ինչպես Մովսեսը: Մովսեսը ջերմեռանդորեն ձգտում էր անկեղծ հարաբերություններ ունենալ Աստծո հետ, իսկ Իսրայելը ցանկանում էր շահ ստանալ Աստծուց: Ահա թե որքան պարզ է ամեն ինչ:

Ի՞նչ է տեղի ունենում այսօր

Այժմ մենք Նոր կտակարանի ժամանակաշրջանում ենք, բայց մի՞թե ինչ-որ բան փոխվել է: Կարո՞ղ է ինչ-որ մեկը կրել այս աշխարհի կեղտն իր սրտում և դրա հետ մեկտեղ Աստծո հետ անկեղծ փոխհարաբերություններ ունենալ: Մի՞թե Հիսուս Քրիստոսի շնորհքը չեղյալ է դարձնում այս աշխարհի կեղտից մաքրվելու անհրաժեշտությունը: Մի շարք աստվածաշնչյան խոսքեր, որոնք այսօր հազվադեպ են շեշտադրվում, խոսում են այս մասին.

«Ինչպես Աստված ասաց. «Ես կապրեմ նրանցում և կքայլեմ նրանց միջև: Ես կլինեմ նրանց Աստվածը, և նրանք կլինեն Իմ ժողովուրդը: Այդ իսկ պատճառով, դո՛ւրս եկեք անհավատների միջից և առանձնացրե՛ք ձեզ նրանցից,- ասում է Տերը:- Մի՛ դիպչեք նրանց պղծություններին, և Ես կընդունեմ ձեզ: Եվ Ես կլինեմ ձեր Հայրը, և դուք կլինեք Իմ որդիները և դուստրերը,- ասում է Ամենակարող Տերը»» (Բ Կորնթացիների 6.16,17, NLT):

Սիրելի՛ ընկերներ, քանի որ մենք այս խոստումներն ունենք, եկե՛ք մաքրենք մեզ այն ամենից, ինչը կարող է պղծել մեր մարմինը կամ հոգին: Եվ գործենք դեպի կատարյալ սրբությունը, որովհետև մենք վախենում ենք Աստծուց (տե՛ս Բ Կորնթ. 7.1, NLT):

Այս խոսքերն այնքա՛ն շատ բան են ասում: Առաջին հերթին ուշադրություն դարձրեք «Ինչպես Աստված ասաց» արտահայտությանը: Ե՛րբ Աստված առաջին անգամ ասաց այս խոսքերը և ի՞նչ համատեքստով: Պողոսը մեջբերում է այն խոսքերը, որոնք Աստված ասաց Մովսեսին, երբ Նրա ներկայությունը Սինա սարի վրա էր.

«Ես կապրեմ Իսրայելի ժողովրդի միջև և կլինեմ նրանց Աստվածը, իսկ նրանք կճանաչեն, որ Ես եմ Տերը՝ նրանց Աստվածը: Ես Նա եմ, Ով դուրս բերեց նրանց Եգիպտոսի երկրից, որպեսզի ապրեմ նրանց միջև» (Ելից 29.45,46, NLT):

Աստված կրկնեց այն, ինչ ասաց Ելից 19-ում՝ Իր անկեղծ փոխհարաբերություններ ունենալու ցանկությունը: Նա ձգտում էր հենց այս նպատակին, բայց Իսրայելը փոխադարձաբար չպատասխանեց Նրան: Միայն առանձին անհատներ, օրինակ՝ Մովսեսը, Դավիթը, Դանիելը, Եսային և մի խումբ այլ մարդիկ կարողացան շփում ունենալ Աստծո հետ, քանի որ նրանք որոշում կայացրին ազատվել այս աշխարհի եսակենտրոն և շահադիտական դրդապատճառներից: Այժմ

Պողոսն օգտագործում է նույն բառերը՝ դիմելով մեզ, ովքեր մաքրվել են Հիսուս Քրիստոսի արյամբ և փրկվել Աստծո շնորհքով:

Կրկին գրված է. «Ես կապրեմ նրանցում և կքայլեմ նրանց միջև: Մի՛ դիպչեք նրանց պղծություններին, և Ես կընդունեմ ձեզ»: Սա նույնն է, ինչ Նա ասաց Իսրայելին, բայց հիմա Աստված խոսում է նոր մարդկանց՝ մեզ հետ: Նրա մտերիմ շփման ցանկությունը չի փոխվել, բայց դա չի կարող տեղի ունենալ, եթե այս աշխարհի կեղտը դեռ մեր հանդերձների վրա է: Նա հրավիրում է մեզ մտերիմ հարաբերություններ կառուցելու, բայց այս հարաբերություններն անպայմանական չեն: Նա ևս մեկ անգամ ցույց է տալիս Իր հակակրանքն այն տեսակի հարաբերությունների հանդեպ, որոնք «փող որսողները» ձգտում են կառուցել:

Մեր ներսի դրդապատճառները թաքնված չեն Աստծուց: Նա պատվիրում է մեզ մաքրվել ամեն կեղտից՝ ոչ միայն մարմնի, այլ նույնիսկ՝ սրտի և հոգու: Նա գիտի՝ արդյո՞ք մեր հանդերձների վրա կա Եգիպտոսի կեղտը (եսասիրական, շահադիտական դրդապատճառները), թե՞, ինչպես Մովսեսը, մենք փնտրում ենք Նրա ցանկություններն ավելի, քան մերը: Այսպիսով, ինչպես որ Մովսեսը կարգադրեց Իսրայելի ժողովրդին մաքրել իրենց հանդերձները՝ Աստծուն հանդիպելու և Նրա հետ մտերիմ շփում ունենալու համար, այնպես էլ Պողոսը պատվիրում է մեզ. «Եկե՛ք մաքրենք մեզ այն ամենից, ինչը կարող է պղծել մեր մարմինը կամ հոգին: Եվ եկե՛ք գործենք դեպի կատարյալ սրբությունը, որովհետև մենք վախենում ենք Աստծուց»: Մաքրելով մեզ այս աշխարհի համակարգի պղծությունից՝ մենք վստահ կլինենք, որ մեր ներքին տեղորոշման համակարգը չի խախտվի և չի ընտրի լավը՝ անտեսելով լավագույնը:

Մեր ներքին տեղորոշման համակարգի ամենանպաստավոր կարգավորումը՝ Աստծո հետ մտերիմ շփում ունենալու ձգտումն է: Այն պահպանելու գլխավոր գործոնը կարելի է արտահայտել մեկ բառով՝ «սրբություն»: Հաջորդ մի քանի գլուխներում կբացահայտենք այս ոգեշնչող իրողությունը:

ՆԱԽԱՆՁԱՎՈՐ՝ ՄԵՉ ՀԱՄԱՐ

«Ո՛ւմ հետ կհամեմատեք Ինձ: Ո՛վ է հավասար
Ինձ, - հարցնում է Սուրբը:- Նայե՛ք երկինքներին:

Ո՛վ է ստեղծել բոլոր աստղերը:

...անվանելով ամեն մեկն իր անունով:

Իր մեծ զորության և անհամեմատելի

ուժի շնորհիվ, դրանցից նույնիսկ

մեկը չի պակասում»:

— Եսայի 40.25,26, NLT

Քո Տերը շատ նախանձավոր է քո սիրո համար:

Ո՛վ հավատացյալ, Նա ընտրե՞լ է քեզ:

Նա տանել չի կարողանա,

եթե դու ընտրես ուրիշին:

— Չարլզ Սփերջեն

Ոչինչ ավելի բավականություն չի պատճառում մարդուն և բարե-
րար ազդեցություն չի գործում նրա վրա, քան Աստծո ներկա-
յության մեջ լինելը: Մի պահ մտածեք այս մասին. սա չի նշանակում՝
շփվել մի անվանի մարզիկի, հայտնի գիտնականի, ծանաչված նկար-
չի, հանրահայտ դերասանի կամ ազդեցիկ համաշխարհային առաջ-
նորդի հետ, այլ՝ Նրա հետ, Ով արարել է ամեն ինչ՝ թե՛ տեսանելին, թե՛
անտեսանելին: Նա հորինել և կյանքի է կոչել այնքա՛ն մեծ տիեզերք,
որ մարդկային միտքը չի կարող պատկերացնել դրա մեծությունը, սա-
կայն այնքա՛ն մանրամասնորեն կառուցված, որ տիեզերքի ամբողջ
նյութը և բոլոր կենդանի էակները բաղկացած են փոքրիկ ատոմների
բարդ համադրություններից: Այս ատոմներն այնքան աննշան են, որ,
ինչպես նշված էր նախորդ գլուխներից մեկում, կպահանջվեն միլիար-
դավոր ատոմներ՝ մի քանի սանտիմետր երկարությամբ գիծ կազմելու

համար: Նույնիսկ ծավալուն հետազոտություններից հետո գիտնականները դեռևս լիովին չեն հասկանում դրանց կազմությունը:

Գոյություն չունի ոչ մի օգտավետ իմաստություն, գիտություն կամ հասկացողություն՝ առանց Աստծո: Չկա այնպիսի բան, ինչը Նա պետք է սովորի, որովհետև Նա իրականում գիտի ամեն ինչ: Նա գիտի նույնիսկ վերջը՝ սկզբից: Զորավոր հրեշտակները մշտապես կանգնում են Նրա առջև՝ ծածկելով իրենց երեսները, և գոչում են՝ երկյուղած հարաճուն հայտնությունից այն մասին, թե ո՛վ է Նա: Զարմանալի չէ, որ անցած սերունդների իմաստուն տղամարդիկ և կանայք ջանում էին լինել այն արտոնյալների թվում, որոնք կարող են վայելել Նրա ընկերակցությունը:

Այն, որ ցանկացած մարդ կարող է լինել նման Էակի ներկայության մեջ, արդեն աներևակայելի է: Բայց ավելի ապշեցնող է այն փաստը, որ Նա Ինքն է փափագում մեր ներկայությանը, նույնիսկ ավելի, քան մենք՝ Նրա ներկայությանը: Հակոբոս առաքյալը պնդում է.

«Կամ թե կարծում եք՝ Սուրբ գիրքը պարաֆ տեղն է ասում.
«Նախանձով *փափագում է* Հոգին, որ բնակված է մեզանում»»
(Հակոբոս 4.5):

«*Փափագել*» բառը նշանակում է՝ ունենալ ուժգին ձգտում կամ ցանկություն ինչ-որ բանի հանդեպ: Երբ մտածում եմ այս զարմանալի Անձնավորության մասին, Ով փափագում է ինձ, ի սրտե համաձայնում եմ Դավթի խոսքերի հետ. «Որքա՛ն թանկ են Քո մտքերն իմ մասին, ո՛վ Աստված: Դրանք անթիվ են: Ես նույնիսկ չեմ կարող հաշվել. դրանք գերազանցում են ավագի հատիկները» (Սաղմոս 139.17,18, NLT): Դավիթը խոսում էր Աստծո մտքերի մասին՝ ուղղված անհատապես ձեզ կամ ինձ, ոչ թե ընդհանուր առմամբ՝ Իր ժողովրդին: Նրա մտքերը ձեր մասին ավելի շատ են, քան մեր մոլորակի բոլոր ավազահատիկները: Մտածեք այն մասին, թե քանի՞ ավազահատիկ կա բոլոր լողափերում, անապատներում, գոլֆի դաշտերում և խաղահրապարակներում: Անպատմելի շատ ավագ, և՛ անպատմելի շատ մտքեր:

Թույլ տվեք օգնել ձեզ, որ պատկերացնեք սա: Ես խորապես սիրահարված եմ իմ կնոջը: Մենք ավելի քան երեսուն տարի է՝ ամուսնացած ենք: Ես շատ հաճելի մտքեր եմ ունեցել նրա մասին՝ անթիվ մտքեր: Այնուամենայնիվ, եթե ես կարողանայի հաշվել բոլոր մտքերը նրա մասին, որոնք ունեցել եմ, ես նույնիսկ մի կոշիկի տուփ չէի լցնի ավագով, քանի որ գիտնականները պարզել են, որ ծովափի ավագի տասը խորանարդ սանտիմետրի մեջ մոտավորապես 600 միլիոն ավազահատիկ կա:

Եկե՛ք մի փոքր ավելի մտածենք այս մասին: Դուք երբևէ հանդիպե՞լ եք չափազանցնող մարդու, օրինակ՝ ձկնորսի: Դուք գիտեք, թե ինչպես է դա լինում. նա ասում է. «Ես այսքա՞ն մեծ ձուկ եմ բռնել!», և ձեռքերով ցույց է տալիս իր բռնած ձկան չափը: Սակայն եթե իրականում տեսնեիք այդ ձկանը, այն շատ ավելի փոքր կլիներ:

Կամ, օրինակ, ինչ-որ տղամարդու, ով վիճակագրական տվյալներ է հորինում՝ իր խոսքը հաստատելու համար: Նա համարձակ հայտարարում է. «Տղամարդկանց իննսունինը տոկոսը չի սիրում մելոդրամաներ»: Նա ոչ մի անգամ չի կարդացել վիճակագրական տվյալներ այդ մասին, բայց նա չափազանցություն է թույլ տալիս իրեն, որպեսզի արդարացնի իր տհաճությունն այդ ժանրի նկատմամբ:

Կամ, օրինակ, ինչ-որ մարդու, ով ասում է. «Ես աղոթում եմ ձեզ համար», սակայն եթե նա ձիշտն ասեր, միգուցե աղոթել է միայն մեկ անգամ, և այն էլ՝ ոչ ամբողջ սրտով: Կարծում եմ՝ ամեն մեկը ժամանակ առ ժամանակ չափազանցնում է, բայց եկեք անկեղծ լինենք. չափազանցությունը՝ սուտ է: Այնուամենայնիվ, կա մի անհավատալի ճշմարտություն. Աստված չի կարող ստել (տե՛ս Թվոց 23.19 և Տիտոս 1.2): Եթե Նա ստեր, պետք է հնազանդվեր «ստերի հորը»՝ սատանային, իսկ դա երբեք տեղի չի ունենա:

Եթե Աստված պնդում է, որ Նրա մտքերը ձեր մասին ավելի շատ են, քան այս մոլորակի բոլոր ավազահատիկները, կարող եք չկասկածել դրանում:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքա՞ն է Նա մտածում ձեր մասին: Պատկերացրեք սա ձեր իսկ մտքի օրինակով: Մի՞թե դուք շատ կմտածեք ինչ-որ մեկի մասին, ում հետ չեք ցանկանում մտերմորեն շփվել: Նա էլ այդպես չի վարվի: Աստծո Հոգին, Ով բնակվում է ձեզանում, *փափագում է՝ ջանասիրաբար ձգտում և ցանկանում է շփվել մեզ հետ: Պարզ ասած՝ Աստված ցանկանում է մտերիմ շփում ունենալ ձեզ հետ՝ ինչպես ամենամոտ ընկերոջ:*

Աստծո նախանձավորությունը

Կրկին կարդանք Հակոբոսի խոսքերը. «Կամ թե կարծում եք՝ Սուրբ գիրքը պարա՞պ տեղն է ասում. «Նախանձով փափագում է Հոգին, որ բնակված է մեզանում»»: Բանալի բառն այս խոսքում «*նախանձով*» (կամ՝ «*խանդով*») բառն է: Ո՞րն է այս արտահայտության իմաստը: Թույլ տվեք բացատրել: Մի՞թե կինս մտերմորեն կշփվի ինձ հետ՝ կկիսվի իր սրտի գաղտնիքներով, ձգտումներով և ցանկություններով, եթե

ես հարաբերություններ ունենամ այլ կանանց հետ: Ո՛չ մի դեպքում: Եթե նայենք այս խոսքին համատեքստով, այս արտահայտությունից անմիջապես առաջ գրված է.

«Շնացողներ, չգիտե՞ք, որ այս աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ» (Չակոբոս 4.4):

Ըստ էության, սա նշանակում է. «Դուք ձգտում եք ընկերանա՞լ աշխարհի հետ: Այդ դեպքում, դուք շնացող եք»:

Չակոբոսը գրում էր միայն քրիստոնյաներին, քանի որ այս նամակի մեջ նա տասնհինգ անգամ օգտագործում է «եղբայրներ» բառը: Նրա խոսքն ակնհայտորեն ուղղված է նրանց, ովքեր շփում ունեն Աստծո հետ և ընդունել են Չիսուս Քրիստոսին իրենց կյանքում: Ահա ճշմարտությունը. մենք շնություն ենք գործում Աստծո դեմ, երբ սիրախաղ ենք անում այս աշխարհի հետ:

Թույլ տվեք շարունակել իմ օրինակը. եթե ես հարաբերություններ ունենայի մեկ այլ կնոջ հետ, Լիզան ոչ միայն մտերմորեն չէր կիսվի ինձ հետ, այլև բարկություն ու խանդ կունենար և իրավացի կլիներ: Թեև ես խոստացել էի լինել նրանը և միայն նրանը, բայց ես խախտել էի իմ խոստումը, և բացի այդ՝ ստել էի նրան:

Մինչ այդ Չակոբոսը գրում է. «Կամ թե կարծում եք՝ Սուրբ գիրքը... ասում է...»: Նա օգտվում է մի քանի հինկտակարանյան խոսքերից, ոչ թե միայն մեկից: Աստված շարունակ ասում է Իր մասին.

«...Որովհետև ես՝ քո Եհովա Աստվածը, նախանձոտ Աստված եմ...» (Ելից 20.5):

«...Տերը, Ում անունը հենց Նախանձավոր է, Աստված է, Ով նախանձավոր է ձեզ հետ ունեցած փոխհարաբերությունների համար» (Ելից 34.14, NLT):

«Աստծուն՝ ձեր Աստծուն, պետք չէ թեթևամտորեն վերաբերվել. Նա սպառող կրակ է և նախանձավոր Աստված է» (Երկրորդ Օրինաց 4.24, MSG):

Կան շատ այլ հատվածներ Աստվածաշնչում, որոնք խոսում են Աստծո նախանձավորության մասին: Եվ բոլոր այդ խոսքերն, ի վերջո, Նրա և մեր փոխհարաբերությունների մասին են:

Մինչև առաջ անցնելը, թույլ տվեք պարզաբանել. Աստված չի ասում, որ Ինքը նախանձավոր է *ձեր հանդեպ* (ինչը կսահմանափակեր ձեր կյանքը), այլ՝ *ձեզ համար*: Այս երկուսի միջև մեծ տարբերությ-

յուն կա: Նա փափագում է, որ դուք հաջողության հասնեք. Նա ցանկանում է, որ դուք մեծ լինեք. Նա լցվում է բերկրանքով, երբ ձեր կյանքում առատություն կա. Նա կամենում է, որ դուք արդյունավետ լինեք (տե՛ս Յեսու 1.8, Առակ. 4.8 NLT, Մատթ. 25.29 և Հովհ. 15.8): Նրա նախանձավորությունը միմիայն վերաբերում է ձեզ մոտ լինելու ցանկությանը: Նա չի ցանկանում կիսել ձեզ մեկ այլ սիրելեանի հետ, որը հիմնականում այս աշխարհն է: Հակոբոսը պարզապես հիշեցնում էր հավատացյալներին, թե ինչպես է Աստված դիտարկում անհավատարմությունը: Եթե մենք շնություն գործենք Նրա դեմ, Նրա նախանձավոր բարկությունը կբորբոքվի, և դա աննշան բան չէ:

Բայց և այնպես, բարկությունը՝ միակ զգացումը չէ, որն առաջանում է, երբ ուխտի մեջ անհավատարմություն է տեղի ունենում: Ես այնքա՛ն հաճախ եմ խոսել մարդկանց հետ, ում սիրտը կոտրված է դավաճանության պատճառով: Նրանք պատմում են իրենց սրտում բարձրացող հիասթափության, տարակուսանքի, վշտի և զայրույթի մասին: Նրանց լքել կամ դավաճանել են այն մարդիկ, ում նրանք տվել էին իրենց ամբողջ կյանքը, և նրանց սրտի խորքում զգացմունքների տարափ է առաջանում: Մի կին, ում հետ խորհրդատվություն էի անցկացնում, բացարձակ շփոթության մեջ էր: Նա լացակումած հարցնում էր. «Ինչո՞ւ ամուսինս այդպես վարվեց ինձ հետ. չէ՞ որ ես երեխաներ ծնեցի նրա համար և նվիրեցի նրան կյանքիս լավագույն տարիները»:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ է զգում Աստված: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ զգացմունքներ են փոթորկվում Նրա ներսում, երբ մենք անհավատարիմ ենք: Պողոսը գրում է. «Որովհետև ես նախանձավոր եմ ձեզ համար՝ անձամբ Աստծո նախանձավորությամբ» (Բ Կորնթացիների 11.2, NLT):

Խոսելով Աստծո անունից՝ Պողոսը ցույց է տալիս Աստծո զգացմունքները մեր հանդեպ այն դեպքում, երբ մենք ձգտում ենք ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի այնպես, ինչպես պետք է ձգտեինք Նրան: Երեմիան անում է նույնը. «Իմ տրտմությունն ավելին է, քան բժշկությունը. Իմ սիրտը կոտրված է» (Երեմիա 8.18, NLT): Մենք պետք է հիշենք, որ ստեղծված ենք Նրա պատկերով: Այնպես որ, Աստված զգում է նույն կերպով, ինչ կերպով՝ մենք:

Աստված նախանձավոր է, որովհետև Նա տվել է Իր կյանքը մեզ համար: Նա զոհել է ամեն ինչ, որպեսզի հնարավոր դարձնի տևական հարաբերությունները մեր և Իր միջև: Նրա սիրտը և անձը խորը բարկություն ու տրտմություն են ապրում, երբ մենք անհավատարիմ ենք Նրան: Լսե՛ք Նրա խոսքերը.

«...Իմ ժողովուրդը մոռացել է Ինձ: Ինչպիսի՞ դավեր եք նյութում և որոգայթներ եք լարում՝ ձեր սիրեկաններին շահելու համար: Նույնիսկ փորձառու մարմնավաճառը կարող էր սովորել ձեզնից: Եվ չնայած դրան՝ դուք ասում եք. «Ես ոչ մի սխալ չեմ գործել»» (Երեմիա 2.32,33,35, NLT):

Շատ հաճախ մենք չզգիտենք, որ շնություն ենք գործում Նրա դեմ, առավել ևս՝ թե որքան ծանր է մեր անհավատարմությունը Նրա համար: Միայն ձյմարտությունը կարող է բացել մեր աչքերը: Մեր սրտերն անզգա են դառնում Նրա կոտորված սրտի և տրտմած անձի հանդեպ: Աստված հարցնում է. «Մի՞թե նրանք ամաչում են իրենց գարշելի գործերից: Բոլորովին ո՛չ. նրանք նույնիսկ կարմրել չզգիտեն» (Երեմիա 6.15, NLT): Երեմիան և այլ մարգարեները ցույց էին տալիս Իսրայելի անհավատարմությունը Հին կտակարանում: Պողոսն ու Հակոբոսն անում էին նույնը Նոր կտակարանում:

Այս աշխարհը

Ես կշարունակեմ մեկնել Հակոբոսի անչափ կարևոր խոսքը: «Ընկեր» և «ընկերություն» բառերը հունարենում համապատասխանաբար «ֆիլոս»-ը և «ֆիլիա»-ն են: «Ֆիլոս» բառի սահմանումն է՝ «սրտանց», «ընկերական» և «հաղորդակցվել», իսկ «ֆիլիա» բառինը՝ «ընկեր» կամ «ընկերանալ»: Վ. Է. Վայնը գրում է «ֆիլիա» բառի մասին իր Ընդարձակ բառարանում. «Այն ընդգրկում է սիրելու և սիրված լինելու գաղափարը»: Մտածե՛ք այս մասին Հիսուսի խոսքերի լույսի ներքո.

«Աշխարհը կսիրեր ձեզ՝ իրենի պես, եթե դուք իրենը լինեիք, բայց դուք արդեն այս աշխարհի մասը չեք: Ես ընտրեցի ձեզ, որ դուրս գաք աշխարհից, այդ պատճառով էլ այն ատում է ձեզ» (Հովհաննես 15.19, NLT):

Դուք այլևս չեք պատկանում այս աշխարհին, թեև մի ժամանակ այդպես էր: Այժմ դուք պատկանում եք Աստծուն: Այն հին մարդը, ով ապրում էր ձեր մարմնում, մահացավ այն պահին, երբ դուք տվեցիք ձեր անձը Հիսուսին: Ծնվեց նոր ստեղծվածը: Դուք վերածնվեցիք, քանի որ ուխտի մեջ մտաք Աստծո հետ:

Հիսուսն ասաց, որ Իրեն պատկանելու ձյմարիտ նշանը՝ այս աշխարհի կողմից ատելի լինելն է: Անկեղծորեն հարցրեք ձեզ. «Արդյո՞ք այս աշխարհն ատում է ինձ»: Արդյո՞ք այս աշխարհն ատում է այն քրիստոնյաներին, որոնց դուք ճանաչում եք: Եթե այդպես է, այդ դեպ-

քում ինչպե՞ս մենք կարող ենք ապրել, գործել և պտղաբեր լինել այս աշխարհում: Ինչպե՞ս կարող ենք հասնել այս աշխարհին: Մի՞թե մենք չէինք կարողանա ավելի մեծ ազդեցություն գործել կորածների վրա, եթե այս աշխարհը սիրեր մեզ: Այս դժվարին հարցերը պետք է պատասխանվեն, և մենք կանդորադառնանք դրանց հաջորդ գլուխներում:

Հովհաննես առաքյալը ցույց է տալիս Հիսուսի խոսքի հակառակ կողմը: Նա համարձակ պատվիրում է մեզ. «Մի՛ սիրեք աշխարհը, և ո՛չ էլ այն, որ աշխարհի մեջ է: Եթե մեկն աշխարհը սիրի, Հոր սերը նրանում չէ» (Ա Հովհաննես 2.15,16ա):

Հիսուսը, Հակոբոսը և Հովհաննեսը խստորեն էին խոսում այն մարդու մասին, ով, ունենալով փոխհարաբերություններ Աստծո հետ, կապ է հաստատում այս աշխարհի հետ, և՛ հակառակը: Նրանք կապակցում էին այս աշխարհի հետ ընկերություն անելու, այս աշխարհը սիրելու և այս աշխարհի կողմից սիրվելու գաղափարները շնության, ատելության, թշնամանքի և այնպիսի վիճակի հետ, երբ Աստծո սերը մեզանում չէ:

Այսպիսով, մինչ կշարունակենք մեկնաբանություններ անել այս խիստ հայտարարությունների մասին և բացատրել, թե ինչ է նշանակում ընկերությունը այս աշխարհի հետ, մենք նախ՝ պետք է սահմանենք, թե ինչ է աշխարհը:

Հունարեն «*աշխարհ*» բառը «*կոսմոս*»-ն է: Այն սահմանվում է որպես «ներկա աշխարհը, ներկա իրադրությունը՝ ի հակադրություն Քրիստոսի թագավորության, և, հետևաբար, այն մշտապես կրում է վաղանցիկության, անարժեքության և... անպարկեշտ ցանկությունների գաղափարը»⁹: Քննարկենք այս բառերից ամեն մեկը:

«*Վաղանցիկ*» բառի գոյականը՝ «*վաղանցիկություն*»-ը, սահմանվում է որպես «ոչ տևական, մնայուն կամ մշտական»: Եթե մենք կարողանայինք կողքից նայել մեր հասարակությանը ժամանակների ընթացքում, կտեսնեինք, որ այն մշտապես փոփոխվում է: Որպես կանոն, փոփոխությունը՝ դրական երևույթ է. այն ենթադրում է առաջընթաց, զարգացում և աճ: Այնուամենայնիվ, բարոյական փոփոխությունների դեպքում, շատ հաճախ մարդիկ հեռանում են այն չափանիշներից, որոնք ծշմարտապես բարի են Աստծո համար:

Այն, *ինչը բարոյապես ընդունելի և սովորական է մեր հասարակության մեջ այսօր, անսովոր էր, ինչպես նաև բարոյապես ու սոցիալապես սխալ էր երեկ*: Որպես օրինակ՝ դիտարկենք մի ակնհայտ միտում: Ընտրե՞ք սովորական ֆիլմ, որը խորհուրդ չի տրվում դիտել մինչև 13 տարեկան երեխաներին: Մարդկանց բազմությունը հերթ է կանգնում կի-

նոթատրոնների դրամարկղերի մոտ՝ նորագույն ֆիլմերը դիտելու համար: Այնուամենայնիվ, շատ հաճախ հաջողված ֆիլմերը լցված են բացահայտ անբարոյությամբ: Նման ֆիլմում ցուցադրվելու են սեռական պղծություն, համասեռամոլություն և շնություն՝ ֆիլմի հեղինակների նախընտրած չափով: Որպես կանոն՝ այն ընդգրկելու է անպարկեշտ վարք կամ խոսքեր, գողություն, սպանություն և նույնիսկ՝ կախարհություն: Եվ նման վարքը հատուկ է ոչ միայն պատմության բացասական հերոսներին, այլև՝ դրական հերոսներին և նրանց ընկերներին: Խոսակցությունները շատ անգամ համեմված են հայիոյանքներով, որոնց թվում հերոսները դատարկ տեղը տալիս են Աստծո անունը:

Մենք պարզապես ընդունել ենք և նույնիսկ սպասում ենք այս ամենը շատ ֆիլմերում: Այնուամենայնիվ, եթե նույն ֆիլմը ցուցադրվեր կինոթատրոններում 1950-ական թվականներին, կինոթատրոններ գնացած մարդիկ կսարսափեին: Ամերիկացիները խիստ կվրդովվեին հայիոյանքներից, մերկությունից և բացահայտ անբարոյության տեսարաններից: Ամբողջ ազգը ձայն կբարձրացներ՝ ասելով. «Ինչո՞ւ է այս ֆիլմը դրակա՜նորեն պատկերում երկու չամուսնացած մարդկանց, ովքեր միասին են ապրում, և նույնիսկ ցույց է տալիս նրանց անկողնում: Ինչո՞ւ է սա ներկայացվում՝ որպես սովորական կենսաոճ: Սա անհավատալի՞ է, ամոթալի՞ և վրդովեցուցիչ»: Լայն հասարակությունը կբոյկոտեր այս ֆիլմը:

Այդ դեպքում, ի՞նչ տեղի ունեցավ: Արդյո՞ք Աստված սովորական, ընդունելի և բարի վարքի նոր չափանիշներ է որոշել: Մի՞թե սահմանագծերը տեղաշարժվել են: Կամ, միզուցե, մենք ավելի հասուն ենք դարձել, իսկ 1950-ական թվականներին ապրող մարդիկ չափազանց կաշկանդված էին: Մի՞թե սա առաջընթաց է:

Եթե ուսումնասիրենք հասարակության վիճակագրական տվյալները, մենք կպարզենք, որ ֆիլմերի մեջ տեղի ունեցած փոփոխություններն ընդամենը արտացոլում են հասարակության փոփոխվող բարոյական չափանիշները: Համաձայն վերջին վիճակագրական հետազոտություններից մեկի՝ իրենց զուգընկերոջ հետ ապրող երիտասարդ կանանց թիվը կրկնապատկվել է՝ 1982 թվականի տվյալների համեմատ¹⁰: Համաձայն «Միացյալ Նահանգների և աշխարհի նորություններ»-ի՝ 2006 և 2010 թվականների միջև Միացյալ Նահանգներում ապրող տասնհինգից քառասունչորս տարեկան կանանց գրեթե կեսը (48 տոկոսը) ապրել է որևէ զուգընկերոջ հետ մինչև ամուսնանալը, ինչը 11 տոկոսով ավելի է 2002 թվականի և 41 տոկոսով ավելի՝ 1995 թվականի ցուցանիշներից¹¹: Ես կարող էի ավելի շատ վիճակագրական տվյալներ ներկայացնել մեր փոփոխական մշակույթի մասին, բայց դա չէ իմ նպատակը:

Այս աշխարհում նույնպես կա *անարժեքություն*: Իհարկե, մեր հասարակության մեջ կան արժեքավոր զարգացումներ և փոփոխություններ: Այն առաջընթացը, որը մենք ունենք գիտության, տեխնոլոգիաների, հեռահաղորդակցման միջոցների, բժշկության և այլ ոլորտներում, օգուտ են բերում մարդկությանը՝ ավելացնելով մեր արդյունավետությունը: Սա համապատասխանում է Աստծո առաջին պատվիրանին, որը Նա տվել էր մարդկանց՝ «աճել և շատանալ» (Ծննդոց 1.28):

Այնուամենայնիվ, մի՞թե մեր բարոյական փոփոխություններն արժեքավոր են: Թե՞ դրանք հիմնված են ազահության, կրքի և կարգավիճակ ձեռք բերելու ձգտման վրա: Մի՞թե մենք բարելավել ենք երեխաների դաստիարակությունը՝ տալով նրանց երկու կանանցից կամ երկու տղամարդկանցից բաղկացած ամուսնական զույգերի: Այդ պայմաններն ավելի լավ են երեխայի համար հոգատար մայր և առնական հայր ունենալուց, թե՞ այս փոփոխությունն արվել է՝ մարդկանց *անպարկեշտ ցանկությունները* («կոսմոս» բառի սահմանման վերջին բնութագիրը) բավարարելու համար:

Մի՞թե միասին ապրող տղամարդը և կինը, ովքեր ամուսնական կապեր չեն կնքել իրար հետ, ապահովություն են տալիս երեխաներին, թե՞ սա թույլատրվել է ծնողների եսասիրական ցանկությունների և անպարտաճանաչ բնավորության պատճառով: Մի՞թե փաստերը կեղծելը և խաբեությունների դիմելը՝ ապրանքների վաճառքն ավելացնելու համար, օգուտ է տալիս գնորդին, թե՞ զոհացնում է վաճառողի ազահությունը: Մի՞թե օրինականացված թարմացնող մարիխուանան բարելավում է ուղեղի բջիջների աշխատանքը: Չէ՞ որ գրեթե բոլոր հրատարակված գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ ուղեղի բջիջները քայքայվում են այս թմրանյութն օգտագործելու պատճառով: Մի՞թե այս ընդունված անօրեն ցանկությունները մոտեցնում են մեզ մեր Արարչին:

Աստվածաշունչն ասում է, որ մեր աշխարհի ընթացքը որոշվում է չար հոգիների կողմից, ովքեր խորամանկորեն գործում են մեր սերնդակիցների միջոցով (տե՛ս Եփես. 2.2): Կարելի է ասել, որ «կոսմոս»-ը՝ մշակույթ է, որն ստեղծում են խավարած մտքեր ունեցող մարդիկ: Հովհաննես առաքյալը փարատում է բոլոր երկմտությունները՝ գրելով. «Մեզ շրջապատող աշխարհը չարի վերահսկողության ներքո է» (Ա Հովհաննես 5.19, NLT): Այն աստիճանաբար ավելի ու ավելի է հեռանում Աստծո սրտից և իշխանությունից: Արտաքուստ այս աշխարհը բարուն հակառակ կամ չար տեսք չունի: Դրա փոփոխությունները դիմակավորված են *առաջընթացի* կամ *բարու* տեսքով: Բայց ցավալին այն է, որ իրականում այս աշխարհը գայթակղեցնում է իր բնակիչներին՝ հեռացնելով նրանց Արարչի սրտից:

«Աստվածաշնչյան բառերի նոր միջազգային հանրագիտարան»-ը ավելի խորը սահմանում է առաջարկում մեզ. «Աշխարհիկությունը պարտադիր չէ, որ նշանակի մարդու մասնակցությունը ոմանց կողմից վիճարկվող գործերին: Այն կարող է նշանակել մեր մշակույթի հեռանկարները, արժեքները և դիրքորոշումներն անմտածված կերպով ընդունելը՝ առանց դիտարկելու դրանք Աստվածաշնչի տեսանկյունից»¹²: Պարզ ասած՝ աշխարհիկության դեպքում մենք ենք սահմանում բարին և չարը: Հասարակության չափանիշները որոշող հեռանկարները, արժեքները և դիրքորոշումները արմատացած են մարմնի ցանկություններին տեղի տալու, աչքերի ցանկություններին գոհացնելու և կարգավիճակին, համբավին և ճանաչելիությանը ձգտելու մեջ:

«Մի՛ սիրեք այս աշխարհը, ո՛չ էլ այն բաները, որոնք այն առաջարկում է ձեզ, որովհետև երբ դուք սիրում եք այս աշխարհը, դուք չունեք Հոր սերը ձեզանում: Որովհետև այս աշխարհը միայն առաջարկում է ուժգին ցանկություն մարմնական հաճույքների հանդեպ, ուժգին ցանկություն այն ամենի հանդեպ, ինչ մենք տեսնում ենք, և հպարտություն՝ մեր ձեռքբերումների և ունեցվածքի պատճառով: Այս բաները Հորից չեն, այլ՝ այս աշխարհից» (Ա Հովհաննես 2.15,16, NLT):

Ուշադրություն դարձրեք «այս աշխարհը միայն առաջարկում է» բառերին: Այս հատվածը ցույց է տալիս, թե ինչպես ճանաչել այս աշխարհի ազդեցությունը կամ, ըստ Հակոբոսի՝ ինչպես նկատել շնացողներին, ովքեր ձգտում են գայթակղեցնել ձեզ:

Խնդրում եմ, լսե՛ք ինձ, սիրելի՛ Քրիստոսի հետևորդ. այս աշխարհը ձգտում է գայթակղեցնել ձեզ: Այս աշխարհն առաջարկում է ձեզ հարաբերություններ իր հետ՝ օգտագործելով հրապուրիչ խոսքեր, տրամաբանական փաստարկներ, շողոքորթություն, հնարավորություններ նաև իր իշխանությունն ու ազդեցությունը՝ մշտապես խոստանալով շահ կամ հաճույք: Օձը հրապուրեց Եվային հենց այս կերպով:

Նույնը տեղի է ունենում, երբ շնացող կինը ցանկանում է գայթակղեցնել որևէ տղամարդու: Նա այնպիսի տպավորություն է գործում, ասես իր նպատակը հենց այդ տղամարդն է, մինչդեռ նա ոստայն է գործում նրա շուրջը: Նրա ոստայնն աննկատ որսում է իր գոհին, որպեսզի նա կարողանա կատարել իր ցանկությունները նրա միջոցով:

Այս աշխարհը գաղտնաբար իր ոստայնի մեջ է որսում իր զոհերին՝ նրանց, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են, որպեսզի կատարի իր ցանկությունը՝ հրապուրանքով հեռացնի հավատացյալներին Աստծո ներկայությունից, կյանքից և օրհնություններից: Առակաց գրքի հեղի-

նակը պարզորեն հայտարարեց, որ այս աշխարհի անկողինը՝ մահվան սենյակներ են, և նրա ճանապարհը՝ դժոխքի ճանապարհն է: Հեղինակն զգուշացնում է, որ *նրա հրապուրիչ ազդեցությունը մահվան է մատնել բազմաթիվ ուժեղ տղամարդկանց և կանանց* (տե՛ս Առակ. 7.21-27):

Ի՞նչ է այս աշխարհը

Այս աշխարհը սահմանելու հարցում մարդիկ շատ ավելի շեշտադրել են ձևը, քան դրդապատճառը: Իմ սիրտը տրտմում է, երբ լսում եմ անկեղծ հավատացյալների դատողությունները, ովքեր կամ դաստիարակվել են *օրինապաշտության* մեջ, կամ հասուն տարիքում են ընկել դրա ծուղակը: Մարդիկ հաճախ են խոսում օրինապաշտության մասին և շատ ազատ են գործածում այս բառը: Այնպես որ, մինչև առաջ անցնելը, սահմանենք այն: *Օրինապաշտության* բառարանային սահմանումն է՝ «խստորեն հարելը... օրենքին կամ դրույթներին, առավելապես՝ տառին, քան հոգուն»: Այս բառի մյուս սահմանումն է՝ «մարդկային վարքը դատելը՝ օրենքներին ճշգրտորեն հարելու չափանիշով»:

Մեզնից շատերը սարսափելի պատմություններ են լսել՝ կապված քրիստոնեության այս կյանքից զուրկ ձևի հետ: Հովիվները Աստվածաշնչով հարվածում են ամբիոնին՝ հռչակելով այն դրույթներն ու կանոնները, որոնց պետք է ձտորեն հետևել և հնազանդվել: Նրանք աշխարհիկի պիտակ են դնում կանանց վրա, եթե նրանք տաբատ, նորաձև զգեստներ կամ զարդեր են կրում, շպարվում են, փիրսինգ են անում, կարճ, գեղեցիկ կտրվածքով կամ ներկած մազեր ունեն: Տղամարդիկ նույնպես չեն խուսափում նրանց ինքնահնար օրենքներից. մանրակրկիտ ձևով ստուգվում են նրանց նորաձև հագուստը, փիրսինգը և մազերի երկարությունը:

Եվ սա դեռ ամենը չէ: Դատապարտության ներքո են հայտնվում նաև նրանք, ովքեր մեղավորների հետ մասնակցում են խնջույքների: Այն մարդիկ, ովքեր կինոթատրոն են գնում կամ մասնակցում այլ զվարճալի միջոցառումների, քննադատվում են: Ընդունված շրջանակներից դուրս ընկերներ ունենալը բացասական է ընկալվում, իսկ կորածներին ստեղծարար կերպով հասնելու ցանկացած փորձ պիտակվում է որպես նահանջ: «Զի՛ կարելի»-ների թվում են պարելը, տարբեր հասարակական միջոցառումների մասնակցելը, ամեն տեսակի աշխարհիկ երաժշտությունը, հեռուստացույց դիտելը, մթնոլորտի խթանիչներ (լուսային էֆեկտներ կամ ծխի մեքենաներ) օգտագործելը՝ եկեղեցում: Ահա ընդամենը մի քանիսը այն բազմաթիվ օրինապաշտական կանոններից, որոնք պահանջվում են «Հիսուսին հետևելու և աշխարհից զերծ մնալու համար»:

Ես թվարկեցի օրինապաշտ մարդկանց մի քանի ակնհայտ թիրախներ, սակայն գոյություն ունեն օրինապաշտության ավելի աննկատ ձևեր, որոնք հավասարապես վտանգավոր են: Խոսքը սահմանված (հաճախ՝ ինքնասահմանված) չափանիշների մասին է, որոնց մարդիկ պետք է խստորեն հարեն, որպեսզի փրկություն ստանան, հոգևորապես աճեն կամ կարողանան դատել մարդկանց ըստ նրանց արտաքինի: Դրանց թվում են ժամեր շարունակ աղոթելը, ծոմապահությունը կամ ամեն օր որոշակի չափով Աստվածաշունչ կարդալը: Իհարկե, այս բաները շատ օգտավետ սովորություններ են, բայց դրանք չպետք է արվեն ինչ-որ տեսակի հոգևոր գերազանցություն վաստակելու համար:

Հնարավոր է՝ մենք դժվարանում ենք ներում ընդունել մեր կատարած գործերի համար, և տեղի ենք տալիս ինքներս մեզ պատժելու ինչ-որ ձևի՝ որպես հատուցում այն սխալի համար, որը գործել ենք: Այդ դեպքում մենք հեռացնում ենք մեր հայացքը Հիսուսի արյունից և կրկին նայում ենք մեր գործերին:

Նույնպես օրինապաշտություն է, երբ հավատում ենք, որ ավելի ենք ընդունված Աստծո առջև, քանի որ ջանասիրաբար որևէ գործ ենք կատարում Նրա համար կամ ծառայում ենք եկեղեցում: Կամ եթե մենք հավատում ենք, որ մեր աղոթքներն ավելի արագ են լսվում, որովհետև վերջերս մենք ոչ մի ծանր մեղք չենք գործել: Այս անխոս մտածելակերպի հիմնական գաղափարն այն է, որ մենք կարող ենք «համալրել մեր հոգևոր հաշվեհամարը» լավ վարքով և բարի գործերով: Օրինապաշտությունը թույլ չի տալիս մարդուն հանգստանալ կամ վայելել կյանքը, քանի որ նրա կյանքում կա մշտապես զբաղված լինելու ճնշում՝ «Աստծուն ծառայելու» համար, թե՛ եկեղեցու կառավարման, թե՛ կամավոր ծառայության, թե՛ աղքատներին օգնելու մեջ: Դրդապատճառը ոչ թե սերն է, այլ Աստծո բարեհաճությունը վաստակելը:

Օրինապաշտության այս տեսակի դասական օրինակը այն փարիսեցին է, որը դատում էր իրենց քաղաքի ամենահայտնի մեղավորին՝ համեմատելով իր կյանքն այդ հարկահավաքի կյանքի հետ (որը նույնն է, թե՛ մաֆիայի անդամը մեր օրերում): Փարիսեցին մակերեսայնորեն գոհացավ Աստծուց իր բարի վարքի համար. նա մեղք չէր գործում, չէր խաբում մարդկանց՝ ինչպես այդ մաֆիայի անդամը, շնություն չէր գործում, կանոնավոր ծոմ էր պահում, աղոթում էր և առատ նվիրատվություններ էր անում ժողովարանում: Զավեշտական է, որ հենց այն պահին, երբ այս հոգևոր առաջնորդը պարծենում էր իր վարքով և նշում էր այդ հանցագործ պարագլխի սխալները, այդ վատահամբավ մեղավորը կանգնած էր ժողովարանի վերջում և աղաչում էր Աստծուն ողոր-

մության համար: Հիսուսն ասաց, որ արդարացավ երկրորդ մարդը, ոչ թե «կատարյալ» կանոններ պահող առաջնորդը:

Այս տեսակի օրինապաշտությունը խորը արմատացած է այս աշխարհի հոգու մեջ, քանի որ այն կենտրոնանում է մարդու կարգավիճակի և հպարտության վրա, ինչպես նաև՝ ինքնագոհության, որը նա զգում է, երբ հետևում է իր կամ այլ մարդկանց կողմից սահմանված կանոններին: Այսպես վարվելով՝ մենք այլևս հաշվի չենք առնում, որ կախված ենք Աստծո կարողությունից, և սկսում ենք կենտրոնանալ մեր ուժերի վրա: Օրինապաշտությունը նույնպես գողանում է մեզնից այն ուրախությունը, որը մեզ հետ է Աստծո ներկայության շնորհիվ:

Ես մի ընկեր ունեմ, ով գործարար է և շատ արդյունավետ է Ավետարանը մարդկանց հասցնելու մեջ: Նա մեծացել էր օրինապաշտական միջավայրում, բայց հետագայում ազատվել էր այդ ազդեցությունից: Մեկ անգամ ասաց ինձ. «Ձո՛ն, ես մտածում էի, որ այն ամենը, ինչը հաճելի է կամ ծիծաղ և ուրախություն է առաջացնում, այս աշխարհից է և դուրս է առաքինության սահմաններից»: Նրա հովիվը և առաջնորդները կենտրոնանում էին մարդու արտաքին կեցվածքի վրա, ոչ թե սրտի դիրքի: Նրա եկեղեցին գրեթե ազդեցություն չուներ որևէ մեկի վրա՝ իրենց խմբից դուրս: Ցավոք, այդ եկեղեցու առաջնորդներն այդպես էլ չհասկացան Պողոսի խոսքերը. «Որովհետև Աստծո թագավորությունը այն չէ, ինչ մենք ուտում և խմում ենք, այլ բարությանբ, խաղաղությամբ և ուրախությամբ ապրելն է Սուրբ Հոգու մեջ» (Հռոմեացիների 14.17, NLT):

Մենք մեծ և տևական ուրախություն ունենք, երբ Հոգու մեջ ենք: Ուրախությունը գրավում է կորածներին, քանի որ այս աշխարհում չկա ուրախություն: Հիսուսը գրավիչ էր բոլոր անկեղծ մարդկանց համար, այդ թվում՝ հասարակության ամենավատահամբավ մեղավորների: Ցանկացած մարդ, ով փորձում է վաստակել իր փրկությունը, կամ աճել Քրիստոսի մեջ օրինապաշտական ուսմունքներով կամ համոզմունքներով, չունի ճշմարիտ ուրախություն: Այս մարդիկ ապրում են շատ սահմանափակ աշխարհում, քանի որ նրանք, ովքեր չեն մտածում իրենց պես, «զտվում են» իրենց կյանքից:

Լավ կլիներ, եթե իմ գործարար ընկերոջ առաջնորդներն ավելի շատ ստորեին Պողոսի խոսքերի շուրջ, որոնք նա գրել է մեկ այլ նամակում.

«Դուք մահացել եք Քրիստոսում, և Նա ազատ է արձակել ձեզ այս աշխարհի հոգևոր ուժերից: Այդ դեպքում, ինչո՞ւ եք շարունակում հետևել այս աշխարհի կանոններին, օրինակ՝ «Մի՛ վերցրու: Մի՛ ճաշակիր: Մի՛ դիպչիր»: Նման կանոնները սոսկ մարդկային ուսմունքներ են այն բաների մասին, որոնք քայքայվում են, երբ մենք օգտագործում ենք դրանք: Այս կանոն-

ները կարող են իմաստուն թվալ, որովհետև դրանք պահանջում են ուժգին նվիրում, բարեպաշտական անձնուրացություն և խիստ մարմնական կարգապահություն: Բայց դրանք ոչնչով չեն օգնում *մարդու չար ցանկությունները հաղթելուն*» (Կողոսացիների 2.20-23, NLT):

Հետաքրքիր է, որ Պողոսը վերագրեց նվիրում, անձնուրացություն և խիստ մարմնական կարգապահություն պահանջող օրինապաշտական կանոնները այս աշխարհի ուժերին: Իհարկե, սա չի նշանակում, որ անսանձ կրթերը, սեռական անբարոյությունը, գողությունը, հարբեցողությունը և մյուս նման բաները մեղք չեն: Սա պարզապես աշխարհիկության այլ տեսակ է: Օրինապաշտությամբ բռնված մարդիկ հաճախ չեն գիտակցում, որ գտնվում են նույն աշխարհի համակարգի գերության մեջ, որից հեռու մնալու մասին այդքան եռանդուն կերպով քարոզում են:

Պողոսի խոսքերի բանալին «մարդու չար ցանկությունները հաղթելը» արտահայտությունն է: Օրինապաշտությունը չի մաքրում մարդու սիրտը, այնինչ սիրտն այս աշխարհի թիրախն է. այս աշխարհի ուժերը ցանկանում են վարակել հենց մարդու սիրտը: Ահա թե ինչու է Խոսքը պատվիրում մեզ. «Հսկի՛ր քո սիրտը մնացած ամեն ինչից ավելի, որովհետև այն որոշում է քո կյանքի ընթացքը» (Առակաց 4.23, NLT):

Հիսուսն ասում է. «Բարի մարդն իր սրտի բարի գանձից բարիքներ կհանի, և չար մարդը չար գանձից չար բաներ կհանի» (Մատթեոս 12.35): Ամեն ինչ բխում է այն բանից, թե ինչ ենք մենք պահպանում և արժևորում մեր ներսում: Մաքրե՛ք սիրտը, և արտաքին կյանքն ինքնին կկարգավորվի՝ կատարելապես համապատասխանելով այն ամենին, ինչն Աստված բարի է համարում:

Որպես ամփոփում՝ այս աշխարհը վերահսկում է մարդուն ոչ թե արտաքուստ, այլ՝ ներքուստ: Այս վերահսկողությունը վերաբերում է սրտի և մտքի ցանկություններին, մտադրություններին և դրդապատճառներին: Ահա մեր մարտադաշտը. ահա թե որտեղ է գործում այս աշխարհի ուստայնը: Ահա թե որտեղ է սկսվում ընկերությունը կամ շնությունն այս աշխարհի հետ, և ահա թե որտեղ է այն հասնում իր լրմանը: Եվ սա կարող է հավասարապես տեղի ունենալ թե՛ այն մարդու հետ, ով հազվադեպ է եկեղեցի հաճախում, թե՛ նրա, ով բաց չի թողնում ոչ մի եկեղեցական հավաքույթ և լրջորեն ներգրավված է ծառայության մեջ:

Ավելի լավ պատկերացնելով, թե ի՞նչ է աշխարհը և ի՞նչ այն չէ՝ եկեք ուղղենք մեր ուշադրությունը *ընկերության* վրա: Ինչպե՞ս ենք մենք հարաբերությունների մեջ մտնում կամ ընկերանում այս աշխարհի հետ: Ինչպե՞ս ենք շնություն գործում այս աշխարհի հետ: Մենք կխոսենք այս մասին հաջորդ գլխում:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

...Մեր ընկերությունն Աստծո հետ
վերականգնվեց Նրա Որդու մահով...
— Յոհաննեսի 5.10, NLT

Այն, ինչին հարում և վստահում է
ձեր սիրտը, ձեր իրական Աստվածն է:
— Մարտին Լյութեր

Ընկերներ: Բոլորս ընկերներ ունենք և սիրում ենք նրանց: Մանկությանս տարիներին երկու շատ մտերիմ ընկեր ունեի՝ Դենին և Գլենը: Նրանց հետ անցկացնում էի գրեթե ամբողջ ազատ ժամանակս: Մենք սպորտային խաղեր էինք խաղում, հեծանիվ էինք քշում, զբոսնում էինք բնության գրկում, տարբեր խաղեր էինք հորինում, քաղաք էինք գնում կամ, պարզապես, նստած զրուցում էինք: Մեր զրույցն ընթանում էր մեզ համար կարևոր թեմաների շուրջ: Մենք խոսում էինք այլ ընկերների, աղջիկների, դասերի, միջոցառումների, սպորտի, մեր ապագա մասնագիտությունների ընտրության և անթիվ այլ թեմաների մասին: Մեր ընկերությունը մեծ մասամբ առողջ էր: Մենք խրախուսում էինք միմյանց՝ լինել ավելի լավ, ավելի ուժեղ, ավելի իմաստուն, և հասնել այն ներուժին, որը մեր մեջ էր: Մենք պաշտպանում էինք իրար, շնորհներ էինք անում մեկս մյուսին և օգնում էինք դժվար իրավիճակներում: Մի խոսքով, ամենից շատ ես ցանկանում էի ժամանակ անցկացնել նրանց հետ:

Իսկ դո՞ւք: Հիշե՞ք ձեր անցած տարիների ընկերներին: Հարցրե՞ք ինքներդ ձեզ, թե ինչից է բաղկացած ընկերությունը: Համոզված եմ՝ դուք կնշեք միասին հաճույքով ժամանակ անցկացնելը, իրար հետ շփվելը, իրար հասկանալը և ընդհանուր հետաքրքրություններ ունենալը: Մերը, վստահությունը, հարգանքը, հումորը և փոխադարձ համակրանքը նույնպես մեծ նշանակություն ունեն: Ընկերությունը կարող է ունենալ

ավելի շատ բաղկացուցիչ մասեր, ինչը կախված է մարդկանց անհատականությունից. այնուամենայնիվ, բոլորիս համար ամենակարևորն այն է, որ մենք հաճույքով ենք ժամանակ անցկացնում միասին:

Աստծո խոսքը դրականորեն է խոսում ընկերության մասին: Իմ ամենասիրելի աստվածաշնչյան խոսքերից մեկը հետևյալն է. «Ինչպես որ անուշաբույր քսուքները զգացմունքային բերկրանք են պատճառում, այնպես էլ հաճելի ընկերությունը թարմացնում է անձը» (Առակաց 27.9, MSG): Մենք ստեղծված չենք միայնակ սավառնելու համար. ընկերությունն առույգություն է հաղորդում մեզ: Այն գլխավոր տարրն էր, որը բացակայում էր Աստծո սկզբնական ստեղծագործության մեջ: Նա ասաց. «Լավ չէ, որ մարդը մենակ լինի» (Ծննդոց 2.18): Մենք ստեղծված ենք Նրա պատկերով, այդ պատճառով էլ ձգտում ենք ընկերությանը և վայելում ենք այն:

Այնուամենայնիվ, գոյություն ունի սրա հակառակ կողմը: Հիսուսը, Հակոբոսը և Հովհաննեսը *բացասաբար* են խոսում ընկերության մի տեսակի մասին: Կրկին լսեք առաքյալի խոսքերը. «Շնացողներ: Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ, ձեզ դարձնում է Աստծո թշնամին: Կրկնում եմ՝ եթե ուզում եք լինել այս աշխարհի ընկերը, դուք դառնում եք Աստծո թշնամին» (Հակոբոս 4.4, NLT): Նրա խոսքը ոչ միայն բացասական երանգ ունի, այլև շեշտակի, կտրուկ և խիստ է: Այդ դեպքում, հարցնենք հետևյալը. որո՞նք են այս աշխարհի հետ հարաբերություններ սկսելու ցուցանիշները:

Դասական սիրավեպ

Նախորդ գլխում իմացանք, որ «*Ֆիլիա*» բառը սահմանվում է «ընկեր լինել» կամ «ընկերանալ» բառերով և կրում է «սիրելու կամ սիրված լինելու» գաղափարը: «*Աստվածաշնչյան բառերի հանրագիտարանը*» շարունակում է. «Հունական մշակույթում ընկերության գաղափարը լավ զարգացած էր: «Ֆիլիա» բառը... իր լայն իմաստով նշանակում էր «ընկեր» կամ «ծանոթ», իսկ ավելի նեղ իմաստով՝ անձնական և խորը սիրային կապ»: Ըստ էության, Հակոբոսն օգտագործում է այս բառը լայն իմաստով և խոսում է ընկերության մասին: Բոլորս գիտենք, որ գոյություն ունի ընկերության երեք մակարդակ, և այն, ինչի մասին խոսում է Հակոբոսը, ընդգրկում է երեքն էլ: Հետևաբար, ընկերության բոլոր տեսակներն անմիջականորեն կապված են անհավատարմության հետ:

Աստծո դեմ շնություն գործելը շատ չի տարբերվում ամուսնացած տղամարդու դավաճանության բնորոշ սցենարից: Այնպես որ, դիտար-

կենք այն քայլերը, որոնք տանում են սովորական սիրավեպի: Որպես կանոն՝ ամուսինը և նրա սիրուհին չեն հայտնվում անկողնում իրենց առաջին հանդիպման ժամանակ: Կա սիրահետման ընթացք, որը կարող է լինել միտումնավոր կամ ոչ միտումնավոր:

Ամեն ինչ սկսվում է պարզապես հանդիպելուց և միմյանց հետ *ժանոթանալուց*: Նրանց հանդիպումը կարող է տեղի ունենալ սոցիալական ցանցերի միջոցով կամ սովորական պայմաններում: Կայծը բռնկվում է ծանոթության պահին: Հաճախ տղամարդու հետաքրքրության պատճառը՝ մտերմության պակասն է իր կնոջ հետ: Ավելի հազվադեպ՝ նա պարզապես ձգտում է նոր հարաբերությունների: Սկզբնական շրջանում նրանց շփումն անվնաս է թվում, բայց ամեն հանդիպման ժամանակ նրանց հետաքրքրությունը միմյանց նկատմամբ ավելանում է: Ի վերջո, նրանք փոխանակում են բջջային հեռախոսահամարները և էլեկտրոնային հասցեները:

Հրապուրանքը նրանց միջև շարունակում է ավելանալ, երբ նրանք շփվում են՝ միմյանց ուղարկելով տեքստային հաղորդագրություններ, էլեկտրոնային նամակներ, հեռախոսազանգեր կամ ուղղակի «պատահաբար հանդիպելով»: Նրանց հաղորդակցման մակարդակն ավելի է խորանում: Նրանք բուռն կերպով ցանկանում են իրար, բայց նրանցից ոչ մեկը չի խոստովանում դա: Նրանք ներքին թրթիռ են զգում իրենց փոխհարաբերությունները զարգացնելիս, և այս անխոս հրապուրանքն էլ ավելի հազեցած է դարձնում այդ ընթացքը: Այս փուլում նրանք արդեն իսկ անցել են ընկերության թույլատրելի սահմանները:

Ի վերջո, նրանք ծրագրում են ևս մեկ քայլ անել՝ միասին սուրճ խմել, ծաշել կամ հանդիպել որևէ մեկուսի վայրում: Սովորաբար, այս ժամանակ է, որ նրանց զգացմունքները միմյանց հանդեպ սկսում են արտահայտվել:

Նա արդեն շարունակ մտածում է այդ կնոջ մասին և նրա հետ լինելու տենչանք է զգում: Նա երևակայում ու ծրագրում է, թե ինչպես կարող են հանդիպել, որ իր կինը և ընկերները չիմանան: Նրա սիրտն այլևս չի ձգտում իր կնոջը, այլ՝ մյուս կնոջը: Երբ նա իր կնոջ հետ է, կարծես այլ վայրում լինի, որովհետև նրա միտքը և երևակայությունն իր սիրուհու հետ են: Միայն ժամանակի հարց է, թե ե՞րբ նրանք անկողնում կհայտնվեն:

Ինչպե՞ս սկսվեց ամեն ինչ: Ամեն ինչ սկիզբ առավ ծանոթության փուլում ոչ պատշաճ մտքերից և զրույցներից: Ո՞ր պահին դա շնություն դարձավ: Կարելի՞ է ասել՝ այն պահին, երբ նրանք փոխանցեցին իրենց տվյալները: Թե՛ երբ նրանք գաղտնի հանդիպեցին: Թե՛ երբ նա

առաջին անգամ հավեց այդ կնոջը: Միգուցե նրանց առաջին համբույրի ժամանակ: Թե՞ դա տեղի ունեցավ, երբ նրանք մերկացան և սեռական կապի մեջ մտան:

Իրականում, դա տեղի ունեցավ այս ամենից առաջ: Հիսուսը լույս է սփռում այս հարցի վրա՝ պնդելով. «Բայց մի՛ մտածեք, որ դուք պահպանեցիք ձեր առաքինությունը՝ պարզապես անկողին չմտնելով: Ձեր սիրտը կարող է ապականվել կրքով նույնիսկ ավելի արագ, քան ձեր մարմինը» (Մատթեոս 5.28, MSG): Սիրտը այն է, որտեղ մենք ապրում ենք. արտաքուստ արվող գործերը պարզապես հետևում են մեր սրտի վիճակին: Շնորհունն սկիզբ առավ, երբ այդ տղամարդու զգացմունքներն ուղղվեցին դեպի այդ կինը, այսինքն՝ *ժանտթության* փուլի ինչ-որ հատվածում:

Ընկերություն այս աշխարհի հետ

Այս աշխարհը նմանատիպ կերպով հրապուրում է մեզ՝ հեռացնելով մեր «առաջին սիրուց»: Այն սկսում է հետաքրքրություն առաջացնել մեր մեջ: Այն կարող է հրավեր ուղղել մեզ հումորի, հաճույքի, հարմարավետության, ոգեշնչման, գաղտնի սիրային հարաբերության կամ հաջողության տեսքով. մի խոսքով՝ ցանկացած բանով, ինչը կարող է գրավիչ լինել մեզ համար: Ինչպես վերևում բերված օրինակում, ծանոթության փուլը կարող է տեղի ունենալ ինտերնետային կայքերի, հեռուստատեսության կամ անձնական հանդիպման միջոցով: Հաճախ սա տեղի է ունենում, քանի որ մենք բավականաչափ մտերիմ չենք Աստծո հետ: Մենք կորցրել ենք Նրա ընկերության թրթիռը մեզանում: Մեր շփման ժամանակը Նրա հետ չոր և ձանձրալի է: Եվ ընկերական շփման կարիքն այլ տեղեր է տանում մեզ:

Այս աշխարհի հրապուրանքն աճում է՝ զուգահեռ այն ժամանակին, որը տրամադրում ենք դրան: Շատ չանցած՝ մեր մտքերը և զգացմունքները տարվում են այս աշխարհով: Եթե ուսումնասիրենք Պողոսի խոսքերը՝ ուղղված երկու տարբեր եկեղեցիների, և ուշադրություն դարձնենք նրա զգուշացումներին, մենք պաշտպանված կլինենք այս աշխարհի հետ շնությունից:

«Արդ, եթե Քրիստոսի հետ հարություն առաք, ապա *խնդրե՛ք* վերինները, որտեղ Քրիստոսն է նստում Աստծո աջ կողմը: Վերինները *մտածե՛ք*, ոչ թե երկրի վրայինները» (Կողոսացիների 3.1,2):

Դուք ուշադրությամբ կարդացիք այս հատվածը: Եթե ոչ, կրկին կարդացեք այս խոսքերը և հատկապես ուշադրություն դարձրեք

«խնդրել» (կամ՝ «փնտրել») և «մտածել» բառերին: Մենք մտածում ենք այն բաների մասին, որոնք խնդրում կամ փնտրում ենք: Մինչ շարունակելը, ուշադրությամբ կարդանք Պողոսի խոսքերը՝ ուղղված հռոմեացիներին: Կրկին ուշադրություն դարձրեք «մտածել» բառին:

«Որովհետև մարմնավոր լինողները մարմնի բաներն են մտածում, իսկ հոգևոր լինողները՝ հոգու բաները [մտածում]: Որովհետև մարմնի խորհուրդը մահ է, և հոգու խորհուրդը՝ կյանք և խաղաղություն: Որովհետև մարմնի խորհուրդն Աստծո դեմ թշնամություն է...» (Յոնանեացիների 8.5-7):

Ուշագրավ է, որ այս խոսքում օգտագործվում է «թշնամություն» բառը՝ նույն հունարեն բառը, որը Յակոբոս 4.4-ում է՝ «էխթրա»-ն: «Սթրոնգի բառարանը» սահմանում է այն որպես «թշնամանք... ընդդիմության պատճառ»: Պողոսը ևս մեկ անգամ խոսք է ուղղում այն հավատացյալին, ով կապ է հաստատում աշխարհի հետ:

Այն, որ ես շնություն չեմ գործում Լիզայի նկատմամբ, միայն նրա սիրո պատճառով չէ: Ես նույնպես չեմ ցանկանում կրել նրա բարկությունը: Եթե անեի դա, ես կդառնայի նրա թշնամության առարկան: Ես չեմ ցանկանում, որ իմ սիրելի անձնավորությունը թշնամաբար տրամադրվի իմ հանդեպ, բարկանա ինձ վրա և հիասթափվի ինձնից: Այնուամենայնիվ, դա ոչինչ է՝ համեմատած այն բանի հետ, ինչը նկատի ունեն Պողոսն ու Յակոբոսը, որովհետև ոչ մի ողջամիտ քրիստոնյա չի ցանկանա կրել Աստծո թշնամությունը (հիշե՛ք, որ Յակոբոսը և Պողոսն ուղղում էին իրենց խոսքը հավատացյալներին):

Յովնանը կրեց Աստծո թշնամությունը և հայտնվեց մեծ ձկան փսխածի մեջ: Սամսոնը կրեց այն և հայտնվեց ստրկության մեջ, ինչպես նաև՝ կորցրեց տեսողությունը: Յեղիմ կրեց այն և մահացավ նույն օրը, երբ իր որդիների կյանքը երկրի վրա ավարտվեց: Կան այլ օրինակներ՝ Սավուրը, Բաղաամը, Յովաբը, Աղեքսանդրոս դարբինը և շատ այլ մարդիկ: Աստծուն բարկացնելը՝ վատ գաղափար է:

Եթե ցանկանում եք ավելի շատ օրինակներ, կարող եք բացել Նոր կտակարանը և կարդալ Յիսուսի խոսքերը՝ Հայտնություն գրքի եկեղեցիներին: Յիսուսն սպառնաց այն եկեղեցիներից մեկին, որը փոխգիշման էր գնացել Իր հետ շփման բնագավառում, հեռացնել նրանց ծրագակալը՝ նրանց լույսը (տե՛ս Հայտն. 2.5): Մեկ այլ եկեղեցու նախապես զգուշացվեց, որ Աստված «կպատերազմի նրանց հետ» (տե՛ս Հայտն. 2.16): Աստված մեկ այլ եկեղեցու սպառնաց «հիվանդության մահճով» և «մեծ պատուհասով» (տե՛ս Հայտն. 2.22): Մյուսն զգուշացում ստա-

ցավ, որ Աստված «կգա նրանց վրա գողի պես» (տե՛ս Զայտն. 3.3): Նա ասաց ևս մեկ եկեղեցու, որ «կփսխի» նրանց Իր բերանից: (տե՛ս Զայտն. 3.16): Այնպես որ, հազիվ թե ցանկանանք բախվել Աստծո թշնամությանը:

Հռոմեացիների 8.5 խոսքում ուշադրություն դարձրեք *«մտածում են»* (անգլերենում՝ *«ուղղում են իրենց միտքը»*) արտահայտությանը: Դիտարկենք մի օրինակով, թե ինչ է նշանակում՝ ուղղել միտքն ինչ-որ բանի վրա:

Պատկերացրեք, որ ձմեռ է, և ձեր տան ջերմակարգավորիչը *կարգավորված է 21°C* ջերմաստիճանի վրա: Դրսում ջերմաստիճանը -20°C է: Ձեր ընտանիքի անդամներից մեկը շտապելով տնից դուրս է գալիս և լավ չի փակում դուռը: Նա նստում է մեքենան և գնում է, բայց մի քանի րոպե անց քամին լայն բացում է դուռը: Դուք տան մյուս մասում եք և կարճ ժամանակ անց զգում եք, որ ջերմաստիճանը շատ է նվազել: Դուք սկսում եք փնտրել դրա պատճառը և տեսնում եք, որ տան դրսի դուռը լայն բաց է, և տանը սառը օդ է լցվել: Անմիջապես փակում եք դուռը, բայց ձեր տան ջերմաստիճանն արդեն 15°C է: Եվ ի՞նչ է տեղի ունենում այդ պահին: Հենց որ ջերմաստիճանը նվազում է, ջերմակարգավորիչը միանալու ազդանշան է ուղարկում տաքացուցիչին, և այն աշխատում է, մինչև որ տան *կարգավորված* ջերմաստիճանը վերականգնվում է: Ձեր կողմից առանց որևէ միջամտության՝ ջերմաստիճանը կրկին դառնում է 21°C :

Վերադառնանք շնության գործող տղամարդու օրինակին: Տարիներ առաջ, երբ նա սիրահետում էր իր ապագա կնոջը, նրա զգացմունքները և ցանկություններն *ուղղված էին* այդ աղջկան: Այդ տղամարդը երազում էր նրա կողքին լինել, մտերմանալ նրա հետ, երևակայում էր, թե ինչպես էր ամուսնության առաջարկություն անելու նրան: Այդ աղջիկն իր մտքում էր, երբ նա արթնանում էր, երբ աշխատավայրում էր, երբ մեքենայով խցանումների մեջ էր, և հատկապես՝ գիշերը, երբ պառկում էր քնելու: Պարզ ասած՝ երբ այդ տղամարդու միտքը չէր գործում ինչ-որ ուղղությամբ, այն վերադառնում էր այնտեղ, որտեղ *ուղղված էր*՝ այդ աղջկան:

Նրա ընկերները հաճախակի ցրվածություն էին նկատում նրա մոտ, նույնիսկ հարցնում էին. «Ի՞նչ է կատարվում քեզ հետ»: Նա շփոթվում էր և անփութորեն ասում. «Ուղղակի շատ բաների մասին եմ մտածում»: Նա չէր ցանկանում ձիշտն ասել: Նա չէր ուզում վիրավորել իր ընկերներին՝ ցույց տալով, որ նրանց հետ շփման ամբողջ ընթացքում նա մտածում էր այդ աղջկա մասին: Նրա մտքերն *ուղղվածություն ունեին*:

Այնուամենայնիվ, տարիներ անց՝ նշանադրությունից, հարսանիքից և մի քանի երեխա ունենալուց հետո, նա արդեն շնության մեջ է: Նա անբարո կապի մեջ է մտել օտար կնոջ հետ: Նրա մտքում գործում էր միևնույն հաջորդականությունը: Նա մշտապես մտածում էր իր սիրուհու մասին: Երբ կարիք չէր ունենում մտածելու ինչ-որ բանի մասին, նրա մտքերը վերադառնում էին իրենց *«կարգավորումներին»*: Նույնիսկ երբ նա կնոջ հետ էր, նրա զգացմունքներն *ուղղված* էին իր սիրուհուն: Նա ձգտում և փափագում էր նրան, որովհետև նրա միտքն *ուղղված* էր այդ կնոջը: Ինչպես որ ջերմակարգավորիչն ավտոմատ կերպով վերականգնում է տան ջերմաստիճանը՝ ըստ կարգավորմաների, այնպես էլ միտքն ամեն անգամ վերադառնում է իր *կարգավորումներին կամ ուղղվածությանը*:

Ինչ կապ ունի սա հավատացյալի հետ: Երբ նոր ենք փրկվում, մենք համակված ենք սիրով: Մենք մտածում ենք Հիսուսի մասին առավոտյան արթնանալիս, նախաճաշին, մեքենայի մեջ, աշխատավայրում, ճաշի ժամին, աշխատանքից հետո, երբ մենակ ենք, և հատկապես՝ գիշերը, երբ պառկած ենք անկողնում: Մենք անհամբեր սպասում ենք մեր շփման ժամերին Նրա Հոգու հետ: Մենք մեծ ոգեշնչմամբ ակնկալում ենք, որ մասնակցելու ենք հաջորդ հավաքույթին, պատմելու ենք մարդկանց Հիսուսի մասին կամ խոսելու ենք քրիստոնյաներից մեկի հետ Աստծո ծանապարհների մասին: Այլ կերպ ասած՝ մեր մտքերը կլանված են Նրանով: Մեր զգացմունքներն ուղղված են Նրան:

Ժամանակն անցնում է: Մենք սովոր էինք սպասումով մասնակցել հավաքույթներին, վերապրել Նրա ներկայությունը, երկրպագել Նրան և լսել Նրա խոսքը: Իսկ հիմա մենք ֆիզիկապես այդտեղ ենք, բայց իրականում ներկա չենք: Մեր մտքերը հեշտորեն շեղվում են դեպի մեր սիրելի սպորտային թիմը, զեղչերը՝ մոտակա հանրախանութում, սպասվող կարևոր ամսաթիվը, որը մոտենում է, այն գործարքը, որը կարող է չկայանալ, այն երեկոյթը, որին հրավիրված ենք, և այլն: Ինչ պատահեց: Մեր մտքերն իսկապես՝ շեղվում են, թե՞ գնում են այնտեղ, որտեղ *ուղղված* են՝ դեպի այն, ինչին ջանասիրաբար *ձգտում* ենք: Հնարավոր է, որ մենք անգիտակցաբար սիրելանների ենք ձեռք բերել:

Իմ պատմությունը

Թույլ տվեք պատմել իմ պատմությունը: Երբ երկրորդ կուրսի ուսանող էի «Փոլոյոյ» համալսարանում, մեր ուսանողական հանրակացարանի տղաներից երկուսն իմ սենյակ եկան և պատմեցին «Ճամբարային հավաքույթներին» քարոզվող Չորս հոգևոր օրենքների մասին: Իմ

հոգևոր աչքերը բացվեցին, և կյանքս նվիրեցի Յիսուսին: Ես անմիջապես լցվեցի Աստծո հանդեպ կրակով ու ջերմեռանդությամբ: Նա այնքան իրական էր: Ես խորապես սիրահարվեցի Յիսուսին և անասելի կերպով շնորհակալ էի այն ազատության համար, որը Նա տվել էր ինձ: Նրա մասին պատմում էի նրանց, ովքեր ուզում էին լսել, և նույնիսկ նրանց, ովքեր չէին ուզում: Մեր տղաները փորձում էին հեռացնել ինձ հանրակացարանից, որովհետև ես խոսում էի Յիսուսի մասին մյուս ուսանողների հետ մեր բոլոր երեկույթների ժամանակ:

Մեր կողքին գտնվող աղջիկների հանրակացարանում կային մի քանի ուսանողուհիներ, ում մենք «փոքրիկ քույրիկներ» էինք անվանում: Նրանցից երկուսը իսկական քույրեր էին, և միասին նրանք կենակցել էին վաթսույն տղաներից բաղկացած հանրակացարանի ավելի քան կեսի հետ: Եթե տղաներից ինչ-որ մեկը սեռական ցանկություն ուներ, նա գիտեր, որ այդ աղջիկները հեշտ և արագ տարբերակ էին:

Ես և մեկ այլ տղա նրանցից մեկին առաջնորդեցինք ընդունել Յիսուսին, և քսանչորս ժամվա ընթացքում իր քույրն էլ կյանքը նվիրեց Յիսուսին: Մինչև նրանց հետ կհասցնեինք խոսել անբարո վարքի մասին, նրանք դադարեցին սեռական կապեր ունենալ հանրակացարանի տղաների հետ: Փոխարենը, նրանք սկսեցին վկայել այն տղաներին, որոնց հետ կենակցում էին: Սա շատ բարկացրեց մեր հանրակացարանի տղաներին: Նրանք համարում էին ինձ այդ խմբի ղեկավարը, որովհետև այդ ժամանակ ես արդեն Աստվածաշնչի ուսումնասիրության դասեր էի անցկացնում ամբողջ համալսարանի համար հենց մեր հանրակացարանում:

Ի վերջո, մեր ուսանողական հանրակացարանի փոխնախագահը եկավ իմ սենյակ և ասաց. «Ձո՛ն, մենք կհեռացնե՛նք քեզ»: Ապա շարունակեց (և սա հենց նրա խոսքերն են). «Ձո՛ն, ինչո՞ւ դու այս հանրակացարանի մնացած քրիստոնյաների նման չես»: Նա խոսում էր այլ տղաների մասին, ովքեր կիրակի օրերին եկեղեցի էին հաճախում, բայց պոռնկանում էին իրենց զուգընկերուհիների հետ, հարբում էին մեր երեկույթներին և մասնակցում էին մյուս անվայել արարքներին, որոնք ընդունված էին մեր հանրակացարանում:

Այդ շրջանը հեշտ չէր ինձ համար, բայց թեև մեր ուսանողական հանրակացարանի փոխնախագահը խոստացավ վճռել ինձ, դա այդպես էլ տեղի չունեցավ: Յետաքրքիր է, որ նրանք չէին կարողանում բավականաչափ քվեներ հավաքել՝ ինձ հեռացնելու համար: Մենք բավականին շատ ուսանողների առաջնորդել էինք դեպի Քրիստոսը, և նրանք դարձել էին իմ կողմնակիցները:

Հիսուսին հանդիպելուց և սիրահարվելուց մի քանի ամիս անց սկսվեց ամերիկյան ֆուտբոլի խաղաշրջանը: Ես արդեն նախավերջին կուրսում էի և, ինչպես նախորդ տարիներին, կարող էի ներկա լինել մեր խաղաշրջանի բոլոր խաղերին: Նախորդ երկու տարում նույնիսկ մեկ խաղ բաց չէի թողել, բայց այժմ այնքա՛ն ոգեշնչված էի Հիսուսով, որ օգտագործեցի այդ ժամանակը Աստվածաշունչն ուսումնասիրելու համար: Մեր տղաների հանրակացարանում շատ հանգիստ էր, որովհետև բոլորը գնում էին խաղերը դիտելու: Դա հրաշալի հնարավորություն էր Աստծո հետ շփման և աղոթքի համար: Ոչ ոք չէր ասել ինձ. «Դու չպետք է ամերիկյան ֆուտբոլի խաղերի գնաս», և իմ մտքով նույնիսկ չէր անցնում, որ խաղերի գնալը սխալ է: Հաջորդ տարի ես ներկա էի շատ խաղերի: Այդ տարի չգնացի խաղերը դիտելու, քանի որ ինձ համար դա Աստծո հետ լինելու հնարավորություն էր: Ես ջերմեռանդորեն ցանկանում էի ծանաչել Նրան: Իմ միտքն ուղղված էր դեպի վերինները:

Երբ ավարտեցի համալսարանը, մեր հանրակացարանի տղաներից շատերը, ինչպես նաև բազմաթիվ այլ ուսանողներ, արդեն ծանաչում էին Տիրոջը: Նրանց թվում էր Լիզան՝ իմ ապագա կինը, ով այդ ժամանակ համարվում էր համալսարանի վատահամբավ աղջիկներից մեկը: Իմ ջերմեռանդ սերը Հիսուսի հանդեպ վարակիչ էր. այնպես որ, մարդիկ կա՛մ սիրում էին, կա՛մ ատում էին ինձ: Չկար միջին վերաբերմունք. եթե դուք հանդիպեիք Ջոն Բիվերին, շատ շուտով կիմանայիք, թե որտեղ էին ուղղված նրա սիրտն ու միտքը, որովհետև սերն Աստծո հանդեպ պարզապես հորդում էր ինձնից: Ես նման էի որևէ սպորտային թմի խանդավառ երկրպագուի կա՛մ՝ մինչև ականջները ինչ-որ աղջկա սիրահարված տղայի:

Ես տեղափոխվեցի Տեխաս նահանգի Դալլաս քաղաքը: Վեց ամիս անց Լիզան նույնպես Դալլաս տեղափոխվեց, և շուտով մենք ամուսնացանք: Ես աշխատում էի «Ռոքվել Ինտերնեյշնլ» ընկերությունում՝ որպես ինժեներ: Եվս մեկ անգամ ես բախվեցի այնպիսի մարդկանց, որոնց դուր չէր գալիս իմ ավյունը Հիսուսի հանդեպ: Նրանք մտածում էին, որ ես չափից շատ էի արտահայտում համոզմունքներս, և չէին հասկանում, թե ինչու չէի մասնակցում նրանց անբարո կատակներին, անպարկեշտ խոսակցություններին և աշխատանքից հետո շփմանը՝ ոգեկից խմիչքի շուրջ: Այնուամենայնիվ, մասնագիտական միջավայրում մարդիկ ավելի էին հանդուրժում իմ հայացքները և վարքը, քան համալսարանի հանրակացարանում:

Քսաներկու ամիս անց ինձ խնդրեցին միանալ մեր եկեղեցու աշխատակազմին: Ամերիկայում այն ամենամեծ և ամենահայտնի եկեղե-

ցիներից էր և ազդեցություն ուներ ամբողջ աշխարհում: Եկեղեցու աշխատակազմը բաղկացած էր ավելի քան չորս հարյուր մարդուց, ովքեր զբաղված էին բազմաթիվ ծառայություններով: Այն, որ ինձ խնդրեցին միանալ այդ թիմին, գրեթե անիրական էր ինձ համար: Միակ բանը, որը կարող էր դրանից ավելի լավ լինել ինձ համար, Երկինք գնալն էր: Ահա և վերջ իմ հալածանքներին, որովհետև այժմ աշխատելու էի քրիստոնյաների հետ: Ես մեկընդմիջտ ազատվելու էի այն լարված պայքարներից, որոնք տեղի էին ունենում համալսարանի հանրակացարանում և «Ռոքվել ինտերնեյշնլ» ընկերությունում:

Այդ ժամանակ Դալլասի Կոլբոյները Ֆուտբոլի ազգային լիգայի լավագույն թիմերից մեկն էր: Ես նրանց երկրպագուն չէի, քանի որ մեծացել էի Միչիգան նահանգում, բայց ամեն երկուշաբթի լսում էի, որ եկեղեցու աշխատողները խոսում էին Կոլբոյների մասին: Նրանք հավաքվում էին սուրճի սեղանի շուրջ և բուռն կերպով քննարկում նախորդ օրվա խաղը, լավագույն մարզիկներին, թիմի հաղթանակը կամ պարտությունը:

Ելնելով հետաքրքրությունից՝ ես սկսեցի դիտել Կոլբոյներին հեռուստացույցով: Ամեն ինչ սկսվեց մեկ կամ երկու խաղակես դիտելուց: Կոլբոյներն ինձ դուր եկան, քանի որ նրանց խաղը շատ տպավորիչ էր: Իմ դիտումներն ունեին ևս մեկ առավելություն. այժմ ես կարող էի լուրջ կեցվածք ընդունել և քննարկել խաղերը եկեղեցու գրասենյակի այլ աշխատողների հետ:

Սկզբում ամեն ինչ անմեղ ու անվնաս էր թվում: Բայց որոշ ժամանակ անց իմ հետաքրքրությունը Կոլբոյների հանդեպ ավելացավ, և ես սկսեցի ամբողջությամբ դիտել խաղերը: Ոգևորությամբ խոսում էի հեռուստացույցի հետ, գովում խաղացողներին, իսկ երբեմն՝ բղավում նրանց վրա: Ի վերջո, ամեն ինչ այն աստիճան լուրջ դարձավ, որ ես բաց չէի թողնում ոչ մի խաղ, և ոչ էլ՝ որևէ հատված խաղերից: Նույնիսկ խաղաշրջանների միջև մեր աշխատողները և ես շարունակում էինք խոսել այն մասին, թե ինչ անձնակազմով են Կոլբոյները հանդես գալու հաջորդ տարի, և թե ինչպիսին է լինելու նրանց խաղը: Ես հաճախ էի մտածում այդ թիմի մասին, նույնիսկ երբ չէի խոսում նրանց մասին մեր աշխատակիցների հետ: Ես արդեն լիարժեք երկրպագու էի:

Իմ ոգևորությունը սահման չունեի, երբ սկսվեց հաջորդ խաղաշրջանը: Ամեն կիրակի՝ ծառայությունից հետո, ես տուն էի շտապում և միացնում հեռուստացույցը, նույնիսկ՝ առանց հագուստս փոխելու: Ես անհարմար հագուստով էի՝ կոստյումով և փողկապով, և լոգասենյակ գնալու կարիք ունեի, սակայն չէի ուզում բաց թողնել խաղը նույնիսկ մեկ վայրկյանով:

Խաղի կեսին՝ ընդմիջման ժամանակ, ես իմ սենյակ էի գնում և փոխում էի հագուստս: Եթե Լիզան օգնության կարիք էր ունենում ինչ-որ բանում, նա կարող էր մոռանալ այդ մասին. «Սիրելի՛ս, Կովբոյներն են խաղում»: Մենք ձաշում էինք խաղի կեսին, կամ, նույնիսկ, խաղից հետո, բայց խաղի ընթացքում՝ երբեք:

Ես արդեն գիտեի Կովբոյների բոլոր վիճակագրական տվյալները: Ուշադրությամբ ուսումնասիրում էի դրանք և շարունակ մտածում, թե ինչպես Կովբոյները կարող էին ավելի լավ խաղալ: Ես արդեն վարում էի բոլոր խոսակցությունները խաղերի մասին աշխատավայրում: Ես պարծենում էի մարզիկների ցուցաբերած խաղով: Այս խոսակցությունները տեղի չէին ունենում միայն երկուշաբթի օրը, այլ՝ ամբողջ շաբաթվա ընթացքում: Եկեղեցում կային մարդիկ, ովքեր անվճար տոմսեր ունեին, և ես մեծ պատրաստակամությամբ ընդունում էի խաղերի գնալու բոլոր հրավերները:

Եկեք անցնենք հաջորդ խաղաշրջանին՝ մեկ տարի անց: Խաղերը սկսվելուց կարճ ժամանակ առաջ ես մի աղոթք արեցի, որը, իմ կարծիքով, շատ պարզ և անկարևոր էր: Չէի պատկերացնում, որ այն փոխելու էր կյանքս: Իմ աղոթքն այսպիսին էր. «Տե՛ր, խնդրում եմ, մաքրի՛ր իմ սիրտը: Ես ուզում եմ լինել սուրբ և առանձնացված Քեզ համար. այնպես որ, եթե իմ սրտում կա այնպիսի բան, ինչը հաճելի չէ Քեզ, բացահայտի՛ր և հեռացրո՛ւ»: Ես չէի պատկերացնում, թե ինչ խորություն ուներ այս աղոթքը, և թե ինչ այն կբացահայտեր ինձանում:

Այդ տարվա խաղաշրջանը մոտենում էր ավարտին. եզրափակիչ խաղերին շատ քիչ ժամանակ էր մնացել: Ես դիտում էի որոշիչ խաղերից մեկը՝ Կովբոյներն ընդդեմ Ֆիլադելֆիայի Արծիվների: Չաղթողը մասնակցելու էր եզրափակիչ խաղերին, իսկ պարտվողը դուրս էր մնալու: Ես քարացել էի հեռուստացույցի առջև: Ես նույնիսկ նստած չէի բազմոցին, այլ կանգնած էի: Խաղը շատ լարված էր՝ նստելու համար: Վերջին խաղակեսն էր, և խաղի ավարտին ընդամենը ութ րոպե էր մնացել: Կովբոյները պարտվում էին չորս միավորով, երբ թիմն առաջ շարժվեց նրանց հանրահայտ հարձակվողի առաջնորդությամբ: Ես ետ ու առաջ էի քայլում հարձակումների միջև և զայրույթից բղավում էի, երբ խաղը վատ էր ընթանում, և ի սրտե ուրախանում էի, երբ լավ ընթացք էր ունենում: Խաղի անորոշ ավարտը մի տեսակ աշխուժություն էր առաջացնում:

Հանկարծ, առանց որևէ նախազգուշացման, Աստծո Չոգին աղոթքի դրդեց ինձ: Նրա անսպասելի ներքին մղումը լիովին համակեց ինձ. «Աղոթի՛ր, աղոթի՛ր, աղոթի՛ր»: Դա բեռ էր՝ ուժգին և ծանր զգա-

ցում սրտիս խորքում: Ես գիտեի, որ այդպիսի մղում առաջանում է, երբ Աստծո Յոզիմ ցանկանում է, որ առանձնանամ և աղոթեմ:

Լիզան հեռու էր այդ սենյակից. այնպես որ, ես բարձրաձայն ասացի. «Տե՛ր, խաղի ավարտին ընդամենը ութ թուղթ է մնացել: Ես կաղոթեմ, երբ այն ավարտվի»: Չնայած դրան՝ մղումը չդադարեց և չթուլացավ:

Անցավ մի քանի թուղթ: Դեռ ցանկանալով թեթևություն ստանալ՝ ես բացականչեցի. «Տե՛ր, ես հինգ ժամ կաղոթեմ, երբ խաղն ավարտվի: Ընդամենը վեց թուղթ է մնացել»:

Գնդակը Կովբոյների մոտ էր: Ես գիտեի, որ նրանք հաղթելու էին այդ կարևոր խաղը: Բայց և այնպես, աղոթքի մղումը չէր թուլանում. այն ավելի էր ուժգնանում: Ես հուսահատության զգացում ունեցա: Չէի ուզում թողնել խաղը: Եվ բարձրաձայն ասացի. «Տե՛ր, ես կաղոթեմ մինչև օրվա վերջը, նույնիսկ՝ ամբողջ գիշեր, եթե ցանկանում ես»:

Ես մինչև վերջ դիտեցի խաղը: Կովբոյները հաղթեցին: Դահլիճը պարզապես պայթում էր խանդավառությունից: Ես միացա մարդկանց ուրախությանը: Այնուամենայնիվ, խոստում էի տվել Աստծուն: Ես անմիջապես անջատեցի հեռուստացույցը և բարձրացա երկրորդ հարկ՝ իմ աշխատասենյակը, փակեցի դուռը և ծնկի եկա գորգի վրա՝ աղոթելու համար: Բայց աղոթքի մղումն այլևս չկար: Այլևս աղոթքի բեռ չկար: Նույնիսկ թեթև զգացում չկար. ես ոչինչ չէի զգում:

Փորձեցի բորբոքել այդ զգացումը: Ես փորձեցի աղոթել, բայց իմ խոսքերը չոր ու միապաղաղ էին: Շատ ժամանակ չպահանջվեց, մինչև որ հասկացա, թե ինչ տեղի ունեցավ: Ես գերադասեցի Կովբոյների խաղը Աստծո խնդրանքից: Ես խոնարհվեցի՝ դիպցնելով երեսս գորգին, և հառաչեցի. «Աստվա՛ծ, եթե ինչ-որ մեկը հարցնե՛ր ինձ. «Ո՞վ է ավելի կարևոր քո կյանքում, Աստվա՛ծ, թե՞ Դավլասի Կովբոյները», ես անվարան կպատասխանեի. «Իհարկե Աստված»: Բայց հենց նոր ես ցույց տվեցի, թե ո՞վ է ավելի կարևոր: Դու ունեիր իմ կարիքը, իսկ ես գերադասեցի խաղը, ոչ թե Զեզ: Խնդրում եմ, ների՛ր ինձ»:

Ես անմիջապես լսեցի սրտումս. «Որդի՛ս, Ես չեմ ցանկանում հինգ ժամանոց աղոթքի զոհաբերություն: Ես ցանկանում եմ հնազանդություն»:

Բաժանված հավատարմություն

Ես համակված էի տրտմությամբ, քանի որ անհավատարիմ գտնվեցի Նրա հանդեպ, Ով նվիրաբերել էր Իր կյանքն ինձ համար: Ես ցանկանում էի ինչ-որ բան ստանալ այս աշխարհից՝ այն, ինչը սնուցում է կյանքի այլ աղբյուր չունեցող մարդկանց սրտերը, անձերը և մտքերը: Իմ սերն ակնհայտորեն ուղղված էր այդ թիմին:

Այս ամենի լույսի ներքո կրկին ուշադրությամբ կարդացե՛ք Հակոբոսի խոսքերը.

«Շնացողներ: Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ՝ ձեզ դարձնում է Աստծո թշնամին: Կրկնում եմ՝ եթե ուզում եք այս աշխարհի ընկերը լինել, դուք դառնալու եք Աստծո թշնամին: Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ունի Աստծո խոսքը՝ ասելով, որ այն Հոգին, Ում Աստված դրել է մեր մեջ, լցված է նախանձով [խանդով]: Մոտեցե՛ք Աստծուն, և Աստված կմոտենա ձեզ: Լվացե՛ք ձեր ձեռքերը, դո՛ւք՝ մեղավորներ. մաքրե՛ք ձեր սրտերը, որովհետև ձեր հավատարմությունը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև» (Հակոբոս 4.4,5,8, NLT):

Իմ հավատարմությունը բաժանված էր: Հավատարմությունը երևում է մեր որոշումներից, ոչ թե պարզապես խոսքերից: Շատերն են պնդում, որ հավատարիմ են, բայց նրանց գործերը ցույց են տալիս հակառակը: Միգուցե հենց այս պատճառով է Աստծո խոսքն ասում. «Շատերը կասեն, որ իրենք հավատարիմ ընկերներ են, բայց ո՞վ կարող է գտնել ճշմարտապես վստահելի մարդու» (Առակաց 20.6, NLT):

Մինչ այդ պահը ես համոզվածությամբ կայնդեի. «Հիսուսն ամենակարևորն է իմ կյանքում՝ ավելի, քան ցանկացած բան կամ որևէ անձավորություն», այնինչ՝ իմ ընտրությունն ապացուցեց հակառակը: Գործերը՝ հաղորդակցման ավելի բարձր մակարդակ են, քան խոսքերը:

Հովհաննես առաքյալը գրում է Առակաց 20.6-ի համարժեքը Նոր կտակարանում. «Եկե՛ք սիրենք ոչ միայն ասելով, որ սիրում ենք... եկե՛ք ցույց տանք ճշմարտությունը մեր գործերով» (Ա Հովհաննես 3.18, NLT): Իրականում, Դավթի Կովբոյները գրավել էին առաջին սիրո տեղը իմ սրտում: Ես բորբոքել էի իմ մեջ բնակվող Հոգու նախանձավորությունը (կամ՝ խանդը): Ես կարդացել էի Աստվածաշնչում, որ չպետք է այդպես վարվեի, բայց ասես չէի նկատել այդ զգուշացումը: Աստված Իր ողորմությամբ ցույց տվեց ինձ իմ սխալը:

Հովհաննեսը նույնպես գրում է.

«Սիրելի՛ երեխաներ, հեռո՛ւ մնացեք ցանկացած բանից, ինչը կարող է զբաղեցնել Աստծո տեղը ձեր սրտերում» (Ա Հովհաննես 5.21, NLT):

Այժմ մեզ զգուշացնում է ոչ թե Հակոբոսը, այլ սիրելի Հովհաննեսը: Արժե նշել, որ այս խոսքը վերջինն է նրա երկար նամակում: Այդ օրերին առաքյալները չէին կարող զանգահարել, տեքստային հաղորդագրություններ գրել, երկտողեր տեղադրել «Ֆեյսբուք»-ում, կամ մեկ օրում նա-

մականեր ուղարկել իրենց սիրելիներին: Նամակը հազվագյուտ մի բան էր, և այն տեղ հասցնելու համար մեծ ջանք էր պահանջվում: Այնպես որ, եթե դուք Սուրբ Չոգուց ոգեշնչված նամակ գրեիք, Նա, ամենայն հավանականությամբ, կթողներ ամենակարևոր տեղեկությունը վերջում:

Միանալով Չակոբոսին և Չովհաննեսին՝ Պողոսը նույնպես զգուշացնում է, որ թույլ չտանք այս աշխարհին զբաղեցնել Յիսուսի տեղը մեր սրտում: Նա ասում է.

«Դուք չեք կարող ապրել երկու ձևով էլ՝ խնջույքի լինել Տիրոջ հետ մեկ օր և քարշ գալ դևերի հետ մյուս օրը: Ավելին՝ Տերը չի հանդուրժի դա: Նա ցանկանում է մեզ՝ ամենը կամ ոչինչ: Կարծում եք՝ դուք կարող եք ազատվել ավելի քշով: Մի կողմից՝ դուք կարող եք ասել. «Ամեն բան թույլատրելի է: Աստծո անսահման առատության և շնորհքի շնորհիվ, մենք ստիպված չենք մանրակրկիտ ձևով դիտարկել ու ծանրութթև անել ամեն մի գործողություն՝ տեսնելու համար, թե արդյո՞ք այն ընդունված և պատշաճ է համարվում»: Բայց իմաստը՝ պարզապես մի կերպ ապրելը չէ: Մենք ուզում ենք լավ ապրել...» (Ա Կորնթացիների 10.21-24, MSG):

Ես երկյուղած եմ այս խոսքերից: Դրանք այնքա՞ն համապատասխան են մեր օրերին: Ինձ նույնպես դուր է գալիս կարդալ Պողոսի խոսքերը «Նյու Լիվինգ» թարգմանությամբ. «Մի՞թե մենք համարձակվում ենք բորբոքել Տիրոջ նախանձավորությունը (կամ՝ խանդը): Կարծում եք՝ մենք Նրանից ուժեղ ենք: Դուք ասում եք. «Ինձ ամեն ինչ կարելի է», բայց ամեն ինչ չէ, որ լավ է ձեզ համար» (խոսք 22,23, NLT): Կրկին, մենք տեսնում ենք, որ Աստված նախանձավոր է մեզ համար:

Այլևս ոչ մի ամերիկյան ֆուտբոլ

Կարող է հարց առաջանալ. «Մի՞թե ես չպետք է սպորտային միջոցառումներ դիտեմ: Մի՞թե չպետք է մասնակցություն ունենամ ցանկացած բանի մեջ, ինչը գործածում է այս աշխարհը: Այդ դեպքում, ինչպե՞ս կարող եմ ապրել և գործել այս աշխարհում:

Թույլ տվեք այսպես ձևակերպել պատասխանը: Մի՞թե այն, որ ես ամուսնացած տղամարդ եմ, նշանակում է, որ չպետք է շփվեմ որևէ կնոջ հետ՝ բացի իմ կնոջից: Պատասխանն է՝ ոչ: Ես մշտապես շփվում եմ կանանց հետ: Իմ թռիչքների ժամանակ ես նստում եմ կանանց կողքին: Յենց հիմա ես այս տողերը տպում եմ ինքնաթիռի մեջ, և իմ կողքին մի կին է նստած: Ես աշխատում եմ կանանց հետ, շփվում եմ նրանց հետ շատ այլ վայրերում և տարբեր հանգամանքներում:

Լինելով ամուսնացած տղամարդ՝ ես փորձում եմ սիրալիք լինել կանանց հետ, հատկապես այն պատճառով, որ այսօր նրանցից շատերն անարդար վերաբերմունք են ստանում տղամարդկանցից: Շատ հաճախ կանանց վերածել են մսի կտորի՝ տղամարդու կրքերը բավարարելու համար, և չեն դիտարկել որպես հավասար տղամարդկանց: Սա բարկություն է առաջացնում ինձանում, որովհետև ես գիտեմ՝ Աստված Իր պատկերով է ստեղծել և՛ տղամարդկանց, և՛ կանանց. Նա տվել է Քրիստոսի միտքը և՛ տղամարդկանց, և՛ կանանց, ովքեր ուխտի մեջ են Իր հետ: Նա չունի կողմնակալ վերաբերմունք և չի գերադասում տղամարդկանց՝ կանանցից: Ուրեմն, ինչո՞ւ մենք պետք է նման կողմնակալություն ցուցաբերենք, նույնիսկ՝ եկեղեցում:

Այնուամենայնիվ, ես զգուշանում եմ, որ չբացեմ իմ սիրտը և զգացմունքները որևէ կնոջ՝ սիրային կամ ոչ պատշաճ կերպով: Ես ուխտ ունեմ Լիզայի հետ: Երբ ամուսնացա նրա հետ, ես հրաժեշտ տվեցի բոլոր կանանց այս մուրակի վրա՝ նվիրելով իմ սերը միայն Լիզային: Այնպես որ, պետք է կանանց հետ հաղորդակցվելու պատշաճ ձև ունենամ:

Եկեք զուգահեռներ անցկացնենք մեր օրինակի և այս աշխարհի հետ ընկերություն անելու միջև: Ինձ դեռ դուր է գալիս ամերիկյան ֆուտբոլ դիտելը, թեև ես հազիվ եմ դիմանում մինչև խաղի ավարտը: Ինձանում այլևս չկա այն ուժգին ձգտումը, որն ունեի, երբ իմ սիրտն ուղղված էր Կովբոյներին: Այժմ ես ձգտում եմ կատարել Տիրոջ ցանկությունները՝ սեր և հոգատարություն ցուցաբերել իմ ընտանիքին, աշխատել՝ մարդկանց օգնելու համար, աշխատել մեր ծառայության համար և հետևել, որ իմ ուշադրությունը և զգացմունքները համակված լինեն Աստծո իմաստությամբ և խորհրդով:

Արդյո՞ք եղել են այլ բաներ, որոնք սխալ դիրք են գրավել իմ կյանքում: Ցավոք՝ այո՛: Սուրբ Յոզիան օգնում էր ինձ՝ ծանաչել այդ բաները, քանի որ ես խնդրել էի Նրան այդ մասին: Գու՛՞ջը, սնունդը, ֆիլմերը և նույնիսկ ծառայողական գործունեությունը՝ ընդամենը մի քանիսն են այն ամենից, ինչի վրա ես պետք է աշխատեի, և ինչից նույնիսկ պետք է հրաժարվեի որոշ ժամանակով, որպեսզի սրտիս դիրքը կրկին շտկվեր:

Երբ իմ սերը գու՛ֆի հանդեպ սխալ դիրք էր գրավել իմ ներսում, Սուրբ Յոզիան դրդեց ինձ՝ իմ գու՛ֆի մականների ամբողջ հավաքածուն նվիրել մի հովվի: Ինչո՞ւ Սուրբ Յոզիան արեց դա: Պարզ ասած՝ գու՛՞ջը ճիշտ տեղում էր այդ հովվի կյանքում, բայց սխալ տեղում էր իմ կյանքում:

Մեկ ու կես տարի գու՛ֆ չխաղալուց հետո Տերը մի պրոֆեսիոնալ գու՛ֆ խաղացողի սրտում դրեց՝ նվիրել ինձ իր գու՛ֆի պարագաների հավաքածուն, որը հազարավոր դոլարներ արժեր: Այդ անձնավորությունը, ով աղոթքի մարդ էր, ասաց ինձ. «Ձո՞ն, ես գիտեմ, որ պետք է անեմ սա»:

Մի քանի ամիս անց մի հովիվ, ով օգնեց սկսել ներկայումս ամենամեծ եկեղեցին աշխարհում (որը գտնվում է Յարավային Կորեայում), ասաց ինձ, որ Աստված իր սրտում դրել է, որպեսզի ինձ նվիրի մականների հավաքածու: Ես իսկապես շփոթվեցի: Եվ հարցրի Տիրոջը. «Ի՞նչ անեմ այս մականները»: «Գո՛լֆ խաղա», - լսեցի իմ սրտում: «Բայց մեկ ու կես տարի առաջ Դու պատվիրեցիր, որ նվիրեմ իմ բոլոր մականները»: Ես լսեցի, թե ինչպես Աստված ասաց. «Գոլֆն արդեն սխալ տեղում չէ քեզ համար: Այն դարձել է հանգստի և հաճելի ժամանցի միջոց»:

Դրանից հետո ես վերսկսեցի գոլֆ խաղալը: Աստված հրաշալի կերպով օգտագործեց այս խաղը՝ տալով ինձ հանգիստ և թարմություն՝ այն դարձնելով շվիման հարթակ իմ որդիների, այլ եկեղեցական առաջնորդների և մեր ծառայության գործընկերների հետ: Մեր ծառայությունը «Մեսինջերի գավաթ» կոչվող գոլֆի մրցույթ է անցկացնում, և կարող եմ ասել, որ այս գիրքը գրելուն նախորդող երեք տարիների ընթացքում «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ն ավելի քան երեք միլիոն դոլարի հանգանակություններ է ստացել միսիսյի և ավետարանչական նախագծերի համար իմ ընկերների և գործընկերների հետ գոլֆ խաղալու շնորհիվ: Եթե ես մինչև կյանքիս վերջ լիովին հրաժարվեի գոլֆից, նման բան տեղի չէր ունենա:

Մենք երբեք չպետք է վախենանք, երբ Տերը հնազանդություն է պահանջում: Իրականում, հնազանդվելը հեշտ է, երբ Նրա պահանջը համապատասխանում է մեր ձգտումներին: Այլ դեպքերում հնազանդվելը դժվար է:

Աստվածային տրտմություն

Հակոբոսը պարզորեն նշում է, թե ինչն է առաջացնում Սուրբ Հոգու նախանձավորությունը կամ խանդը. ընկերությունն այս աշխարհի հետ: Ես խոսեցի այս ընկերության մի կողմի մասին, բայց գոյություն ունեն ավելի շատ կողմեր: Հաջորդ գլխում կխոսեմ աշխարհի հետ ընկերության հիմնական պատճառի մասին, բայց այս պահին կարևոր է նշել, թե ինչ պետք է անենք, երբ սխալ ձգտումներ ունենք: Դիտարկենք Հակոբոսի խորհուրդն այն հավատացյալներին, ովքեր հայտնվել են անպատշաճ հարաբերությունների մեջ այս աշխարհի հետ.

«Լվացե՛ք ձեր ձեռքերը, դո՛ւք՝ մեղավորներ՛ր. մաքրե՛ք ձեր սրտերը, որովհետև ձեր հավատարմությունը բաժանված է Աստծո և այս աշխարհի միջև: Թող որ ձեր աչքերին արցունքներ լինեն այն բաների համար, ինչ դուք արել եք: Թող տրտմություն և խորը վիշտ լինի» (Հակոբոս 4.8,9, NLT):

Յենց որ Աստված հայտնեց, թե ինչ էի արել (ես ընտրել էի Կովբոյներին՝ աղոթքի փոխարեն), ես տրտմություն և խորը վիշտ ապրեցի: Յասկացա, որ ցավ էի պատճառել Նրան, Ով զոհել էր Իր կյանքն ինձ համար՝ անտեղի «փոխհարաբերության» միջոցով:

Վերջերս ես խոսում էի մի տղամարդու հետ, ով շնություն էր գործել իր կնոջ հանդեպ, բայց հետագայում վերականգնվել էր: Նա պատմում էր ինձ, որ այդ մեղքի մեջ էր եղել վեց ամիս շարունակ, և պատմելու ընթացքում անդադար լաց էր լինում: Նա ուժեղ մարդ է. ուսանողական տարիներին ամերիկյան ֆուտբոլի թմի անդամ է եղել, իսկ ներկայումս հաջողակ գործարար է. այդ մարդը հաստատ լացկան չէ: Ես զարմացա՝ տեսնելով նրա «տղամարդկային լացը»: Նա լաց չէր լինում, քանի որ կարծում էր, որ Տերը կամ իր կինը չէին ների իրեն: Այդ պահին նրա ամուսնությունն ավելի ամուր էր, քան երբևէ: Նա լաց էր լինում այն պատճառով, որ այդպես էր վարվել այն անձնավորության հանդեպ, ում խորապես սիրում էր: Նա տրտմում էր, որ մեծ ցավ էր պատճառել նրան: Պարզապես հրաշալի էր տեսնել այդ մարդու խորն զգացմունքները և հոգատարությունը իր կնոջ հանդեպ:

Նրա վարքը ցույց տվեց մի աստվածաշնչյան ճշմարտություն. նույն կերպով պետք է վարվի այն հավատացյալը, ով անպատշաճ հարաբերություններ է ունեցել այս աշխարհի հետ: Ինչպես գրում է Յակոբոսը՝ «Թող տրտմություն և խորը վիշտ լինի»:

Այս մարդը չէր մեղադրում իր կնոջը և իսկապես ցավում էր իր արարքի համար: Նրա անկեղծ խոնարհությունը շատ տպավորեց ինձ: Ես խոսել եմ այլ մարդկանց հետ, ովքեր շնություն էին գործել իրենց կողակիցների հանդեպ, բայց նրանք այլ կերպ էին նկարագրում իրավիճակը: Նրանց «խոստովանության» կամ «վկայության» ընթացքում նրանք ի վերջո ասում էին, որ գործել էին այդ մեղքը մասամբ իրենց կողակիցների սիրո պակասի կամ այլ թերացումների պատճառով:

Սուրբ գրքում գրված է «Աստծո ուզած կերպով տրտմության» և «աշխարհի տրտմության» մասին (տե՛ս Բ Կորնթ. 7.10): Դավիթ թագավորն Աստծո ուզած կերպով տրտմող մարդու օրինակ էր: Նա խորապես վշտացավ, քանի որ շնություն և սպանություն գործելով՝ ցավ էր պատճառել Նրան, Ում սիրում էր: Նա աղաղակում էր. «Քո՛ղ դեմ, և միմիայն Քո՛ղ եմ մեղանչել. ես գործել եմ այն, ինչը Դու չարիք ես համարում» (Սաղմոս 51.4, NLT): Նա չորս օր շարունակ լաց էր լինում և սգում էր՝ երեսնիվայր ծնկի եկած, և նրա մտքով էլ չէր անցնում, թե ինչ էին մտածում ծառաներն իր սգալու մասին: Նա չէր փորձում պահպանել իր արժանապատվությունը. նրա սիրտը փշրվում էր վշտից: Դրանից հետո նա վերականգնվեց:

Սավուղ թագավորն այլ էր: Նա նույնպես ցավեցրեց Աստծո սիրտը՝ ընտրելով այն, ինչն ընտրում է այս աշխարհը: Նա սկսեց հաճեցնել իր անձը և հպարտացավ, փոխարենը՝ հնազանդվեց Աստծո խոսքին: Նա նույնպես ցավում էր իր արածի համար, բայց տրտմել էր այլ պատճառներով: Նա հրապարակավ հանդիմանություն էր ստացել և անհարմար դրության մեջ էր հայտնվել իր հպատակների առջև՝ այն մարդկանց, ովքեր պետք է պատվեին իրեն: Բացի այդ՝ նրա սխալ որոշումները կարող էին վնաս հասցնել նրա իշխանական դիրքին: Սավուղը տրտմել էր այս աշխարհի տրտմությամբ: Նա ի սրտե խոստովանություն չարեց, ինչպես Դավիթը կամ այն գործարարը, ում մասին ես պատմեցի: Սավուղը խաբված և ապականված էր իր մտքում: Նրա միտքը փոխվեց կարճ ժամանակով, բայց ի վերջո երևացին նրա ճշմարիտ դրդապատճառները՝ հպարտությունը և իր անձը հաճեցնելու ձգտումը: Նա այդպես էլ մտքի իրական փոփոխություն չապրեց:

Պողոս առաքյալը հայտարարում է. «Այն տեսակի տրտմությունը, որն Աստված ուզում է, որ մենք ապրենք, հեռացնում է մեզ մեղքից» (Բ Կորնթացիների 7.10, NLT): Այս տրտմությունը տրված է Աստծուց. այն արմատացած է Նրա հանդեպ ունեցած մեր սիրո մեջ: Եթե մենք սիրում ենք այն, ինչ Նա կարող է անել մեզ համար ավելի, քան սիրում ենք Նրան, մեր գործերը ոչնչով չեն տարբերվի Սավուղի գործերից:

Հաջորդ երկու գլուխներում կտեսնենք, թե ինչպես է ընկերությունն այս աշխարհի հետ ազդում մեր և Աստծո հարաբերությունների վրա: Մենք ցույց կտանք, թե որքան թանկ է նստել մեզ վրա Աստծուն բարիով փոխարինելը՝ թե՛ անձնական, թե՛ համակեղեցական մակարդակի վրա: Բայց մինչ այս էջը թերթելը արժե ժամանակ հատկացնել աղոթքի համար և խնդրել Աստծուն՝ օգնել ձեզ, որ տեսնեք ցանկացած անպատշաճ հարաբերություն, որն ունեք այս աշխարհի հետ:

Հայր, Հիսուսի անունով, խնդրում եմ, որ քննես իմ ներսը և ճանաչես ինձ, ստուգես իմ ճանապարհները և դրդապատճառները: Եթե կա որևէ բան իմ կյանքում, ինչն ստանում է այն սերը, որը պետք է միայն Քոնը լինի, խնդրում եմ, բացահայտիր դա Քո Հոգով: Ոչինչ չեմ թաքցնում Քեզնից: Թող որ ես ճշմարտապես Քեզ սիրող մարդ դառնամ և մնամ այդպիսին: Լինեմ այնպիսի մարդ, ով ուրացել է իր անձը՝ Տեր Հիսուս Քրիստոսին հետևելու և ծառայելու համար: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով: Ամեն:


Շնորհքը մեզ տվեց Նրա բնությունը, երբ փրկվեցինք, բայց մեզ անհրաժեշտ է ավելի ու ավելի շնորհք, որը **կգորացնի** մեր բնությունը, որպեսզի կարողանանք ապրել ինչպես Հիսուսը:

– Ջոն Բիվեր, «Բարի՞, թե՞ Աստված»



Մեզ անհրաժեշտ է Նրա
ներկայությունը՝
փոխվելու համար:

– Ջոն Բիվեր, «Բարի՞, թե՞ Աստված»







Հիսուսի

պատվիրանները պահելու

օգտակարությունը...





...Նրա
ներկայության խոստովան է:

- Ջոն Բիվեր, «Բարի, թե՛ Աստված»



Մենք պետք է վերադառնանք
Հիսուսի իշխանությանը,
որպեսզի առողջ
հիմք ունենանք:

- Ջոն Բիվեր, «Բարի՞, թե՞ Աստված»



Ապրե՛ք երկար, ձգտե՛ք սրբության
և ձեր նախաձեռնություններում
հասե՛ք հաջողությունների:

Այսպես վարվելով՝ դուք դրական
փոփոխություններ կբերեք
այլ մարդկանց կյանքերում:

- Ջոն Բիվեր, «Բարի՞, թե՞ Աստված»



Դիտե՛ք տեսանյութեր և ներբեռնե՛ք գրքեր՝
բազմաթիվ լեզուներով, հետևյալ կայքում:



CloudLibrary.org



ԱՆՏԵՍՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«...Աշխատե՛ք սուրբ կյանքով
կարելու վրա, որովհետև նրանք,
ովքեր սուրբ չեն, չեն տեսնի Տիրոջը»:
— Եբրայեցիների 12.14, NLT

Որքա՞ն քիչ բան գիտեն նրանք, ովքեր
կարծում են, որ սրբությունը ձանձրալի է:
Երբ մարդը վերապրում է իրական սրբությունը...
այն անդիմադրելի է դառնում:
— Կ. Ս. Լյուիս

Սրբություն: Հիշատակե՛ք այս բառը և կտեսնեք, թե ինչպես են
մարդիկ խուսափում դրանից և արագորեն փոխում խոսակցու-
թյան թեման: Շատերի համար այն բացասական երանգ ունի, քանի որ
այն «նորածն» չէ և կարող է զսպել կամ կաշկանդել իրենց կյանքը:
Շատ հաճախ սրբությունը համարում են փրկությունը գործերով վաս-
տակելու հոմանիշ, կամ՝ օրինապաշտության կողմերից մեկը: Խոսելով
սրբության մասին՝ դուք հաճախ կլսեք հետևյալը. «Ես ազատ եմ և ապ-
րում եմ Աստծո շնորհքով: Մի՛ փորձեք օրենքի տակ տանել ինձ»:

Այնուամենայնիվ, Նոր կտակարանում սրբությունը նույնիսկ մի փոքր
էլ կապ չունի օրենքի գործերի կամ օրինապաշտության հետ: Իրակա-
նում, այն կյանքի հրաշալի ոճ է, որը ցանկալի է շատ առումներով: Մեր
օրերում, անկասկած, այն հիմնականում սխալ է հասկացվում:

Ինչո՞ւ մենք չենք խոսում այս մասին

Ո՞րն է պատճառը, որ Աստծո զավակը խուսափում է սրբության մա-
սին խոսելուց, այնինչ մենք հստակ պատվեր ունենք. «Յետևե՛ք... սրբու-
թյան, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբրայեցիների 12.14):

Դուք հասկացա՞ք, թե որքան միանշանակ է այս խոսքը. սրբություն չունենալու անմիջական հետևանքը՝ Տիրոջը չտեսնելն է: Ես պետք է մեծ ուշադրություն դարձնեմ այս խոսքին. իսկ դո՞ւք:

Մի օրինակ բերենք Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի վերաբերյալ: Քանի որ ես այս երկրի քաղաքացի եմ, իսկ նա՝ մեր երկրի առաջնորդը, ես «փոխհարաբերություններ» ունեմ նրա հետ: Ես նրա իշխանության ներքո եմ և կրում եմ նրա որոշումների ազդեցությունը՝ մեր երկրի բոլոր 320 միլիոն քաղաքացիների նման: Բայց թեև ես նման հարաբերություններ ունեմ նախագահի հետ, մինչև օրս ես նրա հետ անձնական հանդիպման արտոնություն չեմ ստացել: Ես Ամերիկայի քաղաքացի եմ եղել ամբողջ կյանքում և արդեն հիսունն անց եմ, բայց մինչև օրս դեռ չեմ հանդիպել մեր նախագահներից որևէ մեկին:

Այնուամենայնիվ, կան այլ ամերիկացիներ, ովքեր պարբերաբար հանդիպում են երկրի նախագահին: Նրանք այդ մարդու ընկերներն են կամ աշխատում են անմիջապես նրա հետ: Ամեն դեպքում, այն մարդուն, ով ապրում է Սպիտակ տանը, նրանք գիտեն շատ ավելի լավ, քան ես:

Նմանապես, կան միլիոնավոր քրիստոնյաներ, ովքեր գտնվում են Հիսուս Զրիստոսի իշխանության ներքո: Նա այն Թագավորն է, Ում նրանք դավանում են: Նա պաշտպանում և սիրում է նրանց, մատակարարում է նրանց, նաև պատասխանում է նրանց խնդրանքներին: Այնուամենայնիվ, հարց է առաջանում. արդյո՞ք նրանք տեսնում կամ հանդիպում են Նրան: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք նրանք վերապրում են Նրա ներկայությունը: Եբրայեցիների նամակում գրված է. «Մենք կարող ենք տեսնել Հիսուսին» (2.9, AMP): Պողոսն ավելի մանրամասնորեն է ներկայացնում այս արտոնությունը.

«...Բոլորս, որ հեռացրել ենք այդ քողը, կարող ենք տեսնել և արտացոլել Տիրոջ փառքը» (Բ Կորնթացիների 3.18, NLT):

«Տիրոջ փառքը» արտահայտությունը հաճախ ձիշտ չի հասկացվում, և դրա համար այսօր այն շատ չի գործածվում: Մենք կարող ենք փոխարինել այն «Տիրոջ մեծությունը» արտահայտությամբ: Մեր այսօրվա լեզվով, Պողոսն ասում է. «Բոլորս, որ հեռացրել ենք այդ քողը, կարող ենք տեսնել Տիրոջ մեծությունը»:

Հիսուսը նույնպես խոսում է նրանց մասին, ովքեր կտեսնեն կամ կվերապրեն Իր ներկայությունը: Վերջին ընթրիքին Նա ասաց հետևյալը. «Ընդամենը մի փոքր ժամանակ անց աշխարհն այլևս չի տեսնի Ինձ, բայց դուք կտեսնեք Ինձ, որովհետև ես կենդանի եմ, և դուք չուտով կկենդանանաք» (Հովհաննես 14.19, MSG):

Այս հատվածում կա երկու ակնհայտ փաստ: Առաջինը՝ քրիստոնեության իրական կողմերից մեկը՝ Նրան տեսնելն է: Երկրորդը՝ մենք կարող ենք տեսնել Նրան այնպես, ինչպես այս աշխարհը չի կարող:

Ինչո՞ւ է Աստծուն տեսնելը կարևոր: Նախ և առաջ, ինչպես և նախագահի դեպքում, եթե մենք չտեսնենք, չենք կարող ճանաչել Նրան, այլ միայն կիմանանք Նրա մասին:

Կա ևս մեկ պատճառ, որը հավասարապես կարևոր է: Առանց Նրան տեսնելու՝ մենք չենք փոխվի և չենք դառնա Նրա նման: Նույն խոսքում, որը մեջբերեցինք վերևում, Պողոսը նշում է, որ Տիրոջը տեսնողները «վերափոխվում են դեպի նույն պատկերը՝ փառքի մի մակարդակից մյուսը» (Բ Կորնթացիների 3.18, ESV): Վերափոխումը անչափ կարևոր է հավատացյալի կյանքում:

Դուք երբևէ հանդիպե՞լ եք այնպիսի մարդու, ով երկար ժամանակ է՝ դավանում է, որ ճանաչում է Հիսուս Քրիստոսին, բայց այնպես է ապրում, ասես երբեք չի հանդիպել Նրան: Ո՞րն է պատճառը: Այս անձնավորությունը պարզապես վերափոխման ընթացք չի ապրում: Նա չի փոխվում Հիսուս Քրիստոսի նմանությամբ:

Պողոսը մարգարեացավ, որ մեր օրերը դժվար կլինեն: Հետաքրքիր է, որ ըստ նրա՝ այս ծանր ժամանակների պատճառը չի լինի հավատքի համար հալածվելը՝ ինչպես իր օրերում, այլ՝ քրիստոնյաները, ովքեր կդավանեն Հիսուսին, բայց չեն պահի Նրա խոսքերը: Նրանք կվարվեն Աստծուն չճանաչող մարդկանց պես: Նրանք կսիրեն իրենց և իրենց փողը, անհնազանդ կլինեն իրենց ծնողներին, կոպտորեն կվերաբերվեն մարդկանց, կիրաժարվեն ներել, կձգտեն հռչակ ու համբավ ձեռք բերել, կդավաճանեն իրենց ընկերներին, կսիրեն հաճույքն ավելի, քան Աստծուն, և այլն: Պողոսը պարզ ասաց. «Նրանք կհարեն մեր կրոնի արտաքին կերպարանքին, բայց կմերժեն դրա իրական զորությունը» (Բ Տիմոթեոս 3.5, TEV): Այն զորությունը, որը նրանք կմերժեն՝ շնորհքի վերափոխող կարողությունն է, որը ճշմարիտ քրիստոնեության հիմնադրույթներից մեկն է: «Էմփիլիֆայդ» աստվածաշնչում գրված է. «Նրանց վարքը հերքում է նրանց դավանանքի ճշմարիտ լինելը»:

Այս դավանող հավատացյալները խաբված են, որովհետև նրանք «...ամեն ժամանակ սովորում են և երբեք դեպի ճշմարտության գիտությանը չեն կարողանում գալ» (Բ Տիմոթեոս 3.7): Ես միշտ ասում եմ, որ խաբեությունը մի մեծ խնդիր ունի. այն խաբում է մարդուն: Մենք կարող ենք սրտանց հավատալ, որ լավ հարաբերություններ ունենք Աստծո հետ, այնինչ՝ իրականում այդպես չէ: Այսպիսի շատ «հավատացյալներ» հաճախում են եկեղեցիներ, Աստվածաշնչյան դպրոցներ,

համաժողովների, երկրպագության երեկոների, և տնային հավաքույթների: Նրանք սիրում են սովորել, բայց նրանց բնավորությունը և վարքը չեն փոխվում:

Իմաստը հետևյալն է...

Իմաստը հետևյալն է. միայն սրբության մեջ ապրողները կարող են տեսնել Աստծուն, այսինքն՝ *մուտք գործել Նրա ներկայության մեջ*: Հիսուսը չէր կարող ավելի պարզ բացատրել, երբ ասաց. «Մի փոքր ժամանակ էլ, և աշխարհն էլ չի տեսնի Ինձ, բայց դուք կտեսնեք Ինձ, որովհետև ես կենդանի եմ, և դուք կենդանի կլինեք... Ով որ Իմ պատվիրաններն ունի և պահում է, նա է Ինձ սիրողը: Եվ Ինձ սիրողը... ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան» (Հովհաննես 14.19,21):

«Հայտնել» բառի սահմանումն է՝ «պարզ կամ ակնհայտ դարձնել աչքին կամ մտքին. պարզորեն ցույց տալ»: «*Աստվածաշնչյան բառերի ուսումնասիրության լիակատար բառարանը*» սահմանում է այս բառը՝ «էմֆանիզո»-ն, որպես «ակնհայտ դարձնել, տեսանելի դարձնել, ցույց տալ»: Այն նույնիսկ ավելի որոշակի բացատրություն է առաջարկում. «Անձի վերաբերյալ... այն իմաստով, որ ինչ-որ մեկը թույլ է տալիս մտերմորեն ճանաչել կամ հասկանալ իրեն»:

Հիսուսն ասաց, որ Նա պարզորեն կհայտնի Իրեն միայն Իր պատվիրանները պահող մարդկանց: Նրանք են, որ կտեսնեն Նրան, մուտք կգործեն Նրա ներկայության մեջ և այդ պատճառով էլ մտերմորեն կձանաչեն Նրան: *Այս արտոնությունը խոստացված չէ բոլոր հավատացյալներին*, այլ միայն նրանց, ովքեր կձգտեն հնազանդվել Նրա հոսքին՝ նրանց, ովքեր կձգտեն սրբության:

1980-ական թվականներին ինձ խնդրեցին հյուրընկալել աշխարհի ամենամեծ եկեղեցու գլխավոր հովվին՝ դոկտոր Դեյվիդ Յոնգի Չոյին: Նա Սեուլից է՝ Հարավային Կորեայից: Այդ ժամանակ նրա եկեղեցում 750.000 մարդ կար: Որպես նրա հյուրընկալ մեր եկեղեցում՝ ես մի շաբթ պարտականություններ ունեի, որոնցից մեկը նրան հյուրանոցից եկեղեցի տանելն էր: Ընդամենը մի քանի տարի էր՝ ես քրիստոնյա էի, և նման արտոնություն ստանալն աներևակայելի էր ինձ համար:

Դոկտոր Չոն ճանապարհորդում էր իր եկեղեցուց մոտավորապես տասնհինգ գործարարի հետ: Այդ թիմի ղեկավարը մոտեցավ ինձ հավաքույթի օրը և ասաց.

- Պարոն Բիվեր, դուք պետք է ուղեկցեք դոկտոր Չոյին երեկոյան ծառայության, ձի՞շտ է:

- Ճի՛շտ է, պարո՛ն:

Նա սասաց ինձ հանդիսավոր կերպով.

- Պարոն Բիվե՛ր, ես պետք է կարևոր բաներ ասեմ ձեզ: Առաջինը և ամենակարևորը՝ մի՛ խոսեք դուկտոր Չոյի հետ հավաքույթի գնալու ճանապարհին: Նա չի սիրում խոսել ծառայելուց առաջ:

Այդ հրահանգը միակը չէր, բայց գլխավորն էր առաջնահերթ հրահանգների ցուցակում:

Այդ երեկո ես հյուրանոց եկա մեքենայով և սպասեցի՝ մինչև որ դուկտոր Չոյի հետ ճանապարհորդող մարդիկ բացեցին իմ մեքենայի դուռը: Դուկտոր Չոն նստեց առջևում՝ կողքիս նստարանին, և Աստծո ներկայությունը լցրեց իմ մեքենան: Ես ամբողջովին համակվեցի Նրա ներկայությամբ. Աստծո մեծությունը և սերը շատ իրական և ակնհայտ էին:

Երբ վարում էի մեքենան, արցունքները հոսում էին այտերովս, թեև ես շուտ արտասվող մարդ չեմ: Ծանապարհի կեսին մենք կանգ առանք լուսակրի կարմիր լույսի պատճառով, և ես այլևս չէի կարող դիմանալ: Ես արեցի այն, ինչ այդ ծառայողի գլխավոր օգնականը պատվիրեց՝ չանել: Ես երկյուղածությամբ ասացի իմ ուղևորին.

- Դուկտոր Չո՛, Աստծո ներկայությունն այս մեքենայի մեջ է:

Նա նայեց ինձ և սասաց.

- Այո՛, ես գիտեմ:

Ես շատ ժամանակ անցկացրի այս մարդու հետ նրա այցելության ժամանակ: Մենք միասին գու՛ֆ խաղացինք: Ես տանում էի նրան մեքենայով տարբեր վայրեր և ձաշում էի նրա հետ: Ես ուղեկցել էի նրան օդանավակայանից և մեկնելու ժամանակ կրկին օդանավակայան ուղեկցեցի: Ամեն իրավիճակում՝ թե՛ մարդկանց առջև, թե՛ մարդկանց աչքերից հեռու, դուկտոր Չոն աստվածապաշտ, աստվածավախ, անկեղծ և խոնարհ էր իր վերաբերմունքով և գործերով: Ես մտածում էի այն մասին, որ նա ամեն օր ժամեր շարունակ հաղորդակցվում էր Տիրոջ հետ: Ակնհայտ է, որ հենց այդ պատճառով էր Աստծո ներկայությունն այդքան ուժգին նրա կյանքում: Նա իսկապես ձգտում էր ձգգրտորեն կատարել Հիսուսի խոսքերը:

Ես հաճախ եմ նման կերպով վերապրել Տիրոջ ներկայությունը հավաքույթների, աղոթքի և Աստծո խոսքն ընթերցելու ժամանակ, կամ պարզապես օրվա ընթացքում: Ես հասկանում եմ, թե ինչու Մովսեսը թողեց ամեն ինչ այս աներևակայելի ներկայության համար: Իմ կյանքում եղել են պահեր, երբ Աստծո ներկայությունը հեռու է եղել ինձնից, երբեմն այն պատճառով, որ ես չէի պահում Նրա խոսքերը: Այլ դեպքե-

րում ես փորձությունների հնոցում էի: Ես հասկանում եմ, որ երկրորդն անխուսափելի է, բայց առաջինը հնարավոր է կանխել:

«Չայտնել» բառը պարզապես չի փոխանցում «տեսնելու» իմաստը, այլև ընդգրկում է այն ամենը, ինչը հետևում է Նրա ներկայության մեջ լինելուն: Չայտնելը նշանակում է՝ բերել անտեսանելիից՝ տեսանելին, անլսելիից՝ լսելին, և անհայտից՝ հայտնին: Այդ ժամանակ է, երբ Աստված Իրեն ծանաչելի է դարձնում մեր մտքին և զգայարաններին: Նա տալիս է մտերմիկ հասկացողություն, գիտելիք և խորաթափանցություն Իր և Իր ծանապարհների մեջ: Եբրայեցիների նամակի հեղինակը նկարագրեց այս արտոնյալներին՝ անվանելով նրանց այնպիսի մարդիկ, «ովքեր գիտակցաբար ծաշակել են երկնային պարզև և դարձել Սուրբ Յոզու մասնակիցները» (6.4, AMP): Թեև Նրա հայտնված ներկայությունը հասանելի է Աստծո ամեն զավակին, միայն Նրա խոսքերին հնազանդվողները (ճշմարիտ սրբությամբ վարվողները) կվերապարեն այս արտոնությունը:

Պողոսը մեջբերում է Աստծո լսելի բառերը Մովսեսին: Այս խոսքն անփոփոխ ճշմարտություն է, որը վերաբերում է ոչ միայն Յիս ուխտին, այլև՝ Նորին, և ուղղված է այն մարդկանց, ովքեր արդեն Նրանն են.

«Դուրս եկեք անհավատների միջից և առանձնացե՛ք նրանցից,- ասում է Տերը:- Մի՛ դիպչեք նրանց պիղծ բաներին, և Ես կընդունեմ ձեզ» (Բ Կորնթացիների 6.17, NLT):

Ակնհայտ է, որ Աստված ընդունում է մեզ Իր ներկայության մեջ որոշ պայմաններով, ոչ թե ինքնաբերաբար: Մենք պետք է կատարենք Նրա խնդրանքը մինչև Նրա հետ հանդիպման հնարավորություն ստանալը: Պողոսի արտահայտությունը կատարելապես համապատասխանում է Յիսուսի խոսքերին: «Մեսիջ» Աստվածաշունչը շրջատության է ենթարկում այս խոսքը.

«Ուրեմն, թողե՛ք ապականությունը և փոխզիջումը. մեկընդմիշտ թողե՛ք այն,- ասում է Աստված:- Մի՛ կապվեք նրանց հետ, ովքեր կպղծեն ձեզ: Ես ցանկանում եմ ձեզ ամբողջովին՝ Ինձ համար»:

Դրանից հետո Պողոսը ցույց է տալիս, թե ինչպես պետք է արձագանքենք Աստծո պայմանական խոստմանը.

«...Եկե՛ք մաքրվենք այն ամենից, ինչը կարող է ապականել մեր մարմինը կամ հոգին: Եվ եկե՛ք գործենք լիակատար սրբության համար, որովհետև մենք վախենում ենք Աստծուց» (Բ Կորնթացիների 7.1, NLT):

Եվս մեկ անգամ տեսնում ենք, որ իրական սրբությանը ձգտելու նպատակն այն է, որ արժանանանք Աստծո հայտնված ներկայության մեջ ընդունվելու պատվին:

Մթնոլորտ, թե՛ ներկայություն

Այն բանից հետո, երբ մենք կարդացինք առաքյալների, Ռիտուսի և Չայր Աստծո խոսքերը պարունակող մեջբերումներ Նոր կտակարանից, մենք պետք է հարց տանք, թե ինչու Նոր ուխտի քրիստոնեության այս կարևոր կողմն ավելի հաճախ չի քննարկվում, ուսուցանվում և քարոզվում: Հնարավոր է, որ թշնամին խորամանկ ծրագիր է մշակել՝ համոզելով մեզ ընդունել այնպիսի փրկություն, որը զուրկ է իրական սրբությունից, քանի որ այդ դեպքում մենք չենք կարողանա տեսնել Նրան և, հետևաբար, չենք փոխվի: Թշնամու այս խորամանկ մարտավարությունը գործել է ոչ միայն անհատական, այլև՝ խմբային մակարդակի վրա: Ինչ վերաբերում է մեր հավաքույթներին, հնարավոր է, որ մենք *Աստծո ներկայությունը* փոխարինել ենք եկեղեցական *մթնոլորտով*:

Մեծագույն առաջխաղացումներից մեկը, որը եկեղեցին ունեցել է վերջին քսան տարվա ընթացքում, մեր հավաքույթների վայրերում ավելի լավ մթնոլորտ ստեղծելն է: Տարիներ առաջ, մտնելով սովորական եկեղեցի, դուք, որպես կանոն, կտեսնեիք ընդունված չափանիշներին չհամապատասխանող շենք՝ հնացած ձևավորմամբ, և կմասնակցեիք ձանձրալի ծառայության: Մեր երաժշտությունը վանող էր, ուղերձները՝ տարօրինակ և ոչ տեղին, իսկ հագուստը, մեղմ ասած՝ շատ հնաճ: Մենք հանդուրժում էինք գրեթե ամեն ինչ՝ թե՛ երաժշտական կատարումների, թե՛ հավատացյալներին քարոզվող ուղերձների մեջ, քանի դեռ դա արվում էր «Տիրոջ անունով»: Անկեղծ ասած՝ մենք լիովին անհեթեթ էինք թվում հասարակությանը: Գոյություն ունեին հազվագյուտ բացառություններ, բայց մի քանի տասնամյակ առաջ եկեղեցիներն, ընդհանուր առմամբ, այսպիսին էին:

Իմաստուն առաջնորդների շնորհիվ մենք փոխեցինք այս արմատացած նմուշը: Այժմ մենք ուշագրավ երաժշտություն ունենք, որը ճշմարտապես ոգեշնչված է և համապատասխան է մեր ժամանակներին: Մենք կառուցել ենք հարմարավետ եկեղեցական շենքեր՝ ժամանակակից ձայնային և լուսային համակարգերով: Մեր ծառայությունները համակարգված և արդիական են: Մենք ստեղծել ենք գրավիչ և հաճելի միջավայր երեխաների և դեռահասների համար: Այժմ շատ եկեղեցիների նախասրահներում կա սրճարան, որտեղ մարդիկ կարող են

շփվել իրար հետ, ինչպես նաև՝ մեծ տեսականի ունեցող գրախանութ: Մենք վարում ենք մեր ծառայություններն այնպես, որ դրանք այլևս տհաճ չեն կորածների համար: Պարզ ասած՝ մենք հրաշալի մթնոլորտ ենք ստեղծել մեր հավաքույթների վայրերում, և ես հավատում եմ, որ Աստծուն հաճելի է մեր գերազանցությունն այս ոլորտում:

Այնուամենայնիվ, հնարավոր է, որ այս արտաքին պարագաները դարձել են մեր նպատակը: Մթնոլորտը հրաշալի է, եթե այն նախապատրաստում է մարդկանց ճշմարտապես կարևորին՝ Աստծո ներկայությանը: Մթնոլորտն ստեղծվում է մարդու կողմից: Յոլիվուդը, Լաս Վեգասը, Դիսնեյը, Բրոդվեյը և այլ ժամանցային ինդուստրիաներ վարպետացած են զգացմունքներ արթնացնելու մեջ: Միգուցե մենք անցում ենք կատարել նրանց մեթոդների՞ն: Հնարավոր է, որ մենք բավարարվում ենք միայն մեր ծառայություններին հաճախող մարդկանց զգացմունքները բորբոքելով: Արդյո՞ք մենք վստահ ենք, որ մեր սրբարանները լցնում է Աստծո իրական ներկայությունը, թե՞ պարզապես քրիստոնեության շրջանակներում անում ենք այն, ինչն ուրիշների մոտ շատ ավելի լավ է ստացվում:

Իրականությունը հետևյալն է. մեզ անհրաժեշտ է Նրա ներկայությունը՝ փոխվելու համար:

Միգուցե հենց սա՞ է պատճառը, որ եկեղեցիներում կան մարդիկ, ովքեր ի սրտե ընդունում են քրիստոնեությունը, սիրում են երկրպագությունը և շարունակում են սովորել, բայց չեն փոխվում: Այդ դեպքում, հետևանքները շատ ծանր կլինեն. այդ մարդիկ չեն վերափոխվի Հիսուսի պատկերով: Տարիներ առաջ մենք հանդուրժում էինք վատ մթնոլորտը, բայց ես հիշում եմ Աստծո զարմանալի ներկայությամբ լցված հավաքույթները: Ես ճշմարտապես փոխվում էի, թեև միշտ չէ, որ կարող էի բացատրել, թե ինչպես էր դա տեղի ունենում:

Հարցը հետևյալն է. ինչո՞ւ մենք չենք կարող ունենալ և՛ մթնոլորտը, և՛ ներկայությունը: Իհարկե, մենք կարող ենք ունենալ երկուսն էլ. կարիք չկա, որ ընտրենք դրանց միջև: Այնուամենայնիվ, Աստծո ներկայությունն ունենալու համար մենք պետք է սրբության ձգտենք:

Թշնամին իր հերթին խորամանկ ծրագիր է մշակել. նա ցանկանում է զրկել քրիստոնեությունը սրբությունից, որպեսզի Հիսուս Զրիստոսի Ավետարանը անգոր կրոնի տպավորություն թողնի շատ կորածների համար, և Հիսուսին հետևելը գրավիչ չթվա նրանց, այնինչ իրականում դա ամենաաներևակայելի կյանքն է, որը հնարավոր է ապրել այս երկրի վրա:

Ի՞նչ է սրբությունը

Այսպիսով, ի՞նչ է սրբությունը: Հունարենում այն «*հագիոս*» բառն է: «*Թայերի Նոր կտակարանի Հունարեն-անգլերեն բառարանում*» այս բառի սահմանումներից մեկն է՝ «առանձնացված՝ Աստծո համար. լինել, այսպես ասած, բացառապես Նրանը»: Այս սահմանման լույսի ներքո թույլ տվեք կրկին մեջբերել Աստծո խոսքերը. «Մի՛ կապվեք նրանց հետ, ովքեր կպղծեն ձեզ: Ես ցանկանում եմ ձեզ ամբողջովին՝ Ինձ համար» (Բ Կորնթացիների 6.17, MSG):

Երբ Լիզան և ես ամուսնացանք, նա դարձավ բացառապես իմը, իսկ ես՝ բացառապես նրանը: Նա նվիրվեց ինձ, որպեսզի ապրեր ինձ համար, իսկ ես նվիրվեցի նրան: Մինչև Լիզայի հետ ծանոթանալը և ամուսնանալը, ես հաշվի չէի առնում Նրա ցանկությունները և երազանքները. ես պարզապես չէի ճանաչում նրան: Լիզան չի սիրում մուգ կահույք, նրան դուր չի գալիս դիտել պրոֆեսիոնալ սպորտային խաղեր և որոշ տեսակի ֆիլմեր, լսել ջազային կամ այլ բարձրաձայն երաժշտություն, օգտագործել «Հազար կղզիներ» և «Բլյու չիզ» թանձրուկները, և մի շարք այլ բաներ: Ես սիրում էի, դիտում էի, լսում էի և օգտագործում էի գրեթե այդ ամենը: Այնուամենայնիվ, երբ մենք ամուսնացանք, ես հրաժարվեցի այդ բաներից, քանի որ գիտեի, որ դրանք հաճելի չէին Լիզային: Կան բազմաթիվ այլ բաներ, որոնք մենք հաճույքով անում ենք միասին:

Ավելին՝ ես սկսեցի հեռու մնալ ցանկացած ոչ պատշաճ կապերից այլ կանանց հետ: Մինչև մեր ամուսնանալը ես շատ ընկերուհիներ ունեի, և ինձ համար սովորական էր տարբեր միջոցառումների հրավիրել նրանց, պարզապես շփվել նրանց հետ և նույնիսկ ժամադրել նրանց: Բայց այն օրը, երբ ես «այո» ասացի Լիզային, իմ փոխհարաբերությունները մնացած բոլոր կանանց հետ անդառնալիորեն փոխվեցին:

Այլ կերպ ասած՝ ես ինքնամոռաց կերպով սիրահարված էի Լիզային, և ինձ համար հաճելի էր ապրել նրա ցանկությունների համար, ոչ թե միայն՝ իմ:

Ես տեսել եմ ամուսինների, որոնց շատ չեն մտահոգում իրենց կանանց ցանկությունները. նրանք եսասիրաբար են մտածում: Նրանք փաստացի ամուսնացած են, բայց այդպիսի զույգերի միջև չկա սերտ մտերմություն: Ամուսնական ուխտ կնքելով՝ մենք պարտավորվում ենք ծառայել մեր կողակիցներին մինչև մեր կյանքի վերջը: Լավ ամուսնության մեջ տեղ չկա եսասիրության համար:

Մինչև Հիսուսի հետ ուխտի մեջ մտնելը, մենք այս աշխարհից էինք և սիրված էինք այս աշխարհի կողմից: Մեզ համար լիովին բնական էր

ապրել մեր մարմնի և աչքերի ցանկություններով: Մենք ձգտում էինք ձեռք բերել կարգավիճակ, համբավ և ցանկացած բան, ինչը կծառայեր մեր հպարտությանը և եսասիրությանը:

Այժմ, երբ մենք հանդիպել ենք Հիսուսին և հարաբերություններ ունենք Նրա հետ, պետք է անկեղծորեն տանք հետևյալ հարցը. մենք ապրում ենք ինքներս մե՞զ համար, թե՞ Նրա համար: Մենք կարող ենք փաստացի «կապ ունենալ» Հիսուսի հետ, բայց չվերապրել Նրա մտերմությունը (չունենալ Նրա հայտնված ներկայությունը): Այդ դեպքում, մենք ոչնչով չենք տարբերվի եսասեր ամուսնուց:

Պողոսը գրում է. «Նրանք, ովքեր ստանում են Նրա նոր կյանքը, այլևս չեն ապրի իրենց համար: Փոխարենը՝ նրանք կապրեն Քրիստոսի համար» (Բ Կորնթացիների 5.15, NLT): Սա միակ ձևն է, որով մենք կարող ենք առողջ հարաբերություններ (կամ՝ ամուսնություն) ունենալ Նրա հետ:

Ուսումնասիրելով այն հատվածը, որում Հակոբոսն անդրադառնում էր շնությանը այս աշխարհի հետ՝ մենք կտեսնենք, որ նա ընդդիմանում էր այն հավատացյալներին, ովքեր վերադարձել էին *եսասիրական* կյանքին.

«...Եթե ձեր սիրտը լցված է... *եսասիրությամբ*, մի՛ պարծեցեք կամ մի՛ ստեք՝ ճշմարտությունը թաքցնելու համար: Այս տեսակի իմաստությունը չի գալիս ի վերուստ: Այն երկրային և *եսասիրական* է, և գալիս է անձամբ սատանայից: Երբ մարդիկ... *եսասեր* են, նրանք խնդիրներ են հարուցում և ամեն տեսակի դաժան արարքներ են գործում:

...Ինչո՞ւ եք կռվում և վիճում իրար հետ: Մի՞թե պատճառն այն չէ, որ դուք լցված եք *եսասիրական* ցանկություններով, որոնք պայքարում են՝ ձեր մարմինը վերահսկելու համար: Դուք ցանկանում եք այնպիսի բան, ինչը չունեք, և ամեն ինչ կանեք, որ ձեռք բերեք դա... Բայց, միևնույն է, դուք չեք կարողանում ստանալ ձեր ցանկացածը և չեք ստանա դա՝ կռվելով ու վիճելով: Դուք պետք է աղոթեք դրա համար: Չնայած, նույնիսկ ձեր աղոթքները չեն պատասխանվում, որովհետև դուք միայն աղոթում եք *եսասիրական* դրդապատճառներով: *Դուք հավատարիմ չեք Աստծուն* [դուք շնացող եք՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք]: Մի՞թե չգիտեք, որ եթե սիրում եք այս աշխարհը, դուք Աստծո թշնամիներն եք: Եվ եթե որոշում եք ընկեր լինել այս աշխարհին, դուք Աստծո թշնամին եք դարձնում ձեզ» (Հակոբոս 3.14-16, 4.1-4, CEV):

Տեսնո՞ւմ եք, թե որքան հաճախ է «*եսասեր*» բառն օգտագործվում այս խոսքերում: Հակոբոսն անում է սա, որովհետև գոյություն ունի ընդամենը երկու վարվելակերպ՝ *նվիրաբերող* և *վերցնող*: Նա, ով միայն վերցնում է, եսասեր է, աշխարհիկ է և անհավատարիմ է Աստծուն: Այն հավատացյալը, ով այսպես է ապրում, շնացող է կոչվում: Հիսուսի

պատվիրաններն առաջնահերթություն չեն նրա համար: Փոխարենը՝ նրա առաջնահերթությունը *սեփական ցանկություններն են*:

Այս աշխարհն առաջնորդվում է եսասիրությամբ, ինչպես նաև այն հավատացյալը՝ ով սուրբ չէ: Նա լիովին նվիրված չէ Աստծուն: Նա եսակենտրոն է, և այդ պատճառով էլ հրապուրվում է այն բաներով, որոնք բավականություն են պատճառում մարմնին ու աչքերին, ինչպես նաև նպաստում են կարգավիճակ և համբավ ձեռք բերելուն:

Մեղքի դրդապատճառը եսասիրությունն է: Նա, ով գողանում է, անում է դա իր համար: Նա, ով ստում է, անում է դա իրեն պաշտպանելու կամ իր շահի համար: Նա, ով շնություն է գործում իր կնոջ հանդեպ, հաշվի է առնում ոչ թե իր կնոջը և երեխաներին, այլ՝ իր ցանկությունները: Նա, ով սպանում է, անում է դա իր համար: Նա, ով անհնազանդ է իշխանությանը, համոզված է, որ ավելի լավ գիտի, թե ինչ է պետք անել, և իր համար ցանկանում է ավելի լավը: Այն մարդը, ով ձգտում է սիրված և ճանաչված լինել, անում է դա իր անապահովության զգացումի և հպարտության պատճառով: Երբ ես խաղ էի դիտում և հրաժարվեցի հնազանդվել Աստծո հստքին, այսինքն՝ անջատել հեռուստացույցը և աղոթել, ես արեցի դա ինձ համար:

Նոր բնություն

Այս աշխարհի մարդիկ ստրկացված են նման վարվելակերպին, քանի որ նրանք կառավարվում են մարմնական (եսասիրական) ցանկություններով և ձգտումներով: Հավատացյալն ազատվել է այս ստրկությունից (տե՛ս Հռոմ. 6.11-14): Որդին ծջմարտապես ազատ է արձակել մեզ:

Հին կտակարանում Աստծո ժողովրդին պատվիրված էր չմեղանչել, բայց նրանք չէին կարող հնազանդվել, քանի որ նրանց բնությունը մեղանչական (եսասիրական) էր: Հին կտակարանը վճռականորեն ապացուցում է, որ մարդն իր կարողությամբ երբեք չի կարող *բարի* կյանք վարել՝ համաձայն Աստծո չափանիշների: Մարդիկ իրենց մարմնական ցանկությունների և ձգտումների ստրուկներն էին, ինչը հակառակ էր Աստծո ցանկությանը:

Մենք՝ նոր ստեղծվածներս, նոր բնություն ունենք: Մենք կենդանի ենք ներսում, վերստեղծված ենք Հիսուսի պատկերով, և բարի կյանք վարելու ներհատուկ կարողություն ունենք: Կարդանք Պողոսի խոսքերը.

«Տիրոջ իշխանությամբ ես ասում եմ հետևյալը. Այլևս մի՛ ապրեք այնպես, ինչպես հեթանոսները, որովհետև նրանք ան-

հուսալիորեն շփոթված են: Նրանց մտքերը լի են խավարով. նրանք թափառում են՝ հեռանալով այն կյանքից, որն Աստված տալիս է, որովհետև նրանք փակել են իրենց մտքերը և խստացրել են իրենց սրտերը Նրա դեմ: Նրանք չունեն ամոթի զգացում: Ապրում են հեշտասեր հաճույքների համար և պատրաստակամորեն ամեն տեսակի պղծություն են գործում» (Եփեսացիների 4.17-19, NLT):

Անհավատը ստրկացված է իր մարմնի ցանկություններով: Նրա հոգին մահացած կամ անկյանք է: Նա չունի Աստծո առջև բարի կյանք վարելու ներհատուկ կարողություն: Ինձ համար տարօրինակ է, երբ քրիստոնյաները զարմանում են անհավատների վարքի պատճառով: Նրանք չեն հասկանում, որ վերստին ծնունդ չունեցող մարդը կարող է վարվել միայն իր բնության համեմատ: Նա մեղանչում է: Նա եսասեր է: Եթե նա մեծ կամքի ուժ ունենա, կարող է բարի կեցվածք ընդունել և նույնիսկ անձնանվեր թվալ: Բայց նույնիսկ չկասկածեք, որ նա իր անկում ապրած բնության ստրուկն է:

Պողոսը շարունակում է նկարագրել ճշմարիտ հավատացյալին.

«Քանի որ դուք լսել եք Հիսուսի մասին և սովորել եք ճշմարտությունը, որը գալիս է Նրանից, մի կողմ նետեք ձեր հին մեղանչական բնությունը և ձեր նախկին կյանքի ոճը, որն ապականված է կրքով ու խաբեությամբ: Փոխարենը՝ թույլ տվեք, որ Հոգին նորոգի ձեր մտքերը և դիրքորոշումները: Հազե՛ք նոր բնությունը, որն ստեղծված է Աստծո նմանությամբ՝ ճշմարտապես արդար և սուրբ» (Եփեսացիների 4.21-24, NLT):

Ի տարբերություն չփրկված մարդու՝ հավատացյալը ներքուստ նոր բնություն է ստացել: Աստծո Խոսքը պատվիրում է մեզ հնազանդվել այդ բնությանը՝ սուրբ կյանքով ապրելու համար: Քրիստոնյան ունի ընտրություն, որից անհավատը զուրկ է: Քրիստոնյան կարող է զիջել նոր ստեղծվածի զորավոր ներքին բնությանը կամ շարունակել հնազանդվել իր մարմնի ցանկություններին. ընտրությունը մերն է:

Դիրք և վարվելակերպ

Այս պահին կարևոր է պարզաբանել, թե ինչի մասին ենք մենք խոսում: Սրբությունը ունի երկու կարևոր կողմ, և երկուսն էլ ներկայացված են Նոր կտակարանում: Շփոթությունը սրբության վերաբերյալ միշտ առաջանում է, երբ մարդիկ փորձում են միախառնել այս երկուսը:

Առաջինը վերաբերում է մեր *դիրքին* Քրիստոսում: Պողոսը գրում է. «Նույնիսկ մինչև աշխարհն ստեղծելը, Աստված սիրեց մեզ և ընտրեց մեզ Քրիստոսում՝ լինելու *սուրբ* և անարատ Իր առջև» (Եփեսացիների 1.4, NLT): Այս սրբությունը վերագրվում է մեզ զուտ այն աշխատանքի պատճառով, որը Յիսուսը կատարեց մեզ համար, և ցույց է տալիս մեր դիրքը Քրիստոսում: Մենք ոչ մի դեպքում չէինք կարող վաստակել այս դիրքը մեր վարվելակերպով. սա Յիսուսի պարգևն է մեզ:

Երբ Լիզան դարձավ իմ կինը, նա չվաստակեց իր նոր դիրքը, այլ ստացավ այն, քանի որ ես տվեցի իմ սիրտը նրան: Նա արեց նույնը ինձ համար: Մենք մեկընդմիջտ ուխտ կնքեցինք իրար հետ:

Սրբության երկրորդ կողմը *վարվելակերպն* է, որը սրբության դիրքն զբաղեցնելու հետևանքն է: Յենց որ Լիզան դարձավ իմ կինը, նրա վարքն արտացոլեց նրա հավատարմությունն իմ հանդեպ: Նա այլևս չէր սիրախոսում այլ տղամարդկանց հետ և շփում չէր փնտրում նրանց հետ: Նրա գործերը համապատասխան էին ինձ հետ ունեցած նրա անսասան ամուսնական հարաբերություններին: Եվ, իհարկե, որպես նրա ամուսին՝ ես նույն կերպ էի վարվում:

Այս գրքում ես նկարագրում եմ սրբության հենց այս կողմը: Պետրոսը խոսում է այս մասին.

«Այնպես որ, դուք պետք է ապրեք որպես Աստծո հնազանդ զավակներ: Ետ մի՛ նահանջեք դեպի ձեր նախկին կյանքի ճանապարհները՝ բավարարելու ձեր ցանկությունները: Այդ ժամանակ դուք շատ բաներ չէիք հասկանում: Բայց հիմա պետք է սուրբ լինեք ձեր բոլոր գործերի մեջ, ինչպես որ Աստված, Ով ընտրեց ձեզ, սուրբ է: Որովհետև Սուրբ գիրքն ասում է. «Դուք պետք է սուրբ լինեք, որովհետև Ես սուրբ եմ»: Եվ հիշեք, որ երկնային Յայրը, Ում դուք աղոթում եք, չունի համակրելիներ: Նա կդատի կամ կվարձատրի ձեզ ըստ *ձեր գործերի*: Այնպես որ, դուք պետք է ապրեք՝ երկյուղած Նրանից, այն ժամանակի մեջ, որն անցկացնում եք որպես «օտարականներ այս երկրում»» (Ա Պետրոս 1.14-17, NLT):

Ակնհայտ է, որ Պետրոսը խոսում էր Աստծո զավակների հետ, ոչ թե կորածների: Նա ասում է, որ Աստված կդատի կամ կվարձատրի մեզ ըստ *մեր գործերի*, ինչը խոսում է մեր *գործողությունների* մասին, ոչ թե Քրիստոսում ունեցած *դիրքի*: Յիսուսի արյունը ներում է բոլոր մեղքերը, բայց գոյություն ունի որոշակի դատաստան, որին ենթակա կլինեն Աստծո զավակները՝ համաձայն *իրենց գործերի*: Պողոսը հաստա-

տում է այս փաստը Բ Կորնթացիների 5.9-11-ում: Համառորեն անհնազանդության մեջ ապրելը՝ աննշան բան չէ: Եթե մենք ճշմարտապես Նրանն ենք, մենք պետք է ջանասիրաբար ձգտենք չապրել մեղքի մեջ և ցավ չպատճառել Նրա սրտին:

Ինչպես Հակոբոսը և Պողոսը, Պետրոսը նույնպես հաստատում է, որ մեր կյանքի հին ճանապարհներն առաջնորդվում էին եսասիրական ցանկություններով, և հորդորում է մեզ սուրբ լինել մեր բոլոր գործերում: Թույլ տվեք կրկին գրավել ձեր ուշադրությունը. նա խոսում է մեր վարքի և կենսատժի մասին, ոչ թե Քրիստոսում ունեցած դիրքի: Այս նույն հատվածի մեկ այլ թարգմանության մեջ գրված է, որ մենք պետք է «սուրբ լինենք մեր բոլոր վարքերում և ապրելակերպում» (խոսք 15, AMP): Պետրոսի խոսքերի մեջ անհասկանալի և շփոթեցնող ոչինչ չկա: Համաձայնելով Պողոսի հետ՝ նա պարզապես պնդում է հետևյալը. եթե մենք շնորհքով փրկված ենք, մեր նոր բնությունը կարողություն է տալիս ապրելու այլ կերպ, քան այս աշխարհը, այսինքն՝ ապրելու սուրբ կյանքով:

Հիշե՛ք Եբրայեցիների 12.14-ը, որը պատվիրում է մեզ ձգտել սրբության: Վերջերս ես գտա Չարլզ Սփերջենի քարոզներից մեկը, որը գրավեց իմ ուշադրությունը: Այս քաղվածքը ցույց կտա ձեզ դրա պատճառը.

«Որոշ անտիճոմիականների կողմից հուսահատ փորձ է արվել՝ ազատվելու այն կարգադրությունից [սրբությանը ձգտելուց], որը Սուրբ Հոգին ցանկանում է պարտադրել այս հատվածում: Նրանք ասել են, որ խոսքն այստեղ Քրիստոսի սրբության մասին է, որը վերագրվել է մեզ: Մի՞թե նրանք չգիտեն, որ կեղծիք են խոսում՝ բացահայտ կերպով աղավաղելով գրվածը... Մենք պետք է հետևենք սրբությանը. այս սրբությունը պետք է լինի գործնական և լինի պղծության հակառակը, ինչպես գրված է. «Որովհետև Աստված չկանչեց մեզ պղծության մեջ, այլ՝ սրբության մեջ»... Սա այլ տեսակի սրբություն է: Այս հորդորանքի միտքը, փաստորեն... գործնական, կենսական սրբությունն է: Այս սրբությունը նշանակում է՝ համապատասխանություն Աստծո կամքին և հնազանդություն Տիրոջ պատվիրաններին»¹³:

Հրաշալի՛ մեկնաբանություն: Ակնհայտ է, որ սրբության գաղափարն առաջին անգամ չէ, որ հարձակման է ենթարկվում եկեղեցում, որովհետև Սփերջենը սովորեցնում էր 1800-ական թվականներին: Բայց երբ մեր միտքը հիմնված է Սուրբ գրքի ճշմարտության վրա, մենք կարող ենք հասկանալ, որ սրբությունը կապ ունի և՛ Քրիստոսում ունեցած մեր ինքնության, և՛ Նրա խոսքը պահելու հետ:

Կա մի կարևոր ճշմարտություն. մենք չենք վաստակում կամ ձեռք բերում մեր սեփական արժանիքներով և ուժերով ո՛չ մեր *դիրքը* Քրիստոսի մեջ, ո՛չ էլ մեր *վարվելակերպը*: Երկուսն էլ ձրիաբար են տրված մեզ: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է երկրորդին, մենք պետք է համագործակցենք մեր նոր բնության հետ կամ զիջենք դրան՝ բարի վարվելակերպ ունենալու համար:

Սրբության մեկ այլ սահմանում

Ինչպես տեսնում ենք, սրբությունը նշանակում է ավելին, քան սոսկ Նրանը լինելը: Այն նշանակում է այնպիսի վարվելակերպ, որը բարոյապես ընդունելի է Աստծո համար: Մենք կարող ենք անդրադառնալ սրբության ևս մեկ սահմանման: Յունարեն «հագիոս» բառը նույնպես խոսում է «մաքուր, անմեղ և արդար» վարքի մասին: Այս իմաստը վախեցնում է ոմանց, բայց այդպես չպետք է լինի: Ես կարող եմ բացատրել, թե ինչ նկատի ունեմ՝ պատմելով մի պատմություն իմ մանկությունից, երբ ես անհարմար վիճակում էի հայտնվել:

Մեր ընտանիքում վեց երեխա կար, և ես միակ տղան էի. այնպես որ, մեր բակի հետ կապված բոլոր գործերը՝ իմ պարտականությունն էին: Ես լվանում էի մեր մեքենան, հնձում էի սիգամարզը, հավաքում էի թափված տերևները, մաքրում էի ձյունը և այլն: Քանի որ ընկերներս և ես սիրում էինք սպորտային խաղեր, սովորաբար արագորեն կատարում էինք մեր գործերը, որպեսզի ժամանակ չահեինք մեր խաղերի համար:

Գարունը նոր էր սկսվել, և խոտը կրկին աճում էր երկարատև ձմռանից հետո: Ընկերներս ու ես որոշել էինք, որ հանդիպելու էինք դասերից հետո՝ միասին խաղալու համար: Ես մի փոքր անտեսել էի սիգամարզը, և խոտը երկարել էր: Նախորդ երեկոյան հայրս ասել էր, որ ես կարող էի խաղալ ընկերներիս հետ միայն սիգամարզը հնձելուց հետո: Բացի այդ՝ այդ հանձնարարությունը պետք է կատարված լիներ մինչև նրա աշխատանքից տուն վերադառնալը:

Դասերից հետո ես արագորեն տուն գնացի, փոխեցի հագուստս և առաջին անգամ այդ գարնանը ավտոտնակից դուրս հանեցի սիգամարզ հնձող մեքենան: Ես գիտեի, որ պետք է արագ անեի ամեն ինչ, քանի որ շուտով ընկերներս պատրաստ էին լինելու խաղի համար: Ես մի քանի անգամ քաշեցի շարժիչի լարը, բայց այն չաշխատեց: Դրանից հետո մի քանի անգամ սեղմեցի կարգավորող կափարիչի կոճակը, որ կարթուրատորի մեջ ավելի շատ վառելիք գնար: Ես կրկին ու կրկին քաշեցի շարժիչի լարը, բայց ոչինչ տեղի չունեցավ:

Ես մտածեցի. «Միգուցե ես թրջել եմ կարբյուրատորը և պետք է մի քանի րոպե սպասեմ, որ այն չորանա»:

Ես սպասեցի և այդ ընթացքում ստուգեցի յուրը: Այնուհետև ստուգեցի բոլոր անջատիչները՝ համոզվելու համար, որ դրանք միացրած էին: Թվում էր՝ ամեն ինչ սարքին էր. ուղղակի պետք է սպասեի մի քանի րոպե: Ես կրկին փորձեցի, իսկ հետո՝ ևս մեկ անգամ, բայց շարժիչը չէր աշխատում:

Ես հուսահատվեցի. ստուգեցի լուցամուճը. հնարավոր է, որ այն կեղտոտված լիներ: Բայց այն անվնաս էր: «Ո՞րն է խնդիրը», - մտածեցի ես: Ամեն րոպե ավելի էի բարկանում: Եթե հնձող մեքենան չմիանար, ես չէի հնձի սիզամարզը, չէի գոհացնի հորս և չէի կարողանա խաղալ ընկերներիս հետ:

«Ի՞նչ կարող եմ անել,- մտածեցի ես: - Եթե վերանորոգման կետ տանեմ այն, ես տուն կվերադառնամ արդեն ուշ երեկոյան և բաց կթողնեմ խաղը: Միգուցե հնձող մեքենա խնդրեմ ինչ-որ մեկից... բայց դրա համար շատ ժամանակ կպահանջվի»: Մենք ձեռքի մեծ մկրատներ ունեինք, բայց ես հազիվ թե կարողանայի կտրել ամբողջ խոտը մինչև ուշ երեկո, և նույնիսկ այդ դեպքում սիզամարզն անհարթ կլիներ և շատ վատ տեսք կունենար: Այդպես չէր ստացվի:

Ես բարկացա այդ հին մեքենայի վրա. «Սրա պատճառով ես լավ խաղ եմ բաց թողնելու», - մտածեցի: Ես գիտեի, որ մեքենան անսարք էր: Ես անլուծելի իրավիճակում էի. ոչ մի դեպքում չէի հասցնի հնձել խոտը և ժամանակին հանդիպել ընկերներիս:

Իմ ընկերներից մեկը, ով խաղի էր գնալու ինձ հետ, եկավ ինձ մոտ:

- Ջոն, պատրաստ ես, - հարցրեց նա:

- Ո՛չ: Հայրս ասել է, որ պետք է հնձեմ սիզամարզը մինչև գնալը, իսկ հնձող մեքենան չի աշխատում,- ասացի ես: - Ես ժամանակ չունեմ, որ նորոգեմ այն, մեկ այլ մեքենա խնդրեմ ինչ-որ մեկից կամ ձեռքով կտրեմ սիզամարզը: Այսօր ես խաղի չեմ գա:

Իմ ընկերը, ով ինձնից մի փոքր իմաստուն էր, ասաց.

- Թո՛ւյլ տուր նայեմ:

- Իհարկե,- հուսահատորեն ասացի ես:

Նա առաջին հերթին բացեց վառելիքի բաքը, նայեց բաքի մեջ և սկսեց ծիծաղել.

- Ահա և քո խնդիրը, Ջոն: Բաքում վառելիք չկա:

Ես անհարմար զգացի ինձ, բայց նաև՝ թեթևություն:

«Ծանկ գլուխ,- մտածեցի ես,- դու պետք է ստուգեիր դա առաջին հերթին»: Ես լցրի բաքը, և մեքենան անմիջապես աշխատեց: Ես

արագ հնձեցի սիզամարզը, և մենք գնացինք խաղալու մեր ընկերների հետ:

Ի՞նչ կապ ունի այս պատմությունը սրբության հետ: Երբ մենք տեսնում ենք սրբության սահմանումը («մաքուր», «անմեղ» և «արդար» բառերը), հուսահատվում ենք՝ մտածելով. «Սա անհնա՛ր է»: Պատճառն այն է, որ մենք փորձում ենք պատկերացնել, թե ինչպես ենք անելու դա մեր սեփական ուժերով: Սա նման է, որ փորձեք մեծ մկրատով կտրել ամբողջ բակի խոտը և ժամանակին հասցնեք խաղին: Սա լիովին անհնա՛ր է: Դրսում արդեն կմթնի, իսկ դուք չեք հասցնի ավարտել բակի նույնիսկ մի փոքր մասը:

Այնուամենայնիվ, մենք նոր բնություն ունենք, որը կարելի է համեմատել սիզամարզ հնձող մեքենայի հետ: Սակայն եթե բաքի մեջ վառելիք չլինի, մեր վիճակը նույնքան վատ կլինի, որքան այն ժամանակ, երբ չունեինք այդ մեքենան: Բաքի մեջ պետք է վառելիք լինի, որ մեքենան սկսի աշխատել:

Հաջորդ գլխում մենք կտեսնենք, թե ինչն է բորբոքում մեր նոր բնությունը, այսինքն՝ ինչի շնորհիվ մենք կարող ենք անարատ վարվել Աստծո առջև:

ՎԱՌԵԼԻՔԸ

«...իմացնում ենք ձեզ Աստծո այն շնորհքը,
որը Մակեդոնացիների եկեղեցիներին տրված է...
որովհետև իրենց կարողության չափ, վկայում են,
և կարողությունից էլ ավելի...»:
— Բ Կորնթացիների 8.1-3

...«Կատարյալ եղեք»-ը... անհնարինը
կատարելու պատվիրան չէ: [Աստված]
դարձնելու է մեզ այնպիսի ստեղծվածներ, ովքեր
կարող են հնազանդվել այդ պատվիրանին:
— Կ. Ս. Լյուիս

Սրբությանը ձգտելը ինքնանպատակ չէ. այն դուռ է դեպի Հիսուսի ներկայությունը: Տերը պարզ ասում է. «Այն մարդը, ով ունի Իմ պատվիրանները և պահում է դրանք, նա է, ով [իրականում] սիրում է Ինձ... և ես [նույնպես] կսիրեմ նրան և ցույց կտամ (կհայտնեմ, կդրսևորեմ) Ինձ նրան: [Ես պարզորեն տեսանելի կդարձնեմ Ինձ նրան, և իրական կդարձնեմ Ինձ նրա համար]» (Հովհաննես 14.21, AMP): Մենք մտերմորեն ճանաչում ենք Տիրոջն այն ժամանակ, երբ պահում ենք Նրա խոսքերը:

Եբրայեցիների նամակի հեղինակը հաստատում է սա. «Յետևե՛ք... սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբրայեցիների 12.14): Ամեն ինչ պարզ է. առանց սրբության մարդը չի կարող տեսնել Տիրոջը, այսինքն՝ չի կարող մտնել Նրա ներկայության մեջ:

Սրբության իմաստն է՝ լինել բացառապես Նրանը, լինել առանձնացված Նրա համար: Այն նույնպես նշանակում է՝ լինել «մաքուր, անմեղ, արդար»: Այս երկու սահմանումներն անբաժան են իրարից: Նրան պատկանելը նշանակում է՝ ապրել նրա համար, հաճեցնել Նրան մեր վարքով: Կողոսացիների 1.10-ում գրված է, որ Նա ցանկանում է, «որ դուք քայլեք (ապրեք և վարվեք) Տիրոջը արժանի կերպով՝ լիովին հաճեցնելով Նրան» (AMP): Ի վերջո, Նա վերադառնալու է փա-

ռավոր եկեղեցու ետևից, «որ չունենա մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ, որ սուրբ և անարատ լինի» (Եփեսացիների 5.27):

Յետաքրքիր է, որ սա միակ նկարագրությունն է այն մարդկանց մասին, ում համար Նա վերադառնում է: Մտածե՛ք այս մասին. Սուրբ գիրքը չի նկարագրում Նրա Յարսնացուին որպես զորավոր, արդիական, լավ առաջնորդներ և հասարակության մեջ լավ կապեր ունեցող, երկրպագող կամ ուրախ: Այս ամենը հրաշալի առավելություններ են, բայց գերակշռող հատկանիշը, որը Նա ցանկանում է Իր Յարսնացուի մեջ՝ «սուրբ և անարատ» լինելն է:

Գոյություն ունի ևս մեկ հետաքրքիր փաստ այս մասին. սրբությունը գերակշռող հատկանիշն է, որով Սուրբ գիրքը նկարագրում է Աստծուն: Եսայի մարգարեն և Յովհաննես առաքյալը գրում են Աստծո գահի սրահը տեսնելու մասին: Երկուսն էլ չէին կարող չնկատել, որ զորավոր հրեշտակները, ովքեր շրջապատում էին Նրան, անդադար աղաղակում էին. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ» (տե՛ս Եսայի 6.3 և Յայտն. 4.8): Նրանք չէին գոչում. «հավատարի՛մ», «սիրո՛ղ», «բարի՛» կամ «առատածե՛ռն»: Նա ունի բոլոր այս հրաշալի հատկանիշները, բայց սրբությունը գերակշռում է այդ ամենը:

Երկու տարբերակ

Մաքուր, անմեղ և արդար լինելու պատվերը մշտապես առաջացրել է հետևյալ հարցը. «Ինչպե՞ս կարող ենք այսպես ապրել»: Մենք փորձել ենք անել դա մեր զորությանը և լիովին ձախողվել ենք: Մենք ցանկանում էինք հնազանդվել Աստծո օրենքին, որը բնակվում է մեր խղճի մեջ (տե՛ս Յռոմ. 2.14,15), բայց շարունակ ձախողվում էինք:

Այնուամենայնիվ, եկավ Աստծո *շնորհքը*: Մենք չէինք կարող վաստակել այն մեր բարի վարքով, և մինչև օրս էլ չենք կարող: Մենք արժանի չէինք դրան, և մինչև օրս էլ արժանի չենք: Աստծո պարգևը լիովին ներում է մեզ, և կշարունակի ներել, երբ մենք կրկին ձախողվենք: Մենք փրկվե՛լ ենք մեր մեղքերից:

Թեև մենք ունենք այս զարմանալի գիտելիքը, սակայն մինչև օրս հիասթափված ենք, քանի որ չենք կարողանում պահել նրա պատվիրանները: Ինչո՞ւ ենք մենք այդպիսի պայքարի մեջ: Մենք վերստին ծնվել ենք և նոր բնություն ունենք: Այդ դեպքում, ինչո՞ւ ենք մենք շարունակ ձախողվում:

Մենք սկսում ենք մտածել մեկ այլ տարբերակի մասին, որը կարող է թեթևացնել մեր դրությունը: Մենք կարող ենք սովորեցնել, որ սրբութե-

յունը միայն վերաբերում է մեր դիրքին Քրիստոսում և, ընդհանրապես, անտեսենք, որ Աստվածաշունչը կոչ է անում մեզ սուրբ վարք ունենալ՝ մեղմացնելով այն դատապարտությունը, որն զգում ենք: Մենք կարող ենք արդարացնել այն փաստը, որ մեր կյանքը չի փոխվում՝ ասելով, որ մենք սովորական մարդիկ ենք և մշտապես սխալներ ենք գործելու: Մենք կարող ենք ընդամենը կենտրոնանալ շնորհքի համառոտ վարդապետության վրա՝ այն, որ շնորհքը ծածկում է մեր անցյալ, ներկա և ապագա մեղքերը: Եթե մենք այսպես սովորեցնենք և միայն այսպես հավատանք, մենք կեղծ ապահովություն կստեղծենք, քանի որ պարզապես կլռեցնենք մեր խիղճը: Այնուամենայնիվ, եթե ավելի ուշադրությամբ ականջ դնենք մեր սրտին, մենք կլսենք դրա աղաղակը. «Պետք է ավելի՛ն լինի»:

Ցավոք, մեզնից շատերը բավարարվել են այս տարբերակով և, փաստորեն, անտեսել են բազմաթիվ նորկտակարանյան խոսքերը, որոնք կոչ են անում մեզ աստվածահաճո վարվելակերպ ունենալ: Ես կարող էի բազմաթիվ սուրբգրային հատվածներ թվարկել այս թեմայով, և դրանք շատ էջեր կգրադեցնեին, բայց թույլ տվեք սկսել միայն մեկ նման հատվածից.

«Իմ թանկ զավակներ, ես գրում եմ սա ձեզ, որ դուք չմեղանջեք... Եվ մենք կարող ենք վստահ լինել, որ ծանաչում ենք Նրան, եթե մենք հնազանդվում ենք Նրա պատվիրաններին: Եթե ինչ-որ մեկը պնդում է. «Ես ծանաչում եմ Աստծուն», բայց չի հնազանդվում Աստծո պատվիրաններին, այդ անձը ստախոս է և չի ապրում ծձմարտության մեջ: Բայց նրանք, ովքեր հնազանդվում են Աստծո խոսքին, ծձմարտապես ցույց են տալիս, թե ինչպես լիարժեք կերպով սիրել նրան: Ահա թե ինչպես մենք գիտենք, որ ապրում ենք Նրանում: Նրանք, ովքեր ասում են, որ ապրում են Աստծո մեջ, պետք է ապրեն իրենց կյանքերը՝ ինչպես Հիսուսը» (Ա Յովհաննես 2.1,3-6, NLT):

Հովհաննեսը չգրեց. «Մի՛ անհանգստացեք, եթե մեղք գործեք. չէ՞ որ մենք մարդ ենք»: Ո՛չ, նա միանշանակ գրում է. «...որ դուք չմեղանջեք»: Ահա թե ինչը պետք է լինի մեր նպատակը: Եթե մենք վրիպում ենք, իհարկե, մեր կյանքում կա Հիսուսի արյունը, որը մաքրում է մեզ: Բայց և այնպես, մեր նպատակը պետք է լինի Հիսուսի պես ապրելը: Եվ համաձայն Սուրբ գրքի՝ դա անհասանելի նպատակ չէ: Ստացվում է՝ այն, որ ինչ-որ մեկն անտեսում է կրկնվող մեղքը՝ արդարացնելով այն իր «մարդկային բնությամբ», չի համապատասխանում Հովհաննեսի խոսքերին և բազմաթիվ այլ հատվածների Նոր կտակարանում:

Մի՞թե մենք չունենք այն, ինչն անհրաժեշտ է մեզ: Մի՞թե Աստված չի կանխատեսել մեր երկընտրանքը և չի ապահովել դրա լուծումը: Իհարկե, Նա այդպես էլ արել է: Այս տարբերակի մասին ավելի քիչ են խոսում, բայց այն կատարելապես համապատասխանում է Նոր կտակարանի ուսմունքին: Խոսքը շնորհքի այն կողմի մասին է, որն անհայտ է շատերին: Դա այն վառելիքն է, որը զորություն է տալիս մեր նոր բնությանը: Պարզ ասած՝ շնորհքը զորացնում է մեզ, որ ճշմարտապես բարի կյանք ունենանք:

Անհայտ ճշմարտությունը շնորհքի մասին

2009 թվականին ամբողջ Ամերիկայով մի հարցում էր անցկացվել, որին մասնակցել էին հազարավոր քրիստոնյաներ: Խոսքը հավատացյալների մասին է՝ վերստին ծնված, Աստվածաշնչին հավատացող և տարբեր եկեղեցիներ հաճախող մարդկանց: Բոլորին տրվում էր հետևյալ հարցը. «Ասե՞ք Աստծո շնորհքի երեք կամ ավելի սահմանում»: Պատասխանների գերակշռող մեծամասնությունն էր. «փրկություն», «անարժանաբար տրվող շնորհք» և «մեղքերի ներում»:

Շատ լավ է, որ ամերիկացի քրիստոնյաները հասկանում են, որ մենք փրկված ենք միայն շնորհքով: Փրկությունը չի տրվում ջրցողմամբ, եկեղեցական պատկանելիություն ունենալով, կրոնական օրենքներ պահելով, չար գործերը գերազանցող բարի գործեր անելով և այլն: Ամերիկացի ավետարանական հավատացյալների մեծ մասը հաստատ գիտի այս հիմնարար ճշմարտություններն Աստծո շնորհքի մասին, քանի որ դրանք քարոզվել են մեր ամբիոններից, և ես համոզված եմ, որ Աստծուն հաճելի է դա:

Այնուամենայնիվ, ողբերգությունն այն է, որ հարցմանը մասնակցող հազարավոր քրիստոնյաներից ընդամենը 2 տոկոսն է պատասխանել, որ շնորհքը՝ Աստծո *զորությունն* է¹⁴: Այնուամենայնիվ, Աստված ճիշտ այսպես սահմանեց և նկարագրեց Իր շնորհքը: Նա ասում է.

«Իմ շնորհքը՝ այն ամենն է, ինչը պետք է քեզ, որովհետև Իմ զորությունը լավագույնս գործում է քո տկարության մեջ»
(Բ Կորնթացիների 12.9, TEV և NLT):

Աստված ասում է, որ Իր շնորհքը՝ Իր զորությունն է: «Տկարություն» բառն այստեղ նշանակում է անկարողություն: Աստված ասում է. «Իմ շնորհքը՝ Իմ զորությունն է, և այն նախատեսված է այնպիսի իրավիճակների համար, որոնք գերազանցում են քո կարողությունը»:

Պետրոս առաքյալը նույն կերպով է սահմանում Աստծո շնորհքը: Նա գրում է. «Շնորհք և խաղաղություն շատանա ձեզ վրա... Ինչպես որ Նրա աստվածային զորությունը շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է...» (Բ Պետրոս 1.2,3): Շնորհքը ևս մեկ անգամ կոչվում է «Նրա աստվածային զորությունը»: Պետրոսը պնդում է, որ բոլոր միջոցները և կարողությունները, որոնք անհրաժեշտ են աստվածապաշտ և սուրբ կյանքի համար, հասանելի են շնորհքի զորացման միջոցով:

Այնուամենայնիվ, այդ հետազոտությունը ցույց տվեց, որ ամերիկացի քրիստոնյաների միայն 2 տոկոսը գիտի այս մասին, ինչը մեծ խնդիր է: Թույլ տվեք բացատրել: Մենք պետք է հավատանք, որպեսզի ստանանք Աստծուց: Յենց այս պատճառով է Նոր կտակարանը կոչվում «հավատքի խոսք» (տե՛ս Հռոմ. 10.8): Պարզ ասած՝ եթե մենք չհավատանք, մենք չենք ստանա:

Ահա մի պարզ օրինակ: Հիսուսը մահացավ ամբողջ աշխարհի մեղքերի համար, բայց փրկվում են միայն նրանք, ովքեր հավատում են դրան: Այնպես որ, մենք շատ մեծ խնդիր ունենք. եթե քրիստոնյաների 98 տոկոսը չգիտի, որ Աստծո շնորհքը՝ Նրա զորությունն է, նշանակում է՝ քրիստոնյաների 98 տոկոսը փորձում է սուրբ լինել սեփական կարողությամբ: Արդյունքում՝ նրանք պարտվում և հիասթափվում են: Նրանց նոր բնությունը ուժ չի ստանում. այլ կերպ ասած՝ նրանց բաքի մեջ վառելիք չկա:

Մեկ քայլ առաջ գնանք հունարենի մեջ: Այն բառը, որը Նոր կտակարանում ամենից հաճախ է թարգմանվում «շնորհք» բառով, «խաբիս»-ն է: «Սթրոնգի լիակատար համաբարբառը» այն սահմանում է որպես «նվեր», «օգուտ», «բարեհաճություն», «գթասիրտ» և «առատածեռնություն»:

Եթե վերցնեք այս սկզբնական սահմանումը և համադրեք այն մի քանի խոսքերի հետ Հռոմեացիների, Գաղատացիների և Եփեսացիների նամակներից, դուք կստանաք «շնորհք» բառի այն սահմանումը, որին ծանոթ է Ամերիկայի մեծ մասը: Այնուամենայնիվ, «Սթրոնգի բառարանի» սահմանումը շարունակություն ունի. «աստվածային ազդեցություն մարդու սրտի վրա և դրա արտացոլումը նրա կյանքում»: Մենք տեսնում ենք, որ գոյություն ունի մարդու սրտում կատարված աշխատանքի արտաքին վկայություն, որը և շնորհքի զորացման ապացույցն է:

Գործք առաքելոց գրքում Բառնաբասը եկավ Անտիոքի եկեղեցի և տեղ հասնելով՝ «տեսավ Աստծո շնորհքի ապացույցը» (Գործք 11.23, NIV): Նա չլսեց շնորհքի մասին. նա տեսավ դրա ապացույցը: Անտիոքի եկեղեցու անդամների վարքը հաստատում էր, որ նրանց սրտերում գործում էր շնորհքի զորությունը:

Ահա թե ինչու է Զակոբոս առաքյալը գրում. «Ցոյց տուր ինձ քո հավատքը [շնորհքը]՝ առանց քո գործերի, իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքը [շնորհքը]՝ իմ գործերով» (Զակոբոս 2.18, NKJV): Ես օգտագործեցի «շնորհք» բառը «հավատք» բառի փոխարեն, քանի որ մենք ստանում ենք Աստծո շնորհքը հավատքով (այսինքն՝ հավատալով Աստծո խոսքին). «Մենք մուտք ունենք հավատքով այս շնորհքի մեջ» (Ղեկավարների 5.2, NKJV): Առանց հավատքի (այսինքն՝ հավատալու)՝ չկա գործություն (շնորհք): Զակոբոսը շեշտում է. «Ցոյց տուր ինձ գորացման ապացույցը»: Ահա և ճշմարիտ ցուցանիշն այն մասին, որ մենք շնորհք ենք ստացել հավատքի միջոցով:

Շնորհքը՝ *պարզ* է: Ընդլայնենք մեր պատկերացումը շնորհքի մասին՝ մտապահելով այն, ինչ նոր սովորեցինք: Փրկությունը՝ *շնորհքի պարզ* է: Ներումը՝ *շնորհքի պարզ* է: Բժշկությունը՝ *շնորհքի պարզ* է: Մատակարարումը՝ *շնորհքի պարզ* է: Այս ամենը Նրա բարեհաճության դրսևորումներն են մեր կյանքում, և մենք չենք կարող վաստակել դրանցից որևէ մեկը կամ արժանանալ դրանց:

Չորացում ասելով մենք նկատի ունենք, որ *շնորհքը մեր բնական կարողությունը գերազանցելու կարողություն է տալիս մեզ*: Մենք չունենք ինքներս մեզ դժոխքից ազատելու կարողություն, բայց շնորհքն արեց դա: Մենք չպետք է ապրեինք ազատության մեջ, բայց շնորհքը տալիս է մեզ այդ կարողությունը: Մենք չէինք կարող փոխել մեր բնությունը, բայց շնորհքը կատարեց դա մեզ համար: Մենք չունենք սրբության միջոցով կարողություն, բայց ստանում ենք այն շնորհքի միջոցով: Ահա թե ինչու ենք մենք զարմանալի անվանում այն:

Չարց, որը կորդի ձեզ մտածել

Վերջերս՝ աղոթքի ժամանակ, Տերը հարցրեց ինձ. «Որդի՛ս, ինչպե՞ս եմ ես ներկայացրել *շնորհքն* Իմ գրքում՝ Նոր կտակարանում»:

Ես տասից ավելի գրքեր եմ գրել. այնպես որ, ինձ համար այդ հարցը շատ կարևոր էր: Թույլ տվեք բացատրել, թե ինչու: Երբ նոր հասկացություն եմ ներմուծում որևէ գրքում՝ այնպիսին, որին ոչ շատերն են ծանոթ, ես ներկայացնում եմ այդ հասկացության գլխավոր սահմանումը այն առաջին անգամ օգտագործելիս: Արդեն հաջորդ էջերում ես կարող եմ ներկայացնել դրա երկրորդական սահմանումները: Այնպես որ, երբ փորձառու հեղինակի գրքում նոր հասկացություն է ներմուծվում, ես համարում եմ, որ այն ներկայացվում է իր գլխավոր սահմանումով:

«Զգիտեմ», - պատասխանեցի ես Տիրոջը:

Ես անվարան վերցրի իմ Աստվածաշնչի համաբարբառը և գտա այն հատվածը Նոր կտակարանում, որտեղ Աստված առաջին անգամ օգտագործում է «շնորհք» բառը. «Եվ Նրա լիությանից մենք ամենքս առանք շնորհք՝ շնորհքի տեղ» (Յովհաննես 1.16):

Ուշադրություն դարձրեք, որ Յովհաննեսը գրում է. «Շնորհք՝ շնորհքի տեղ»: Ես մի ընկեր ունեմ, ով ծնվել և ապրում է Աթենքում՝ Յունաստանում: Յունարենը նրա մայրենի լեզուն է, և բացի այդ՝ նա հին հունարենի մասնագետ է: Նա այն մարդկանցից մեկն է, ում ես դիմում եմ, երբ հունարենի հետ կապված հարցեր եմ ունենում: Նա ասաց ինձ, որ իրականում առաքյալն ուզում էր ասել, որ Աստված փոխանցել էր մեզ «շնորհքի մեծ առատությունը»: Այլ կերպ ասած՝ Յովհաննես առաքյալն ասում էր մեզ, որ մենք ստանում ենք Յիսուս Քրիստոսի լիությունը շնորհքի առատության միջոցով: Դուք հասկացա՞ք սա: *Անձամբ Յիսուս Քրիստոսի լիությունը*: Սա շատ բան է նշանակում, հատկապես՝ շնորհքի կողմից տրված բնությունը, կարողությունը և զորությունն ունենալու իմաստով:

Եկեք մի քանի օրինակ բերենք՝ ցույց տալու համար, թե որքա՞ն նշանակալի է այս արտահայտությունը:

Պատկերացրեք, որ ես մոտենում եմ մի դպրոցական բասկետբոլային թիմի խաղացողի, ով իր թիմի ակնառու անդամներից չէ: Նա միշտ նստում է փոխարինողների նստարանին, մինչև որ խաղի ավարտին մնում է երկու րոպե, և նրա թիմը կամ հաղթում է, կամ պարտվում քսան միավորով:

Ես հրում եմ նրան ու ասում.

- Մենք մի գիտական հայտնագործություն ենք արել, որի շնորհիվ կարող ենք տալ քեզ լավագույն բասկետբոլիստներից մեկի՝ ԼեՌոն Ջեյմսի լիությունը:

Ձեր կարծիքով, ի՞նչ կայատասխանի: Նա կասի.

- Այո՛, արե՞ք դա հենց հիմա: Ի՞նչ պետք է ես անեմ:

Դուք կարող եք գուշակել, թե ինչ տեղի կունենա, հենց որ մենք անենք դա: Նա ոչ միայն կդառնա իր դպրոցական թիմի լավագույն խաղացողը, այլև նրա թիմը կհաղթի իր նահանգի առաջնությունը: Նա ամբողջական կրթաթոշակով կընդունվի որևէ համալսարան և, ի վերջո, կլինի առաջինը «Ամերիկայի Բասկետբոլային ասոցիացիայի» ընտրված հավակնորդների ցուցակում:

Կամ, օրինակ, ես մոտենում եմ մի գործարարի, ով մեծ խնդիրներ ունի, և ասում եմ.

- Մենք մի գիտական հայտնագործություն ենք արել, որի շնորհիվ կարող ենք տալ քեզ միաժամանակ Դոնալդ Տրամպի, Սթիվ Ջոբսի և Բիլլ Գեյթսի լիությունը:

Ձեր կարծիքով, ի՞նչ նա կասի: Նա խանդավառված կբացականջի.

- Ես ուզում եմ դա: Արե՞ք դա հենց հիմա:

Եվ ի՞նչ նա կանի՝ այդ մարդկանց լիարժեք կարողություններն ստանալուց հետո: Նա կտեսնի ներդրումային հնարավորություններ, որոնք նախկինում նրա մտքով չէն անցել, և մեծ հաջողության կհասնի:

Շնորհքը չի տվել մեզ Լեֆրոն Ջեյմսի, Սթիվ Ջոքսի, Դոնալդ Տրամպի, Բիլլ Գեյթսի, Ալբերտ Էյնշտեյնի, Յոհան Սեբաստիան Բախի, Ռոջեր Ֆեդերերի, և ո՛չ էլ պատմության ընթացքում ապրած որևէ ականավոր տղամարդու կամ կնոջ լիությունը: Ո՛չ. այն տալիս է մեզ անձամբ Հիսուս Քրիստոսի լիությունը: Դուք հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ մեծության մասին է խոսքը:

Այսպիսով, միզուցե սա զարմացնի շատերին, բայց Նոր կտակարանում Աստված առաջին անգամ չի ներկայացրել շնորհքը՝ որպես ձրիաբար տրվող պարգև, փրկություն կամ մեղքերի ներում: Թույլ տվեք պարզ բացատրել սա: Ես հավիտյան շնորհակալ եմ այս զարմանալի առավելությունների համար, բայց դրանք հայտնվում են Նոր կտակարանում ավելի ուշ: Աստված առաջին անգամ ներկայացրեց շնորհքը՝ որպես Հիսուս Քրիստոսի լիության փոխանցում: Սա նշանակում է, որ այն ընդունողն ստանում է Նրա բնությունը և զորությունը: Ահա թե ինչու է Հովհաննեսը համարձակ հռչակում. «...որովհետև ինչպես Նա [Հիսուսն] է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հովհաննես 4.17):

Դուք երբևէ լսե՞լ եք, որ ինչ-որ ծառայող ասի. «Մենք ոչնչով չենք տարբերվում մեղավորներից. մենք ընդամենը ներված ենք», կամ՝ «Մենք պարզապես անարժան որդեր ենք», կամ՝ «Մենք՝ մարդիկս, մեղավոր բնություն ունենք և դրա գերին ենք»: Ինչպե՞ս կարող է Աստվածաշունչ կարդացող մարդը նման բաներ ասել: Նույնիսկ բնությունն ավելի լավ է ուսուցանում մեզ:

Դուք երբևէ լսե՞լ եք, որ առյուծը սկյուռ ծնի: Կամ՝ որ գտարյուն ազնվացեղ ձին որդ ծնի: Սուրբ գիրքը հայտարարում է, որ մենք ոսկր ենք՝ Նրա ոսկրից, և մարմին ենք՝ Նրա մարմնից (տե՛ս Եփես. 5.30): Խոսքն ասում է. «Սիրելիներ, հիմա մենք Աստծո որդիներ ենք» (Ա Հովհաննես 3.2): Ոչ թե *հետագայում*՝ երբ Երկինք գնանք, այլ *հիմա* մենք արդեն Աստծո որդիներ և դուատրեր ենք: Մի՞թե Աստված կարող է ծնունդ տալ անարժան որդի: Մենք ծնված ենք Աստծուց, և Նրա սերունդ մեզանում է, այսինքն՝ մենք ունենք Նրա աստվածային բնությունը: Ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում: Ոչ թե հանդերձյալ կյանքում, այլ՝ *այս աշխարհում*:

Կրկին կարդանք Պետրոսի խոսքերը.

«Թող Աստված *ավելի ու ավելի* շնորհք տա ձեզ... Իր աստվածային զորությամբ [շնորհքով] Աստված տվել է մեզ այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք՝ աստվածապաշտ կյանքով ապրելու համար» (Բ Պետրոս 1.2,3, NLT):

Չորացման առումով, շնորհքի պարզևը չի տրվում մեկ անգամ՝ փրկության պահին: Այն մշտապես անհրաժեշտ է մեզ. մենք «ավելի ու ավելի շնորհքի» կարիքն ունենք: Ահա թե ինչու է Խոսքը պատվիրում մեզ. «Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհքի աթոռին, որ... շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու (կամ՝ կարիքի ժամանակ)» (Եբրայեցիների 4.16): Շնորհքն այն վառելիքն է, որով մեր բաքը միշտ պետք է լիքը լինի:

Իսկ հիմա կարդացեք, թե ինչ է գրում Յակոբոսը հավատացյալներին այն բանից հետո, երբ ծածկագերծում է նրանց եսակենտրոն, շնացող կենսաձևը.

«Շնացողներ: Չե՞ք հասկանում, որ ընկերությունն այս աշխարհի հետ, Աստծո թշնամին է դարձնում ձեզ... Բայց Նա *նույնիսկ ավելի շատ շնորհք* է տալիս մեզ՝ այդպիսի չար ցանկություններին հակառակ կանգնելու համար... Ուրեմն, խոնարհեցրե՛ք ձեզ Աստծո առջև» (Յակոբոս 4.4,6, NLT):

Կրկին ուշադրությամբ կարդացեք այս խոսքերը: «Նա *նույնիսկ ավելի շատ շնորհք* է տալիս մեզ»՝ եսասիրական ցանկություններին ընդդիմանալու համար: Աստվածաշնչի «Էմփիլֆայր» թարգմանությունն այսպես է վերարտադրում այս խոսքը. «Բայց Նա մեզ ավելի ու ավելի շնորհք է տալիս»: Այս անարժանաբար ստացված զորությունը տալիս մեզ սուրբ կյանքով ապրելու կարողություն, որը նախկինում չուներինք:

Այս շնորհքը հպվում է նրանց, ովքեր խոնարհեցնում են իրենց՝ հավատալով Նրա Խոսքին: Այն ներարկում է Նրա աստվածային բնության *ուժը* մեր էության մեջ: Յպարտ մարդիկ կենտրոնանում են իրենց կարողության վրա, իսկ խոնարհները կախված են Աստծո զորությունից: Դավթի ավագ եղբայրը՝ Եղիաբը, հպարտ մարդ էր: Նա կախված չէր Աստծո զորությունից, այդ պատճառով էլ պետք է բախվեր Գողիաթին իր ուժերով (տե՛ս Ա Թագավորաց 16,17գլխ.): Դավիթը խոնարհ մարդ էր. նա հակառակվեց այդ հսկային Աստծո ուժով: Մենք գիտենք, թե ինչպես ամեն ինչ ավարտվեց:

Հիսուսը ցույց տվեց մեզ, թե ինչ է նշանակում Աստծո շնորհքից կախված լինելը: Գեթսեմանիի պարտեզում Նա անասելի պայքարի մեջ էր: Նրա մարմինը ցանկանում էր փախչել այն բանից, ինչը պատվիրել էր Նրա Հայրը, բայց Նա խոնարհեցրեց Իրեն աղոթքի մեջ, մինչ Նրա աշակերտները քնած էին: Նա աղաղակեց այս «վառելիքի» համար, որպեսզի կարողանար հաղթահարել Իր մեծագույն պատերազմը եսասիրության դեմ: Դա կարիքի ժամանակ էր, և Նա համարձակ եկավ, որպեսզի ստանար Իր Հոր զորացնող շնորհքը և հաղթահարեր այդ պայքարը: Նրա աշակերտները ծախողվեցին, սակայն Հիսուսը նախապես զգուշացրել էր նրանց. «Հոգին կամենում է, բայց մարմինը թույլ է» (Մատթեոս 26.41, NLT):

Իմ պատմության մեջ, երբ պետք է հնձեի սիզամարզը մինչև խաղի գնալը, ես չէի գնել ո՛չ սիզամարզ հնձող մեքենան, ո՛չ վառելիքը, և չէի էլ արժանացել դրանց: Երկուսն էլ պարզև էին իմ հորից: Սիզամարզ հնձող մեքենան կարող է խորհրդանշել մեր նոր բնությունը, որը տրվում է միայն մեկ անգամ: Ունենալով այն՝ ես սիզամարզ հնձելու ներուժ էի ձեռք բերել, սակայն վառելիք չունենալու դեպքում ես նույն վիճակում էի, ինչ այն ժամանակ, երբ չունեի հնձող մեքենա: Վառելիքը խորհրդանշում է շնորհքի *զորությունը*: Վառելիքը մեկանգամյա պարզև չէ. ինձ վառելիք էր պետք ամեն անգամ, երբ հնձում էի սիզամարզը:

Շնորհքը տվեց մեզ Նրա բնությունը, երբ փրկվեցինք, բայց մենք ավելի ու ավելի շնորհքի կարիք ունենք, որպեսզի զորացնենք մեր բնությունը և ապրենք Հիսուսի նման:

«Կարելիներ» և «չի կարելիներ»

Կրկին կարդանք Պողոսի խոսքերը՝ ուղղված եփեսացիներին: Դրանք ավելի իմաստավորված կդառնան մեզ համար այն բանից հետո, ինչ մենք նոր բացահայտեցինք:

«Տիրոջ իշխանությունով ես ասում եմ հետևյալը՝ այլևս մի՛ ապրեք այնպես, ինչպես հեթանոսները, որովհետև նրանք անհուսորեն շփոթված են... Նրանք ամոթի զգացում չունեն: Նրանք ապրում են հեշտասեր հաճույքների համար և պատրաստակամորեն ամեն տեսակի պղծություն են գործում... Հազե՛ք նոր բնությունը, որն ստեղծված է Աստծո նմանությամբ՝ ձշմարտապես արդար և սուրբ» (Եփեսացիների 4.17,19,24, NLT):

Կորածների և հավատացյալների միջև պետք է հստակ տարբերություն լինի. այն պետք է լինի ոչ միայն մեր դավանանքի մեջ, այլև՝ մեր կյանքի: Պատճառն այն է, որ մենք նոր բնություն ունենք: Բայց

պետք է հազնենք այն: Այլ կերպ ասած՝ մենք պետք է խոնարհեցնենք մեզ՝ հավատալով և տեղի տալով շնորհքի զորացմանը: Նայե՛ք դրան հետևյալ կերպով. հայրս կարող էր սիզամարգ հնձող մեքենա նվիրել ինձ, բայց այն անօգուտ կլիներ, եթե ես վառելիք չլցնեի դրա մեջ, չմիացնեի շարժիչը և չօգտագործեի այն: Մեր նոր բնությունը հազնելը նշանակում է *օգտագործել այն*:

Պողոսը շարունակում է նկարագրել, թե ինչպես սա պետք է արվի գործնականորեն.

«Ուրեմն, դադարե՛ք ստեր խոսել: Եկե՛ք ճշմարտությունը խոսենք մեր մերձավորներին, որովհետև բոլորս միևնույն մարմնի անդամներն ենք: Եվ «մի՛ մեղանչեք՝ թույլ տալով, որ բարկությունը վերահսկի ձեզ»: Թույլ մի՛ տվեք, որ ձեր բարկությունը մնա արևը մայր մտնելուց հետո, որովհետև բարկությունը ոտնատեղ է տալիս սատանային: Եթե դուք գող եք, դադարե՛ք գողանալ: Փոխարենը՝ քրտնաջան աշխատե՛ք ձեր ձեռքերով և առատորեն տվե՛ք նրանց, ովքեր կարիքի մեջ են: Մի՛ օգտագործեք կեղտոտ կամ վիրավորական խոսքեր» (Եփեսացիների 4.25-29, NLT):

Մարդիկ ասում են. «Հին կտակարանը լի է «կարելիներով» և «չի կարելիներով», բայց Նոր կտակարանը խոսում է միայն շնորհքի մասին: Այժմ համաժողովների ընթացքում և եկեղեցիներում մարդկանց նույնիսկ սովորեցնում են, որ Աստծո շնորհքն ազատում է մեզ պատվիրանները պահելուց, և շատերը համոզված են դրանում: Այնուամենայնիվ, Հիսուսն ասաց, որ միայն Իր *պատվիրանները* լսողները և կատարողները կվերապրեն Իր հայտնված ներկայությունը: Այս ուսուցիչները կարծում են, որ ազատություն են տալիս իրենց ունկնդիրներին, այնինչ, իրականում նրանք հեռացնում են մարդկանց Աստծո ներկայությունից: Որքա՞ն ցավալի է:

Այն, որ Հիսուսը պատվիրաններ է տալիս մեզ, փաստ է: Նա հանձնարարում է մեզ. «Ուրեմն, գնացե՛ք բոլոր ազգերը աշակերտե՛ք... նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ *պատվիրեցի*, պահեն» (Մատթեոս 28.19,20): Նա չասաց. «Ամեն ինչ, որ ձեզ *առաջարկեցի*»:

Այսօր շատերն են սիրում Հիսուսի խոսքերն Իր գերագույն իշխանության մասին, բայց թեթևորեն են վերաբերվում այն հատվածներին, որոնցում Նա կոչ է անում աստվածապաշտ վարք ունենալ: Անկասկած՝ Աստված գերիշխան է, սակայն առանց հասկանալու, որ մարդն ազատ ընտրություն ունի՝ մենք կարող ենք հայտնվել այնպիսի վիճակում, որ սկսենք դիտարկել Նրա պատվիրաններն աստվածապաշտ կյանքի մասին ընդամենը որպես առաջարկներ:

Պատվիրաններ

Առաքյալները փոխանցեցին մեզ Հիսուսի պատվիրանները: Թույլ տվեք կրկնել Հովհաննեսի խոսքերը. «Մենք կարող ենք վստահ լինել, որ ճանաչում ենք Նրան, եթե հնազանդվում ենք Նրա պատվիրաններին» (Ա Հովհաննես 2.3, NLT): Նույն ուղերձում նա գրում է. «Աստծուն սիրելը նշանակում է՝ պահել Նրա պատվիրանները» (Ա Հովհաննես 5.3, NLT):

Պողոսը գրում է. «Որովհետև գիտենք, թե ինչպիսի պատվիրաններ տվինք ձեզ Տեր Հիսուսում» (Ա Թեսաղոնիկեցիների 4.2): Անմիջապես դրանից հետո նա գրում է. «Աստծո կամքը ձեզ համար՝ սուրբ լինելն է» (Ա Թեսաղոնիկեցիների 4.3, NLT): Մենք պետք է պահենք Հիսուսի պատվիրանները, որպեսզի սուրբ ապրենք:

Պետրոսը պարզորեն խոսում է սուրբ ապրելու պատվիրանի մասին: Նա նշում է այն ողբերգական իրողությունը, որ վերջին օրերում մարդիկ կնահանջեն հավատքից: Նա գրում է, որ նրանք կմերժեն «այն պատվիրանը, որը տրվեց նրանց՝ սուրբ կյանքով ապրելու համար» (Բ Պետրոս 2.21, NLT): Այնպես որ, Նոր կտակարանում մենք ստացել ենք պատվիրաններ, որոնք միասնաբար կարելի է անվանել «պատվիրան... սուրբ կյանքով ապրելու համար»:

Ուսումնասիրելով Պողոս առաքյալի խոսքերը Եփեսացիների 4.25-29-ում՝ մենք տեսնում ենք սուրբ կյանքով ապրելու միանշանակ պատվիրաններ.

Ստեր մի՛ խոսեք:

Մի՛ մեղանչեք՝ թույլ տալով, որ բարկությունը վերահսկի ձեզ:

Մի՛ գողացեք:

Մի՛ օգտագործեք կեղտոտ կամ վիրավորական խոսքեր:

Կարող ենք հիմա ասել, որ Նոր կտակարանում չկան «չի կարելիներ»։ Այս պատվիրանները հենց այդպիսին են թվում ինձ։ Իսկ ձե՞զ։

Նայե՛ք դրանց հետևյալ կերպով. երբ երեխա էի, հայրս պատվիրեց ինձ. «Որդի՛ս, փողոց մի՛ վազիր գնդակիդ ետևից՝ առանց երկու կողմերը նայելու»: Սա «չի կարելի» էր, բայց այն խիստ կամ բացասական չէր: Հայրս տալիս էր ինձ այս պատվերը, որ ես հանկարծակի վրաերթի չենթարկվեի և երկարատև կյանք ունենայի:

Աստված պարզապես ասում է մեզ, թե ինչ պետք է չանենք, որ լիարժեք, արդյունավետ և երկարատև կյանք ունենանք: Եվ ամենալավն այն է, որ մենք ունենք աստվածային բնություն և շնորհքի վառելիքը՝ Նրա պատվիրանները կատարելու համար:

Դադարե՞ք ստեր խոսել

Քննարկենք այն «չի կարելիները», որոնք ես թվարկեցի:

Իմ ճանապարհորդությունների ընթացքում ես տեսել և լսել եմ շատ ցավալի պատմություններ այն մասին, թե ինչպիսի հետևանքներ են ունեցել քրիստոնյաների անազնիվ արարքները:

Վերջերս տասնհինգ գործարարի տարել էի Մաչու Պիկչու՝ չորսօրյա արշավի Ինկերի արահետով: Հրաշալի ժամանակ էր. մենք դիտում էինք տեսարժան վայրերը, ծառայում էինք իրար և, մեղմ ասած, ծանր մարզում էինք կատարում:

Ամեն մեկի հետ մի քանի ժամ արշավելու ընթացքում ես շարունակ պատմություններ էի լսում այլ քրիստոնյա գործարարների մասին, ովքեր ստում էին՝ վաճառք իրականացնելու կամ գործարք կնքելու համար: Հավատակից եղբայրների հետ գործ ունենալիս դատարկ և չկատարված խոստումները սովորական բան էին, ոչ թե բացառություն: Ինձ պատմում էին քրիստոնյաների մասին, ովքեր օգտագործում էին անորակ նյութեր, խախտում էին ընդունված աշխատանքային նորմերը և կանոնները, առաջարկում էին ծառայություններ, որոնք, ի վերջո, չէին մատուցում և չէին կատարում իրենց երաշխիքային պարտավորությունները և ավելին:

Այդ գործարարներից մեկը, ով շինարար էր, պատմեց ինձ մեկ այլ շինարարի մասին: Նրանք աշխատում էին միևնույն տարածքում: Այդ «եղբայրը» փոսեր էր փորել այլ սեփականատերերի հողատարածքներում (նաև այն մարդու, ով արշավում էր ինձ հետ) և լցրել էր դրանց մեջ իր շինարարական թափոնները: Դրանից հետո նա պարզապես հողով ծածկել էր դրանք, փոխարենը վճարել՝ դրանք պատշաճ կերպով տեղափոխելու համար: Ես շատ ավելի վատ պատմություններ լսեցի այդ արշավի ընթացքում, բայց այս մեկը հատկապես տպավորվեց իմ մեջ, որովհետև այդ «եղբայրը» այդ համայնքի ավետարանական եկեղեցիներից մեկի փառաբանության խմբի առաջնորդն էր:

Սուտը տարածված չէ միայն գործարար ոլորտում. այն գոյություն ունի կառավարական, կրթության, հոգևոր ծառայության և առողջապահության ոլորտներում, ինչպես նաև՝ ընտանիքի անդամների և ընկերների միջև: Մենք ստում ենք, որ դուրս գանք դժվարին իրավիճակներից, պաշտպանենք մեր անունը, դիրք կամ պաշտոն ձեռք բերենք կամ ավելի արագ հասնենք մեր ցանկալի նպատակներին: Ստելը գրավիչ է. այն կարող է արագացնել այնպիսի բաների ընթացքը, որոնց համար մենք պետք է վստահենք Աստծուն:

Որքա՞ն հաճախ ենք մենք ասում մարդկանց, որ աղոթում ենք նրանց համար, այնինչ իրականում չենք աղոթում: Մենք խոստումներ ենք տալիս մեր երեխաներին և մինչև վերջ չենք կատարում: Մենք խախտում ենք պայմանավորվածությունները՝ խոստանալուց հետո: Մենք չափազանցություններ ենք անում՝ մեր փաստարկները ծանրակշիռ դարձնելու համար: Այս ամենը ստեր են, որոնց արդյունքում մենք անխուսափելիորեն վնաս ենք պատճառում մարդկանց:

Թույլ տվեք կրկին շեշտադրել այս կարևոր փաստը. պահելով Հիսուսի պատվիրանները՝ մենք կստանանք *Նրա ներկայության խոստումը*: Սաղմոսերգուն հաստատում է այս ճշմարտությունը՝ հարցնելով. «Ո՞վ կարող է մուտք գործել Քո [Աստծո] ներկայության մեջ» (Սաղմոս 15.1, NLT): Դրանից հետո նա պատասխանում է. այն մարդիկ, ովքեր «պահում են իրենց խոստումները, նույնիսկ՝ երբ դա ցավ է պատճառում նրանց» (խոսք 4): «Մեսիջ» Աստվածաշունչը հետևյալ կերպով է վերարտադրում այս խոսքը. «Պահիր՝ քո խոսքը, նույնիսկ՝ երբ դա թանկ արժեքեզ համար»:

Եթե որոշենք անտեսել Պողոսի պատվերը չստելու մասին, որը նա ուղղել էր եփեսացիներին, մենք կարող ենք դառնալ Հակոբոսի պատվերին: Նա գրում է. «Մի՛ թաքցրեք ճշմարտությունը՝ պարծենալով և ստելով» (3.14, NLT): Պողոսը ևս մեկ նման պատվեր է ուղղում կողոսացիներին. «Մի՛ ստեք իրար» (3.9, NLT): Կարո՞ղ եք պատկերացնել: Պողոսը, ում Աստված գործածեց՝ շնորհքի մասին մեծագույն հայտնությունը տալու համար, «չի կարելիներ» է պատվիրում մեզ: Եթե մենք առանձնացնենք բազմաթիվ արտահայտություններ Նոր կտակարանից, որոնք գրել են թե՛ Պողոսը, թե՛ մյուս առաքյալները, մենք կարող էինք մեղադրել նրանց շնորհքի ուսմունքին հակասելու մեջ, այնինչ՝ իրականում նրանց խոսքերում հակասություն չկա:

Եթե մենք միայն կենտրոնանանք այն փաստի վրա, որ շնորհքը՝ մեր ծածկոցն է, և չսովորեցնենք հավատացյալներին զորացված կյանքի մասին, որը շնորհքի բաղկացուցիչ մասն է (այս դեպքում՝ չստելու մասին), եկեղեցում լինող մարդիկ կարդարացնեն այս վարքագիծը՝ իրենց նպատակներին հասնելու համար: Կարելի՞ է ասել, որ ոչ հավասարակշռված ուսմունքը և համոզմունքները շնորհքի մասին, որոնք չեն շեշտադրում սրբությունը, նման արդյունքի են հանգեցնում: Կարելի՞ է ասել, որ այդպիսի ուսմունքը սովորեցնում է մեզ՝ անտեսել մեր խիղճը:

Թույլ մի՛ տվեք, որ բարկությունը վերահսկի ձեզ

Երկրորդը մեր ցուցակում հետևյալն է. «Մի՛ մեղանչեք՝ թույլ տալով, որ բարկությունը վերահսկի ձեզ»: Ես տեսել եմ այն կանանց և տղամարդկանց դեմքերը, ովքեր ապրում են բարկացկոտ կողակցի հետ: Նրանք պատմում էին, թե ինչպիսի՛ վախ էր տիրում նրանց տանը, երբ այդ մարդիկ, ովքեր դավանում էին, որ հավատացյալ էին, բարկության պոռթկումներ էին ունենում: Իսկ ի՞նչ են զգում այն երեխաները, որոնց ծնողների բարկությունն ուղեկցվում է բռնությամբ: Նման պոռթկումներ ունեցող մարդիկ մարմնական վնասվածքներ են հասցնում իրենց ընտանիքի անդամներին և փչացնում են տան գույքը: Զոհերն ապրում են սարսափի մեջ՝ սպասելով հաջորդ պոռթկմանը: Բարկությունը կործանարար ազդեցություն է թողնում ընտանիքի մթնոլորտի վրա, և ընտանիքը դադարում է ապաստարան լինելուց: Կիրակի առավոտյան եկեղեցում նրանք նման են սովորական ընտանիքի, բայց դա ընդամենը ձևականություն է: Ցավոք, մենք որոշել ենք թեթևորեն վերաբերվել այս պատվիրանին կամ անտեսել այն:

Այս ցուցումը միակը չէ: Առաքյալների նամակներում կարելի է գտնել այլ պատվերներ բարկությունը թողնելու մասին: Պողոսն ավելի անմիջական է գրում. «Ազատվե՛ք ամբողջ դառնությունից, զայրույթից, բարկությունից [և] կոպիտ բառերից» (Եփեսացիների 4.31, NLT): Յակոբոսը պատվիրում է. «Բուրդ պետք է լինեք... դանդաղ՝ բարկանալու համար: Մարդու բարկությունը չի կատարում այն արդարությունը, որն Աստված ցանկանում է» (Յակոբոս 1.19,20, NLT): Պողոսը կրկին պատվիրում է կողոսացիներին. «Ազատվե՛ք բարկությունից [և] զայրույթից» (3.8, NLT):

Թույլ տվեք կրկին հարց տալ. մի՞թե այս խոսքերը՝ գրված այն մարդկանց կողմից, ովքեր ստացել են հայտնությունն Աստծո շնորհքի մասին, նման չեն «չի կարելիների»: Յնարավո՞ր է, որ մենք ինչ-որ բան ձիշտ չենք հասկացել:

Մի՛ գողացեք

Դադարե՛ք գողանալ: Որքա՞ն հաճախ ենք մենք պարտքով գումար վերցնում և չենք վերադարձնում: Որքա՞ն հաճախ ենք մենք հայտնվում մեծ պարտքերի մեջ: Մենք հավատում ենք, որ ի վերջո կստանանք Աստծո օրհնությունը, և շարունակում ենք անարգել իմաստությունը՝ ընկնելով ավելի մեծ պարտքերի մեջ: Ի վերջո՞ մենք կարող ենք

անանկ հայտարարել մեզ: Այս ընդունված բառը թույլ է տալիս մեզ չխոստովանել, որ մենք չենք վճարել այն, ինչ պարտք էինք մարդկանց:

Որքա՞ն հաճախ ենք մենք օգտագործել մեր ընկերության միջոցները մեր անձնական կարիքների համար: Դա կոչվում է ուրիշի ունեցվածքի յուրացում: Մենք վստահորեն հռչակում ենք. «Ես քրիստոնյա եմ և փրկված եմ Աստծո շնորհքով», բայց չենք հնազանդվում Հիսուսի պատվիրաններին, որոնք Նա տվել է Իր առաքյալների միջոցով:

Մի հովիվ, ում հետ ես աշխատում էի, հաճախում էր եկեղեցական բոլոր հավաքույթներին, տեսնում էր այն հրաշքները, որոնք տեղի էին ունենում ծառայությունների ընթացքում, և մեկ անգամ նույնիսկ պարծենում էր ինձ մոտ, որ կարողանում էր հեշտությամբ աղոթել երկարատև ծամանակ: Բայց ամբողջ այդ ընթացքում նա հազարավոր դուլարներ էր յուրացնում եկեղեցուց: Ի վերջո նա բռնվեց: Սա միայն մեկ պատմություն է այն մասին, որ քրիստոնյաները գողանում են և ինչ-որ կերպով արդարացնում են դա:

Մեզնից քանի՞սն են սխալ հարկային տվյալներ ներկայացրել՝ չնշելով եկամուտների մի մասը: Այս դեպքում մենք անտեսում ենք մեկ այլ պատվիրան, որը տվել է Պողոսը. «Վճարե՛ք ձեր հարկերը» (Հռոմեացիների 13.6, NLT): Մենք արդարացնում ենք մեր գողությունը աշխարհիկ առաջնորդների «սխալ կառավարմամբ», բայց ե՞րբ պետք է հասկանանք, որ սխալը սխալով չի ուղղվում:

Մի՛ օգտագործեք կեղտոտ կամ վիրավորական խոսքեր

Աստվածաշնչի «Էմփիֆայդ» թարգմանությունը հետևյալ կերպով է ներկայացնում այս պատվիրանը. «Թող ոչ մի կեղտոտ կամ պիղծ խոսքեր, ոչ մի չար բառ և ոչ մի անառողջ կամ անարժեք խոսակցություն [երբևէ] դուրս չգան ձեր բերանից» (Եփեսացիների 4.29): Ես հաճախ եմ ծառայել մարդկանց, ովքեր վիրավորանքներ են ստացել այլ հավատացյալներից: Կտրուկ և վիրավորական խոսքերը մեծ ցավ են պատճառել նրանց: Նրանց անձերը վերքեր են ստացել, որոնց բժշկության համար ժամանակ է պահանջվում:

Ես անթիվ անգամներ դատարկ խոսակցություններ եմ լսել հավատացյալների միջև, նույնիսկ՝ անբարո կատակներ ծառայողական գրասենյակներում: Իսկ անվայել խոսքերն ամբիոնից՝ արդեն չսված բան չէ:

Վերջերս ծաշում էի մի երիտասարդ զույգի հետ, ովքեր հրաշալի եկեղեցի են հովվում: Նրանք համակրում էին մի միջազգային ծա-

ռայության՝ համարելով այն օրինակ իրենց համար: Մեկ անգամ այդ զույգին հնարավորություն է ընձեռվել ծաշելու այդ կազմակերպության անվանի առաջնորդներից մեկի հետ: Ճաշի ընթացքում այդ մարդը մի քանի անգամ խիստ անվայել արտահայտություններ է օգտագործել: Այդ օրվանից մի քանի ամիս էր անցել, բայց այդ զույգը դեռ ուշքի չէր եկել տեղի ունեցածից:

Մենք թերագնահատել ենք շնորհքը

Ինչ է տեղի ունեցել: Մի՞թե մենք այնքան յուրահատուկ ենք դարձել, որ արդեն մի կողմ ենք նետել աստվածապաշտ վարքը: Արդյո՞ք մենք զոհաբերել ենք մեր վկայությունը, որպեսզի ավելի համապատասխանենք մեզ շրջապատող աշխարհին: Ես միանշանակ կողմ եմ ժամանակակից, առաջադեմ և զարգացած լինելուն, բայց ոչ՝ Աստծո խոսքը փոխզիջման ենթարկելու հաշվին:

Մենք պետք է տանք հետևյալ հարցը. եթե առաքյալներն անհրաժեշտ համարեցին պատվիրաններ տալ մեզ աստվածապաշտ կյանքի մասին, ինչո՞ւ մենք չենք հիշատակում դրանք: Մի՞թե մենք ավելի շատ գիտենք, քան նրանք: Մի՞թե մենք ավելի շատ բան գիտենք, քան Հիսուսը:

Հնարավոր է, որ թշնամին գայթակղեցրե՞մ է մեզ, ինչպես Եվային: Այս անգամ ամեն բան մի փոքր այլ կերպ է ստացվել: Եվան լավ գիտեր, որ Աստված պատվիրել էր չուտել բարու և չարի գիտության ծառի պտուղը: Այնպես որ, թշնամին պետք է ռիսկի դիմեր՝ անմիջականորեն հակառակվելով Աստծո խոսքին, քանի որ նրա ծրագիրը կարող էր բացահայտվել: Այս առաջադրանքն զգուշություն և խորամանկություն էր պահանջում նրանից:

Մենք ավելի ենք հեշտացրել սատանայի գործը: Մենք պարզապես հարմարավետ կերպով մի շարք հատվածներ ենք անտեսել Աստծո խոսքից: Հիշո՞ւմ եք, որ Աստված պատվիրեց. «Պարտեզի ամեն ծառից համարձակ կե՛ր, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր, որովհետև նրանից կերած օրդ մահով պիտի մեռնես» (Ծննդոց 2.16,17): Ի հակադրություն սրան՝ ոմանք այսօր կասեին. «Պարտեզի ամեն ծառից համարձակ կե՛ր», և վերջ՝ առանց շարունակության: Նրանք անտեսում են «...բայց... մի՛ կեր»-ը կամ «*չի կարելին*»՝ այն ամենը, ինչ կապված է ոչ աստվածապաշտ վարքի հետ:

Ըստ էության՝ մենք թերագնահատել ենք Աստծո շնորհքը: Մենք հռչակել ենք, որ այն փրկում է, ներում է, և որ այն Աստծո ձրիաբար շնորհված պարգևն է: Իհարկե, այս ամենը ճշմարիտ է: Այնուամենայն-

նիվ, մենք չենք հռչակել, որ այն փոխում է մեր ներքին էությունը և գորացնում է մեզ, որ չապրենք առաջվա պես: Մենք չենք ասել մարդկանց, որ այժմ նրանք զորացված են՝ ոչ աստվածահաճո վարքագծերը թողնելու համար: Նման լռության արդյունքն այն է, որ հավատացյալները չունեն գիտելիք աստվածապաշտության մասին և զրկվում են Աստծո ներկայությունից:

Մեր գործերը կարևոր են

Վերջերս՝ մի առավոտ, երբ հասել էի իմ Աստվածաշնչի ընթերցանության կեսին, պատահեց հետևյալը: Ես պետք է կարդայի Սաղմոսների և Եբրայեցիների գրքերից: Ես ավարտել էի իմ հատվածը Սաղմոսներից և արդեն բացում էի Եբրայեցիների նամակը, երբ շատ պարզ զգացի, որ Սուրբ Յոզիան ասում է ինձ. «Ո՛չ. մի՛ կարդա Եբրայեցիների նամակը, կարդա՛ Չայտնություն գիրքը»:

Ես սկսել էի կարդալ Չայտնություն գիրքը մի քանի շաբաթ առաջ, կրկին՝ Սուրբ Յոզու մղումով: Ես կարդացել էի առաջին երկու գլուխը, բայց, ցավով եմ ասում, կորցրել էի հետաքրքրությունս, և հաջորդ օրը վերադարձել էի իմ ծրագրված ընթերցանությանը: Եվ ահա, երկու շաբաթ անց, ես վերադարձա այն տեղին, որտեղից դադարեցի կարդալ՝ երրորդ գլխին: Քիչ էր մնում, որ ընկնեի աթոռիցս, երբ կարդացի Հիտուսի խոսքերը Սարդեսի եկեղեցուն.

«Ես գիտեմ այն ամենը, ինչ դու անում ես, և որ դու համբավ ունես, որ ողջ ես, բայց դու մեռած ես» (Չայտնություն 3.1, NLT):

Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ Հիտուսը պնդում է. «Ես գիտեմ այն բաները, որոնք դու անում ես», ոչ թե «այն բաները, որոնց դու հավատում ես»: Նա ո՛չ էլ ասում է. «Ես գիտեմ քո մտադրությունները»: Մեկ այլ թարգմանության մեջ Նա ասում է. «Ես գիտեմ քո գործերը»: Ակնհայտ է, որ Նա չի խոսում եկեղեցու արդարության մասին՝ որպես դիրքի, այլ նրանց արտաքին սրբության մասին՝ նրանց գործերի, վարքի, ընտրությունների և այլն:

Նա ցույց է տալիս, որ այս եկեղեցին ողջ լինելու համբավ ունի: Ի՞նչն էր նման տպավորություն թողնում: Միզուցե նրանց անդամների թիվն ավելանում էր, նրանք հանրահայտ էին, նրանց ծառայությունները ոգեշնչող էին, և մթնոլորտը պարզապես էլեկտրականացված էր: Հիշե՛ք, որ մենք կարող ենք ոչ կանխամտածված կերպով Աստծո ներկայությունը փոխարինել լավ մթնոլորտով: Եթե սովորական համերգի գնաք, դուք կտեսնեք մեծ բազմություն, վարակիչ խանդավառություն և

մեծ ակնկալիք տպավորիչ երեկոյի համար, բայց արդյո՞ք բոլոր այդ միջոցառումները համապատասխան են Աստծո սրտում եղածին:

Կա մի կարևոր հարց, որը լիովին բացահայտում է եկեղեցու ողջ կամ մեռած լինելը. արդյո՞ք մենք հնազանդվում ենք Հիսուսի խոսքերին, թե՞ մեր համայնքն իրականում շեղվում է Նրա պատվիրաններից: Եվս մեկ հարց՝ արդյո՞ք մենք հռչակում ենք ճշմարտությունը, որը բացահայտում է մարդու սրտի վիճակը և արդյունքում փոխում է նրա վարքը, թե՞ քարոզում ենք ուղերձներ, որոնք շոյում են մեր զգացմունքները և ոգեշնչում են մեր միտքը:

Իր բացման խոսքից հետո Հիսուսը շարունակում է.

«Արթնացի՛ր: Զորացրո՛ւ այն փոքրը, ինչը դեռ մնում է, որովհետև նույնիսկ այն, ինչ մնացել է, գրեթե մեռած է: Ես համարում եմ, որ քո գործերը չեն համապատասխանում Իմ պահանջներին» (խոսք 2, NLT):

Կրկին՝ Հիսուսը խոսում է նրանց գործերի մասին, ոչ թե համոզմունքների: Ինչպես արդեն նշեցի, Նոր կտակարանում կան «կարելիներ» և «չի կարելիներ», և այդ պատվիրաններն ուղղված են մեր գործերին: Համաձայն Հիսուսի՝ այս եկեղեցին չի ձգտում և չի հարում սրբության կյանքին: Նա շարունակում է.

«Վերադարձի՛ր այն բանին, ինչը դու լսեցիր և ինչին հավատացիր սկզբում. հաստատ հարի՛ր դրան: Ապաշխարի՛ր և կրկին դարձի՛ր Ինձ: Եթե չարթնանաս, Ես հանկարծակի կգամ քեզ մոտ՝ այնքան անսպասելի, որքան գողը» (Հայտնություն 3.3, NLT):

Հիշե՛ք՝ Հիսուսը դիմում էր Սարդեսի եկեղեցուն, ոչ թե քաղաքին: Բայց եթե Նրա խոսքերը միայն նախատեսված լինեին այս պատմական եկեղեցու համար, դրանք չէին հայտնվի Սուրբ գրքում: Այն, որ Նրա խոսքերը գրված են, նշանակում է, որ դրանք մարգարեական գործածություն ունեն մեր օրերի համար: Եվ դրանք վերաբերում են հավատացյալներին, ինչպես և այն ժամանակ, երբ խոսվել էին: Նրա խոսքերն ուղղված են մեզ, քանի որ Աստծո խոսքը կենդանի է: Այնպես որ, ես կանդադարեմ Հիսուսի խոսքերին այս համատեքստով:

Հիսուսը կարգադրում է մեզ վերադառնալ այն բաներին, որոնց մենք հավատում էինք սկզբում: Այլ կերպ ասած՝ մենք շեղվել ենք սուրբ կյանքից: Մենք շնորհքի այնպիսի վարդապետություն ենք կազմել, որը թույլ է տալիս մեզ ապրել՝ ինչպես մեզ շրջապատող անհավատ մարդիկ: Այս ուսմունքը լավ է թվում, բայց արդյո՞ք այն Աստծո խոսքն է:

Հիսուսը պատվիրում է եկեղեցուն ապաշխարել և վերադառնալ Իր խոսքերին: Կան ժամանակակից ուսուցիչներ, ովքեր հայտարարում են, որ քրիստոնյա դառնալուն պես մենք այլևս ապաշխարելու կարիք չունենք, որովհետև մեր բոլոր անցյալ, ներկա և ապագա մեղքերն ինքնաբերաբար ներվում են: Եթե սա ճիշտ է, ինչո՞ւ է Հիսուսը պատվիրում մեզ՝ Իր եկեղեցուն, ապաշխարել և վերադառնալ Իրեն:

Եթե ուշադրություն դարձնեք այն ոչ հավասարակշռված «շնորհքի» ուսմունքներին, որոնք այսօր գրավում են բազմաթիվ մարդկանց, դրանք քարոզող առաջնորդները մեծ մասամբ մեծացել են օրինապաշտական միջավայրում և սրբության մասին խեղաթյուրված ուսմունքների ազդեցության ներքո: Այո՛, սրբությունը խեղաթյուրվել է բազմաթիվ շրջանակներում, սակայն սրբությունը հիմնադրույթ է քրիստոնեության մեջ, և սա անփոփոխ փաստ է: Եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում կանչը դեպի սրբությունը եղել է և՛ մեր միասնական առաքելության, և՛ անձնական ընթացքի էապես կարևոր մասը: Մենք պետք է վերադառնանք մեր հիմքերին՝ այն ամենին, ինչը «լսել ենք» և ինչին «հավատացել ենք սկզբում»:

Հիսուսը շարունակում է.

«Սակայն կան մի քանիսը Սարդեսի եկեղեցում, ովքեր չեն կեղտոտել իրենց հանդերձները չարությամբ: Նրանք կքայլեն Ինձ հետ՝ սպիտակ հագած, որովհետև նրանք արժանի են» (Հայտնություն 3.4, NLT):

Ուշադրություն դարձրեք «կեղտոտել իրենց հանդերձները» արտահայտությանը: Հիշե՛ք Պողոսի խոսքերը, որոնք պատրաստում են մեզ Աստծո ներկայության համար. «...մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթացիների 7.1): Հիսուսը շտկում է այս եկեղեցու ընթացքը՝ կոչ անելով վերադառնալ սուրբ կյանքին և չկեղտոտել մարմնի և հոգու հանդերձներն անաստված վարվելակերպով: Կատարելով Նրա պատվերը՝ մենք պատրաստ կլինենք թե՛ Նրա ներկայությանը, թե՛ Նրա վերադարձին, որովհետև այս խոսքում Նա ասում է. «Օրհնված են նրանք, ովքեր սպասում են Ինձ, ովքեր պատրաստ են պահում իրենց հանդերձները» (Հայտնություն 16.15, NLT): Նա ամփոփում է՝ ասելով.

«Բոլոր հաղթանակողները սպիտակ կհագնեն: Ես երբեք չեմ ջնջի նրանց անունները Կյանքի գրքից, բայց կհայտնեմ Իմ Հոր և Նրա հրեշտակների առջև, որ նրանք Իմն են: Ցանկացած անձնավորություն, ով լսելու ականջներ ունի, պետք է

լսի Յոզուն և հասկանա, թե ինչ է Նա ասում եկեղեցիներին»
(Յայտնություն 3.5,6, NLT):

Կյանքի գրքից ինչ-որ մեկի անունը ջնջելը շատ լուրջ բան է: Այնուամենայնիվ, այս խոսքերը դուրս եկան անմիջապես Փրկչի շուրթերից: Շատ կարևոր է, որ մենք մեծ ուշադրությամբ լսենք այն, ինչ Աստծո Յոզին խոսում է Աստծո՝ գրված խոսքի միջոցով: Նույնպես կարևոր է, որ մենք չանտեսենք այն հատվածները, որոնք չեն համապատասխանում մեր անձնական համոզմունքներին և ներկայումս տարածված ուսմունքներին:

Աստված արդարացրել է մեզ. մենք ոչինչ չենք կարող անել, որ վաստակենք այս դիրքը Քրիստոսի մեջ: Այնուամենայնիվ, ակնհայտ է դառնում, որ Նա մեծապես կարևորում է այս դիրքին համապատասխան սուրբ կյանք վարելը:

Պողոսը գրում է. «Որովհետև Աստված հայտնել է Իր շնորհքը՝ մարդկանց փրկության համար: Այդ շնորհքը խրատում է մեզ, որ թողնենք անաստված կյանքը և աշխարհիկ ցանկությունները, և այս աշխարհում ապրենք զուսպ, արդար և աստվածապաշտ կյանքով» (Տիտոս 2.11,12, TEV): Սա պարզ ցուցում է: Այդ դեպքում, ինչո՞ւ մենք չենք ազդարարում այս ճշմարտությունը մեր ամբիոններից:

Եկեք երբե՛ք չդադարենք սովորեցնել, որ մենք չենք կարող վաստակել Աստծո բարեհաճությունը, ներումը և փրկությունը: Եկեք շարունակենք ազդարարել այս բարի լուրը: Այնուամենայնիվ, եկեք դադարենք թերագնահատել Նրա շնորհքը: Եկեք հռչակենք ամբողջ ճշմարտությունը շնորհքի մասին:

ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ՕԳՏԱԿԱՐ

«Դուք ասում եք՝ ինձ թույլատրված է անել
ցանկացած բան, բայց ամեն
ինչ չէ, որ օգտավետ է»:
— Ա Կորնթացիների 10.23, NLT

...Ամբողջական սրբացումը ոչ միայն էապես
կարևոր է՝ որպես Երկինք մտնելու պայման, այլ...
նույնպես անհրաժեշտ է՝ երկրային
քրիստոնեական կյանքում առավելագույն
արդյունքների հասնելու համար:
— Դագան Կլարկ

Որպես ծառայող, ով հաճախ է քարոզում և «կիսվում խոսքով»՝
ինձ վրա հատկապես թարմացնող ազդեցություն է գործում
Աստծո այլ ծառայողների ուղերձները լսելը: Վերջերս նման հնա-
րավորություն ունեցա: Այն հովիվը, ով քարոզում էր, մեծ հարգանք
է վայելում մեր երկրում, մեծ եկեղեցու առաջնորդ է և հայտնի է իր
իմաստությամբ տեղական եկեղեցու աժի հարցում: Նրա ուղերձը հե-
տաքրքիր էր, խրախուսող և հայտնություններ էր փոխանցում: Հավա-
քույթին ներկա հազարավոր մարդիկ ուշադրությամբ լսում էին նրան:

Ինչ-որ պահի նա մի դիտողություն արեց, որը լավ, իմաստուն և
խոնարհ էր թվում, բայց այն անհանգստություն պատճառեց ինձ: Նա
ասաց. «Այն, ինչ ես պատրաստվում եմ ասել, կարող է մի փոքր բացա-
սական թվալ: Սովորաբար ես այսպես չեմ խոսում, որովհետև ես չեմ
հանդիմանում մարդկանց իմ ուղերձներով: Ամբողջ հանդիմանությունը
թողնում եմ Սուրբ Հոգուն»:

Ես փորձեցի վանել ինձնից այն բարկությունը, որը բարձրացավ
հոգումս, բայց չկարողացա: Անցյալում լսել էի նման խոսքեր այլ առաջ-
նորդներից: Այդ արտահայտությունը տրամաբանական էր թվում.

ուրեմն, ինչո՞ւ էի ես մտահոգված: Այդ պահին հիշեցի Պողոս առաքյալի խոսքերը Տիմոթեոսին՝ իր երիտասարդ աշակերտին: Հավաքույթից հետո ես գտա այդ խոսքը.

«Խո՛ւքը քարոզիր. վրա հասիր թե՛ ժամանակին լինի, թե՛ ժամանակից դուրս, հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր...»
(Բ Տիմոթեոս 4.2):

Թույլ տվեք նախ՝ ներկայացնել այս խոսքի համատեքստը: Այն ժամանակ, երբ Պողոսը գրում էր այս նամակը, Տիմոթեոսը Եփեսոսում գտնվող շատ մեծ եկեղեցու հովիվն էր: Նոր կտակարանի այս գլուխը՝ Պողոսի գրած վերջին խոսքերն են, ոչ միայն իր երիտասարդ աշակերտին, այլև՝ բոլորիս: Կարծում եմ՝ նա զգում էր այդ ավարտը, և շատ զգուշորեն էր ընտրել թե՛ իր թեման, թե՛ բառերը:

Ես չէի ցանկանում միայն մակերեսային գիտելիք ունենալ այն մասին, թե ինչ նկատի ուներ Պողոսը «հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր» բառերով. այնպես որ, սկսեցի ուսումնասիրել այս խոսքը: Նախ՝ ես բացեցի Աստվածաշնչի «Էմփիֆայդ» թարգմանությունը՝ այն ավելի պարզ հասկանալու համար, բայց մինչև վերևում մեջբերված խոսքը կարդալը, նախորդ խոսքը գրավեց իմ ուշադրությունը.

«Ես ՊԱՏՎԻՐՈՒՄ ԵՄ [քեզ] Աստծո և Քրիստոս Հիսուսի ներկայությամբ, Ով դատելու է կենդանիներին և մեռածներին...»
(Բ Տիմոթեոս 4.1):

«Պատվիրում եմ» բառը գրված է գլխատառերով: Ես չէի սխալվել. դա արված էր շեշտադրման համար: Ես կապվեցի իմ ընկեր Ռիկ Ռեննեթի հետ, ով տարիներ շարունակ հունարենի մասնագետ է, և հարցրի այս բառի նշանակությունը: Ահա նրա պատասխանը.

«Հունարենում «ՊԱՏՎԻՐԵԼ» բառը «դիամարտություն»-ն է. այն օգտագործվում է, երբ պաշտոնյաները երդում են տալիս պետական ծառայության համար: Երդումն ընդունող անձնավորությունը մեծ լրջությամբ կանչում է բոլոր աստվածներին՝ հետևելու և լսելու համար, իսկ հետո կոչ է անում երդումը տվողին՝ պատասխանատվությամբ կատարել իր գործը և հիշել, որ աստվածները հետևում են նրան: Տիմոթեոսի դեպքում, Պողոսն ասում էր (շրջասության տեսքով). «Ես կանչում եմ Աստծուն՝ ականատես լինելու, երբ դու ընդունես այն խոսքերը, որոնք ես պատրաստվում եմ ասել քեզ...»: Այս բառը խիստ հանդիսավոր էր, և այն հասկանալի էր դարձնում Տիմոթեոսին, որ ավելի լավ է՝ ինքը լրջորեն ականջ դներ, որովհետև Աստված անձամբ լսելու

և հետևելու էր իրեն: Չենց սա է պատճառը, որ այս խոսքի մնացած մասը դատաստանի մասին է: Պողոսը ցանկանում էր, որ Տիմոթեոսը հասկանար այն խոսքի լրջությունը, որը պատրաստվում էր ասել, և որն իր երիտասարդ աշակերտը լսելու էր: «Պատվիրել» բառը մեծ պատասխանատվություն էր խոսքը ստացողի համար»:

Պողոսը շատ խիստ էր խոսում այդ երիտասարդի հետ (նաև՝ մեզ հետ)՝ ցույց տալով, որ իր պատվերը չպետք է ոչ պարտադիր համարվեր: Ինչպես նշեց Ռիկը՝ Պողոսը երդում արեց Տիմոթեոսին Աստծո և Յիսուս Քրիստոսի ներկայությամբ: Այլ կերպ ասած՝ Աստված դատելու էր Տիմոթեոսին, ինչպես նաև ցանկացած այլ ծառայողի, եթե նա չկատարեր այս հանձնարարությունը.

«Ազդարարի՛ր և քարոզի՛ր Խոսքը: Պահի՛ր քո հրատապության զգացումը [եղի՛ր հասանելի, մոտ և պատրաստ], անկախ այն բանից՝ հնարավորությունը բարենպաստ է թվում, թե՞ ոչ [Անկախ այն բանից՝ դա հարմա՞ր է, թե՞ անհարմար, ցանկալի՞ է, թե՞ անցանկալի, դո՞ւ որպես Խոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ]» (Բ Տիմոթեոս 4.2, AMP):

Ավետարանի ծառայողը պետք է «ցույց տա մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ». շատ տպավորիչ է:

Ես անմիջապես մտածեցի այն ուղերձի մասին, որը լսել էի. «Ձարմանալի չէ, որ այդ հովվի արտահայտությունը անհանգստություն պատճառեց ինձ»: Այն լավ էր թվում, բայց ճշմարտությունը չէր: Թե՛ գիտակցաբար, թե՛ անգիտակցաբար՝ նա ընտրել էր այն, ինչը լավ է թվում, փոխարենը ընտրել այն, ինչն Աստծուց է: Այդ առաջնորդը դրել էր պատասխանատվությունը Սուրբ Յոզու վրա, այնինչ Պողոսը պարզ ասում է, որ այս հարցում մե՛նք ենք պատասխանատու:

Վերջերս շատ հայտնի հովիվ իր կնոջ հետ հարցազրույցի էր հրավիրված մի միջազգային հաղորդման: Յաղորդավարը բարձրացրեց սեռական անբարոյության թեման, և նրանք պատասխանեցին. «Մենք չէ, որ պետք է ասենք մարդկանց՝ ինչպես ապրել»:

Ես գիտեմ, որ այդ զույգը սիրում է մարդկանց: Նրանք ցանկանում են, որ կորածները լսեն Ավետարանը և ճանաչեն Յիսուսին: Նրանք մեծ տեսիլք ունեն: Իսկապես աներևակայելի կլիներ, եթե բոլոր ծառայողներն ունենային նրանց եռանդը և վճռականությունը: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ մենք Աստծո անմիջական պատվերը, որն է՝ «ցույց տալ մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ»,

փոխարինում ենք մեր *բարի* փիլիսոփայությամբ, որն է՝ «չասել մարդկանց, թե ինչպես պետք է նրանք ապրեն»:

Մի՞թե առաքյալներն օգտագործում էին այս մարտավարությունը: Մեկ անգամ Պողոս առաքյալը հայտարարեց իր մարտավարությունը մի չփրկված թագավորի.

«Այսպիսով, Ագրիպաս թագավոր, ես հնազանդվեցի այդ տեսիլքին՝ Երկնքից: Ես քարոզեցի նախ՝ նրանց, ովքեր Դամասկոսում էին, հետո՝ նրանց, ովքեր Երուսաղեմում և ամբողջ Յուդայում էին, և նույնպես՝ հեթանոսներին, որ բոլորը պետք է ապաշխարեն իրենց մեղքերից և դառնան Աստծուն, և իրենց բարի գործերով ապացուցեն, որ իրենք փոխվել են» (Գործք 26.19,20, NLT):

Այն, որ ինչ-որ մեկը պատվիրում է չփրկված մարդկանց *ապաշխարել իրենց մեղքերից*, իսկ դարձի գալուց հետո *ապացուցել, որ իրենք փոխվել են*, անմիջական կապ ունի այն բանի հետ, թե *ինչպես պետք է նրանք ապրեն*: Ցավոք, Պողոսի և այդ զույգի ավետարանչական փիլիսոփայությունները լիովին հակառակ են իրար: Մեկը՝ *Աստծուն* է, մյուսը՝ *բարի* է:

Պողոսը ցույց տվեց իր վճռականությունը աստվածային մարտավարությանը հետևելու հարցում, երբ առիթ ունեցավ խոսելու մեկ այլ ակնառու չփրկված առաջնորդի և նրա կնոջ հետ: Ուսումնասիրե՛ք այն մարտավարությունը, որը նա կիրառում էր՝ հետևելով նրա կողմից բարձրացվող թեմաներին.

«Մի քանի օր անց Փելիքսը և նրա կինը՝ Դրուսիլան, ով հրեա էր, կանչեցին Պողոսին և լսեցին նրանից Յիսուս Քրիստոսին հավատալու կյանքի մասին: Երբ Պողոսը շարունակեց շեշտադրել արդար հարաբերությունները Աստծո և Նրա ժողովրդի հետ և խոսել բարոյական կարգապահության ու գալիք դատաստանի մասին, Փելիքսն զգաց, որ դա չափից ավելի է մոտենում իր հարմարավետությանը և պատվիրեց նրան հեռանալ: «Բավական է այսօրվա համար: Ես կրկին կկանչեմ քեզ, երբ հարմար լինի»» (Գործք 24.24,25, MSG):

Փելիքսը պատվիրեց բերել Պողոսին բանտախցից, որովհետև ինքը և իր կինը ցանկանում էին լսել Պողոսի ուղերձը հավիտենական կյանքի մասին: Խոսելով այս չփրկված մարդկանց հետ՝ Պողոսը բարձրացրեց երկու հիմնական թեմա. բարոյական կարգապահությունը և գալիք դատաստանը: Պողոսի խոսքն այնքա՛ն խիստ էր, որ նրանք ակնհայ-

տորեն անհարմար զգացին իրենց: Որքանո՞վ է սա հակասում մեղավորներին ծառայելու մեր ժամանակակից մարտավարությանը: Կան եկեղեցական առաջնորդներ, որոնց առաջնահերթ նպատակն է՝ այնպես անել, որ Աստծուն փնտրողները վերադառնան հաջորդ կիրակի: Իհարկե, այն, որ նրանք կարողանում են դրդել մարդկանց եկեղեցի վերադառնալ, ողջունելի է, բայց դա չէ գլխավոր նպատակը: Պողոսի նպատակը մարդկանց մեջ ևս մեկ հավաքույթի գալու ցանկություն առաջացնելը չէր, այլ՝ ճշմարտությունը հավատարմորեն խոսելը:

Վերջերս ես մասնակցեցի մի հանրահայտ երիտասարդական հովվի հավաքույթներից մեկին: Նա շրջագայում էր տարբեր քաղաքներով և քարոզում էր Աստծո սիրո մասին: Հերթական լեփ-լեցուն լսարանում հավաքվել էր ավելի քան հազար մարդ՝ նրան լսելու համար: Մթնոլորտն ասես էլեկտրականացված լիներ. մարդիկ ոգեշնչումով էին սպասում՝ այդ երիտասարդ առաջնորդին լսելու համար: Մինչև ուղերձն սկսելը, մարդկանց երկու անգամ տեղեկացրին (քարոզչի օգնականը և հենց ինքը՝ քարոզիչը), որ այդ երեկո մենք լսելու ենք միայն «Բարի լուրը» և, որ նա չէր խոսելու ոչ մի «բացասական բան»: «Բարի լուրը ներկայացվում էր որպես «բացասականի» հակառակը: Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ Բարի լուրն սկզբում բացասական է թվում, հատկապես եթե այն փոխում է մեր կյանքի ուղղվածությունը: Այնուամենայնիվ, եթե այդ փոփոխությունը փրկում է մեզ մահվան ճանապարհից, ինչպե՞ս մենք պետք է դիտարկենք այն:

Բեմ բաճրանալուն պես այդ հովիվը կապ ստեղծեց հանդիսատեսի հետ՝ առաջին քսան րոպեի ընթացքում սրամիտ կատակներ անելով: Դրանից հետո նա պատմեց, թե որքա՞ն ջերմեռանդորեն է Հիսուսը սիրում մեզ: Նրա ուղերձը հուզիչ և ոգեշնչող էր: Ավարտելով՝ նա փրկության կոչ արեց մարդկանց: Նա կոչ չարեց մեղավորներին՝ շտկել իրենց կյանքը, այսինքն՝ թողնել սերը աշխարհի հանդեպ և անհնազանդությունն Աստծո հանդեպ: Նա ոչինչ չասաց մեղքերից ապաշխարելու մասին՝ այն հիմնարար ուսմունքի, որը պետք է ուղեկցի փրկությանը (տե՛ս Եբր. 6.1): Այդ երեկո շատերն արձագանքեցին նրա կոչին:

Արդյո՞ք այս հովվի ուղերձը համապատասխանում էր այն ուղերձին, որը Պողոսը խոսեց ինչպես Ագրիպաս թագավորին, այնպես էլ՝ Փելիքսին և Դրուսիլային: Արդյո՞ք նրա ուղերձը համահունչ էր Պետրոսի խոսքերին, ով խստորեն պատվիրեց նրանց, ովքեր ցանկանում էին փրկվել. «Ապաշխարե՛ք ձեր մեղքերից և դարձե՛ք Աստծուն, որ ձեր մեղքերը մաքրվեն» (Գործք 3.19, NLT): Արդյո՞ք Աստծուն փնտրող մարդիկ, ովքեր հեռանում էին այդ հովվի երեկոյան հավաքույթից, փրկված էին:

Ֆակառակ ծայրահեղությունները

Եկեք ևս մեկ հարց տանք. ինչո՞ւ է այդքան հեշտ տեղաշարժել ճոճանակը դեպի հակառակ կողմը՝ այնքան հեռանալով ատելի օրինապաշտությունից, որ արդեն սկսում ենք չկարևորել Ավետարանի հիմնադրույթները:

Մերօրյա առաջնորդներից շատերը դաստիարակվել են այնպիսի մարդկանց կողմից, ում այսօր համարում են եկեղեցու խիստ հայրեր: Քսաներորդ դարում այս հայրերը չէին վախենում հակառակվել մեղքին և բացահայտել այն. նրանք կոչ էին անում մեզ ապրել սուրբ կյանքով: Այդ տարիներին չկային այնքան մեծ եկեղեցիներ, որքան այսօր: Նրանց անսասան և հանդիմանող սուրբգրային ուղերձները հաճախ վանում էին նրանց, ովքեր անկեղծորեն չէին փնտրում Աստծուն:

Որոշ ժամանակ անց մի խումբ առաջնորդներ մարտավարական քայլ արեցին՝ այդ միտման դեմ: Նրանք եզրակացրին, որ կարելի է մեծաքանակ հետևորդներ ունենալ՝ քարոզելով բացառապես *դրական, ոգեշնչող ուղերձներ*: Մենք պակասեցրինք հանդիմանությունը, խրատը և շտկումը և սկսեցինք խրախուսական ուղերձներ որոնել Աստվածաշնչում: Մենք դադարեցինք քարոզել մարդկանց, որ նրանք անհնազանդ են Աստծո հոսքին: Սա դարձավ մեր մարտավարությունը քսանմեկերորդ դարում: Այնուամենայնիվ, լսե՛ք Տիմոթեոսին ուղղված Պողոս առաքյալի հանձնարարականի շարունակությունը.

«[...դու՝ որպես հոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ]: Եվ համոզի՛ր նրանց՝ հանդիմանելով և շտկելով, զգուշացնելով և հորդորելով և խրախուսելով՝ առանց թուվանալու և հոգնելու, համբերությամբ և սովորեցնելով» (Բ Տիմոթեոս 4.2, AMP):

Այս խոսքում օգտագործվում են երեք կարևոր բառեր՝ «էլեզո», «էպիտիմաո» և «պարակալեո»: «Սթրոնգի բառարանը» սահմանում է «էլեզո» բառը որպես «դատապարտել, մատնանշել սխալը, հանդիմանել, խրատել»: «Աստվածաշնչյան բառերի ուսումնասիրության լիակատար բառարանը» ավելի հստակ սահմանում է առաջարկում. «Նոր կտակարանում՝ հանդիմանել, ապացուցել, որ ինչ-որ մեկը սխալ է, և դրանով ամաչեցնել նրան»: Իսկապես որ ազդեցիկ սահմանում է:

Երկրորդ բառը՝ «էպիտիմաո»-ն, սահմանվում է որպես «(ուղղակիորեն) մեղադրանք ներկայացնել, հանդիմանել»: Այդ բառի իմաստն իսկապես որ շատ միանշանակ է: Երրորդ բառը՝ «պարակալեո»-ն,

սահմանվում է որպես «մխիթարել, խրախուսել»: Սա ոգեշնչող կողմն է, որը, անկասկած, անհրաժեշտ է:

Եթե անդրադառնանք առաջին երկու բառերին, կտեսնենք, որ Պողոսը պատվիրեց ծառայողներին՝ քարոզել այնպիսի ուղերձներ, որոնք մեղադրում են հանցանքի մեջ, հանդիմանում, խրատում, մատնանշում սխալը և ապացուցում են ինչ-որ մեկի սխալը: Այս բառերի սահմանումը դրդում է մեզ վիճարկել այն մեթոդները, որոնք կիրառվում են ժամանակակից արևմտյան եկեղեցիներն առաջնորդելու համար: Արդյո՞ք այս ժամանակակից մարտավարությունն Աստծո իմաստությունն է, թե՞ *բարու* իմաստությունը: Որպես լրիվ ժամանակվա ծառայող, ով ավելի քան քսանհինգ տարի է՝ քարոզում է համաժողովներում և եկեղեցիներում, ես կարող եմ ասել, որ մենք շեղվել ենք դեպի *բարին*:

Այս մասին կարող եմ կիսվել անթիվ պատմություններով, բայց թույլ տվեք ավելացնել ընդամենը մեկը: Ինձ խնդրեցին քարոզել Միացյալ Նահանգների հյուսիս-արևմուտքում գտնվող մի շատ մեծ եկեղեցում: Ես հավանությամբ էի վերաբերվում այդ եկեղեցու առաջնորդին և նրա կատարած աշխատանքին ու անհամբեր սպասում էի այն ժամանակվան, որն անցկացնելու էի այդ մարդու, նրա կնոջ, ծառայողական թիմի և եկեղեցու հետ:

Միջոցառումից մի քանի շաբաթ առաջ էլեկտրոնային նամակ ստացա այդ հովվից, որում գրված էր. «Ջո՛ն, մենք անհամբեր սպասում ենք քո գալուն և այն խոսքին, որն ուղղելու ես մեր եկեղեցուն: Քանի որ դու դեռ պատրաստում ես քո ուղերձները, լավ կլիներ, որ պատմեի քեզ մեր եկեղեցու մշակույթի մասին: Մենք դրական եկեղեցի ենք. մեր անդամները սովոր չեն բացասական ուղերձներ լսելուն: Այնպես որ, երբ դիմես մեր համայնքին, խնդրում եմ, թող քո ուղերձները խրախուսող, դրական երանգ ունենան»:

Կրկին հարց է առաջանում. որքանո՞վ է այս «իմաստությունը» համապատասխանում այն պատվերին, որը Պողոսը տվեց Տիմոթեոսին: Որպես համեմատություն՝ ես կթվարկեմ այս երեք հունարեն բառերի «դրական» և մեր օրերում «բացասական» համարվող իմաստները:

Դրական. 1) «*պարակալեո*» - մխիթարել, խրախուսել

Բացասական. 1) «*էլեզո*» - դատապարտել, մատնանշել սխալը, հանդիմանել, խրատել, ապացուցել, որ ինչ-որ մեկը սխալ է

2) «*էպիտիմաո*» - (ուղղակիորեն) մեղադրանք ներկայացնել, հանդիմանել

Պողոսը տալիս է երեք պատվեր, որոնցից երկուսը համարվում են «բացասական», և միայն մեկը՝ «դրական»: Թույլ տվեք այլ կերպ ասել սա. 67 տոկոսը «շտկումներ բերող» են, իսկ 33 տոկոսը՝ «հավանություն տվող»: Ես չեմ ուզում ասել, որ մեր քարոզների 67 տոկոսը պետք է շտկումներ բերող լինի: Այնուամենայնիվ, մենք պետք է հարց տանք՝ արդյո՞ք մենք ոչ հավասարակշռված վիճակում չենք: Եթե մեր նպատակը 100 տոկոսով խրախուսական և ոգեշնչող ուղերձներ քարոզելն է մեր եկեղեցիներում, հնարավոր է որ մեզ մոտ շատացել են դրական մարդիկ, ովքեր հավատում են, որ ձիշտ հարաբերություններ ունեն Աստծո հետ, այնինչ՝ իրականում նրանք ավելի ու ավելի են հեռանում Նրա բնավորությունից և ներկայությունից:

Պատվիրանի էությունը

Եբրայեցիների նամակի հեղինակը գրում է հետևյալը.

«Ոչ մի խրատ հաճելի չէ ներկա պահին. այն ցավո՛տ է: Բայց հետագայում այս կերպով *վարժվածներն* արդար կյանքի խաղաղ վարձք են ստանում» (Եբրայեցիների 12.11, NLT):

Այս խոսքում կա երկու կարևոր միտք: Առաջինը՝ խրատը, հանդիմանությունը, շտկումը և սխալը ցույց տալը *ցավոտ են*, իսկ խրախուսանքը՝ ոչ: Երկրորդը՝ այն խրատը, որի մասին գրում է Եբրայեցիների նամակի հեղինակը, *վարժեցնում* է սուրբ կյանքի համար:

Այժմ մենք պետք է տանք հետևյալ հարցը. ինչպե՞ս է Աստված վարժեցնում մեզ: Եթե վերադառնանք այն խոսքերին, որոնք Պողոսը գրեց Տիմոթեոսին, ամեն ինչ պարզ է դառնում.

«Ամեն սուրբգրային հատված ոգեշնչված է Աստծուց (տրված է Նրա ոգեշնչմամբ) և օգտակար է խրատի, հանդիմանության և մեղքի մեջ նախատելու համար, սխալմունքն ուղղելու և հնազանդությամբ խրատելու համար, [և] արդարության մեջ *վարժեցնելու* համար (*սուրբ կյանքի* մեջ, համապատասխան Աստծո կամքին՝ մտքով, նպատակներով և գործողություններով), որպեսզի Աստծո մարդը կատարյալ և հմուտ դառնա, իսկապես համապատասխան և հանգամանորեն սպառազինված ամեն բարի գործի համար: Ես ՊԱՏՎԻՐՈՒՄ ԵՄ [քեզ] Աստծո և Քրիստոս Յիսուսի ներկայությամբ, Ով դատելու է կենդանիներին և մեռածներին, և՛ Նրա գալուստով, և՛ Նրա թագավորությամբ (դրանց լույսի ներքո). ազդարարի՛ր և քարոզի՛ր խոսքը» (Բ Տիմոթեոս 3.16-4.2, AMP):

Դուք ուշադրություն դարձրի՞ք «*խրատ*», «*հանդիմանություն*», «*մեղքի մեջ նախատել*», «*սխալմունքն ուղղել*» և «*հնազանդությամբ խրատ*

տել» բառերին և արտահայտություններին: Նույնպես, դուք ուշադրություն դարձրի՞ք, որ Սուրբ գիրքը վարժեցնում է մեզ *սուրբ կյանքով ապրելու համար*, և որ դրանից հետո Պողոսը պատվիրեց Տիմոթեոսին և մեզ՝ *քարոզելի հոսքը* (Աստվածաշունչը): Ի մի բերելով բոլոր այս խոսքերը՝ ահա մեզ տրված պատվիրանը՝ ըստ էության:

Տիմոթեոս, և ցանկացած այլ Ավետարանի ծառայող, ճշմարտությունն այն է, որ աստվածային խրատը ցավոտ է, բայց այն վարժեցնում է մեզ սուրբ կյանքի համար: Աստված տնօրինում է այս խրատի (վարժվելու) ընթացքը Աստծուց ոգեշնչված հոսքով՝ Աստվածաշնչով, որը նույնպես պատշաճ կերպով սպառազինում է այն տղամարդուն կամ կնոջը, ով պետք է խոսի Աստծո անունից: Այդ իսկ պատճառով, քարոզի՞ր հոսքը՝ Աստվածաշունչը, քանի որ քո պարտականությունն է՝ որպես Աստծո ավետաբերի, ցույց տալ մարդկանց, թե որոնք են նրանց կյանքի սխալները: Սա կարելի է անել Աստվածաշունչը պատշաճ կերպով գործածելու, սիրով խրատելու, մեղքի մեջ նախատելու, հանդիմանելու, շտկելու և հնազանդության մեջ խրատելու նաև խրախուսելու միջոցով: Ահա այն աստվածային ընթացքը, որը վարժեցնում է լսողներին սուրբ կյանքի համար (շրջասություն):

Ես գիտակցում եմ, որ սա այն աստիճան հակառակ է մեր քսանմեկերորդ դարի եկեղեցական մշակույթին, որ նույնիսկ կարող է զարմացնել մարդուն: Այնուամենայնիվ, մենք ցանկանում ենք ունենալ ուժեղ, թե՞ մոլորված եկեղեցի: Մենք ցանկանում ենք ավելացնել հոգևորապես առողջ, թե՞ խաբված մարդկանց թիվը: Այս հրահանգները տրված են, որպեսզի մենք անգիտակցաբար չհեռանանք Աստծո սրտից: Եթե մենք ցանկանում ենք ապահով ընթացք ունենալ Հիսուսի մեջ, պետք է արմատացած լինենք Աստվածաշնչի մեջ: Անհնար է համապատասխանեցնել մեր ներկա մշակույթը Նոր կտակարանի ցուցումներին: Եկե՛ք կատարենք այս փոփոխությունը և կտեսնենք առողջ եկեղեցի:

Ցանկալի՞, թե՞ օգտակար

Հոգուց ստացած հայտնությամբ Պողոսը կանխասեց, որ լինելու են ծառայողներ և այլ հավատացյալներ, ովքեր ականջ չեն դնելու այս պատվիրանին, և ցույց տվեց դրա վնասակար հետևանքները:

«Որովհետև գալիս է ժամանակը, երբ [մարդիկ] չեն հանդուրժի (դիմանա) առողջ և ողջամիտ ուսմունքին, բայց, քանի որ նրանց ականջները մարմաջում են (ինչ-որ հաճելի և բավականություն պատճառող բանի համար), նրանք մեկը մյուսի

ետևից իրենց համար կհամախմբեն ուսուցիչների՝ հասցնելով զգալի թվի, որոնք ընտրված են՝ գոհացնելու իրենց ցանկությունները և փայփայելու այն սխալմունքները, որոնց իրենք հարում են» (Բ Տիմոթեոս 4.3, AMP):

Բարի գալուստ այդ ժամանակը: Եկե՛ք հարցնենք, թե ի՞նչն է ավելի ցանկալի. խրախուսական, ուրախ, դրական և թեթև ուղերձները, թե՞ այնպիսիք, որոնք զգուշացում, հանդիմանություն, շտկում և խրատ են պարունակում, նաև ցույց են տալիս մարդկանց սխալները:

Բոլորը, ներառյալ՝ ես, կգերադասեին առաջին տեսակի ուղերձ լսել: Ես դրական մարդ եմ, և բնականորեն հակված եմ լավատեսական ուղերձների: Ընտրություն ունենալու դեպքում ցանկացած մարդ միևնույն կերպով կվարվեր:

Եթե լինեին իրար մոտ գտնվող երկու եկեղեցիներ, և դուք իմանալիք, որ դրանցից մեկում լսելու եք այնպիսի քարոզ, որը հանդիմանելու է հենց ձեր մեղքը, իսկ մյուսում՝ լավատեսական, խրախուսող քարոզ, դուք կգնայիք երկրորդ եկեղեցին: Պողոսն ասում էր, որ ի վերջո կատարվելու է հենց սա. մարդիկ ընտրելու են *բարին*, ոչ թե Աստծուն: Պետք չէ հարցնել, թե ո՞րն է ավելի ցանկալի, այլ՝ թե ո՞րն է ավելի օգտակար:

Եկե՛ք անկեղծ լինենք. մարդկանց մեծամասնությունը չի սիրում խոսել այս մասին: Բայց նկարագրենք այս երևույթը մի օրինակով: Մի մարդու, ում անունը Սթիվ է, քաղցկեղ են ախտորոշում: Ուռուցքն իր վաղ շրջանում է, և այն վիրահատական ճանապարհով հեռացնելը հեշտորեն կխափանի վտանգը: Բժիշկն ասում է նրան. «Մենք կարող ենք հեռացնել այն՝ թեթև վիրահատություն կատարելով»:

Սթիվը գնում է մեկ այլ բժշկի մոտ, ով չի հետաքրքրվում բժշկական հետազոտություններով և չի հետևում այն ցուցումներին, որոնք նա ստացել էր, երբ սովորում էր բժշկական համալսարանում: Նրան պարզապես դուր է գալիս բժիշկ լինելը և մարդկանց օգնելը, բայց՝ իր ձևով: Այս բժիշկն ասում է Սթիվին, որ նա կարող է չանհանգստանալ. ամեն ինչ լավ է, և նրան հրաշալի կյանք է սպասվում: Այս բժիշկը խանդավառությամբ ասում է. «Սթիվ, քո առողջությունը գերազանց է»:

Սթիվը թեթևացած հեռանում է երկրորդ բժշկից: Նա մտածում է. «Որքա՞ն լավ բժիշկ է: Նա լավ խոսեց իմ մասին: Ես այնքա՞ն խրախուսված եմ»: Նա նույնիսկ մի փոքր բարկացած է առաջին բժշկի վրա, քանի որ նա շատ բացասական էր տրամադրված և խնդրում էր նրան այնպիսի բան անել, ինչն անհարմար, ցավոտ և ծախսատար էր լինելու: Նա ասել էր Սթիվին, որ նրա վիճակը լուրջ է: Նա չափազանց ուղիղ էր խոսել և բոլորովին չէր խրախուսել Սթիվին:

Շնորհիվ երկրորդ տարբերակի՝ Սթիվը համոզված է, որ իրեն ոչինչ չի սպառնում: Այնուամենայնիվ, երկու տարի անց Սթիվի վիճակը կտրուկ վատթարանում է, և նրան ընդամենը մի քանի շաբաթվա կյանք են խոստանում, որովհետև այն փոքրիկ ուռուցքն աճել է՝ վերածվելով իրական սպառնալիքի: Այն թափանցել է մարմնի շատ կենսականորեն կարևոր օրգաններ: Այժմ ոչ մի բուժում չի օգնի Սթիվին:

Երկու տարի առաջ ավելի հեշտ էր լսել դրականորեն տրամադրված բժշկին: Բայց ի՞նչն էր ավելի անհրաժեշտ այդ ժամանակ. ճշմարտությունը, թե՞ շողոքորթությունը, իրավիճակը շտկող միջոցներ, թե՞ դրական խոսքեր: Սթիվին ասել էին, որ նա առողջ էր, այնինչ՝ հիվանդ էր: Եվ արդեն շատ ուշ է: Երանի՛ այն ժամանակ նա լսեր ճշմարտությունը:

Հնարավոր էր արդյոք, որ Արևմուտքի եկեղեցին հոգևորապես նույն վիճակում էր՝ թե՛ ծառայողները, թե՛ եկեղեցիների անդամները:

Իսրայելի պատմության մեջ կար մի ժամանակ, երբ կրոնական առաջնորդների ծառայությունը բաղկացած էր բացառապես դրական ուղերձներից: Նրանք խուսափում էին առերեսումներից, և նրանց քարոզները միայն լավատեսական էին: Աստված ցույց տվեց, թե ինչպես է վերաբերվում նման մոտեցմանը. «Նրանք մակերեսային բուժումներ են առաջարկում Իմ ժողովրդի մահացու վերքի համար: Նրանք հավաստիացնում են, որ խաղաղություն է, այնինչ՝ խաղաղություն չկա» (Երեմիա 8.11, NLT): Հետաքրքրական է, որ նրանց քարոզած ուղերձն, ըստ էության, ոչնչով չէր տարբերվում այն խորհրդից, որը երկրորդ բժիշկը տվեց Սթիվին:

«Ինձ դուր չեն գալիս նրա քարոզները»:

Ճշմարտությունը և շտկումը չընդունելը այնպիսի խնդիր է, որը միշտ եղել է: Իսրայելի թագավորներից մեկը պատրաստվում էր մեծ ու համարձակ նախաձեռնության: Նա կանչեց հարյուրավոր հոգևոր խորհրդականների և հարցրեց, թե արդյո՞ք իր ծրագրերը հաջողությամբ են պսակվելու: Այս խորհրդականները թագավորին ճշմարտությունն ասելու մեծ հնարավորություն ունեին, բայց յուրաքանչյուրը պատասխանեց. «Այո՛, դու հաջողություն կունենաս»: Նրանք շարունակեցին կանխասել, թե ինչ բարիքներով էր պսակվելու թագավորի նախաձեռնությունը:

Հուդայի թագավորը, ում սիրտն զգայուն էր Աստծո հանդեպ, նույնպես ներկա էր: Նա ցանկանում էր լսել ճշմարտությունը՝ իրավիճակն իրապես զանազանելու համար: Նա չզգաց Աստծո ձայնը, թեև բոլոր հոգևոր խորհրդականները նույնն էին կրկնում: Նա դեռ սպասում էր այն խոսքին, որին իր սիրտը կարձագանքեր:

Ի վերջո, Հուդայի թագավորը հարցրեց Իսրայելի առաջնորդին.

- Դու չունե՞ս այլ խորհրդականներ, որոնք ձշմարտապես մարգարեանում են:

Իսրայելի թագավորը պատասխանեց.

- Իրականում, մնացել է մեկ այդպիսի մարդ, բայց ես ատում եմ նրան: Նա երբեք ոչ մի լավ բան չի քարոզում ինձ համար. միայն կործանում, կործանում, կործանում (Գ Թագավորաց 22.8, MSG):

Բայց և այնպես, իր համախոհին հաճեցնելու համար, Իսրայելի թագավորը պահանջեց, որ այդ «բացասական» խորհրդականին արքունիք բերեն:

Այդ մարգարեի անունը Միքիա էր, և թագավորի սուրհանդակը, ով գտավ նրան, ասաց.

- Լսի՛ր, մնացած բոլոր մարգարեները մեկ մարդու պես հաջողություն են կանխատում թագավորի համար: Թող որ քո խոսքն էլ համաձայն լինի նրանց խոսքին. խոսի՛ր բարեհաձությամբ (Գ Թագավորաց 22.13, NIV):

Միքիան պատասխանեց.

- Կենդանի է Տերը, ես կասեմ միայն՝ ինչ որ Տերը պատվիրի ինձ ասել (Գ Թագավորաց 22.14, NLT):

Նա այդպես էլ վարվեց: Նրա խոսքը շտկում էր պահանջում, և այն բարկացրեց թագավորին: Այնուամենայնիվ, պարզվեց, որ բոլոր դրական խորհրդականները սխալ էին խոսել թագավորի նախաձեռնության արդյունքի մասին, իսկ Միքիան ճիշտ էր:

Որտե՞ղ են Միքիայի պես խորհրդականներն ու ծառայողներն այսօր: Ինչո՞ւ մենք ավելի հաճախ չենք լսում նրանց պաշտպանող հանդիմանությունները և զգուշացումները: Ինչո՞ւ նրանց գրքերը, որոնք մեզ սուրբ ապրելու կոչ են անում, հանրաժանաչ չեն դառնում: Ինչո՞ւ այդ մարդիկ համաժողովներին հրավիրվող ամենահայտնի քարոզիչները չեն: Ինչո՞ւ նրանք ամենից շատ դիտվող ծառայողները չեն «YouTube»-ում:

Աստված, Պողոս առաքյալի միջոցով, պարզորեն փոխանցեց Իր հրահանգները մարդկանց առաջնորդելու մասին, սակայն մենք այլ կերպ ենք սովորեցնում: Մի անգամ ճաշում էի մի շատ հայտնի հովվի հետ, ով ասաց ինձ.

- Ջո՛ն, եթե նայես այն հովիվների մեծամասնությանը, ովքեր հաջողակ եկեղեցիներ ունեն մեր երկրում, նրանց քարոզների թեման հույսը, շնորհքը և խրախուսանքն է:

Նրա օգնականներից մեկն ավելացրեց.

- Ջո՛ն, չե՞ս ուզում վերանայել քո ուսմունքները շնորհքի մասին:

Նա չէր կարողանում լիարժեք կերպով ընդունել շնորհքի զորացնող և վերափոխող կողմը:

Անկասկած, մենք հույսի և խրախուսանքի կարիք ունենք, բայց մեզ նույնպես անհրաժեշտ է շտկում, խրատ և հանդիմանություն: Հենց սա Պողոսը *պատվիրեց* Տիմոթեոսին: Ինչո՞ւ մենք պետք է տեղաշարժենք ճոճանակը դեպի հակառակ կողմը: Ինչո՞ւ անպայման պետք է երկու ծայրահեղություններից մեկում լինենք: Եկեք տանք մարդկանց այն ամենը, ինչի մասին Պողոսն ասաց Տիմոթեոսին:

Գլխավոր բաղադրիչը

Թույլ տվեք մեկ այլ օրինակ բերել: Օգտագործված մեքենաներ վաճառող խորամանկ և կեղծավոր գործակալը միշտ կասի ձեզ այն, ինչ դուք ուզում եք լսել: Նա կժպտա, կծիծաղի ձեզ հետ, կհավաստիացնի, որ դուք հրաշալի անձնավորություն եք և շատ խելամիտ եք, քանի որ ընտրեցիք նրա մոտ եղած ամենալավ մեքենան: Դուք կարող եք մտածել. «*Նույնիսկ կինս այսպես չի խրախուսում ինձ*»: Պատճառն այն է, որ ձեր կինը *սիրում է* ձեզ, իսկ այդ մարդը շողոքորթում է, որպեսզի փող ստանա ձեզնից: Այսպիսով, մենք տեսնում ենք մեր ուղերձները կառուցելու գլխավոր բաղադրիչը՝ *սերը*: Քրիստոսի մարմնում մեր ուղերձները պետք է պարուրված լինեն սիրով և բխեն գթառատ սրտից:

Մեկ անգամ, մի երիտասարդ, հավաքույթից հետո մոտեցավ իմ գրքերի վաճառքի սեղանին: Նա ժպտալով ասաց.

- Ես կանչված եմ, որ մարգարեաբար շտկում բերեմ եկեղեցում՝ ինչպես և դուք:

Ես անհանգստություն զգացի նրա խոսելաձևից: Զգացի, որ մարդկանց կշտամբելու ցանկությունը նրանում ավելին էր, քան անկեղծ մտահոգությունը նրանց մասին:

- Ուզո՞ւմ ես իմանալ մարգարեանալու գաղտնիքը, - հարցրի նրան:

Նրա երեսը պայծառացավ. նա պատրաստվեց խորհուրդ ստանալու՝ հաջողակ ծառայության համար:

- Ամբողջ ընթացքում, երբ դու հանդիմանական ուղերձ ես քարոզում կամ կոչ ես անում մարդկանց, - ասացի ես, - դու պետք է ամբողջ սրտով սիրես նրանց, ում դիմում ես:

Այդ երիտասարդը նայեց ինձ ապշահար հայացքով: Մի քանի վայրկյան անց պատասխանեց.

- Կարծում եմ՝ Աստված դեռ պետք է աշխատանք կատարի ինձանում:

Ես հպարտացա այդ երիտասարդով, քանի որ նա խոստովանեց դա:

Հաճախ իմ ներսում նույնպես պայքար էր ընթանում՝ կապված հանդիմանական ուղերձներ քարոզելու հետ: Ես ի սրտե սիրում եմ

մարդկանց, եկեղեցին և Աստծո ծառայողներին: Այս գիրքը գրելիս կամ այլ հանդիմանական ուղերձներ քարոզելիս իմ սիրտը ցավում է, որովհետև ես ցանկանում եմ խրախուսել և հաստատել մարդկանց: Բայց մյուս կողմից՝ ես գիտեմ, որ սերը չի շողոքորթում. այն խոսում է ճշմարտությունը: Սերը խոսում է այն, ինչ անհրաժեշտ է՝ իր ունկնդիրներին հոգևորապես առողջ դարձնելու համար: Պողոսը գրում է, որ մենք պետք է խոսենք ճշմարտությունը սիրով. այդ դեպքում հավատացյալները հոգևորապես կաճեն և կհասունանան Քրիստոսում (տե՛ս Եփես. 4.15):

Եղել են ծառայողներ, ովքեր հռչակել են հանդիմանական ուղերձներ և շեշտադրել են սրբությունը՝ լցված բարկությամբ: Նրանք ունեցել են քիչ կամ գրեթե ոչ մի գթասրտություն այն մարդկանց հանդեպ, որոնց քարոզել են: Սա ողբերգական է և շատ ծանր հետևանքներ ունի: Բոլորս պետք է դրդվենք, շարժվենք և նույնիսկ կլանված լինենք սիրով այն մարդկանց հանդեպ, ում քարոզում ենք, կամ՝ ընդհանրապես չպետք է խոսենք: Մենք պետք է ի սրտե ձգտենք նրանց բարեկեցությանը՝ ավելի, քան ցանկացած այլ բանի: Մենք չպետք է մտածենք. «Չէ՞ որ ես ասում էի քեզ», «Ես գիտեմ ավելին, քան դու», կամ՝ «Ես քեզնից լավն եմ»: Մենք պետք է խոսենք մարդկանց հետ ջերմեռանդությամբ, նրանց ցանկանալով լավագույնը: Մենք պետք է համարենք մեր հետևորդներին կամ ցանկացած մարդու, ում հանդիպում ենք, ավելի կարևոր, քան մեզ: Աստված, Հիսուս Քրիստոսը և Հոգին հենց այսպիսի վերաբերմունք ունեն:

ՍՈՒՐԲ ԿՅՁՆՔԻ ՌԻՍՈՒՑՈՒՄ

«Վերքերն՝ անկեղծ ընկերոջից,
ավելի լավ են, քան շատ
համբույրները՝ թշնամուց»:
— Առակաց 27.6, NLT

Ցանկացած բան, ինչը փոքրացնում կամ
անտեսվում է Աստծո սրբությունը՝
սխալմամբ դիտարկելով Աստծո սերը,
հավատարիմ չէ Աստծո հայտնությանը,
որը տրվել է Յիսուս Քրիստոսի միջոցով:
— Օսվալդ Չեմբերս

Անձնական խորհրդատուն՝ այնպիսի մասնագիտություն է, որի նպատակն է՝ օգնել մարդկանց բարելավել իրենց կյանքի որակը: Ինչ-որ առումով, Պողոս առաքյալը կարգադրում է մեզ լինել հոգևոր խորհրդատուներ: Յետևելով Աստծո ճանապարհներին՝ մենք բարելավում ենք ոչ միայն մեր կյանքը, այլև՝ նրանց, ում կյանքում խորհրդատուի դեր ենք կատարում:

Մենք չենք կարող բարելավել Աստծո ճանապարհները: Ադամը և Եվան փորձեցին անել դա և ձախողվեցին՝ հայտնվելով թշվառ վիճակում: Նրանք առաջինն էին այն բազմաթիվ մարդկանցից, ովքեր փորձեցին գործել այս հիմարությունը: Յետևաբար, որպես խորհրդատուներ՝ մենք պետք է ոչ միայն խրատենք, այլև՝ զգուշացնենք և շտկենք: Շտկում չբերելով՝ մենք թույլ ենք տալիս, որ նրանք, ում կյանքերում մենք ազդեցություն ենք թողնում, շարունակեն քայլել տրտմության և կործանման ուղիով: Ահա թե ինչու է Պողոսը հորդորում Տիմոթեոսին. «Դու՛ որպես Խոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ» (Բ Տիմոթեոս 4.2, AMP):

Եփեսոսի եկեղեցուն ուղղված նամակի ամենասկզբից Պողոսը խոսում է մեր նոր բնության մասին, որն օժտված է զորացնող շնորհքով: Հավատացյալը կարող է լիովին փոխել իր կյանքը հենց այս երկու բաղադրիչների շնորհիվ: Այս կերպով նա կարող է նույնացնել իրեն Քրիստոսի հետ և հեռու մնալ ամեն փորձանքից:

Պողոսը մի շարք պատվերներ է տալիս, որոնք բնութագրում են այս նոր կյանքը: Այս պատվերները ծանր կամ անհնարին չեն, ինչպես Հին կտակարանի պատվերները, այլ ընդամենը վերաբերում են այն վարքին, որն սպասվում է մեզնից, քանի որ մենք նոր բնություն ունենք:

Այժմ կարդանք այս ցուցակի մնացած մասը.

«Թող ձեր միջև չլինի ոչ մի սեռական անբարոյություն, պղծություն կամ ազահություն: Նման մեղքերը տեղ չունեն Աստծո ժողովրդի մեջ: Անպարկեշտ պատմություններ, հիմար խոսակցություններ և կեղտոտ կատակներ. այդ ամենը ձեզ համար չէ: Փոխարենը, թող ձեզանում լինի գոհություն Աստծուն... Մի՛ հարբեք գինով...» (Եփեսացիների 5.3,4,18, NLT):

Կրկին, սա նման է «չի կարելիների» ցուցակի: Ես ցանկանում եմ ևս մեկ անգամ շեշտել հետևյալը. սա պատվիրանների ցուցակ չէ, որոնք պահելով՝ մենք կփրկվենք: Այս ցուցակի նպատակն է՝ հեռու պահել մեզ աշխարհի հետ շնանալուց, որպեսզի շարունակ մնանք Հիսուսի հայտնված ներկայության մեջ: Թույլ տվեք կրկին թվարկել բոլոր այս մեղսալի վարքագծերը.

- Ստեր մի՛ խոսեք:
- Մի՛ մեղանչեք՝ թույլ տալով, որ բարկությունը վերահսկի ձեզ:
- Մի՛ գողացեք:
- Մի՛ օգտագործեք կեղտոտ կամ վիրավորական խոսքեր:

Ահա և այս ցուցակի մնացած կետերը.

- Մի՛ եղեք սեռականորեն անբարո:
- Մի՛ եղեք պիղծ:
- Մի՛ եղեք ազահ:
- Մի՛ պատմեք անպարկեշտ պատմություններ:
- Մի՛ մասնակցեք հիմար խոսակցությունների:
- Մի՛ արեք կեղտոտ կատակներ:
- Մի՛ հարբեք գինով:

Նոր կտակարանը՝ շնորհքի ուղերձ է, և ոմանք ասում են, որ շնորհքի ուղերձի մեջ չկան պատվիրաններ և «չի կարելիներ»: Այդպի-

սի մարդկանց համար այս ցուցակը, որը գրված է Նոր կտակարանի քսանյոթ գրքերից ընդամենը մեկում, արդեն շատ է երկարում: Նույնիսկ ավելի զավեշտական է, որ այս ցուցակը կազմել է այն առաքյալը, ով ստացել է հայտնությունը շնորհքի խորությունների մասին: Կարծում եք՝ այս պատվիրանները պետք է անտեսել, թե՛ արժե լրջորեն վերաբերվել դրանց:

Ո՛՛՛ սեռական անբարոյությանը

Մեր նոր ցուցակի առաջին կետն է՝ *«ո՛՛՛ սեռական անբարոյությանը»*: Որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ մենք չպետք է շնանանք, լինենք միասեռ հարաբերությունների մեջ և ունենանք ցանկացած սեռական հարաբերություն՝ մինչև ամուսնանալը:

Շատ հաճախ ես հանդիպել եմ համատեղ ապրող զույգերի, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են: Սա հազվագյուտ երևույթ չէ. իրականում, սա շատ է տարածված եկեղեցում: Նման զույգերից շատերը հաճախում են ավետարանական եկեղեցիներ, բացահայտ խոսում են իրանց հավատքի մասին և հաճախ ոգևորությամբ պատմում են, թե «ինչ է Աստված անում» իրենց կյանքերում: Նրանք չունեն հանդիմանության, կսկիծի կամ տրտմության որևէ նշույլ: Նրանք պարզապես չեն հավատում, որ մինչև ամուսնանալը համատեղ ապրելը սխալ է: Ինչո՞ւ: Հնարավոր է՝ նրանք եկեղեցու ամբիոնից չեն լսել աստվածապաշտ և առաքինի կյանքի կոչ անող ուղերձներ, ինչպիսիք քարոզում էին Պողոսը, Պետրոսը, Հակոբոսը, Հովհաննեսը և Հուդան: Նրանց հովիվների կիրակնօրյա քարոզները լավատեսական և խրախուսական են, բայց ոչ՝ մեղքին հակառակվող և հանդիմանող: Նրանց չեն խրատել սուրբ կյանքի մեջ:

Մեր հասարակության մեջ համատեղ ապրելը, ամուսնությունից առաջ սեռական կյանք վարելը և միասեռ հարաբերություններ ունենալն ընդունված են, և նույնիսկ լավ են համարվում: Ցավոք, մեր՝ ավետարանական քրիստոնյաների աստվածաշնչյան գիտելիքները հաճախ մակերեսային են: Առանց՝ ուշադրությամբ Աստծո Խոսքն ուսունասիրելու՝ մեզնից շատերն ընդունել են մեր մշակույթի նորմերը: Այս մարդկանց գլխավոր փաստարկը հետևյալն է. *«Եթե մենք սիրում ենք իրար, ինչո՞ւ միասին չապրենք»*:

Իսկ միասեռությունը: Այն նույնպես տարածված է, բայց ոչ միայն նրանց կյանքում, ովքեր երբեք առնչություն չեն ունեցել եկեղեցու հետ: Բոլորովին վերջերս ինձ մի կնոջ ֆեյսբուքյան էջ ցույց տվեցին, ով նախ-

կինում աշխատում էր մի ծառայության մեջ: Հիմա նա սիրահարված է մեկ այլ կնոջ, և նրանք ծրագրում են ամուսնանալ: Ես մեծ տրտմությամբ էի նայում նրանց նշանդրեքի և այլ մտերիմ պահերի լուսանկարները:

Անցյալում Աստծուց նահանջած մարդիկ գիտեին իրենց նահանջի մասին: Այնուամենայնիվ, այդ կինը խանդավառությամբ խոսում էր Աստծո սիրո և Աստծուն նվիրված լինելու մասին: Ինչպե՞ս նա կարող է ամուսնանալ մեկ այլ կնոջ հետ, երբ Հիսուսը պարզորեն ասում է. «Մի՞թե չեք կարդացել ձեր Աստվածաշնչում, որ Արարիչն սկզբում ստեղծեց տղամարդուն և կնոջն իրար համար, արու և էգ... Քանի որ Աստված ստեղծեց երկու սեռերի այս բնական միությունը, ոչ ոք չպետք է պղծի Նրա արվեստի գործը» (Մատթեոս 19.3-6, MSG): Հիսուսը ցույց է տալիս, որ ամուսնությունը մեկ տղամարդու և մեկ կնոջ համար է, այսինքն՝ երկու սեռերի: Ինչո՞ւ այդ կինը տեղյակ չէ, որ նա պղծում է Աստծո կողմից հիմնված հաստատությունը: Մի՞թե եկեղեցու ամբիոնից այդ մասին պարզորեն չի խոսվել:

Ես հասկանում եմ, երբ հասարակությունը հեռանում է Աստծո սկզբնական մտադրությունից ամուսնության մասին: Չփրկված մարդիկ մեղավոր բնություն ունեն: Կորսված տղամարդիկ և կանայք այս աշխարհում ապրում են առանց Աստծո, և նրանց գիտելիքը բարու և չարի մասին՝ սահմանափակ է: Նրանց վարքը չպետք է վշտացնի մեզ, քանի որ նրանք մտածում և անում են այն, ինչ թելադրում է իրենց բնությունը: Մտահոգում է այն փաստը, որ հավատացյալներն են ընդունում այն, ինչն այս աշխարհը բարի և Աստծուն ընդունելի է անվանում: Համաձայն վիճակագրական տվյալների՝ եկեղեցիներում ավելանում է միասեռ կյանքը և ամուսնությունները խրախուսելու միտումը: Այնուամենայնիվ, եկեղեցիները խրախուսում են դա ոչ միայն խոսքով, այլև՝ լռությամբ: Ուշադիր կարդացեք այս խոսքերը.

«Եթե մի արդար մարդ շրջվի իր արդարությունից... նա կմահանա. քանի որ դու չես զգուշացրել նրան. նա կմահանա իր մեղքի մեջ, և նրա արդար արարքները, որոնք գործել է, չեն հիշվի, բայց նրա արյունը Ես պահանջելու եմ քո ձեռքից» (Եզեկիել 3.20, AMP):

Այս խոսքը հավատացյալին՝ արդար մարդուն զգուշացնելու մասին է: Եթե մենք չզգուշացնենք հավատացյալներին նրանց մեղքերի մասին, հետևանքները լուրջ են լինելու:

Միզուցե դուք չհամաձայնեք ինձ հետ՝ ասելով. «Բայց Ձո՛ն, սա գրված է Հին կտակարանում: Ինչպե՞ս կարող ես ասել, որ Նոր կտա-

կարանի ժամանակաշրջանում ծառայողների ձեռքից արյուն է պահանջվելու»:

Մեկ անգամ ես քարոզում էի մի առաջնորդական համաժողովում, որտեղ մի հովիվ ընդդիմացավ ինձ հենց այս հարցով: Նա բարկացած ասաց.

- Ինչպե՞ս եք համարձակվում ասել, որ մեր ձեռքից արյուն է պահանջվելու: Դա գրված է Հի՛ն կտակարանում:

Ես պատասխանեցի.

- Կարո՞ղ եք բացել Գործք առաքելոց 20-րդ գլուխը և ինձ համար կարդալ 26 և 27 խոսքերը:

Այդ հովիվը կարդաց ինձ հետևյալը. «Ես մաքուր և անմեղ եմ *ձեզնից յուրաքանչյուրի արյունից* և պատասխանատու չեմ դրա համար: Քանի որ երբեք չեմ ընկրկել կամ չեմ թաքցրել կամ չեմ զանցառել, որ ազդարարեմ ձեզ Աստծո ամբողջ նպատակը, ծրագիրը և խորհուրդը» (AMP):

Այդ հովիվը ցնցված նայեց ինձ և ասաց.

- Ջո՛ն, ես կարդացել էի այս հատվածը, բայց երբեք չէի տեսել սա: Խնդրում եմ, ների՛ր, որ մեղադրում էի քեզ:

Ես գնահատեցի նրա անկեղծությունը:

Հենց հիմա ես ցանկանում եմ դիմել եկեղեցական առաջնորդներին: Ճիշտ է, որ Պողոսն ուղղում էր այս խոսքերը իր կողմից նշանակված առաջնորդներին Եփեսոսում, բայց մենք նույնպես մեղավոր ենք համարվելու, եթե չազդարարենք Աստծո խորհուրդն ամբողջությամբ, երբ սովորեցնում և քարոզում ենք Նրա ժողովրդին: Եթե մենք միայն «դրական» ուղերձներ քարոզենք, մենք կթաքցնենք Աստծո խորհրդի բավականին ծավալուն մասը: Արդյունքում մեր մարդիկ կձգտեն դեպի այս աշխարհի բարին, ինչպես անդաստիարակ երեխաները, որոնք շեղվում են խոհեմությունից և սկսում են հիմարաբար վարվել: Եթե այսպես լինի, նրանց արյունը կլինի մեր ձեռքերին:

Թույլ տվեք ևս մեկ օրինակ բերել: Ես դիտում էի ինտերնետային հեռարձակմամբ, թե ինչպես մի հովիվ հայտարարեց իր եկեղեցու անդամներին, որ ինքը համասեռամոլ է: Նա պատմեց, թե որքան է հոգնել թաքնվելուց. նա չէր ցանկանում, որ այլ մարդիկ ներգրավվեին նման կյանքի մեջ և շարունակ հանդիմանություն զգային (նա օգտագործում էր «դատապարտություն» բառը):

Նա մեկը մյուսի ետևից թվարկեց բոլոր խոսքերն Աստվածաշնչում, որոնք հայտնում էին Աստծո կարծիքը միասեռության մասին, և մեկ առ մեկ վարկաբեկեց դրանք: Դրանից հետո համարձակ ասաց իրեն դիտողներին. «Պողոս առաքյալը հրաշալիորեն խոսում էր այն

մասին, որ մենք «Քրիստոսի մեջ» ենք, բայց նա շատ վատ էր ըմբռնում մարդկային հարաբերությունները»: Այս խոսքերով նա չեղյալ դարձրեց Պողոսի հրահանգները սեռական կյանքի մասին: Այս հովիվը շարունակեց՝ ասելով, որ Պողոսը սխալվել էր Յոնանի աստիճանի առաջին գլխում, երբ գրում էր, որ մենք հանգում ենք միասեռությանը Աստծուն չերկրպագելու արդյունքում (տե՛ս Յոն. 1.21-27): Ըստ այդ հովիվի խոսքերի՝ Պողոս առաքյալի գրածը չի կարող ձիշտ լինել, որովհետև «Ամերիկայի փառաբանության ծառայողների կեսը համասեռամուլ է» (հետաքրքիր է՝ ո՞ր հետազոտության տվյալներից էր նա օգտվում): Մինչ ես դիտում էի նրա քարոզը, նրա համայնքը մի քանի անգամ հոտնկայս ծափահարեց նրան:

Այն բանից հետո, երբ լսեցի այդ հովիվի աղավաղված խոսքերը, Աստված խոսեց ինձ հետ՝ ասելով. «Կարդա՛ Յոնանի աստիճանի առաջին գլուխը»: Ահա թե ինչ է այդտեղ գրված.

«Ահա թե ինչու Աստված թողեց նրանց իրենց ամոթալի ցանկություններին: Նույնիսկ կանայք հակառակվեցին սեռական հարաբերություններ ունենալու բնական ձևին և փոխարենը տրվեցին միմյանց հետ սեռական հարաբերություններին: Եվ տղամարդիկ, փոխարենը սովորական սեռական հարաբերություններ ունենալին կանանց հետ, կրքով բորբոքվեցին մեկը մյուսի հանդեպ: Տղամարդիկ ամոթալի բաներ արեցին այլ տղամարդկանց հետ, և այս մեղքի արդյունքում իրենց ներսում կրեցին այն պատիժը, որին արժանի էին: Նրանք գիտեն Աստծո արդարության պահանջը, որ՝ ովքեր այդպիսի բաներ են անում, արժանի են մահվան, սակայն, միևնույն է, նրանք անում են այդ բաները: Ավելի վատն այն է, որ նրանք խրախուսում են այլ մարդկանց՝ անել նույնը» (Յոնանի աստիճանի 1.26,27,32, NLT):

Ինչպե՞ս այդ ծառայողը կարող էր վարկաբեկել այն խոսքը, որն ամոթալի էր անվանում միասեռ հարաբերությունները: Կարիք չկա, որ մարդը հոգևոր լինի՝ հասկանալու համար, որ նման սեռական վարքը բնական չէ: Նույնիսկ կենդանիները նման բաներ չեն անում: Ինչո՞ւ ենք մենք կարծում, որ Աստված անտեսում, ընդունում կամ խրախուսում է դա:

Մտածե՛ք այն մարդկանց մասին, ովքեր դեռ լիարժեք հաստատված չեն հավատքի մեջ և պայքարում են այս կրքոտ ցանկությանը և մեղսալի վարքագծին տեղի տալու դեմ: Ի՞նչ կլինի, եթե նրանք լսեն այս ուղերձը: Նրանց խիղճն ասում է. «Աստծո զավակը չպետք է այսպես վարվի»: Ցավոք, այս հովիվի խոսքերն օգտագործվելու են՝ նրանց ներ-

քին ձայնը լռեցնելու համար: Նա ոչ միայն իրեն է դարձնում դատաստանի ենթակա, այլև խրախուսում է ուրիշներին՝ գործել միևնույն մեղքը:

Իսկ ի՞նչ կարելի է ասել այդ եկեղեցում գտնվող մարդկանց հոտնկայս ծափահարությունների մասին: Աստվածաշնչի «Էմփիֆայդ» թարգմանության Յոննեացիների 1.32-ում գրված է՝ ովքեր «*հավանություն են տալիս և ծափահարում են* նրանց, ովքեր անում են» այսպիսի բաներ, ենթակա են դատաստանի:

Այդ դեպքում, ի՞նչ անենք Պողոսի խոսքերի հետ:

«Չե՞ք հասկանում, որ նրանք, ովքեր սխալ են գործում, չեն ժառանգի Աստծո թագավորությունը: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ: Ովքեր տրվում են սեռական մեղքին, կամ՝ նրանք, ովքեր երկրպագում են կուռքերի, կամ շնություն են գործում, կամ տղամարդ մարմնավաճառներ են, կամ միասեռ են, կամ գողեր են, կամ ազահ մարդիկ են, կամ հարբեցողներ են, կամ բռնացող են, կամ խաբում են մարդկանց՝ սրանցից ոչ մեկը չի ժառանգի Աստծո թագավորությունը» (Ա Կորնթացիների 6.9,10, NLT):

Ակնհայտ է, որ կան այլ վնասակար մեղքեր: Բայց մենք չպետք է անտեսենք այն, ինչ այս խոսքերը հայտնում են շեղված սեռական վարքագծերի մասին:

Այս աշխարհի ճանապարհը թունավորված է: Եթե մենք մեր ամբիոններից չհռչակենք ճշմարտությունը սեռական անբարոյության մասին, մարդիկ չեն իմանա, թե ինչ է աստվածապաշտ վարքը, և կխաբվեն չարից: Նրանք կընդունեն այն, ինչն այս աշխարհը բարի և Աստծո կողմից ընդունելի է համարում:

Ո՛չ՝ պղծությանը

Մեր «չի կարելիների» ցուցակի հաջորդ կետն է՝ «*ոչ՝ պղծությանը*»: Մենք պետք է հեռու մնանք պոռնոգրաֆիայից, ամեն տեսակի անպարկեշտ տեսանյութերից և ցանկասեր մտքերից: Հիսուսն ասում է. «Ցանկացած մարդ, ով նույնիսկ նայում է կնոջը կրքով, արդեն շնություն է գործել նրա հետ իր սրտում» (Մատթեոս 5.28, NLT): Սաղմոսերգուն գրում է. «Ես ոչ մի անվայել կամ պիղծ բան չեմ դնի իմ աչքերի առջև» (Սաղմոս 101.3, AMP):

Պոռնոգրաֆիան խթանում է մեր զգացմունքները և բավականություն է պատճառում դրանց, քանի որ այն հաճելի է մեր մարմնական բնությանը: Այնուամենայնիվ, պոռնոգրաֆիան քայքայում է թե՛ մեր կողակցի, թե՛ Աստծո հետ մտերիմ լինելու կարողությունը: Դրա արդյուն-

քում մեր ներսում դժգոհություն է առաջանում մեր կողակցի, ինչպես նաև՝ մեր հանդեպ: Թվում է՝ պոռնոգրաֆիան պարզապես մի փոքր կայծ է տալիս, սակայն այդ կայծը կարող է առաջացնել շփոթմունքի, մեղքի զգացումի, ամոթի և անապահովության պայթյուն:

Մինչև վերջերս պոռնոգրաֆիկ կայքերը ամենից հաճախ դիտվողներն էին համացանցում. այժմ սոցիալական ցանցերը գերազանցել են դրանց ցուցանիշները: Տասը կայքերից ավելի քան մեկը պոռնոգրաֆիկ է: Ավելի քան քառասուն միլիոն ամերիկացի պարբերաբար մուտք է գործում այդ կայքերը, և ամեն վայրկյան համացանցի 28.258 օգտվող պոռնոգրաֆիա է դիտում¹⁵:

Այս խնդիրը չի վերաբերում միայն տղամարդկանց: Մոտավորապես հինգ կանանցից մեկը առնվազն շաբաթը մեկ անգամ պոռնոգրաֆիա է դիտում համացանցում, և շատերն ասում են, որ անկարող են հակառակվել ձեռնաշարժության ցանկությանը¹⁶: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք կերակրում են իրենց կախվածությունը համացանցից դուրս՝ ամսագրերով և սեռական բնույթի գրքերով (վերջինը հատկապես տարածված է կանանց մոտ)¹⁷:

Իսկ ի՞նչ է կատարվում եկեղեցում: «Քրիստոնեությունն այսօր» ամսագիրը հարցում է անցկացրել՝ խնդրելով մի շարք հովիվների նշել, թե արդյո՞ք նրանք այցելել են որևէ պոռնոգրաֆիկ կայք նախորդ մեկ տարվա ընթացքում: Հիսունհինգ տոկոսը դրական է պատասխանել: Եվ սրանք մեր եկեղեցական առաջնորդներն են: Այլ վիճակագրական տվյալներ ցույց են տալիս, որ ավետարանական քրիստոնյա տղամարդկանց ավելի քան 50 տոկոսը կախվածություն ունի պոռնոգրաֆիայից¹⁸, իսկ «CNN» հեռուստաալիքի կողմից անցկացված մի հարցում ցույց է տալիս, որ քրիստոնյա տղամարդկանց 70 տոկոսը պայքարում է դրա դեմ¹⁹:

Այնպես որ, մենք պետք է հարց տանք. հնարավո՞ր է, որ այս համաճարակը, որն այսօր տարածված է ավելի քան երբևէ, առաջացել է՝ քանի որ եկեղեցիների ամբիոններից հիմնականում լավատեսական ուղերձներ են քարոզվում:

Ես խնդիրներ ունեի պոռնոգրաֆիայի հետ մինչև քսանյոթ տարեկանը. այդ ժամանակ արդեն մի քանի տարվա ծառայության մեջ էի: Ես համոզված էի, որ այդ մեղքը կդադարեր, հենց որ ամուսնանայի մի գեղեցիկ աղջկա հետ. այնուամենայնիվ, այն ոչ միայն չդադարեց, այլև ավելի բարդացավ: Այն պատ կառուցեց Լիզայի և իմ միջև: Ես չազատվեցի դրանից մինչև 1984 թվականի աշունը, երբ պատմեցի իմ կախվածության մասին մի ծառայողի: Նա ոչ երկիմաստ կերպով ասաց

ինձ. «Վերջ տուր դրան»: Նա խստորեն հանդիմանեց ինձ: Ես խրախուսական ուղերձ չստացա նրանից, այլ ստացա ցուցումներ և զգուշացումներ, որոնք համակեցին ինձ Աստծո երկյուղով:

Այդ մարդու խոսքերը որոնումների սկիզբ դրեցին իմ կյանքում. ես սկսեցի փնտրել Աստծուն՝ ազատվելու համար: Ինը ամիս անց լիովին ազատվեցի այդ մեղքից, և մինչև օրս ապրում եմ ազատության մեջ: Ես հայտնաբերեցի, թե որքա՜ն զորավոր է Աստծո շնորհքը: Այն կարող է ազատ արձակել մի մարդու, ով տասնմեկ տարեկանից կախվածություն էր ունեցել պոռնոգրաֆիայից: Սա հերթական պատճառն է, որը տրտմեցնում է ինձ, երբ տեսնում եմ, որ ծառայողները չեն սովորեցնում Աստծո շնորհքի բոլոր առավելությունների մասին: Եթե ես չհայտնաբերեի շնորհքը՝ ոչ միայն որպես ճրիաբար տրվող պարգև, մեղքերի ներում և փրկություն, այլև՝ որպես Աստծո զորություն, որը թույլ է տալիս գերազանցել իմ բնական կարողությունները, ես մինչև օրս այդ գերության մեջ կլինեի:

Ո՛՛՛՛ ազահությանը

«Ազահություն» բառի սահմանումն է՝ «ուժգին և եսակենտրոն ձգտում ինչ-որ բանի հանդեպ, հատկապես՝ հարստության, իշխանության կամ կերակրի»: Որքա՜ն հաճախ են հավատացյալները, իրենց ազահության պատճառով, աղավաղում Աստծո խոստումները՝ մեզ օրհնելու, հաջողակ և բարգավաճ դարձնելու մասին: Նրանք կենտրոնանում են իրենց վրա, ոչ թե մարդկանց ծառայելու և օրհնելու հնարավորության: Ազահությունը կամ ընչաքաղցությունը կռապաշտություն է (տե՛ս Կողոս. 3.5): Երբ մենք ազահ ենք, մենք մեր ցանկությունները, ձգտումները, հավակնությունները, համբավը, կարգավիճակը, ճանաչված լինելը և ֆինանսական անհագությունը դասում ենք ավելի բարձր, քան Աստծուն և այլ մարդկանց:

Կարելի է շատ պատմություններ պատմել այն մասին, թե ինչպես է ազահությունը ներթափանցում հավատացյալների կյանք: Բաղաամր կորցրեց իր հարաբերություններն Աստծո հետ հենց այս պատճառով, ինչպես և Կայենը, Կորիսը և շատ մարդիկ, ովքեր մի ժամանակ Աստծո ներկայության մեջ էին: Շատերն ազահության մեջ են ընկնում, քանի որ զգուշացումներ չեն ստացել: Մենք պետք է զգուշացնենք մարդկանց ուսուցումների և քարոզների միջոցով, իսկ դրա համար անհրաժեշտ է դադարեցնել միայն դրական և լավատեսական ուղերձներ քարոզելը: Եթե մենք ցանկանում ենք օգնել մարդկանց հասունանալ Քրիստո-

սում, մենք պետք է ոչ միայն *սովորեցնենք*, այլև՝ *զգուշացնենք* (տե՛ս Կողոս. 1.28):

Երբ երեխա էի, ինձ դուր էր գալիս, երբ ծնողներս սովորեցնում էին ինձ, բայց ես ուշադրություն չէի դարձնում նրանց զգուշացումներին: Այնուամենայնիվ, հետագայում իմացա, որ հենց զգուշացումները փրկեցին իմ կյանքը: Եթե հայրս չզգուշացներ ինձ պտուտակահանը էլեկտրական վարդակի մեջ մտցնելու մասին, ես կարող էի անել դա՝ ելնելով հետաքրքրասիրությունից, և մահանալ էլեկտրական հոսանքից:

Պողոսն ասաց իր սիրելի եկեղեցիներից մեկին. «Ձզո՛ն եղեք և հիշե՛ք, որ երեք տարի շարունակ ես չեմ դադարել գիշեր ու ցերեկ արցունքներով զգուշացնել ամեն մեկին» (Գործք 20.31): Ամեն օր ու գիշեր՝ երեք տարվա ընթացքով: Եվ նա անում էր դա արցունքներով: Արդյո՞ք մենք զգուշացնում ենք մարդկանց: Արդյո՞ք անում ենք դա ամեն օր: Թե՞ մենք՝ քարոզողներս և սովորեցնողներս, հույս ունենք, որ մեր խրախուսական ուղերձները ետ կպահեն մեր ունկնդիրներին ազահությունից: Դա մեզ ընդհանրապես անհանգստացնո՞ւմ է: Արդեն երկար տարիներ է՝ ես չեմ լսել նույնիսկ մեկ ուղերձ ազահությունից հեռանալու մասին:

Պողոսը՝ այն առաքյալը, ով քարոզում էր շնորհքի մասին, նույնպես իր սրտի աղաղակն էր ուղղում Եփեսոսի եկեղեցուն, ինչպես նաև մեզ. «Մի՛ ընկեք ազահության մեջ»:

Լսե՛ք նաև Չակոբոս առաքյալի խոսքերը.

«Ի՞նչն է վիճաբանություններ և կռիվներ առաջացնում ձեր միջև: Մի՞թե դրանք չեն գալիս այն չար ցանկություններից, որոնք պատերազմում են ձեր ներսում: Դուք ցանկանում եք այն, ինչ չունեք, և դավեր եք նյութում... դա ստանալու համար: Դուք նախանձում եք այն ամենին, ինչ ունեն ուրիշները, բայց չեք կարողանում ձեռք բերել դրանք. այնպես որ, դուք կռվում և պատերազմում եք՝ այդ բաները նրանցից խլելու համար: Դուք չունեք այն, ինչ ցանկանում եք, որովհետև չեք խնդրում Աստծուց: Եվ նույնիսկ երբ խնդրում եք, չեք ստանում, որովհետև ձեր դրդապատճառները լիովին սխալ են. դուք միայն ցանկանում եք այն, ինչը հաճույք է պատճառում ձեզ: Շնացողներ՝» (Չակոբոս 4.1-4, NLT):

Դե, Չակոբո՛ս, այդքան բացասական մի՛ եղիր: Մի՞թե այս առաքյալը մռայլ, դժկամ և խիստ մարդ էր: Թե՞ նա իսկապես սիրում էր այն մարդկանց, ում գրում էր: Միգուցե սա՞ էր պատճառը, որ նա սթափեց-

նող ճշմարտությունն էր խոսում նրանց՝ մասսայականություն վայելող լավատեսական ուղերձ քարոզելու փոխարեն: Միզուցե Աստված հենց ա՛յս պատճառով գործածեց նրան՝ Նոր կտակարանի մի մասը գրելու համար, փոխարենը ընտրեց նրա օրերում ապրող մեկ այլ ծառայողի, ով ավելի ոգևորիչ ուղերձներ ուներ:

Ո՛չ՝ անպարկեշտ խոսակցություններին

Մեր «չի կարելիների» ցուցակի հաջորդ կետն է՝ «մի՛ մասնակցեք հիմար խոսակցությունների և մի՛ պատմեք անպարկեշտ պատմություններ և կատակներ»: Այս կետի մեջ մտնում է նման տեսանյութեր դիտելը և երգեր կամ այլ ձայնագրություններ լսելը:

Ինձ խնդրել էին օգնել մի խումբ երիտասարդների, ովքեր ծառայողական թիմերի անդամներ էին: Նրանք շփոթված էին, քանի որ նրանց ավագներն օգտագործում էին կեղտոտ արտահայտություններ, անպարկեշտ կատակներ էին անում, և նրանց բառապաշարը ոչնչով չէր տարբերվում կորսված մարդկանց բառապաշարից: Ինչո՞ւ էին նրանց ավագներն այդպես վարվում: Յնարավո՞ր է արոյոք, որ մենք չենք ասում Աստծո առաջնորդներին և ժողովրդին. «Նման վարքը սազական չէ Արքայության քաղաքացուն»:

Պողոսը գրում է Կողոսացիներին. «Թող ձեր խոսքը շնորհքով լցված և գրավիչ լինի» (4.6, NLT): Մեր խոսքը պետք է շնորհքով լցված լինի:

Մի՛ հարբեք

Չաջորդը. «մի՛ հարբեք»՝ ո՛չ զարեջրով, ո՛չ գինով, ո՛չ էլ ցանկացած ոգելից խմիչքով (մենք կարող ենք վերագրել նույն խոսքը թմրանյութերին՝ թե՛ օրինական, թե՛ անօրինական և նույնիսկ՝ բժիշկների կողմից դուրս գրվող թմրեցնող միջոցներին): Կրկին, գոյություն ունի այնպիսի բան, ինչը *չի կարելի*:

Ալկոհոլը գայթակղիչ է (տե՛ս Առակ. 23.31-33): Այն կարող է հեշտորեն հրապուրել մեզ, որ խմենք ավելին՝ չհասկանալով, թե երբ կանգ առնել: Ալկոհոլը նվազեցնում է և, ի վերջո, սպառում է ողջամտությունը: Արգելքներն անտեսվում են, և սրտի ու մտքի բնական պաշտպանիչ գործառնությունները դադարում են ազդել մարդու վրա: Սա կարելի է համեմատել համակարգի ներքին ցանցի և համացանցի միջև գտնվող անվտանգության համակարգը (հրապատը) հեռացնելու հետ: Խոհեմությունն սկսում է աստիճանաբար նվազել, և մենք ավելի բաց ենք դառնում վնասակար մտքերի համար: Ըստ էության, ալկոհո-

լը հեռացնում է մեր ուղեղի պաշտպանական համակարգը: Նույնիսկ եթե մենք գիտենք, թե որն է մեր չափը, և կարող ենք չխմել դրանից ավելին, հնարավոր է, որ անգիտակցաբար հարբեցողության դրդենք ուրիշներին: Թույլ տվեք մի պատմություն պատմել:

Մի եկեղեցու գլխավոր հովիվ խմիչք էր օգտագործում իր քաղաքի ռեստորաններից մեկում: Նրա անդամներից մեկը, ով վերջերս էր դարձի եկել, ծաշում էր նույն ռեստորանում: Նա հարուստ գործարար էր, ով մինչև փրկվելը խմիչքի հետ կապված խնդիրներ էր ունեցել: Իր դարձի գալուց հետո նա այլևս խմիչք չէր օգտագործել. նա այն մարդկանցից էր, ովքեր «մի կերպ փախել էին խաբեության կյանքից» (Բ Պետրոս 2.18, NLT):

Այդ դեպքից կարճ ժամանակ անց այդ գործարարը երեք օր տևող հարբեցողության մեջ էր: Այդ երեք օրվա ընթացքում նա շատ անխոհեմ որոշումներ կայացրեց և ֆինանսական առումով կորցրեց գրեթե ամեն ինչ: Ավելի սարսափելին այն է, որ նա կորցրեց իր ընտանիքը: Որոշ ժամանակ անց նրան հարցրին, թե ինչո՞ւ էր այդպես վարվել: Նա պատասխանեց. «Ես տեսա, որ իմ հովիվը խմիչք էր օգտագործում, և մտածեցի, որ *եթե նրան կարելի է, ուրեմն, ինձ էլ է կարելի*»:

Ի հարկե, ի վերջո, նա ինքն է պատասխանատու իր սխալ ընտրության համար, բայց մի՞թե այս դեպքը չպետք է դրդի մեզ հաշվի առնել այն ազդեցությունը, որը մենք ունենք մարդկանց վրա:

Վերջերս ավելի շատ ծառայողներ են ազատորեն խմիչք օգտագործում հասարակական վայրերում: Նրանք օգտագործում են աստվածաշնչյան խոսքեր՝ ապացուցելու համար, որ ունեն այս իրավունքը: Դրանցից մեկը Ա Տիմոթեոս 3.3-ն է, որում Պողոսն ասում է Տիմոթեոսին, որ եկեղեցու առաջնորդները չպետք է «գինեմոլ» լինեն: Յունարենում օգտագործվում է «պարոհնոու» բառը, որի սահմանումներից մեկը, ըստ «Աստվածաշնչյան բառերի ուսումնասիրության լիակատար բառարանի», հետևյալն է. «Գինու հետ առնչվող, հարբած: Այս բառը չի նշանակում ակոհոլի պատասխանատու և չափավոր օգտագործում, այլ՝ չարաշահում կամ անդադար օգտագործում: Այս բառը պատկերում է մի մարդու, ում սեղանին մշտապես շիշ (կամ՝ գինու տիկ) է դրված, և արտահայտում է կախվածություն»: «Նյու Լիվինգ» թարգմանությունը վերարտադրում է այս խոսքը որպես «... չլինի հարբեցող» (Ա Տիմոթեոս 3.3, NLT):

Մեկ այլ հատվածում Պողոսը խորհուրդ է տալիս Տիմոթեոսին. «...մի քիչ գինի գործածի՛ր քո ստամոքսի և քո շուտ-շուտ տկարանալու համար» (Ա Տիմոթեոս 5.23): Տիմոթեոսին կարելի է անվանել Եփեսոսի եկեղեցու գլխավոր հովիվ: Այսօր շատ ծառայողներ մտածում են. «Եթե

եկեղեցու առաջնորդը չպետք է նույնիսկ դիպչեր գինուն, ինչպես ուխտավորները Հին կտակարանում, Պողոսը չէր պատվիրի հովիվ Տիմոթեոսին գինի օգտագործել, նույնիսկ դրա առողջարար հատկանիշների համար»:

Ամենահաճախ մեջբերվող հատվածը այս բանավեճի մեջ այն է, որ Հիսուսը ջուրը գինի դարձրեց (տե՛ս Հովհ. 2.1-11): Գաղափարը հետևյալն է. «Հիսուսը ջուրը գինի չէր դարձնի հասարակական միջոցառման ժամանակ, եթե այն կարելի չլիներ խմել»:

Եթե մենք հաշվի առնենք բացառապես այս խոսքերը, մարդիկ կարող են վիճարկել, որ հասարակական վայրում խմիչք օգտագործող հովիվն արդարացի էր վարվել: Այնուամենայնիվ, մենք ապրում ենք մի հասարակության մեջ, որտեղ հարբեցողությունը լայնորեն տարածված է: Ամեն տարի Ամերիկայի Միացյալ Նահանգներում խմիչքի հետ առնչվող պատահարների պատճառով մահանում է գրեթե 88.000 մարդ²⁰: Հարբեցողությունը համարվում է մահվան երրորդ առաջատար կանխարգելիչ պատճառը²¹: 2007 թվականին «Վաշինգտոն Փոստ» պարբերականը հաղորդել է, որ ամեն երրորդ ամերիկացին ունի կամ ունեցել է խնդիրներ խմիչքի հետ²²: Համաձայն «Ալկոհոլի չարաշահման և ալկոհոլիզմի ազգային ինստիտուտի» տվյալների՝ 2012 թվականին տասնութ տարին լրացած քաղաքացիների 25 տոկոսը տեղեկացրել է, որ նախորդ ամսվա ընթացքում ներգրավված է եղել հարբեցողության մեջ: Այս տվյալները սարսափելի են. ամեն չորսից մեկը՝ ընդամենը մեկ ամսում: Ես կարող էի շատ ավելի վիճակագրական տվյալներ բերել, բայց իմաստն այն է, որ ամերիկացիները խմիչքը չարաշահելու հակվածություն ունեն:

Խմիչքի չարաշահումը լայնորեն տարածված է ոչ միայն Միացյալ Նահանգներում: 2012 թվականին ամբողջ աշխարհում բոլոր մահվան դեպքերի (3.3 միլիոն) 6 տոկոսը տեղի է ունեցել խմիչքի սպառման պատճառով: Ամբողջ աշխարհում խմիչքի չարաշահումը վաղաժամ մահվան և հաշմանդամության հիմնգերորդ առաջատար ռիսկային գործոնն է. այնուամենայնիվ, 15-49 տարիքային խմբում այն առաջինն է²³:

Այս ալկոհոլային համաճարակի պայմաններում մենք՝ որպես պատասխանատու հավատացյալներ, պետք է մեկ քայլ առաջ գնանք մեր տրամաբանության մեջ: Մենք պետք է ավելի լայնորեն կիրառենք այն ցուցումները, որոնք Պողոսը տվեց կուռքերին զոհաբերած միսն ուտելու վերաբերյալ: Նա գրում է. «Եթե այն, ինչ ես ուտում եմ, մեղքի է դրդում մեկ այլ հավատացյալի, ես այլևս միս չեմ ուտի, քանի դեռ ապրում եմ, որովհետև չեմ ցանկանում մեկ այլ հավատացյալի սայթաք-

ման պատճառ դառնալ» (Ա Կորնթացիների 8.13, NLT): Պողոսը պարզ ասաց, որ կուռքերին զոհաբերված միսն ուտելը մեղք չէ: Այնուամենայնիվ, նա ասաց, որ եթե այդ պատճառով ավելի տկար եղբայրը գայթակղվում է և սայթաքում հավատքի մեջ, նա այլևս չի ուտի այն:

Կարելի է փաստարկներ առաջադրել, որոնք կաստարեն փոքր չափերով խմիչք օգտագործելու քրիստոնյայի իրավունքը, բայց որպես հավատացյալներ (և հատկապես նրանք, ովքեր եկեղեցական առաջնորդներ են)՝ մենք պետք է պատասխանենք հետևյալ հարցին: Մի՞թե մենք ցանկանում ենք գայթակղության քար դառնալ նրանց համար, ովքեր հազիվ են ազատվել հարբեցողության մեղքից, կամ կրկին ետ մղել նրանց կախվածության մեջ՝ հատկապես հաշվի առնելով, որ մենք ապրում ենք այնպիսի հասարակության մեջ, որում այս չարաշահումն անվերահսկելի չափերի է հասնում: Եթե այն ավագ հովիվը, ով խմիչք էր օգտագործում ռեստորանում, ապրեր այս իմաստությամբ, միգուցե այդ գործարարը խուսափեր իր ողբերգական եռօրյա հարբեցողությունից:

Մենք պետք է փախչենք հարբեցողության ցանկացած ձևից: Այս վարքը սազական չէ Աստծո զավակին, և սա աննշան հարց չէ: Մենք խիստ զգուշացում ենք ստացել. «Չե՞ք հասկանում, որ նրանք, ովքեր սխալ են գործում, չեն ժառանգի Աստծո թագավորությունը: Մի՛ խաբեք ինքներդ ձեզ: Նրանք, ովքեր տրվում են սեռական մեղքին... կան գողեր են, կան ագահ մարդիկ են, կան *հարբեցողներ* են, կան բռնացող են, կան խաբում են մարդկանց՝ սրանցից ոչ մեկը չի ժառանգի Աստծո թագավորությունը» (Ա Կորնթացիների 6.9,10, NLT):

Կա ևս մեկ կարևոր կողմ, որը պետք է հաշվի առնենք: Մենք հոգևոր մրցավազքի մեջ ենք, և մեր Մարզիչը պատվիրում է մեզ՝ «...ազատվենք ամեն ծանրությունից, որը դանդաղեցնում է մեր ընթացքը, հատկապես՝ այն մեղքից, որն այնքա՛ն հեշտորեն է ծուղակի մեջ գցում մեզ» (Եբրայեցիների 12.1, NLT): Կան մեղքեր, որոնք ավելի հեշտորեն են պաշարում մեզ, քան մյուսները: Սա կարելի է տեսնել վերևում բերված վիճակագրությունների օրինակով, որոնցում խմիչքի չարաշահումն իսկապես բարձր տեղ է գրավում: Ուրեմն, արժե՞ սիրախաղ անել մի բանի հետ, ինչը շատերին է կործանել:

Որպես ամփոփում՝ մի հարց տանք. ինչո՞ւ ենք մենք, ունենալով Սուրբ Յոզու լեցունության փորձառությունը, ձգտում խաղաղություն ստանալու կամ լարվածությունը թեթևացնելու արհեստական միջոցների: Յնարավո՞ր է, որ մենք Յոզով լցված ենք միայն անվանապես, ոչ թե փորձառությամբ, և այդ պատճառով էլ այլ միջոցների կարիք ունենք:

Մի՛ խաբվեք

Մենք ուսումնասիրեցինք ընդամենը մեկ գլուխ Եփեսացիների նամակից: Նոր կտակարանում կան շատ այլ պատվիրաններ: Կրկին, հիշե՛ք, որ դուք չեք պահում այս պատվիրանները՝ փրկվելու համար. նման կենսառժը հատուկ է այն մարդկանց, ովքեր բնակվում են Աստծո հայտնված ներկայության մեջ:

Ահա թե ինչպես է Պողոսն ամփոփում իր «չի կարելիների» ցուցակը.

«Մի՛ խաբվեք նրանցից, ովքեր փորձում են արդարացնել այս մեղքերը, որովհետև Աստծո բարկությունը կթափվի նրանց վրա, ովքեր անհնազանդ են Նրան: Մի՛ մասնակցեք այն բաների մեջ, որոնք այս մարդիկ անում են... Զգուշորեն որոշե՛ք, թե ինչն է հաճելի Տիրոջը: Մի՛ մասնակցեք չարի և խավարի անարժան գործերին. փոխարենը, բացահայտե՛ք դրանք: Նույնիսկ խոսելը այն բաների մասին, ինչ այդ անաստված մարդիկ գործում են ծածուկում, ամոթալի է... Այնպես որ, զգույշ եղե՛ք, թե ինչպես եք ապրում» (Եփեսացիների 5.6,7,10-12, NLT):

Մի՛ խաբվեք նրանցից, ովքեր փորձում են արդարացնել իրենց մեղքերը: Դրանց հետևանքները շատ վատն են լինելու: Մենք պետք է զգուշորեն, ոչ թե թեթևորեն որոշենք, թե ինչն է մեր կյանքում հաճելի Աստծուն: Մեզնից շատերն այնպես են վարվում, ասես խաղահրապարակում են, այնինչ, իրականում մենք պատերազմի դաշտում ենք: Մենք պատերազմի մեջ ենք. մեր գլուխները՝ թշնամու թիրախն են, և նա գործում է առանց հանգստի, որպեսզի կործանի մեզ: Բայց եթե մենք մնանք լույսի մեջ, նա կձախողվի, քանի որ մեր կյանքում կա Աստծո զարմանալի շնորհքը:

Ես խրախուսում եմ ձեզ. նկրտե՛ք դեպի այս բարձրագույն կյանքը: Ապավինե՛ք շնորհքին, որպեսզի ապրեք աստվածապաշտ և անարատ կյանքով այս այլասերված և մահացող աշխարհում: Դուք ունեք այն ամենը, ինչ պահանջվում է, որովհետև Աստված ձրիաբար տվել է ձեզ իր աստվածային բնությունը: Մի՛ վատնեք, ո՛չ էլ զուր տեղը ընդունեք Աստծո զարմանալի շնորհքը:

ՄԵՐ ԴՐՈՒՄՆԵՐԸ

«Այդ իսկ պատճառով ես մշտապես կհիշեցնեմ ձեզ այս բաների մասին, թեև դուք արդեն գիտեք դրանք և հաստատ կանգնած եք այն ճշմարտության մեջ, որը սովորել եք: Եվ ես ծիշտ կվարվեմ, որպեսզի շարունակեմ հիշեցնել ձեզ, քանի դեռ ապրում եմ: Որովհետև մեր Տեր Յիսուս Քրիստոսը ցույց տվեց ինձ, որ ես շուտով թողնելու եմ այս երկրային կյանքը. այնպես որ, ես շատ եմ ջանալու, որ միշտ հիշեք այս բաները, երբ ես այլևս չլինեմ այս աշխարհում»:
— Բ Պետրոս 1.12-15, NLT

...Մենք համարում ենք, որ Աստծո ընկերությունից գրկվելը՝ միակ սարսափելի բանն է, և Աստծո ընկերը դառնալը համարում ենք միակ բանը, որն արժանի է պատվի, և որն արժե փափագել:
— Գրիգոր Նյուսացի

Սուրբ ապրելու կանչը ո՛չ առաջարկ է, ո՛չ էլ խորհուրդ: Սա այն-պիսի մի բան է, ինչին մենք պետք է ձգտենք, բայց իրականում անկարող ենք հասնել: Սա պատվիրան է, և դա կատարելն սպասվում է մեզնից:

Պետրոս առաքյալը պարզ ասաց, որ անչափ կարևոր է կրկնել մեր Տեր Յիսուս Քրիստոսի կողմից տրված առանցքային ճշմարտությունները և պատվիրանները: Հիշեցնելու գաղափարը գրված է երեք անգամ վերոնշյալ չորս խոսքի մեջ: Պետրոսի նամակը կարդացող մարդիկ արդեն գիտեին, թե ինչ էր գրված. այնուամենայնիվ, նա ցույց տվեց, որ նույնիսկ իր Երկինք գնալուց հետո իր ընթերցողները պետք է շարունակ վերհիշեին այս կարևոր ճշմարտությունները: Արժե, որ մենք նույնպես ավելի ուշադիր լինենք այս կարևոր ուղերձին:

Իր երկու նամակների սկզբում Պետրոսը գրում է. «Դուք պետք է սուրբ լինեք ձեր բոլոր գործերում» (Ա Պետրոս 1.15, NLT): Սուրբ գրքում հաճախակի կրկնվում են երկու տեսակի հորդորներ՝ առաջարկներ և պատվիրաններ: Մենք իմաստուն ենք, եթե ուշադրություն ենք դարձնում առաջարկներին, բայց հիմար ենք, եթե անտեսում ենք պատվիրանները: Պետրոսի այս խոսքերը՝ պատվիրան է:

Ակնհայտ է, որ առաքյալը խոսում է մեր կենսառժի մասին: Այս պատճառով մենք չպետք է երկչոտությամբ ընկրկենք, սարսափենք կամ հուսահատվենք: Մենք խոստում ունենք. «Նրա պատվիրանները ծանր չեն» (Ա Յովհաննես 5.3): Սա նշանակում է, որ պատվիրանները կատարելը հնարավոր է, ոչ թե անիրատեսական:

Իր առաջին նամակի մնացած մասում Պետրոսը շարունակում է խոսել գործնականորեն սուրբ ապրելու մասին, և ավելի շատ՝ երկրորդ նամակում: Ահա նրա խոսքերից մեկը. «Ես զգուշացնում եմ ձեզ՝ որպես «ժամանակավոր բնակիչների և օտարերկրացիների», հեռու մնալ աշխարհիկ ցանկություններից, որոնք պատերազմում են ձեր իսկ անձերի դեմ» (Ա Պետրոս 2.11, NLT):

Պատերազմի դաշտը՝ մեր միտքն է: Մենք պետք է զսպենք մեր մտքերը, զգացմունքները և կամքը: Բոլոր մեղքերն սկսվում են այստեղից: Պայքարը սովորաբար տեղի է ունենում, երբ մենք ամենաքիչն ենք սպասում. հաճախ այն տեղի է ունենում, երբ մենք անհավատների կամ փոխզիջման գնացող հավատացյալների հետ ենք: Պետրոսը դիպուկ խոսում է այս մասին. «Զգո՛յշ եղեք, որ պատշաճ ձևով ապրեք ձեր անհավատ հարևանների միջև» (Ա Պետրոս 2.12, NLT):

Առաքյալը խոսում է, այն մասին որ մենք պետք է սուրբ վարք ունենանք թե՛ աշխատանքի, թե՛ ամուսնության և թե՛ այլ տեսակի փոխհարաբերությունների մեջ: Նա շեշտադրում է, որ ամենաարդյունավետ կերպով մենք կարող ենք տալ մեր քրիստոնեական վկայությունը մեր անհավատ հարևաններին, աշխատակիցներին, համադասարանցիներին կամ համակուրսեցիներին, հատկապես՝ նրանց, ում հետ մտերիմ շփում ենք ունեցել՝ մինչև Քրիստոսին ընդունելը: Նա ասում է.

«Իհարկե, ձեր հին ընկերները չեն հասկանում, թե ինչու դուք այլևս ձեր հին շրջապատի հետ չեք: Բայց դուք չպետք է բացատրություններ տաք նրանց: Նրանք են, որ պատասխանատվության են կանչվելու, և այն էլ՝ անձամբ Աստծո առջև» (Ա Պետրոս 4.4,5, MSG):

Իր երկրորդ նամակի սկզբում Պետրոսը խրատում է մեզ. «...ջանք արեք, որ ապացուցեք, որ իսկապես այն մարդկանց թվում եք, ում Աստված կանչել և ընտրել է: Արե՛ք այս բաները, և դուք երբեք ետ չեք մնա» (Բ Պետրոս 1.10, NLT): Մեր իսկությունն ապացուցելու համար մենք պետք է մի շարք վարքագծեր ունենանք, որոնց թվում են բարոյական գերազանցությունը, զսպվածությունը, համբերությունը, երկայնամտությունը, աստվածապաշտությունը, բարությունը և սերը: Սրանք շնորհքի պտուղներն են, որոնք մենք հավատքով հասունացնում ենք: Եթե անենք այս բաները, «...այդ ժամանակ Աստված թույլ կտա ձեզ շքամուտքից մտնել մեր Տեր և Փրկիչ Հիսուս Բրիստոսի հավիտենական թագավորությունը» (խոսք 11):

Պետրոսը շարունակում է զգուշացնել, որ բարձրանալու են ուսուցիչներ, ովքեր «խորամանկությամբ կործանարար հերձվածություններ են սովորեցնում» (Բ Պետրոս 2.1, NLT): Նրանք մեծ լսարաններ կգրավեն. «Շատերը կհետևեն նրանց չար ուսմունքին և ամոթալի անբարոյությանը» (խոսք 2): «Մեսիջ» Աստվածաշնչում գրված է այս կեղծ ուսուցիչների մասին. «Նրանք կանգնել են դեպի կործանումը տանող արագ սահանքի վրա, բայց սա տեղի չի ունենա, նախքան կհավաքագրեն մի բազմություն՝ բաղկացած խառնիխուռն հետևորդներից, ովքեր ճիշտը սխալից չեն տարբերում: Նրանք վատ կերպով են խոսում ճշմարտության ճանապարհի մասին» (խոսք 1,2, MSG):

Այս ուսուցիչները կլինեն «մեր միջև»՝ մեր համաժողովներին, եկեղեցիներում և տնային խմբակներում: Խոսքն զգուշացնում է մեզ. «Այս մարդիկ ուտում են ձեզ հետ Տիրոջ սիրո հիշատակին նվիրված միացյալ հացկերոյթներին» (Հուդա 12, NLT, նույնպես՝ Բ Պետրոս 2.13): Նրանց կեղծ ուսմունքների մեջ այնքա՛ն ճշմարտություն խառնված կլինի, որ կկատարվի երկու բան:

Առաջինը՝ մարդիկ այլևս չեն կարողանա տարբերել ճիշտը սխալից: Այն վարքը, որը հեռացնում է մեզ Աստծո սրտից, կհամարվի ընդունված, իսկ որոշ դեպքերում՝ լավ: Աստծո Խոսքը պահելը և հռչակելը կդիտարկվի որպես օրինապաշտական և ուրիշներին դատող վերաբերմունք:

Ապականված «քրիստոնեական» կենսառժ ներմուծելու հետ մեկտեղ, այս ուսմունքները կմթագնեցնեն մարդկանց զանազանությունը: Այս խաբեություն բերող ծառայողները և ուսուցիչները կլինեն օժտված, գերազանց հռետորներ. նրանք ազդեցություն կունենան շատերի վրա և կմոլորեցնեն շատերին: Քանի որ Աստծո Խոսքի *ամբողջական* խորհուրդն այլևս բացարձակ չափանիշ չի համարվի, մարդիկ կընկնեն անհնազանդության ծուղակը՝ ավելի շատ, քան երբևէ՝ անցյալում:

Երկրորդ հետևանքը կլինի այն, որ Ավետարանը վատ համբավ կունենա: Սա կարող է տեղի ունենալ միայն՝ եթե այդ ուսուցիչներն օգտագործեն ճշմարտության բառապաշարը.

«Որ շիտակ ծանապարհը թողած՝ մոլորվեցին...»
(Բ Պետրոս 2.15):

Այս առաջնորդներն սկսեցին իրենց ընթացքը որպես աստվածապաշտ քրիստոնյաներ, բայց չհարատևեցին: Ահա թե ինչպես է ստացվել, որ նրանք գիտեն քրիստոնեության լեզուն, թեև հավատարիմ չեն դրա ճշմարտությանը:

Պետրոսը նշում է, որ եթե հետևենք սուրբ կյանքին, մենք անկում չենք ունենա՝ երբեք տեղի չենք տա այդ սուտ ուսուցիչների ազդեցությանը: Մեր ապահովությունը հենց սրանում է: Դրանից հետո նա դիմում է անմիջապես այդ ուսուցիչների զոհերին՝ այն մարդկանց, ովքեր կիրապուրվեն նրանց կեղծ ուսմունքներով և կենսառձով.

«Եվ երբ մարդիկ փախչում են այս աշխարհի պղծությունից՝ ծանաչելով մեր Տեր և Փրկիչ Յիսուս Քրիստոսին, իսկ հետո կրկին ընկնում են մեղքի կապանքների մեջ, և ստրկացվում են դրանից, նրանք հայտնվում են ավելի վատ վիճակում, քան նախկինում էին: Ավելի լավ կլիներ, որ նրանք երբեք չճանաչեին արդարության ծանապարհը, քան ծանաչեին, իսկ հետո մերժեին *սուրբ կյանքով ապրելու պատվիրանը, որն ստացել էին*» (Բ Պետրոս 2.20,21, NLT):

Այս խոսքերը հազիվ են տեղավորվում մարդու մտքում: Եկեք ևս մեկ անգամ կրկնենք այն, ինչ գրված է այս հատվածում: Այս մեծանուն առաքյալը գրում է նրանց մասին, ովքեր իսկապես փախել էին մեղքի գերությունից՝ ընդունելով Յիսուս Քրիստոսին իրենց կյանքում: Այնուամենայնիվ, ոչ ողջամիտ վարդապետության, սխալ կերպով հավատալու և զանազանությունը կորցնելու պատճառով նրանք ետընթաց են ապրում դեպի անաստված կյանքը: Պետրոսը, փաստորեն, ասում է, որ հիմա նրանք ավելի վատ վիճակում են, քան մինչև Յիսուսին ընդունելը, և որ նրանց համար ավելի լավ կլիներ, որ ընդհանրապես չճանաչեին ճշմարտության ծանապարհը, քան մերժեին սուրբ ապրելու պատվիրանը: Որքա՞ն սթափեցնող է:

Կրկին, մենք տեսնում ենք, որ սուրբ ապրելը՝ պատվիրան է, և այն էլ՝ շատ վճռական:

Երկու անպարտելի ուժեր

Տիրոջ պատվիրանները ծանր չեն, քանի որ մեր նոր բնությունը՝ շնորհքի զորացման հետ միասին, դրանք պահելու կարողություն է տալիս մեզ: Բայց եկեք իրատեսական լինենք. այս կարողությունն ունենալով հանդերձ՝ ի՞նչն է դրդում մեզ՝ պահել սուրբ ապրելու պատվիրանը մեր պայքարի ամենաթեժ պահերին: Պատասխանն է՝ երկու անպարտելի ուժերը:

Թույլ տվեք կառուցել իմ բացատրությունն առաջին ուժի մասին մի պատմությունով: Այն տեղի է ունեցել 1980-ական թվականներին, երբ ես դեռ երիտասարդական ծառայության հովիվ էի: Մեկ անգամ քարոզ էի պատրաստում մեր ծառայության համար և զգացի, որ Տերը կամենում էր խոսել ինձ հետ: Ես հանդարտեցրի ինձ և լսեցի սրտումս. «Կարդա՛ Զովհաննես 14.15-ը»:

Ես նույնիսկ գաղափար չունեի, թե ինչ էր գրված Զովհաննես 14.15-ում, այնպես որ արագորեն բացեցի, և նկատեցի, որ իմ Աստվածաշնչում այն նոր պարբերությունից էր սկսվում: Ես կարդացի Զիսուսի խոսքերը. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք...»:

Դրանից հետո ես կարդացի տասնհինգերորդից մինչև քսանչորսերորդ խոսքերը: Բոլոր այս խոսքերը կապ ունեին Զովհաննես 14.15-ի հետ: Այս բաժնի թեման՝ Զիսուսի խոսքերը պահելն է: Կարդալով այս խոսքերը՝ ես հասկացա. «Դուք ապացուցում եք, որ սիրում եք Ինձ՝ պահելով Իմ պատվիրանները»: Երբ կարդացի վերջին խոսքը, Տերը խոսեց սրտիս. «Դու չհասկացար այս հատվածը. կրկին՝ կարդա այն»:

Ես կրկին կարդացի այս տասը խոսքերը: Եվ կրկին տպավորություն ստեղծվեց, որ այս հատվածի ասելիքը հետևյալն է. «Դուք ապացուցում եք, որ սիրում եք Ինձ՝ պահելով Իմ պատվիրանները»: Ես կրկին լսեցի Տիրոջ ձայնը. «Դու չհասկացար այս հատվածը. կրկին՝ կարդա այն»:

Ես արդեն լրջորեն հետաքրքրվեցի այս հատվածով: Եվ կրկին կարդացի այս տասը խոսքերը ու լսեցի Տիրոջից նույնը. «Կրկին՝ կարդա»: Երբ սա կրկնվեց յոթ կամ ութ անգամ, ես լրջորեն հուսահատվեցի:

Որոշեցի չչտապել և կարդալ այս տասը խոսքերը կրիայի արագությամբ: Ես կարդացի «եթե» բառը, կանգ առա, բարձրաձայն ասացի այդ բառը և մտածեցի դրա մասին: Դրանից հետո անցա հաջորդ՝ «դուք» բառին և կրկնեցի նույնը: Եվ այդպես կարդացի ամբողջ հատվածը, ինչը շատ ժամանակ պահանջեց ինձնից: Գրեթե տասնհինգ րոպե անց ես ավարտեցի բոլոր տասը խոսքերը և անմիջապես լսեցի Զոգուն. «Դու չհասկացար այս հատվածը: Կրկին՝ կարդա այն»:

Ես սրտնեղած աղաղակեցի. «Տե՛ր, խնդրում եմ, ների՛ր իմ տգիտությունը: Միգուցե ես բթամիտ եմ: Բացի՛ր իմ աչքերը, որ տեսնեմ, թե ինչ ես ասում»:

Ապա ես կրկին կարդացի 15-րդ խոսքը. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք...»: Ես նկատեցի, որ «պահեք» բառի վրա աստղիկ կա: Նայեցի լուսանցքի վրայի ծանոթագրությանը, որտեղ գրված էր, որ ավելի ճշգրիտ թարգմանությունն է՝ «դուք կպահեք»:

Երբ փոխարինեցի «պահեք» բառն այս բառակապակցությամբ, ստացվեց հետևյալը. «Եթե Ինձ սիրում եք, դուք կպահեք Իմ պատվիրանները»: Այսպես կարդալուց հետո ներսումս ասես պայթյուն լինե՞ր. հիմա ես հասկացա:

Դրանից հետո լսեցի Աստծո ձայնը. «Ջո՛ն, Ես չէի ասում, որ եթե պահես Իմ պատվիրանները, դու կապացուցես, որ սիրում ես Ինձ: Ես արդեն գիտեմ՝ դու սիրո՞ւմ ես Ինձ, թե՞ ոչ: Ես ասում էի, որ եթե մինչև ականջներդ սիրահարվես Ինձ, դու Իմ պատվիրանները պահելու դրդապատճառ կունենաս»:

Իմ սկզբնական պատկերացումն այս խոսքի մասին օրինապաշտական էր, իսկ նոր պատկերացումը՝ սիրային հարաբերությունների օրինակով, ճիշտ դրդապատճառ ունենալու բանալին էր:

Կրակոտ սեր

Թույլ տվեք բացատրել սա օրինակով: Դուք երբևէ սիրահարվե՞լ եք: Երբ ես նշանվեցի կնոջս՝ Լիզայի հետ, մինչև ականջներս սիրահարված էի նրան: Ես մշտապես մտածում էի նրա մասին: Անում էի հնարավորինս ամեն ինչ՝ նրա հետ ժամանակ անցկացնելու համար: Հիշում եմ՝ մեկ անգամ մենք մի քանի ժամ միասին էինք: Ես հրաժեշտ տվեցի նրան և դուրս եկա նրանց տանից, բայց քիչ անց Լիզան զանգահարեց ինձ և ասաց.

- Ջո՛ն, դու թողել ես բաժկոնդ մեր տանը:

Ես այնքա՞ն ուրախացա, որ մոռացել էի բաժկոնս, որովհետև կրկին տեսնելու էի Լիզային: Ես պատասխանեցի.

- Կարծում եմ՝ պետք է հենց հիմա գամ և վերցնեմ այն:

Երկուսս էլ ծիծաղեցինք: Դա առիթ էր, որ ևս մի քանի ժամ անցկացնեինք միասին:

Եթե Լիզային ինչ-որ բան պետք լիներ, և դա հնարավոր լիներ գտնել, անկախ այն բանից, թե որքանով էր անհարմար ինձ՝ ես կգտնեի դա: Եթե նա զանգահարեր ինձ կեսգիշերին և ասեր. «Սիրելի՛ս, ես պաղպաղակ եմ ուզում», ես կպատասխանեի. «Ինչպիսի՞ հա-

մով: Ես հինգ թույլից այդտեղ կլինեմ»: Ես կանեի ամեն բան, որ կատարեի նրա ցանկացած խնդրանքը: Իմաստն այն է, որ *նրա ցանկությունը՝ բերկրալի հրամանն էր ինձ համար*:

Քանի որ ես սիրահարված էի Լիզային, ուրախությամբ էի կատարում նրա ցանկությունները: Նրա խնդրանքներից ոչ մեկը դժվարություն չէր պատճառում ինձ: Ես չէի կատարում նրա ցանկությունները՝ ապացուցելու համար, որ սիրում էի նրան. ես անում էի այդ ամենը, որովհետև սիրահարված էի նրան:

Հիսուսը հենց սա նկատի ունի: Երբ սիրահարված ենք Նրան, մենք բերկրանք ենք զգում՝ կատարելով Նրա ցանկությունները: Նրա խոսքը ծանր կամ սահմանափակող չէ. այն մեր սրտի այրող ցանկությունն է:

Եկե՛ք մի քանի տարի առաջ գնանք, երբ մենք արդեն ամուսնացած էինք: Իմ զբաղվածությունը ծառայության մեջ ավելացավ, և առանց հասկանալու՝ իմ սերը Լիզայի հանդեպ նվազեց: Այժմ Լիզայի ցանկությունն այլևս պատվիրան չէր ինձ համար: Հաճախ այն անհարմար էր, իսկ երբեմն՝ ծանր: Ես ծառայում էի նրան բոլորովին այլ վերաբերմունքով: Ես չէի ծառայում նրան ոգևորությամբ՝ ինչպես այն ժամանակ, երբ նոր էինք հանդիպում: Ես արդեն չէի ասում. «Ինչպիսի՞ համով: Հիմա այդտեղ կլինեմ»: Ես ասում էի. «Իսկապե՞ս: Սիրելի՛ս, ես այնքա՛ն գործեր ունեմ»: Ես չէի փնտրում հնարավորություններ՝ նրա հետ ժամանակ անցկացնելու համար, այլ՝ ժամանակ էի անցկացնում նրա հետ, որովհետև դա ձիշտ էր: Իմ նոր ձգտումը՝ աշխատանքս էր: Լսե՛ք, թե ինչ է Հիսուսն ասում մի եկեղեցու.

«Գիտեմ քո գործերը և քո աշխատությունը և քո համբերությունը... Բայց քեզ դեմ այս ունեմ, որ քո առաջին սերը թողել ես: Արդ հիշի՛ր, թե որտեղի՞ց վայր ընկար, և զղջա՛, և առաջին գործերն արա՛...» (Հայտնություն 2.2,4,5):

Կրկի՛ն կարդացեք Հիսուսի խոսքերը. «Գիտեմ քո գործերը... Դու ընկել ես. ապաշխարի՛ր և արա՛ առաջին գործերը»: Այստեղ գրված է տարբեր գործերի մասին: Առաջին գործերը դրդված էին Հիսուսի հանդեպ եկեղեցու ջերմեռանդ սիրով՝ նույն վերաբերմունքով, որը ես ունեի, երբ ասում էի. «Ինչպիսի՞ համով: Ես հինգ թույլից այդտեղ կլինեմ»: Որոշ ժամանակ անց եկեղեցու գործերն սկսեցին արվել պարտավորությունից ելնելով՝ նման իմ դրդապատճառին, երբ ասում էի. «Իսկապե՞ս: Սիրելի՛ս, հիմա ես շատ զբաղված եմ»:

Մենք կարող ենք ամփոփել սա հետևյալ կերպով. սկզբում, երբ սիրահարված էինք Հիսուսին, մենք խանդավառությամբ անում էինք

ցանկացած բան Նրա համար. այժմ, երբ մեր կրակը մարել է, հնազանդությունը պարտականություն է դարձել:

Ինչպե՞ս շտկել այս սխալը: Ավելի շատ ժամանակ անցկացնելով Նրա հետ՝ Խոսքի, աղոթքի և երկրպագության մեջ: Դարձնելով մեր մտքերը Նրան՝ ոչ միայն եկեղեցում կամ մեր առավոտյան աղոթքի և ընթերցանության ժամանակ, այլև ամբողջ օրվա ընթացքում՝ գիտակցելով, որ Նա մեզ հետ է: Մենք նույնպես պետք է խնդրենք Սուրբ Հոգուն՝ մեր մշտական Ուղեկցին, որպեսզի ամեն օր լցնի մեր սրտերը Աստծո սիրով:

Դուք չեք կարող չափից շատ սիրել Աստծուն. Նրա սերը միայն կավելացնի ձեր ձգտումը Նրա հանդեպ: Մի՛ մոռացեք. «Սերը երբեք չի վերջանում» (Ա Կորնթացիների 13.8):

Սուրբ երկյուղ

Երկրորդ ուժը՝ աստվածային երկյուղն է: Պողոսը հատկապես նշում է այս առաքինությունը՝ ցույց տալով, որ այն կարող է պահել մեզ սրբության ճանապարհին.

«...մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթացիների 7.1):

Սրբությունը կատարվում կամ հասունանում է Աստծո երկյուղով: Այս ճշմարտությունը կարելի է տեսնել ամբողջ Նոր կտակարանում:

Պողոսը գրում է մեկ այլ եկեղեցու. «...ահով և դողալով գործեք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպեցիների 2.12): Պահանջվում է խորը երկյուղածություն, դող և սուրբ ահ՝ Աստծո պատվիրաններին հնազանդվելու համար: Պետրոսը գրում է սուրբ կյանքով ապրելու պատվիրանը պահելու մասին. այնպես որ, դուք պետք է ապրեք՝ երկյուղած Նրանից, այն ժամանակի մեջ, որն անցկացնում եք որպես «օտարականներ այս երկրում» (տե՛ս Ա Պետր. 1.17, NLT):

Եբրայեցիների նամակի հեղինակը հորդորում է մեզ ձգտել սրբության՝ այս խոսքերով. «Ուստի, անշարժ թագավորություն ընդունած լինելով, պինդ բռնենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն, ահով և երկյուղածությամբ» (Եբրայեցիների 12.28): Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է՝ հաճությամբ կամ ընդունելի կերպով ծառայել Նրան:

Շատերը չունեն ձիշտ պատկերացում Տիրոջ երկյուղի մասին և շփոթում են այն վախի հետ: Նրանք մտածում են. «Մի՞թե մենք չենք ազատվել *վախից*: Ի՞նչ տեղ ունի այն մեր կյանքում հիմա՛»:

Աստված սեր է: Նա մեր Հայրն է: Այնուամենայնիվ, մենք պետք է խոսենք Նրանից *երկյուղ* ունենալու մասին, քանի որ այս մասին հաճախ է խոսվում Նոր կտակարանում:

Ոմանք նվագեցրել են Տիրոջ երկյուղի իմաստը՝ ասելով. «Այն պարզապես նշանակում է՝ երկրպագել Աստծուն»: Ես մի համաժողովի էի Հարավային Աֆրիկայում, և համաշխարհային համբավ ունեցող մի ուսուցիչ ասաց ինձ սա ծառայողների հանգստի սենյակում, իմ քարոզելուց անմիջապես առաջ: Ես հարցրի նրան. «Այդ դեպքում, ինչո՞ւ է Պողոսը Նոր կտակարանում չորս անգամ գրում ահի և դողի մասին, եթե դա ընդամենը նշանակում է՝ «երկրպագություն»: Դողալն ավելին է, քան երկրպագելը:

Հունարեն *«տրոմոս»* (դողալ) բառը *«Սթրոնգի բառարանում»* ունի միայն մեկ սահմանում՝ «վախից ցնցվել»: Այս դեպքում մեզ պատվիրված է «կատարել մեր փրկությունը՝ վախից ցնցվելով»: Սա ենթադրում է *խորին հարգանք* և նույնիսկ՝ *առողջ սարսափ*, ինչը մի փոքր ավելին է, քան մեր պատկերացումը երկրպագության մասին:

Երբ խոսքը երկյուղի մասին է, մարդիկ ասում են. «Դա հինկտակարանյան ուսմունք է: Մենք չպետք է վախենանք Աստծուց, որովհետև Նա չի տվել մեզ վախի հոգի, այլ՝ սիրո»: Նրանք շփոթում են վախի հոգին Տիրոջ երկյուղի հետ:

Երբ Մովսեսը Սինա սարի մոտ բերեց Իսրայելի ժողովրդին, և Աստված հայտնեց Իր ներկայությունը, բոլորը փախան սարի մոտից և գլուխները կորցրած աղաղակեցին Մովսեսին, որ նա աղաչեր Աստծուն՝ չհայտնել Իր մեծությունն իրենց: Լսեք Մովսեսի պատասխանն Իսրայելին.

«Մի՛ վախեցեք, որովհետև Աստված ձեզ փորձելու համար է եկել, այնպես որ, Նրա վախը ձեր առջև լինի, որ չմեղանչեք» (Ելից 20.20):

Այնպիսի տպավորություն է, որ Մովսեսը հակասում է ինքն իրեն. «Մի՛ վախեցեք... Աստված... է եկել... որ Նրա վախը ձեր առջև լինի...»: Բայց նա պարզապես տարբերակում էր մտցնում *Աստծուց վախեցած լինելու* և *Տիրոջ երկյուղն ունենալու* միջև: Տարբերությունը շատ մեծ է: Հազիվ թե Աստված ցանկանար, որ մենք *վախենայինք* Իրենից: Ոչ ոք չի կարող մտերիմ լինել նրա հետ, ումից վախենում է, իսկ Աստված ջերմեռանդորեն ցանկանում է մտերիմ լինել մեզ հետ:

Աստծուց վախեցող մարդը թաքցնելու բան ունի, որը հենց նրա վախի պատճառն է: Առաջինը, ինչ Ադամն ու Եվան արեցին, երբ մեղանչեցին Աստծո դեմ, Նրա ներկայությունից թաքնվելն էր (տե՛ս Ծննդ. 3.8):

Իսկ այն մարդը, ով երկյուղ ունի Աստծուց, թաքցնելու ոչինչ չունի. նա ավելի շուտ վախենում է, որ կարող է հեռու լինել Աստծուց:

Այսպիսով, Տիրոջ երկյուղի առաջին սահմանումն է՝ *սարսափած լինել Աստծուց հեռու լինելու մտքից*: Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է՝ ակնածել և պաշտել Նրան: Մենք ամբողջ սրտով հարգում, պատվում և արժևորում ենք Նրան նաև երկյուղածություն ենք տածում Նրա հանդեպ շատ ավելի, քան ցանկացած երևույթի կամ մարդու:

Սուրբ երկյուղը տալիս է Աստծուն այն փառավոր դիրքը, որին Նա արժանի է. մենք ցնցվում և դողում ենք Նրա առջև խորը ահով: Մենք ամուր հարում ենք Նրա սրտին՝ արժևորելով Նրա ցանկություններն ավելի, քան որևէ մարդու ցանկությունները, ներառյալ՝ մերը: Մենք սիրում ենք այն, ինչ Նա է սիրում, և ատում ենք այն, ինչ Նա է ատում: Այն, ինչը կարևոր է Նրա համար, կարևոր է մեզ համար: Ահա թե ինչու է գրված. «Նրանք, ովքեր վախենում են Տիրոջից, կատեն չարը» (Առակ. 8.13, NLT):

Ելից 20.20-ը պնդում է, որ աստվածային երկյուղը հեռու է պահում մեզ մեղքից: Աստծո խոսքը նաև հայտնում է մեզ. «Տիրոջից վախենալով՝ մարդիկ խուսափում են չարից» (Առակաց 16.6, NLT): Պողոսը նույնպես գրում է, որ Տիրոջ երկյուղը այն ուժն է, որը դրդում է մեզ հեռանալ մեղքից (տե՛ս Բ Կորնթ. 7.1):

Այս խոսքերն իրական դարձան ինձ համար, երբ այցելեցի մի հայտնի հեռուստաավետարանչի, ով բանտում էր: Այդ մարդը, ով ամենահայտնի ծառայողն էր ամբողջ աշխարհում 1980-ական թվականներին, խախտել էր մեր երկրի պետական օրենքները, ինչպես նաև շնություն էր գործել:

Նա արդեն շուրջ հինգ տարի ուղղիչ հաստատությունում էր, բայց իր պատիժը կրելու վաղ շրջանում հանդիպում էր ունեցել Հիսուսի հետ իր բանտախցում, ինչը փոխել էր նրա կյանքը: Իմ գրքերից մեկը խորապես հպվել էր նրան, և նա խնդրել էր, որ այցելեի իրեն:

Ես երբեք չեմ մոռանա այն պահը, երբ նա ներս մտավ ուղղիչ հաստատության այցելությունների սենյակը: Նա ինձ պահել էր իր գրկում մեկ րոպեից ավելի՝ արցունքն աչքերին: Այնուհետև գրկեց ուսերս և ջերմորեն հարցրեց.

- Դո՞ւք եք գրել այդ գիրքը, թե՞ այն գրվել է վարձու հեղինակի կողմից:
- Ո՛հ, ես եմ գրել այդ գիրքը՝ սկզբից մինչև վերջ:
- Մենք այնքա՞ն բանի մասին պետք է խոսենք, և ընդամենը իննսուն րոպե ունենք, - ոգևորված ասաց նա և անմիջապես նստեց ու պատմեց ինձ իր պատմությունը:

Մեր խոսակցության գրեթե ամենասկզբում նա ասաց.

- Ջոն, այս բանտը՝ Աստծո դատաստանը չէր ինձ համար, այլ՝ Նրա ողորմությունը: Եթե շարունակեի ապրել այնպես, ինչպես ապրում էի, ես կհայտնվեի դժոխքում և հավիտյան կորստի կմատնվեի:

Նրա խոսքերն ապշեցրին ինձ, իսկ պարզասրտությունն ու խոնարհությունը շատ տպավորեցին:

Գրեթե քսան ռուպե նրան լսելուց հետո մի հարց տվեցի, որը հուզում էր ինձ: Ես գիտեի, որ նա շատ էր սիրում Հիսուսին և իր ծառայության սկզբնական շրջանում լցված էր Աստծո կրակով, ես ուզում էի իմանալ, թե ինչպես կորցրեց իր ջերմեռանդությունը:

Ի վերջո, ես պարզապես հարցրի նրան.

- Ե՞րբ դուք դադարեցիք սիրել Հիսուսին: Ո՞ր պահից: - Ես ցանկանում էի իմանալ Հիսուսի հանդեպ սերը կորցնելու նշանները, հատկապես՝ ծառայողի կյանքում:

- Երբե՞ք, - համոզվածությամբ պատասխանեց նա:

Ես ցնցվեցի և մի փոքր շփոթություն զգացի նրա պատասխանից: Ինչպե՞ս նա կարող էր այդպիսի բան ասել: Ես ընդդիմացա.

- Ի՞նչ նկատի ունեք: Դուք շնություն գործեցիք: Դուք դրամաշորթությամբ էիք զբաղվում, ինչի պատճառով էլ բանտում եք: Ինչպե՞ս կարող եք ասել, որ չէիք դադարել Հիսուսին սիրելուց:

Կրկին, նա նայեց ուղիղ աչքերիս մեջ և անվարան ասաց.

- Ջոն, ես սիրում էի Հիսուսին այդ ամենը գործելու ամբողջ ընթացքում:

Ես լուռ էի. համոզված եմ, որ դեմքիս մեծ շփոթմունք էր պատկերված: Նա շարունակեց.

- Ջոն, ես սիրում էի Հիսուսին, բայց չէի վախենում Նրանից:

Մի քանի վայրկյան լռություն տիրեց: Նա թույլ տվեց, որ ընկալեի իր ասածը: Ներսուժան ամեն ինչ տակնուվրա էր լինում: Նա խախտեց լռությունը՝ լրջորեն ատելով.

- Ջոն, կան միլիոնավոր ամերիկացիներ, ովքեր ծիշտ ինձ նման են: Նրանք սիրում են Հիսուսին, բայց չեն վախենում Աստծուց:

Երևակայական Հիսուսը

Այդ հանդիպումը շրջադարձային էր ինձ համար, քանի որ դրանից հետո իմ մեջ քաղց առաջացավ՝ ավելի շատ պատասխաններ գտնելու համար: Ինչպե՞ս կարող է այն մարդը, ով սիրում է Աստծուն, ընկնել մշտական և նույնիսկ՝ ծանր մեղքի մեջ: Ինչպե՞ս կարող են միլիոնավոր մարդիկ, ովքեր սիրում են Աստծուն, ապրել անսուրբ կյանքով:

Նրանք երկրպագում և ծառայում են իրենց տեղական եկեղեցիներում ու ձգտում ունեն Աստծո հանդեպ. այնուամենայնիվ, նրանք ապրում են անկանոն սեռական կյանքով, կախվածություն ունեն պոռնոգրաֆիայից, շարունակ ստում են, հարբեցողության մեջ են, ամուսնալուծվում են ոչ սուրբգրային պատճառներով... այս ցուցակը կարելի է շարունակել: Նրանք սիրում են Հիսուսին, ինչպես այդ ծառայողը. այդ դեպքում, ինչո՞ւ չեն պահում Նրա խոսքերը: Հիսուսն ասաց, որ եթե մենք սիրեինք Նրան, Նրան հնազանդվելու ուժ կունենայինք: Ի՞նչն է սխալ:

Միզուցե պատասխանն այն է, որ նրանք սիրում են ինչ-որ մեկին, ում իրականում չէ՞ն ճանաչում: Հնարավոր է, որ այդ հեռուստաավետարանիչը և այն բազմաթիվ մարդիկ, ում մասին նա խոսում էր, ինչ-որ կերպար են ստեղծել իրենց մտքում, որը նման չէ իրական Հիսուսին: Եվ որ այս երևակայական Հիսուսը նրանց մարմնավոր բնությանը տալիս է այն, ինչ նրանք անզուսպ կերպով ցանկանում են:

Մտածե՛ք այս մասին. մեր երկրում շատերն են հետաքրքրվում մարզիկներով և հոլիվուդյան դերասաններով: Նրանց անունները սովորական են դարձել մեր տանը, իսկ զանգվածային լրատվամիջոցները պատմում են նրանց անձնական կյանքի մասին անթիվ հեռուստատեսային հարցազրույցների և թերթային կամ ամսագրային հոդվածների միջոցով: Ես լսել եմ, որ այդ հանրաժանաչ մարդկանց սիրահարները խոսում են նրանց մասին, ասես նրանք իրենց ընկերներն են: Ես տեսել եմ, որ մարդիկ զգացմունքորեն ազդվում են նրանց ամուսնական խնդիրներից և նույնիսկ տրտմում են, երբ նրանք ողբերգությունների են հանդիպում, ասես նրանց ընտանիքի անդամներից մեկը լինեին:

Այնուամենայնիվ, եթե այդ երկրպագուներից մեկը երբևէ փողոցում հանդիպեր իր հանրաժանաչ «ընկերոջը», նա նույնիսկ բարև չէր ստանա այդ մարդուց: Եթե նա այնքան համարձակ գտնվեր, որ կանգնեցներ իր «ընկերոջը», նա կպարզեր, որ այդ անձնավորությունն իրականում շատ է տարբերվում իր մտքում ստեղծած կերպարից: Իմաստն այն է, որ այդ մարդու փոխհարաբերությունները երևակայական են:

Իսրայելը հենց այսպես վարվեց Եգիպտոսից դուրս գալուց հետո: Երբ Մովսեսը սար բարձրացավ և քառասուն օր ու զիշեր ժողովրդի հետ չէր, Աստված լռեց, ոչ թե Մովսեսի համար, այլ՝ ժողովրդի: Ահարոնը և մյուս առաջնորդները, ովքեր հեռու էին Աստծո ներկայությունից, ստեղծեցին մի «Աստծո», որն ազատորեն հարմարվում էր իրենց մարմնավոր բնությանը և անզուսպ ցանկությունների:

Տարիներ շարունակ ես շատ կարևոր մի բան չէի նկատում այս պատմության մեջ, քանի որ չէի ուսումնասիրում այս հատվածը եբրա-

յերեն բնագրի հետ: Ահարոնն անվանեց իր ծուլած հորթին «ՅՅԿՅ» կամ «Եհովա», որն Աստծո անունն է (տե՛ն Ելից 32.5): Բացի այս դեպքից՝ «ՅՅԿՅ» անունը այլևս չի օգտագործվում Աստվածաշնչում՝ որևէ կեղծ Աստծո կամ կուռքի անվանելու համար: Այս անունն այնքա՛ն սուրբ է, որ հրեա գրողները ձայնավորներ չէին ավելացնում դրան (մենք ավելացնում ենք ձայնավորներ և գրում ու արտասանում ենք այն որպես «Յահվեհ»):

Ահարոնը միայնակ չէր: Ժողովուրդը նույնպես այս կերպով ընդունեց նրա ծուլած հորթին՝ հայտարարելով. «Սա է *Էլոհիմը*, Ով ազատեց մեզ Եգիպտոսից» (տե՛ն Ելից 32.4,8): Այս եբրայերեն բառն օգտագործվում է երեսուներկու անգամ միայն Ծննդոց գրքի առաջին գլխում: Աստվածաշնչի առաջին խոսքում գրված է. «Սկզբում *Էլոհիմն* ստեղծեց երկինքները և երկիրը»:

Ի տարբերություն «Յահվեհ» բառի՝ Աստվածաշնչում «*Էլոհիմ*» բառի բոլոր գործածությունների 90 տոկոսը վերաբերում է Ամենակարող Աստծուն: Մնացած դեպքերում (10 տոկոսը) այն օգտագործվում է սուտ աստվածների անվանելու համար: Քանի որ Ահարոնն անվանեց այդ հորթին «Յահվեհ», մենք կարող ենք ենթադրել, որ մարդիկ նկատի ունեին նույնը, ինչ նա:

Իմաստը հետևյալն է. ամբողջ ազգն ընդունում էր, որ Յահվեհն էր փրկել իրենց, ազատել գերությունից և հոգացել իրենց կարիքները: Այնուամենայնիվ, նրանք ստեղծել էին երևակայական յահվեհ, որը լիովին տարբերվում էր իրական Յահվեհից, Ով սարի վրա էր՝ Սոփսեսի հետ:

Գրված է. «Տիրոջ վախը՝ գիտելիքի սկիզբն է» (Առակաց 1.7, NKJV): Կարելի է հարցնել՝ ի՞նչ գիտելիքի: Այս խոսքը չի կարող սուրբգրային գիտելիքի մասին լինել, քանի որ փարիսեցիները և դպիրները Սուրբ գրքի գիտականեր էին, բայց հեռու էին Աստծո ներկայությունից և հաճելի չէին Նրան: Ուրեմն, ի՞նչ գիտելիք պետք է ունենանք: Պատասխանը գրված է Առակաց 2.5-ում. «...կհասկանաս Տիրոջ երկյուղը, և *Աստծո գիտությունը* կգտնես»:

Թույլ տվեք այսպես ձևակերպել. ունենալով ճիշտ տեսակի վախ կամ երկյուղ՝ դուք մտերմորեն կձանաչեք Աստծուն: Դուք կձանաչեք ճշմարիտ Աստծուն՝ ճշմարիտ Յիսուսին, ոչ թե երևակայական կերպարի: Պողոսը կշտամբում է կորնթացիներին՝ ասելով. «Դուք ուրախությամբ հանդուրժում եք այն, ինչ ցանկացած մարդ ասում է ձեզ, նույնիսկ եթե նրանք քարոզում են *ուրիշ Յիսուսի*, քան՝ որին մենք ենք քարոզում» (Բ Կորնթացիների 11.4, NLT):

Այդ հանրահայտ հեռուստաավետարանիչը, ինչպես նաև բազմաթիվ մարդիկ, ում մասին նա խոսում էր, չեն սիրում այն անզուգական

Յիսուսին, Ով նստած է Աստծո աջ կողմը: Նրանք սիրում են երևակայական Յիսուսի, Ով անտեսում է և նույնիսկ թույլատրում այն կենսաածը, որը նրանք ցանկանում են: Այդ մարդիկ կամ երբեք ճշմարտապես չեն ճանաչել Նրան, կամ շեղվել են Նրա հետ իրենց հարաբերություններից: Երկրորդ տարբերակը կարելի է նմանեցնել այսպիսի օրինակի. երկու ընկերներ, որոնց բաժանել է կյանքը, տարիներ անց հանդիպում են և պարզում, որ զգալիորեն փոխվել են: Երևակայական Յիսուսին սիրելը չի տա մեզ զորություն՝ իրական Յիսուս Քրիստոսի խոսքերը կատարելու համար: Ըստ էության, դժվար է ճշմարտապես սիրել ինչ-որ մեկին, ում իրականում չեք ճանաչում:

Առանց Տիրոջ սուրբ երկյուղի՝ մենք չենք կարող ճշմարտապես ճանաչել Աստծուն: Մովսեսը մտերմորեն ճանաչում էր Նրան: Նա հստակ լսում էր Աստծո ձայնը և տեսնում էր Նրա ճանապարհները: Իսրայելը ճանաչում էր Աստծուն միայն Նրա գործերով՝ այն բանով, թե ինչպես էր Նա պատասխանում իրենց աղոթքներին: Իսրայելի համար Աստծո ձայնը՝ ամպրոպ էր: Աստված թույլ տվեց Մովսեսին մոտ լինել Իր ներկայությանը, իսկ Իսրայելին պատվիրեց վերադառնալ իրենց վրանները և եկեղեցի խաղալ (տե՛ս Երկրորդ Օրինաց 5.29,30):

Ինչպե՞ս սուրբ երկյուղ ունենալ

Այս դեպքում մեր ամենակարևոր հարցը հետևյալն է. ինչպե՞ս ստանալ Աստծո սուրբ երկյուղը: Մենք պարզապես պետք է խնդրենք, բայց՝ անկեղծորեն:

Յիսուսն ասում է. «Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Չայրը Սուրբ Յոզին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկաս 11.13): Միզուցե հարցնեք. «Չէ՞ որ Յիսուսը խոսում է Սուրբ Յոզու մասին, ոչ թե Տիրոջ երկյուղի»: Ահա թե ինչ է գրում Եսային Յիսուսի և Սուրբ Յոզու մասին.

«Եվ Յեսսեի բնից մի Շառավիղ է դուրս գալու, և մի Ընծյուղ է բուսնելու նրա արմատներից: Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ հոգին, իմաստության և հանձարի Յոզին, խորհրդի և զորության Յոզին, գիտության և *Տիրոջ երկյուղի* Յոզին: Եվ Նրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է...» (Եսայի 11.1-3):

Աստծո Յոզու վերջին բնութագիրը, որը թվարկված է այստեղ, «Տիրոջ երկյուղի Յոզին» է: Անձամբ ես հավատում եմ, որ սա ամենակարևոր կողմն է, որը մենք պետք է խնդրենք: Իմ համոզմունքը երկու պատճառ ունի: Առաջինն այն է, որ ինչպես գրված է՝ Տիրոջ երկյուղը

հմաստության, խորհրդի, հասկացողության և գիտության սկիզբն է (տե՛ս Սաղմ. 111.10, Առակ. 1.7, Առակ. 8 և 9): Երկրորդը և ամենից համոզիչ պատճառն այն է, որ Տիրոջ երկյուղը՝ Հիսուսի ավտորժանքը կամ բերկրանքն է: Մի՞թե Նրա բերկրանքը չպետք է լինի նաև մեր բերկրանքը: Աստծո հոսքում գրված է, որ Հիսուսը լավեց Իր աստվածային երկյուղի (կամ՝ բարեպաշտության) *պատճառով* (տե՛ս Եբր. 5.7): Այլ բան է *աղոթելը*, բայց այլ բան է *լաված լինելը*:

Թե՛ Տիրոջ երկյուղը, թե՛ Աստծո սերը՝ Նրա Հոգով լցված լինելու հետևանքներն են. Պողոսը գրում է. «Աստծո սերն սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռքով, որ տրվեց մեզ» (Հռոմեացիների 5.5): Ես հորդորում եմ ձեզ անկեղծորեն խնդրել, որ լցվեք սուրբ երկյուղի Հոգով և Աստծո կրակոտ, այրող սիրով:

Կեղտոտ անոթներ

Խոսելով այս մասին՝ մենք չենք կարող չանդրադառնալ մի մեծ ձգնաժամի, որը գոյություն ունի այսօր: Մենք լուրջ պակասություն ունենք քսանմեկերորդ դարի եկեղեցում. ոչ թե անոթների, այլ *մաքուր* անոթների, որոնց մեջ Աստված կթափի Իր Հոգին: Վերադառնանք Պողոսի գրած վերջին խոսքերին: Նա համարձակությամբ պնդում է.

«Բայց այն հաստատ հիմքը, որը Տերը դրել է, չի կարող սասանվել, և դրա վրա գրված են այս բառերը. «Տերը ճանաչում է նրանց, ովքեր Իրենն են» և «Նրանք, ովքեր ասում են, որ պատկանում են Տիրոջը, պետք է հեռանան անօրինությունից»» (Բ Տիմոթեոս 2.19, TEV):

Պողոսը ցույց էր տալիս, թե ինչն է անսասան դարձնում մեզ՝ որպես եկեղեցի և որպես անհատներ: Այն հիմքի վրա, որի մասին նա խոսում է, գրված է երկու արտահայտություն: Համաձայն «*Բինգ Ջեյմս*» Աստվածաշնչի՝ դրանք «կնքված» են հիմքին, իսկ համաձայն «Մեսիջ» Աստվածաշնչի՝ դրանք «*փորագրված*» են:

Առաջինը՝ Տերը գիտի նրանց, ովքեր պատկանում են Իրեն: Այս խոսքերը մխիթարող են: Երբ մենք լիովին տրվում ենք Նրան, Նա չի մոռանում մեզ: Մենք դառնում ենք Նրա աչքի բիբը:

Հիմքի վրա փորագրված երկրորդ արտահայտությունը հետևյալն է. «Նրանք, ովքեր ասում են, որ պատկանում են Տիրոջը, պետք է հեռանան անօրինությունից»: Մենք տեսնում ենք այս խոսքում «*պետք է*» բառը. կրկին՝ սա *պատվիրան* է, ոչ թե *առաջարկ*: Այս արտահայտությունը շատ խիստ է, քանի որ դրա նպատակն է՝ ցույց տալ անօրեն

կյանքից հեռանալու կարևորությունը: Ինչո՞ւ: Պատասխանը գրված է հաջորդ երկու խոսքերում.

«Մեծ տան մեջ կա սպասք, որը պատրաստված է ոսկուց կամ արծաթից, իսկ մյուսները պատրաստված են փայտից կամ կավից: Դրանցից մի քանիսը հատուկ են, իսկ մյուսները՝ ոչ: Նույնը մարդկանց դեպքում է: Նրանք, ովքեր դադարեն չարիք գործելուց և մաքրեն իրենց, հատուկ կդառնան: Նրանց կյանքերը կլինեն սուրբ և հաճելի Տիրոջը, և նրանք կկարողանան ամեն տեսակի բարի գործեր անել» (Բ Տիմոթեոս 2.20,21, CEV):

Հունարենում «սպասք» բառը պարզապես նշանակում է «անոթներ» կամ «ամաններ»: Եթե մենք մաքուր ենք՝ որպես անոթներ, հարմար ենք Տիրոջ գործի համար: Մենք հարմար ենք՝ Նրա զորավոր ներկայությամբ լցվելու համար:

Աշխարհի որ մասում էլ լինեմ, ամեն առավոտ ես ուտում եմ նույն նախաճաշը: Ես սկսում եմ մի բաժակ գոլ կիտրոնաջրից, որին հաջորդում է մի գավաթ Հասմիկ ծաղկի սպիտակ թեյ: Տասնհինգ րոպե անց ես ուտում եմ մի ապուրաման գարու փաթիլներ՝ չիայի և կանեփի սերմերով և աղացած կտավատով՝ խառնած նուշի կաթի և թխկիի մաքուր անուշահյութի հետ: Այս նախաճաշի համար ինձ պետք է սպասք՝ թեյի գավաթ, հասարակ բաժակ և ապուրաման: Ես երբեք չեմ օգտագործել կեղտոտ գավաթ կամ ապուրաման իմ նախաճաշի համար: Ինձ դուր է գալիս իմ նախաճաշի համը. այդ պատճառով ես միշտ մաքուր ափսեններ եմ փնտրում: Ես սիրում եմ իմ նախաճաշի համը և չեմ ուզում փչացնել այն: Եթե սպասքի՝ ապուրամանի, ափսեի, գավաթի կամ բաժակի մեջ որևէ կեղտոտ բան լինի, ցանկացած լավ բան, լցվելով դրա մեջ, կեղտոտվելու է: Ինչո՞ւ Աստված պետք է ցանկանա լցնել Իր Հոգին կեղտոտ անոթի մեջ:

Համաձայն Պողոսի խոսքերի՝ մենք ենք պատասխանատու մեր անձը մաքրելու համար: Նա չասաց. «Հիտուսի արյունը մաքրում է մեզ բոլոր անցյալ, ներկա և ապագա մեղքերից. այնպես որ, մի՛ անհանգստացեք այն մեղքի պատճառով, որի մեջ ապրում եք, որովհետև դուք ծածկված եք արյամբ»: Ո՛հ, նա ասաց. «Այսպիսով, ով որ մաքրի իրեն [այն ամենից, ինչն անարգ և անմաքուր է, ով առանձնացնի իրեն ապականող և պղծող ազդեցություններից], կլինի [ինքը] առանձնացված և օգտակար անոթ» (Բ Տիմոթեոս 2.21, AMP):

Մենք պետք է մաքրենք մեր անձը և վերջ: Այս հատվածում Պողոսը նկատի չունեւր մեր հարաբերությունները Քրիստոսի հետ՝ ըստ մեր դիրքի: Նա չէր խոսում այն դիրքի մասին, որը մենք ձեռք ենք բերել

Քրիստոսի կատարած աշխատանքի շնորհիվ: Նա խոսում էր մեր վարքի մասին: Կրկին կարդացեք նրա խոսքերը. «Նրանք, ովքեր դադարեն չարիք գործելուց և մաքրեն իրենց, հատուկ կդառնան»:

Եվս մեկ անգամ տեսնում ենք, որ Աստծո ներկայությունը՝ Նրա Յոգին, չի թափվի կեղտոտ անոթի մեջ. այն կթափվի մաքուր անոթի մեջ:

Չեսևանքը

Աստծո խոսքից գիտենք, որ անօրինությունը (անհնազանդությունն Աստծուն) խորհուրդ է և գործում է հասարակության մեջ: Բայց բարի լուրն այն է, որ գոյություն ունի այն զսպող կամ խափանող ուժ.

«...անօրինության խորհուրդն արդեն գորանում է. միայն թե մինչև որ մեջտեղից վեր առնվի այժմ խափանողը» (Բ Թեսաղոնիկեցիների 2.7):

Մենք պետք է հարց տանք. ո՞վ է խափանում անօրինությունը: Կարող է լինել ընդամենը երկու տարբերակ՝ Սուրբ Յոգին կամ Քրիստոսի մարմինը: Անգլերեն Աստվածաշնչում գրված է. «...մինչև որ Նա վեր առնվի ծանապարհից»: Ակնհայտ է, որ գրելով «Նա» բառը մեծատառով՝ թարգմանիչները համոզված էին, որ խոսքը Սուրբ Յոգու մասին է: Եկեք ենթադրենք, որ նրանք ճիշտ են:

Այս գիրքը գրելու պահին ես արդեն հիսունն անց եմ, և իմ կյանքի ընթացքում դեռ չեմ տեսել, որ անօրինությունը այդչափ շատանա մեր երկրում: Ես երբեք չեմ տեսել, որ կառավարությունը, լրատվամիջոցները և հասարակությունը նման վճռականությամբ բարի անվանեն անօրեն կենսառժը: Պատճառը հետևյալն է. խափանող ուժը՝ Սուրբ Յոգին, այնքան ազդեցիկ չէ մեր օրերում: Աստծո ներկայությունը քսանմեկերորդ դարի սկզբում արագորեն պակասում է Արևմուտքում:

Ո՞րն է պատճառը: Եթե մենք հռչակենք այնպիսի Ավետարան, որը չի շեշտադրում անձի վերափոխումը, մենք մաքուր անոթների պակաս կունենանք, ինչի հետևանքով Աստծո հայտնված ներկայությունը երկրի վրա կպակասի: Յիշեք՝ հենց այն պահին, երբ Յիսուսը մահացավ խաչի վրա, տաճարի քողը պատռվեց՝ վերևից ներքև: Աստծո ներկայությունն անմիջապես դուրս եկավ ձեռակերտ վայրից՝ պատրաստ՝ թափվելու անձեռակերտ անոթների մեջ, այսինքն՝ վերստին ծնված տղամարդկանց և կանանց սրտերի մեջ:

Աստծո Յոգին տաճարից չտեղափոխվեց արևամուտի, ծառի, գեղեցիկ բնատեսարանի, երգի, տեսանյութի կամ ցանկացած այլ միջնորդի

մեջ: Նա տեղափոխվեց մարմին և արյուն ունեցող անոթների մեջ: Եթե անոթները կեղտոտ են, Աստծո ներկայությունը հասարակության մեջ նվազում է. հետևաբար, անօրինությունը ավելի քիչ է խափանվում կամ զսպվում:

Մենք չենք կարող փոխել այս արագընթաց անկումը՝ քվեարկելով լավ քաղաքական թեկնածուների օգտին, ազդեցություն գործելով մեր կառավարության վրա, աշխատանքից հեռացնելով լրատվամիջոցների ամբողջական աշխատակազմեր, բողոքելով արհեստական վիժեցում կատարող հիվանդանոցների մոտ կամ շատ նման բաներ անելով: Անօրինության հետ իրական պայքարի միակ միջոցը մեզ համար՝ Աստծո շնորհքի զորությանը տրվելը և աստվածապաշտ կյանքով ապրելն է: Այս կերպով մենք ավելի լսելի ձայն և ազդեցություն կտանք Սուրբ Հոգուն մեր հասարակության մեջ:

Ճշմարիտ սրբության մասին չքարոզելը շատ թանկ է նստել մեզ վրա՝ անձնական, համայնքային և ազգային մակարդակների վրա: Այնուամենայնիվ, մենք կարող ենք փոխել սա: Հովիվներ, ավագներ և Աստծո ժողովուրդ, եկե՛ք միաբան հաստատ կանգնենք և հռչակենք Սուրբ գրքում գրված Աստծո ամբողջական խորհուրդը: Եկե՛ք կառուցենք ամուր հիմք և հիմնակառույց մեր ազդեցության ներքո գտնվող մարդկանց կյանքերում: Եկե՛ք զսպենք անօրինությունը մեր հասարակության մեջ Սուրբ Հոգու խափանող զորությամբ, ինչի արդյունքը կլինի մարդկանց առատ հունձքը Աստծո թագավորության համար:

ՄԵՐ ՉՋՓՁՆԻՇՆԵՐԸ

«Նրանց, ովքեր նպաստավոր կերպով են
օգտագործում այն, ինչ ստացել են,
նույնիսկ ավելին կտրվի, և նրանք
առատություն կունենան»:
— Մատթեոս 25.29, NLT

Նշանակություն ունի ոչ թե
իմ կարողությունը, այլ իմ արձագանքը՝
Աստծո կարողությանը:
— Կորի Տեն Բուս

Եկեք վերադառնանք տուն կառուցելու մեր օրինակին:
Սկզբում մենք խոսեցինք Հիսուսի իշխանության մասին, որը
մեր հիմքն է: Այնուհետև անդրադարձանք մեր հիմնականույցին, այ-
սինքն՝ սրբացված կյանքին: Այժմ անցնենք շինարարության ընթացքի
վերջին փուլին: Այն վերաբերում է մեր եզակի գործունեությանը՝ մեր
պտղաբերությանը, երազանքներին, ծրագրերին, մարտավարություն-
ներին և որոշումներին: Պողոսը գրում է.

«Մենք Աստծո զլուփագործոցն ենք: Նա նորովի ստեղծել է մեզ
Քրիստոս Հիսուսում, որպեսզի կարողանանք անել այն բա-
րի բաները, որոնք Նա շատ վաղուց ծրագրել է մեզ համար»
(Եփեսացիների 2.10, NLT):

Մենք ստեղծվել ենք Քրիստոս Հիսուսում ոչ միայն որպես Աստծո
զավակներ, այլ նույնպես՝ Նրա թագավորության արդյունավետ քաղա-
քացիներ:

Իսկական տան շինարարության մեջ սա կարելի է համեմատել պա-
հարանների, փայտեղեն շինվածքների, սալիկների, ծածկերի և լու-
սավորության տեղադրման, ինչպես նաև՝ ներկման աշխատանքների
հետ, որոնք վերջնական տեսք են հաղորդում տանը: Բայց այս փուլում

կատարված աշխատանքները լավ տեսք կունենան և տևական կլինեն միայն՝ եթե առաջին երկու փուլերի շինվածքներն ամուր են:

Մենք հաճախ ենք կանգնում կյանքի ընտրությունների առջև, որոնք լավ են թվում. այնուամենայնիվ, շատ անգամ դրանք Աստծո լավագույնը չեն մեզ համար: Մենք բազմիցս զգում ենք, որ մեր ընտրությունը սահմանափակ է: Աբրահամը և Սառան այն եզրակացության եկան, որ որդի ունենալու միակ հնարավորությունն այն էր, որ Աբրահամն ամուսնանար Սառայի աղախնի՝ Յագարի հետ: Նրանց որոշումից ծնվեց Իսմայելը: Այնուամենայնիվ, Աստծո Խոսքը պարզորեն ասում է, որ «...աղախնի որդին ժառանգություն պիտի չստանա ազատի որդու հետ» (Գաղատացիների 4.30): Այս դեպքում Աստված շտկեց նրանց ընտրության սխալը, սակայն միշտ չէ, որ այդպես է լինում: Հաճախ սխալ ընտրությունների պատճառով մենք կզրկվենք մեր առավելագույն ներուժն իրագործելուց:

Սավուղը, ով բազմաթիվ նման օրինակներից մեկն է Հին կտակարանում, ճնշման ներքո սխալ որոշում կայացրեց՝ մատուցելով զոհաբերությունը մինչև Սամուելի գալը: Այս դեպքում, նրա ընտրության սխալը չշտկվեց. Սավուղը կորցրեց թագավորությունը (տե՛ս Ա Թագավորաց 13):

Մտածե՛ք կարևոր որոշումներ կայացնելու մասին այս կերպով. եթե դուք արշավի եք գնացել և տեսնում եք ամենաբանուկ արահետը, դուք բնականորեն ցանկանում եք անցնել դրանով: Այնուամենայնիվ, եթե փորձառու զբոսավարի հետ եք, նա կարող է իմանալ մեկ այլ արահետի մասին, որն ավելի գեղատեսիլ է և ավելի արագ կհասցնի ձեզ այնտեղ, ուր գնում եք: Ձեր զբոսավարը կօգնի ձեզ ավելի լավ որոշում կայացնել:

Գրված է. «Քո խոսքը ճրագ է՝ իմ ոտքերն առաջնորդելու համար, և լույս՝ իմ արահետի համար» (Սաղմոս 119.105, NLT): Աստծո Խոսքը վարժ իմանալը լուսավորում է մեր ճանապարհը, ինչն էլ պես կարևոր է՝ կյանքում իմաստուն որոշումներ կայացնելու համար:

Թե՛ Աբրահամը, թե՛ Սառան սահմանափակեցին Աստծուն. սա հաճախ է տեղի ունենում, երբ մենք որոշում ենք կայացնում քայլել մեր ճանապարհով: Այնպես որ, եկեք ուսումնասիրենք Աստծո Խոսքը, որպեսզի այն առաջնորդի մեզ որոշումներ կայացնելու հարցում:

«Հասանելի չէ ձեր տան համար»

Մեր ամուսնության առաջին մի քանի տարիների ընթացքում Լիզան և ես ապրում էինք երկու տարբեր քաղաքներում՝ Դալլասում և Օռլանդոյում: Մենք հազիվ կարողացանք գնել մեր առաջին երկու

տները: Սկզբնական շրջանում ապրում էինք բնակարաններում, որովհետև չունեինք բավականաչափ գումար տան համար: Մենք պարբերաբար գնում էինք վաճառքի համար նախատեսված տներ տեսնելու, բայց միայն երազելու համար:

Հենց որ մենք կարողացանք տուն գնել, գերակշռող գործոնը՝ տան արժեքն էր: Մենք չէինք կարող ձեռք բերել տների մեծ մասը, քանի որ իմ աշխատավարձն ընդամենը տարեկան 18.000 դոլար էր Դալլասում և 27.000 դոլար՝ Օռլանդոյում: Մենք այլևս չէինք կարող ապրել բնակարանում, որովհետև այդ ժամանակ արդեն երկու երեխա ունեինք, և ուզում էինք բակ ունենալ, որտեղ նրանք կարող էին խաղալ: Երկու քաղաքներում էլ մենք շաբաթներ շարունակ որոնում էինք ամենամատչելի թաղամասերը, որոնք ողջամիտ հեռավորության վրա էին մեր եկեղեցուց և աշխատավայրից: Երկու դեպքում էլ մենք պարզեցինք, որ ամենամատչելի տարբերակը նույնատիպ ցածրարժեք տներից բաղկացած թաղամասերն էին: Երկու շինարարներն էլ, որոնց մենք դիմել էինք, հինգ-վեց տեսակի տներ ունեին, որոնցից մենք կարող էինք ընտրել, և երկու դեպքում էլ ընտրեցինք ամենաէժեան տարբերակները:

Այդ տներից մեկը ձեռք բերելու ժամանակ մենք այնքա՛ն էինք ոգևորվել, նամանավանդ երբ եկել էր ներքին հարդարումն ընտրելու օրը: Մեր վաճառքի գործակալը տարավ մեզ ընդհանուր ցուցասրահը, որտեղ բազմաթիվ գեղեցիկ նյութեր էին ցուցադրված՝ տարբեր տեսակի մարմարե և տրավերտինե սալիկներ, փայտե մանրահատակներ, գեղեցիկ դարակներ և անթիվ գեղեցիկ ծածկեր: Մենք տեսանք նրբաձաշակ քիվեր և յուրահատուկ քարե ձևավորումներ՝ բուխարու համար:

Մեր վաճառքի գործակալն ուղեկցեց մեզ ցուցասրահի մեկ այլ բաժին, որտեղ մենք կարող էինք ընտրել մեր նյութերը: Այդ բաժնում ընդհանրապես սալիկներ չկային: Այդտեղ նույնպես ցուցադրված չէին պահարաններ թխկիից, կաղնուց կամ սոճուց: Չկային նրբաձաշակ քիվեր, քարեր՝ բուխարու համար, և ո՛չ էլ՝ փայտե մանրահատակներ՝ մեր ընտրության համար: Մեր տրամադրության ներքո էին միայն ցածրակարգ ծածկեր, լինդլեումից հատակ և էժանագին դարակներ՝ խտացված փայտից:

Մենք շարունակ խնդրում էինք նրանց տրամադրել ավելի որակյալ նյութեր, բայց ամեն անգամ ստանում էինք երկու պատասխաններից մեկը. «Սա հասանելի չէ ձեր տան համար», կամ՝ «Այդ դեպքում դուք պետք է հավելավճար կատարեք»: Երբ մենք հարցնում էինք, թե որքան էր կազմում հավելավճարը, նրանք այնպիսի գումար էին առաջարկում, որը մենք, իհարկե, չէինք կարող թույլ տալ մեզ: Լիզան և ես հեռացանք ցուցասրահից՝ փորձելով խրախուսել իրար, բայց իրականում ընկճված էինք:

Կարող է անել

Մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որը նման է մեր փորձառությանը շինարարական ընկերության ցուցասրահում: Մարդկանց հաճախ ասում են. «Դուք չե՞ք կարող», «Յուս մի՛ ունեցեք», «Դա շատ բարձր գաղափար է», «Չարմարվե՞ք և ապրե՞ք սովորականի պես», կամ՝ «Դա ձեզ համար չէ»: Այս սահմանափակող արտահայտություններն անթիվ են: Յաճախ դրանք ողջամիտ տրամաբանության և լավ խորհրդի են նման, բայց ո՞րն է ճշմարտությունը:

«Բայց Նրան, որ *կարող* է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է» (Եփեսացիների 3.20):

Այն, ինչ հայտնում է մեզ այս աստվածաշնչյան խոսքը, շատ է տարբերվում շինարարական ընկերության ցուցասրահում մեր լսածից: Աստված սահմանափակող չափանիշներ չի տալիս մեզ: Նրա սահմաններն ավելին են, քան այն, ինչ մենք կարող ենք տեսնել, երագել, պատկերացնել, հուսալ կամ խնդրել:

Բանալին այստեղ *«կարող»* բառն է: Թույլ տվեք բացատրել սա մի օրինակով:

Մի միլիարդատեր մոտենում է երեք երիտասարդ գործարարի և առաջարկում է.

- Ես ցանկանում եմ ֆինանսավորել ձեր երազանքի գործը: Ես չեմ սպասում որևէ հատուցում դրա համար. պարզապես ցանկանում եմ, որ դուք հաջողակ լինեք: Ես *կարող* եմ տալ ձեզ այնքան սկզբնական միջոցներ, որքան ձեզ անհրաժեշտ է՝ սկսելու համար:

Առաջին գործարարը մի երիտասարդ կին է, ով որոշում է հացաբուլկեղենի խանութ բացել: Նրան անհրաժեշտ է խանութի ցուցափեղկ, մի քանի վառարան, մետաղյա տարաներ՝ հացը թխելու համար, այլ՝ պարագաներ, դրամարկղ, բաղադրամասեր և մի քանի այլ բաներ: Նա ներկայացնում է իր ծրագիրն այդ միլիարդատիրոջը և խնդրում է 100.000 դոլար: Այդ մարդն անվարան փոխանցում է պահանջված գումարը նրա հաշվին:

Երկրորդ գործարարը մի երիտասարդ է: Նա որոշում է տներ կառուցել: Նրան անհրաժեշտ է գնել մի քանի հողատարածք, շինարարական նյութեր և մի բեռնատար մեքենա, ինչպես նաև՝ մի փոքրիկ տարածք վարձել գրասենյակի համար: Նա ներկայացնում է իր ծրագիրը և խնդրում 250.000 դոլար: Կրկին, այդ միլիարդատերը փոխանցում է գումարը նրա հաշվին:

Երրորդ գործարարը մեկ այլ երիտասարդ կին է, ով ցանկանում է կառուցել բիզնես կենտրոն՝ հարակից ժամանցային կենտրոնով և ընդարձակ այգիով: Նա հազար ակր վաճառվող հողատարածք է գտնում քաղաքի մեջ: Դա քաղաքի լավագույն հողատարածքներից մեկն է և արդեն երկար ժամանակ է՝ վաճառքի է դրված, քանի որ քչերը կարող են գնել այն: Նա գնային առաջարկ է ներկայացնում այդ հողատարածքի համար, որն ընդունվում է:

Նա ճարտարապետների թիմ է կազմում՝ իր երազանքը նախագծելու համար: Հանձնարարում է նրանց նախագծել զույգ տասներկու հարկանի գրասենյակային շենքեր՝ ընդարձակ բակով: Մյուս հատվածում նա ծրագրում է գեղեցիկ բացօթյա ժամանցային կենտրոն՝ բազմաթիվ բարձրակարգ խանութներով և ռեստորաններով, որոնք գտնվելու են բարձրահարկ ճոխ բնակարանային շենքերի առաջին հարկերում: Նա նույնպես հանձնարարում է նախագծել ճոխ հինգաստղանի հյուրանոց՝ իր համալիրի տարածքի անմիջապես մեջտեղում: Նա պահում է իր տարածքի վերջին հատվածը գեղեցիկ ընդարձակ այգու համար: Նա փարթամ ծառեր է տնկում բոլոր փողոցներում, հեծանվորդների ճանապարհներ է կառուցում և ավարտում այդ ամենը տպավորիչ ծառաստանով և ծաղիկների այգով՝ ժամանցային կենտրոնին կից:

Նրա նպատակն է՝ գրավել հաջողակ գործարարների, բնակիչների նաև հյուրերի՝ հյուրանոցի համար: Նա առաջարկելու է նրանց բարձրակարգ պայմաններ գնումների համար, խաղաղ միջավայր, յուրօրինակ մթնոլորտ իր ընդարձակ այգում և գերազանց ռեստորաններ: Նրա հյուրանոցն առաջարկելու է բարձրակարգ պայմաններ իր բիզնես կենտրոնում տարածքներ վարձակալած գործարարների հյուրերի համար: Նա նույնպես ցանկանում է, որ իր համալիրը հայտնի ժամանցային վայր դառնա: Նա հույս ունի գրավել մարդկանց ամբողջ երկրից, ովքեր կթռչեն այդտեղ հանգստանալու, գնումներ կատարելու և իր ընդարձակ այգում ժամանակ անցկացնելու համար:

Նա մշակում է իր ծրագիրն իր ճարտարապետների թիմի հետ, մինչև որ այն անթերի է դառնում՝ նման՝ իսկական արվեստի գործի: Նա այցելում է այդ միլիարդատիրոջը, ներկայացնում իր ծրագիրը և խնդրում 245 միլիոն դոլար: Ինչպես և նախորդ երկու գործարարների դեպքում, նա անմիջապես փոխանցում է անհրաժեշտ գումարն այս երիտասարդ կնոջ հաշվին:

Երեք տարի անց այդ միլիարդատերը հանդիպման է հրավիրում երեք երիտասարդ գործարարի: Նա ցանկանում է տեսնել, թե ինչպես են ընթանում նրանց գործերը: Նրանք հերթով ներկայաց-

նում են իրենց առաջընթացը: Հացաբուլկեղենի խանութն ամսական ընդամենը մի քանի հազար դոլարի շահույթ ունի: Շինարարը դեռ չորս տուն է կառուցել և ընդամենը զուտ երկու հարյուր հազար դոլարի շահույթ է ստացել երեք տարվա ընթացքում:

Երրորդ երիտասարդ գործարարը ուղքի է կանգնում և զեկույց է ներկայացնում իր համալիրի մասին: Ներկայումս նրա հյուրանոցը զբաղված է 90 տոկոսով, իսկ բարձրակարգ գրասենյակային տարածքները՝ 87 տոկոսով: Նրա կառուցած բոլոր բնակարանները վաճառվել են: Նրա ժամանցային կենտրոնը 98 տոկոսով զբաղեցված է բարձրակարգ խանութներով և ռեստորաններով: Նա ամսական միլիոնավոր դոլարների շահույթ ունի: Նա պատմում է, որ քաղաքապետարանը ամսաթիվ է նշանակել՝ իր համալիրի պարզևատրման արարողության համար, քանի որ այն մեծ օգուտ է տվել ամբողջ քաղաքին տարբեր կերպով. այն ներկայացնում է գեղագիտական արժեք, ստեղծել է բազմաթիվ աշխատատեղեր, գրավել է զբոսաշրջիկների՝ ապահովելով հավելյալ ֆինանսական ներհոսք, և բերել է հարկային եկամուտ: Նա նույնպես օգտագործել է իր եկամուտների մի մասը՝ բացելու համար տաք սննդի կետեր քաղաքի աղքատ շրջաններում:

Բայց սա դեռ ամենը չէ: Նա զեկուցում է, որ իր բազմամիլիոնանոց եկամուտների մեծ մասը հատկացվել է՝ կառուցելու համար նմանատիպ համալիրներ երեք այլ քաղաքներում, որոնք կբացվեն վեց ամիսը մեկ՝ հաջորդ մեկ ու կես տարվա ընթացքում: Նա կազմել և պատրաստել է երեք ադմինիստրատիվ թիմ, որոնք տնօրինելու են այս նոր համալիրները: Հաջորդ հինգ տարիների ընթացքում ստացված եկամուտներով նա ակնկալում է կառուցել ևս հինգ նման համալիրներ այլ խոշոր քաղաքներում:

Նրա զեկույցը լսելուց հետո մյուս երկու գործարարները լռում են՝ իջեցնելով գլուխները: Նկատելով սա՝ միլիարդատերը հարցնում է, թե որն է նրանց վիատվելու պատճառը:

Երիտասարդ կինը, ով հացաբուլկեղենի խանութ էր բացել, առաջինն է պատասխանում.

- Իհարկե, նրա գործերն ավելի լավ են, քան մերը, որովհետև նա ավելի մեծ գումար է խնդրել, քան մենք: Նա կարող է ավելին անել, որովհետև դուք ավելին տվեցիք նրան:

Միլիարդատերը նայում է երիտասարդ շինարարին.

- Դուք համաձայն եք նրա հետ:

- Անկեղծ ասած՝ այո՛, - պատասխանում է նա: Այդ կինն ավելի մեծ հնարավորություններ ուներ:

Միլիարդատերը պատվիրում է իր քարտուղարուհուն՝ բերել իրենց առաջին հանդիպման արձանագրությունները: Մի քանի րոպե անց նա ներս է մտնում՝ բերելով դրանք: Բարերարը խնդրում է իր քարտուղարուհուն:

- Կարդացե՛ք այն, ինչ ես ասացի այս երեք գործարարներին երեք տարի առաջ:

Քարտուղարուհին կարդում է.

- «Ես ցանկանում եմ ֆինանսավորել ձեր երազանքի գործը: Ես *կարող* եմ տալ ձեզ այնքան սկզբնական միջոցներ, որքան ձեզ անհրաժեշտ է՝ սկսելու համար»:

Այդ միլիարդատերը նայում է երկու գործարարներին, ովքեր իջեցրել էին գլուխները, և հարցնում է.

- Ինչո՞ւ եք նախանձում այն բանին, ինչ նա ստացել է: Ինչո՞ւ եք մտածում, որ նա ինչ-որ առավելություն ունի ձեզնից: Ես ասացի յուրաքանչյուրիդ, որ *կարող* էի տալ ձեզ այնքան միջոցներ, որքան անհրաժեշտ էր՝ ձեր տեսիլքն իրականացնելու համար: Ես ոչ մի սահման չդրեցի՝ օգնելու ձեզ, և տվեցի ճիշտ այնքան, որքան դուք խնդրեցիք: Ինչո՞ւ չունեցաք ավելի մեծ երազանքներ և ծրագրեր:

Նա դիմում է հացաբուլկեղենի խանութ ունեցող կնոջը՝ հարցնելով.

- Ինչո՞ւ դուք չծրագրեցիք ավելի մեծ հացաբուլկեղենի խանութ ունենալ: Ես կտայի ձեզ միջոցներ դրա համար: Ինչո՞ւ չխնդրեցիք ֆինանսավորում ավելի արդյունավետ կառավարման համար: Մարդկանց դուր է գալիս ձեր ապրանքները. դուք հաջողություն կունենայիք այս գործում: Բայց իմ ամենամեծ հարցը հետևյալն է. ինչո՞ւ չծրագրեցիք ունենալ ավելի շատ հացաբուլկեղենի խանութներ ամբողջ քաղաքով, և ի վերջո, չծրագրեցիք վստահագրեր տրամադրել ամբողջ երկրով՝ ձեր գործը զարգացնելու համար:

Դրանից հետո նա դիմում է տներ կառուցող երիտասարդին.

- Ինչո՞ւ դուք չսովորեցրիք մի քանի ավագ օգնականների և չվարձեցիք մի քանի ենթակապալառուների, որպեսզի մեկի փոխարեն տարեկան քսան տուն կառուցեիք: Դուք կարող էիք շատ ավելի աշխատատեղեր ստեղծել: Ինչո՞ւ ավելի մեծ հողատարածք չզնեցիք: Ինչո՞ւ չկազմակերպեցիք մասնաձյուղեր ամբողջ երկրով, որ բազմաթիվ գեղեցիկ տներ կառուցեիք տարբեր քաղաքներում: Ես կֆինանսավորեի ձեր տեսիլքը, որովհետև դուք օգնելու էիք այդ քաղաքներում ապրող ընտանիքներին, և ի վերջո՝ ձեր երկրին: Ձեր գործունեության շրջանը սահմանափակ էր, քանի որ ձեր սկզբնական միջոցները սահմանափակ էին, քանի որ ձեր տեսիլքն էր սահմանափակ:

Առատություն

Մենք՝ քրիստոնյաներս, հաճախ ենթագիտակցորեն մտածում ենք, որ չպետք է շատ բան ունենանք: Սակայն որքանո՞վ է այդպիսի մտածելակերպը համապատասխանում Աստծո հոսքին: Հիսուսը հայտարարում է.

«Նրանց, ովքեր նպաստավոր կերպով են օգտագործում այն, ինչ ստացել են, նույնիսկ ավելին կտրվի, և նրանք առատություն կունենան» (Մատթեոս 25.29, NLT):

Աստված դեմ չէ առատությանը: Նա դեմ է, երբ առատությունը տիրում է մեզ: Տարբերությունը հետևյալն է. այն մարդը, ում կյանքում տիրում է նյութական առատությունը, ձգտում է օրհնությունների, զույգի, փողի, կարողության կամ իշխանության՝ պարզապես իր եսակենտրոն ցանկությունները կատարելու համար: Կամ նա միջոցներ է կուտակում՝ վախից ելնելով:

Շատերը, քսաներորդ դարի վերջում լսելով բարգավաճման մասին ուսմունքը, լցվեցին նման ցանկություններով: Նրանց ազահության պատճառով շատ ուսուցիչներ և հավատացյալներ դադարեցին խոսել Աստծո ճշմարտությունը բարգավաճման մասին: Շատերն սկսեցին խորշել «բարգավաճում» բառից: Բայց ճշմարտությունն այն է, որ մեզ անհրաժեշտ է առատությունը, որպեսզի ավելի մեծածավալ և արդյունավետ աշխատանք կատարենք Արքայության համար: Միզուցե Աստված հենց այս պատճառով ասաց. «Սիրելի՛ն, ամեն ինչից առավել ես ցանկանում եմ, որ դու բարգավաճես և առողջ լինես՝ ինչպես որ քո անձն է բարգավաճում» (Գ Հովհաննես 2, KJV):

Մեր օրինակի մեջ միլիարդատեր բարերարը ամեն գործարարի չտվեց 245 միլիոն դոլար՝ ինչպես վերջին երիտասարդ կնոջը: Նա ամեն մեկին տվեց՝ ըստ նրա տեսիլքի: Եթե ուսումնասիրեք այն առակը, որտեղ Հիսուսը խոսում է առատության մասին, դուք կտեսնեք, որ ծառաները չսկսեցին հավասարաչափ գումարով: Նրանք տարբեր գումարներ ստացան. «Նա տվեց հինգ պարկ արծաթ՝ մեկին, երկու պարկ արծաթ՝ մյուսին, և մեկ պարկ արծաթ՝ վերջինին՝ բաժանելով ըստ նրանց կարողության չափի» (Մատթեոս 25.15, NLT): Նրանց կարողությունը որոշվում էր այն բանով, թե ինչ էին տեսնում իրենց ապագայի համար:

Իմ օրինակի մեջ առաջին երիտասարդ կինը տեսնում էր միայն մի փոքրիկ հացաբովկեղենի խանութ: Երիտասարդ գործարարը տեսնում

էր ընդամենը մի քանի տուն՝ տարվա մեջ: Երրորդ երիտասարդ կնոջ կարողությունը՝ այն, ինչ նա տեսնում էր, պահանջում էր շատ ավելին:

Մենք նպաստավոր կերպով ենք օգտագործում Աստծո զորությունը, երբ կառուցում ենք մարդկանց կյանքերը և Աստծո թագավորությունը: Եթե ուշադրությամբ կարդանք այս առակը, մի հետաքրքիր փաստ կնկատենք: Ծառաներից երկուսը հավատարիմ էին իրենց տիրոջը. նրանք բազմապատկեցին այն, ինչը տրվել էր իրենց (մեր պատմության մեջ երեք գործարարներից միայն մեկը բազմապատկեց իր ստացածը): Հիսուսի պատմած առակի մեջ տերը *լավ* կամ *բարի* անվանեց նրանց բազմապատկումը (տե՛ս Մատթ. 25.21,23):

Տերը ծույլ անվանեց այն ծառային, ով պահպանեց իրեն վստահվածը: Նա ետ վերցրեց իր մեկ պարկ արծաթը և տվեց առատություն ունեցողին՝ նրա տասը պարկը տասնմեկ դարձնելով: Նման մոտեցումը շատ հեռու է *սոցիալիստականից*. ավելի շուտ՝ այն իր բնույթով *կապիտալիստական* է:

Մենք մտածում ենք, որ լավ քրիստոնյան պետք է պահպանի այն, ինչ ունի: Այլ կերպ ասած՝ մարդիկ բավարարվում են, եթե նրանց ունեցածը ընդամենը բավականացնում է մի կերպ ապրելուն, այնինչ իրականում նրանք *ծույլ* են: Աստծո առաջին պատվիրանը մարդկությանը՝ հետևյալն էր. «Աձե՛ք և շատացե՛ք» (Ծննդոց 1.28): Նա չէր խոսում միայն երեխաներ ունենալու մասին, այլ՝ հայտարարում էր. «Ես ակնկալում եմ, որ դուք շատացնե՛ք՝ բազմապատկեք այն ամենը, ինչ տալիս եմ ձեզ, և վերադարձնեք դա Ինձ»:

Աստված սովորեցնելու կարողություն է վստահել ինձ: Նրա շնորհքով (այն զորությամբ, որը գործում է մեր թիմի, գործընկերների, կնոջս և իմ մեջ) այդ պարզև բազմապատկվել է և վերադարձվել Նրան՝ ամբողջ աշխարհում իմ ուսմունքները տարածելու, գրքեր գրելու, մեր ուղերձները համացանցում հասանելի դարձնելու, ամբողջ աշխարհում գտնվող հովիվներին և ավագներին միլիոնավոր ուսուցողական նյութեր տրամադրելու, բլոգներում նյութեր տեղադրելու, այլ ուսուցիչներ բարձրացնելու և շատ այլ գործերի միջոցով: Մինչև օրս Նա իրագործել է շատ ավելին, քան ես կարող էի երազել, երբ երիտասարդ էի: Այնուամենայնիվ, տեսնելով մինչև օրս տեղի ունեցածը՝ երկու միտք է ծագում: Առաջինը՝ ես մտածում եմ, թե արդյո՞ք որևէ կերպով սահմանափակել եմ Նրան: Երկրորդը՝ ինձ բերկրանք է պատժառում այն ամենը, ինչ կատարվել է Նրա կարողությամբ: Այս երկու միտքն օգնում է ինձ միաժամանակ խոնարհ և ջերմեռանդ մնալ:

Մեր անոթը

Այնքա՛ն շատ բան կա, որ Նա կարող է անել յուրաքանչյուրիս միջոցով: Անկախ այն բանից՝ մենք հասկանո՞ւմ ենք, թե՞ ոչ՝ բոլորս էլ սահմանափակումներ ունենք: Համաձայն Եփեսացիների 3.20-ի՝ դրանք որոշվում են այն բանով, թե ինչ կարող ենք «խնդրել կամ մտածել»՝ այլ մարդկանց օգնելու համար: Աստծո պարզ ուղերձը մեզ՝ հետևյալն է. «Իմ շնորհքը կարող է տարածվել շատ ավելի հեռու այն սահմանից, որը դուք որոշել եք»: Հիսուսն ասում է. «Ամեն բան հնարավոր է նրան, ով հավատում է» (Մարկոս 9.22, NKJV):

Մեր սահմանները (այն, ինչ մենք կարող ենք ընդգրկել) որոշում են, թե որքանով մենք բաժին կունենանք Աստծո անսահմանափակ մատակարարումից: Մեր պատմության մեջ, որը միլիարդատիրոջ և երեք գործարարների մասին էր, առաջին մարդու անոթը մի տեսիլք էր, որի համար անհրաժեշտ էր 100.000 դոլար, երկրորդին անհրաժեշտ էր 250.000 դոլար, իսկ երրորդին՝ 245 միլիոն դոլար:

Ազնվորեն ասած՝ Աստծուն սահմանափակում է հենց մեր անոթի չափը: Հնարավոր է արդյոք, որ Աստված հարցնի մեզ. «Ինչո՞ւ եք մտածում միայն այնքանի մասին, որքան բավական է ձեզ և ձեր ընտանիքին: Ինչո՞ւ չեք վերցնում այն ներուժից, որը դրել եմ ձեր ներսում: Ինձ համար այս մտածելակերպը *բարի* չէ. դա *ծուլություն* է»:

Ահա թե ինչու է Պողոսը ջերմեռանդորեն աղոթում, որ մենք իմանանք և հասկանանք, թե՛

«...ինչ է Նրա զորության *անչափելի* և *անսահման* և *գերազանց մեծությունը* մեզանում և մեզ համար, որ հավատում ենք...» (Եփեսացիների 1.19, AMP):

Ուշադրությամբ կարդացեք այն բառերը, որոնք ես ընդգծել եմ այս խոսքում: Կա՛նգ առեք և մտորե՛ք ամեն մեկի շուրջ: *Անչափելի*: Դուք չեք կարող չափել այն: *Անսահման*: Այն չունի ոչ մի սահման: *Գերազանց մեծություն*: Ամբողջ տիեզերքում չկա դրանից մեծ ուժ:

Ուշադրություն դարձրեք, որ այդ զորությունն ամբողջությամբ *մեզանում* է: Այնպես չէ, որ մենք կարող ենք պարբերաբար ստանալ այս զորությունը Աստծո Գահի սրահից: Նրա զորությունն արդեն մեր մեջ է:

Այն նույնպես *մեզ համար* է: Այն բազմապատկման կարողություն է տալիս մեզ: Օգնում է պտղաբեր լինել: Այն արդյունավետ է դարձնում մեզ՝ այլ մարդկանց օգնելու համար: Դրանով մենք փայլում ենք պայծառ լույսերի պես:

Այս զորությունը հենց Աստծո շնորհքն է:

Իշխել կյանքում²⁴

Աստծո շնորհքն աներևակայելի՞ է: Այս անարժանաբար տրված պարզևի շնորհիվ մենք ունենք փրկություն, ներում, նոր բնություն և զորություն՝ աստվածապաշտ կյանքով ապրելու համար: Այն նույնպես կարողություն է տալիս մեզ բազմապատկվելու, պտղաբեր լինելու և կյանքում իշխելու համար: Շնորհքը ճշմարտապես զարմանալի է: Ուշադրությամբ կարդացե՛ք Պողոսի խոսքերը.

«Նրանք, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ճրիաբար արդարանում են Նրա առջև, կիշխեն կյանքում Քրիստոսի միջոցով» (Հռոմեացիների 5.17, TEV):

Այս խոսքի մեծությունը չափազանց ոչ ճշմարիտ է թվում՝ իրական լինելու համար, քանի որ դրանից բխող եզրակացությունները պարզապես ապշեցուցիչ են: Միզուցե հենց սա է պատճառը, որ շատերն անտեսել են այն: Աստծո շնորհքով մենք պետք է իշխենք կյանքում: Մենք զորացված ենք, որ հաղթահարենք ամեն մի խոչընդոտ, որն այս աշխարհը կփորձի կանգնեցնել մեր առջև: Կյանքն այս երկրի վրա չպետք է խլի լավագույնը մեզնից. փոխարենը՝ մենք պետք է իշխենք կյանքում: Մենք նշանակված ենք, որ մեծ հետք թողնենք մեր ազդեցության շրջանակում: Սա մեր առաքելությունն է:

Ինչպե՞ս է սա տեղի ունենում գործնականում: Մենք պետք է դուրս գանք մեր ներկա կարգավիճակից, գերազանցենք սահմանված նորմերը: Մենք կանչված ենք, որպեսզի ազդեցություն թողնենք և լինենք գլուխ, ոչ թե պոչ, լինենք բարձրում, ոչ թե ցածրում (տե՛ս Երկրորդ Օրինաց 28.13): Մենք ոչ միայն պետք է բարձրանանք կյանքի բացասական հանգամանքներից, այլև պետք է լինենք ավելի ակնառու, քան նրանք, ովքեր չունեն ուխտ Աստծո հետ: Մենք պետք է առաջնորդներ լինենք չլուսավորված աշխարհում: Գլուխը որոշում է ուղղությունը, ընթացքը և միտումները, իսկ պոչը միայն հետևում է: Մեր հասարակության բոլոր բնագավառներում մենք պետք է լինենք առաջնորդներ, ոչ թե հետևորդներ: Արդյո՞ք ներկայումս այսպես է: Հնարավո՞ր է, որ մենք չենք համապատասխանում այն չափանիշին, որն Աստված բարի է անվանում:

Թույլ տվեք ավելի պարզ բացատրել սա: Եթե դուք աշխատում եք առողջապահության ոլորտում, Աստծո շնորհքով կարող եք հիվանդությունները բուժելու նոր կամ ավելի նորարար միջոցներ հայտնագործել: Ձեր ներուժն անչափելի և անսահման է: Ձեր աշխատակիցները պետք է հիացմունքով հետևեն ձեր հայտնագործություններին,

և ձեր աշխատանքը պետք է ոգեշնչի նրանց: Ձեր նորարարությունը և իմաստությունը կդրդի նրանց զարմացած ասել. «Որտեղի՞ց է նա ստանում այս գաղափարները»: Դուք ոչ միայն կարող եք փայլել, այլև բազմապատկել ձեր արդյունավետությունը ձեր աշխատանքային ոլորտում: Մարդիկ կձգտեն հետևել ձեր քայլերին և կցանկանան իմանալ ձեր կարողության աղբյուրի մասին:

Եթե դուք համակարգչային դիզայներ եք, ձեր ստեղծած գործերը պետք է թարմ և նորարար լինեն՝ այն աստիճան, որ մյուսները նմանակեն ձեր գործին: Դուք և ձեր բնագավառի մյուս հավատացյալները պետք է սահմանեք գերակշռող միտումներ, որոնց հետևելու է ամբողջ հասարակությունը: Դուք պահանջարկ կունենաք ձեր գործի համար և հայտնի կլինեք ձեր նորարարական մոտեցմամբ: Դուք այնքա՞ն առաջադեմ կլինեք, որ մյուսները ձեր բնագավառում զարմանքով կհարցնեն իրար. «Որտեղի՞ց է նա ստանում իր ստեղծարարությունը»: Դուք բազմապատկում կունենաք՝ փոխանցելով ձեր գիտելիքներն այլ մարդկանց, ընդլայնելով ձեր բնագավառը և Աստծո թագավորության մեջ ներդրումներ անելով:

Եթե դուք դպրոցի ուսուցիչ կամ ուսուցչուհի եք, այն զորացնող շնորհքով, որը ձեզանում է, մարզեք ձեր աշակերտներին, որպեսզի նրանք ձեռք բերեն գիտելիքներ, հասկացողություն և իմաստություն փոխանցելու թարմ, ստեղծարար և նորարար միջոցներ, որոնք ձեր կրթական համակարգի այլ ուսուցիչների մտքով նույնիսկ չի անցել: Դուք կարող եք չափանիշներ սահմանել և այնպես ոգեշնչել ձեր աշակերտներին, որ մյուսները միայն զարմանան: Մյուս ուսուցիչները կհարցնեն մեկը մյուսին. «Որտեղի՞ց է նա ստանում այս գաղափարները»: Դուք բազմապատկում կունենաք՝ փոխանցելով ձեր ունակությունները ձեր աշակերտներին և կրթելով նոր ուսուցիչների:

Եթե դուք գործարար եք, կարող եք առաջարկել նոր ապրանքներ և վաճառքի մեթոդներ, որոնք կգերազանցեն մյուսներին: Դուք կառաջադրեք արդյունավետ շուկայավարական մարտավարություններ, որոնք շատ ավելի առաջադեմ կլինեն ներկա միտումներից: Դուք կզգաք, թե ինչն է եկամուտ բերում, և ինչը՝ ոչ: Դուք կիմանաք՝ ե՞րբ գնել և ե՞րբ վաճառել, ո՞ւմ ներգրավել և ո՞ւմ հեռացնել: Մյուս գործարարները զարմանքով կփորձեն հասկանալ, թե ինչու եք այդքան հաջողակ: Դուք բազմապատկում կունենաք՝ կրթելով երիտասարդ գործարարների և առատաձեռն զոհաբերելով Աստծո թագավորության կառուցման համար:

Միևնույն սկզբունքը կիրառելի է, եթե դուք երաժիշտ եք, գիտաշխատող եք, մարզիկ եք, գիտնական եք, ոստիկան եք, ուղեկցորդ կամ ուղեկցորդուհի եք, մայր և տնային տնտեսուհի եք, եթե աշխատում եք հեռուստատեսությունում, զինվորական ծառայության մեջ եք,

կամ ցանկացած այլ բնագավառում: Բոլոր այս օրինակները, որքան էլ տպավորիչ թվան, պատկերում են մեր առաքելության նմուշը:

Մեզնից ամեն մեկը կանչված է հասարակության տարբեր ոլորտներում: Որտեղ էլ գտնվենք, մենք պետք է լինենք առաջնորդներ և առաջատարներ: Մեր ձեռնարկությունները պետք է ծաղկունք ապրեն, նույնիսկ եթե մյուսները խնդիրներ ունեն: Մեր բնակավայրերը պետք է լինեն անվտանգ, ավելի գեղեցիկ ու հարմարավետ, նաև՝ ավելի ապահովված: Մեր աշխատավայրերը պետք է զարգացում ապրեն: Մեր երաժշտությունը պետք է լինի թարմ և ինքնատիպ, և աշխարհիկ երաժիշտները պետք է ընդօրինակեն այն: Նույնը պետք է կատարվի մեր գրաֆիկական ձևավորման, տեսամոնտաժի կամ ճարտարապետական նախագծման բնագավառներում: Մեր ստեղծարարությունը պետք է ոգեշնչի մարդկանց և պահանջարկ ունենա բոլոր մակարդակների վրա:

Մեր աշխատանքը՝ սպորտային, ժամանցային, արվեստի, լրատվամիջոցների կամ ցանկացած այլ ոլորտում, պետք է կարկառուն լինի: Երբ իշխում են արդարները, մեր քաղաքները և երկրները պետք է ծաղկունք ապրեն: Այն դպրոցները, որտեղ մենք ենք կրթում և առաջնորդում, պետք է գերազանցություն ցուցաբերեն: Երբ հավատացյալները ներգրավված են որևէ բանում, այդտեղ պետք է լինի ստեղծարարության, նորարարության, արդյունավետության, խաղաղության, ըմբռնողության և անկեղծության առատություն: Մենք՝ Հիսուսի աշակերտներս, պետք է լույս լինենք այս խավար աշխարհում: Ըստ էության, Աստծո շնորհքով մենք պետք է *նախապատվություն ստանանք* կամ *աչքի ընկնենք* մեր խավար հասարակության մեջ:

Գերազանցել սահմանված նորմերը

Կարդացե՛ք այս վկայությունը Դանիելի մասին.

«Դանիելն այն աստիճան *աչքի ընկավ* (կամ՝ *նախապատիվ եղավ*) կառավարիչների և սատրապների միջև իր բացառիկ հատկանիշներով, որ թագավորը ծրագրում էր նշանակել նրան ամբողջ թագավորության վրա» (Դանիել 6.3, NIV):

Իսկապես ապշեցուցիչ է: Առաջինը՝ գրված է, որ Դանիելն *աչքի ընկավ* կամ *նախապատիվ եղավ*: Գրված չէ. «Աստված նախապատիվ արեց Դանիելին»: Աստվածաշնչի բոլոր հեղինակավոր թարգմանություններն ասում են, որ հենց Դանիելը *նախապատիվ եղավ*: «Մեսիջ» Աստվածաշնչում գրված է, որ նա «լիովին գերազանցեց մյուս» առաջնորդներին:

Ինչպե՞ս Դանիելին հաջողվեց դա: Նա բացառիկ կարողություններ ուներ, քանի որ հաղորդակցվում էր Աստծո հետ: Ցանկացած մարդ, ում ներսում բնակվում է Աստծո Յոզիան, պետք է ծիշտ այսպիսին լինի:

«Նոր Ամերիկյան Ստանդարտ» Աստվածաշնչում գրված է. «Դանիելն սկսեց աչքի ընկնել... որովհետև նա *արտասովոր* հոգի ուներ»: «*Արտասովոր*» լինելը նշանակում է «գերազանցել սահմանված նորմերը, դուրս գալ ներկա կարգավիճակից, անել սովորականից ավելին»: Երբեմն մենք կարող ենք ավելի լավ հասկանալ որևէ բան՝ տեսնելով, թե ինչը այն չի նշանակում, այսինքն՝ ուսումնասիրելով այդ բանի հակահիշները: «*Արտասովոր*» բանի հակահիշներն են՝ «*հասարակ*», «*սովորական*», «*նորմալ*»: Նշանակում է՝ սովորական կյանքով ապրելը հակառակ է արտասովոր հոգով ապրելուն:

Դանիելի հոգին արտասովոր էր: Եթե մեր հոգին արտասովոր լինի, մեր միտքը և մարմինը ծիշտ այդպիսին կլինեն: Եթե մեր հոգին առաջնորդի մեզ, ստեղծարարությունը, հնարամտությունը, իմաստությունը, գիտությունը և կյանքի մնացած բոլոր կողմերն այլ կլինեն, քան եթե մենք պարզապես ապրենք մեր ուժերով: Եթե մենք իրականում հասկանանք այն շնորհքը, որը *մեզանում է և մեզ համար է*, մենք կիմանանք, որ մեր կյանքում չկա ոչ մի սահմանափակում:

Չմոռանանք այն արտահայտությունը, որը նկարագրում է Աստծո զորությունը մեզանում՝ *անչափելի, անսահմանափակ և գերազանց մեծություն*: Դանիելը վերցրեց այն, ինչը հասանելի էր իրեն՝ Աստծո հետ իր փոխհարաբերությունների արդյունքում: Նա գիտեր, որ համաձայն Ամենակարողի հետ իր ուխտի՝ ինքը պետք է լիներ գլուխ, ոչ թե պոչ: Իսկ մեր ուխտն Աստծո հետ ավելի մեծ է, քան Դանիելի ուխտը:

Ավելի մանրամասնորեն դիտարկենք Դանիելի կյանքը: Նա և նրա երեք ընկերները գերվեցին Իսրայելից, որը փոքր երկիր էր, և տարվեցին աշխարհի ամենաազդեցիկ երկիրը: Եթե դուք ամերիկացի եք և մտածում եք, որ վերջին մեկ դարի ընթացքում մեր երկիրն ազդեցիկ էր, բայց ժշմարտությունն այն է, որ այն նույնիսկ մոտ չի եղել Բաբելոնի իշխանությանը և ազդեցությանը: Բաբելացիները տիրում էին ամբողջ երկրի վրա՝ բառացիորեն ամբողջ երկրի: Նրանք համար առաջինն էին տնտեսական, քաղաքական, ռազմական, հասարակական, գիտական, կրթական և արվեստի ոլորտներում:

Բաբելոնը ամենակատարելագործվածն էր գրեթե բոլոր բնագավառներում և գերազանցում էր ամբողջ աշխարհը: Այնուամենայնիվ, մենք կարդում ենք Դանիելի և նրա ընկերների մասին. «Ինչ հարց էլ, որ թագավորը տար կամ ինչ խնդիր էլ բարձրացներ, այս չորսը գիտեին *տասն անգամ ավելի*, քան թագավորության մյուս իշխանները» (Դանիել

1.20, TEV): Այլ թարգմանություններում գրված է, որ նրանք տասն անգամ լավն էին, տասն անգամ խելացի էին և տասն անգամ ավելի էին հասկանում: Նրանք այնպիսի գաղափարներ էին գործադրում, որոնք այդ առաջատար երկրի իմաստունների մտքով նույնիսկ չէր անցել, և այդ գաղափարներն արդյունավետ էին: Ըստ էության, նրանց ստեղծարարությունը, նորարարությունը և իմաստությունը տասն անգամ ավելի ազդեցիկ էին, քան այլ առաջնորդներինը, ովքեր չունեին Տիրոջ Յոզիան:

Ավելի մեծ, քան Դանիելը

Մտապահելով սա՝ կարդացե՛ք Հիսուսի խոսքերը. «Հովհաննեսն ավելի մեծ է, քան ցանկացած մարդ, ով երբևէ ապրել է» (Ղուկաս 7.28, TEV): Սա նշանակում է, որ Հովհաննես Մկրտիչն ավելի մեծ էր, քան Դանիելը: Մի՛ փորձեք համեմատել այս երկուսին նրանց գործերով: Հովհաննեսը հոգևոր ծառայության մեջ էր, իսկ Դանիելը կառավարական պաշտոնյա էր: Այնուամենայնիվ, Հիսուսը պարզորեն հայտնում է, որ Հովհաննեսը գերազանց էր: Դանից հետո շարունակում է.

«Բայց Աստծո թագավորության մեջ ամենափոքրն ավելի մեծ է, քան Հովհաննեսը» (Ղուկաս 7.28, TEV):

Ինչո՞ւ է ամենափոքրն Աստծո թագավորության մեջ ավելի մեծ, քան Հովհաննեսը: Հիսուսը դեռ չէր բարձրացել խաչը՝ մարդկությանը փրկագնելու համար, այսինքն՝ Հովհաննեսի հոգին վերածնված չէր: Հովհաննեսի մասին անկարելի էր ասել. «Ինչպես Հիսուսն է, այնպես էլ Հովհաննես Մկրտիչն է այս աշխարհում» (տե՛ս Ա Հովհ. 4.17): Այնուամենայնիվ, մեր մասին հենց այսպե՛ն է գրված: Հովհաննեսը չէր բարձրացվել և նստել Քրիստոսի հետ երկնավորներում (տե՛ս Եփես. 2.6): Այնուամենայնիվ, սա վերաբերում է մե՛զ: Ահա թե՛ ինչու է այսօր ամենափոքրն Աստծո թագավորության մեջ ավելի մեծ, քան Հովհաննեսը: *Դուք հասկանո՞ւմ եք սա:*

Որոշ աստվածաբաններ համոզված են, որ Հիսուսի հարությունից մինչև մեր օրերը այս երկրի վրա ավելի քան երկու միլիարդ քրիստոնյա է ապրել: Եթե հանկարծ պարզվի, որ դուք այդ երկու միլիարդ հավատացյալներից ամենափոքրն եք (թեև դրա հավանականությունը գրեթե աննշան է), միևնույն է դուք դեռ ավելի մեծ եք, քան Հովհաննես Մկրտիչը, ինչը նշանակում է, որ դուք *ավելի մեծ եք, քան Դանիելը:*

Այս դեպքում, առաջանում են մի շարք հարցեր: Դուք լիարժեք հասկանո՞ւմ եք, թե ո՞վ եք: Դուք աչքի՞ եք ընկնում կամ նախապատի՞վ եք

լինում: Կարելի՞ է ասել, որ դուք տասն անգամ ավելի խելացի, լավ, իմաստուն, ստեղծարար և նորարար եք, քան այն մարդիկ, ում հետ աշխատում եք, ովքեր ուխտի մեջ չեն Աստծո հետ Հիսուս Քրիստոսի միջոցով: Եթե ոչ, ո՞րն է պատճառը: Հնարավոր է, որ դուք չեք հավատում, որ կարող եք Աստծո շնորհքի ավելի մեծ չափ ստանալ:

Եկե՛ք մի փոքր ավելի խորհենք այս մասին: Հիսուսը հայտնեց, որ մենք «աշխարհի լույսն» ենք (տե՛ն Մատթ. 5.14): Նոր կտակարանում մեկ անգամ չէ, որ կյանքը համեմատվում է լույսի հետ՝ խավար աշխարհում (տե՛ն Մատթ. 5.14-16, Յովհ. 8.12, Գործք 13.47, Հռոմ. 13.12, Եփես. 5.8,14, Կողոս. 1.12, Փիլիպ. 2.15, Ա Թեսաղ. 5.5 և Ա Յովհ. 1.7, 2.9,10): Այս ճշմարտությունը պետք է լինի մեր քրիստոնեական կյանքի կենտրոնում:

Ի՞նչ է նշանակում՝ լինել այս աշխարհի լույսը: Շատերը համարում են, որ դա վերաբերում է միայն մեր վարքին, այսինքն՝ մենք պետք է սիրալիր, բարի և հաճելի լինենք, ինչպես նաև անգիր իմանանք Յովհաննես 3.16-ը: Ի՞նչ կպատահեր, եթե Դանիելն այդ կերպով լույս լիներ: Ինչպե՞ս ամեն ինչ կստացվեր, եթե ամեն օր պետական գրասենյակներ մտնելիս նրա նպատակը լիներ իր աշխատակիցների հետ հաճելի կերպով վարվելը և ասելը. «Լսե՛ք, բաբելացի առաջնորդներ, Սաղմոս 23-ում գրված է. «Տերը՝ իմ Յովիվն է, ես կարոտություն չեմ ունենա...»:

Ի՞նչ կխոսեին բոլոր կառավարիչները և իշխանները Դանիելի մասին, երբ ճաշի ժամին նա հեռանար գրասենյակից՝ աղոթելու համար (ինչը նա անում էր ամեն օր): Համոզված եմ՝ նրանք կասեին. «Այնքա՛ն ուրախ ենք, որ այդ մոլեռանդը գնաց այստեղից: Հուսով ենք՝ նա կաղոթի մինչև օրվա վերջը: Նա շատ տարօրինակ է»:

Ինչո՞ւ նրանք այնպիսի օրենք ընդունեցին, որն արգելում էր Դանիելին աղոթել (տե՛ն Դանիել 6.6-8): Միգուցե այն պատճառով, որ նա տասն անգամ ավելի խելացի, իմաստուն, նորարար և ստեղծարար էր, քան իրենք: Դանիելը շարունակ առաջխաղացում էր ստանում՝ իր պաշտոնով գերազանցելով նրանցից ամեն մեկին, մինչև որ դարձավ բոլոր կառավարիչների ղեկավարը, և հնարավոր է՝ այդ մարդիկ մի փոքր նախանձում էին նրան:

Այդ կառավարիչները փակուղու առջև էին. նրանք, հավանաբար, խորհրդակցում էին իրար հետ. «Մենք չենք հասկանում: Մեզ կրթել են այնպիսի ուսուցիչներ, գիտնականներ և կառավարիչներ, որոնք ամենագիտուն, ամենաօժտված և ամենաիմաստունն են եղել ամբողջ աշխարհում: Նա եկել է մի աննշան, փոքր երկրից: Որտեղի՞ց է նա ստանում իր գաղափարները: Ինչպե՞ս է, որ նա շատ ավելի արդյունավետ է, քան մենք: Պատճառը, հավանաբար, նրա՝ օրը երեք անգամ աղոթելն է: Եկե՛ք օրենք

ընդունենք, որը կարգելի նրան աղոթել, որ նա այլևս ստվերի մեջ չթողնի մեզ (հիանալի, նրանք նաև ցանկանում էին ձերբակալել Դանիելին):

Դանիելը վառ լույս էր, քանի որ նա աներևակայելի անհատականություն ուներ: Նա վառ շողում էր իր ժամանակակիցների համար՝ իր բացառիկ հատկանիշների շնորհիվ: Նրան շրջապատող մարդկանց դա դուր չէր գալիս, որովհետև նրանք նախանձում էին Դանիելին: Այնուամենայնիվ, կարող եմ պատկերացնել, որ շատերը, որոնց թվում նաև թագավորն էր, տեսնում էին կենդանի Աստծո գոյության ապացույցը Դանիելի կարողությունների շնորհիվ: Դա գրավիչ էր նրանց համար և դրդում էր նրանց՝ պատվել Դանիելի Աստծուն:

Դանիելը գրավում էր մարդկանց ուշադրությունը ոչ թե Աստվածաշունչը լավ իմանալու, բարեհամբույր լինելու և օրը երեք անգամ աղոթելու պատճառով, այլ՝ որովհետև նա շատ ավելի արդյունավետ էր իր աշխատանքային ոլորտում և աստվածապաշտ բնավորություն ուներ: Նրա անձնական «հիմքը, հիմնականույցը և հարդարման նյութերը» ակնառու էին:

Աստծո շնորհքի վկայությունը իմ կյանքում

Ես ինքս ականատես եմ եղել Աստծո շնորհքի զորության դրսևորմանը իմ կյանքում: Դպրոցական տարիներին ամենադժվար առարկան ինձ համար անգլերենն էր, իսկ ամենադժվար առաջադրանքը՝ շարադրություններ գրելը: Ես խիստ դժվարանում էի ամեն անգամ, երբ ինձ երեք էջից բաղկացած շարադրություն էին հանձնարարում: Ես գրում էի ժամեր շարունակ և հազիվ էի լրացնում նոթատետրի էջի կեսը: Ես պատռում և դեն էի նետում իմ սարսափելի գրավորի էջերը: Դպրոցի ավարտական քննություններին անգլերենից ստացա՝ 800-ից ընդամենը 370 միավոր: Որպեսզի հասկանաք, թե որքան ցածր գնահատական է սա, կարող եմ ասել, որ իմ ձանապարհորդելու բոլոր տարիների ընթացքում ես հանդիպել եմ ընդամենը մեկ մարդու, ով ավելի ցածր գնահատական էր ստացել:

1991 թվականին աղոթքի ժամանակ Աստված հայտնեց ինձ, որ ցանկանում է, որ ես գիրք գրեմ: Երբ դա տեղի ունեցավ, ես կարծեցի, որ Նա շփոթել էր ինձ ինչ-որ մեկի հետ: Հին կտակարանում գրված Սառայի պատմության պես ես մի լավ ծիծաղեցի: Ինչպես կարող էի նույնիսկ մեկ գլուխ գրել, առավել ևս՝ մի ամբողջ գիրք: Այդ ժամանակ ես հաշվի չէի առել Աստծո շնորհքի անչափելի, անսահմանափակ և գերազանց մեծությունն ինձանում:

Աստծուց գիրք գրելու ցուցումն ստանալուց գրեթե տասն ամիս անց երկու կին տարբեր նահանգներից երկու շաբաթվա տարբերությամբ

եկան ինձ մոտ և ասացին հետևյալը. «Ձո՛ն, Աստված ցանկանում է, որ դու գրես: Եթե չգրես, Նա կտա այդ ուղերձները մեկ ուրիշին»: Դրանից հետո ես պայմանագիր կնքեցի Աստծո հետ՝ ընդունելով իմ բացարձակ կախվածությունը Նրա շնորհքից: Ես կպատմեմ այս պատմության մնացած մասը հաջորդ գլխում, բայց այս գլխում ընդամենը կասեմ, որ ես արդեն գրել եմ տասնինը գիրք, որոնք թարգմանվել են ավելի քան իննսուն լեզվով և միլիոնավոր օրինակներով տարածվել աշխարհով մեկ:

Շնորհքը տվեց ինձ ոչ միայն գրքեր գրելու, այլև քարոզելու կարողություն: Առաջին անգամ, մեր ամուսնությունից հետո, երբ Լիզան լսեց իմ քարոզը, նա առաջին շարքում նստած քնեց: Ես այդքան վատ էի քարոզում: Լիզայի ընկերուհին, ով նստած էր նրա կողքին, այնքա՛ն խորն էր քնել, որ նրա բերանից թուք էր հոսում: Դա բոլորովին խրախուսական չէր: Հիմա մարդիկ չեն քնում, երբ ես քարոզում եմ: Նախկինում ես անում էի դա իմ ուժերով. հիմա սովորել եմ հավատալ Նրա շնորհքին, կախված լինել Նրա շնորհքից և թույլ տալ, որ Նրա շնորհքը գործի:

Թեև իմ սեփական կարողությամբ ես չունեի հաջողություն այս երկու ոլորտներում, բայց Աստված արտոնություն տվեց ինձ, որ ծառայեմ միլիոնավոր մարդկանց հենց դրանց միջոցով:

Ճշմարտապես լավ կյանք

Ամփոփենք մեր չափանիշները լավ կյանքի համար: Եթե դուք կարող եք հավատալ, ձեզ համար անհնարին ոչինչ չի լինի, քանի որ Նա կարող է առատությամբ գործել ձեր միջոցով՝ անելով ամեն բաներից ավելի, քան դուք խնդրում և իմանում եք: Այս ներքին զորությունը, որով Նա կատարելու է Իր աշխատանքը ձեր կյանքում, անչափելի է, անսահման է և գերազանցում է ցանկացած ուժ: Ձեր կյանքը չպետք է նման լինի իմ և Լիզայի վերապրմանը շինարարական ընկերության ցուցասրահում, երբ մենք հարդարման նյութեր էինք ընտրում մեր նոր տան համար: Դուք չունեք ոչ մի սահմանափակում, քանի որ ձեր ինքնությունը և գործերը կրում են Աստծո շնորհքի ազդեցությունը: Այսպիսով, թո՛ւյլ տվեք Սուրբ Հոգուն՝ ընդլայնել ձեր տեսիլքը: Երազե՞ք մեծ բաների մասին, հավատացե՞ք և առաջ շարժվե՞ք՝ համապատասխան քայլեր անելով:

Գոյություն ունի մի գործոն, որը վճռական դեր է խաղում այս գլխում գրվածի իրականացման համար: Չունենալով այս հատկանիշը՝ մենք, ամենայն հավանականությամբ, կհիասթափվենք և նույնիսկ կապակողմնորոշվենք՝ ձգտելով արդյունավետ լինել և բազմապատկում ունենալ: Մեր հաջորդ գլխում կխոսենք այս հատկանիշի մասին, որը կոչվում է *զանազանություն*:

ՉԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Բայց կատարյալների համար է հաստատ
կերակուրը, որոնց զգայարանները
վարժողությամբ կրթված են՝
բարին և չարը զանազանելու»:
— Եբրայեցիների 5.14

Սրբությունը ճոխություն չէ՝ նախատեսված
մի քանիսի համար. այն պարզապես
ծեր և իմ պարտականությունն է:
— Մայր Թերեզա

Յասուն են համարվում լիովին հասակն առած մարդիկ (խոսքը
նչ թե մարմնական, այլ հոգևոր հասունության մասին է): Բնա-
կանորեն բոլորս ծնվում ենք որպես երեխաներ և մեծանում ենք՝ հա-
սունության հասնելով: Նույն կերպով, հոգևորապես մենք ծնվում ենք
որպես մանուկներ, և ակնկալվում է, որ մենք պետք է հասունանանք՝
Քրիստոսի կատարյալ հասակի չափով:

Այս երկուսի միջև մի էական տարբերություն կա: Բնական հասու-
նությունը կապված է ժամանակի հետ: Երբևէ լսե՞լ եք, որ երկու տա-
րեկան երեխան 180 սանտիմետր հասակ ունենա: Այդպիսին դառնա-
լու համար պահանջվում է 15-20 տարի: Այնուամենայնիվ, հոգևոր աճը
կապված չէ ժամանակի հետ: Երբևէ հանդիպե՞լ եք հավատացյալնե-
րի, ովքեր մեկ տարեկան են Քրիստոսի մեջ, սակայն ավելի հասուն են
նրանցից, ովքեր փրկվել են քսան տարի առաջ:

Համաձայն Եբրայեցիների 5.14-ի՝ հասունության ցուցանիշն այն է,
որ մեր ներքին զգայարանները կարողանան անսխալաբար զանազա-
նել իրական բարին և չարը:

Կարևոր է նշել, որ ձեր սիրտն ունի հինգ զգայարան, ինչպես և
ձեր մարմինը: Այս մասին պարզորեն գրված է Աստվածաշնչի տար-

բեր հատվածներում: «Ճաշակե՛ք և տեսե՛ք, որ Տերը բարի է» (Սաղմոս 34.8, NLT): Այս մեկ խոսքում գրված է միանգամից երկու զգայարանի մասին:

Մեկ անգամ Յիսուսը բազմության առջև հայտարարեց. «Ցանկացած մարդ, ով լսելու ականջ ունի, պետք է լսի և հասկանա» (Մատթեոս 11.15, NLT): Գրեթե բոլոր ներկաները կարող էին լսել իրենց բնական ականջներով, սակայն Նա խոսում էր նրանց ներսի ականջների մասին:

Պողոսը մեջբերեց Աստծո խոսքն Իսրայելին. «Մի՛ դիպչեք նրանց պիղծ բաներին, և ես կընդունեմ ձեզ» (Բ Կորնթացիների 6.17, NLT): Նույն առաքյալը նաև գրեց, որ Աստծո «գիտության հոտը (կամ՝ բուրմունքը) մեզանով հայտնվում է ամենայն տեղ» (Բ Կորնթացիների 2.14):

Մենք կարող ենք տեսնել բոլոր հինգ զգայարաններն ընդամենը այս չորս խոսքում:

Ձանազանություն

Ինչպե՞ս է հնարավոր չչփոթել բարին և չարը, հատկապես՝ այնպիսի ժամանակներում, երբ խաբեությունը լայնորեն տարածված է: Ինչպե՞ս է հնարավոր չընկնել նույն ծուղակը, որում հայտնվեց Եվան, երբ հավատաց, որ չարը՝ բարի, հաճելի և իմաստուն էր: Պատասխանն է՝ օգտագործելով *զանազանությունը*: Այդ դեպքում, ինչպե՞ս զարգացնել այն. ճշմարիտ աստվածային երկյուղով:

Մաղաքիա մարգարեն կանխատեսեց, որ վերջին ժամանակներում լիներու են երկու տեսակի հավատացյալներ՝ Աստծո երկյուղն ունեցողներ և չունեցողներ: Դժվար պահերին Աստծո երկյուղը չունեցող հավատացյալները տրտնջում են, համեմատում և բողոքում են: Նրանց դուր չի գալիս, որ իրենք պետք է ծառայեն Աստծուն՝ հակառակություն, նեղություններ և դժվարություններ կրելով, այն դեպքում, երբ մեղավորները, ովքեր չունեն շփում Աստծո հետ, բարգավաճում են:

Աստծուց վախեցողներն անցնում են նույն դժվարություններով, բայց այլ կերպ են վարվում: Նրանք խոսում են Աստծո բարության մասին: Նրանք պայքարում են՝ նեղություններ կրելով, և հավատում են այն ամենին, ինչ Նա ասում է իրենց դժվարին հանգամանքների մասին: Նրանք ավելի մտածում են Աստծո ցանկությունների, ծրագրերի և թագավորության մասին, քան իրենց ժամանակավոր ոչ հարմարավետ վիճակի: Նրանք գիտեն, որ հաստատված են Նրա հավատարմության վրա: Նրանց վերաբերմունքն այսպիսին է.

«Թեև բալենիները չծաղկեն և ելակները չհասնեն, թեև բոլոր խնձորները որդնեն, և ցորենի դաշտերի աճը կանգնի, թեև ոչխարների փարախներն առանց ոչխարների մնան և անասունների գոմերը դատարկվեն, ես ուրախալի փառաբանություն կերգեմ Աստծուն: Ես իմ ուրախության անիվները կուղղեմ դեպի իմ Փրկիչ Աստծուն: Հուսալով, որ Աստծո Իշխանությունը կհաղթի՝ ես սիրտ եմ առնում և զորանում եմ: Ես վազում եմ եղջերուի պես: Ես սարի թագավորի պես եմ զգում ինձ» (Ամբակում 3.17-19, MSG):

Մաղաքիա մարգարեի միջոցով Աստված ասաց, որ դարձնելու է նրանց Իր հատուկ գանձերը (հիշե՛ք, որ Պողոսը խոսում էր «հատուկ անոթների» մասին Բ Տիմոթեոս 2.21-ում (CEV)): Մաղաքիան կանխասեց, որ Աստծո երկյուղն ունեցողների բերկրալի առավելություններից մեկը հետևյալն է լինելու. «Դուք կրկին *կզանազանեք* արդարների և ամբարիշտների միջև» (Մաղաքիա 3.18, NKJV): Այլ կերպ ասած՝ այս հավատացյալները չեն շփոթի *բարին* այն ամենի հետ, ինչը բարի չէ:

Նախորդ գլխում մենք տեսանք Աստծո բարության չափանիշը՝ առատությունը, որն ավելին է, քան մենք կարող ենք խնդրել կամ իմանալ: Ինչ-որ մեկի համար առատությունը կարող է անկման պատճառ դառնալ, իսկ մյուսի համար՝ մեծ հնարավորություն լինել: Եթե առատությունը ձեր նպատակն է, դուք, անկասկած, կընկնեք նույն ծուղակը, որում հայտնվեցին Եվան, Կայենը, Բաղասամը, Կորխը, Սավուղը, Գեհեզիան, Հուդան, Աղեքսանդրոսը, Լավոդիկեի եկեղեցին և բազմաթիվ այլ մարդիկ: Այնուամենայնիվ, եթե ձեր առաջնահերթ նպատակը՝ Աստծուն հաճեցնելն է, դուք կկարողանաք զանազանել բարին և չարը, այսինքն՝ ձեր առատությունը ճիշտ կերպով տնօրինելու կարողություն կունենաք:

Զանազանությունը՝ բանալի հատկանիշ է, իսկ մեր զանազանելու կարողության չափն ուղիղ համեմատական է Աստծո հանդեպ ունեցած մեր երկյուղին: Թույլ տվեք կրկնել այս միտքը. որքան ավելի շատ ունենանք Աստծո երկյուղը, այնքան ավելի մեծ իմաստություն կստանանք՝ զանազանելու համար: Իր գահակալության սկզբում Սողոմոնն աղաղակեց. «...տո՛ր Զո ծառային իմաստուն սիրտ՝ Զո ժողովրդին դատելու, բարու և չարի մեջտեղը *ջոկելու* (կամ՝ *զանազանելու*)» (Գ Թագավորաց 3.9):

Այն իմաստությունը, որով Սողոմոնն իշխում էր, անասելի էր: Այն տարիներին, երբ նա հետևում էր Տիրոջը, նա գրում էր. «Եթե դու աղաղակես *զանազանության* համար... եթե դու փնտրես նրան արծաթի պես և որոնես նրան թաքնված գանձերի պես, այդ ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը» (Առակաց 2.3-5, NKJV):

Այնուամենայնիվ, հենց որ Սողոմոնը կորցրեց իր երկյուղն Աստծո հանդեպ, նա շփոթվեց և դադարեց զանազանել բարին ու չարը: Նրա համար ամեն ինչ «ունայնություն» և «քամու աշխատանք» դարձավ: Ամբողջ ժողովող գիրքը պատկերում է շփոթված և խժժված մարդու, ով կորցրել է երկյուղն Աստծո հանդեպ և, հետևաբար, իր զանազանելու կարողությունը: Նրա միտքը տրտմած էր: Տարիների ընթացքում իմ սիրտը ցավում էր այն բազմաթիվ առաջնորդների և հավատացյալների համար, ովքեր նմանապես կորցնում էին Տիրոջ երկյուղը և ընկնում խաբեության մեջ, քանի որ զրկվում էին զանազանությունից:

Ինչպես արդեն ասացի՝ երբ աստվածային երկյուղ ունենք, մենք թույլ ենք տալիս, որ Աստծո շնորհքը հեռացնի մեզնից ամեն պղծություն: Յետաքրքիր է, բայց մեր զանազանությունը կախված է աստվածահաճո կյանքից: Այնպես որ, մենք ևս մեկ անգամ տեսնում ենք, որ սրբությունը՝ հիմնակառույց է, որի վրա հենվում են մեր կյանքի որոշումները՝ կապված մեր կարիերայի, փոխհարաբերությունների, ֆինանսների, հնարավորությունների և կյանքի ցանկացած բնագավառի հետ:

Նախ և առաջ մենք պետք է ձգտենք երկյուղ ունենալ Աստծուց: Եթե սա լինի մեր գլխավոր առաջնահերթությունը, մենք չենք խաբվի առատության պատճառով: Գրված է. «Իր հարստությանը հուսացողը վայր կընկնի» (Առակաց 11.28): Այնուամենայնիվ, նույն գրքում գրված է. «Ես եմ հանճարը... Յարստություն և փառք կա Ինձ մոտ...» (Առակաց 8.14,18): Եվ կրկին՝ «Խոնարհության և Տիրոջ երկյուղի վարձքն է՝ հարստություն...» (Առակաց 22.4): Հշմարիտ հարստությունը՝ միջոց է, որը թույլ է տալիս կատարել այն, ինչի համար Աստված կանչել է ձեզ, իսկ նրա կոչումը մշտապես ենթադրում է ազդեցություն մարդկանց վրա, այսինքն՝ Աստծո թագավորությունը կառուցելը:

Ամեն առավոտ դուք պետք է հարցնեք ձեզ հետևյալը. «Այսօր իմ դրդապատճառը՝ Տիրոջ երկյուղն է, թե՞ հարստություն ձեռք բերելը»: Եթե ձեր նպատակը՝ աստվածային երկյուղն է, այն կպաշտպանի ձեզ խաբեությունից. դուք չարության մասնակից չեք դառնա, որպեսզի ձեռք բերեք այն, ինչը բարի է:

Թույլ տվեք պարզաբանել. միջոցները, ունեցվածքը, հարստությունը և առատությունը *բարի* են: Այնուամենայնիվ, եթե դրանք ձեր նպատակն են, դուք չեք կարող զանազանել և չեք հասկանա, երբ դրանք ձեռք բերելու միջոցները *չար* լինեն: Ես Աստվածաշնչից կօգտագործեմ մի պատմություն՝ այս գաղափարը բացատրելու համար:

Ժամանակն է առնելու

Իսրայելում ընդունված էր զոհաբերություն կամ նվեր մատուցել մարգարեի մոտ գնալիս: Երիտասարդ Սավուղը, ով դեռ պետք է թագավոր դառնար, իր ծառայի հետ որոնում էր իր հոր կորած էշերին: Երբ որոնումը շատ հոգնեցրեց նրանց, Սավուղի ծառան առաջարկեց գնալ մոտակա քաղաքը և խնդրել այդտեղ ապրող Սամուել անունով մարգարեի օգնությունը՝ էշերը գտնելու համար: Սավուղն անմիջապես պատասխանեց. «Եթե գնանք, ի՞նչ պետք է տանք նրան: Մեր պարկերում հաց չի մնացել: Մենք ոչինչ չունենք, որ նվեր մատուցենք այդ սուրբ մարդուն» (Ա Թագավորաց 9.7, MSG): Մարդիկ այդպես էին մտածում, երբ գնում էին մարգարեի մոտ:

Այժմ տեղափոխվենք մեկ այլ ժամանակահատված: Ասորիների բանակի հրամանատար Նեեմանը եկավ Եղիսե մարգարեի տունը, և երբ ի վերջո հնազանդվեց նրա ցուցումներին, լիովին բժշկվեց բորոտությունից: Նա վերադարձավ Եղիսեի մոտ՝ շնորհակալություն հայտնելու և նվեր մատուցելու համար: Մարգարեն պատասխանեց. «Կենդանի է Տերը, Ում առջև ես կանգնած եմ, եթե ընդունեմ» (Դ Թագավորաց 5.16): Նեեմանը համոզում էր նրան ընդունել իր նվերը, բայց Եղիսեն կրկին հրաժարվեց:

Եղիսեի անձնական օգնականը՝ Գեհեզիան, ներկա էր ամբողջ այդ ընթացքում: Նա ցնցված նայում էր, մինչ Նեեմանը հեռանում էր՝ առանց սովորական համարվող նվերը տալու: Հենց որ Եղիսեն հեռացավ, Գեհեզիան վազեց Նեեմանի շքախմբի ետևից: Տեսնելով նրան՝ Նեեմանը կանգնեցրեց իր քարավանը և հարցրեց Գեհեզիայի գալու պատճառը:

Գեհեզիան հավաստիացրեց նրան, որ ամեն բան լավ է, բայց հետո ստեց Նեեմանին՝ ասելով, որ Եղիսեի մոտ հանկարծակի կարիք էր առաջացել: Նա ասաց. «Քիչ առաջ Եփրեմի սարից երկու երիտասարդ մարգարեներ եկան: Նա ցանկանում էր 34 կիլոգրամ արծաթ և երկու ձեռք հագուստ՝ նրանց տալու համար» (Դ Թագավորաց 5.22, NLT):

Նեեմանը տվեց երկու անգամ ավելի, քան «անհրաժեշտ» էր: Նրանք հրաժեշտ տվին միմյանց, և Գեհեզիան վերադարձավ ու թաքցրեց այդ նվերներն իր իրերի մեջ:

Այնուհետև նա վերադարձավ Եղիսեի մոտ և կանգնեց նրա առջև: Եղիսեն հարցրեց, թե որտեղ է նա եղել, և Գեհեզիան ստեց՝ պնդելով, որ ոչ մի տեղ չի գնացել: Այդ ժամանակ Եղիսեն ասաց.

«Չե՞ս հասկանում, որ ես հոգով այդտեղ էի, երբ Նեեմանն իջավ իր կառքից՝ քեզ դիմավորելու համար: Մի՞թե ժամանակն է՝ առնելու փող և հանդերձներ, ձիթենիների պուրակներ և խաղողի այգիներ, ոչխարներ և հորթեր, տղամարդ և կին ծառաներ: Քանի որ դու արեցիր սա, դու և քո սերունդները հավիտյան կտառապեք Նեեմանի բորոտությանը» (Դ Թագավորաց 5.26,27, NLT):

Աստվածային երկյուղի (և այդ պատճառով էլ՝ զանազանության) պակասը Գեհեզիայի կյանքում խաբեության պատճառ դարձավ: Նա մտածեց, որ եկել էր ստանալու ժամանակը, այնինչ դրա ժամանակը չէր: Նա համոզված էր, որ այդ պարզևն արժանավոր էր ստանալ՝ միգուցե մտածելով, որ ինքը կարող էր վերցնել այն, քանի որ իր ղեկավարը հրաժարվեց դրանից: Ի վերջո, ինչպես և Եղիսեն, նա զոհեր էր արել և ներդրել էր իր կյանքն Աստծո գործի համար: Մի՞թե Աստված չէր ցանկանում, որ իրենք բարգավաճեին: Եվ ահա, իրենց մոտ էր եկել այդ հարուստ հեթանոսը, ով երկրպագում էր օտար աստվածների: Մի՞թե մեղավորների հարստությունը չի պահվում արդարների համար: Նա եզրակացրեց, որ Եղիսեն իմաստությամբ չվարվեց, երբ չընդունեց հասանելի վարձատրությունն իր ծառայության համար:

Գեհեզիայի տրամաբանությունն արդարացրեց այն քայլերը, որոնց նա դիմեց, որպեսզի ստանար այն, ինչն արժանավոր էր համարում: Նա չունեի զանազանելու կարողություն և այդ պատճառով էլ չարը բարի համարեց: Եվ նա սարսափելի գին վճարեց իր անհնազանդության համար:

Նպատակն արդարացնում է միջոցները

Ես կարող եմ բազմաթիվ պատմություններ պատմել՝ ցույց տալու համար, թե ինչպե՞ն է երկրային հարստությանը Տիրոջ երկյուղից ավելի ձգտելը սայթաքման պատճառ դարձել թե՛ առաջնորդների, թե՛ հավատացյալների համար: Ժամանակի ընթացքում այդ ընտրությունը շատ թանկ է նստել նրանց վրա: Սկզբում շահ ձեռք բերելու հնարավորությունը գրավիչ, խելամիտ և լավ է թվում: Սկզբնական շրջանում թվում է, թե նրանց գործերն օրհնվում են, և շատ շուտով նրանք հաջողության են հասնելու: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց ամեն ինչ վատթարանում է, իսկ ավելի ուշ նրանք շատ թանկ են վճարում իրենց որոշումների համար: Ես տեսել եմ քայքայված ամուսնություններ, կորսված ծառայություններ, ֆինանսական անկումներ, առողջա-

կան բարդություններ, կործանված փոխհարաբերություններ... և այս ամենի հետ մեկտեղ, մարդիկ կորցնում էին իրենց անկեղծությունը և իրենց սիրելիների վստահությունը:

Քրիստոնյա գործարարները պատմել են ինձ անթիվ տհաճ պատմություններ եսասիրության, ստերի, գողությունների, նախանձի, կեղծիքի և միջոցների ապօրինի յուրացման մասին, որոնց ականատես են եղել այլ քրիստոնյա գործարարների կողմից: Ո՞րն է նման վարքի պատճառը: Պատասխանը պարզ է. բարի թվացող ավարտն արդարացնում է այն փոխզիջումը, որն անհրաժեշտ է թվում՝ դրան հասնելու համար: Մարդը մտածում է. «Աստծո կամքն է, որ ես հաջողություն, հարստություն և ազդեցություն ունենամ»: Այնուամենայնիվ, նա չի օգտագործում Աստծո Խոսքը որպես զտիչ՝ իր ճանապարհին զգուշորեն հետևելու համար: Հաճախ այս փոխզիջումը միակ հնարավոր տարբերակն է թվում: «Եթե հիմա ոչինչ չանենք, շատ ուշ կլինի: Մենք մեծ հնարավորություն կամ օրհնություն բաց կթողնենք»: Անհրաժեշտ է հասուն բնավորություն ունենալ՝ Աստծո մատակարարմանն սպասելու համար:

Սատանան փոխզիջման տարավ Հիսուսին Նրա ծառայության վաղ շրջանում: Նա գայթակղեցրեց Հիսուսին՝ առաջարկելով՝ առանց որևէ դժվարություն կրելու ետ ստանալ այս աշխարհի բոլոր թագավորությունները, քանի որ Հիսուսը եկել էր հենց այդ նպատակով: Նա պետք է միայն երկրպագեր սատանային: Հիսուսի մարդկային բնության համար սա, հավանաբար, գայթակղիչ առաջարկ էր: Եթե Նա ընդուներ սատանայի առաջարկը, կկարողանար արագորեն շատ մեծ ծառայություն կառուցել՝ խուսափելով բազում դժվարություններից և չարչարանքներից: Նա պարզապես պետք է երկրպագեր սատանային:

Որքա՞ն հաճախ է սատանան առաջարկում կատարել այն, ինչ Աստված դրել է մեր սրտում, բայց դրա համար մենք պետք է փոխզիջման գնանք մեր ազնվության, բնավորության, և հնազանդության հետ: Երկրպագությունը չի նշանակում դանդաղ երգ՝ շինություն տվող բառերով: Երկրպագությունն արտահայտվում է այն բանով, թե ո՞ւմ ենք մենք հնազանդվում: Կարող է այնպես լինել, որ մենք դանդաղ երգեր երգենք եկեղեցում, այնինչ մեր կյանքը, որը շատ ավելի բարձր է խոսում մեր երգերից, երկրպագի խավարին:

Ավելի վաղ ես ասացի, որ գրեթե բոլոր հեղինակները, իրենց գրքերում օգտագործելով նոր և անծանոթ բառեր, առաջին հերթին նշում են դրանց գլխավոր իմաստը: Եթե գտնեք այն աստվածաշնչյան հատվածը, որում առաջին անգամ օգտագործվում է «երկրպագություն» բա-

ըը, դուք կհասկանաք դրա իրական նշանակությունը: Առաջին անգամ «երկրպագություն» բառն օգտագործվեց Աստվածաշնչում, երբ Աստված պատվիրեց Աբրահամին զոհաբերել ամենակարևոր անձնավորությանը կամ ամենակարևոր բանն իր կյանքում՝ առանց որևէ կերպով պատճառաբանելու Իր հանձնարարությունը:

Աբրահամը երեք օրվա ճանապարհ անցավ որդու հետ և հասնելով Մորիա սարի ստորոտին՝ ասաց իր ծառաներին. «Դուք այդ էջի հետ այստեղ մնացեք, ես և տղան մինչև այնտեղ գնանք և երկրպագություն անենք» (Ծննդոց 22.5): Նա սար չէր բարձրանում՝ Աստծուն դանդաղ, քաղցրահունչ երգ երգելու համար: Աբրահամը, հնազանդվելով Աստծուն, բարձրանում էր, որպեսզի մահվան մատներ այն, ինչն ամենաթանկն էր իր համար: Աբրահամի երկրպագությունը սահմանվեց նրա հնազանդությամբ:

Հնարավոր է, որ հենց այս պատճառով Աստված մեկ անգամ ասաց Իր ժողովրդին. «Հեռացրե՛ք ձեր աղմկոտ փառաբանության երգերը: Ես չեմ լսի ձեր տավիղների երաժշտությունը: Փոխարենը՝ ուզում եմ տեսնել իրավունքի մեծ հեղեղ, *արդար կյանքի անվերջանալի գետ*» (Ամովս 5.23,24, NLT): Ինձ դուր է գալիս «արդար կյանքի անվերջանալի գետ» արտահայտությունը: Ես կանվանեի սա «անսասան հնազանդություն»:

Ամովսի օրերում ապրող մարդկանց կյանքը չէր համապատասխանում Աստծո խոսքին, բայց նրանք հորինում էին նորանոր երկրպագության երգեր և երգում էին դրանք իրենց հավաքույթներին: *Երկրպագությունը երևում է այն բանով, թե ո՞ւմ ենք մենք հնազանդվում, ոչ թե՛ ո՞ւմ ենք մենք երգում:*

Ընտրել բարին, ոչ թե Աստծուն

Թույլ տվեք պատմել, թե ինչպես մեկ անգամ ես ընկա գայթակղության ծուղակը՝ փոխզիջման գնալով իմ հնազանդությանը: Մեր ծառայությունը շատ երիտասարդ էր. այն դեռ երկու տարեկան էլ չէր: Միակ բանը, որը կատարվում էր մեր ծառայության մեջ, իմ ճանապարհորդություններն էին փոքր եկեղեցիներ, որտեղ հարյուր կամ ավելի քիչ մարդ էր հաճախում: Մեր ճանապարհորդության միջոցը հիմնականում մեր «Հոնդա Սիվիկ» մեքենան էր: Մեր երկու երեխաները մեզ հետ էին՝ ետևի նստատեղին: Մեքենան հազիվ էր բավականացնում մեր իրերի համար, նաև՝ երկու արկղ լսաժապավենների, որոնք վաճառում էինք մեր հավաքույթներին:

Ինչպես արդեն նշել եմ, մեկ օր՝ առավոտյան, Աստված խոսեց սրտիս՝ պատվիրելով գիրք գրել: Ես անմիջապես չհնազանդվեցի այդ պատվերին երկու պատճառով: Առաջինը՝ ես հիշատակել էի, որ շարադրություններ գրելը շատ դժվար էր տրվում ինձ դպրոցում: Երկրորդը՝ ո՞վ կցանկանար հրատարակել անանուն հեղինակի գիրքը: Այնուամենայնիվ, վերջապես հնազանդվեցի և սկսեցի գրել:

Պահանջվեց մեկ տարի՝ այդ գիրքն ավարտելու համար: Այն շատ ժամանակատար և աշխատատար էր ինձ համար: Ես այցելեցի երկու հրատարակչություն և ներկայացրի իմ ձեռագիրը, որի վերնագիրն էր՝ «*Յաղթանակ անապատում*»: Մի հրատարակչություն ասաց ինձ, որ այն «չափազանց քարոզչական» է. մյուսն ընդհանրապես չպատասխանեց: Ես հուսալքվեցի: Լիզան և ես ընտրեցինք մեր միակ հնարավոր տարբերակը. որոշեցինք անձամբ հրատարակել այն: Մենք գումար հանգանակեցինք մի քանի հազար օրինակի համար և վաճառեցինք գրքերը այն եկեղեցիներում, որտեղ ծառայում էինք: Մարդկանց դուր էր գալիս այդ գիրքը: Յաջորդ տարի ես գրեցի երկրորդ գիրքը: Կրկին, միակ հնարավոր տարբերակը մեզ համար՝ այն մեր միջոցներով հրատարակելն էր:

Երկրորդ գիրքը տպագրելուց մի քանի ամիս անց մեր գրասենյակ զանգահարեց մի անձնավորություն, ով նոր նախագծերով զբաղվող խմբագիր էր Ամերիկայի ամենախոշոր հրատարակչություններից մեկում: Ներկայանալուց հետո նա անմիջապես հայտնեց իր զանգի նպատակը.

- Ջոն, ինչ-որ մեկը տվեց մեզ ձեր «*Յաղթանակ անապատում*» գիրքը: Մեր հրատարակչությունը հավատում է այս գրքի ուղերձին, և մենք ցանկանում ենք օգնել ձեզ, որ այն հասցնեք լայն զանգվածների:

Մենք մի քանի բույս խոսեցինք: Նա պատմեց այն բազմաթիվ միջոցների մասին, որոնցով նրանք պատրաստվում էին վաճառել իմ գիրքը և գովեց իրենց մարկետինգային ու գովազդային բաժինների աշխատանքը: Ամեն ինչ չափազանց լավ էր թվում՝ ճշմարիտ լինելու համար. վերջապես այդ գիրքը հասանելի կլիներ ամբողջ երկրում:

Այնուամենայնիվ, խոսափողը ցած դնելուց հետո ես անհանգստություն զգացի: Իմ հոգում վատ զգացողություն հայտնվեց այդ խոսակցության ընթացքում: Յաջորդ առավոտյան ես աղոթեցի և հզոր ձևով զգացի, որ Աստված ասում էր. «Մի՛ ընդունիր այդ առաջարկը»:

Ես խոսեցի Լիզայի հետ այդ մասին. նա համաձայնեց, որ թեև այդ առաջարկը լավ էր թվում, բայց նա նույնպես երկմտություն էր զգում:

Ավելի ուշ այդ օրը Լիզան ասաց.

- Սիրելի՛ս, ես լավ զգացողություն չունեմ դրա համար, երբ աղոթում եմ:

Ես վերջնականորեն համոզվեցի, որ մենք չպետք է ընդունենք այդ առաջարկը:

Հաջորդ օրը այդ խմբագիրը կրկին զանգահարեց ինձ: Թեև ես գիտեի Աստծո կամքը դրա վերաբերյալ, միևնույն է՝ ուզում էի լսել, թե ինչ էր նա ասելու: Այդ ժամանակ ես չհասկացա դա, բայց խոսակցությունը շարունակելու իմ ցանկությունը ցուցանիչ էր, որ իմ ներսում խնդիր կար: Ինչո՞ւ ես չէի կարող պարզապես հնազանդվել: Ինչո՞ւ էի թույլ տալիս նրան համոզել ինձ, որ պետք է հրատարակել իմ գիրքը հենց այդ հրատարակչությունում: Կարո՞ղ է պատահել, որ նրա խոսքերը սնուցում էին սրտումս բույն դրած մի սխալ ցանկություն, կամ շոյում էին իմ եսասիրությունը:

Այդ խմբագիրը խանդավառությամբ պատմում էր, թե ինչ ոգևորությամբ էր իր հրատարակչությունը ցանկանում տարածել իմ ուղերձը: Նա պնդեց, որ իմ ուղերձն անհրաժեշտ էր, և այն Աստծուց տրված խոսք էր մեր երկրի համար: Այդ հրատարակչությունն աշխատում էր բոլոր խոշոր իրացնող ընկերությունների հետ և կարող էր վաճառել իմ գիրքը բոլոր քրիստոնեական և շատ աշխարհիկ գրախանութներում՝ ամբողջ Ամերիկայով: Նա պատմեց անհայտ հեղինակների մասին, որոնց գրքերն իրենք հրատարակել էին, և այսօր նրանց ուղերձները տարածվել են Ամերիկայով մեկ, և նրանք համաժողովների հայտնի խոսնակներ են դարձել: Նրա խոսքերով՝ այդ ամենը տեղի էր ունեցել իրենց հրատարակչության շնորհիվ:

Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում այդ խմբագիրը զանգահարում էր ինձ երկու օրը մեկ, որովհետև ես չէի մերժում նրան: Որքան ավելի էի լսում նրան, այնքան ավելի էի համոզվում, որ արժեք հրատարակել իմ գիրքը նրանց հրատարակչությունում: Եկավ մի պահ, երբ սրտումս այլևս զգուշավորություն չէի զգում: Ես լռեցրել էի Սուրբ Հոգու ներքին վկայությունը: Ես թույլ էի տվել, որ շողոքորթությունը և մարդկային փաստարկները լռեցնեին Աստծո հրահանգն այդ հարցի վերաբերյալ: Պարզ ասած՝ իմ զանազանելու կարողությունը մարել էր:

Ելից 23.8-ում գրված է. «Կաշառքը կուրացնում է զանազանություն ունեցողներին» (NKJV): Շողոքորթությունը՝ կաշառքի ձև է, և այն կուրացրեց ինձ: Ես պատրաստվում էի ընտրել բարենպաստ հնարավորությունները և առատությունը ավելի, քան Տիրոջ երկյուղը:

Թեև կինս խստորեն զգուշացրեց ինձ դրա համար, մենք պայմանագիր կնքեցինք, և անմիջապես բազմաթիվ խնդիրներ առաջացան:

Այդ ժամանակ Լիզան և ես արդեն տասնմեկ տարվա ամուսնացած էինք: Յաճախ նա ասում էր ինձ. «Դու երբեք չես հիվանդանում»: Նա ճիշտ էր. ես հազվադեպ էի առողջական խնդիր ուենում, և եթե ինչ-որ բան ի հայտ էր գալիս, անցնում էր ամենաշատը քսանչորս ժամվա ընթացքում: Բայց այն օրվանից, ինչ մենք ստորագրեցինք այդ պայմանագիրը, ես պայքարում էի տկարության դեմ և չէի կարողանում ազատվել դրանից:

Ամեն ինչ սկսվեց հարբուխից. իմ կյանքի ընթացքում ընդամենը երկրորդ անգամ ես փսխեցի: Յենց որ հարբուխն ավարտվեց, ես վարակվեցի ինչ-որ վիրուսով: Լիզան և ես քաղաքից դուրս էինք գնացել՝ մեր ամուսնության տարեդարձը նշելու համար, և ես բարձր ջերմությոն ունեի ամբողջ այդ ընթացքում: Իմ տենդը շարունակվեց մինչև հաջորդ շաբաթ: Ես քարոզում էի մի եկեղեցում, և ամեն ծառայությունից հետո վերադառնում էի հյուրանոց ու դողում ծածկոցների տակ:

Այդ տենդը շարունակվեց նաև երրորդ շաբաթ: Մենք զարմացած էինք, քանի որ ես երբեք այդպես չէի հիվանդացել: Ի վերջո, ուժեղ հակաբիոտիկները հաղթահարեցին այդ վիճակը, բայց երբ ավարտեցի դրանց ընդունումը, ինձ մոտ խիստ մրսածություն սկսվեց: Ես շատ վատ վիճակում էի. կոկորդս ցավում էր, չէի կարողանում քթով շնչել և ունեի բոլոր վատ ախտանշանները: Այդ հիվանդությունը չէր անցնում:

Կազդուրվելուց դեռ երկու շաբաթ չէր անցել, երբ վնասեցի ծունկս: Վնասվածքն այնքան ծանր էր, որ մի քանի շաբաթ ամրակապ էի կրում և քայլում էի հենակներով: Ասես դա բավական չէր, անմիջապես դրանից հետո վարակվեցի մեկ այլ վիրուսով: Այս հիվանդությունների և վնասվածքների շրջանը տևեց ավելի քան երեք ամիս: Ամբողջ այդ ընթացքում Լիզան լիովին առողջ էր:

Մինչ ես կրում էի այդ ամենը, մենք լուրջ խնդիրներ ունեինք այդ հրատարակչության հետ: Թվում էր՝ չէինք կարողանում համաձայնության գալ ոչ մի հարցի շուրջ: Մեր փոխհարաբերությունների մեջ մեծ ճնշումներ կային, և գործը բոլորովին առաջ չէր գնում:

Ասես դա էլ բավական չէր, մենք բազմաթիվ այլ խնդիրների էինք բախվում, որոնք, թվում էր, անլուծելի էին: Այդ երեք ամսվա ընթացքում կյանքը շատ էր բարդացել: Միգուցե Դավիթը հենց այս պատճառով էր գրել. «Քանի դեռ ես չէի տառապել, շեղվում էի, բայց հիմա պահում եմ Քո խոսքը» (Սաղմոս 119.67, NKJV):

Աստված շատ ողորմած էր այս իրավիճակում. Նա թույլ տվեց, որ տեսնեի իմ հիմարությունը: Ես առաջնահերթությունը տվել էի իմ ծառայության հաջողությանը, ոչ թե Նրան հնազանդվելուն: Ես ընդունեցի

իմ սխալն Աստծո և կնոջս առջև: Ես ներվեցի ու մաքրվեցի: Նրա ողորմությունն այնքա՛ն զարմանալի է:

Այնուամենայնիվ, ես դեռ ծուղակի մեջ էի: Ինձ հրաշք էր պետք, որ խզեի իմ պայմանագիրն այդ հրատարակչության հետ: Լիզան և ես միաբան աղոթեցինք՝ խնդրելով Աստծո միջամտությունը:

Երկու շաբաթ անց այդ հրատարակչությունը նամակ ուղարկեց մեզ՝ տեղեկացնելով պայմանագիրը խզելու մասին: Ես թեթևություն զգացի, բայց և թանկ վճարեցի դրա համար: Մենք վճարեցինք ավելի քան 4.000 դոլար՝ պայմանագիրը խզելու համար: Դա շատ մեծ գումար էր մեր երիտասարդ ծառայության համար. այն կազմում էր մեր մեկ ամսվա բյուջեի կեսը:

Աստվածային հնարավորությունը

Մի քանի ամիս անց ընկերներիցս մեկը, ում անունը Սկոտ է, ընթրիքի հրավիրեց ինձ՝ ասելով. «Ջո՛ն, ուզում եմ ծանոթացնել քեզ ընկերոջս հետ»: Ես համաձայնեցի:

Ռեստորանում Սկոտը ծանոթացրեց ինձ իր ընկերոջ հետ, ում անունը նույնպես Ջոն էր: Պարզվեց, որ նա մի շատ հայտնի հրատարակչության տնօրեն էր: Սովորական խոսակցությունից հետո, ընթրիքի կեսից Ջոնը հարցրեց, թե ինչի մասին էի ես քարոզում այդ ժամանակ: Որքան հիշում եմ՝ ես այլևս ոչինչ չկերա այդ հարցից հետո:

Ես սկսեցի կիսվել նրանց հետ վիրավորանքի մասին, որն այդ ժամանակ իմ քարոզների թեման էր: Գրեթե տասնհինգ րոպե ես ոգևորությամբ խոսեցի Սկոտի և Ջոնի հետ:

Սկոտը մի պահ ընդհատեց ինձ՝ ասելով.

- Պարզապես ուզում եմ՝ իմանաք, որ մենք չենք կարող հրատարակել այս ուղերձը, քանի որ մենք հրատարակում ենք տարեկան ընդամենը քսանչորս գիրք, և այն էլ՝ հանրահայտ հեղինակների կամ հովիվների գրքեր:

- Ես չեմ խնդրում ձեզ հրատարակել այս ուղերձը, - պատասխանեցի: - Ես պարզապես պատասխանում եմ ձեր հարցին այն մասին, թե ինչի մասին եմ վերջերս քարոզում:

- Իհարկե, - պատասխանեց նա: - Շարունակե՛ք, խնդրում եմ:

Ես շարունակեցի խոսել ևս հինգ կամ տասը րոպե վիրավորանքի ծուղակի մասին: Երբ ավարտեցի, Ջոնը հարցրեց.

- Կարո՞ղ եք տալ ինձ այս ուղերձի ձեռագիրը:

Ես անակնկալի եկա՝ պատասխանելով.

- Դուք կարծեմ ասացիք, որ չեք կարող հրատարակել այն:
- Այս ուղերձը պետք է տարածվի, և ես ցանկանում եմ ներկայացնել այն մեր հրատարակչության սեփականատիրոջը:

Այդ հրատարակչությունն ընդունեց իմ ուղերձը և հրատարակեց այն «Սատանայի խայծը» վերնագրով: Ժամանակի ընթացքում այն հանրաճանաչ գիրք դարձավ աշխարհի տարբեր երկրներում: Այս գիրքը գրելու ընթացքում «Սատանայի խայծը» վաճառվել է ավելի քան մեկ միլիոն օրինակով և թարգմանվել ավելի քան վաթսույն լեզուներով:

Ես երբեք չեմ մոռանա այն օրը, երբ երկրորդ հրատարակչությունը, որտեղ ներկայացրել էի գրքիս ձեռագիրը, զանգահարեց ինձ: Նրանք ասացին, որ անպայման ցանկանում են հրատարակել իմ ձեռագիրը և պատրաստ են անմիջապես պայմանագիր կնքել ինձ հետ: Ես դրեցի խոսափողը, սկսեցի աղոթել, և Աստված հստակ ասաց իմ սրտում. «Նախորդ հրատարակչությունը՝ քո գաղափարն էր, իսկ այս հրատարակչությունը՝ Իմն է»:

Այս փորձառությունը պարզորեն ցույց տվեց ինձ տարբերությունը բարու և Աստծո միջև: Ինչպես շատ հաճախ տեղի է ունենում, բարու հնարավորությունն առաջինն էր, իսկ Աստծո հնարավորությունը եկավ ավելի ուշ: Նույնը պատահեց Աբրահամի և Սառայի հետ. սկզբում ծնվեց Իսմայելը, իսկ հետո՝ Իսահակը:

Աստվածային երկյուղի ապացույցը

Ինչո՞ւ սխալ որոշում կայացրի առաջին հրատարակչի հետ: Անկեղծ պատասխանն այն է, որ ես կենտրոնացած էի առատության (ուղերձն ավելի շատ մարդկանց հասցնելու) վրա, ոչ թե Տիրոջ երկյուղի: Այս պատճառով, տրամաբանությունը և ակնհայտ հաջողության մասին մտքերը մերժեցին և լռեցրին այն, ինչ Աստված պարզորեն ցույց էր տալիս իմ սրտում:

Հնազանդությունը՝ ձշմարտապես Տիրոջ երկյուղն ունենալու արտաքին ապացույցն է: Երբ Աստծո երկյուղն ունենք, մենք...

- Անմիջապես հնազանդվում ենք Նրան:
- Հնազանդվում ենք Նրան, նույնիսկ եթե դա անիմաստ է թվում:
- Հնազանդվում ենք Նրան, նույնիսկ եթե դա ցավ է պատճառում:
- Հնազանդվում ենք Նրան, նույնիսկ եթե օգուտ չենք տեսնում դրանում:
- Հնազանդվում ենք Նրան մինչև վերջ:

Ուսումնասիրելով Աբրահամի գործողությունները փորձության ժամանակ՝ մենք տեսնում ենք, որ նա կատարեց այս կետերից ամեն մեկը: Վերհիշենք նրա մեծ փորձությունը:

Մի գիշեր Աստված պատվիրում է Աբրահամին՝ զոհաբերել իր որդուն՝ Իսահակին: Նա իսկապե՞ս լսում է Աստծո ձայնը, թե՞ դա վատ երազ է: «*Անկարելի է, - մտածում է նա: - Մի՞թե սա հնարավոր է: Ես սիրում եմ որդուս: Ես չեմ կարող սպանել Իսահակին: Ես խոստում ունեմ, որ նրանից թագավորներ և ազգեր են ծնվելու: Ինչպե՞ս այդ խոստումը կկատարվի, եթե սպանեմ նրան*»:

Աբրահամն աղաղակում է.

- Ի՞նչ: Ինչպե՞ս Դու կարող ես այսպիսի բան պատվիրել ինձ: Դու խոստացար, որ նրանից ազգեր են ծնվելու:

Չկա ոչ մի պատասխան Աստծուց. միայն լռություն:

Աբրահամն ընկնում է զգացմունքային փոթորկի մեջ: Համոզված եմ՝ այդ գիշեր նա չկարողացավ քնել: Մեզնից քանի՞սը կտրամադրեին երկու շաբաթ, ամիս կամ նույնիսկ՝ տարի, որպեսզի մտածեին այդ պատվերի մասին և, ի վերջո, համոզվեին, որ այն ողջամիտ է:

Այնուամենայնիվ, Աբրահամն այդպիսին չէր: Գրված է. «Չաջորդ օրը՝ վաղ առավոտյան, Աբրահամը վեր կացավ և համեստեց իր էջը» (Ծննդոց 22.3, NIV): Նա *անմիջապես* հնազանդվեց:

Դուք երբևէ շփվե՞լ եք ինչ-որ մեկի հետ, ով թեթևամտորեն ասում է. «Արդեն մի քանի ամիս է՝ Աստված աշխատում է ինձ հետ այսինչ հարցում», և ծիծաղելով փոխում է թեման: Եթե մտածեք, դա ողբերգություն է, քանի որ, փաստորեն այդ մարդը պարծենում է, որ չունի աստվածային երկյուղ:

Աստված պատվիրում է Աբրահամին՝ զոհաբերել իր կյանքի մեծագույն խոստումը, որին նա սպասել էր քսանհինգ տարի՝ առանց որևէ բացատրություն տալու: Իսահակին զոհաբերելն *անիմաստ է թվում* Աբրահամին. չնայած դրան՝ նա հնազանդվում է:

Երիտասարդ որդուն զոհաբերելը խորը *ցավ է պատճառում* Աբրահամին: Այդ ներքին ցավը հանգիստ չի տալիս նրան երեք օրվա ճանապարհի ընթացքում: Սկզբում՝ Աստծո ձայնը լսելուց անմիջապես հետո, մի փոքր ավելի հեշտ էր, բայց ամեն օրվա աստվածային լռությունը սաստկացնում է նրա ցավը: Այդ պայքարը հասնում է գագաթնակետին, երբ Աբրահամը զոհասեղան է պատրաստում իր սիրելի որդու հետ: Միևնույն է՝ Աբրահամը հնազանդվում է:

Ամենակարողը չի խոստանում Աբրահամին, որ եթե նա հնազանդվի, նրա որդու փոխարեն մեկ այլ զոհ կտրվի: Ի տարբերություն մեզ՝

Աբրահամը չունի Ծննդոց գիրքը և չգիտի իր պատմության ավարտը: Նա *չի տեսնում ոչ մի օգուտ* այդ պատվիրանից, բայց միևնույն է՝ հնազանդվում է:

Այսօր ամեն ինչ այլ կերպ է: Շատ-շատերն են ցանկանում տեսնել Աստծուն հնազանդվելու օգուտը, մինչև հնազանդվելը: Որպես ուուցիչներ՝ մենք հաճախ ենք ցույց տալիս Աստծուն հնազանդվելու անձնական օգուտը մեր ուղերձների մեջ: Որպես հեղինակներ՝ եթե մենք չնշենք, թե ինչ օգուտ է ստանալու ընթերցողը տվյալ գրքից մեր ստեղծագործության վերնագրի կամ ենթավերնագրի մեջ, այն չի վաճառվի:

Վերջապես, Աբրահամը տեղ է հասնում, բարձրանում է սարը, կառուցում է զոհասեղանը, կապում է Իսահակին և արդեն պատրաստ է խրել դանակն իր սիրելի որդու սրտի մեջ: Նա հնազանդվում է *մինչև վերջ*:

Մինչ դանակն Իսահակի գլխավերևում է, հանկարծ մի հրեշտակ է հայտնվում և գոչում է. «Ձեռքդ տղային մի՛ դիպցրու և նրան մի բան մի՛ արա, որովհետև հիմա իմացա, որ դու Աստծուց վախենում ես» (Ծննդոց 22.12):

Որտեղի՞ց այդ հրեշտակը գիտեր, որ Աբրահամը վախենում էր Աստծուց: Որովհետև նա անմիջապես հնազանդվեց, երբ դա անիմաստ էր թվում, ցավոտ էր և որևէ օգուտ չէր խոստանում, և արեց դա մինչև վերջ: Նա մեծահարուստ էր, և ամենաթանկը նրա համար՝ իր որդին էր: Բայց Աբրահամի գլխավոր նպատակը հարստությունը չէր. նրա առաջնահերթությունը Աստծուն հնազանդվելն էր:

Աստվածային երկյուղը պատրաստում է մեզ՝ առատությունը, միջոցները և հարստությունը ողջամտորեն տնօրինելու համար: Աստվածաշունչը հենց սա նկատի ունի՝ ասելով. «Տիրոջ օրհնությունը հարստացնում է, և Նա տրտմություն չի ավելացնում դրան» (Առակաց 10.22, NKJV):

Անմիտ մոտեցում

Եթե համեմատենք Հիսուսի աշակերտ Յուդային Աբրահամի հետ, շատ մեծ տարբերություն կտեսնենք: Յուդան հանգիստ անտեսում էր ճշմարտությունը, եթե դա ձեռնտու էր նրան: Նա միջոցներ էր յուրացնում ծառայության գանձանակից, ստում էր, չէր հոգում աղքատների մասին, կեղծավոր էր և, ի վերջո, դավաճանեց իր Առաջնորդին (տե՛ս Մատթ. 26.25,49 և Յովհ. 12.6, 13.2): Նրա դատողությունը մթազնած էր: Աստվածային երկյուղ չունենալու պատճառով նա չէր կարողանում զանազանել ճիշտը՝ սխալից, բարին՝ չարից:

Մեկ անգամ մի հարուստ կին թանկարժեք օժանելիքի մի ամբողջ շիշ լցրեց Հիսուսի վրա: Հուդան վրդովվեց և բոլորի առջև քննադատեց նրա «անմիտ» արարքը. «Այդ օժանելիքը մի տարվա աշխատավարձ արժեր: Այն պետք է վաճառվեր, իսկ ստացված փողը՝ բաժանվեր աղքատներին» (տե՛ս Հովհ. 12.5, NLT): Նրա մեկնաբանությունը տրամաբանական և համոզիչ էր, և նույնիսկ ազդեց այլ աշակերտների վրա: Նրանք նույնպես միջամտեցին՝ դատապարտելով նրա արարքը:

Հիսուսը շտկեց Հուդայի ստեղծած ազդեցությունը՝ ասելով. «Հանգիստ թողեք նրան: Ինչո՞ւ եք քննադատում նրան՝ Իմ հանդեպ նման բարի բան անելու համար... Այս կնոջ արարքի մասին կհիշեն և կպատմեն» (Մարկոս 14.6,9, NLT): Հիսուսն անվանեց այդ կնոջ արարքը *բարի* և *մնայուն*. Հուդան դատապարտեց նրա արարքը՝ անվանելով *վատ* և *վաղանցիկ*: Նրա զանազանելու կարողությունն աղճատվել էր: Նա չէր զգում այն, ինչ Աստծո սրտում էր:

Կարդացե՛ք անմիջապես հաջորդ խոսքը.

«Դրանից հետո Իսկարիովտացի Հուդան՝ տասներկու աշակերտներից մեկը, գնաց գլխավոր քահանաների մոտ, որ պայմանավորվեին Հիսուսին նրանց մատնելու համար» (Մարկոս 14.10, NLT):

Սա արդեն վերջին կաթիլն էր: Հուդան մինչև կոկորդը կուշտ էր. նա հոգնել էր Հիսուսի ղեկավարման ձևից: Նա հետևել էր այս Գալիլեացուն՝ սպասելով, որ Նա կվերականգներ Դավթի գահը: Համաձայն Եսայի մարգարեի՝ Մեսիան պետք է հավիտյան իշխեր: Ինչի՞ն էր Հիսուսը սպասում. չէ՞ որ արդեն երեք տարի էր անցել: Եթե Հիսուսը հաստատեր Իր թագավորությունը, Հուդան՝ որպես Նրա գլխավոր առաջնորդներից մեկը և Նրա զանձապահը, պատվավոր դիրք, հարստություն և իշխանություն կունենար:

Հուդան մտածեց. «*Ես կարագացնեմ ամեն ինչ: Եվ այլևս չեմ սպասի: Ես ուզում եմ իշխանություն, ազդեցություն և հարստություն ունենալ: Բավական է՝ ինչքան առաջնորդները ծաղրեցին ու հալածեցին ինձ: Ես այլևս չեմ ուզում, որ ինձ լուսնորդի գործակից համարեն: Եթե ես մատնեմ Նրան երկրի առաջնորդներին, Նա վերջապես ցույց կտա Իր զորությունը և կհաստատի Իր թագավորությունը, և ես բարձր պաշտոն կզբաղեցնեմ*»:

Միգուցե դուք վիճարկեք իմ մեկնաբանությունը Հուդայի դրդապատճառների մասին, սակայն ես հիմնավոր եմ համարում այն: Հուդան մշտապես տեսնում էր Հիսուսի զորությունը. Հիսուսը բժշկում էր հի-

վանդներին, հանդարտեցնում էր փոթորիկը, հարություն էր տալիս մեռելներին, անիծում էր թզենին, բացում էր կույրերի աչքերը և խուլերի ականջները և այլ հրաշքներ էր գործում: Հուդան լսում էր Հիսուսի հաճախակի խոսքերը Թագավորության մասին: Նա լսում էր, որ Պետրոսը և մյուս աշակերտները դավանում էին և նույնիսկ հայտարարում էին, որ Հիսուսը Մեսիան էր: Հիսուսի մեծությունը նրա առջև էր ամեն օր:

Այնուամենայնիվ, երբ Հիսուսին մահվան դատապարտեցին, նա գիտակցեց, որ սխալ էր մտածում, զղջաց իր արարքի համար և ինքնասպանություն գործեց՝ ինքն իրեն կախելով: Նա ծրագիրը չիրականացրեց իր եսակենտրոն ձգտումների պատճառով:

Աբրահամը և Հուդան պարզորեն ցույց են տալիս տարբերությունը Աստծո երկյուղն ունեցող և չունեցող մարդկանց միջև: Առաջինը զանազանելու կարողություն ուներ, երկրորդն ապրում էր խաբեության մեջ: Նրանց որոշումները պարզապես արտացոլում էին այն, ինչ իրենց սրտերում էր: Այս երկու տղամարդկանց կյանքի ավարտը շատ էր տարբերվում մեկը մյուսից: Երկուսն էլ հիշվեցին, բայց՝ տարբեր պատճառներով:

Բոլորս էլ հիշվելու ենք. դրանում կասկած չկա, քանի որ մենք հավիտենական էակներ ենք: Մենք պետք է տանք մեզ հետևյալ հարցը. ինչպե՞ս ենք ցանկանում, որ մարդիկ հիշեն մեզ: Այս հարցի պատասխանը որոշելու է ձեր երկյուղն Աստծո հանդեպ:

Սա՛ է ամենը

Մենք պետք է մաքուր սիրտ ունենանք, ոչ թե մշուշոտ, որպեսզի մեր դատողությունը ողջամիտ լինի: Այդ դեպքում, երբ անհրաժեշտ լինի որոշել՝ արդյո՞ք որևէ նախաձեռնություն ոգեշնչված է Աստծուց, թե՞ պարզապես բարի է թվում, բայց վաղանցիկ է, մենք չենք շփոթվի: Մենք իմաստուն կերպով կընտրենք մեր կողակցին, մեր շփման շրջանակը, մտերիմ ընկերներին, մեր կարիերան, հնարավորությունները, ներդրումները, երեխաներին դաստիարակելու ձևը, եկեղեցին, որտեղ պետք է ծառայենք, կրթությունը և բազմաթիվ այլ բաներ, որոնք պետք է ընտրենք կյանքում:

Հասնելով իր կյանքի ավարտին՝ մեծ փառք վայելելուց և էլ ավելի մեծ անմտություն գործելուց հետո, Սողոմոնը բացականչեց. «Սա՛ է ամենը: Ահա իմ վերջնական եզրակացությունը. վախեցի՜ր Աստծուց և հնազանդվի՜ր Նրա պատվիրաններին, որովհետև սա յուրաքանչյուրի պարտականությունն է: Աստված կդատի մեզ այն ամենի համար,

ինչ անում ենք, ներառյալ ամեն ծածուկ բանի՝ թե՛ բարի, թե՛ չար» (Ժողովող 12.13,14, NLT):

Սողոմոնը խելագար դարձավ. նա կորցրեց իր զանազանելու կարողությունը և արդեն անկարող էր տարբերել, թե ինչն էր ճշմարտապես բարի, իսկ ինչը՝ ոչ: Աստված ցույց է տալիս նրա խելագարությունը Ժողովող գրքի միջոցով: Բայց հրաշալին այն է, որ մենք տեսնում ենք, թե ինչպես Սողոմոնը վերադարձավ ողջամիտ դատողությանը: Նա հասկացավ, որ կյանքում չկա ավելի կարևոր բան, քան աստվածային երկյուղը պահելը: Իր իսկ խոսքերով՝ «Սա՛ է ամենը»:

Իմ ընկեր, եթե դուք ցանկանում եք տեսնել կյանքն այնպես, ինչպես Աստված է տեսնում, ընկալել և ճանաչել վերին իմաստությունը, ընտրե՛ք Տիրոջ երկյուղը: Դուք երբեք չեք զղջա ձեր ընտրության համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

«Ինչպես Դու Ինձ ուղարկեցիր աշխարհ,
Ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ»:
— Յովհաննես 17.18

Մարդու համար սահմանված
նպատակը ո՛չ երջանկությունն է,
ո՛չ էլ առողջությունը,
այլ՝ սրբությունը:
— Օսվալդ Չեմբերս

Եկե՞ք մեկ քայլ ետ գնանք և նայենք ընդհանուր պատկերին: Աստված խորապես և սրտանց սիրում է ձեզ: Նա միայն ցանկանում է լավագույնը ձեզ համար: Այն ամենը, ինչ Աստծուց է, բարի է, սակայն ամեն բարի բան չէ, որ Աստծուց է: Այսպիսով, գոյություն ունեն *բարի* բաներ, որոնք կարող են թույլ չտալ մեզ ստանալ *լավագույնը*: Բոլորս ցանկանում ենք ստանալ լավագույնը, բայց դրան հասնելու ճանապարհը միշտ չէ, որ ակնհայտ է. այն գտնելու համար անհրաժեշտ է զանազանելու կարողություն ունենալ:

Մեր երկրային ընթացքի մեջ կա ինչ-որ մեկը՝ բացի Աստծուց, որի հետ մենք պետք է գործ ունենանք՝ սատանան, ով մեր թշնամին է: Սատանայի գլխավոր մտադրությունն է՝ ցավ պատճառել մեզ և դրանով խոցել մեզ սիրող Աստծո սիրտը: Սուրբ գիրքը պնդում է, որ մեր թշնամին «քողարկվում է լույսի հրեշտակի կերպարանքով», ինչից հետո գրված է. «Նրա ծառաները նույնպես քողարկվում են արդարության ծառաների կերպարանքով» (Բ Կորնթացիների 11.14,15, NLT):

Գոյություն ունեն բազմաթիվ ընտրություններ և ճանապարհներ, որոնք բարի են թվում, բայց դրանց վերջնական արդյունքը տրտմություն, թշվառություն, կորուստ և մահ է (տե՛ս Առակ. 14.12): Մտածե՛ք այս մասին. մեր թշնամին, նրա ծառաները և նրա ճանապարհները՝ այն ամենը, ինչի վերջնական նպատակը մեր կործանումն է, քողարկված են *բարու* տես-

քով: Աստվածաշնչում գրված չէ, որ նրանք *կարող են* քողարկվել, այլ՝ որ նրանք քողարկված *են*: Այնպես որ, հիշե՛ք հետևյալը. սովորաբար այն, ինչն ամենից վտանգավորն է ձեզ համար, չի հայտնվի ձեզ բացահայտ չարիքի կերպարանքով, այլ կքողարկվի բարու տեսքով:

Քրիստոնեության վաղ շրջանում մեր թշնամին լարեց իր ուժերը՝ եկեղեցին կործանելու համար: Հավատացյալները հալածվում էին, կտտանքների էին ենթարկվում և սպանվում էին: Բայց որքան ավելի էր մեր թշնամին փորձում կործանել Աստծո ժողովրդին, այնքան եկեղեցին ավելի ազդեցիկ էր դառնում: Քանի որ սատանան հիմար չէ (այլ նույնիսկ՝ շատ խելացի), նա եզրակացրեց, որ Աստծո ժողովրդին կործանելու համար պետք է առաջարկել նրանց բարի կյանք՝ հեռու Աստծո իմաստությունից: Ըստ էության, սա նույն մարտավարությունն է, որը նա կիրառեց Եդեմի պարտեզում:

Միգուցե այսօր, տեսնելով սատանայի դարեր շարունակ իրակա-նացվող աննկատ և խորամանկ մարտավարական քայլերի հետևանքները, մենք ավելի լավ հասկանանք, թե որքան արդյունավետ է նա: Բոլորս հայտնվում ենք այնպիսի վիճակում, երբ ընդունել ենք ճշմարտության այլ տարբերակներ՝ *իրական* ճշմարտության փոխարեն, որոնք լավ և հարմարավետ են թվում: Մենք ամենուր ներկայացնում ենք Հիսուսի բարությունը և Նրա դերը՝ որպես Փրկիչ (ինչը միանշա-նակ ճշմարիտ է), բայց թերազնահատում ենք Նրա իշխանության և ազդեցության արժեքը, զորությունը և չափը մեր կյանքում: Մենք ընդունել ենք Աստծո գերիշխանությունը և մեր արդար դիրքը Նրա առջև, բայց անտեսել ենք սրբությանը ձգտելը և հետևաբար՝ Նրա պատվիրաններին ականջ դնելու և հնազանդվելու պատասխանատվությունը: Մեր կողմից կազմված «բարի» վարդապետությունների պատճառով մեր վարքի և կենսաճի մաքրությունը գրեթե անտեղի է դարձել:

Իրենց քրիստոնեական ընթացքի մեջ շատերը հավատացել են, որ պետք է պահպանել՝ բազմապատկելու փոխարեն: Նրանք պարզապես մի կերպ գոյատևում են, ոչ թե ձգտում են առատությանը: Ըստ էության, մենք կազմել ենք աստվածաբանություն՝ հիմնված մեր իսկ դատողության վրա և ամրագրված առանձին սուրբգրային հատվածներով, փոխարենը ընդունելու Աստծո խոսքի ամբողջական խորհուրդը՝ որպես մեր բացարձակ հեղինակությունը այն ամենում, ինչ Երկինքը նախատեսել է մեզ համար:

Այս միտմանը կարելի է վերջ տալ և պետք է վերջ տրվի: Ժամանակն է, որ կրկին ուսումնասիրենք Աստվածաշունչը և անկեղծորեն խնդրենք Սուրբ Հոգուն՝ առաջնորդել մեզ ճշմարտությունը ճանաչե-

լու մեջ: Մենք այլևս չպետք է կարդանք Աստվածաշունչն այնպես, ինչպես հավատում ենք, այլ մոտենանք Աստվածաշնչին անկեղծորեն, բաց մտքով ու սրտով, և հավատանք այն ամենին, ինչ կարդում ենք՝ խնդրելով Սուրբ Հոգուն՝ բացահայտել և հեռացնել մեր կանխակալ ենթադրությունները:

Եկեղեցու առաջնորդ, ես հորդորում եմ ձեզ՝ սովորեցնել Աստծո ամբողջ խորհուրդը: Թող որ ձեր գլխավոր դրդապատճառը լինի ոչ թե հետևորդների մեծ բանակ հավաքելը, այլ Աստծո հոտը ճշմարտությամբ սնուցելը և կորսվածներին ճշմարտապես հասնելը՝ փրկության լիարժեք աստվածաշնչյան ուղերձով: Եթե ձեր առաջնահերթ նպատակն է՝ համոզել եկեղեցի հաճախողներին, որպեսզի հաջորդ շաբաթ նույնպես վերադառնան, խնդրե՛ք Սուրբ Հոգուն ներել ձեզ և ուղղե՛ք ձեր ջանքերն Աստծո հոտը ճշմարտությամբ սնուցելուն: Եղե՛ք ժամանակակից, թարմ և նորարար ձեր *մեթոդների* մեջ, բայց անժամանակյա՝ ձեր *ուղերձների* մեջ:

Հավատացյալ, որտեղ էլ լինի ձեր ազդեցության շրջանակը՝ դասասենյակում, թե լսարանում, լաբորատորիայում, թե գրասենյակում, դաշտում, տանը, թե գործարար աշխարհում, ապրե՛ք սիրով լի սրտով և խոսե՛ք ճշմարտությունը մարդկանց հետ շփվելիս: Թող որ մարդիկ երկյուղածություն ապրեն և վկայեն, որ տեսնելով ձեզ՝ տեսնում են Հիսուսին: Թող որ նրանք վերապրեն Աստծո ներկայությունը ձեր կյանքում: Եթե դուք ձգտեք ճշմարիտ սրբությանը, Նրա մեծությունը կձառագի ձեզնից:

Եթե մենք չապրենք ըստ Քրիստոսի պատվիրանների, մենք չենք ունենա Նրա ներկայությունը, և Նա հայտնի չի դառնա աշխարհին Իր եկեղեցու միջոցով: Անկեղծ ասած՝ մենք ինքներս կտուժենք դրանից, բայց առավել շատ կտուժի մեր հասարակությունը: Առաջին հերթին՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունը ծածկված է մնալու այնպես որ, կորսվածները չեն կարողանա կապ հաստատել այն միակ Անձնավորության հետ, Ով կարող է լիարժեք դարձնել նրանց: Երկրորդը՝ մեր հավատակիցներն անպաշտպան կդառնան «փոխզիջում» կոչվող վարակիչ հիվանդությունից, որը կարող է հեռացնել նրանց Աստծո սրտից և ներկայությունից:

Հիսուսն այսպես ասաց. «Ես նրանց համար Իմ անձը սուրբ եմ անում...» (Հովհաննես 17.19): Նա առանձնացրեց Իրեն, որպեսզի հնազանդվի Հորը՝ հանուն Իրեն շրջապատող մարդկանց: Նա ցույց տվեց Իր գլխավոր դրդապատճառը՝ ավարտելով Իր խոսքը. «...որ նրանք էլ ճշմարտությամբ սրբված լինեն»:

Մինչև Նրա վերադարձը, դուք և ես՝ միակ Յիսուան ենք, որին այս աշխարհը տեսնելու է: Եկե՛ք ցույց տանք նրանց ճշմարիտ Յիսուսին, ոչ թե երևակայական ու անզոր Յիսուսին: Եկե՛ք չբավականանանք ցանկացած բանով, ինչը պակաս է լավագույնից: Եկե՛ք հարենք ճշմարտությանը և տեսնենք մեր անսասան, սիրով լի՝ հնազանդության ճշմարտապես բարի պտուղները:



Ունեցե՛ք երկարատև կյանք, ձգտե՛ք սրբությանը և հասե՛ք հաջողությունների ձեր նախաձեռնություններում: Այսպես վարվելով՝ դուք դրական փոփոխությունների պատճառ կդառնաք այլ մարդկանց կյանքերում:

«Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ
 Եվ անեղծ կանգնեցնել
 Իր փառքի առջև՝ անբիծ ցնծությամբ,
 Այն մեկ իմաստուն Աստծուն
 Եվ մեր Փրկչին
 [մեր Տեր Յիսուս Զրիստոսով],
 Փա՛ռք և մեծություն,
 Չորություն և իշխանություն
 [բոլոր դարերից առաջ]:
 Ե՛վ հիմա, և՛ ամեն հավիտյաններում:
 Ամեն՛» (Յուդա 24,25):

Սիրելի՛ ընկեր,

«Բարի՞, թե՞ Աստված»-ը՝ հասարակ գիրք չէ: Այս ուղերձը կարող է ոգեշնչել մարդկանց՝ միանալու սրբության շարժմանը: Այժմ դուք գիտեք, թե ինչպես կարելի է ձեր կյանքի առատությունը հնազանդեցնել Յիսուսի իշխանությանը և շնորհքին: Ես ցանկանում եմ սպառազինել ձեզ այս հայտնությանմբ, որ տանեք այն ձեր ազդեցության շրջանակում գտնվող մարդկանց:

Դուք կարող եք միանալ այս շարժմանը՝ փոխանցելով այն, ինչ սովորեցիք, ձեր ընկերներին, ընտանիքին և շատ այլ մարդկանց: Պողոս առաքյալը մեկն էր, ով սովորեցնում էր մի խումբ մարդկանց մի փոքրիկ դպրոցում, և դա բավական էր, որ Ավետարանը ընդամենը երկու տարում հասներ նրանց, ովքեր ապրում էին Ասիայում: Այդ մի խումբ մարդիկ դարձան Աստծո ներկայությունը կրողները (տե՛ս Գործք 19.1-10): Ի՞նչ կարող է անել Աստված մեր միջոցով, եթե մենք՝ Նրան սիրողներս, միաբան լինենք:

Դուք կարող եք կիսվել այս ուղերձով ձեր առօրյա կյանքում: Դուք կարող եք օգտագործել այն՝ որպես ուսումնասիրության առարկա.

- Փոքր խմբերում
- Եկեղեցիներում
- Աշխատանքային ակումբներում
- Ծառայողական դպրոցներում
- Եվ շատ այլ վայրերում

Անկախ այն բանից՝ դուք կօգտագործեք մեր գաղափարները, թե՛ ձերը, իմ թիմը պատրաստ է աջակցել ձեզ: Մենք կստեղծենք լուծումներ հատուկ ձեզ համար՝ տրամադրելով զեղչեր, անվճար նյութեր և ավելին: Բացի այս գրքից՝ մենք պատրաստել ենք վեց դասից բաղկացած «Բարի՞, թե՞ Աստված» դասընթացը՝ թե՛ առողիո, թե՛ վիդեո տարբերակներով: Այս ամենի նպատակն է՝ օգնել ձեզ, որ հասցնեք այս ուղերձը ձեզ շրջապատող մարդկանց:

Շնորհակալություն, որ համագործակցում եք մեզ հետ՝ Աստծո խոսքն ամենուր տարածելու համար:

Ի սրտե՛

Ջոն Բիվեր



ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԵՐ
ԵՎ
ՔՆՆԱՐԿՄԱՆ
ՀԱՐՑԵՐ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

Կարդացե՛ք գլուխներ 1-3-ը:

Այս շաբաթ դիտե՛ք տեսանյութ 1-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Եվան որոշեց ուտել արգելված ծառի պտուղը, որովհետև այն *բարի, հաճելի* և *ցանկալի* էր թվում: Նկարագրե՛ք այս հատկանիշները: Ի՞նչ է նշանակում՝ բարի թվալ: Իսկ՝ հաճելի: Իսկ՝ ցանկալի: Ինչպե՞ս այս երեքից ամեն մեկը կարող է հեռացնել մեզ Աստծուն հնազանդվելուց:
2. Ամբողջ պատմությունը Եդեմի պարտեզում կախված էր միակ բանից, որն Աստված Իր իշխանությամբ արգելել էր: Ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատմությունից վստահության և մարդկային բնության մասին: Ինչպե՞ս մենք կարող ենք հակառակվել Աստծուց որոշված սահմանները խախտելու միտումներին:
3. Գրքերը, համացանցում հասանելի աուդիո և վիդեո նյութերը, բլոգները և շատ այլ միջոցներ, որոնք սովորեցնում են մեզ Աստծո մասին, արժեքավոր են: Այնուամենայնիվ, ձեր վերաբերմունքն այդ նյութերի հանդեպ որևէ կերպով փոխվե՞ց, երբ հասկացաք տարբերությունը հայտնված և փոխանցված գիտելիքի միջև: Եթե այո՝ ինչպե՞ս:
4. Ոմանք համարում են, որ Աստված *առնչություն ունի* բարու հետ, այնինչ՝ մյուսները համարում են Նրան բարու *սկզբնապատճառը*: Պատմությունը հարուստ երիտասարդ իշխանի մասին՝ ցույց է տալիս տարբերությունը այս երկու մոտեցումների միջև: Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ճիշտ պատկերացում ունենք բարու մասին:
5. Դուք հավատո՞ւմ եք Աստվածաշնչի ճշգրտությանը և հեղինակությանը: Կարդացե՛ք Բ Տիմոթեոս 3.16-ը ևս մեկ անգամ: Արդյո՞ք կան տարածայնություններ ձեր համոզմունքների և այս խոսքի բովանդակության միջև: Քննարկե՛ք դրանք այն ամենի լույսի ներքո, ինչ սովորեցիք այս շաբաթվա ընթացքում:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

«Տերը բարի է
յուրաքանչյուրի հանդեպ»:
— Սաղմոս 145.9, NLT

Պատմությունն այն մասին, թե ինչպես սատանան խորամանկությամբ խաբեց Եվային, սթափեցնող է: Երբ Եվան խաբվեց՝ հավատալով, որ Աստված ինչ-որ բարի բան էր պահել իրենից, նա չէր գտնվում իր հիասթափությունները հաղթահարելու փուլում: Նա չէր սգում վերջերս ունեցած կորստի պատճառով կամ չէր վերականգնվում իր հանդեպ ցուցաբերված անարդար վերաբերմունքից: Նա ապրում էր կատարյալ միջավայրում, որտեղ չունեի ոչ մի կարիք և ամեն օր վայելում էր շփումն Աստծո հետ:

Աստծուն բարու սկզբնաղբյուրը համարելու համար մենք պետք է անխախտ համոզվածություն ունենանք, որ Աստված բարի է: Նույնիսկ Եդեմի պարտեզում սատանային հաջողվեց վիճարկել այս ճշմարտությունը: Այսօր մենք բախվում ենք ավելի շատ գործոնների, որոնք կարող են վիճարկել մեր հավատքն Աստծո բարության հանդեպ:

Ի տարբերություն Եվայի՝ դուք, անկասկած, վերապրել եք հիասթափություն, կորուստ, սխալ վերաբերմունք, շփոթություն, կարիք կամ ցավ: Մենք կարող ենք չնկատել այս բաների ազդեցությունը, քանի դեռ մեր ցանկությունները չեն հակառակվում Աստծո հրահանգներին: Բայց երբ որևէ գայթակղություն է գալիս, մեր ներսում բոլոր կասկած հարուցող հարցերը, որոնք դեռ պատասխանված չեն, սկսում են շնչալ մեր մտքերում: Մենք մտածում ենք, որ միգուցե Աստված ինչ-որ բան է պահում մեզնից, և սկսում ենք կասկածել, որ օգուտ կստանանք, եթե վարվենք Նրա խոսքով: Բայց հիշե՛ք Առակաց 14.12-ը. «Կա ծանապարհ, որը ճիշտ է թվում մարդուն, բայց դրա վերջը՝ մահվան ծանապարհ է» (NKJV): Աստված կամք ունի մեզ համար, և ոչինչ՝ դրանից դուրս, չի պարզևի մեզ տևական կյանք, ուրախություն, բավականություն կամ օրհնություն՝ անկախ այն բանից, թե որքան լավ է դա թվում:

Հաջորդ շաբաթվա ընթացքում ես խրախուսում եմ ձեզ անկեղծորեն որոշել, թե որքանով եք դուք հավատում Աստծո բարությանը: Հարցրե՛ք Սուրբ Հոգուն, թե արդյո՞ք ձեզանում որևէ հիշողություն կամ

համոզմունք կա, որի պատճառով դուք կարող եք չվստահել կամ չհնազանդվել Աստծուն: Երբ պարզեք դա, գտե՛ք խոսքեր Աստվածաշնչից, որոնք հայտնում են Աստծո ճշմարտությունը ձեր իրավիճակի մասին, և հռչակե՛ք դրանք: Խոնարհաբար խնդրե՛ք Աստծո Հոգուն՝ նորոգել ձեր միտքն Իր Խոսքով: Նրա ճշմարտությունը դուրս կբերի ձեզ ազատության մեջ:

Ստորե՛ք

«Գոհացե՛ք Տիրոջից, որովհետև Նա բարի է: Նրա հավատարիմ սերը մնում է հավիտյան» (Սաղմոս 107.1, NLT):

Կիրառե՛ք

Հետուն և Իսրայելի ժողովուրդը պետք է անցնեին Հորդանան գետը, որպեսզի մուտք գործեին Խոստման երկիր: Հունձքի ժամանակն էր, և գետը վարարում էր իր ափերից: Այնուամենայնիվ, Աստված միջամտեց և կանգնեցրեց ջրի հոսքը, և ամբողջ Իսրայելն անցավ գետը չոր գետնի վրայով: Դրանից հետո Աստված պատվիրեց Հետունին, որ նա հանձնարարեր ժողովրդին՝ քարակոյտ կանգնեցնել գետի ափի մոտ՝ հիշատակի համար, որպեսզի նրանք մշտապես հիշեին, թե ինչ էր Նա արել իրենց համար:

Հաճախ ավելի հեշտ է հիշել վատ բաները, որոնք տեղի են ունեցել ձեր կյանքում, քան այն բարի բաները, որոնք Աստված արել է ձեզ համար: Այս շաբաթվա ընթացքում սկսե՛ք «հուշարձաններ» կառուցել՝ նվիրված այն բարի բաներին, որոնք Աստված կատարել է ձեր կյանքում: Նոթատետր գնե՛ք, նշումների բաժին բացե՛ք ձեր հեռախոսի մեջ, կարճ ձայնագրություններ արե՛ք կամ գտե՛ք այլ միջոցներ՝ հիշելու համար այն պահերը (փոքր, թե մեծ), երբ տեսել եք Աստծո հավատարմությունը: Այս հիշողությունները կդառնան վկայություններ, որոնք կխրախուսեն ձեր սիրտը և կբորբոքեն ձեր հավատքը, երբ դժվարությունները կամ կասկածները փորձեն տարհամոզել ձեզ, որ Աստված բարի է:

ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Կարդացե՛ք գլուխներ 4,5-ը:

Այս շաբաթ դիտեք տեսանյութ 2-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Քննարկե՛ք Հիսուսի դիրքը՝ որպես Տեր, և Նրա կատարած աշխատանքը՝ որպես Փրկիչ: Ի՞նչ տարբերություն կա այս երկուսի միջև: Որքանո՞վ է դա համապատասխանում այն ամենին, ինչը դուք լսել եք և ինչին հավատացել եք: Արդյո՞ք ինչ-որ բան ձեր մտքում կամ վարքի մեջ պետք է փոխվի, որպեսզի ձեր կյանքը համապատասխանի Հիսուսի իշխանության մասին Աստվածաշնչյան ուսմունքին:
2. Եթե այսօր բոլորս նոր երկիր տեղափոխվելիս լինեինք, այնտեղ մուտք գործելու համար պետք է համաձայնեինք ապրել ըստ դրա օրենքների և չափանիշների: Արդյո՞ք դուք այսպես եք դիտարկել ձեր հարաբերություններն Աստծո հետ: Ինչո՞ւ, կամ՝ ինչո՞ւ ոչ:
3. Պատկերացրեք, որ գրուցում եք ինչ-որ մեկի հետ, ով ցանկանում է քրիստոնյա դառնալ: Հիմնվելով այս շաբաթվա ընթացքում սովորածի վրա՝ ի՞նչ կասեիք նրան:
4. Կարդացե՛ք Մարկոս 8.34,35-ը: Մենք տեսանք, որ անձն ուրանալու ցանկությունը և անձն ուրանալը՝ նույնը չեն: Բացատրե՛ք, թե ինչու են մարդիկ Հիսուսի խոսքերը կատարելու փոխարեն սահմանափակվում միայն ցանկանալով:
5. Կրկին կարդանք Մատթեոս 7.21-ը: Հիսուսը թվարկում է չորս դրական հատկանիշ, որոնք կարող են ունենալ նույնիսկ նրանք, ովքեր ձջմարտապես չեն հետևում Իրեն. հավատք Իր ուսմունքների հանդեպ, զգացմունքային ներգրավվածություն, մասնակցություն Ավետարանի տարածմանը և ծառայության գործին: Մենք գիտենք, որ Աստված չի ցանկանում, որ ծառայենք՝ դատապարտությունից կամ վախից դրդված: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս պետք է արձագանքենք այս հայտնությանը:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

«Բայց մենք Երկնքի
քաղաքացիներ ենք, որտեղ ապրում է
Տեր Հիսուս Զրիստոսը»:
— Փիլիպեցիների 3.20, NLT

Նոր կտակարանի տեսանկյունից, «Հիսուսը՝ Տերն է» դավանանքը, ըստ էության, ամփոփում է քրիստոնեությունն ամբողջությամբ: Ըստ Հռոմեացիների 10.9-ի՝ քրիստոնեական կյանքն սկսվում է, երբ մարդն ընդունում է Հիսուսի իշխանությունը: Այնուամենայնիվ, մեզնից շատերի համար «Հիսուսը՝ Տերն է» արտահայտությունն այնքան էլ իմաստավորված չէ: Մենք ասում ենք, երգում ենք և աղոթում ենք՝ օգտագործելով այն, բայց չենք գիտակցում այն փաստը, որ Հիսուսին *Տեր* անվանելը նշանակում է՝ ընդունել Նրա գերագույն իշխանությունը մեր կյանքում:

Մինչև հավատքի կյանք մուտք գործելը, մենք այս աշխարհի քաղաքացի էինք: Մենք կարիք չունեինք իմանալու Աստծո կամքը, ո՛չ էլ՝ փնտրելու այն մեզ համար: Սակայն հիմա մենք այլևս այս աշխարհի քաղաքացիներ չենք: Մենք Աստծո թագավորության՝ Երկնքի թագավորության քաղաքացիներ ենք: Ամեն բան մեր կյանքում պետք է համապատասխանի Երկնքի թագավորության չափանիշներին և արտացոլի դրա գերագույն իշխանի՝ Հիսուս Զրիստոսի բնությունը:

Ինչպիսի՞ն է Նրա բնությունը: Այս հարցի պատասխանն իմանալու համար կարդացե՛ք Հիսուսի պատմությունը Գեթսեմանիում, որը գրված է Մարկոս 14.32-42-ում: Գեթսեմանիից անմիջապես հետո Հիսուսը մատնվում և հանձնվում է հռոմեացիներին՝ խաչվելու համար: Հատուկ ուշադրություն դարձրեք 36-րդ խոսքի վերջին, որտեղ Հիսուսն ասում է Իր Հորը. «Սակայն Ես ցանկանում եմ, որ կատարվի Զո՛ւ կամքը, ոչ թե Ի՛մը» (NLT):

Խաչը բարձրանալը հնազանդության մեծ քայլ էր, բայց ճշմարտությունն այն է, որ չկան հնազանդության փոքր քայլեր: Երբ մենք պատվում ենք Հիսուսին՝ որպես Տիրոջ, մենք հնազանդվում ենք Նրա կամքին, նույնիսկ երբ փոխզիջումը շատ աննշան է թվում: Հնազանդվելով՝ դուք անհարմար վիճակում եք հայտնվում կամ վնասում եք ձեր համբավը: Մենք ասում ենք. «Ես ցանկանում եմ Զո կամքը» ամեն իրավիճակում:

Դուք երբևէ ընդունե՞լ եք Հիսուսին այս պայմաններով: Թե՞ ձեր կյանքում դեռ կա այնպիսի բան (միզուցե՛ պարբերաբար կրկնվող մեղք կամ եսակենտրոնություն), ինչը դուք մշտապես ավելի բարձր եք դասում Աստծո հանձնարարություններից: Կարիք չկա, որ դատապարտություն կամ ամոթ զգաք: Այնուամենայնիվ, ժամանակն է, որ ձգտեք ապրել նոր կյանքով: Աղոթքով եկեք Աստծո առջև և խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ օգնել ձեզ ճշմարտապես պատվել Հիսուսին՝ որպես Տիրոջ: Երբ ժամանակ անցկացնեք Նրա ներկայության և խոսքի մեջ, Նա կսովորեցնի ձեզ ապրել Երկնքի քաղաքացու պես:

Ստորե՛ք

«Գցե՛ք ձեզ ամբողջ սրտով և լրիվ ժամանակով... Աստծո վարվելակերպի մեջ» (Հռոմեացիների 6.13, MSG):

Կիրառե՛ք

Ավելի ուշ այս գրքում մենք կխոսենք այն մասին, թե ինչպես է Աստված զորացնում մեզ հնազանդությամբ ապրելու համար՝ առանց օրինապաշտության կամ ամոթի մեջ ընկնելու: Բայց այս շաբաթ ես խրախուսում եմ, որ անկեղծորեն ձեզ հարցնեք. *«Ես լիովին հնազանդեցրե՞լ եմ ինձ Հիսուսի իշխանությանը»:*

Բոլորս վրիպում ենք ինչ-որ բնագավառներում: Այնպես որ, ես առաջարկում եմ անել հետևյալը. Գտե՛ք ինչ-որ մեկին, ում սիրում և վստահում եք՝ ձեր կողակցին, մտերիմ ընկերոջ կամ եկեղեցական առաջնորդի, ով հավատում է ձեր ուժերին և ցանկանում է լավագույնը ձեզ համար: Պատմե՛ք նրան այն, ինչ սովորեցիք այս շաբաթ իշխանության սկզբունքի մասին և հարցրեք, թե արդյո՞ք նա տեսնում է որևէ փոխզիջում ձեր կյանքում, որը դուք դեռ չեք շտկել:

Եթե նա ասելիք ունի, լսե՛ք ուշադրությամբ և բաց սրտով, իսկ հետո աղոթքով ներկայացրեք նրա մեկնաբանություններն Աստծուն: Խնդրե՛ք Նրան հայտնել այն, ինչ ճշմարիտ էր այդ մարդու խոսքերի մեջ: Խոնարհությունը՝ ազդեցիկ զենք է խաբեության դեմ. այս պարզ կարգապահական քայլը կարող է արտասովոր փոփոխություն առաջացնել ձեզանում:

ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Կարդացե՛ք գլուխներ 6,7-ը:

Այս շաբաթ դիտե՛ք տեսանյութ 3-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

- Ցանկացած լավ նպատակ վտանգավոր է դառնում, երբ այն փոխարինում է մեր սրտում Աստծուն ծանաչելու և պատվելու ցանկությանը: Խոսե՛ք հետևյալ նպատակների մասին: Ի՞նչ առումով են դրանք բարի: Եվ հակառակը՝ ի՞նչ կերպով դրանք կարող են խանգարել, որ հետևենք Աստծուն, եթե մենք դարձնենք դրանք մեր առաջնահերթությունները:
 - Ֆինանսական ապահովություն
 - Համբավ
 - Ազդեցություն
 - Առատաձեռնություն
 - Մարդասիրական ջանքեր
 - Արդյունավետ ծառայություն
- Պատկերացրեք, որ Մովսեսի փոխարեն եք, երբ Աստված առաջարկեց ուղարկել Իսրայելի ժողովրդին Խոստման երկիր՝ առանց Իր ներկայության: Ձեր կարծիքով, այդ պահին ի՞նչը կօգներ ձեզ կայացնել այն որոշումը, որը կայացրեց Մովսեսը:
- Երբեմն մարդու փոխհարաբերություններն Աստծո հետ ավելի կենտրոնանում են այն բանի վրա, թե ինչ Աստված կարող է տալ իրենց, քան՝ թե ով է Նա: Թվարկե՛ք նման վերաբերմունքի մի քանի նշան: Եթե ձեր փոխհարաբերություններն Աստծո հետ ցույց են տալիս այս նշանները, ինչպե՞ս կարող եք շտկել ձեր ընթացքը:
- Կիսվե՛ք ձեր կարծիքով այն մասին, թե ինչ է նշանակում արդյունավետ կերպով հասնել այս աշխարհին՝ առանց այս աշխարհի ընկերը լինելու:
- Օրինապաշտությունը՝ ընդամենը աշխարհիկության մեկ այլ տեսակ է: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող ենք պաշտպանել մեր ընկերությունն Աստծո հետ և չունենանք կրոնական մտածելակերպ:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

«...Քո ներկայության մեջ
 ուրախության լիություն կա...»:
 — Սաղմոս 16.11, ESV

Հավատքի ամենամեծ փորձություններից մեկը, որը, հիմնականում, անվնաս է թվում՝ ճանապարհը շրջանցելը կամ կարճ ուղիով գնալն է:

Մովսեսին ընձեռվեց անապատում իր ճանապարհը շրջանցելու հնարավորություն: Նա անցել էր Եգիպտոսից մինչև Սինա սարը՝ տրտնջացող և ապստամբ ժողովրդի հետ, և խոստման երկիրը մուտք գործելու հեռանկարը պետք է որ շատ գրավիչ լիներ նրա համար: Այնուամենայնիվ, մի՞թե Մովսեսը կհամաձայներ խոստմանը՝ թողնելով Աստծո ներկայությունը:

Հազարավոր տարիներ անց Հիսուսը նույնպես Իր ճանապարհը շրջանցելու հնարավորության հանդիպեց անապատում: Երբ Հիսուսը նոր պետք է սկսեր Իր ծառայությունը, սատանան հնարավորություն տվեց Նրան՝ շրջանցելու Իր առջև դրված դժվարությունը և իշխանություն ստանալու բոլոր ազգերի վրա: Հիսուսը պետք է ընդամենը երկրպագեր նրան: Մի՞թե Հիսուսը փոխզիջման կգնար և հեշտորեն կստանար այն, ինչ Աստված տալու էր չարչարանքների միջոցով:

Այն, որ սատանան փորձեց իր մարտավարությունն Աստծո Որդու հետ, շատ բան է խոսում դրա արդյունավետության մասին: Ավելի ուշ մեր ուսումնասիրության մեջ կրկին կանդրադառնանք այս պատմությանը, իսկ այժմ կարևոր է նշել հետևյալը. Հիսուսը միակը չէր, ով հաջողությամբ դիմակայեց սատանայի խորամանկ հնարին: Անապատում Աստծո հետ մնալը Մովսեսը համեմատեց առանց Նրա խոստման երկիր մտնելու հետ և ընտրեց անապատը: Ինչո՞ւ նա այդպես վարվեց: Պատճառն այն է, որ նա գիտեր, թե ինչից էր զրկվելու:

Ես ցանկանում եմ, որ դուք կարողանաք սրտանց «այո» ասել հետևյալ հարցին. «Արդյո՞ք Աստծո ներկայությունը՝ իմ վերջնական նպատակն է»: Բայց որպեսզի ձեր պատասխանը մտավոր վարժութե-

յունից լինի ավելին, դուք նախ՝ պետք է կարողանաք պատասխանել մեկ այլ հարցի. դուք գիտե՞ք, թե ինչ է նշանակում՝ լինել Աստծո ներկայության մեջ:

Ի՛մ ընկեր, ես ցանկանում եմ, որ դուք սիրահարվեք Աստծո ներկայությանը՝ ինչպես Մովսեսը: Ցանկանում եմ, որ դուք այն աստիճան փափագեք մտերիմ լինել Նրա հետ, որ ոչ մի շրջանցում կամ կարծ ուղի չհրապուրի ձեզ: Նման ձգտում առաջանում է միայն՝ երբ մարդն անձամբ է վերապրում Աստծո ներկայությունը:

Հակոբոսը գրում է մեզ. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ» (4.8, ESV): Մոտենալը նշանակում է՝ ժամանակ հատկացնել աղոթելու, երկրպագելու և Աստծո խոսքը կարդալու համար՝ համարելով դա ոչ թե հանձնարարված առաջադրանք, այլ՝ հարաբերություններ կառուցելու միջոց: Փնտրելով Աստծուն այսօր՝ դուք ճիշտ որոշումներ կկայացնեք կյանքի խաչմերուկներին, որոնց դեռ հանդիպելու եք:

Ստորե՛ք

«Եթե փնտրեք Ինձ ամբողջ սրտով, դուք կգտնեք Ինձ» (Երեմիա 29.13, NLT):

Կիրառե՛ք

Ցանկացած փոխհարաբերության մեջ երկու կողմերից յուրաքանչ-յուրը պետք է ինչ-որ բան առաջարկի մյուսին, օրինակ՝ խրախուսանք, խորհուրդ և գործնական աջակցություն: Բայց առողջ փոխհարաբերությունների նպատակը՝ դիմացինից ինչ-որ բան ստանալը չէ. նպատակը՝ հենց դիմացինն է: Երբեմն մենք մոռանում ենք սա, երբ խոսքն Աստծո մասին է: Քանի որ Աստված այն ամենի աղբյուրն է, ինչի կարիքը ունենք, մենք կարող ենք այն աստիճան կենտրոնանալ Նրան խնդրանքներ ներկայացնելու վրա, որ մոռանանք Նրան ծանաչելու մասին:

Իհարկե, Աստված ցանկանում է, որ մենք ներկայացնենք մեր խնդրանքները: Բայց եթե դուք լրջորեն եք տրամադրված Աստծո ներկայությունը ձեր բարձրագույն նպատակը դարձնելու հարցում,

փորձե՛ք կենտրոնանալ Նրա վրա այս շաբաթվա ընթացքում, երբ ժամանակ տրամադրեք Նրան: Մտորե՛ք Աստծո բնավորության շուրջ: Իմացե՛ք, թե ինչն է ուրախացնում Նրան: Վերցրե՛ք մի պատմություն Սուրբ գրքից և մտորե՛ք, թե ինչպես է Նա հայտնվում այդ խոսքերում: Ես աղոթում եմ, որ այդ ժամանակվա ընթացքում դուք այնպիսի բաներ բացահայտեք, որոնք կդրդեն ձեզ ավելի խորապես սիրահարվել ձեր Արարչին:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Կարդացե՛ք գլուխներ 8,9-ը:

Այս շաբաթ դիտե՛ք տեսանյութ 4-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Հաճախ մարդիկ կարծում են, թե իրենց միտքն ուղղված է Աստծուն ճանաչելուն, սակայն պարզում են, որ այն շեղվում է այլ բանով: Ինչպե՞ս մարդը կարող է զանազանել, թե ինչին է իր միտքն իրականում ուղղված:
2. Շատ ժամանակակից մշակույթներում մարդիկ ծայրահեղությունների մեջ են հայտնվում. նրանք ձգտում են նմանվել հանրահայտ մարդկանց, ցանկանում են վարվել նրանց պես և նույնիսկ փորձում են հանդիպել նրանց, թեև չեն էլ ճանաչում: Ի հակադրություն դրան՝ Աստված խոստացավ, որ Իրեն փնտրողները կգտնեն Իրեն: Ձեր կարծիքով, ինչո՞ւ են մարդիկ հաճախ հակառակվում իրենց կյանքի փոփոխություններին, որոնք կօգնեին նրանց ճանաչել Աստծուն, բայց պատրաստ են շրջադարձային քայլերի դիմել՝ այլ մարդու ճանաչելու համար:
3. Ի՞նչ կարելի է անել՝ հավաստիանալու համար, որ դուք փնտրում եք Աստծո ներկայությունը, ոչ թե պարզապես ցանկանում եք լավ մթնոլորտ ստեղծել: Առաջարկե՛ք գաղափարներ թե՛ անհատական, թե՛ խմբային միջավայրի համար:
4. Շատ կարևոր է մտածել սրբության մասին՝ որպես Աստծո հետ փոխհարաբերություններ կառուցելու միջոց, որովհետև սրբության վերջնական նպատակը՝ Աստծուն ճանաչելն է: Փորձե՛ք գործադրել այս սկզբունքը՝ ուսումնասիրելով մեզ ծանոթ Տասը պատվիրանները՝ Ելից 20.1-17-ում փոխհարաբերություններ կառուցելու տեսանկյունից: Ի՞նչ է այդ պատվիրաններից ամեն մեկն ասում ձեզ Աստծո մասին:
5. Թույլ տվե՛ք այնպիսի բան առաջարկել ձեզ, ինչն անհնար է կատարել. փորձե՛ք մտածել սրբության մասին Աստծո տեսանկյունից (այո՛, սա անհնար է, բայց փորձե՛ք անել դա՝ որքանով կարող եք): Գիտակցելով, թե ո՛վ է Աստված և ի՞նչ է ցանկանում մեզ համար՝ պատասխանե՛ք, թե ինչո՞ւ է կարևոր, որ Նրա ժողովուրդը սուրբ լինի թե՛ իր դիրքով, թե՛ վարքով:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

«...Ուրեմն, արե՞ք այնպիսի բաներ,
որոնք տանում են սրբության...»:
— Հռոմեացիների 6.22, NLT

Ես սպասում էի մինչև այս դասը, որ խոսեի սրբության մասին: Ես ցանկանում էի վստահ լինել, որ դուք հասկանում եք, որ սրբությունը որևէ կապ չունի վերահսկողության, մեղքի զգացումի կամ մարդկային չափանիշներին համապատասխանելու հետ: Սրբությունը՝ փոխհարաբերություններ կառուցելու միջոց է:

Պատկերացրե՛ք, որ ձեր ընտանիքի անդամներից մեկը, ում դուք սրտանց սիրում եք, մշտապես անհարգալից վարք է ցուցաբերում ձեր հանդեպ, կոպտորեն է վարվում ձեզ հետ և, ընդհանրապես, վստահելի չէ: Թեև դուք սիրում եք նրան, կարծում եմ՝ ձեզ համար դժվար կլինի անմիջական կերպով շփվել նրա հետ: Եթե այդ մարդը պատրաստ չլինի փոխվել, դուք ստիպված կլինեք ողջամիտ սահմանափակումներ դնել ձեր միջև: Հավանաբար, դրանցից մեկը կլինի այդ մարդուն ոչ ամեն օր հանդիպելը:

Ինչպես տեսանք անցյալ շաբաթ, Աստված այն Անձնավորությունն է, ում ներկայությանը մենք ձգտում ենք: Բայց Աստված կատարելապես սուրբ է: Եթե մենք շփվենք վատ վարք ունեցող մարդկանց հետ, դա կարող է տհաճություն պատճառել մեզ կամ նույնիսկ՝ բացասաբար ազդել մեզ վրա: Այնուամենայնիվ, ոչ ոք չի կարող Աստծո ներկայության մեջ լինել՝ առանց սուրբ լինելու: Ահա թե ինչու է սուրբ ապրելն այդքան կարևոր:

Կրկին՝ կարդացեք Եբրայեցիների 12.14-ը. «Հետևե՛ք... սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի»: «Հետևել» կամ «ձգտել» բառը բնագրում նշանակում է՝ «ինչ-որ բան անել՝ մեծ ջանքով և հստակ նպատակով»²⁵: Ուշադրություն դարձրե՛ք, որ հետևելը երկու առանձնահատկություն ունի՝ մեծ ջանքը և հստակ նպատակը: Մեր նպատակն է՝ լինել Աստծո ներկայության մեջ: Ուրեմն, եկե՛ք ջանանք ապրել սուրբ կյանքով:

Սրբությունը որևէ կապ չունի օրինապաշտության կամ անկյանք կրոնական կանոնների հետ: Նշանակում է՝ սրբությանը ձգտելու համար յուրաքանչյուրիցս պահանջվելու է հետևյալը.

Ա. Լինել Աստծո խոսքի աշակերտը. Գոյություն ունեն շատ բաներ, որոնք մարդկային դատողությունը կամ մեր հասարակությունը բարի են անվանում, իսկ Աստված՝ ոչ: Նմանապես, կան որոշակի սահմանափակումներ, որոնք հոգևոր են թվում, բայց դրանք չկան Աստվածաշնչում, այլ պարտադրված են միայն մեր մշակույթի կամ ավանդույթների կողմից: Մեր չափանիշը՝ Աստվածաշունչն է: Մենք պետք է ուսումնասիրենք Աստվածաշունչը, որպեսզի հասկանանք, թե ինչպես է Աստված սահմանում սուրբ կյանքը:

Բ. Ուշադիր լինել Սուրբ Հոգուն. Աստված երբեք չի առաջնորդի ձեզ այնպիսի բանի, ինչը հակառակ է Իր խոսքին: Նա գիտի ձեզ շատ ավելի լավ, քան ցանկացած մարդ: Նա գիտի այն բնագավառները, որոնցում դուք հատկապես խոցելի եք գայթակղության համար: Այնպես որ, Նա կարող է պարզորեն ցույց տալ ձեզ, թե ինչ է ցանկանում, որ անեք կամ չանեք:

Այս երկու աղբյուրներից ստացված հրահանգները կօգնեն ձեզ հաստատ մնալ ձեր ճանապարհին:

Մտորե՛ք

«...Եկե՛ք ազատվենք ամեն ծանրությունից, որը դանդաղեցնում է մեր ընթացքը, հատկապես՝ այն մեղքից, որն այնքա՛ն հեշտորեն ծուղակի մեջ է գցում մեզ: Եվ եկե՛ք համբերությամբ վազենք այն ընթացքը, որն Աստված դրել է մեր առջև» (Եբրայեցիների 12.1, NLT):

Կիրառե՛ք

Պողոսը պատվիրեց Կորնթոսի եկեղեցուն. «Հետևե՛ք իմ օրինակին, ինչպես ես եմ հետևում Զրիստոսի օրինակին» (Ա Կորնթացիների 11.1, NIV): Ձեր կյանքում կա՞ այնպիսի մարդ, ով շատ լավ գիտի Աստծո խոսքը և լսում է Նրա Հոգու ձայնը: Ժամանակ հատկացրեք այս շաբաթ և հրավիրե՛ք նրան զրույցի: Հարցե՛ր տվեք այն մասին, թե ինչպես է նա շփվում Աստծո հետ, ինչ կերպով է սկսել հասկանալ Աստվածաշունչը և ճանաչել Աստծո ձայնը: Հավանաբար, այդ մարդու իմաստությունը ձեռք է բերվել երկար տարիների փորձառության արդյունքում. այնպես որ, ուշադիր լսե՛ք:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Կարդացե՛ք գլուխներ 10-12-ը:

Այս շաբաթ դիտե՛ք տեսանյութ 5-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Համաձայն Աստվածաշնչի՝ թե՛ Աստծո, թե՛ Նրա եկեղեցու գլխավոր առանձնահատկությունը՝ սրբությունն է: Մինչև այս մասին իմանալը, ի՞նչն էր, ձեր կարծիքով, Աստծո գլխավոր առանձնահատկությունը: Իսկ Նրա եկեղեցու՞: Կարելի՞ է ասել, որ այս շաբաթվա նյութը ձեզանում բացահայտեց սխալ կարծիքներ և ոգեշնչեց նոր գաղափարներ:
2. Շնորհքի մասին ոչ լիարժեք կերպով քարոզելը ընդամենը ծածկոց է մեր մեղքերի համար: Համաձայն Նոր կտակարանի՝ շնորհքը և՛ ներում է մեր մեղքերը, և՛ զորացնում է մեզ՝ սուրբ ապրելու համար: Ոմանց համար ավելի հեշտ է ընդունել այս արտահայտության առաջին մասը, քան երկրորդը: Բացատրե՛ք, թե ինչու է Նոր կտակարանի ամբողջական ուղերձը շնորհքի մասին «ավելի լավ լուր»:
3. Կարդացե՛ք Առակաց 27.6-ը: Ինչպե՞ս է այս խոսքը հակադրվում այն գաղափարի հետ, որ ավելի լավ է՝ չքարոզել կամ չսովորեցնել որևէ բացասական բան:
4. Օգտակար ուղերձն անպայման չէ, որ ցանկալի լինի: Իրականում, հաճախ հանդիպումը ճշմարտության հետ սկզբում ցավ կամ անհարմարություն է պատճառում, բայց հետագայում տևական ազատություն և փոփոխություններ է պարզևում մարդուն: Պատմե՛ք որևէ փորձառության օրինակ, որն օգտակար է, բայց ցանկալի չէ: Համաձայն ձեր օրինակի՝ ինչպե՞ս մենք պետք է վարվենք Աստծո խոսքի հետ:
5. Խոսելով աշխարհը փոխելու մասին՝ մարդիկ հաճախ նկատի ունեն օրենսդրական բարեփոխումներ կամ հասարակական շարժումներ: Մենք նշեցինք, որ անձնական սրբությունը ազդեցիկ զենք է՝ հասարակության մեջ փոփոխություններ առաջացնելու համար: Կարո՞ղ եք բացատրել, թե ինչու:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

«...Ուժե՛ղ եղիր այն շնորհքով, որն
Աստված տալիս է քեզ Քրիստոս Յիսուսում»:
— Բ Տիմոթեոս 2.1, NLT

Այսօր կարելի է լսել երկու տեսակի ուղերձ շնորհքի մասին: Դրանց միջև հստակ տարանջատում կա, որը կարելի է ամփոփել մի պարզ հարցով. «Դուք ցանկանում եք լա՞վ զգալ ձեզ, թե՞ լավը լինել» (և «լավը լինել» ասելով, ես նկատի ունեմ՝ *լինել Աստծունը*):

Այնպես չէ, որ ընդունելով Նոր կտակարանի ուղերձը՝ մեր կյանքը թշվառ է դառնալու: Ընդհակառակն՝ Յիսուսն այսպես նկարագրեց Իր առաքելությունը մարդկության համար. «Իմ նպատակն է՝ տալ նրանց հարուստ և լիարժեք կյանք» (Հովհաննես 10.10, NLT): Քրիստոսի մեջ միշտ մնայուն ուրախություն կա: Իրական շնորհքն ընտրելը ավելի շուտ նշանակում է՝ համապատասխանեցնել մեր առաջնահերթությունները Երկնքի հետ: Աստված երբեք չի կարևորի մեր հարմարավետությունն այն բանից, ինչը բարի է մեզ համար: Իսկ մե՞նք:

Մենք ինքներս ենք որոշում, թե շնորհքի ո՞ր ուղերձին հավատանք: Մենք կարող ենք կարդալ Աստվածաշունչը և միայն ընդունել այն հատվածները, որոնք ձիշտ ենք համարում: Մենք կարող ենք փակվել դժվարին ուղերձների համար և լսել քարոզներ միայն մեր ցանկալի թեմաներով: Ինչպես մեր օրինակի տղամարդը, ով երկու բժիշկների մոտ գնաց՝ մենք կարող ենք ապրել այն ախտանշանով, որն ավելի հաճելի է մեզ:

Եթե ընտրենք այս ճանապարհը, մենք լավ կզգանք մեզ: Այնուամենայնիվ, եկե՛ք ականջ դնենք Յիսուսի խոսքերին. «Եվ ո՞րն է քո օգուտը, եթե ձեռք բերես ամբողջ աշխարհը, բայց կորցնես քո անձը» (Մարկոս 8.36, NLT): Այնպես որ, վերադառնալով մեր հարցին՝ դուք ցանկանում եք լա՞վ զգալ ձեզ, թե՞ լավը լինել:

Հուսով եմ՝ դուք սկսում եք հասկանալ, որ շնորհքի զորացման մասին ուղերձը անասելիորեն բարի լուր է: Եթե մենք հավատանք, որ շնորհքը պարզապես ծածկում է մեր սխալները, մենք սայթաքելու ենք ամբողջ կյանքում, տկարացած ենք լինելու շարունակ կրկնվող մեղքի պատճառով և վարակված ենք լինելու վախով ու ստերով: Այնուամենայնիվ,

նայնիվ, եթե ընդունենք զորացնող շնորհքը, մենք ավելի կնմանվենք Հիսուսին. մենք կունենանք ազատություն և վստահություն, լցված կլինենք գթասրտությամբ և զորությամբ և կվայելենք Աստծո օրհնությունը: Աստծո շնորհքը՝ մեզ զսպող ծանրություն չէ, ինչպես ասում է Հովհաննես առաքյալը.

«Աստծուն սիրելը նշանակում է՝ պահել Նրա պատվիրանները, և *Նրա պատվիրանները ծանր չեն*: Որովհետև ամեն Աստծո զավակ պարտության է մատնում այս չար աշխարհը, և *մենք ծեռք ենք բերում այս հաղթանակը մեր հավատքով*» (Ա Հովհաննես 5.3,4, NLT):

Եթե Աստված իսկապես բարի է, և եթե Նա իրականում ցանկանում է լավագույնը մեզ համար, կարիք չկա, որ կասկածենք. Նրա պատվիրանները մեր լավագույն ճանապարհն են: Եվ քանի որ Նրա շնորհքը գործում է մեզանում, Նրա պատվիրանները ծանր չեն լինի: Որքա՞ն զարմանալի է:

Ստորե՛ք

«Իմ շնորհքը՝ այն ամենն է, ինչը պետք է քեզ: Իմ զորությունը լավագույնս գործում է տկարության մեջ» (Բ Կորնթացիների 12.9 NLT):

Կիրառե՛ք

Դուք պատրա՞ստ եք թողնել այն, ինչը կարող է ավելի հեշտ կամ հարմարավետ թվալ, որպեսզի վայելեք Աստծո պարզևած կյանքը: Եթե համաձայն եք, ասե՛ք դա Աստծուն՝ աղոթքով.

Հայր, շնորհակալություն Քո զորացնող շնորհքի համար: Ես ցանկանում եմ ստանալ Քո շնորհքը՝ ոչ միայն որպես իմ մեղքերի ներում, այլև՝ որպես Քո զորությունը, որը կարողություն է տալիս ինձ անելու այն, ինչը վեր է իմ ուժերից: Ես հավատում եմ, որ Դու բարի ես, և այդ պատճառով գիտեմ՝ Քո բոլոր պատվիրաններն իմ օգտի համար են: Ես ցանկանում եմ փառք բերել Քեզ, Աստված: Վերափոխի՛ր ինձ՝ դարձնելով ավելի ու ավելի նման Քեզ: Հիսուսի անունով. ամեն:

ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Կարդացե՛ք գլուխներ 13-16-ը:

Այս շաբաթ դիտե՛ք տեսանյութ 6-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպիսի՞ գործոններ են դրդում մարդկանց՝ ակնկալել Աստուծուց ավելի քիչ, քան Նա կարող է անել: Եթե երբևէ բախվել եք նման գործոնների, ինչպե՞ս եք հաղթահարել:
2. Մտածե՛ք միլիարդատիրոջ և երեք գործարարների օրինակի մասին: Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր երրորդ գործարարի տեսիլքը շատ ավելի մեծ, քան նրա ընկերներինը: Պատկերացրե՛ք, թե ինչպիսի վերաբերմունք նա ուներ իր անցյալի և ապագայի հանդեպ: Պատկերացրե՛ք, թե ինչպես էր նա պատրաստվում հանդիպմանը այդ ներդրողի հետ: Ի՞նչ էր նա արել՝ մեծ սպասում ունենալու համար, և ի՞նչ դուք կարող եք անել, որ մեծ սպասում ունենաք Աստուծուց ձեր կյանքի համար:
3. Համաձայն այն ամենին, ինչ դուք սովորեցիք այս դասընթացից՝ բացատրե՛ք, թե ինչո՞վ են տարբերվում երկրային միտք ունեցող մարդու և Աստծո հասուն զավակի զանազանելու կարողությունները: Ինչպիսի՞ եզակի միջոցներ են օգնում քրիստոնյային ծշմարտապես զանազանել իրավիճակները:
4. Ինչպե՞ս է Աստծո երկյուղը փոխում մեր վերաբերմունքը, երբ մենք դժվարություններ ենք կրում: Ի՞նչ են ասում Տիրոջ երկյուղն ունեցող մարդիկ, երբ գտնվում են ճնշման ներքո: Ինչպե՞ս են նրանք վարվում:
5. Զանի որ մենք ավարտում ենք այս դասընթացը, ամփոփե՛ք ձեր տպավորությունները՝ թե՛ անհատապես, թե՛ որպես խումբ: Ի՞նչ սովորություններ, սկզբունքներ և արժեքներ դուք կընդգրկեք ձեր առօրյայում այս դասընթացից հետո: Ինչպե՞ս դա կարտահայտվի գործնականում: Դարձրե՛ք ձեր քայլերն ավելի գործնական և հստակ, որ կարողանաք զորությամբ առաջ շարժվել:

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

«Չեզոքության և Աստծո երկյուղի արդյունքն է առատությունը և պատիվը և բավականություն պատճառող կյանքը»:
 — Առակաց 22.4, MSG

Այս դասընթացի շրջանակներում մենք ուսումնասիրեցինք մի շարք ծանրակշիռ թեմաներ, որոնց թվում էին Հիսուսի աստվածությունը, սրբությունը և շնորհքի իրական բնույթը: Դուք պատասխանեցիք դժվարին հարցերի ձեր կյանքի և պատկերացումների մասին: Այժմ ես ցանկանում եմ ձեր ուշադրությունն ուղղել այն կյանքին, որը դուք կարող եք ապրել:

Կարդացեք Եփեսացիների 3.20-ը՝ «Մեսիջ» Աստվածաշնչում.

Գիտեք, Աստված կարող է անել ամեն ինչ՝ շատ ավելի, քան կարող եք երբևէ պատկերացնել, կամ կռահել, կամ խնդրել ձեր ամենավայրի երազանքներում: Նա անում է դա ոչ թե մեզ հետ կոպտորեն վարվելով, այլ գործելով մեր ներսում. Նրա Հոգին խորապես և մեղմորեն մեր ներսում է:

Աստված ոչինչ չխնայեց՝ մեզ Իրենը դարձնելու համար: Նա գնեց մեզ ամենաբարձր գնով, երբ տվեց Իր Որդու կյանքը՝ որպես փրկագին մեզ համար: Միտքն այն մասին, որ Նա հանկարծ ժլատ է դարձել, անհիմն է:

Աստված տվել է մեզ անհրաժեշտ ամեն ինչ, որ վայելենք լավագույնը, որը Նա պատրաստել է մեզ համար՝ Նրա Խոսքի ժշմարտությունը, Նրա Հոգու առաջնորդությունը և Նրա շնորհքի զորությունը: Այնուամենայնիվ, Եփեսացիների նամակի հատվածը ցույց է տալիս, որ Աստված չի ստիպում մեզ համագործակցել Իր նպատակների հետ: Նա առաջարկում է մեզ ընտրել հավատքը, զանազանությունը և խոնարհությունը, քանի որ դրանց շնորհիվ մենք կբացահայտենք այնպիսի կյանք, որը գերազանցում է մեր ամենավայրի երազանքները:

Այդ դեպքում, ի՞նչն է ետ պահում ձեզ: Ի՞նչն է սահմանափակում ձեր երևակայությունը: Ի՞նչն է դրդում ձեզ փոքրիկ գումարներ խնդրել, երբ ձեր տրամադրության տակ կարող եմ անսահմանափակ միջոցներ լինել:

Ժամանակն է, որ երազեք Աստծո հետ: Ո՞ր բնագավառում եք դուք սպասում և հավատում փոքր բաների: Ո՞ր խոստումներն եք վախենում ընդունել: Ինչո՞ւ: Թույլ տվեք, որ Աստծո բարությունը ոգեշնչի ձեզ: Սկ-

սե՛ք խնդրել այնպիսի բաներ, որոնց իրականացմանը գրեթե չեք կարողանում հավատալ: Նա խոստացել է տալ նույնիսկ ավելի՛ն:

Մտորե՛ք

«Ոչ ոք երբևէ նման բան չի տեսել կամ չի լսել, և նույնիսկ չի պատկերացրել ինչ որ բան՝ նման այն բանին, որ Աստված պատրաստել է Իրեն սիրողների համար» (Ա Կորնթացիների 2.9, MSG):

Կիրառե՛ք

Մենք խոսեցինք երազանքների և սահմանափակումների մասին. այժմ եկեք ավելի հստակ դառնանք: Այս շաբաթ որոշ ժամանակ հատկացրեք երազելու համար: Որպես սկիզբ՝ վերցրեք թղթի թերթ (կամ դրա թվային համարժեքը) և թվարկեք ձեր կյանքի գլխավոր բնագավառները: Այս կետերը, հավանաբար, կլինեն ձեր ցուցակում.

- Փոխհարաբերություններ Աստծո հետ
- Այլ փոխհարաբերություններ
- Ամուսնություն և ընտանիք (ներկա կամ ապագա)
- Ֆինանսներ
- Կարիերա
- Տեղեկան եկեղեցի և ծառայություն
- Հատուկ պարզևներ կամ ցանկություններ

Ամեն վերնագրի ներքևում գրե՛ք ձեր սպասելիքները տվյալ բնագավառի համար: Գրի՛ առեք այն, ինչ կա ձեր սրտում և մտքում ձեր ապագայի վերաբերյալ: Ի՞նչ եք ակնկալում Աստծո հետ փոխհարաբերություններից: Ինչպե՞ս եք լավագույնս պատկերացնում ձեր ապագան ֆինանսական բնագավառում: Իսկ ձեր ընտանիքի ապագա՞ն:

Այժմ աղոթքով աչքի անցկացրեք ձեր ցուցակն ամբողջությամբ: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն հայտնել Իր կարծիքը և խոստումները: Որտե՞ղ է վախը նեղացրել ձեր մտահորիզոնը: Ի՞նչ չափով են անցյալի վերքերը և հիասթափությունները սահմանափակել ձեր երևակայությունը: Ի՞նչը, ձեր կարծիքով, կարևոր չէ Աստծո համար, և ի՞նչ կարծիք ունի Նա այդ մասին: Հիշե՛ք՝ ձեր կարողությունը որոշվում է ձեր տեսիլքի չափով: Աստված հեռացրել է ձեր կյանքի սահմանափակումները: Ժամանակն է, որ անեք նույնը:

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Լոուրենս Օ. Ռիչարդս, «Աստվածաշնչյան բառերի Նոր միջազգային հանրագիտարան» (Գրենդ Ռեփիդս, Միչիգան. «Zondervan», 1991թ.), էջեր 315-316:
2. Պիտեր Սթոուներ, «Գիտությունը խոսում է. Մարգարեությունների և Աստվածաշնչի ճշգրտության գիտական ապացույց» (Չիկագո, «Moody Press», առցանց հրատարակություն, 2005թ.), Նախաբան, <http://sciencespeaks.dstoner.net>:
3. Նույնը, գլուխ 3:
4. Նույնը:
5. Նույնը:
6. Նույնը:
7. Աստվածաբանության դոկտոր Սփիրոս Ջոդիաթեսի խմբ., «Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան» (Չատանուգա, Տեննեսի, «AMG Publishers», 1992թ.), «պոլյուս» բառահոդվածը:
8. Թիմոթի Քելլեր, «Թիմոթի Քելլերի քարոզների արխիվ (Նյու Յորք Սիթի. «Փրկագնող» Երիցական եկեղեցի, 2013թ.), մուտքը՝ «Logos Bible Software»-ի միջոցով:
9. «Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան», «կոսմոս» բառահոդվածը:
10. «Daily Mail Reporter», «Չամատել կեցությունն ամոսությունից առաջ այլևս չի մեծացնում ամուսնալուծության հավանականությունը» («Daily Mail.com», մարտի 22, 2012թ.), մուտքը՝ փետրվարի 26, 2015, <http://www.dailymail.co.uk/news/article-2118719/Living-marriage-longer-increases-chances-divorce.html>:
11. Ջեյսոն Քոուբլեր, «Ավելի շատ մարդիկ են ընտրում համատել կեցությունը ամուսնությունից առաջ, քան երբևէ», («U.S. News & World Report», ապրիլի 4, 2013), մուտքը՝ փետրվարի 26, 2015, <http://www.usnews.com/news/articles/2013/04/04/more-people-than-ever-living-together-before-marriage>:
12. Լոուրենս Օ. Ռիչարդս, «Աստվածաշնչյան բառերի Նոր միջազգային հանրագիտարան» (Գրենդ Ռեփիդս, Միչիգան. «Zondervan», 1991թ.), էջ 639:
13. Չարլզ Սփերջեն, «Սրբությունը պարտադիր է» (քարոզ, «Մետրոպոլիտեն Թեթերնեքը», Լոնդոն, հրատարակման ամսաթիվը՝ սեպտեմբերի 22, 1904թ.), մուտքը՝ «Logos Bible Software»-ի միջոցով:
14. Յարցում՝ անցկացրած «Մեսինջեր ինտերնեյշլ» ծառայության կողմից: Կարոլացե՛ք. Ջոն Բիվեր, «Անկոտրում հոգի. Այն զորությունը, որն անհրաժեշտ է ձեզ՝ երբեք չհանձնվելու համար» (Կոլորադո Սփրինգս, Կոլորադո, «WaterBrook Press», 2011թ.), էջեր 26-27:
15. «Վիճակագրություն՝ ինտերնետային պոռնոգրաֆիայի վերաբերյալ», «Daily Infographic», մուտքը՝ հունվարի 24, 2014թ., <http://dailyinfographic.com/the-stats-on-internet-pornography-infographic>:

16. «Որքա՞ն կանայք են կախվածության մեջ պոռնոգրաֆիայից: 10 վիճակագրություն, որոնք կարող են ցնցել ձեզ»: «Covenant Eyes», մուտքը՝ մարտի 27, 2014թ., <http://www.covenanteyes.com/2013/08/30/women-addicted-to-porn-stats>:
17. Նախորդ երեք պարբերությունները որոշակի փոփոխություններով մեջբերված են Ջոն և Լիզա Բիվերի «Պատմություն ամուսնության մասին» գրքից (Պալմեր Լեյք, Կոլորադո. «Մեսինջեր ինտերնեյշնլ», 2014թ.), էջեր 181-182:
18. «Covenant Eyes», «Վիճակագրություններ պոռնոգրաֆիայի վերաբերյալ. 2014թ.-ի հրատարակություն», էջ 20:
19. Ջեյսոն Ռովու, ««Porn & Pancakes»-ը պայքարում է պոռնոգրաֆիկ կախվածությունների հետ», «CNN», ապրիլի 6, 2007թ., մուտքը՝ փետրվարի 9, 2015թ., <http://edition.cnn.com/2007/US/04/04/porn.addiction/index.html>:
20. «Փաստեր և վիճակագրություններ ալկոհոլի մասին», «Ալկոհոլի չարաշահման և ալկոհոլիզմի ազգային ինստիտուտ», մուտքը՝ փետրվարի 9, 2015թ., <http://www.niaaa.nih.gov/alcohol-health/overview-alcohol-consumption/alcohol-facts-and-statistics>:
21. Ստիվեն Ռայնբերգ, «Ամերիկացիների մեկ երրորդն ալկոհոլային խնդիրներ է ունենում կյանքի ինչ-որ փուլում», «The Washington Post», հուլիսի 2, 2007թ., մուտքը՝ փետրվարի 9, 2015:
22. «Փաստեր և վիճակագրություններ ալկոհոլի մասին»,
23. Նույնը:
24. Յեսայալ Նյուբը շնորհիքի մասին ընդգրկված է իմ «Անկտրում հոգի. Այն զորությունը, որն անհրաժեշտ է ձեզ՝ երբեք չհանձնվելու համար» գրքում (Կոլորադո Սփրինգս, Կոլորադո, «WaterBrook Press», 2011թ.): Այն հիմնված է մի ուղերձի վրա, որը ես հաճախակի եմ քարոզել իմ ծառայության ընթացքում: Ներկայացնում եմ այդ ուսուցումն այս գրքում՝ որոշ փոփոխություններով:
25. Յոհաննես Պ. Լուվ և Յուջին Ալբերտ Նայդա, «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», (Նյու Յորք. «United Bible Societies», 1996թ.), էջ 662:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ




Երեք տարի շարունակ աշակերտները Հիսուսի հետ էին: Նրանք քայլում էին Հիսուսի հետ և լսում էին այն ամենը, ինչ Նա ասում էր իրենց: Այնուամենայնիվ, Հիսուսն ասաց Իր ամենամոտ ընկերներին, որ Ինքը պետք է թողնի նրանց, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա գալ, և որ դա ավելի լավ է նրանց համար (տե՛ս Հովհ. 16.7,13,14): Եթե սա ձձմարիտ էր աշակերտների համար, ովքեր ամեն օր Հիսուսի հետ էին, որքա՛ն ավելի անհրաժեշտ է մեզ, որ Սուրբ Հոգին գործուն կերպով ներգրավված լինի մեր ամենօրյա կյանքում: Սուրբ Հոգին հաճախ պատկերվում է տարօրինակ մի բանի պես: Բայց Աստվածաշունչը պարզ ասում է, որ Հոգին Անձ է, Ով խոստացել է երբեք չհեռանալ ձեր կողքից: Այս ինտերակտիվ գրքում Ջոն Բիվերը հրավիրում է ձեզ անձամբ բացահայտել Եկեղեցում ամենից շատ անտեսված և սխալ հասկացված Անձնավորությանը՝ Սուրբ Հոգուն:

Այս ինտերակտիվ գիրքն ընդգրկում է.

Ամենօրյա ընթերցանության նյութեր:

- Հարցեր խմբային քննարկման համար:
- Հավելյալ գլուխ, որտեղ պատասխանվում են մի շարք դժվարին հարցեր Սուրբ Հոգու մասին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



ՄԻ ԺԱՄԱՆԱԿ...

Ամուսնությունը կնքվում էր հավիտյան: Այն ուխտ էր, որը միավորում էր մեկ տղամարդու և մեկ կնոջ: Շնորհիվ այս միասնության՝ երկուսն էլ դառնում էին ավելի ուժեղ, ավելի ազնիվ և կարողանում էին ավելի վառ արտահայտել այն անհատականությունը, որով ստեղծված էին: Միասին նրանք ավելի երջանիկ էին, քան առանձին:

Ամուսնական արարողությունը՝ ընդամենը սկիզբն էր: Այն դուռ էր՝ երկարատև և երջանիկ կյանք կառուցելու համար: Ամեն մի ընտրության և գործողության նպատակն էր՝ կերտել այն կյանքը, որը ներկայացնում էր նրանց միությունը: Ամուսինը և կինը քայլում էին դեպի մեծ անհայտ կյանքը՝ միաբան սրտերով, մեկ ձայնով և ձեռք ձեռքի տված՝ պատրաստ՝ արտահայտելու իրենց Արարչի սերը:

Ինչպե՞ս մենք կորցրինք կապն այս իմաստալից սիրային պատմության հետ: «Պատմություն ամուսնության մասին» գրքում Ջոն և Լիզա Բիվերները հրավիրում են ձեզ վերագտնելու Աստծո սկզբնական ծրագիրը: Անկախ այն բանից՝ դուք ամուսնացած եք, թե՛ ոչ, ձեր պատմությունը՝ Նրա պատմության մասն է:

Այս ինտերակտիվ գիրքն ընդգրկում է.

- Ամենօրյա ընթերցանության նյութեր:
- Չարցեր խմբային քննարկման համար:
- Միջոցներ՝ ձեր երազանքի ամուսնությունը կառուցելու համար:
- Քայլեր՝ ձեր ամուսնության պատմությունը բարեհաջող գրելու համար:

ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

Այս գիրքը, որը ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի «Բարի՞, թե՞ Աստված» ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով այս գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք հասանելի են DVD սկավառակում, և որոնք կարելի է ներբեռնել CloudLibrary.org կայքից՝ դուք կկարողանաք ամբողջովին ուսումնասիրել այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Ջանասիրաբար ուսումնասիրության դեպքում, ձեր քրիստոնեական կյանքի ընթացքը կզորանա, և Աստծո համար դուք կկարողանաք անել ավելին:

«Բարի՞, թե՞ Աստված» ամբողջական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

– **«Բարի՞, թե՞ Աստված» գիրք**

Այս դասընթացի միակ տպագրված մասը:

Գիրքը նույնպես առկա է հավաքածու-սկավառակում՝ PDF ձևաչափով:

– **«Բարի՞, թե՞ Աստված» հավաքածու-սկավառակ**

Կցված սկավառակը պարունակում է դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարողանա նվազարկել այս սկավառակը ձեր տնային CD կամ DVD նվազարկիչներով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարող եք բեռնել ձեր պլանշետների, iPad-ների, համակարգիչների և սմարթֆոնների մեջ:

– **«Բարի՞, թե՞ Աստված» աուդիո գիրք**

«Բարի՞, թե՞ Աստված» գրքի բոլոր 16 գլուխները, ընթերցված հայերենով՝ MP3 ձևաչափով:

– **«Բարի՞, թե՞ Աստված» վիդեո դասեր**

Բոլոր 6 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:

– **«Բարի՞, թե՞ Աստված» աուդիո դասեր**

Բոլոր 6 աուդիո դասերը՝ MP3 ձևաչափով:

– **Հավելյալ նյութեր**

Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է Ջոն և Լիզա Բիվերների այլ գրքեր և նյութեր, ներառյալ՝ «Սուրբ Հոգի» և «Պատմության ամուսնության մասին» գրքերը:

Այս դասընթացի բոլոր նյութերը նվեր են ձեզ համար



Ազատորեն կրկնօրինակեք այս DVD սկավառակը, պատճենեք դրանում առկա նյութերը, ուղարկեք դրանք էլ. փոստով՝ ձեր ընկերներին, պատճենեք տեքստը և տեղադրեք «Word» ֆայլերի մեջ, տրամադրեք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնեք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել դրանցից: Տարածեք այս նյութերն ամենուր, ուր մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ, և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

- **Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի ֆայլերը սովորական վիդեո նվագարկիչով:** Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեսքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:
- Դուք կարող եք բեռնել **MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը** և նվագարկել դրանք ձեր պլանշետով կամ համակարգչով:
- Դուք կարող եք բեռնել **MP3 ձևաչափի ֆայլերը** ձեր աուդիո նվագարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:
- Դուք կարող եք բեռնել **PDF ձևաչափի ֆայլերը** ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ: Դուք կարող եք կարդալ, տպել կամ կրկնօրինակել դրանք:

Հավելյալ ուսմունքային նյութերը բազմաթիվ լեզուներով հասանելի են հետևյալ կայքում.



CloudLibrary.org

ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

ՀԱՎԱՔԱԾՈՒ-ՍԿԱՎԱՌԱԿ



Պիտե՛ք հավաքածուի նյութերը ձեր համակարգով
և ներբեռնե՛ք հավելյալ նյութերը
ստացանց www.CloudLibrary.org կայքից:



MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org

Միայն համակարգչի համար

ՋՈՆ ԲԻՎԵՐ



Այս հավաքածու-սկավառակը անձնական նվեր է ձեզ Ջոն Բիվերից: Այն տրամադրվում է մի շարք ազդեցիկ նյութեր, որոնք կօգնեն ձեզ շարունակել այս դինամիկ դասընթացի ուսումնասիրությունը և կիսվել սրանով այլ մարդկանց հետ: Դուք կարող եք ազատորեն տարածել կամ կրկնօրինակել այս դասընթացի ցանկացած մասը: Կարող եք ուղարկել դասընթացի նյութերն այլ մարդկանց էլեկտրոնային փոստով, բաժանել Աստվածաշնչյան դպրոցի ուսանողներին, վերբեռնել ինտերնետային կայքերում կամ բազմացնել: Այս սկավառակը հատուկ պատրաստվել է ամենուր գտնվող քրիստոնյա հավատացյալներին ոգեշնչելու և խրախուսելու համար:

Ջոն և Լիզա Բիվերների այլ ուսմունքները հայերենով՝
հասանելի են հետևյալ կայքում.

www.CloudLibrary.org

Հավելյալ նյութերը բազմաթիվ լեզուներով՝ հասանելի են դիտելու և
ներբեռնելու համար YouTube.com, Youku.com և նյութեր
տարածող այլ կայքերում:

ԵԹԵ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ԲԱՐԻ Է, ԴԱ ՊԵՏՔ Է ՈՐ ԱՍՏԾՈՒՑ ԼԻՆԻ, ԱՅՆՊԵՍ ՉԷ՞

Մեր օրերում «բարի» և «Աստված» բառերը կարծես հոմանիշներ են դարձել: Մենք հավատում ենք, որ այն, ինչն ընդհանուր առմամբ բարի է համարվում, պետք է որ համապատասխանի Աստծո կամքին: Առատածեռությունը, խոնարհությունը և արդարությունը բարի են: Եսասիրությունը, ամբարտավանությունը և դժժանությունը չար են: Թվում է՝ այս տարբերակումը շատ հասարակ է:

Բայց մի՞թե ամեն ինչ այդքան պարզ է: Եթե բարին այդ աստիճան ակնհայտ է, ինչո՞ւ է Աստվածաշունչն ասում, որ մեզ զանազանություն է հարկավոր՝ այն ճանաչելու համար:

«Բարի՞», թե՞ «Աստված» գիրքը հերթական ուղերձը չէ՝ ձեր խնդիրները ինքներդ լուծելու մասին: Այս գիրքը պարզապես չի առաջարկի փոխել ձեր վարքը. այն կանի ավելի՛ն և կտա ձեզ կարողություն, որ վարվեք Աստծո հետ այնպիսի մակարդակի վրա, որը կփոխի ձեր կյանքի ամեն մի բնագավառը:

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ԲԱՐԻ, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՄ



ՋՈՆ ԲԻՎԵՐԸ և նրա կինը՝ Լիզան, «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրներն են: Ջոնը քարոզիչ է, մասնաճանաչ գրող: Առանց փոխզիջման՝ նա համարձակորեն և ջերմեռանդորեն քարոզում է ճշմարտությունը: Նա ցանկանում է սատարել տեղական եկեղեցիներին և ապահովել առաջնորդներին քրիստոնեական նյութերով՝ անկախ նրանց բնակության վայրից, լեզվից կամ ֆինանսական վիճակից: Մինչև օրս նրա նյութերը թարգմանվել են ավելի քան 90 լեզուներով: Երբ Ջոնը տանն է, սովորաբար փորձում է համոզել Լիզային, որ միասին գոլֆ խաղան, մաս շփվում է իր չորս որդիների, հարսի և բոռնիկների հետ:

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը հետևյալ կայքում.
www.CloudLibrary.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից
և վաճառքի ենթակա չէ:



MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org



Ցանկանում եք տեսնել
Տեղափոխվե՛ք այս կայքի վրա